



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

Ս Մ Բ Ա Տ
Շ Ա Հ Ա Ձ Ի Ձ

•
Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս
Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ի Ս Յ Ա Ն

•
Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Ռ
Ծ Ա Տ Ո Ւ Ր Յ Ա Ն

•
Վ Ա Հ Ա Ն
Մ Ի Ր Ա Ք Յ Ա Ն

Ե Ր Կ Ե Ր

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,
ԵՐԵՎԱՆ— ԿՑԹԹ

8 Ap, c6,
B-16

ՍՄԲԱՏ

ՇԱՀԱԶԻԶ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7 $\frac{70303 (380)}{705 (01), 78}$ 78 «Տ»

ԱՐԱՐԱՏԵՄՆ ԴԱՇՏ

Մաքուր վտականի հոսին ի վիմաց
Յայն ի ծաղկապարդ դաշա լայնատարած:
Ծառք շուրջ խիտ առ խիտ կան տերևազեաց:
Քաղցրաձայն երգեն երամբ կաքաւաց:
Ի ծերպոս ծակուց որջանան գապանք
Յորսողին ձեռաց գոլով անվրտանգ:
Սրփոնեալք ի դաշտոս ձիարձակ արանց
Ըզիտո մրտանեն բուլից վարապաց:
Ընթանան ի գետս մանկունք ձրկնորսաց:
Դառնան խրախամիտ առ ծնողս իւրեանց:
Բարտիք երկնուղեջթ անդէն ի յուժգին
Շարժին ի հողմոց, տերեվք տատանին:
Ի ծագել յուսոյ տխակք անդադար
Երգեն հանգչելով ի թուփ եւ ի ծառ:
Ծիտք եւ ծիծեռունք անդէն անհամար
ձրձուելով թըռչին ընդ օդս տարմաբար:
1857 թ.

ՀԱՅ ՄՍՆՈՒԿ ԹՕՏԱՐՈՒԹԵԱՆ

Ո՛հ, ե՛րբ եկից ես ՚ի դրախտ եղեմայ,
՚ի ծաղկածաւայ տունըդ Թորգոմայ
Ըզքարինսըդ քո ե՛րբ համբուրեցից,
Որք ողողայ են արեամբ վկայից.
Ե՛րբ ձաշակեցից յանոյջ պտղոց քոց,
Որք հասեայ փայլին ՚ի վերայ ծառոց.
Ե՛րբ արբից արդեօք ՚ի քոց աղբերաց.

Որք խոխոջելով հոսին ՚ի վիմաց:
Ա՛հ, նման ծաղկանց անկեայ թարշամիմ
Յայս Հիւսիսային երկրիս դիւերիմ.
Չի՛ք ինձ ոք ծանօթ, չի՛ք ոք ազգական,
Ընդ որում լիլուաւ խօսեցայց Հայկեան:
Հայաստա՛ն թշվուառ, դժբա՛ղդ Հայրենիք,
Հայեա՛ց յո՛ր վայրս են ցրուեայ քոյդ որդիք:
1857 թ.

ՈՂՋՈՒՅՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԵՏ

(Նվեր Կ. Սաղունյանցին, ուսանողին
Մուկովական Կայսերական Համալսարանի)

Վերջին անգամ ես ձեմում եմ
Քո ծաղկապարդ ափերում,
Վերջին անգամ ես շրջում եմ
Քո բարետես վայրերում:

Հեռանում եմ ես քեզանից
Դեպի հեռու երկիրներ,
Թո՛ղում եմ քեզ արտասովից,
Խոսք մի տալով ողբանվեր:

Որ ես երբեք չեմ մոռանալ
Քեզ, քո դաշտերն սիրելի,
Որ քո խնամք չեմ ուրանալ,
Խնամք ասեմ մայրենի:

Այլ հանապաղ քեզ կառաքեմ
Որդիական նամակներ,
Եվ ստեպ ստեպ քեզ կնվիրեմ
Մխիթարական իմ ժամեր:

Քասա՛խ, Քասա՛խ իմ սիրելի,
Քասախ պայծառ պերճապսակ,
Վերջին անգամ ահ ողբալի
Խմում եմ շուրդ անուշակ:

Ո՛հ, Աստված իմ, ընչո՛ւ համար
Պատկերահան չես եղած,
Որ այս վայրերս ծաղկալայլար
Նկարեի շքեղացած:

Ընչո՛ւ համար նրկարչական
Վրժիեց չե իմ ձեռին,
Որ այս ջրերս Շվեյցարական
Գծագրեի քաղցրագին:

Շնորհակա՛ն են սիրտս և հոգիս
Զեպից, բնություն անփախճան,
Որ շնորհեցիր Բասաբո գետիս
Մերտեռ շքեղ անասրան:

Վերջին անգամ, ով գյուղ սիրուն,
Ռոջուան են քեզ սիրով,
Եվ զոչում ես ես բարձրաձայն,
«Տեղի՛ ծննդյանս, մնաս բարով»:

Ահա եկաք, ա՛հա հասալ
Հրաժարութան ժամանակ,
Ո՛հ, կանչում է ինձ շտապով,
Ների՛ր, ների՛ր, Աշտարակ:

1857 թ.

ԻՄ ՎԻՃԵՎԸ

(Նվեր փեցերոց դասառան սգակերտներին)

Չորս պատի մեջ փակված եմ ես
Անբող տարին, պարուններ,
Գլուխս ծռած լռիկ և հեկ
Անկամ եմ այստեղ ահտեր:

Անկամ եմ ես անհայր, անմայր, անծանոթ,
Աստված, ծագի՛ր ինձ նոր, պայծառ առավոտ:

Քեզ ի՛նչ անեմ, ա՛հ իմ բաղդիկ,
Ընչո՛ւ համար վճռեցիր
Ինձ այսպիսի դառն վիճակիկ,
Կյանք և օրեր տրտմալիր:

Անկամ եմ ես անհայր, անմայր, անծանոթ,
Աստված, ծագի՛ր ինձ նոր, պայծառ առավոտ:

Ահա Չատիկ—բոլորեքանք
Չեռն ձեռն բռնած, անխափան
«Եկե՛ք, եղբա՛րք, եկե՛ք գնանք»:
Ասեն սիմյանց և գնան:

Ահա ծունկ, Բարեկենդան,
Ողջ քնկերներս պարբարած,
Վապում են տուն, վարդաեման
Ուրախ, շքեղ, պվարթացած:

Անկամ եմ ես անհայր, անմայր, անծանոթ,
Աստված, ծագի՛ր ինձ նոր, պայծառ առավոտ:

Միանգամայն ասել, աշխարհ
Չայն է ասպիս խնդության,
Եվ երգեհոն ուրախարար
Հնչում է խիստ քաղցրաձայն:

Միայն անբաղոս լռիկ մընջիկ,
Անկյունում մի նստելով,
Խիստ ցավում եմ ես անկրուցիկ,
Փոջի ծանուխտ կուլ տալով:

Անկամ եմ ես անհայր, անմայր, անծանոթ,
Աստված, ծագի՛ր ինձ նոր, պայծառ առավոտ:

1857 թ.

Էանց ձմեռն՝ խամրիչ ծաղկանց,
 Փախեայ ցուրտըն խստաշունչ,
 Եհաս գարուն՝ բընության թագ,
 Յարեաւ և օդ բարեխառն.
 Նորափետուր պարզարեցան
 Մարդիկ, այգիք և պարտէպք.
 Չմրխտագոյն վայրք զգեցան
 Ըպպերձ հանդերձ, չքնադիկ:
 Սոսնիք ուղեջք և սրբազգեաց
 Արմենակայ դիւցապն
 Ժպտին տեսեամբ քաղցրահայեաց,
 Ծափս հարկանեն ընդ գարնան.
 Երամբ Հաւուց ճչիւ գողտրիկ՝
 Հնչմամբ անոյշ, բարձրաձայն,
 Երգեն, խօսին յոյժ գեղեցիկ,
 Իբրև քնարն Մուսայից:
 Չեփիւն մեղմիկ գոլով
 Հնչէ, փչէ անուշակ,
 Ցանգ զտերևս տատանելով
 Յոգունց տընկոց սրբազան:
 Հնայք Հայոց պերճապսակ
 Ընդ սաղարթուց սօսաւիւն,
 Բազմեալ դ՛ժառոց դասակ դասակ
 Ճիշտ հըմայեն զապագայս*:

i358 p.

* Այս է, զ'ի հեթանոսական ժամանակս 'ի Հայս մարդիկ ցանկանային գիտել
 զապառնի փձակ իւրեանց, ոյր աղագաւ երթային ս հարցանէին 'ի քրմաց կամ
 հնայից, որք 'ի մեհենեաց չաստուածոց տային նոցա պատասխանի: Սոյնպես էր
 և 'ի Յոյնս. ըստ խոխոջմանց աղբերց և ըստ սօսաւիւն սրբազան եղեւնէս թ, իսն
 'ի Հռովմայեցիս ըստ հաւուց թոջմանց:

ՀՐԵՇՏԱԿ-ՊԱՀՊԱՆԻՉ

(Ռոմանս)

Դուք տեսե՛լ եք գեղեցկավառ
 Ա**) իս իմ ման գալիս,
 Դուք տեսե՛լ եք նորա պայծառ
 Գըլխի պարոզ փայլելիս:

Ինչպես չքնա՛ղ և սիրո՛ւն է,
 Երբ որ, բացված վարդի պես,
 Նա շարժվելով, հեպ ժպտում է,
 Անուշ, քաղցրիկ, պարպերես:

Ինչ տեսարա՛ն և ինչ պատկե՛ր
 Նկարվում է երեսին,
 Երբ նա, ցըցած երկինք աչեր,
 Օրհնվում է յուր արարչին:

Կարծես անմեղ հրեջտակ արդար,
 Իջած դրախտից երկնային,
 Պետք է լինի մեզ մխիթար
 Ե՛վ խնդություն մեր կյանքին:

Դուք տեսե՛լ եք գեղեցկավառ
 Սիրեկանիս ման գալիս,
 Դուք տեսե՛լ եք նորա պայծառ
 Գըլխի պարոզ փայլելիս:

1858 p

ԱՄԵՆԱՆՈՂԱՐ Հ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ

(Նվեր Հ. Շահապիպանցին)

Ես քեզ երբեք չեմ մոռանալ,
 Ո՛վ իմ եղբայր թանկագին,
 Քեզ փա՛ռք պատի՛վ պայծառափայլ,
 Քե՛զ, մեկենաս իմ աեզին:

Միտք ջո բացված մեծ է եղել:
Մե՛ծ ես եղել, Հովակիմ,
Բայց չիմացա ես գնահատել,
Ների՛ր, ների՛ր, եղբա՛յր իմ:

Մանուկ էի, տրգետ էի,
Անվարժ, անկիրթ գլխովին,
Ի՛նչպես թշվառս կարող էի
Ճանաչել քեզ, ո՛վ անգին:

Այժմ պզտի ջո անմոռաց,
Քո երախտիքն անսահման,
Այժմ ողբագին, գլուխ խոնարհած,
Կպղջամ ես հավիտյան:

Այժմ իմացա, որ առանց քեզ
Պիտի հովիվ լինեի,
Հովիվ ասեմ, որ սևատես
Թափառում է խղճալի:

Բայց դու, եղբա՛յր, ձայնիս լսի՛ր,
Ա՛հ սկսում եմ ողբալից
Հյուսել քեզ թագ, թագ վարդալիլ
Նվաստ քնարիս տողերից:

Թո՛ղ գեղգեղե քաղցրահնչյուն
Քնարիկս իմ լսելի
Քո սրբապան անմահ անուն,
Անուն անուշ, մաքրալի:

Ահա, հոգյակ, իմ նվաստ տողեր,
Վեր կա՛ց, կանգնի՛ր դագաղից
Ա՛ն եղբայրիցդ թշվառ վ՛անտեր,
Նայի՛ր երեսս ողբալից:

1858 թ.

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ

(Ռոմանս)

Ըստ եղանակին

Гляжу как безумный на черную шаль.
И холодную душу терзает печаль.

(Пушкин)

Այսօր գնացի տուն իմ սիրեկանի,
Երկու վարդ և մի նուռն ես իմ հետ տարա,
Սենյակն երևեցավ. մըտա շուտ այնտեղ,
Ուր հանգիստ քրեած էր հոգյակս երկնագեղ:
Շըրթունքները էին վարդագույն, կարմիր,
Մարմինը թըվում էր համեստ, գեղալիլ.
Անմեղության նըշան փայլում էր վառված,
Չըքնաղ երեսին նորա գեղեցկացած:
Չարթեցընե՛լ, թե ոչ, ես մտածեցի,
Բայց սիրտըս ինձ ասաց. թե չէ՛, թող նընջի.
Նընջի՛ր դու, ասեցի, նինչ քաղցր է, անգին,
Մուսայք և դիցուհիք քեզ պարզանցին.
Դըրի վարդը և նուռն սեղանի վրա,
Եվ, խոր հառաչելով, լուռ մուռ դուրս ելա:
1858 թ.

ԻՂՁ ՄՐՏԻՍ

Տո՛ւք ինձ ճերմակ ճախրասըլաց,
Օղապարիկ երիվար.
Տո՛ւք, պի սլացայ թռեայց ՚ի բաց՝
Ի չքնաղիկն իմ աշխարհ:

Այո՛, սլացայց լիմ Հայաստան,
Յերկիր յաւերժ ծաղկազարդ,
Ուր խոխոջան անմահութեան
Գետք եղեմայ ալեզարդ:

Ուր բարձրանայ խըրոխտ ՚ի վեր
Արարատն իմ օրօրան.
Ուր հոտ բուրե խնկանըւեր.
Հոտ գուարթարար Հայուրեան:

Ուր և երբեմն պայծառացեալ
Քաջ բանաստեղծք թորգումեան,
Քնարօք իւրեանց ռսկելարեալ
Գեղզեղեին սրբապան:

Ո՛հ, ածե՛ք ինձ զինն սիգաքայլ,
Սիրտ իմ մաշեալ նուալի.
Քանի՛ ա՛մք են՝ զի չեմ տեսեալ
Ըզիայրենիս ցանկալի:

Հայաստան իմ, սո՛ւրբ Հայաստան,
Հո՛գույս պայծառ յիշատակ,
Է՛ր թողեր զիս ՚ի բացական
Վայրս դառնաշունչ, դժնդակ.

Մաշիմ մաշիմ ես աստանօր,
Ընդ աստեղօք Հիւսիսի.
Հալիմ. աւա՛ղ ես չքաւոր...
Ո՛հ, Հայրենիք քաղցրալի...
1859 թ.

Ե Ր Գ

(Նվեր Գ. Տեր Մարտիրոսյանցին)

Ըստ եղանակին

Кубок янтарный
Полон давно,
Пеною парной
Блещет вино!

(Пушкин)

Խնդրեմ վեր կացե՛ք,
Եղբայրք անգին,
Դաս դաս կանգնեցե՛ք
Ուրախագին:

Ահա բաժակներ
Ոսկեգօծած
Առեք, ընկերներ,
Իմ զվարթացած:

Ահա խնդության
Եվ գինիներ,
Գույն գույն, պանապան,
Շամպայն, Մադեռ:

Ահա Կախեթին
Կովկասյան մեր,
Ահա թանկագին
Խերես, Սոտերն:

Առեք բաժակներ
Ուրախալի,
Լցնենք ի նըվեր
Մեր հայ ազգի:

Կեցցե՛ն, երգեցե՛ք,
Հայ աղջիկներն,
Կեցցե՛ն, հնչեցե՛ք,
Հայ զավակներն:

Լցրե՛ք, կոնծեցեք
Դարձյալ, կրկին,

Է՛լ մի՛ խնայեք
Պաշտպող փողին:

Նմեցե՛ք խնդագին
Սիրո համար,
Սե՛րն է ձեր հոգին,
Ձեր բաղդն պայծառ.

Երգած է վաղուց.
«Կյանք մեր կարճ է,
Այսօր կանք—էգուց
Կըմենունք գուցե»:

Այսօր կենդանի—
Եգուց գետնում,
Անելանելի
Պինդ դազադում:

Ուրեմն զավաթներ
Շիկացնելով,
Առե՛ք, եղբայրներ,
Անուշ պաչով:

1859 թ.

ՆՎԵՐ ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ

(Ռոմանս)

Հայ աղջիկներ նորածաղիկ,
Հայոց ջընքուշ սիրուններ,
Առեք, խնդրեմ, իմ նվաստ փունջիկ,
Առե՛ք, հոգուս հատորներ:

Ձեզ համար ես միայն անքուն,
Չքնաղ կույսեր, նըստել եմ
Եվ ռոմանսներ փափկահնչուն,
Ձեզնից վառված, երգել եմ:

Անդունեցէ՛ք, ուրեմն ընարիս
 Չնչին վաստակ ի սրտե,
 Ար Չեր ձայնիկ միայն լսելիս
 Հոգեորված հրնչում է:
 1860 թ. հունվարի 1.

ԱՌԱՋԻՆՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՄ

(Հետևողություն իտ. պոետի Պետրարկայի)

Օրհնյա՛լ լինի այն սուրբ օրը,
 Երբ նորա մտն նստած էի,
 Եվ իմ սրտին խորհուրդները
 Մի մի նորան հայտնում էի:

Ես օրհնում եմ այն սուր կետը,
 Ար նա ցոցեց սրտիս խորքում,—
 Եվ այն քաղցր սիրո թույլը,
 Ար նա թափեց հոգուս միջում:

Օրհնյա՛լ լինի այն ստեղծված,
 Այն սիրուն կույսն, հրեշտակ պայծառ,
 Արի առաջ, ծունրը դրած,
 Բզբում էի այնքան երկայր:
 1861 թ. 3 հունվարի.

ՕՌԻՈՐՅԻ ԱՐՏԱՍԻՔԸ

Հանգի՛ստ իմ աչառջ,
 Անցար, զնացիր,
 Միայն վերջ անբույծ
 Սրտումս թողնեցիր:

Սոխակ զեղեցիկ
 Կանաչ պարսեղում:

Երգելով քաղցրիկ,
 Ինձ չէ գրավում:

Ձեզանով միայն
 Երջանիկ էի.

Ձերին քնքսիչխան
 Ինձ կարծում էի:

Ցերեկը մենակ,
 Փակված սենյակում,
 Ողբում եմ անհագ,—
 Ոչ ոք չէ լսում:

Գիշեր է գալիս—
 Մահիճ եմ մտնում.
 Տրտո՛ւմ է հոգիս,
 Քունս չէ տանում:

Ո՛հ սիրտըս այրված,
 Ողջ թեյ է կանչում,

Ողջ թո անմոռաց
 Անունդ է հիշում:

Մազեր թո՛ւրս երկա՛յն,
 Աչեր գրավիչ,
 Ի՛նչ հասակ, ի՛նչ ձայն,
 Ի՛նչ հոգի կտրիճ:

Անգո՛ւրթ, ինձ խաբեց,—
 Ուրիշին սիրեց.
 Ա՛խ, նա դեռ ինձ վաղ
 Պատրաստեց դագա՛ղ:
 1861 թ. հունվարի 20.

ԳՐԵՐ

Սիրո՛ւն պատկեր: Պարզկա գիշեր:—
 Եվ օղեղին օվկիանում
 Փայլում էին անթիվ աստղեր,
 Եվ ուրա՛խ էր սիրտըս կարկուս:

Անբոսական ծաղիկներ վառ
 Անուշություն էին բուրում,
 Եվ երկնքի ցող կենարար
 Բնությունն էր զովացնում:

Եվ ես անխռով երգում էի,—
 Եվ իմ երգըս խիստ մաքուր էր.
 Ազատություն էի երգում:
 Հայրենիքի պարծանք ու սն՛ր:

1861 թ. փետրվարի 15.

ԱՉԳԱՅԻՆ ՎԻՃԱԿ

Հառա՛ջ հայություն, հառա՛ջ ապգություն,
 Լուսավոր դարուս գաղափարներով.
 Ատի՛ր, ապգ անգին, խավար տգիտություն,
 Մի՛ տար թեյ խաբեկ խարդախ խոսքերով:
 Կորի՛ր դու խավար և տգիտություն,

Կորե՞ք գարշեի ձեր ծնունդներով.—
 Մինչ ե՞րբ մեր վրա այս վայրենություն
 Պիտի բռնակա գոռոզ ճանկերով:
 Եղբայր է նա մեզ, որ ճշմարտության
 Չինվորված այսօր կորավոր սրով
 Կամի քայքայել կապանք գերության,
 Խավարի բանտը փլատակելով:
 Բավական է մեզ, որքան բթացած,
 Արհամարհեցինք մարդկության բարիք.—
 Այո՛, բավական, որքան կուրացած,
 Կտրեցին կյանքից մեզ անկյանք մարդիկ:
 Այսուհետև սեր դեպի գիտություն,
 Որ առհավատչյա է բարօրության.
 Այսուհետև Կամք և Աշխատություն,
 Որ մի ծնունդ է առաքինության:
 Հանդիսացեք լույս և ճշմարտություն,
 Թո՛ղ փախչի գիշեր մոայլված սրտերի,
 Հաղթի՛ր, խորտակի՛ր, բանականություն,
 Մոլար կարծիքներ, որդիք խավարի:
 Ազգ բավմաչարչար, դու ա՛յգ թորգոմյան,
 Թո՛ղ անշարժություն այդ քո մահակիր.
 Դե՛պի ասպարեզ առաքինության.—
 Մտտենում է քեզ ավետյաց երկիր:
 Աստվածեղեն աջ մարդկության Փրկչին
 Լինելու է քեզ առաջնորդ հպոր.
 Դեպի կրթություն հանուն սուրբ Խաչին.—
 Ա՛յդ է պահանջում դարձս լուսավոր:
 Մա՛հ Չորիներին, նախանձով վառված,
 Աքսոր ու կորուստ Վեստ-Սարգիսներին.
 Դոցա համար լույս տգիտահալած
 Դարձել է մի ժանտ դահիճ դառնագին,
 Դոքա անձևական օգտին պարապած
 Իրավունքն ազգի կարկել են գետին.
 Եվ սուտ հայությանը դիմակավորված,
 Փոսեր են փորում բարի մարդերին:
 Առողջ մտածողն — աղանդավոր է:
 Ճշմարիտ խոսողն — հայի ռիտերիմ:

Ու՛շ որ Հային է — այն նրկնքից է.
 Դա՛տ արա սոցա, Տե՛ր իմ, Աստված իմ:
 Միայն կաշռավածն անարգ արծաթից,
 Կարող էր այդպես խորհել ու մտածել,
 Միայն մուրրվածն կեղտոտ ախտերից
 Կարող է այդպես լուրյան փայլիայել:
 Եթե՛վայ է նա և միշտ նկովայ,
 Որ քարոզել է սուտ ազգայնություն,
 Որ ազգի առջև դարձս լուսափայլ
 Խավար է կոչել և տգիտություն:
 Թունավորված են օրերս վշտալի
 Ազգիս անպա շահամոլներից.
 Տեսնելով ձեր գործք, ո՛վ ծնունդ իժի,
 Արյուն է կաթում իմ խարշած սրտից:
 Սրբություն պղծած, հավատ կաշռած,
 Ազգ ու հայրենիք անարգ վաճառված.
 Կա՛րգ, օրե՛նք, պատի՛վ — բոլորն ոտնակոխ,
 Ամեն տեղ դժոխք, մատնություն ու ռի:
 Հուսահատության սևամած ամպեր
 Ակնկոծվում են իմ սրտի վերա.
 Ո՛հ, ի՛նչ դառն վիճակ, ի՛նչ տխուր ժամեր,
 Աե՛փոյա՛լ լինիք, մարդի՛կ անպա:
 Ո՛ւր որդիական արտասուք ու սեր,
 Ո՛ւր ցավակցության դառն հառաչանքներ.
 Մի՛թե ձեր խեղճ մոր գիտության շղթան,
 Չգալի չէ ձեզ, որդի՞ք չարության:
 Ա՛խ եթե, հայ ազգը, մի օր կամ մի ժամ,
 Աստված պարզներ քեզ միտք խելացի—
 Դու կտեսնեիր, որքա՛ն անպա՛մ
 Մարդիկ կան քո մեջ, անկյա՛նք, անհոգի՛:
 Դու կտեսնեիր, որ քո չորս կողմում
 Օձեր են բնակվում, դահի՛ճք կորստյան,
 Որ անխիղճ որդիքդ արյունդ են ծծում,
 Մահ քեզ խնդրելով, անբա՛ղղ Հայաստան:
 Նյութապաշտությունն մահու կապանքով
 Խեղդել է դոցա ծանրը լծի տակ.
 Չեններն ու ոտներ պինդ կաշկանդելով,

Վարում է անգուտ կորստի հատակ:
 Ոսկի ու արծաթ, արծաթ ու ոսկի—
 Ահա՛ մտածունք թո ընտրյալների:
 Սոքա են նոցա եւթյան կենտրոն,
 Կանթի նպատակ, Աստված ու Կրոն:
 Ո՛վ ապատություն, սուրբ աքսորական,
 Չոհեյու եմ քեզ իմ անձն հավիտյան:
 Թո՛ղ ստրկացած դարերով խորդիկ,
 Դենն իմ վերա նպովքի կնիք:
 Թո՛ղ սրե չար իեզուն անպոր թշնամին,
 Թափելով վերաս թունավոր սխալներ,
 Ես պիտի խնդրեմ, ա՛յգ իմ լալագին,
 Ոտնակոխ եղած քո իրավունքներ:
 Ոչ ոք չէ՛ կարող հոգուս նպատակ
 ձնել, խորտակել բռնության կենքով:
 Ոչ սո՛ւր, ոչ արո՛ւն, ոչ բա՛նտ, ոչ կայծա՛կ,
 Ոչ նո՛կնիակ գեհեն մշտավառ բոցով:
 Թո՛ղ անմիտ մարդիկ, փրփրաւ: ու գոչեն—
 Անվեհեր հոգին կմնա միշտ ապաւ:
 Թո՛ղ այիք ժայռը պարկե՛ծ ու կոծեն—
 Նա, ծաղր առնելով, կմնա միշտ հաստատ
 Բայց սպասեցե՛ք, որդի՛ք խաճարի,
 Կգա ձե՛ր վերա անեղ դատաստան
 Նորան գրավելու չեն ոսկեյի
 Գանձերն ու պարկերն սն հարստության:
 Կերթան, կանցնեն այս դառն օրերը,—
 Կգա երևան նոր ապգ, նոր կյանքով:
 Նա կրատե՛ ձեր փառաբար գործերը,
 Ամո՛թ ու արձան ձեզ նվիրելով:

1861 թ. նոյեմբերի 25.

ԱՌԱՋԻՆ ՍԵՐ

Երեկ տեսա քեզ պարտեկում,
 Ծաղկած էիր վարդի պես,—
 Եվ թո պատկերդ հոգուս միջում
 Նկարվեցավ լուսատես:

Այնտեղ, ո՛վ կույս ինձ գերեցիր,
 Այնտեղ եւ քեզ սիրեցի:
 Այնտեղ հոգիս ջերմ, սիրալիր
 Ես քեզ ընծա բերեցի,
 Այժմ չունիմ մի ուրախ ժամ:
 Տխուր է սիրուս իբրև դազադ,
 Ես մեռանել մինչեւ անգամ
 Ցանկանում եմ, ո՛հ, ավա՛ղ:
 Որպես ջճից ծանա, թունավոր,
 Դա ինձօրեից փախչում ես,
 Տեսանելու ինձ սգավոր,
 Ծիծաղում ե՛ս, խնդում ե՛ս...

1861 թ.

ԱՋՍՏ ՄԱՐԴ

Մարդ, դու պատկեր ես և նմանություն
 Այն վեհ Արարչին, որ խնամում է քեզ,
 Սիրիր ուրեմն միշտ ապատություն,
 Հոգով անպղտոր, սրտով սուրբ և հեղ:

Նա՛, ո՛վ ալնիկ մարդ, կարող է միայն
 Զո կյանք ու վախճան վերհամբարձ առնել,
 Նա՛ միայն հոգին Բրիստոնեության,
 Կարո՛ղ է թո մեզ սփռել, ծավալել:

Ապատությունն է կյանք և պորություն,
 Թաճավոր, իշխան, և հարստություն,
 Ապատությունը — դուստրը սրբության,
 Փրկիչ ազգերի աստված մարդկության:

Նա սեր է մաքուր և երանության հույս,
 Առաքինությամբ և շնորհով լի,
 Նորա մեզ պայծառ ծավալվում է լույս,
 Կաշառեղ նորան ջէ կարող ունի:

Նա, որ ջէ ընչուս սեր ընկերության,
 Հարգելով օրենք անձ և առաջին:

Որին չեն շարժում հուզմունք սրբապան,—
Ապատ չէ եւ, այլ սպասավոր Իլիին:

Ապատ չէ այն մարդն, որ հասարակաց
Արհամարհելով բարեբաղդություն,
Ասել է սրտում ինչ գործ անմոռաց.
Փո՛ղ է հարկավոր և հարստություն:

Այն մարդն է ապատ, որ անձնանկեր
Չոհեղ է յուր կյանքն ազգին, անխռով,
Որ հարուստներին չէ ծխել խունկեր,
Մարդահաճության տաղեր երգելով:

Ապատ այն հոգին, որին չէ գրավել
Անմիտ ամբոխի ծափահարություն.
Որին բնավին չէ վշտացրել
Կուպիտ մարդերի չարագործություն:

1862 թ. ապրիլ

ԱՌ ԳԵՂԵՑԿՈՒ՜Ր Կ...

Ես չկամիմ, որ իմ վիշտերս
Չար մարդիկը իմանան.
Ո՛ւմ եմ սիրում, ո՛վ է իմ տերս,—
Աստված գիտե այդ միայն:

(Բասիլիոս Լուսինյան)

Երբ նայում ես դու իմ վերա
Տխրությանը լի հայացքով,—
Ես տանջվում եմ, Աստված վկա,
Խորին լուռություն պահելով:

Բնության որդիք քաղցր ձայնով
Ուրախություն են հընչում.
Սիրուն առվակն մեղմ խաղացքով
Յուր ալիքն է թավալում:

Անտառումը ման եմ գալի,—
Գլուխ են տալիս ինձ ծառեր.
Սոխակները ուրախալի
Ողջունում են իմ քայլեր:

Սակայն ի վուր. սիրո ցնորներ
Խռովում են իմ հոգիս.
Այդ քո կրակոտ վույզ աչեր
Նկարվում են առաջիս:

Եթե հարուստ ես լինեի,
Գոհարներով և ոսկով,
Քեզ մի պալատ կշինեի
Աղամանդյա դռներով:

Լ՛թոռ պայծառ, ոսկուց ձուլած,
Պալատի մեջ կլնեի,
Ծվ քեզ, ով կույս առջևդ չոքած
Մինչև ի մահ կպաշտեի:

Քաղցրահոտ ես իբրև ծաղիկ,
Վայելչագեղ քան էրոս,
Սեր ես շնչում, ով գեղեցիկ,
Վարդ ես բուրում և ամբոս:

1862 թ. հուլիսի 20.
Ամառանոցում Դավիթովկա գյուղի մեջ:

ԵՐԱՁ

Ես լսեցի մի անուշ ձայն,—
Իմ ծերացած մոր մոտ էր—
Փայլեց նշույլ ուրախության,
Բայց ամսո՛ւս, որ երապ էր:

Կարկաչահոս աղբյուր այնտեղ
Թավալում էր մարգարիտ.—
Նա հստակ էր, որպես բյուրեղ,
Այն երա՛պ էր ցնորամիտ:

Եվ մեղեդին տխուր, մայրենի
Հիշեց մանկության օրեր.
Մորըս համբույրն ես զգացի,
Ա՛խ, ափսո՛ս, որ երազ էր:

Կուրծքին սեղմեց կարուսագին,
Աչքերս սրբեց — շատ թաց էր,—
Բայց արտասուքս գնում էին...
Ա՛խ, այդ ինչո՛ւ երազ էր...
1864 թ. հունվարի 2.

ՃՇՄԱՐՏԱՆՈՍ

Եվ ինձ այն օրից, երբ շքթունքս հայտնի
Օրինեցին անունը արդարության,
Ատեցին տղանք, դատասարտեցի:
Ինձ փոս փորեցին,— գործի՛ չարության:

Ոխ ու նախանձ, որպես փառարիկ,
Նոցա կուրծքի մեջ աղեկոճեցաք.
Կուրացա՛ն մարդիկ, սիրեցի՛ն մարդիկ
Խավարի դևը:— Լույսը ծածկվեցաք:

Շատ քան լսեցի նոցա բերանից,
Շատ աքսորանքի տարա ես հարված.
Բայց սուրբ դատավորն օրինեց վերնից,
Վահա՛ն հովանի ուղարկեց Աստված:

Ես խոսք տվեցի մարմնով և հոգով,
Արյունով, սրով նորան կնքեցի,
Եվ խաչ առնելով և կուրծքս ծածկելով,
Երկինք և դժոխք վկա կանչեցի:

Եվ այն վայրկյանից դևի փորձություն
Իմ համար, ե՛ղբադք, չնչի՛ն խաղալիկ,
Այն ժամանակից քաջազորություն
Աջակից ունիմ.— անպոր են մարդիկ:

Ես լավ հասկացա կյանքի նպատակ,
Բարձր և Չարի՛ գանազանություն.
Ասացի. թող չա՛րն առնե՛ ռունառայ,
Բարին... առ ունի մի ա՛յլ հաղթություն:
1864 թ. ապրիլի 3.

ԱՌ ՀՐԱԺԱՐՎԱԾԸ

Կյանքը—գեղեցիկ պարզև աշխարհում,
Եվ կյանքից հեռու ի՛նչ ճանապարհ կա.
Ո՛վ մարդ, թո սիրտը ո՛ւր է վերանում,
Կապած, կաշկանդած երկրիս վերա:

Ինչպես կարող ես նորա կապանքից
Եվ ծանրությունից դու ազատ մնալ.
Հող պիտի դառնաս, ծնել ես հողից,
Թե ստեղծողին կամիս հավատալ:

Հողից կարող ես դու նորից փոխվել
Սողուն կամ վեռուն, ճըճի կամ ծծմակ,
Ցեցի պես շարժվել, դարձյալ հող լինել,
Մեկ ցեխ պատրաստել— ծեփել պատ ու ծակ:

Նայի՛ր լուրջ աչքով, ահա անապատ.
Ի՛նչ պիտի գործես, որ Տիրոջ առջև
Ստանաս դու վարձ:— Անմիտ հուսահատ,
Չուրկ ես աշխարհից և չունիս այսպե՛ս:

Հավատը՝ գործով միայն է՛ հաճո,
Եվ առանց գործի չունիս դու հավատ.
Քարոպի՛ր անխոնջ գործը Աստուծո,
Եվ մի՛ հեռանալ անմարդ անապատ:

Կարդա՛, ականջ դիր Ավետարանին,
Եվ նրա սողեքն ձգիր այգբիդ տակ.
Տե՛ս, ի՛նչ է՛ ասում քեզ աստվածային
Արյունով զրտնած քաղաքաբնակ սե՛րսի:

Ա՛ն փշա պսակ և մտի՛ր աշխարհ.
Այդտեղ է, ո՛վ մարդ, Աստուծո Տաճար.
Այդտեղ քո կյանքը վաստակո՛ւմ վարժիր,
Այդտեղ սրբությամբ դու գո՛րծ կատարիր:

Այդտեղ սասարեպ քրիստոնեության,—
Այդ կյանք բարվոքող մեծակշիռ ուսման.
Թե ունիս ականջ լսելու— լսի՛ր.
Թո՛ղ մթին այրիք, ճգնավոր, փախի՛ր:

1864 թ. մայիսի 6.
Ռուս ուլմտատեղում.

ՊՈՆՏ

1

Պոն՛տ, հեռո՛ւ կաց ծափից ամբոխի,
Երբ քեզ տիրում է ոգևորություն.—
Նա ծանր ցնորք է մի հիվանդ սրտի,
Մի խախո՛ւտ խելքի թելադրություն:

2

Դու պաշտոնյա ես վերին սրբության,
Որ նվիրել է Աստված աշխարհին.—
Դու պիտի հերքես հասարակության
Կանխամուտ կարծիք, դու սաստես չարին:

3

Մի՛ մեծարիր դու կուռքը հարստի,
Ունակո՛խ արա, փշրի՛ր և անց կաց.
Տաճար Աստուծո— հոգին Պոնտի,
Թե մամոն իջխեց— դժոխք է պղծած:

4

Եվ այն ժամանակ, երբ քեզ հանեին
Կախաղան կամ պուն նշավակելի,
Եվ անփառք ճակատդ մրով ծեփեին,—
Արժանի՛ ես դու, թշվա՛ռ, արժանի:

5

Ահա՛ ձիթենին կանաչ ճյուղերով,
Ընորհակալ սրտի զոհաբերություն—
Պոն՛տ, զարդարիր ճակատդ նորանով,
Թե սիրել ես ազգդ և արդարություն:

6

Ահա՛ երջանիկ առաջին հայեր
Քեզ շիրիմներից ողջույն են տալի.
Ահա՛ գալոցքի հեռավոր թոռներ
Երգում են սաղմոս գործիդ պատվելի:

7

Օծյա՛լ աստուծո, եղիր դու թարգման
Այն մեծակշիռ գաղափարների,
Որ կարող էին անունդ անսահման
Դարերին բաշխել, փա՛ռք կնքել բարի:

8

Ո՛վ ես մեր օծյալք:— Բայց լեզու լռի՛ր,
Ո՛ւմ հետ է քո խոսք, ունա՛յն քո խրատ,—
Միայն բամբասանք, միայն ախտակիր
Հիշոցք որպես ծով կը թափվին վերադ:

Նստած են նոցա բորբոսած քանտում
Տաղաչափության: Հուստիաստություն
Ուսում է նորանց: Լուսն չէ թափանցում
Այդ մեռած կամքի գեղեցկություն:

Լուծվե՛լ է, լուծվե՛լ նոցա խեղճ իտպառ,
Ո՛ր բժիշկ հմուտ, որ արե՛ն մի ձար.—
— Խթան պարթուցիչ և ճշմարտություն,
Սո՛ւր որպես նշտար, կօ՛ն՛ Ի որպես թույն:

1864 թ. մայիսի 25.
Մոսկվա

ԿԵՅՅԵ ՍՈՒՐԲ ԳՈՐԾԸ

Եվ ես երբեմն երգում էի
Անհոգ քնարիս լարերով
Գեղեցկություն միայն սերի,
Վառված նորա հուզմունքով:

Եվ իմ մուգաս ինքնահավան
Կամեր այդպես ինձ պահել,
Եվ միշտ երազ, ցնորք թաղցրության
Հոգուս առջև ժողովել:

Ես գորացա... խորտակեցի
Այդ մուգայի թնություն.
Եվ սերտ սիրով ողջունեցի
Քրտնաջա՛ն աջխառություն:

Ես լսեցի վարժապետներ,
Եվ վերջինս, ինձ գրեցա...

Եվ լաց, և սուգ, և աղաչանք,
Այն էր ա՛յգ իմ հարազատ:

Ես ուխտեցի լինել մշակ,
Հասարակաց պիտույքի.
Երգե՛լ ուսա գործ և վաստակ,
Արդար հացը այս կյանքի:
1864 թ. հունիսի 1.

ՄԻՋԻՆ ՏԻԳՐԱՆ

I

Տիգրա՛ն, փառափեղ հայոց թագավոր
Եվ աշխարհակալ անթիվ ազգերի,
Ո՛ւր է կալվածքը քո հանդիսավոր,
Ո՛ւր է պետություն քո հրաշալի.
Ո՛ւր Տիգրանակերտ, մեզ պատասխանի՛ր,—
Այդ ճոխ քաղաքը, առջած գանձով,
Որ հափշտակեց բազուկդ հաղթակիր
Եվ մի հազվագյուտ կարգարեց հրաշքով,
Ո՛ւր գնաց, ասա՛, քո կարողություն:
Դու վե՛ր կաց, կանգնի՛ր,— ի՛նչ ենք տեսանում—
Այստեղ փլատակ, այնտեղ պղծություն,
Միայն բուերի ձա՛յն ենք մենք լսում:

II

Ո՛ւր արենարբու կարող քո սոււեր,
Որով ճնշվեցան Փոքր Ասիան,
Մենք չենք գտանում անգամ ինչ սավեր,
Բայց թե ավերակ տրված կորստյան
Եվ դո՛ւք, փառասեր որդիք Հռոմս,
Դո՛ւք, ո՛վ Լուկուլլոս, Կոաս, Պոմպեոս,
Ո՛ւր ձեր քաջության պսակը դափնա,

Որով պճնում էր Հոռնը գոռով:
Դուք խրոխտայով թափեցիք արյուն,
Ծածկեցիք դաշտերն փշրած զենքերով,
Որ այսօր մի ծանր և մի հավերժ քուն
Ամփոփե՛ ձեր փառք, դագաղի փշով:

III

Ահա ձեր զենքի մեծ հանդիսարան,
Ուր ժողովելով վառ յեգիտներ,
Կամեիք նվաճել զորավոր Տիգրան
Եվ նորա վերա տարածել սուվեր:
Այստեղ Միհրդատ խորտակված թուլնով,
Այնտեղ Բարզափրան հաղթության փողով,
Այստեղ դուք իշխան և հրամայող.—
Բայց այժմ տեսե՛ք... բլուրներ օարձրացած:
Շիրիմներ ճնշված... այստեղ և հաղթող,
Եվ տեր, և ծառա մի հողով ծածկված,
Եվ Հա՛յն, և Պարթև՛, և Հոռ՛նայացին
Նո՛ւյն անարգ կորուստը ընդունեցին:

1864 թ. հունիսի 2.

ԱՇՏԱՐԱԿ

Գեղեցկանիստ է Աշտարակ,
Շատ այգիներ ևս ունի.
Այնտեղ երկինքն է կապուտակ,
Այնտեղ օդն է քաղցրալի:
Մեծ, ընդարձակ, կանաչ դաշտեր
Լի են ծաղկով քաղցրահոտ.
Մարդահասակ, խնկանըվեր,
Բարձրանում է այնտեղ խոտ:
Այդ սիրուն գյուղն ունի մի գետ,
Եվ այն լի է ձկներով:

Այնտեղ իշխան և կարմրախետ
Խա՛ղ են կապուս խայտալով:

Եվ հարապատ այգիներից
Տարածվում է քաղցրություն,
Եվ Քասախը ուրախալից
Բերում է ձեզ յուր ողջույն:

Բայց այդ բլուրն ստրկության
Կաշկանդած է կապանքով.
Ժողովուրդը թշվառական
Խեղդված է մեծ խավարով:

Եվ տխրությամբ ես կանգնած եմ,
Եվ ողբում է իմ հոգիս.
«Ո՛վ Աշտարակ, ջեզ սիրում եմ,
Ո՛վ ջեզ սիրեց, որպես ես»:

Կես գիշերին, երբ քնով խոր
Հանգստանում է աշխարհ,—
Վեր եմ կենում ես սգավոր.
Աղոթո՛ւմ եմ քո հասար:

1864 թ. հունիսի 2.
Բոգորոզակ.

ԻՆՁ ՄԻ՛ ՍԻՐԻՐ

Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր.
Ես շատ և շատ փոխվել եմ.
Ս՛ո թաշկինակդ — աչերդ սրբի՛ր,
Ես ջեզ սիրել կարող չեմ:

Գնացին անդարձ անհոգ օրեր,
Գնաց և վառ մանկություն.
Կուրծքըս ճնշվեց և մեռավ սեր...
Եվ ևս չունի այլ գարուն:

Դու մի՛ որբար, իմ սիրելի,
Ինձ նոր դու մեր տալու չես.
Կա՛յ է հոգիս կնիքով մահի,
Թե՛ն ողջ քեզ ինձ գո՞հես:

Խավար ես ես, որպես վիշեր,
Իմ ջորս կողմի՛ն փաթորիկ.
Չունի՛մ քեզ սեր, չունի՛ս քեզ սեր,
Ես միտո՞ւմ եմ հայրենիք:

1864 թ հունիսի 19.
Ամասուոցում.

ԽՈՐՀՐԴԱՅՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂՈՒ

I

Ի՛նչ անուշությամբ սահում են ժամեր
Գեղեցկատեսիլ, խնկահոտ զարթան.
Ո՛րքան ոգելից վառվում են սրտեր,
Անձնատուր եղած քաղցր անդորրության.
Եվ բնությունը ոսկի ծափտով,
Զգեստավորված վարդագեղ քաղով,
Հանդիպում է օր: Նորեկ առավոտ:
Ցյուն շաղ-գոհար, ճոճում է արոտ:
Եվ ծածանվելով կայտառ շատրվան,
Ցայտում է շիթերն յուր աղաւանդյան.
Եվ նորա տրտունջն այնքան սիրելի
Գրավում է աչերդ և միտք, և հոգի:

II

Երկինք կաթուտակ: Առողջ, զովարար
Շնչում է վե՛րիտ: Գառններ՝ և հողթեր
Խաղում են դաշտում: Թեղում է անտառ:
Երբեք է տիկնակ: Դարում են թիեր:

30

Ամեն մի թռչուն, ամեն մի էակ,
Վերածնվում է այս շնորհաբեր
Ավազանի մեջ, և ձոր ընդարձակ
Եվ հովիտ կանաչ, և վառ բլուրներ:
Թե՛ն խռոված լինիս, ո՛վ օտար,
Հակառակ կամքիդ, այդ կանաչավառ
Տեսարանները քեզ կիրավիրեն,
Որ քաղցր ստվեր վերադ տարածեն:

III

Չորս կողմից գարուն: Կանաչ կատարով
Հոգաբարձներ հառաջ են գալի.
Եվ խաղաղ, անուշ, հանգուցիչ քնով
Մոռանում ես դու վիշտը աշխարհի:
Վարսագեղ տնկած, ծառերի շարքեր
Մեղմիկ շարժվում են: Ուրախ և զվարթ
Վազում է առավոտ: Սիրելի՛ պատկեր,
ձրած կոկոնից դուրս նայում է վարդ,
Կարմրում է վարդ, վառ արջալույսի
Չքնաղ դուստրը, բայց համաձայն չեմ,
Որ դա սքողեր անոթխած կուսի
Գեղեցկությունը, որին սիրեց եմ:

IV

Սիրո համբույրներ նորա շրթունքին.
Ծաղկում են գարնան հոգելից կանքով,
Կարծես, սաստում են երիտասարդին,
Երբ կամեր քաղել դորանց հայացքով.
Եվ մարմարիտնը նապուք ձեռների,
Եվ իբրև փրփուր լանջքը ձյունափայլ,
Եվ այն շողջողուն մետաքս մազերի,—
Անհագ, թույլ, տված ուսեղի վերա—
Ատնում են նորան հրեշտակ կատարյալ:

31

Որ ամոքում էր վիշտերդ դժնյա,
Եվ տղայական մաքուր ցնորքով
Բացում էր ձեզ կյանք անվերջ հոսանքով:

V

Ես կարող էի այն սիրողային
Հարմարել դորան խոսքերը լորդի,
Որ նա տալիս է Լեդի Յանթային*,
Նախերգանքի մեջ պանդուխտ Հու յի.
Ո՛վ Բայրո՛ն, Բայրո՛ն, դա ոգևոր
Քո կարող գրիչ: Դա քեզ ներշնչեց
Այն վերին թռիչքը բանաստեղծության,
Երկյուղած սրտով քնարիդ մեծության,
Եվ անբռնադատ քո հոգու վեղման
Պետք է նախանձեն բոլոր պոետներ,
Որպես հանձարիդ մի համեստ նվեր:—
Երկա՛ր կը պատվեն հիշատակդ ազգեր:

VI

Համաշխարհական պոետ պանծալի,
Դու՝ քեզ՝ կանգնեցիր երկնաշառճան.
Ի՞նչպես մոռանաեք, փա՛ռքը մեզգիսի
Որ բարձրագույն է, քան սարերն Ալպյան
Փա՛ռք—որ ծնել է քո անգին քնար,
Որ ավերակներ երգեց Հույների,—
Ո՛րպես Հելլադա է հրաշափառ:
Ո՛վ Բա՛յրոն, ասա՛, ո՛վ քո մեջ դրեց
Այն վսեմ թախիծն հուսահատության,
Ի՞նչպես քո հոգին յուր մեջ անփոփեց
Այն խավար դժոխք ամենակործան:

* Լեդի Շարլոտտե, Հերլե Օքսֆորդյան Կոսմի դուստրը, որ այդ ժամանակ
(1812 թ.) դեռևս տասն և մեկ տարեկան էր:

VII

Եվ ես վնայած, շատ տեղ ման եկա,
Հանդիսարաններ չթողի մարդկան,—
Գեղեցկությունը մի անգամ գտա,
Երբե՛ք չտեսա գեղեցկիս նման:
Ոչ երազի մեջ, ուր վառուն հոգին
Հրաշագործում է պայծառ տեսիլներ,
Ո՛չ գարնան շունչը, ո՛չ հարավային
Ինձ չստեղծեցին այդպիսի պատկեր:
Նորան առա՛ջի ես ձեզ չգիտեմ,
Դուք ինքյա՛ մոեսք—ես ինչպե՛ս ասեմ:
Մեծ գեղեցկությամբ — առավել հոգով:
Եվ պայծառացած գիտության լույսով:

VIII

Լսեցի և ես խոսքերի հնչյուն,
Երբ ոգեխառնված երկու սիրահար
Խոսակցում էին. բայց այն շնչյուն,
Գրավիչ լեզուն այն կենդանարար
Արդյոք, դոցա հետ կը հավասարե՛մ:
Եթե իմ կյանքում մի ևս նշմարեմ
Այն աստվածեղեն ներդաշնակություն,—
Խլեցի՛ երկնքի ես արքայություն,
Այն խոսքերի մեջ կար ամենայն բան,
Ե՛վ դրախտ անուշ, և կյանք անսահման,
Ափսո՛ս, որ չունիմ խոսք բացահայտիչ,
Կարո՛ղ եք զգալ—ոչի՛նչ է գրիչ:

IX

Գարուն է: Սիրտ իմ, ի՞նչ ես հառաչում,
Մի՛թե չկամիս ողջունել նորան,
Բանի՛ տարի է դու չես շոշափում

Նախկին տների շուրջը քաղցրության,
Քանի՛ տարի է, որպես թշնամի,
Օկամիս հաշտվել թո վիճակի հետ,
Ինչո՞ւ կծու վիշտ—որպես խեղճի,
Օրով զիջերով է քեզ կարաստ,
Գարուն, ո՞վ գարուն, ո՞րքան ծանրություն
Ածում ես վերաս, ո՞րքան տխրակի
Հիշո՞ւմ ես թույլք:— Ո՞վ դառն հայտնություն,
Նիհրած է հոգիս, նա կը սորոգվի՞:

X

Բայց գյուղական կյանք բնության ծոցում,
Քանի՛ պարզություն և գեղեցկություն,
Եղեմա՛ դրախտն է այնտեղ փայլում,
Նորից ծնում ես—և նո՞ր մանկություն:
Մարդաշատ ազմուկ մայրաքաղաքի,
Իմ բարեկամներ, չեք լսում այդտեղ,
Ոչ դրդյունը վազող կառքերի,
Ոչ խոշոր հիշոցքը ամբոխի տգեղ:
Խորհուրդ եմ տալի, և այն փրկաբար,
Եվ այն մի խորհուրդ քաջառողջության,
Երեք անսով—թե ունիք հնար—
Դուրս գալ քաղաքից վեպի ծոց բնության:

XI

Այնտեղ ծաղիկներ թեթև շրշունով
Թափում են ամբոս և քուն փափկության,
Եվ ժրագլուխ մեղուն բզկավով,
Գնում է գործել մեղր պատվական,
Այնտեղ մանկագեղ, ժամն առավոտյան
Վարդյա ձեռներով հանգիստ է տիրում,
Եվ սիրտդ հեռու աշխարհիս ընկալն
Նենգից, կույր բազդից, սեր է ճաշակում.

Բայց ավա՞ղ ե՛ղբայրք, չիկի՛ կարծեք,
Որ ես իմ ներկա կյանքն եմ նկարում,
Այդպես է, ե՛ղբայրք, ինձ հավատացե՛ք,
Անցած, գնացած օրերս եմ հիշում:

XII

Բոգորո՞ղակ, գիտե՛ս, ո՞վ գեղեցիկ գյուղ,
Ակամա գործքս մի կողմ դնելով,
Երգ եմ բերել քեզ, թույլ տուր ինձ մի ճյուղ
Քաղեմ բերյուզից քնարիս ձոնելով,
Նա մյուս անգամ գուցե չփառվի,
Տեսնելով այդ շյուղն: Ո՞վ կանաչ թփեր,
Սուվեր տվեցեք մի օտար Հայի,
Որ այց է գալիս ձեզ օր ու գիշեր:
Բայց, ո՞հ, չեմ տեսնում ես ուրախություն:
Ժա՛մ մի չզգացի նորա արծազանք,
ձեմում եմ ձեր տակ, քայց ո՞չ հաճություն
Գզվում է կուրծքս, ո՞չ սև՝ օձ, կապա՛նք...

XIII

Գիտե՛ք, ես կյանքից այլ չեմ սպասում
Ոչ հաջողություն, ո՞չ պեթձ ապագա,
Ես խանգարվում եմ և չեմ ափսոսում,
Ոչի՛նչ չեմ թողնում աշխարհիս վերա...
Ես դեռ մատղաշ եմ: Բայց մտածելով
Մաշել եմ կյանքս, ունայն ապրելով,
Արդեն իմ կուրծքը այլ բարձրանում չէ,
Եվ առաջվա պես չգիտե շնչել,
Հանգիստ է խնդրում, քայց կըգտանե
Նորան հողի տակ... նա կամի՛ ննջել...
Այսպես նավորդը կոծելով երկար,
Ալիքների մեջ ցտնում է դադար:

XIV

Վաղ առավոտից մինչև խոր գիշեր
 Ես թափառել եմ ուռիների տակ,
 Երբ բոլոր լուսին գեղեցկացնում էր
 Ամպերի միջից: Հնչում էր սոխակ.
 Երբ ոսկենշույլ ալիքն առվակի
 Թավալվում էին մանկական խաղով,
 Քաղցր քան ձայնը արծաթե գանգի,
 Յուրյանց հոսանքից խոխոջ հանելով.
 Եվ բնությունը այս պատկերներից
 Կարծես նոր ծնավ Արարչի ձեռից,
 Երկինք ու երկիր նույնպես գեղեցիկ.
 Անտառի խորքում քնքուշ դայլայլիկ:

XY

Եվ այստեղ ես շատ երգեր եմ հյուսել
 Հայոց բարբառով և հայոց խոսքով.
 Ես Հայաստանի կսկիծն եմ լսել,
 Այրվել եմ սրտով, այրվել եմ հոգով.—
 Ես մտածել եմ երկրիս երեսին
 Թե այս ազգը լուր պահեց գոյություն
 Այնչափ վտանգից, անչա՛փ մոլեգին,
 Ունի մի խորհուրդ վերին և թաքուն:
 Ի՞նչ է, ո՛վ հա՛ մարդ, վարմանո՞ւմ ես դու:
 Որ հյուսիսային մուրք երկնքի տակ
 Հանդիսանում է հարապատ լեզու:
 Երբ քո գերության զգու՞մ եմ կապանք:

XVI

Երբ օրհասական դամբանի՞ ծոցից
 Ներկայանում է հոգուս առաջն,
 Երբ արտասուքը Հայիդ աչքերից

Թափում է երկիր, որպես հորդ անձրև,
 Երբ հուսահատված սովից մահաբեր,
 Ժխտում ես կրոն և կնիք ազգի:
 Երբ Վատիկանի հրապուրիչ օձեր*
 Առաջարկում են քեզ թունոտ ոսկի,
 Ոսկի, որ գին է մարդասպանության
 Վերջին հացի գին խեղճ ժողովրդյան,—
 Եվ այդ անունո՛վ Ավետարանի:

XVII

Ո՛վ կաթոլիկյան կուրությանը խոցված
 Չար քարոզիչներ երկպառակության,
 Ո՛վ մոլի Հոռոմ, ո՛վ Նեոն ավերած
 Մեծին Պետրոսի առաքելության,
 Ինչո՞վ, ասացե՛ք, ձեր անմիտ ծեսեր,
 Կարկատած ջքով հեթանոսական,
 Նախամեծար են, քան խաղաղասեր
 Դավանությունը լուսավորչական.
 Եվ ամո՞թ չէ ձեզ, ազգ խեղճ, ազգ անմեղ
 Փոխել կրոնից, որ Հիսուսի էր:—
 Ձեզ խեղդելու չէ՞ արդյոք շրիեղեղ:

XVIII

Ո՛չ Քրիստոսի, այլ սատանայի
 Գայթակզության եք աշակերտներ.
 Ի՞նչ է պատվիրում ձեզ Գողգոթայի
 Անմահ նահատակն—Ատելություն, թե սե՞ր՞
 Եվ այդ նահատակ, որ Ավետարան
 Յուր մահի գնով կտակեց աշխարհին.
 Եվ լուսավորիչն—զոհ ճշմարտության—
 Ո՛չ գույն իսկ ուսումն ավանդեց Հային.

* Այսպես է կոչվում պապի վեհարանը:

Ո՛չ Թաղևոսի աթոռ նստելով,
Նմանեցավ նորան խոսքով ու գործով.
Չարե՛ր, լսեցե՛ք ձեր խղճի ձայնին:

XIX.

Բայց պզո՛ւյշ կացեք դուք փարիսեցոց
ևսմորից, այն է կեղծավորություն,
Որոնք բառնալով և կական և կոծ,
Կամին ցուցանել բարեպաշտություն,
Որ խոնարհում են առաջի մարդկան,
Արդար միամիտ յուրյանց կարծելով,
Բայց մեռյալների իսկ են գերեզման,
Լի ապականյալ, պիղծ սկրններով:
Այսպես Քրիստոս երթեմն վշտացած,
Դարձավ կեղծավոր Հրեից ցեղեն,
Այսպես և այսօր մենք վիրավորված,
Դառնում ենք խարդախ Եզվիսներին*:

XX.

Դոցա բերանից մենք լսելու չենք
Սուրբ սիրո ուսմունք և ճշմարտություն.
Դոցա պիտո է — մենք այդ լավ գիտենք —
Միշտ կեղծավորվին և մնան սողուն.
Դոցա պատրաստ են ասել ամեն բան,
Երբ գորավոր էր արժարք և ոսկի,
Երբ փաղաքջելով մի պատվի նշան
Պարգևեց դոցա պապը Հռոմի,
Բայց ձեր լեզուքը թո՛ղ չհանդգնին.
Օրենքը սիրո, այլապես հնչել.
Թո՛ղ անմեղ գոհից երկինք չփակվին,
Որպես սովորեք ձեզ աշակերտել:

* Մեր խոսքը եզվիսների հետ է, չարահոգի Քարոպիչների, և ո՛չ ընդհանուր կաթոլիկ քրիստոնեության:

XXI

Եվ դու, հա՛յ կղեր, բավական է քեզ,
Նայի՛ր դու, Հա՛յր իմ, ի՛նչ մեծակշիռ
Եկել են օրեր. դու այդ չգիտե՛ս.
Մի բա՛ց աչերդ և լավ ըմբռնի՛ր:
Թե կենդանի է դեռ քո մեջ հոգի,
Թե քո կուրծքի մեջ չի մարել սատված:
Թե դու տեսնում ես լույս արեգակի,
Չէ՛, դու չես կարող մնալ քնեած.
Թե կամակոր ես, քեզ կորո՛ւստ թշվառ.
Իսկ թե ուշադիր, քեզ կյա՛նք մեծափառ,
Գո՛րծ ենք պահանջում, գո՛րծ, արիւթյո՛ւն:
Ո՛չ անփույթ հանգիստ և կրօնարտություն:

XXII

Բա՛րձր քարոպիք սուրբ Ավետարան,
Որպես ճանապարհ դեպի գիտություն.
Թո՛ղ լցվին սրտերն մխիթարության
Սուրբ աղաղակով: Եղիր դու արթուն,
Որպես արթուն էր Միածին Որդին,
Ցուր անմեղ կյանքը տալով աշխարհին:
Քե՛զ եմ բարբառում, որ աշակերտ ես
Այդ մեծ Ուսուցչին. դու ինձ լսո՛ւմ ես:
Ո՛վ կղեր, կղեր, ծանր է քո բեռն
Աստուծո առջև, եթե դու այսօր
Հոգի չզգենու, չպարպես քո ձեռն
Դեպի սուրբ վաստակ, որ կյանք տա ձեզ նոր:

XXIII

Մի նայի՛ր, անբաղդ քո ազգի վերա,
Տե՛ս, ի՛նչ արեկոծ ծովի մեջ է նա.
Առազաստ պատռած, կայմը խորտակած,

Շանթեր, կտրծակներ մանուկ գին՝որված:
 Վե՛ր կաց հագևոր Հայր վիրավորի,
 Ո՛ր ես գու. ձա՛յն տուր, թո՛ղ լսենք քո ձայն,
 Լսե՛նք քո քարոզ հայրենասերի,
 Որի համար սուրբ է խեղճ Հայաստան:—
 Չայն չկա, ավա՛ղ: Եղբարք, ի՛նչ անենք.
 Ի՛նչպես դարմանենք այս մեր վտանգիս,
 Եվ հոգևորի սիրտը զղրղենք,
 Եվ հասարակին կարգա՛նք ավետիս:

1864 թ. հունիս, հուլիս.
 Բոգորոզսկ.

ՃՇՄԱՐԻՏ ԿՐՈՆ

Мышление есть любовь.

Спиноза

Только свободное наслаждение созер-
 цания и жизни, стремящийся в безконеч-
 ное и к безконечному направленное дает
 сердцу безграничную свободу; только ре-
 лигия спасает его от тяготеющих оков
 мнения и желаний.

Шлейермахер

(Истор. филос. Куно-Фишера.)

I

Մտածում եմ ես—և կարծիքս մոլար
 Անհետանում եմ. ես կամիմ գրկել
 Այն մեծ Օրենքը, այն վեհ Կառավար,
 Որ գիտե տիեզերք դաշնավոր կշռել:
 Պարզ մտածությունք ինձ հայտ հանդիման
 Հավերժ օրենքը հառաջ են բերում,
 Իմ գոռոզ եսը յուր ինքնահավան
 Եվ մոա՛յլ ախտով է փլատակվում.
 Մեծ ուրախություն, և այն անվրդով,
 Իմ ձգտողությամբ ես գտնում եմ,
 Եվ աստուծո հետ մտածող հոգով,
 Եվ հաղորդվում եմ, և միանում եմ:

II

Եվ ներգալով Մշտնջենավորն,
 Անմահանում է Կրոնը հոգուս,
 Եվ ծավալվում է, այնքան փառավոր,
 Նորա չորս կողմին աստվածեղեն լույս:
 Եվ բաղխում է սիրտս առավե՛լ սիրով
 Դեպի գոյական արարածները,
 Ընչասեր կրքից նա պատվելով,
 Օրինաբանում է Չորավոր Հայրը:
 Բացվում է այդտեղ անխախտ սրբապան,
 Ուր թագավոր է խաղաղական Սեր,
 Ուր անմահ Օրենք համաշխարհական
 Բռւրում է հոգուս Հաշտո՛ւթյան վարդեր:

III

Ես բարձրանում եմ... և ինձ փայլում է
 Սուրբ նախապատճառն աշխարհ ստեղծության,
 Ինձ Հավերժ Կարգը առաջնորդում է*
 Դեպի տաճարը ինքնագոյության:
 Ես սկսում եմ նոր—նորից ապրել,
 Եվ դադարում եմ մտքով վշտանալ,
 Եվ այդ վայրկենից կամիմ մտածել,
 Այն է ձանաչել Որ եմ—հավատա՛լ:
 ձանաչել Որ եմ—է այն վերին Սեր,
 Որ շողկապում է ընդհանուր տիեզերք,
 Եվ պատրաստում է մարդեղեն սրտեր,
 Քաղցր սաղմոսով հնչել Նորան երգ:

IV

Չգում եմ Կրոն ես ճշմարտապես,
 Եվ գիտակցությամբ սերտում եմ նորան.

* Հավերժ կարգ ասելով, հասկանում ենք նույնիսկ Աստված, որ ճարտարա-
 պետական պատճառափորությամբ արարչագործելով տիեզերք, ինքը որպես Կարգ
 ու Օրենք տնօրինում է նոցա:

Եվ ինձ չեն ճնշում մի հավատի ծես,
Եվ ոչ կուսակիցք մի դավանության:
Սուրբ է Կրոնքս, և նա ոչ ոքի
Չէ բերում վնաս կամ նախանձ կամ ոխ,
Նա ծնանում է մի մաքուր ոգի,
Եվ խաղաղության է նա ավետող:
Նախանձ են նոքա և չար ոխակալ,
Որանց իշխում է մի մեռած հավատ,
Որոնք խախտեցին սրտեր անարատ,
Եվ մարդիկ դարձան դահիճ կատարյալ:

1864 թ. հուլիսի 1,
Բոգորոդսկ.

XIX ԴԱՐԻ ԿՐԵՆԱՍԵՐԸ

(Գիշերով)

I

Հա՛մր է լեզուս, որպես գիշերով
Երկնքի կայքը և տարածություն.
Ես մտածում եմ երկյուղած սըրտով,—
Եվ հե՛տպիտե խորհրդածություն:
Ամեն տեղ կյանք է, ուր և անկանի
Քո տեսությունը: Լեռների շղթան,
Ծաղկազարդ բլուրներ, ժողովք ջրերի,
Չեզ քարոպում են փառքը բնության.
Եվ շնչում են մի խորհրդավոր
Ջորության վերա. և չես շոշափում
Այդ պորությունը, միայն հոգևոր
Քննության ա՛ռջն է ներկայանում.

II

Մի անեպրական անվերջ պորություն
Տիրում է մարդու այդ ռուպեին,
Նա տեսնում է այն ճշմարտություն,

Որ ավանդեցավ դարերից դարին.
Այն սուրբ գաղափարն Արարչագործության.
Դաշնավոր հյուսած գեղեցկության հետ.
Այն հավերժ Հոգին անհատ գոյության,
Անլույծ գաղտնիքին Տե՛ր և Վարդապե՛տ:
Դու լսում ես ձայն—և շփոթվում է
Քո սուր վննություն, ջո փորձող խելքը
Երկյուղածությամբ հնազանդում է,—
Այդտեղ հնազա՛նդ և ջրջակայքը:

III

Եվ մի՞թե, մի՞թե, երբ խանգարելով
Երկրի կապանքն ապականության,
Եվ հողեղեն նյութը թոթափելով,
Պիտո է լինիմ որս ոչնչության.
Մի՞թե այն պարզև, որ տված էր մեզ,—
Պարպել ծածուծկը, ըմբռնել գաղտնիք,
Մի՞թե, ասացե՛ք, պետք է ծուխի պես,
Անցանի մի օր, ինչպես կարծիք:
Քայց ինչո՞ւ իմ մեջ հավերժ խաղացքով
Խոսում է բանը առաջնորդական.—
Ո՛չ, բնության հետ ես միանալով,
Ես մեռնելու չեմ, և ե՛ս անվախճան:

1864 թ. հուլիսի 2,
Բոգորոդսկ.

ՕՐՆՅԱԼ ՀԱՆԳԻՍ

Օրինյա՛լ հանգիստ, ողջուն, ողջուն
Քո կենսաբեր գալստյան.
Կորավ սև օձ—անհուսություն.—
Ճնշող կապանքը բռնության:

Երկար միջոց ես թագուցի
Եռուն ոխը իմ հոգուս:

Ես շներին նախանձեցի,
Եվ չո՛ւնեի մի այլ հույս:

Ահա այն տուն, այն բանտ խավար...
Քանի՛ սև սև հիշատակ...
Այնտեղ էր այն դահիճ վատթար.
Տո՛ւն դու, դարձի՛ր փլատակ:

Թող քո հինը մինչև անգամ,
Փոխվի, որպես մի տխուր դաշտ.
Թող անկասկած ես հավատամ,
Որ ճնշեցավ Չարն անհաշտ:

Քանի դառըն ես արտասուք
Թափել եմ իմ աչքերից,
Քանի՛ հոգոցք, ցուրտ, որպես թուք,
Քանի՛ սրտի և կսկիծ:

Ո՛վ մանկություն, իմ կանաչ վարդ,
Որպես ծառա վշտացար,
Թառամեցար—և կորավ վարդ...
Քո հորիպոն չէ՛ր պայծառ...

1864 թ. հուլիսի 5.

ԲՈՆԱՎՈՐ ՍՈՒԼԹԱՆ

I

Ահա արևի արյունոտ զնդակ,
Ոսկեպօծելով կողմն արևմուտքի,
Ծածկվում է խապառ: Երկնի կապուտակ
Լցվում է աստղով անչափ հրաշալի,
Սպիտակափա՛ռ է երկնա՛լյամար,
Երկրի վերա զմրխտյա՛ ամառ.
Աստղը աստղի հետ խաղ է հորիսում,
Ծաղիկը ծաղկին հանգիստ է ասում.

Ո՛ր թշվառական, ո՛ր մահկանացուն
Կարող է խախտել այդ անդորրություն,—
Պոետի հոգին, որ վիրավորված
Ճեղքում է շղթան բռնի կաշկանդած:

II

Եվ այժմ պոետն այլ երապում չէ,
Որ նա որդի էր վերին երկնքի,
Եվ նորա հոգին պիտո է լռե,
Ուր բան էր վատթար խեղճության ազգի.
Եվ թե ծնել էր, որ լինի թարգման
Քաղցր մեղկության և անգործության,
Եվ, ոգևորված, քնարի հետ խոսեր.
Երբ նա երգում էր միայն գինի և սեր,—
Ո՛չ, նա փոխել էր այդ ծուռ գաղափար,
Նա բաժանորդ է ազգի ցավի հետ,
Եվ ահա այս խոսքս թնդում է Քնար.
Նա՛խ քաղաքացի, և ապա՛ պոետ:

III

Ո՛հ, ստրկություն, և բանտ և դագաղ,—
Նույն անարգ կորուստ, այլ միջոց չկա,
Եվ թե բռնավորն աներկյուղ, անվախ
Չգում է յուր լուծ բոլորի վերա,
Իբրև թե կամեր բարեբախտություն
Դորանով շնորհել յուր ժողովրդյան,—
Այդ փորձիչ—օ՛ճն է, այդ սուփեստություն.
Մենք ճո՛րտ ենք նորա, նա կամքիս իշխան:
Երանի՛ նորան, որ սուրը ձեռին,
Ազատ գտել է և մահ, և անուն.
Անմա՛հ, օրինակ եղավ յուր թոռին,
Նա լավ ըմբռնեց Չարի նենգություն:

Բայց երբ ազգերը ուսում կատանակ,
 Երբ այդ առողջ մարդն կսկսե ւտածել,—
 Այն ժամանակը կարող է միայն
 Ապատությունը յուր գանձը հանել.
 Այն ժամանակը միայն մարդկություն
 Կարող է կյանքը իմաստասիրել
 Եվ հասարակի բարեբախտությունն
 Անխախտ հիմքերով արարչագործել:
 Ինքնակայությունն հոնավորների*,
 Որպես թե մի ծուխ ցնդելու է վեր,
 Ինքնակա՛յ է ազգ. ինքնակա՛յ բարի,
 Ինքնակա՛յ նորա հոգու օրենքներ:

V

Լուս սենեկիս մեջ. ես կես գիշերին
 Նստած միայնակ սովոր եմ քննել
 Այսպիսի հարցեր. բայց միշտ վշտագին,
 Ելք չգտնելով. տխուր եմ մնացել.
 Այս մտածմունքով իմ նվիրական,
 Եվ այս հոգևոր ջավի կսկիծով,
 Կարծեմ. փիջանես հավերժ չերեզման,
 Մի բարի վիճակ մարդին ցանկալով.
 Ես հավատում եմ ես հաստատում եմ,
 Որ սեփական եր այդ վիճակ մարդին,
 Եվ գալու է ժամ. երբ ուրախադեմ
 Նախանձելու է այդ նա դրախտին:

1864 թ. հուլիսի 11.

Բոգոբորսկ գյուղում

* Այո՛, այստեղ մեր լնուքը անհոգի և անասովա՛ծ թռնավորների մասին է:
 Թե բանի տարել են այդ թռնակալությամ յու՛ծը մեր Ֆաճկաստանի հայ նղբայրա-
 կիցները — գիտե՛ ամեն ոք:

Վարպետը շքմարք եւ ընդինքնատաճք,
 անձամբ առեալ պատիւ եւ ոչ Աստուծոյ
 կոչեցեալ. արծաթով ընտրեալք եւ ոչ
 հոգվով. ոսկեսերք, նախնանձուք, թողեալ
 պեկութիւն, յորում Աստուած բնակն, եւ
 զայլք նդեալ՝ պիւրեանց կոտս զիշատելով:

Մովսես Խորենացի

I

Տխուր է. եղբայրք, տխուր է մեր դար.
 Հայի վիշտերից և անարգանքից
 Թառամել եմ ես, նա. որպես թշվառ,
 Ապատվելու չէ երբեք կապանքից:
 Նորան յուր հովիվք. յուր առաջնորդներ
 Մինչ հոգեվար ժամն պետք է կեղեքեն,
 Եվ եպիտական, անփառք թակարդներ
 Օտարի առջն այդ խեղճին դնեն:
 Հովիվ դառնալով ազգին հոգևոր,
 Մի սարսափելի նպատակ ունին.
 Որպես մոլեռանդ. դահիճ թունավոր.
 Ջրկել, պատառել յուր ժողովրդին,
 Եվ բողոք կարդալ. և դավաճանել,
 Թե այդ պոկեալքը կամենի խոսել:

II

Արդա՛ր դատասան, ե՛րբ է քո պատիժ.
 Ո՛ր է երկնակառք վրեժխնդրություն.
 Մի՛թե մի անմիտ, մի գարշելի իժ
 Պետք է նվաճե քո արդարություն:
 Մի՛թե դու այնքան թույլ ես և անպոր
 Այս աշխարհիս մեջ, այնքա՛ն անհաստատ,
 Որ դեպի դազաղ պիտի գնաս այսօր,
 Եվ խեղդես մեր մեջ ամենայն հավատ:
 Յո՛ւյց տուր մեկ, ցո՛ւյց տուր, որ կենդանի ես,

Կաշկանդի՛ր ձեռներն այդ հանցավորի,
Թո՛ղ այդ Աղվեսը, որպես սևերես,
Ստանա սև վարձ — վա՛րձը Հուդայի:

III

Գգված գորգմնապարդ, փափուկ բարձերով —
(Ծածկոցն է թավիչ, կապույտ — ծիրանի)
Առք և փառք մորուք շփելով,
Սերտում է անվանք հարգո սրբերի,
Նա մտահույզ է, ի՛նչպես իմանանք,
Ո՛րպիսի ճնշված դավի դղրոյուն,
Ո՛րպիսի եղենն է՝ նգության կապանք,
Սևամած թախիժ, մթին ցանկություն,—
Վարագուրում են խորամանկ ճակատ,
Ուր թագուցած է մահապարտ հանցանք
Եվ մի վասակյան ապերախտ գանգատ:

1864 թ. հուլիսի 15.
Բոգորոդսկ.

ԱՅՆ ԵՐԱՁ ԷՐ

Եվ ծանր է վիշտս, և ես քնում եմ,—
Եվ ահա երազ խորին գիշերով.
Այն մեծ երազ է, ես տեսանում եմ.
Հայի մութ աստղը փայլեց մի լուսո՛վ:
Եվ ահա հայերն, նախանձով վառված,
Դիմում են հառաջ, որպես այլ ազգեր,
Եվ մտանում է նոցա մեջ Աստված,
Բերելով յուր հետ միավորիչ սեր:
Եվ կարծես, այդ սերն պետք է հաստատվի,
Որ վարձատրե արյունով հոսած
Նոցա արտասուք, և ոգևորվի
Անծաղիկ կյանքը Հայ-հասարակաց:
Զարթնում եմ քնիցս.— ինձ պաշարում են

Նույնիսկ հոգեկան ցավի սև օձեր,
Եվ Հային չար բաղդ ինձ գուշակում են.
Ծավեցե՛ք, Հայեր, տեսածս — երա՛յ էր:

1864 թ. հուլիսի 15.
Բոգորոդսկ.



Ես տխուր եմ և չգիտեմ,
Ի՛նչպես կանցնի իմ դարը.
Ես կարծում եմ, որ բանտում եմ.—
Հեղձամաղձուկ է օրը:
Եվ հանգչում է կյանքիս հոգին,
Իմ նավելի մանկություն.
Եվ տալու չէ այս աշխարհին
Ընտրեակալ յուր ողջույն:
Նա կմեննի, և ոչ ոք ձեռն
Պարպելու չէ դեպի նա.
Առե՛ք իմ բեռն, իմ ծանր բեռն,—
Կամ հո՛ղ, մոխի՛ր իմ վերա:
Զէ՛, պայծառ չէ՛ իմ հորիպոն,
Հառաջ նայել չկամիմ.
Այնտեղ միայն սև Աքերոն,
Բայց կավմ նավակ ես չունիմ:
Հոգիս անպոր, հոգիս համըր,—
Ե՛կ և սորան դիմացի՛ր,
Խաչքս դժվա՛ր, խաչքս ծա՛նըր.
Կյա՛նք, ինձ ինչո՛ւ խաբեցիր:

1864 թ. հուլիսի 15.
Բոգորոդսկ.

ՀՈՎԻՎ

Ծառի հովանին, տերևի շրջուն,
Տխուր ողբերգակ աղբյուրի շաչուն,
Հաճելի դիրքը վնդուխտ կանաչով,

Մի սքանչեփ գեղեցկութենով,—
Միշտ ասում եմ քեզ, ո՛վ դու անցավոր,
Ո՛վ ինքնահավան դու ճանապարհորդ,
Ինչո՞ւ չես շալի այս եպպարավոր
Բարության փնե: յասնակից, կցորդ:
Եվ ահա հովտից մի քաղցր քամի
Բերում է յուր հետ աննշան ձայներ...
Լա՛վ ականջ դի՛ր դու... այն հաշնարածի:
Թութակի երգն է: Եկել է փշեր:
Կանչում է գառներն հանգչել խաղերից,
Եվ պատսպարվել պատառող գայլից:

1864 թ. հուլիսի 19.
Չերկիզով գյուղումը:

ԱՌ ԻՄ ԸՆԿԵՐԸ

I

Սեր և մանկություն,— կայտառ երկվորյակ,
Միմյանց գրկող անմեկի՞ն ընկեր,
Որպես գարնան հետ և վառ ծաղիկներ,
Որպես պարզ օրով և վառ արեգակ...
Սերն է, սի՛րելիք, չկամիմ խաբել,
Որ ձեր տրտունջը մեղմացնում է,
Եվ թե ծերությունդ դեռ չէ ժամանել,
Որպես մի թռչնակ ձեզ միշտ ժպտում է:
Սորա համար չէ՛, երբ դուք տեսնելով
Երկու սիրահար գգված, ձեռնիս
Ըզգում եք ձեր մեջ մի ժամ անխռով,
Իբրև բերում էր ձեզ մեծ ավետիս:

II

Թե վերաբերե՛ք այդ ինձ կարծե՛ք,—
Ես պնդեմով նայում եմ նոցա,
Նոցա կեցությունն է նախանձե՛քի.

Բաղդավոր թույլե՛ք թափում են ահա...
Մեր մահկանացու աշխարհն անպակաս
Լի է ամենայն տեսճությունով,
Ուր մեկին մեծ շահ, մյուսին մեծ վնաս,
Գանգատ, հայիոյանք պրախոս լեզվով:
Բայց այդ ամուլքը,— այդ սիրո որդիք
Հեռու այս կյանքի չարություններից,
Միշտ բավական են և միշտ երջանիկ,
Դոցա վերա է ծաղկում սե՛րն անբիծ:

III

Միայն երբեմն նախանձի ոգին,
Որպես մի չար դև մեր մեջ շրջելով,
Բերում է կասկած սիրո աշխարհին,
Մինչ նորա կապը խապառ լուծելով:
Բայց դո՛ւ, իմ ընկեր, գիտե՛ս ինչ է սեր,—
Երկու կողմերի համակրություն,
Իսկ թե ստավել,— երբ երկու սրտեր
Ունին մի վերին պուգավորություն:
Առանց այդ կասկած սերը կյանք չունի,
Եվ այսօր, եզուց պիտո է մեռնի,
Ուրեմն սիրի՛ր, քանի սիրում է,
Եվ խեղդի՛ր ջո սերն երբ նա մենակ է:

IV

Եվ դու այդ օրից կորուսանում ես
Քո իրավունքը, որ դու ունեիր,
Բայց անկման խաչը,— եթե խելոք ես —
Եվ վերադ չառնել դու կարող էիր:
Միայն մտածի՛ր, մենք բաղդավոր ենք,
Երբ կառավար է ապառ կամքը մեր,
Իսկ թե մենք նրան բռնաբարե՛նք,
Մեր կյանքը սաստիկ պետք է նվազեր:

Եվ քո սիրածը բաղդավոր յուրյան
Հաշվում էր մինչև սերդ սիրում էր քեզ,
Այդ սերը անցավ — և նա ինքնիշխան
Գնաց — նո՛ր բաղդի կապմել ասպարեզ:

1864 թ. հուլիսի 21,
Բոզորդակ.

ՄՐՏԻ ԿՍԿԻԾ

Քանի՛ ժամ է, օտարության
Տվել եմ անձս վշտայի.
Ինձ թվում է, որ հավիտյան
Ծածկվեցավ հողն հայրենի:

Ես, համարյա՛, ցնորված եմ,
Ես հիվանդ եմ միշտ հոգով.
Բարի՛ մարդիկ, հանգիստ չունեմ,
Ես մեռնում եմ սիրելով:

Ա՛խ մա՛յր, ասա՛, քանի՛ կսկիծ
Դուրս է թափվում քո կուրծքից,
Ո՛ւր այդ կսկիծ... դեպ ա՛յն աշխարհ...
Այդ բողո՛ք է, ո՛վ մեծ հայր:

1864 թ. օգոստոսի 3.



Ես այն օրից, երբ քո պատկեր
Շիջավ, որպես մի ճրագ,—
Տաղականում եմ ողբանքվեր.
Անմահ է քո հիշատակ:

Ես այց եկա գերեզմանիդ,
Շատ արտասուք թափեցի.—
Թող ճաշակե մաքուր, հոգիդ
Խաղաղություն, ասացի:

Եվ թացում են ինձ արտասուք,
Առատ որպես մի առու,
Ա՛խ, հասկանալ կարող չեք դուք.
Ո՛ննիք սիրտ մի պզուռ:

Եվ հնչում է իմ ականջին
Սիրո երգը կախարդիչ:
Ո՛ւր ես հրեշտակ իմ երկնային,—
Իմ տրտմության՝ սփոփիչ:
1864 թ. օգոստոսի 3.

ԵՎ ԴՈՒ ԱՅԴՊԵՍ

I

Ո՛վ իս մտերիմ ընկեր մանկության,
Դու մտածում ես ինձ դավաճանել,
Եվ իմ սիրտ սիրո ոգեխառնության
Այլևս չկամիս համազգա՛ց լինել:
Եվ ահա շրթունքդ «ներիր» շնչեց —
Եվ ես աշխարհում մնացի մենակ.
Եվ իմ կուրծքիս մեջ սիրտըս նվաղեց.—
Իմ ծաղկա՛ծ այգի, դարձար փլատակ:
Կանա՛յք, ձեր սիրտը ես լավ գննեցի,
Եվ այսուհետև հավիվ թե խաբվեմ.
Եվ թե մանկությունս հավիտյան ծածկվի,
Ձեր նենգ արվեստը աշխարհին կպատմեմ:

II

Ի դեպ է այստեղ, երիտասարդներ,
Որ դեռ նվիրված չեք կնոջ սրտին,
Որ, դեռ ցնորված, չեք ճանաչել սեր,—
Լսել խորհուրդը: Թե այդ խրատին
Ականջ դնեիք — դուք կարող էիք
Լինել բաղդավոր և սիրո աշխարհ

Ոտք կոխել հաստատ:— Ո՛վ դուք պատանիք,
 Խեղդեցե՛ք կիրքը ձեր իշխանաբար,
 Թեև բորբոքվեր սիրո կրակով
 Ձեր բոլոր կյանքը: Արձակ նայեցեք
 Սիրած ընկերիդ աչքերին. տեսե՛ք—
 Չվառվին նոքա մեղմ աղաչանքով,
 Եվ հավատացե՛ք. ախտեր կսկսեն
 Եո գալ նոցա մեջ — և ձեզ կսիրեն:

1864 թ. օգոստոսի 5.
 Բոգորոդսկ.

ԱՆՏԱՎՈՐ ԺԱՄ

Ինչո՞ւ այդպես արտասվալի
 Դու նայում ես իմ վերա,
 Քեզ չե՛մ սիրում. իմ սիրելի,
 Ի՞նչ է քո միտքը, առա՛:

Ի՞նչ ես կարդում իմ աչքերում,
 Մի՞թե սիրո հավաստիք:—
 Ո՛վ խեղճ աղջիկ, ի՞նչ ես անում,
 Ի՞նչ պիտ ասեն քեզ մարդիկ:

Մազերը կախ, և շրթունքներ,
 Լի ցանկությամբ ախտավոր,
 Խոնարհում են համբույրներ
 Ինձ տալիս է նա անկոր...

Ո՛հ, փրկիչ եմ ես քո, ո՛վ կույս.
 Ես խնայում եմ քո տարիք...
 Խեղդի՛ր այդ չար և անմիտ հույս,
 Հետո կլինես երջանիկ...

1864 թ. օգոստոսի 8
 Չերկիով գյուղում

О родина моя! я вижу стены, вижу
 Колонны, арки, башни и дворцы,
 Что были наших предков достоянием,
 Но славы их, но лавров их не вижу,
 Но горе, горе изранена она!
 (Стихот. иностранных поэтов)

I

Հովիտ տրամության, անհա՛յր հայրենիք
 Հին աշխարհների արգո պևոր.
 Կապանքների մեջ — վայ քո փճակիդ—
 Խեղդվե՛լ է կյանքդ քնով դարավոր:
 Միթե, ինձ ասա, նո՞րա համար էր
 Քո արյունահեղ նահատակություն,
 Քո ընտրյալների գոհած դիակներ,
 Որ գոռուանա այժմ բռնություն.
 Նո՞րա համար էր, որ Ավարայրը
 Ընդունեց յուր ծոց քաջ քաջ վկաներ,
 Որ ճնշե հային գերության բեռը,
 Որ դժո՛խք փոխվին նորա պարզ օրեր:

II

Այսպես տրամության միակ առարկա,
 Աշխարհ Վարդանա, աշխարհ Սահակա.
 Բարբարոսների անհազ ձեաներից
 Չրկվեցա՛ր վերջին պատությունից:
 Անմեղ գառների դադարեց արյուն:
 Որով ներկվեցան դաշտերն ամայի,
 Եվ անհետացավ նետերի շաչյուն,
 Որպես և ուժը բռնավորների:
 Մի դամբանական խորին յուրություն
 Սփռել է վերադ մահի վարագույր,
 Միայն երբեմնը ագռավ սևաթույր,
 Հերձելով անբնակ քո տարածություն,
 Խնդրում է յուրյան այդտեղ կերակո՛ւր:

III

Այսպես ոսկրներ, ազգությամբ կնքած,
Դարևոր փոշու թունբերով ծածկված,
Մարտիրոսներիդ պայծառ մահարձան,
Եվ հերոսներիդ պանծալի դամբան,
Եվ վերջին շունչը հարապատ կյանքի,—
Բոլորը կորավ առանց մի հետքի:
Կորա՛վ արդարև: Այսպես Հայաստան
Վաճառեցին քեզ որդիք չարության,
Որպես անպատիվ մի կալանավոր,
Խաղալիք դարձար ազգերի ձեռին,
Որպես խավար բանտ սևացավ քո օր
Ամո՞թ առնողին, ամո՞թ տվողին...

IV

Այժմ կարող ես, որպես դագաղում,
Հանգիստ որոնել անընդմիջելի.
Քո նավը շարդվեց — և ալիք ծովի
Իսկույն լռեցան, այլ չե՛ն կատաղում:
Ահա նենգավոր նախանձի ոգին,
Մի դժոխային ծիծաղ նրեսին,
Նայում է վերադ,— և փլատակներ
Տխուր պատկերով հառաջ են գալի.—
Հրո՛վ ու սրո՛վ ածել է ավեր,
Եվ ոչինչ չկա, որ նորից շարժվի,
Եվ Հայ կյանքի մեծամեծ շինված,
Որպես անապա՛տ անշքեղացած:

V

Սևարյուն հեռքով ամենայն մի քար
Նշանակված է: տատակով, փշով
Ծածկված պալատներ, ապարանք, տաճար...

Անգամ շները կատաղի հաչով
Չեն խանգարելու նինչ քո ծանրագին.
Մնա՛ց քո մեջ գեշ, որ լափիլիպին:
Ո՛հ, թե ձեր սիրտը խիստ տաղտկացած է
Մեծ աշխարհային գործավոր կյանքից,
Եկե՛ք Հայաստան. նա ձեզ կսփոփե,
Թեպետ և ձեր մեջ մի ծանրը թախիծ
Պիտո է եռա, թեև, ո՛վ օտար,
Պիտ գոչես, ո՛վ ազգ, դու ինչպե՛ս ընկար:

VI

Դու տեսնո՛ւմ ես քո տխուր վիճակը,
Դառն արտասուքի արժանի պավակ.
Դառն արտասու՛քի... չարագույժ ագռավ,
Անգղ գիշատիչ քո ջուխտակ աչեր
Սրածայր ճանկով շուտով կփորեն,
Եվ տարածելով հաղթական թևեր,
Հիշատակիդ հետքն անգամ կտանեն:
Եթե քո այգին դալար չծաղկե,
Թե չկանաչի ծառը գիտության,—
Ավե՛ր օրհասի քեզ պիտի ճնշե.
Այսպես է անբախտ հայիդ ապագան,
Անհա՛յր, անտերո՛ւնչ և թափառակա՛ն:

1864 թ. օգոստոսի 10.

Բոգորոզակ.

ԻՄ ՎԻՃԱԿԸ

Ես գրում եմ կշտամբելով
Անխիղճ մարդի սև գործեր.
Բոլոր կարծիքն պարսավելով,
Վկայել կամիմ նորան սեր:

Եվ փշյա է իմ ճանապարհ.
Ամբողջ դժոխք և բողոք

Ինձ լարում են կորուստ վատթար
Ինձ բարեկամ — և ո՞նչ ոք.

Հաստատ ոտով ես գնում եմ,
ձգնարտությամբ ես գինվորված,
Անկեղծ քնարով ես օրհնում եմ
Եվ թշնամիքս և Աստված:
1864 թ. սեպտեմբերի 11.

ՍԻՐՈ ԿՅԱՆՔԸ

Ո՛վ իմ սիրելի, ես սիրող սրտով
Խաղաղ ժամանակս կամիմ քեզ գոհել,
Եվ հոգուս մաքուր սուրբ պագսմունքով
Հրաշալի պատկերդ կենդանագրել:
Կամիմ հավատալ, որ այսուհետև
Անունդ տվեցի ես ապագային,
Տվեցի եթե աշխարհիս առջև
Քեզ ձիշտ նկարեց պոետի վրձին:
Պո՛ետ, դիցուք, դու փոքր ինչ հայտնեցիր
Նորա արտաքին գեղեցկությունը,
Բայց դու, ո՛վ պոետ, ինչո՞ւ լռեցիր
Եվ հոգու կյանքը և մեծությունը:

!!

Ես խոնարհում եմ, որպես թե հաղթված,
Ծունր եմ կրկնում որպես հաղթողի,
Դափնի պսակով, երեք կարգ հյուսած,
Ես բոլորում եմ ճակատն սոր երգչի,
Թե դա կարող էր երևան հանել
Այն աստվածեղեն հոգու հատկություն,
Եվ այն սրբության եղեմ նկարել,

Ո՛վ երբեք չմտավ ոչինչ նենգություն:
Ռույսե՛ր հյուսիսի, ճանապարհ սրեք
Ահա ձեր պարծանք — սա ձեր թագավորն
Պետք է ճանաչեք. մի՛թե չգիտեք,
Որ Սիրո տաճար սորան ասեցին:

III

Նա ման է գայր — և սիրո հուսանք
Առատ թափում է յուր ճանապարհին, —
Եվ ձեզ գրկում է մի վերին հրճվանք
Եվ հաղթակա՛ն է շքեղ թագուհին:
Բարձրագե՛ղ հասակ, հրաշալի կապմված,
Եվ օրորվում է և բեկբեկվում է,
Որպես մի ծաղիկ, պեփուռից շարժած,
Եվ աչեր կյանքո՛վ փայլաբանվում է:
Մանո՛ւկ դու սիրո և գեղեցկության,
Թող խաղաղ սահեն քո անմեղ օրս.
Թող աճե միտքդ լուսով գիտության,
Մաքուր, անարատ, որպես պարզ եթեր:

IV

Նա ման է գալի և մատաղ սրտերն
Ահա մաշվում են սերից կաթոգին.
Նա ծիծաղում է — և սիրո մատներն
Գծագրում են նորա շրթունքին
Մի ամբողջ դրախտ քաղցր համբույրի,
Որ ես կարծում եմ ձեռք Արարչի
Մի անգամ ստեղծեց Ադամի համար,
Որ Եվայի սեռն սիրով բարձրանար:
Դու գեղեցիկ ես, ո՛վ թե առավել
Ուսման շնորհիվ գեղեցկանայիր,
Եվ քո քույրերիդ, այդ քեզ խիստ վայել,
Առաջնորդուհի հանդիսանայիր:

Թե սպիտակափառ շուշան ձեռներով
 Առնեի՛ր այս թերթս — քո սիրով գրած,
 Թե հոգի բերող կապույտ աչքերով
 Նայեիր սորան:— ո՛վ իմ մեծ Աստված,
 Ո՛րքան հոգևոր ինձ հանգստություն,
 Ո՛րքան բաղդ, և հույս, և երանություն
 Կարող էիր դու ինձ հասուցանել:
 Ո՛վ կույս նապելի, թե ցանկաս հիշել
 Պոետի անուն, ինչպես մտածեց
 Եվ ինչպես մեռավ — կարդա՛ այս տողեր—
 Թո՛ղ ևս հնչեն պապանձած լարեր.
 Իմ քնարն կյանքըս քեզ ընծա՛ բերեց:
 1864 թ

ՍԻՐՈ ԿՈՐՈՒՍՏ

Այն բուպեից, երբ Սերըս մեռավ,
 Աշխարհիս վերա շատ օրեր անցան.
 Բայց երբեք հոգիս չծիծաղեցավ.
 Տխո՛ւր երավներ ինձ երևեցան:

Եվ շնչեց պեփյուռ,— և սոխակն երգեց
 Խոր լռության մեջ, և թնդաց անտառ.
 Իմ անդամներից ցուրտ սարսուռ վապեց,
 Եվ սոսկալի վի՛շտ և մաշի՛չ խավա՛ր...

Եվ այժմ շղթայքն անհաստատ կյանքի
 Տանում եմ վերաս, հնազանդ նորան,
 Եվ ես չեմ սպասում, որ ձեռն կույր բաղդի
 Սփռեր առա՛ջիս ոսկի մեծության:

Ոսկի մեծության... և ինչո՞ւ ինձ այդ,
 Միթե դորանով կպարթնի հոգիս.
 Ա՛խ, շուտով շուտով մահվան որոգայթ
 Լծածկե ամպով հորիզոն կյանքիս:

Կհանգչի աստղըս... կծածկվի արև
 Մայր յտանելով: Հավիտենական
 Կհափշտակե ինձ քուն ծանրաթև,—
 Եվ շվարում եմ... որպիսի՛ վախճան...

Գիտեմ. կկանգնի կյանքիս փրություն.
 Կմեռնի մարմին, կփտի դիակ,
 Եվ անվերջ է այս հեղափոխություն...
 Բայց դու ո՛ւր, հո՛գի, սֆինքս անգուշակ...

Կհիշե՛ս երգչիդ, կտխրե՛ս ծածուկ,
 Շագանակահե՛ր կույս կապուտաչյա,
 Կուղարկես սորան երկու արտասուք,
 Իբր հավերժ սիրո սուրբ առհավատչյա:

Մոսկվայի մեջ, մի դաստակերտում,
 Գուցե. փայլում ես անհոգ հրճվանքով,
 Բայց դու չես պզում, բայց դու չես լսում
 Երգչիդ մրմունջը, շաղախվա՛ծ թույնով:
 1864 թ.

ԵԶՎԻՏՆԵՐ ԵՎ ՁԵՅԹՈՒՆ

Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցոց կեղծա-
 տրաց պի յածիք ընդ ծով եւ ընդ ցամաք
 առնել եկանուտ մի եւ յորժամ լինիցի,
 առնեք զնա որդի գեհենի կրկին եւս
 քան զձեզ:

Աւետարան.

I

Անա՛րգ ծառաներ, որ Քրիստոսի
 Աննախանձ ուսման խեղդել եք հոգին,
 Որ երանությունն հանդերձյալ կյանքի
 Տալիս եք միայն սուրբ Կաթոլիկին.—
 Արդյո՞ք, կբախե՛ն կուրծքըդ կաշառած
 Մարդասեր դարիս առողջ հոսանքներ.

Կփռե՛ն մաքի կապեր ժանգոտած
Եվ ժամանակը, և նորա փորձեր:
Բայց պատրաստ է նազն, արդեն, լողալով,
Օվկիանոսի հերձում է այիք,
Եվ սպիտակափայլ առագաստներով
Թռչում է ձեր հետ,— բայց ո՛ւր, չար մարդիկ:

II

Չեյթո՛ւն, պրբայան մնացորդ անցյալի,
Տավրոս լեռների Հայ ազգ բնակիչ,
Արթո՛ւն կաց.— գիտե՛ս, վերադ է գալի
Եվ վիտ ամբոխը, գայլեր գիշատիչ:
Նոքա յուրանց հետ շատ ոսկի ունին,
Նոքա կշռում են դորանով կրոն...
Ականջ չդնես գետնաքարշ լեզվին,
Թքի՛ր լրտեսին,— պինվորվի՛ր. Չեյթո՛ւն:
Լայուլի ստրուկ, բարեպաշտ քսուն
Պիտի նախատե քո Լուսավորիչ.
Որ կյանքիդ համար չխնայեց արյուն,
Եվ բազմաչարչար եղավ քեզ փրկիչ:

III

Հարապատ եղբա՛ր, որդի քաջության,
Թո՛ղ չկաշառե եզվիտի ոսկին
Քո սուրբ հավատը, քո կրքի հրական
Ավանդություններ, քո եկեղեցի՛ն:
Կարմրի՛ր, եթե պապի արբանյակ,
Յուր ամոթապարտ որոգայթներով,
Կարաց քեզ որսալ, կարաց խայտառակ
Հաղթություն կանգնել, և, ծաղր առնելով,
Կործանել ամուր քո բնակարան,
Ուր հապարավոր Սուլթանի գործեր
Սրով մաշեցան և սասանեցան.—
Այսպե՛ս պիտո՛ լինի եզվիտի նետեր:

IV

Շատ ժամանակ է, որ Եվրոպայից
Այդ ազվեսներն արտաքս հանվելով,
Եկել են ձեր կողմն — շահվել ձեզանից,
Արկածախնդիր եզվիտ մնալով:
Ո՛վ Չեյթո՛ւն, Չեյթո՛ւն, վերջին շո՛ւնչ պոհիր.
Չոհիր քո երկրին ո՛չ ամբարիշտին,
Ո՛չ քո թշնամուն սատանայակիր.—
Սուրբ անկախության, ազգիդ պարծանքին
Բե՛ր դորան, Չեյթո՛ւն.— թող գերեզմանի
Տարածվի վերադ ապականություն.
Ապատ ծնել ես,— թո՛ղ ապատ մեռնի
Չեյթունի որդին, քեզ անմահություն:

V

Կգտնե՛նք ձեր մեջ մե՛նք Հայաստանի
Ախոյանները, որ կյանք կնքեցին
Անմահ պարծանքով, և բռնավորի
Շղթայք ու կապանք գոռու փշրեցին.
Ո՛վ արդյո՞ք ձեր կուրծքն առաքինական
Կրանձե հրով, կարո՞ղ եք մեզ տալ
Մի Ավարայրի նախատակ Վարդան,
Կամ թե մի Վահան, ապուծ կատարյալ.
Թե սոքա ինքյանք պետք է դազարից
Նորից գան հանդես, որ ստրկության
Խորտակվին պարիսպք, որ Հայի կուրծքից
Բխում է հորդառատ աղբյու՛ր քաջության:

VI

Ո՛վ ապատություն, դու սպառապին
Տավրոս լեռներից մեզ երևեցար,

Եվ արենարբու Ազիկն անօրեն*
Տարավ նշավակ, անկավ չարաչար:
Ա՛խ, պահի՛ր և այժմ քեզ ծանոթ Չեյթուն,
Տե՛ս, որքան վերքեր և որքան հարված
Յուր մեջքի վրա տանում է մաշված,
Եվ չունի ոչ ոք ո՛չինչ օգնություն:
Եղեռնագործ են իշխանք աշխարհի.
Դոքա չեն լսում մուրճերի վարկեր,
Որից գոսացած և արտասովալի
Փչում են հոգին այդ անմեղ զոհեր:

VII

Երբ պետք է լռես Անարդարություն,
Ճնշող, խարջամող մտքի ծաղիկներ,
Ե՛րբ գոռոպների խոլամտություն
Պիտո է գրկե կորստյան ստվեր.
Մինչև ե՛րբ պետք է մնա գորավոր
Չարության կողմը, որ վանդակներով
Կապել է մեր խելքն, մեր հանճարն հպոր,
Որ պետք է լցներ աշխարհ հրաշքով.
Մե՛կ, որ միությանը ձեռք ձեռքի տրված,
Գիտության դրոշով մի սուրբ գունդ կապված,—
Պետք է լուծեինք անլուծանելին,
Եվ աստվածանա՛ր մեր ապատ հոգին:

VIII

Բայց ահա շատ մոտ արձակ ասպարեզ
Բացվում է աչքիս: Խոնում են ազգեր
Ուրախ երգերով. նոքա պարվերես

* 1862 թվին, օգոստոս ամսին, Վերսալից Զարդեցին տաճիկ կորսուհեթ Ազիկ
Վաշայի կանոնավոր կործը և շատ թղթանոթներ էլեցին:

Այս հաղթությունը պիտո է տոնախմբի հայրենասեր շրջաններում, որպես
Վրաստանի հայկական քաջասրտության:

Չգիտեն, ի՞նչ է կապանք, շղթաներ...
Ապատ են նոքա... և ամենայն բան
Շնչում է միայն սուրբ ապատություն:
Եվ չէ երևում բնության նշան...
Սեր, և Արդար գործ, և Եղբայրություն
Իշխում են դոքա.— և առհասարակ
Ծաղկում է հանգիստ, և Բալդ, և Վաստակ...
Այո՛, սերմերը, կարծեմ, աճում են,
Երբ ազգե՛րն յուրյանց պիտ՝ կառավարեն:
1864 թ.

ԱՆՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

I

Ո՛վ անհոգ տգետ և թեթևամիտ,
Ե՛րբ պետք է դուրս գաս ուղիղ ճանապարհ,
Ե՛րբ պետք է վարթնի քո անգործ հոգիդ,
Ինչպե՛ս են տանում այդ լուծը վատթար:
Չե՛ք քո նպատակ պախարակելի,
Եվ չունիս առջև մի այլ նպատակ,
Ճակատիդ վերա են նախատինքի
Կարդում եմ միայն զվկելի՛ կապանք:
Այսպես է պտուղ, ո՛վ թշվառական,
Երբ անարգեցավ Աստուծո պատկեր,
Երբ սուրբ հանճարը բանականության,
Ապականեցին ճճի՛ք և ցեցեր:

II

Ո՛վ տգիտություն, գազան ահավոր.
Դու, միշտ փոխելով քո կերպարանքը,
Թևավորվում ես և ևս կորավոր,—
Որ թունավորես մարդկեղեն կյանքը:
Եվ քո խորամանկ, քո չար մեքենան

Գիտե գրավել շողուն ճաճաբելով
Թուլերի սրանք, որոնց կրթության
Ֆաճարն չկարաց ծախալել լուսով:
Եվ ինձ շատ անգամ դու փորձ փորձեցիր
Գրել պաշտոնյա ըն անխառն կուռքին.
Դու, քրպես պարզ օր քեզ ցույց ասեցիր,—
Բայց շատ վատահ էր իմ սատար հողին.
Նա դիտաց պատժել քաղցր աստանան —
Եվ նա որդեգիր գնաց գիտություն:

III

Բացվի՛ր ընդարձակ, իմ հոգու տաճար,
Կամիմ քաջությամբ գնալ ճանապարհ.
Եվ չնեղանջել խճճիս սրբության:
Սրբի՛ր իմ առաջս. թող պարսավական:
Չրախոսությունք ինձ չխափանեն,
Եվ գլխիս ուղեղն թող չապականեն:
Մաքրի՛ր, սնակի՛ր իմ լայն ասպարեզ,—
Կեցցե՛ Գիտություն — պաշտոնյա եմ քեզ:
Խոստովանությամբ ծունր եմ խոնարհում,
Որ դու ես միակ Արարիչ լուսո.
Խեղքիս բանալին քե՛զ եմ նվիրում.—
Արա ինչ կամիս — եղիցեն կամք Քո:

IV

Երբե՛ք և երբեք խոնարհելու չե՛
Իմ պարունոցը աշխարհիս առաջն,—
Թե՛ն չարչարվեմ, թե՛ օրս հառաչե.
Ազա՛տ թող փայլե իմ կյանքի արև:
Կեղծավորությունե, անարժան գործեր,
Հոգիս կաշառել ուրազ կամ գանձով.—
Ես պետք է խեղդեմ այդ անարգ կի՛թքեր,
Որ կյանքին Խայեմ համարձակ աչքով:

Հաստատ քայներով գարծս կակսեմ,
Թե՛ն փշով լիք փե՛եք ճանապարհ.
Արդար քրտինքով ինձ հա՛ց կճարեմ,—
Եվ ա՛յնտեղ ինձ վարձ — բարի և ո՛չ չար:
1864 թ.

ԽՐՄՍ

Ես ձեզ ցավում եմ. դուք մի հեռե՛եք
Գիշերաշրջիկ անտռակներին,
Որոնց մեռելոտ անձը կիսաքնկ
Լողում է անկյանք ախտերի ձոցին.

Որոնց արհեստն է նշավակ հաղթություն,—
Խլել անթըղ ողջախոս կուսի,
Եվ որոնց կյանքի գարծունեություն
Անմիտ ցնորք է — հավասար պար՛կե:
1864 թ.
Կուսկով դատակերտում:



Որքան և պերճ չպայտարվեա,
Բոլորն Վուր է, սիրելի.
Որքան հասակդ չըծումընես,—
Այդ շորերն քեզ չեն գալի:

Գեղեցկությունը չէ կարոտում
Փայլողության արտաքին.
Միայն չտեսն է պահանջում,
Որ աղչիկներն վարդարվին:

Եվ մեզ շատով հասկանեցի.
Թե՛ ներկա էր պարտություն.
Թե՛ քաղցր քո մեկնակի
Չիմե՛ք այնպես պարտե:

Եղի՛ր այնպես, ինչպես որ կաս.

Քո գործը չէ գրավել:

Ապա թե ոչ — ես հանապապ

Կամիմ անձրդ պարսավել:

1864 թ.

Ամառանոցում.

ԱՆՏԱՌԻ ՄԵՉ

Ո՛վ դու վաստակած օտար անցավոր,
Ե՛կ, հանգստացի՛ր. այստեղ կեցություն
Կարող ես գտնել. քեզ հովանավոր
Կլինեն ծառեր, և մի վարթուն
Ոգի կստանաս:— Արբի՛ր, ներշնչի՛ր
Բարեխառն զեփյուռ և օդ քաղցրության:
Թե հիվանդ ես դու — ինձ հավատացի՛ր —
Քո զգայարանքը և քո գոյություն
Եվ կնորոզվեն և կառողջանան:
Եվ մի բարի քուն այնքան անդորրիկ
Կփակեն աչերդ, մինչ վարդանման
Այգը կըջողա, և նորածաղիկ
Կավետե քեզ օր: Այստեղ, սիրելի,
Թոչում են ժամե՛րն աննկատելի:

1864 թ.

Ամառանոցում.

ՄԵԾ ԹԱՏՐՈՆԻ ՄԵՉ

I

Նայեցե՛ք աչ կողմ — առաջին հարկում:
Դիտակ ուղղեցե՛ք. մաքուր աղավնին
Անկույզ շնորհով է գեղեցկանում.
Ծաղկում է գարուն նորա շրթունքին:
Չկարծե՛ք, որ սա լինե՛ր նոցանից,

Որոնց բարքն ու վարքն է կասկածելի,
Որ խորհրդավոր այն քողի տակից
Աչքեր առնելով շատ անոթալի:

II

Որ վաճառելով և խիղճը և սեր,
Աշխարհիս վերա այլօարվեստ չունին,
Միայն զվզելի անպարկեշտ հույսեր
Յուրյանց զլիս մեջ պտըտվում էին,
Որոնք պատրաստ են որոգայթ լարել
Եվ փորձանքի մեջ ձեր անձը ձգել,
Որ ընդդեմ կոչման գեղեցիկ սեռի
Մեղքեր են գործել ձեզ անբուժելի:—

III

Ո՛վ, թե մեկի մեջ այս կարծիքս ծագի,
Նա ինքը պիղծ է և չունի հոգի.
Ազնի՛վ պատանիք, ատեցե՛ք դորան —
Այդ գունատ ժառա՛նգ հեշտասիրության:
Նա, աչքերը ցած, այնքան երկչուտ էր,
Որ թե անցնելով հայացք ձգեիր,
Որպես մի սայր, շառագունում էր.—
Անբարբա՛ռ էին շրթունք գեղալիր:

IV

Համեստ է բարքը և քաղցր շարժված,
Նորա պարանոցն է շուշանագեղ.
Աչքեր կենդանի, սիրով ներշնչված,
Եվ նորա վերա ամեն բան շքեղ:
Շատ ախուաբորբոք երիտասարդներ,
Ծաղկած մանկության վառուն շնորհով,
Եվ շատ մեծատունք, և շատ հարուստներ,
Ուկու բռնության դավաճանելով:—

Բախտավոր էին, թե՛ այդ կախարհիչ,
Այդ մաքուր կույր մի ժպիտ բաշխեր,
Եվ նորա սրտկերն, այնքան գրավիչ —
Ամեն ո՛ր յուր մեջ դրոշմած ուներ:
Ահա վարագույրն ընկավ թատրոնի,
Ողբերգությունը վերջացավ ահեղ,
Բայց ոչ ոքի սիրտն ուրիշ վիշտ չունի,
Թե՛ Ա՛ն տեսնե՞ր աղջիկդ անմեղ:

1864 թ.

ՊՈՒՏ, ՆՅՈՒԹԱՊԱՇՏ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻ

I

Բայց դուք իմացե՛ք, որ այս օրինակ
Իմ սովորությունս — անդադար շոջել,
Անընդել ձորին, անմարդաբնակ,
Որպես սիրելուս այցելու լինել,
Աղբյուրի կողքին նստել խոխոջուն,
Եվ լսել նորա տրտում շնչուն,
Արմանայ Հովիտի սրտաշարժ սրնգին
Եվ զգվել սիրով մայրի գաթներին,
Հեռանայ մարդից, անտառ երազել,
Երով տարակամայ, գիշերով սթախվել,—
Ինչպե՛ք, դեռ այդ չե՛ նշանակում
Որ ես անգործ եմ, մենակ աշխարհում,—
Ո՛չ, այդ այն է, որ վառ է միշտ հոգիս
Եվ շատ ցավում եմ քեզ, ծիծաղելիս:

II

Բայց դու, որ անարգ ճանապարհներով
Հուսահատվել ես աշխարհի կյանքից,
Որ կայենի պես անո՞վ ու դողով

Փախչում ես արդար ընկերությունից,
Որ օր ու գիշեր ցուրտ, արպես գառնան,
Հաշիվների մեջ թաղված ես հոգով,
Որ անզգա ես և, որպես անբան,
Չկամիս զրկել ընկերդ ջերմ սիրով,
Կեղծավոր, խավար և արծաթաւոր,
Դո՛ւ ես խորթ որդին, դո՛ւ ես անընկեր:
Տե՛ն, ի՛նչ անտառ է, ի՛նչ արձակ հովիտ,
Ի՛նչ անեմ, ո՛վ մարդ, անկյանք է հոգիդ:
Ա՛խ, բնության հետ, և բաղդավոր եմ —
Իմ տխուր տաղերս թո՛ղ ես կցորդեմ:

III

Եվ նյութապաշտը չունի պատասխան.
Մեռած է հոգին. սիտքը գուսացած
Խավար ախտերից ընչասիրության,
Պատճառ, փողն է նորա մեծ Աստված:
Նստած է պոետն և մտածում է.
Առվի ալիքը, մեղմ թավալվելով,
Նորա մտածմունքն հափշտակում է,—
Եվ նա երգում է առվի հետ սիրով:
Բայց ահա կյանքի գործերից քրտնած,
Եվ հասարակի օգտին պարապած,
Հառաչ է գալի ժիր Բաղաբաջին,
Առողջ, անտրտուեջ և հաղթամարմին:

IV

«Ո՛չ Դու և ո՛չ Նա որդի բնության,
Եվ փայլելու չէ ձեր գլխի վերա
Սուրբ արեգակը բարեբախտության,
Չեր հանար, ասեմ, պայծառ օր ջկա:
Ես եմ հարբազան մշտնա աշխարհի,
Եվ իմ կյանքի մեջ ամեն զի վարդաբան»

Չափած կշռած է և յուր տեղն ունի.
Ես անձնապոհ եմ հասարակության.
Ե՛կ, Պոետ, քաղաք, այնտեղ գո՛րծ գործիր,
Հասարակի բաղն ու օգուտն երգի՛ր.
Դու այն ժառանգակ անդամ ես ազգի,
Եվ արժանի ես մեր սուրբ հաբգանքի:—
Այս Քաղաքացին ասաց պոետին,
Շտա՛յ քայլերով գնաց յուր գործին:

1864 թ.
Բոգորոզսկ.

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՆՈՐԱ ՈՐԴԻՔԸ

Եվ գեղեցիկ է Հայաստան աշխարհի,
Բայց գեղեցիկ չեն նոքա բուն մարդիկ,
Հայաստան կանաչ, Հայաստան դալար,
Բայց չոք ու ցամաք նորա խեղճ որդիք:

Ահա սթափված ազգեր ամենայն
Դիմում են առաջ հյոր քայլերով,
Ահա՛ բարձրացավ դրոշը ազգության,
Բայց հա՛յն քնած է կորստյան քնով:

1864 թ.
Ամառանոցում.

ԱՆԱՔԻՏ

Ո՛վ դու Անահիտ, դուստր ոսկեծին,
Ո՛ր է քո պարզերն, գործած գոհարից:—
ձակատը սեղմած ծունկերի միջին,
Արյունո՛տ շիթեր ծաղկում են աչքից:

Ո՛ր թագավորներ հարապատ փորձով
Սուրբ հանգստությանդ արթուն պահապան:
Նոքա ծածկվեցան մահի խավարով,
Քեզ միայն մնաց թախիծ անվախձան:

Ո՛վ դուստր լուսն, չքնա՛ղ արեգակ,
Այդ ինչպե՛ն եղավ, որ անիվն բաղդը
Դավաճանեց քեզ, երկնի կապուտակ
Չլացավ քո փառք — անկար գո՛ւբ բանտիս
1864 թ.

ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Երևակայական)

Ո՛վ կույս մանկագեղ, կո՛ւյս արևելքի,
Հրեշտակ սիրո — բայց ո՛չ թևավոր.
Մի հատիկ գոհար փշրված թագի,
Լույս ես իմ հոգու, տաճա՛ր փառավոր:

Անմեղությունով փայլում ես պայծառ,
Որպես շուշանը հայոց դաշտերի,
Քեզ աչդ շուշանից, հոգո՛ւս սիրահար,
Հյուսում եմ պսակ անթառամելի:

Առաջին անգամ ես այն անմարմին
Քնքշությունը տեսա կանացի,
Ա՛խ, տեղատու է շրթունքիդ վարդին
Նրբագեղ քո՛ղը արևաբացի:

Ես շատ նայեցի խաղաղ աչքերով
Զմայիչ սերիդ փայլատակության,
Վիշտրս փարատեց գարնան վեփուռով
Վա՛ռ ծաղկահասը վա՛ռ գեղեցկության:

Ես աշխարհիս մեջ շատ կանայք տեսա,
Եվ շատ կանանց հեռու ես սիրանվեր
Զգացմունքներով ոգեխառնեցա,
Բայց այժմ նոքա-նոքա մի ստվե՛ր:

1864 թ.
Ամառանոցում,

ԵՎ ԵՍ ՄԵՐՈՒՆԿ

Ո՛վ դու նախկին, որ երգիչն այնպես
Արված էր տխուրով արկախառնել քեզ,
Որին անկաշտո պարզել էր սեր,
Անտե՛ս արեցիր քո ոսկի հույսեր:

Երբեմն հրեշտակ, երբեմն չար դև
Ձևացար նորան անհաստատ սիրով,
Շատ վշտացրիր աշխարհիս առջև,
Վշտացա՛ր և դու, բայց մահի գնով:

Մինչդեռ Պերուդը ունեցավ կառքով
Նոր արշապույտի բացում է դռներ,
Դամբանիդ վերա ջերմ արտասուքով
Թացում է Երգիչն թարշամած վարդեր:

Դու դագաղումն ես — քո պատկերն պայծառ
Կրում եմ իմ մեջ, որպես սրբություն,
Ո՛վ այսուհետև իմ սրտի համար
Կարող է բերել նոր հիշողություն:

Ո՛վ նախամեծար ընկեր սիրելի,
Ինչո՞ւ փախեցար դու այս աշխարհից,
Ինչո՞ւ իմ կուրծքը այնքան ցավալի
ձնշում է մի նոր, մի կծու թախիծ:

Գեղեցիկ է կյանքն, բայց, ա՛խ, նա չունի
Ո՛չ հառատուն կայք, ո՛չ տևողություն,
Ա՛խ, թե Նազելիս մնար կենդանի,
Եվ չքանաքե՛ր, նորա պարություն:

Սպիտակ ամբաս թեպ վերջին թե՛ստ,
Եվ խոնավ դառաբա՛ն է մի հավերժ քուն,
Կարծեմ, սորանից ավել բան չկա,
Թեև, ասում են, կա այլ դրություն...

Եվ դո՛ւ, մեկ երգող այս տխուր խոսքեր,
Շուտով կստանաս քո կյանքի վախճան,
Շուտով կլինես քնափող լարեր,
Որ այնքա՛ն հեղեց, մեկ տա՛ղ պարամության:
1864 թ.

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Սո՛ւրբ արբեցության անմեղ տարիներ,
Մաքո՛ւր հրձվաքեքի դու անհոգ սրեր,
Ձեզ երգել եմ ես, երբ անուշահոտ
Ժպտում էիք ինձ, որպես առավոտ:

Պայծա՛ն մանկություն, ո՛ւր է ներդաշնակ
Քո մեղեդիքը, քո քնքուշ վիշտեր,
Եվ հով, և արև, և սեր անուշակ,
Եվ երջանկություն, և դալար վարդեր:

Թե դուք գնացիք, անցաք հավիտյան,
Եվ դառնալու չես իմ քաղցր երապ,
Ա՛խ, մի՛թե, Աստված, այիք ծերության
Պետք է ծածկեն ինձ,— ո՛վ դառն պատուհաս:

Ա՛խ, մի՛թե և ես մահի պզտտով
Պիտո է կաղամ մի ոտի վերա,
Մի՛թե վիպրս ծուռ, դողդոջուն ձեռքով
Նեցուկ պիտ՝ առնեմ, որ փոքրիկ ուժ տա:

Արի՛ մանկություն, արի՛ և այսօր,
Թո՛ղ մի ժամ ես լինեմ բախտավոր,
Ծաղկապարզ գարնան ուտիների տակ,
Թո՛ղ դարձիդ կենաց լցնե՛մ ես բաժակ:

Յուրացե՛ք փոքր ես, թույլե՛ք անգիտ,
Այցելո՛ւ եկեք նվառտ ձեր երգչին,
Հոգուս նպատակն փառքո՛վ կնքեցե՛ք,
Եվ այն ժամանակ բարյա՛մ մնացե՛ք:

1864 թ.

ՍԻՐԱՎԵՊ

Նա սեղմում էր ժպտալով,
Կուրծքի վերա իմ ձեռը,
Եվ խիստ ականիվ դարձվածով
Պատմում էր. ի՞նչ է սերը:

Նա ասում էր. սերն է կրակ,
Որ, թե վառիչ նյութ չտան,
Նույնպես հանգչում է արագ,
Որպես կայծ մի էլեկտրյան:

Սերն է աղբյուր քաղցրության,
Սիրող սրտի աղջալույս.
Սե՛րն — վառ լալա՞տեր մանկության,
Մատաղ կյանքի ոսկե հույս:

Սիրո ձայնն է կախարդիչ,
Նորա հնչմունք խանդակաթ,
Բայց առավել զմայլիչ
Երբ լեզվով է հարապատ:

Սիրի՛ր, որքան կարող ես,
Որքան փայլում է արև
Կյանքիդ օրերն նետի պես
Թռչում են արագաթև:

Կգա մի օր, մի սև օր,
Երբ մեր այգը ոսկեշող
Կխավարվի, — և անկոր
Մեզ կծածկե մի բունն հող:

Իմ սիրելի, զգո՛ւյ՛ջ կաց,
Որ լեզուդ չար չխոսե.
Պատճառ, ոչինչ դեռ չասած.
Ընկերքդ արատավոր է:

1864 թ.

ՄԱՅԻՍ

Երկինքը պա՛րկ, օրն մայիսյան.
Ես ձեմում եմ բուրաստանում,
Սիրտս ուրախ է. ես, ժպտալով,
Վարդ եմ քաղում, փունջ եմ հյուսում:

Թեթև զեփյո՛ւռ. կանաչ ափեր
Անուշության հոտ են փչում,
Եվ սոխակի դալալիկը
Քաղցր ականջիս է հասնում:

Նա մի վարդից դեպի մյուսն
Ուտոստում է ուրախալի,
Նա հնչում է դաշնակաձայն. —
Ինձ յուր արվե՛ստն է ցույց տալի:
1864 թ.

ԱՐԱՐԱՏԻ ՇՐՋԱԿԱՅՔԸ ԵՎ ՆՈՅՆ
ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Քաղցըր բամբիռով այստեղ վիպասանք —
Այդ մեծ սոխակներ հին Հայաստանի —
Երգեցին Հայի և փառք, և պարծանք,
Եվ հաղթանակներ թագավորների:
Այդ վայրենացած քարանձավներում,
Որ այժմ միայն բուեր են կենում,
Լսվում էր թնդյուն կորով նետերի
Հայոց մեծափառ, դյուցապն Մեծերի:
Ա՛հ, օրեր գնացիք և այդ խորշերին
Մնաց մի տխուր տպավորություն...
Նոքա հիշեցին յուրյանց ցանկալին...
Բայց ձմեռն փչեց, ծածկվեցավ զարուն:

Այո լուռ տեղերում կարող եք կարծել,
 Որ դեռ չէ անցել մարդկության համար
 Գյութական դարը, և չէ՛ն առապել
 Առասպելները, որ հրաշաբար
 Ավանդեցին մեկ անցած է մարդիկ,
 Երբ գերբնական երևույթներով
 Երևան եկան հապարավոր դիք,—
 Որոնց պաշտեցին երկյուղած սրտով,
 Այստեղ բնությունն է ամենախշեան,
 Եվ շատ նման է այն բռնավորի,
 Որ անգութ լսխտով հարստահարության
 Կամեր խլել կանք հայտնակների:

Բարձր սարերի ձյունապատ շղթան,
 Որպես փի տիտան երկինք վերուղղած,
 Եվ խոր անդունդներ, ուր հապարսկան
 Անշունչ լուրջուն թևեր տարածած
 Թագավորում է և քարուտ ձորեր,
 Ուր, որպես առյուծ, բաշ ծածանելով:
 Վապում են արագ, փրփրաղեղ գետեր,
 Դիպչելով ծայրին և փշրվելով,—
 Այս բոլորն, ասես հափշտակում են
 Անկախությունը ապատ էակի.
 Նա պիտ հավատա, պաշտե կուրորեն,—
 Այստեղից աղբյուր տոգետ խավարի:

1864 թ.
 Ամառանցում.

Կան թույլեք, երբ ամեն բան
 Ենթարկելով քննության,
 Երկմտում եմ, և համարյա,
 Վարարմունքիս եք չկա:

Ես պնդում եմ, որ կանխակալ
 Մտքիս կարծիքը հերքեմ,
 Եվ գիտությամբ հանդիսանալ,
 Որ իմ ա՛նձը ճանաչեմ:

Առանձնացած ես մտածում եմ,
 Որ գոյություննս պարզանա,
 Այգուղ ես եմ, այդտեղ ես եմ,
 Այդտեղ չկան դու և նա:

Ես եմ էակ, և իմ մեջ կա
 Տիեզերքի մեծություն,
 Իմ մեջ Աստվածն այն գերույս,
 Այսինքրն ճշմարտություն:

Ես մտնում եմ սուրբ տաճարը
 Առաքյալին մտածության,
 Եվ քննում է իմ հանճարը
 Անշարժ օրենք գոյության:

Ես չեմ նայում նյութի վերա,
 Որպես ծնունդ դիպվածի
 Ես բնորոմ եմ պատճառ նորա—
 Ընդհանուր կապ տիեզերքի:

Եվ տիեզերքն է գիրք ահագին.
 Ես սերտում եմ այլաբետ,
 Որ վանկ կապե իմ սուրբ հոգին,
 Որ կրուցեմ նորա հետ:

Մե՛ծ է իմաստն այդ մեծ գրքի,
Մեծ է նորա Հեղինակ,
Ես անցավոր — որդի հողի.—
Նա Անանց — անժամանակ.

Նա պատճառ է ինքը յուրյան,
Միշտ Չորութիւն գործունյա,
Նա ներքին հիւճ և հաստարան
Եվ ես շինված եմ Նորա:

1864 թ.
Անաստեղծում

ՄԻ ՉՎԱՐԹ ՄԱՆԿԱՆ

Ուրախութիւն քեզ անպակա՛ս,
Ո՛վ դու մանուկ սիրելի.
Ծի՛ս, ծաղկե՛ս և ծերանա՛ս,
Տալով պտուղ արժանի:

Որպէս ծաղիկ, մանուկ, քաղցր ես,
Եվ շնորհագեղ, որպէս օր:
Մանո՛ւկ, մանո՛ւկ, ինձ չխաբես,
Մի՛շտ կաց այդպէս լուսավոր:

Նայի՛ր վերև, տե՛ս, ի՛նչ սիրուն
Այնտեղ փայլում են աստղեր,
Եվ անթի՛վ են, և շողշողո՛ւն,
Որպէս երկու քո աչեր:

Այնտեղ, հոգյակ, բնակվում է
Մեր սուրբ Հայրը երկնքի,
Նա՛ է, որ մեզ ուղարկում է,
Եվ կյանք, և սեր, և հոգի:

Նա ծագում է յուր արեգակ
Ամենայն օր քո վերա,

Որ գվարճանաս, որպէս թռչնակ, —
Օրինի՛ր Անուն սուրբ Նորա:

Ունի հրդի մի Միածին,
Նա՛ է փրկիչ աշխարհի.
Նա խաչ ելավ, տվեց հոգին...
Որ դու լինիս մա՛րդ բարի:

Նա սիրելով յուր թշնամիք,
Օրինեց Խաչին և ներեց,
Եվ մեզ գրեց յուրյանց որդիք
Սիրե՛լ միմյանց պատվիրեց:

Նա հեզութամբ հաղթեց Չարին,
Եվ մեզ ասաց, որ և մենք
Հետևենք այդ օրինակին, —
Չհպարտանա՛նք մենք երբեք

Մանուկ սիրուն, աղոթք արա՛
Երբ դու գլուխդ խոնարհած,
Համբուրում ես պատկերդ սիւն,
Ուկենկար վարդարած:

Եվ ժպտում է, որպէս շուշան,
Անհոգ մանուկն մոր գրկին.
Այսպէս թռչնակը ճյուղի վերան,
Օրինում է յուր հրեշտակին:

Եկե՛ք Հայոց Եկեղեցի.
Այնտեղ կտեսնեք վառյված
Պայծառ դեմքը այդ երկնացի,
Գարնա՛ն վարդը կիսաբաց:

1864 թ.

ԱՆԲԱՂԴ

Նա աղջիկ էր այնպես կայտառ,
Լի մանկական աջառժով.
Նա նայում էր այնպես պայծառ,
Մի շա՛տ պարկեշտ հայացքով:

Նա անմեղ էր. անդորություն
Միշտ ողջունում էր նորան.
Նա ծաղկում էր ուրախ, անհոգ,
Որպես վա՛րդը մայիսյան:

Մինչ ծագում էր արեգակը,
Մինչ ժպտում էր առավոտ,
Երգ երգելով նա ճանում էր
Շաղկոցի մեջ քաղցրահոտ:

Նա թափում էր սիրո շունչը
Մանուշակների վերա,
Անխորձ սիրտը թրթռում էր,
Որպես թռչնակն մուտակա:

Բայց այժմ տեսե՛ք, ի՛նչ հոգու վիշտ
Նշմարվում է աչքերում.
Քնքո՛ւշ էակ, թառամել է
Աչքքան մանուկ հասակում:

Գուցնը թռած, անբախտության
Կնիքը դրած է ճակատին.
Կյա՛նք չեն խոսում անմահության
Շրթունքը այն երկնային:

Շատ կուսական, անմեղ հույսեր
Խավարված են և շիջած,
Շատ պարզամիտ զգացմունքներ
Նորա՛ մեջ թունավորված:

Այսպես լինում է մահապարտ,
Երբ, հանելով խոր հոգոց,
Դահձի կացնին նա լուռ, հանդարտ
Խոնարհում է պարանոց:

Ա՛խ, ո՛րը գնացին, իմ գեղեցիկ,
Խաղաղության վարդերը.
Այդ ի՛նչ րուպեք չարաբաստիկ
Խլեցին քո հանգիստը:

Եկեղեցում լուռ կանգնած է,
Անշարժ, որպես գերեզման,
Փեսայացվի խեղքը գնում է,
Զեղը բռնած աղչկան:

Այդ փեսա՛ն է, ա՛խ, այդ փեսա՛ն,
Որ տխրում է աղջիկը.
Նորա սիրտը, նորա կամքը
Վաճառե՛լ են ծնողքը:

1864 թ.

ՀԱՆԳԻՍՏ ԻՄ

Դու իմ Հանգիստ, Հավատ և Հույս,
Ծով անսահման քարության,
Դո՛ւ, դո՛ւ դարձյալ սառը հոգուս
Կյանք ես ցողում հարության:

Ցողա՛, աղբյուր կենդանության,
Ցողա՛ առատ հոսանքով.
Եվ իմ ժամերը դառնության
Թո՛ղ խորտակվին քո շնորհիվ:

Ե՛կ պոետի անկեղծ աշխույժ,
Եվ ապագա օրերին
Ես կավանդեմ անուն անո՛ւշ
Կապուտաշյա գեղեցկին:

Այն գեղեցկի, որին այնքան
Դափնի պսակ հյուսեցին,
Եվ պատանիք աստարորբոք
«Պարտեպ փակված» կոչեցին:

Որի աչերն շողշողում են,
Որպես աստղերն երկնքում,
Հայացքի մեջ աստվածեղեն
Քոյոր դրախտն է ցոլանում:

Մե՛ծ են երկինք, մե՛ծ է աշխարհ,—
Բայց սիրտս մեծ է ևոցանից,
Եվ առավել իմ սերս պայծառ
Այն լուսավոր աստղերից:

Շատ գանձեր կան, շա՛տ և ակներ
Օվկիանյան հատակում
Շատ զգացմունք կան, շատ խորհուրդներ
Սիրո՛վ վառվածի սրտում:

1864 թ.

ԵՐԳ ՄԵՌՆՈՂ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

(Նմանողության Դորրոյությունի «Милый друг, я умираю» ուր տող ուտանավորի):

Ազնի՛վ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,—
Օրհնո՛ւմ եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ, անզի՛ն ընկեր,
Զգնահատած ոչ ոքից.
Բայց հավաստյան անձնանվեր
Ազգիս մշակ կհաշվիմ:

Ազնի՛վ ընկեր, չմոռանաս.
Անդավաճան, ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք.—
Գնա՛ և դու նույն շավղով:

Խեղճությունը հայոց ազգի
Կարեկցաբար մտածի՛ր.
Ոսկեգրքույկն Եղիշեի
Քաջ առաջնորդ քեզ ընտրի՛ր.

Այնտեղ սուրբ կրոն, ազգ միաբան
Ազատ կամքով և խղճով.
Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,
Յուր խնկեղի քաջերով:

Հայրենի՛ք,— սեղան սրբության —
Ես Աստուծո առջև
Շատ կաղաչեմ, շատ կարտասպեմ,
Որ ծագե քեզ նոր արև:

Իմ մտերիմ, մահըս մոտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգով,
Որովհետև խիղճս արդար է,
Ճշմարտության ջատագով:

1864 թ.

ԳԵՐԻ ՀԱՅԻ ԱՂՈԹՔԸ

Գո՛հ ենք Քեզնից, ո՛վ Բարերար,
Օրինյա՛լ լինի միշտ Քո անուն:
Թո՛ղ արդար արևըդ այդ լուսավառ
Բերե յուր հետ մեկ փրկություն:

Ո՛հ, ուրախ օ՛ր ջընորհիր, Տե՛ր,
Մեր խղճալի հայրենիքին:
Նորա սիրուն սարեր, դաշտեր
Օրհնում են քեզ եռանդագին:

Մի տարի, Աստված, որ կործանակի
Կուսակցորոն Հայոց աշխարհ.
Թո՛ղ քաղցր անուն Հայաստանը
Մնա կենդան միշտ մեր հասար:

Բա՛ց մեզ դառն քո ուղբանության,
Հեռու, Մովսէս մեզ ուզարկի՛ր,
Որ այս դժնյաւ Եգիպտոսից
Ավետոյս՛ց մեզ առնեն երկիր:

Ո՛հ, այն աշխարհ, ուր առաջին
Քարոյեցալ Ավետարան.
Փայլեց դրոշը ծիրանածին,
Կանգնեցալ իսաչ քրիստոսական:

Ուր Եփրատկան Նահատակներ
Դեմ վիշապին պիկտրեցան
Պատերազմի կանաչ դաշտեր
Նոցա արյունո՛վ ներկվեցան:

Ուր հայրեր մեր երանելի.
Գրիգոր, Ներսէս, Մեսրոպ, Սահակ,
Մեծարեցին անուն ազգի,
Եվ նշեցին ծաղկապսակ:

1864 թ.

ՄԻՆՏՐԱՍ

Ահա գեղեցիկ մի թերակղզի
Էի հարավային տեսարաններով:
Աչքիդ առաջն կապույտ դաշտ ծովի,—
Դաշտը ծածկված է ռնթիվ նավերով...
Եվ ես տրտում եմ, բայց իմ տրտմություն
Անհետանում է չգիտեմ ինչո՛ւ.

ձակատս պարսեցալ, և ուրախություն
Տեսե՛ք, գալիս է, կարծեմ, այցելու:
Ծանոթ է այդտեղն մեզ պատմությունից.
Ակոր դարերն չեն համարձակվել
Ջնջել հիշատակն երկրի երեսից
Եվ ավերակի ոտի տակ դնել:

II

Այստեղ Պոնտացին — փառավոր ներոս,
Նենգության նյութը կարող Հոռոմի,
Մեծ հակառակորդ, որով Կեսարոս
Չկարողացալ ստանալ դափնի.
Այստեղ Միհրդատ, նորա Լեգեոն,
Պատերազմի փառք և բաղդ հանձար
Այստեղ մթնել է դոցա հորիպոն,
Եվ ահա սափորն և հետք շիրիմի:
Նայեցե՛ք այստեղ, պարթնել կարող չեն,
Եվ հող են նոքա, երկրպագեցե՛ք,
Եվ թող ձեր սրտերն փոքրիկ հառաչեն,—
Հերոսի նշխարք, մարդի՛կ պատվեցե՛ք:

III

Անկալ Միհրդատ, անկալ և Պոնտոս,
Եվ ո՛ր է հետքը նախկին մեծության.
Ո՛ր է քո պարծանք, ով աշխարհի գոռուկ,
Երբեմն կյանքի դու բնակարան:
Ո՛ր փիլիսոփոս, կամ ո՛ր իմաստուն
Կարող են ժամ մի կենդանացնել,
Այս դամբանական խորին լուրջուն
Հարության կյանքի թնդյունով լցնել,—
Անմի՛տ ցանկություն, և տխուր հոգով
Իմաստասիրել մնաց մեզ միայն,
Թեև՛, և մե՛նք այս օրինակով
Պիտո է գրվենք հո՛ղն ոչնչություն:

ՄԱՍԻՍ

I

Մասի՛ս, քեզ միայն աղոտ երազով
Կարող էի ես երևակայել,
Եվ արվեստավոր, սերտած սու՛ղերով
Քո գեղեցկության մեծությունն երգել:
Հեռու ցնո՛րներ ես ականատես
Նշմարում եմ Լյառն. կանաչ առաքարեզ:
Որպես մի կապերտ, ձգվում է այստեղ.
Եվ Հայաստանի ես աքյունահեղ
Հիշում եմ վիճակ: Որքա՛ն ոսոխներ
Փորձել են այստեղ յուրյանց զորություն.
Եվ Փակեղ, և Խաչ, և ատրուշաններ
Կարմիր առվակով ներկե՛լ է արյուն:

II

Այստեղ երկրորդ Հայրն մարդկեղեն ցեղի
Տակեց բազմաճյուղ ուռը խաղողի,
Որի տերևով իսկա՛յն ծածկվեցավ
Նույն րոպեին, երբ որ թմբեցավ:
Չեզ լավ հայտնի է, որ ես մի հերձված
Սորանով կրոնիդ պատճառեցիւ չեմ.
Աստվածաշունչի խոսքերն եմ կրկնում,
Եվ ավանդություն, դարերից եկած,
Թե՛ն ատելի բան չեմ համարում,
Եվ մեծ հանցանք չէ այդ Նոյին, կարծեմ,
Թեպե՛տ և,— որդին Հորն հետևելով,—
Աշխարհըս Երկնց դո՛ւն իսկ արվեստով:

III

Թո՛ղ Քաջք, ո՛վ Մասիս, չթևապարեն,
Որպես այցելու քո քարայրներին,
Թո՛ղ Մուկաները բնակիչ չլինեն

Անմարդարևակ քո մութ խորշերին.
Թող այսուհետև, թողած բոլորից,
Մերկանդամ մնաս քո նախնի փառքից,
Ծունըր խոնարհած, ես ինձ բաղդավոր
Այժմ կարծելով, քան մի այլ երգիչ,—
Քեզ հարկ եմ տալի. դու մինչև այսօր
Սովոր ես ապրել հմայքդ թովիչ,
Եվ թոթովում եմ, որպես երեխա,
Քե՛զ, Ապա՛տ Մասիս, վերջապես տեսա:

IV

Տեսա ահավոր քո ստորոտներ,
Անպի մեջ կորած քո ցուլն կատար,
Եվ առողջացան քնարիս լարեր,
Եվ քեզ երգ հյուսեց խոսքերով հարմար:
Որքա՛ն երկյուղած պագուսներով,
Աղոթք շրթունքին, դողողոջ ոտներով
Մտեցել է քեզ Հայ ազգի որդին,
Որպես այցելու խեղճ Արտավազդին:
Կրծեցե՛ք, շնեք, ժանգոտ շղթաներ,
Թող լույս տեսանե՛ անիծյալ ժառանգ*.
Այժմ Հայաստան չունի դարբիններ,
Որ վորանային սուկայի կապանք:

1865 թ.

* Մեր պատմության մեջ կարդում ենք հետագա ավանդությունը — երբ տավազդ II-ը, ընդունելով թագավորության կառավարությունը, սկսեց գանձել յուր հոր՝ Արտաշես Երկրորդի դեմ, ասելով. «Ես ի՛նչպես թագավորեմ ավերիս» (որպիե՛տև Արտաշեսի մահին շատերը ևս մեռցրին յուրյանց ըստ սուրբ թյան), — այս պատճառով հանգուցյալ Արտաշես անիծեց Արտավազդը և ստեղծեց «Որս գեալու ժամանակ թող քեզ բռնեն քաջքերը (չար ոգի, դև), տանեն Սասի վերա. այնտե՛ղ մնաս միշտ և երբե՛ք լույս չտեսնես: Հայ պառավները ցում էին, թե Արտավազդ մի այրի մեջ կապված է շղթաներով, և երկու շուն նապալ կրծում են այդ շղթաները, որ ևս ապառվի և վերջ տա աշխարհի բայց դարբինների երկաթ ծեծելու ձայնից դարձյալ վորանում էին շղթայքը»:

ԽՈՐՀՐԴԱԿՈՐ ՊԻՇԵՐ

4

Ա՛խ, ես չեմ կարող չգովի այդ գիշեր,
Այդ ան՝ը գիշեր, ուր խաղաղական
Դաջըն խուսբերով զաթիւ են ծափեր:
Ահա՛ լուսինը:— Ի՛նչ տեսնուկոն
Ճիշում է դա ինձ գագուտիքն այն տեղին,
Որ ամենայն մարդ, սրտի հատակում
Վարագուրելով,— գրովս աշխարհին
Չկամի հայտնել և չէ հախճառու՛,
Բայց թե երջանիկ այս անդորրության,
Եվ անպատասխան այս միայնություն:
Ո՛վ, ի՛նչ մրմունջով սողալիսի գիշեր
Սովոր ենք խնկել մեր առաջին Ա՛ր,
Թափել արտասուք, մարո՛ւր արտասուք,
Հառաչել մեմուկ, որ չտեսնե՛ք դուք:

II

Ահա նույն ուռին և նույն իսկ թփեր,—
(Ես երկրորդ անգամ տեսնում եմ դոցա)
Փոքր ցա՛ծ իջիր. նոր բացված վարդեր,
Կարող են ավերո՛ւ սփռել քո վերա:
Մո՛տ գնա, ի՛մ հյուր, նոքա անվուջ են,
Ա՛խ, տե՛ն գու, ո՛րքան ուրախ ժայտում են:
Դեռ անցյալ գարնան, Մայիսի ենգին,
Ես պատեղ էի, և հոգուս ընկեր
Յուշուպես այրուտդ էր. նա նայեց վարդին —
Եվ ես հյուսեցի փունջ նորան նըվեր:
Ա՛խ, առանց սիրո ի՛նչ է մանկություն.
Ահա՛, նո՛ւյն չէ, թե խորին ձերություն:
Թե՛ անբոլ գնաց, պակասե՛ր աշխարհով
Ես համենն կտանեմ, և գարուտտ տանի:

III

Ահա և հովիտ: Ի՛նչ պաղծամ կանաչ
Ճոճում է նորա մակերևույթին:
Ի՛նչ ծաղկի ապեր և հետ, և առաջ...
Ես չե՛մ նախանձում այլևս դրախտին:
Եվ կապուտակը շքեղ երկնքի
Իմ հաշտ հայացքը փաղաքշում է,
Եվ երկու աչերն շիկահեր կուսի
Եվ նկարո՛ւմ է և ինձ հիշո՛ւմ է:
Թե՛ չսիրեիք դուք ունայնություն,
Հարձեքի աղմուկ, շռայլ պերճություն,—
Դուք կարող էիք, մարդի՛կ մոլորյալ,
Այս արբեցության մեծությունն պգալ:

IV

Պարտե՛կ հանգստյան և խաղաղությա՛ն,
Ի՛նչպե՛ս չգովեմ քո առատ բերքեր,
Ինչպե՛ս չխաղամ ներդաշնակածայն
Քնարիս վերա: Այդ պերճ պատկերներ,
Որով պարզարված գեղեցկանում ես,
Որ բնությունը կենսագործում ես,—
Ինձ ընձեռում են և ուժ, և կյանք նոր,
Որով կարող եմ լինել բաղդավոր:
Քննել մեծությունն ձարտարայետի,
Եվ արարչության գաղտնիքն ըմբռնել,
Եվ ոգևորվել հոգով պոետի,
Անհասի անվա՛ն ստեղծո՛ւ տաղերգել:

1865 թ.

ՍՈՆԱԿ

Սոխակն երգեց և մոռացավ
Քաղոթը քունը գիշերի.
Նա ույզ գիշերն արտասովեցավ:
Որպես սիրուը սիրողի:

Եվ նա ասաց. ինչո՞ւ համար
Չգա՞ ոչինչ պատասխան.
Եվ նա գիտեր՝ դորա պատճառ.
Սերը չէ ինքնահավան:
1865 թ.

ՍԻՐԵԼԻ

Ծա՛նրը օրեր, գնացե՛ք շուտով,
Գնա՛ ձմեռ Հյուսիսի.
Գարուն, կանաչ ե՛կ թևերով.
Թող արձակվի ոստն վարդի:

Ես գարնան մեջ հոգուս սերը,
Սրտիս լարերն թաղեցի,
Որ գարնան հետ քո պատկերը
Գովասանեմ, սիրելի՛:
1865 թ.

ՉԱՆԳԱԿ

Որպես դորդոց բանտի դռների
Ինձ տաղտկալի է այդ վանգակի ձայն,
Գրել, մտածել ինձ անկարելի.
Լո՞ի՛ր, ո՞վ վանգակ, կո՛ւյր ծիսի նշան,

Իմ հոգու լարերն թող ալպատ շարժվին,
Որպես ալպատ է իմ մտածություն.—
Սրտիս լսելի ես իմ մեծ Փրկչին
Ահա՛ երգում եմ օրինաբանություն:
1865 թ.

ՎԵՐՁԻՆ ՀՐԱԺԵՇՏ

Ես ձի նստա: Դեպի Մոսկվա
Ուղղեցի իմ ճանապարհ.
Մորս արտասուքն այլ չտեսա.—
Արագ գնաց երիվար:

Ո՞վ արտասուքդ, մայր իմ անգին,
Պետք է սրբե, ասացի:—
Ես կը մնա՛մ այն սուրբ օրին,
Մինչև դառնաս, իմ որդի:

Եվ գնում եմ հետպիտեռ
Եվ շատ օրեր, շատ տարիք,
Մորս արտասուքն ծովանում է.
Եվ չունի՛ ժամ երջանիկ...
1865 թ.

ԿՐՈՆԱՎՈՐԻ ԱՂՈԹՔԸ

Անհաս Չորություն, որ ծավալվում ես
Անթիվ շնչավոր էակների մեջ,
Որ ամենայն բան տնօրինում ես,
Որ իբրև կանթեղ վառվում ես անշեջ,

Որ ստեղծել ես մարդը իմաստուն,
Քան առ շնչավորք քո հրամանի,
Որ բաշխել ես նուրբ բանականություն,
Մինչ հայացք մխել անդուզք երկնքի,

Որ կարողապես տվել ես Հանձարին
Թափանցել ստորինք, քննել և վննել
Ընդերք տիեզերքի, սիրել բոլորին,—
Տո՛ւր հոգուս գալոցքն այսօր գուշակել:

Եղեմի դրա՛խտ, թե խավա՛ր գեհեն
Պիտի հաստատե՞ս նորան օթևան,
Թե այս վա՛տ դամբան... Ո՞վ ես հողեղեն...
Ինչո՞վ բացեցի դուռն անմահության:

Այստեղ կմեռնեմ. այս բլուրն ահա
Կառնու դիակըս ցուրտ կամարի տակ:
Տարերք կփոխվին և աշխարհ կերթա,—
Կերթան և բլո՛ւրն, և իմ հիշատակ:

ՄԵՆԱՏՈՒՆ

Այն ի՞նչ իշխան է և ի՞նչ մեծատուն,
Որ ձեռքեց յուր ապգն, մտանեց սուրբ արքուն,
Փոխեց կրոնից, պատանեց նորան,
Եվ գավազանի հարվածների տակ,
Տվեց ժողովուրդը Գայլին ինքնիշխան.—
Ստացավ անիա՛նք գործի մրցանակ:
Եվ դառն արտասուք Հայ ծնողների
Բխեց որպես ծով. նոքա չգտան
Նորթ կրոնի մեջ յուրյանց հայրենի:
Վարդապետություն — տխրեցան, մեռան:
Այդ ի՞նչ իշխան է,— ինձ դուք ասացե՛ք,—
Հապա երեսին դորա թքեցե՛ք:

1865 թ.

ԻՏԱԼՈՒՎԻՔ ԵՎ ԻՏԱԼՍԻՔ

(Իշողություն դեպի տեղումը)

I

Ինչո՛ւ, ինչո՛ւ Իտալացիք,
Չէ թնդում քաղցը երգեհոն,
Ինչո՛ւ, քնքուշ Իտալուհիք,
Թող՛ի եք ձեր պիստոն:
Մոռացե՛լ են դոքա առես
Փափուկ սեռը կանացի.
Արտում վրեժ, կտրիճի պես,
Դիմում են վրա՛նը ոտխի:
Որպես տան մեջ, նույնպես կովում
Կանգեաժ են հեղ և հայարտ,
Գնդակներին կուրծք են ուղղում,
Եվ ջրբուռից չէ՛ գեռում վարդ:

II

Չարմանո՛ւմ եք, ինչ ստամ եմ,
Թե դուք նոցա տեսնեիք
Խաղաղ օրով, երբ քաղցրաբեմ
Բռնած կիթառն գեղեցիկ,
Փափուկ մատերն արծաթաբար
Նվագարանին դիպեցով,
Պարտեպի մեջ ծաղկադարար,—
Դուք կլսեիք անխռով
Սիրո ձայնը, սիրո հոգին,
Հյուսած սրտի թելերից.
Սիրե՛լ գիտե Իտալուհին,
Չրկված բոլոր աշխարհից:

III

Շուրջ ճակատով շուշանագեղ
Ծածանվում են թուխ մապեր,
Սև սաթի պես հոնքեր շքեղ,
Վառ աստղի ջուխտ աչեր:
Դուք լսեցե՛ք, երբ կրուցում են.
Ամբողջ դրախտ փափկության
Ձեր սրտերը կախարդում են,
Որպես տավիղն Էոլյան:
Եվ ոտխի գոռոզ հոգին
Մի՛թե չպետք է նվաճի,
Եվ նապաստան արմավենին
Դոցա առջև տարածվի:

IV

Իտալուհի՛ք, և ձեզ նման
Արևելքում մի անգամ
Ձեր քույրերը պինդորեցան

Թշնամու դեմ անպամ,
Արյաւ գնով Հայաստանին
Գնեցին նոքա փրկություն,
Եվ թաղեցին հողի ծոցին
Անմեղ ծաղկած կուսություն:
Մեռան նոքա. բայց կմեռնի՞
Նոցա գործի հաղթանակ:
Բուք դե՛պի դաշտ, մենք կենդանի
Ունինք նոցա հիշատակ:

V

Իտալիա, աշխարհի փառքի,
Դու, քո կուրծքը պահով
Ամրապնդած, հաղթանակի
Կամիս պսակվել դահիճիքով:
Մի՞թե իսպառ պետք է ճնշվի
Այդ ազգային պրություն,
Եվ առվի պես արյունդ թափվի՞
Հերոսներիդ սուրբ արյուն:
Մի՞թե ձեռներն, մի՞թե սրեր
Քո ոխերիմ թշնամու
Պետք է բերեն քեզ նոր ավեր,
Եվ ստրկանաս դարձյալ դու:

VI

Ինձ ասացե՛ք. ո՞վ ձեռքանից,
Որի մեջ մարդու սիրտ կա,
Զխեղովելով արուստիքից,
Կարող է մնալ անպա,
Տեսանելով այս ողբալի
Սրածուրջան ավերած,
Եվ սրբությունն Իտալիայի
Նշավակով անարգած:

Անիծում եմ չար ժամանակ,
Երբ Բուրբոնը գիշատիչ,
Տակեց այստեղ յուր դրոշմով
Եվ խաբեթա՛, և մատնի՛չ:

VII

Մի կա՛մք, մի շո՛ւնչ ձեզ օգնական,
Առե՛ք սուսեր — և հառա՛ջ.
Դուք սիրտ ունիք ասպետական,
Հարձակվեցե՛ք ձախ ու աջ:
Ազնիվ գործին ինքը Աստված
Ուղարկում է յուր վահան:
Իտալիա՛, փա՛ռք անմոռաց.
Կթնդա ձայնը փրկության:
Նորից, նորից անուշահոտ
Կարձակվի քո մրտենին,
Նոր արշալույս, նոր առավոտ,
Եվ ավետյա՛ց ձիթենին:

VIII

Եվ անցածիդ գեղեցկություն
Յուր դազադից կպարթնի,
Միայն ավե՛ր և պղծո՛ւթյուն
Ավստրիան կընդունի:
Իտալիա՛, դու պորավոր,—
Եվ կեցցե՛ն քո զավակներ,
Իտալիա՛, ես հողևոր
Բերում եմ քեզ իմ տաղեր:
Եվ հայի մեջ կա կենդանի
Ապաստության արձագանք,
Եվ թո՛ղ չասեն, որ հայն չունի
Ո՛չ ազատ կամք և ո՛չ կյանք:

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Անձեռագործ դու մահարձան գնել կանգնեցիր,
Ոչ հողանյութ, որպէս երկար կամ որձաքար.
Հըզոր գըրչով, սուրբ վաստակով և անձանձիր
Շունչ կենդանի և հետ մահվան հանդիսացար:

Ահա նոր Ազգ և նոր Լեզուդ յոր ձիթենին,
Քո ջրով քուսած, քնայ է բերում, ո՛վ Ստեփանոս
Նաղաղ մնա՛, մի՛ վարդավիր. քոն է դափնին,
Նավարի մեջ մեկ յայս ծագող Պրումբետոս:

Աշխարհ ծնար, և աշխարհիս դարձյալ մշակ,
Բայց չը տեսար սպա աշխարհից անդդորութուն.
Աշխատավոր մարտիկան բաժին է փշա սլակ,—
Ահ, քրտնաջան ուկրանեփոյ փառապաշտուն:

1879 թ.
Մոսկվա.

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԴԱՍԲԱՆԻՆ

(Նվեր Մ. Սարգսյանցի հիշատակին)

Ահա արևմուտք և արևաշուրթան,
Որպես զիջերփա թանձրամտեմ փառվար,
Վրա տվին ինձ, մտնելու իմ կրթուն.
Ոչ մի հույս չեմուց նոր պրոնքի խառնար:
Կա՛նք, անուշ երբայ սուսուսայ սքեղփա,
Սիրուն ցնորքիդ անցում կենճ.
Եվ վերջին յարդ սնունտդ քննարկիս
Պատըովե՛ց, որպէս արգետը ձրայթարի սնէջ:
Երբ որ ինձ թաղեց, մի՛ արարտաւորալին
Ծաղիկներ ցանեց որպայտիս վերու.
Ի՛նչ հարկաւոր է անշունչ պիտակին,
Որ մալ ից հետո սիրո կուռք դառնա:

Մանուկ օրերից, ետով սիրավառ
Երգ ես երգեցի ոգևորութան,
Բայց ինձ չքանց գրոսկ սպա աշխարհ.
Վա՛յ ձեք վարդերին, որ ահա չը կան:

Եվ թող բնութիւնն՝ միակ գեղեցիկ,
Ողջունե երգչիս վերջին հրաժեշտին,
Եվ երասխազուք մարգէթի ծաղիկ.
Անթառա՛մ խրնկե հայրենի ալփին:

Ազատ թուխտերից, թող պայծառ շոքս
Արեգն երկնքին միջօրեական,
Եվ հա՛վերժ մաստալ կանոնի պէս խաղա,
Եվ յուսակորն իմ կորա՛ծ դամբան:

1890 թ.
Մոսկվա.

ՁԻՇԵՐ

Մեռավ իմ մուգան; հանգավ և կրակ.
Անտառը լցվեց չաբ տերևներով,
Երկինքը ծածկվեց, փախաւ արեգակ,—
Էլ ես չե՛մ սպրուկ ուրախ երգերով:
Եվ աստեղապարտ թողորակ զմերթ,
Եվ արձաքախալ ջրերի խոլոցուն:
Այնու չեն խոտուէ քանսաստեղծի նեւ,
Եվ ոչ այցելում ամերկում իմ սուն:
Այժմ ինձ մեաց միայն փշրակցներ,
Մայր մտով ահա և եղուկ վերջին,—
Հանում եմ պահա, և պէն, և վարդեր,
Հանձնում եմ դորանց մանուկ սերնդին:
Բայց թող հալկական որդիքն ինձանս,
Որ իմ սուգս անցա վնձակն է եղէ.
Որ երբեք վախարկ պիտլորի նման:
Թշնամուս առջև վահան չեմ ձգէ:
Չեմ երկրպագէ ես ոսկի ետրփին:

Եվ ոչ կուռքերին պաշտել օտարի,
Այլ միշտ հոգևոր կարոտ ծարավի:
Տվել եմ արժանն ամեն մի մարդին:
Չեմ տաշել դագաղ, ու մատաղ կյանքի
Կանաչ ծառի պես ծաղկել եմ հույսեր:
Սրսկել եմ դորանց ջրով կենդանի,
Որ գալոց ազգին լինեն պտղաբեր:
Եվ հոգուս վրա այսօր իսկ խավար
Կիտվել է որպես մըրըրիկ ծովի.
Չորս կողմս ծիծաղ, և խնջույք, և թառ,
Բայց ահա և ձայն կալանավորի:
Մաշված ու դեղնած դիակի նման
Լախտեր չափելով կաշեհան մեջքին,
Քաշում են անպարտ, անմեղ Հիուսին...
«Ապատ Բարաբբա՛ գող և ավազակ.
«Ապատ և Օսման». վճռեց Եվրոպան.
«Խեղդեցեք դրան, շարդեցեք կզակ,
Որ այլևս մեկ բողոք չկարդա»:
Եվ թող հայկական որդիքն իմանան,
Որ և այժմ, կանգնած հայրենյաց շենքին,
Լարում եմ ջղերս, որ չթուլանան
Դիմակաց լինել ահեղ փոթորկին.
Քշտիր կռներդ, կտրիճ աննման,
Ա՛ն սուր, հրացան, քլունգ ու կացին,
Դժվար ճանապարհն անցիր անսասան.—
Աջ ու ձախ քանդիր, թե որ արգելք կան.
Ահա նորածին և մանուկն եկավ՝
Սուրբ ապատության տաճարին ընծա.
Մանուկ Հայաստան տեղից շարժվեցավ
Դիմեց համարձակ դեպի Գողգոթա:
Եվ գարնանային ծաղկապարզ դաշտեր
Փոխվեցին կարմիր, կապույտ ծիրանի.
Կարմիր փոխվեցին ծովի ալիքներ,
Տաշտախիլ դարձավ այգին հայրենի.
Ո՛հ, մի՛ վախենաք թե նահատակի
Գըլուխը թռավ դահճի երկաթով:
Կը գա ժամանակ, երբ հաղթանակի

Նա երգ կը հնչե դափով, ծնծղայով,
Կը գա ժամանակ, երբ ամեն մի դուռ,
Տնկած իր առջև թարմ արմավենին,
Փառավոր նորան կը կանգնե մատուռ
Եվ անուշահոտ պոեթի բազին:
Ահա նորածին և մանուկն եկավ
Սուրբ ապատության տաճարին ընծա.
Մանուկ Հայաստան տեղից շարժվեցավ,
Դիմեց համարձակ դեպի Գողգոթա:
Հենց նահատակի սուրբ ոսկորներից
Սոր լույս է ծագում աշխարհիս վերա.
Հենց Գողգոթայի լեռան կատարից
Կանգնեց նոր Աստված, և անմեղ արյուն,
Դեպի կյանք մարդիկ կանչելով մահից,
Տարավ վարդագույն նոր պսակ փշյա —
Այսքան հաղթող է արյան պորություն:
Հյուսթ աստվածեղեն, հեղուկ լուսեղեն,
Եվ ծիրանածին դրոշ փրկության:
Քո ամեն մի ջիթ, ամեն մի հյուլեն,
Սոր դար է կազմում ստրուկ մարդկության.
Եվ ամուր բանտեր, քարե պարսպով,
Գիտես սաստկությամբ թավալել գետին,
Լեռներ և դաշտեր ողողել ծովով,
Վանդակից հանել անձար թշվառին:
Ահա նորածին և մանուկն եկավ
Սուրբ ապատության տաճարին ընծա.
Մանուկ Հայաստան տեղից շարժվեցավ,
Դիմեց համարձակ դեպի Գողգոթա:
Փայլեց արևելք նոր արշալույսով,
Անհետ չքացավ և ժանգ հնության.
Նորոգման ոգին, կյանք ավետեղով,
Արյունից կռեց պսակ հաղթական:
Նահատակները փովեցին գետնին.
Գետինը կակղեց նոր սերմի համար.—
Նոր գործը մնաց մեր նոր սերնդին.—
Եվ այսուհետև առաջ անդադար:
Ահա լուսածին և մանուկն եկավ.

Գեղեցիկ՝ որպէս պատն ինքն աստված,
Արարիչ բազկով շինել սկսավ
Ազգապահության հրաշալի շինված:
1890 թ. Մտկվա.

ՊԱՆԳՈՒԽՏ ՀՈԳԻ

(Թոնր Ա. Նապարականի եղբայրական)

Հողի կապանքից հողին պատված,
Երկնքի անվերջ տարածության մեջ,
Թողում էր ուրախ, նորան գրկաբաց
Ողջունում էին աստղերը անշեջ:

Եվ քերովքներ ակետեր վեցրկան:
Հանդիարում էին խորնկով, բուրվառով —
Հանկարծ ցոլացավ փայլակի նման:
Աթոռն ոսկեղեն, լի գոհարներով:

Հանգիստ էր տիրում մշտնջենավոր,
Մարտիրոսների օրեաններում
Եվ սրբանց, զվիյն պատկ փառավոր,
Ինչպէս արեւեջ, հրախար շողջողում:

Սահում էր այնտեղ, և կենդանի ջուր,
Որպէս երեխի արտասուք մաքուր,
Եվ դրախտահալի թղփեղի միջին,
Սազմուս էր ասամ աննակալին:

Այսքան կախարդիչ, հրաշալի պատկեր
Ոչ մի հողեղեն, մի մահկանացու
Յուր կյանքի օրին երբեք տեսած չէր,
Եվ ոչ մեծության կգացել, աստուծու:

Եվ մտավ հողին խոստացած աշխարհի,
Ուր մեր աշխարհի ոչ հողու կա, ոչ վիշա:

Ուր և մեծ, և փոքր միմիանց հավասար,
Եվ Ադոնայի* ներկա նոցա միշտ:

Եվ տղիւրեց հողին հողեղեն մարդու,
Եվ չընտելացավ Դրախտի վարդերին,
Ուզում էր թողնել փիճակ կենսատու,
Ուզում էր ասել յոթ հըրեշտակին:

«Թո՛ղ ինձ, թո՛ղ, գընամ դարձյալ այն կայան,
Ուր ցավ, արտասուք և տառապանք կան,
Ուր քաղցրության հետ կա և դառն բաժակ,
Ուր օձն է առջում և վարդեղու սուակ:

«Մեր ունիմ արտասուս, լայն այս երկնքից,
Անփոփել յուր մեջ չէ կարող դըրախտ,
Խավար գիշեր է երեկնք աստղալից, —
Այնքան լուսավոր երեկոսին իմ բախտ:

«Թո՛ղ ինձ, թո՛ղ, գընամ դարձյալ այն կայան,
Ուր ցավ, արտասուք և տառապանք կան,
Ուր քաղցրության հետ կա և դառն բաժակ,
Ուր օձն է առջում և վարդեղու սուակ:

1891 թ. ապրիլի 3.

ԵՐԵՎԱՆ, ԹԻՒՆՍԻՍ

Ափսո՛ս, աղավնյակ, որ դու չես ծընած
Աշխարհաստեղծության վեցերորդ օրին,
Երբ ճարտարապետ արարիչն աստված
Կանանց փափկությանը նկարեց նվալին,
Դո՛ւ այն ժամանակ կլինեիր պատկեր
Եվ չնաշխարհիկ սիրո գաղափար,
Դո՛ւ անամպ երկինք, նա անպ ու ստվեր

Եվ ոչ հողեղեն ոք քեզ հավասար:
Որի սևաթույր մազերը կիտված
Ծալք-ծալք ցրված են բարակ ուսերու,
Եվ վառ աչքերի դյուրթող հայեցված
Երբեմն սրտակից փայլում է սիրով,
Բայց և երբեմն, ամալի պես թխպած,
Կրակ է թափում այրող կայծերով:

II

Անարատ որպես չըհրնձած ցորեն,
Մեղսապարտ երկրի մաքուր քավարան,
Ա՛խ թե մեղքերը քեզ չպաշարեն,
Եվ դու մնաս իմ միակ գոհարան:
Թեթև փչելով մաքրափայլ օդի,
Քո անուշաբույր շունչն եմ ես պոում,
Եվ խոխոջաձայն խաղում առվակի
Քո մեղմ, սիրալիր պրույցն եմ լսում,
Ծառի տերևներ, հեպիկ շարժվելով,
Նապուկ ոտերիդ հիշում եմ շարժված.
Եվ ծաղիկները, քեզ բարևելով,
Ուզում են ասել, որ դու ես աստված.
Դու համեստ աստղիկ, ամաչկոտ լուսին,
Դու իմ խնդություն և վիշտ իմ խորին,
Դու իմ պայծառ օր և տխուր գիշեր,
Իմ միակ կյանքում դո՛ւ միակ ընկեր:

1891 թ.
Մոսկվա.

Հ. ԵՎ Թ. ՏԵՐ-ՀԱԿՈՒՅԱՆՆԵՐԻ
ՀԱՐՍԱՆԻՔԻ ՔՍԱՆՀԻՆՊԱՄԵԿԻՆ

Կես գիշեր է: Լուռ սենեկում
Հանդարտ քայլով, փոքր ինչ պբաղված,
Ման եմ գալիս. և անկյունում
Տեսնեմ. քնարս պատին կախած:

Տերևի պես դողողալով,
Ես մոտեցա հին ընկերիս.
Խելքն թռավ. բայց մեղմ ձայնով
Կանչեցի ես. ողջույն քնարիս:

Առա նորան և խնդագին
Փայփայելով, լավ մաքրեցի.
Կարծեմ, լարերը պակաս էին,
Բայց տակավին դեռ արծաթի:
Եվ արծաթի տարեդարձին
Այս տողերը ինձ հնչեցին:—

Բաղդավոր գույգ. որ մտաք աշխարհ
Սիրտ սրտի հետ և միաբան:
Սիրով գնացիք ձեր ճանապարհ,
Լուսապայծառ աստղի նման:

Որ մանկության առավոտից
Արդար վաստակ եք վաստակել,
Որ անտրտունջ այս աշխարհից
Երբեք աշխարհ չեք անիծել:

Սե՛ր գեղեցիկ, սե՛ր հոյակապ,
Ամեն տեղ քո շունչն եմ լսում.
Դու մարդկության հզոր շաղկապ,
Ամեն լավ բան դու ես ստեղծում:

Եվ այդ Ձեր սերն Աստված օրհնեց,
Նայեց երկինք և հաշտ աչքով.
Թեթև պեփյուն Ձեզ ողջունեց,—
Եռա՛ց և կյանք բոլոր շնորհով:

Արևելքի շողքը շողաց
Աղամանդի գոհարներով.
Շողաց և շաղը շողջողում
Մարգարտափայլ կաթիլներով:

Շողաց և ծովքն ծիրանի
Երկու չքնաղ նավորդի հետ.
Մինը պրակապ իսկ թագուհի,
Մյուս անխանջ ճարասարայետ:

Քա՛ջ նավերդներ. Չեր գայն բարի.
Չեպ գեղեցիկ պսակ արծաթի.
Ա՛յս օր հանդես անուսնական,
Կեցցե՛ք, կեցցեք այժմ և հավիտյան:
1891 թ. հունվարի 28.

ՀԱՆԳԱՑ ՔՆԱՐ

Այսպես, իմ քնար, այսքան ժամանակ
Սիրելով իմնագիտ և դատարկություն,
Իբրև ժայռերից սեղմված մի գետակ,
Մնացիր անշարժ: Խոսնա՛կ դու շարժուն,
Չըհընչեց լարերդ և ոչ մի դաշնակ:

Ապրում եմ մենակ և առանձնացած,
Անմասն խառնաձայն ըզբոսանքներին.
Ապրում եմ, որպես մարդերից փախած:
Աչք չունիմ՝ նայել աշխարհիս կյանքին,
Տատասկի երեւան տառապված գնտերին:

Ո՛հ, մի կտրե՛լք ինձ, որ ձեպ բան երգեմ,
Որ ձեր լսելիքն երգով փայփայեմ.
Թե ինքն Ապրտն նորից փռեցե՛րքով
Չարդարեց ճակատս, ես, հետ: քաշվե՛րով,
Կասեի՝ երբան: «Մընա՛ս դու բարով»:

Անց կացան օրերս, անցավ և գարուն,
Երբ գեղեցկացած մանուկ ուժերով,
Իբր սըրաթոյչ սարժակի կորուսն,
Թռչում էի ես եպրո թևերով,—
Չըկա՛ր ինձ արգելք, չըկա՛ր քունություն:

Ահա և այս քերթս, անդանխա վերտ,
Սուաջ որ զըրիչս թարթախում էի,—
Ռատնում էր իսկույն կենդանի վրկա
Սըրտիս պեղմունքին, և մարգարեի
Խոսում էր լեզվով, որ այժմ չկա:

Ա՛յս թե և մեր սիրուն ծառի պես լիներ,—
Չըսեաք կանաչ տերևից թափվեր.
Ամառը որ գար,— մանուկ աշխուժով,
Բանաստեղծական ելևեջներով
Թուր թըրությունից նորի՛ց ըսթափվեր:
1892 թ.
Մոսկվա.

ՎԵՐՁԻՆ ՓԱՓԱԳ

Երբ ցուրտ դիակդ, կյանքից պըրկված
Մըտնի տապան, իմ անգին,
Վերջին շունչս քեպ եմ ուլիրած,—
Եվ ինձ տեղ տուր քո կողքին:

Թո՛ղ Գաբրիելի փողը հնչե,
Թո՛ղ գա ահեղ դատաստան,
Իմ նապելի, մեպ այդ փույթ չէ
Սիրո զըրկում անասան:

Թե ինձ հասնի երանություն
Այն լուսեղեն աշխարհի,—
Մեր հողե ծածկ, հողե անկյուն
Քա՛ղցր ինձ քան մասն անմահի:
1893 թ.

ՕԳՆԵՑԵՔ

Արև բացվեց սարի ծերին,
Հետև էլ գարուն վարդը ձեռին.
Բայց տխուր սիրտս չգտավ մի լար,
Որ թշվառին երգեր «մի՛ լար»:

Քո աշըղի պես, չունգուրը քոքած,
Որբերի խաթեր դռնե-դուռ ընկած,
Հայոց հին երգիչն հին երգ է երգում,
Որ թե սիրում եք Փրկիչն երկնքում,
Առեք նրա խաչն և մտեք աշխարհ,
Օգնեցեք որբին, այնքան վշտահար,
Աստված բարաքյաթ տա ձեր տուն-տեղին,
Չեր կալին, հանդին, թաղին ու գեղին,
Չեր բարեսեր կյանք և ազնիվ ավյուն,—
Ասացեք, այս չէ՞ մեր անմահություն:

Արև բացվեց սարի ծերին,
Հետն էլ գարուն վարող ձեռին,
Բայց տխուր սիրտս չգտավ մի լար,
Որ թշվառին երգեր «մի՛ լար»!

1898 թ. դեկտեմբերի 25.
Մոսկվա

Լ Ե Վ Ո Ն Ի Վ Ի Շ Տ Ը

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԵՊՁ

Հետևեցորդ տարին ձեմարանիս հիմնադրության ահա՛ լրտես
կալի տպավորություն բերելով բոլոր բարյացակամ սրտերին: Այո՛, Հ
ապրել է նա գեղեցիկ հառաչադիմությամբ. ՀԻՍՈՒՆ տարի գնացել
քին և լի՞ ձախորդությամբ ճանապարհը: Գոհությունն նորա անցյա
մել է մեզ մի գայարուն ներկա, և գոհությունն նորա ներկային, որ տա
առավել նախանձեղի ապագա:

Դեռաբո՛ւյս պատանիք, ժրաջա՛ն եղե՛ք այդ սուրբ ասպարեկի
րաստեցե՛ք ձեզ: որդի մարդկության և ազգության, ո՛հ, քանի՛ մեծա
մատող կյանքի խորհուրդը, թե ձեր թանկագին ժամանակը գործ
վարձացման և հաստատության, քանի՞ բարձրանալու էր ձեմարա
պարծանքով, որ պատրաստ է օժանդակել ձեզ ամենայն միջոցներու
կամեիք ուսանել ազնիվ ու անխռով աշխատասիրությամբ:

Ազնի՛վ սրտեր, լցվեցե՛ք ամենաքաղցր շոշափմունքով, պատր
բերել ձեր անկեղծ շնորհակալիքը այդ փառավոր՝ օրի տոնախմբության
սիրո և երախտագիտության զգացմունքն է, որ մեծարելի է կացուցան
անունը:-- Շնորհակալ լինի՛ք խոստովանող սրտով պատվական հո
նաչատրո Հովակիմյան Լապարյան, որ յուսավորյալ գործակցությամբ
է վիճակը ձեմարանիս և ոչինչ չէ՛ ինչայել նորա պայծառության հաս
թապե՛ս և թե բարոյապե՛ս:

Խաղաղությունն Ձեզ. ազգասե՛ր Հիմնադիրք ձեմարանիս, Չեր
մոռաց է, Չեր գործը անմահ, որ ահա վերստին անմահանո՛ւմ է այ
բության օրը:

Երախտագետ

1864 թ. սեպտեմբերի 10.

Ազնի՛վ ընկեր, չնոռանա.
Անդավաճան, ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք,—
Գնա՛ եվ դու նո՛ւյն շավիղով:
(Երգ մեռ. Հայրենասիրի, 202 երես)

ԱՌ ԸՆԹԵՐՅՈՂԸ

Թե ծանր պիտույքն հասարակության
Դարձավ քո համար նյութ մտածության,

Թե սրտիդ վերա ծանրացավ ներկա,
Որպես զքեզ կրկնեցի մի մեծ առարկա,

Թե նք ազգի անկումն ազգի որդի,
Եւ նմի վիշտը առաջարկեցի

ԼՍԻՆՔԻ ԳԱՆՈՒՄ

Добролюбо людей кормилъ сластями,
Утешилъ отъ этого испорчился жалу думой,
Сорвался сорвался пошарство, единичис
твенно.

Лермонтовъ
(Երգ մահ. քր.)

11

Ժամանակակից գրում եմ լեզվով,
Որ ամենայն մարդ կարդա, հասկանա,
Որ չնայե այլ ակնոցներով,
Որ յուր սեփական քննությունը տա.—

Կյանքը ինձ ասաց, Մանո՛ւկ, քեզ դափնի,
Գնա՛ նոր խոսքով քան մի կրուցել,
Եվ լաբիրինթոս մութ գրվածքների
Հանցա՛նք համարի՞ր ազգիդ նվիրել

II

Եվ ես հնապանդ այդ առողջ ձայնին,
Չկամիմ նմանիլ անառակ որդուն
Չոհում եմ գրիչս կենդանի լեզվին,
Որքան ձեռնհաս իմ կարողություն:
Մանո՛ւկ հրաշագեղ, թոթո՛վ ոգեկից,
Դու աշխարհաբար մեր սրտի թարգման,
Դո՛ւ մեզ հարապատ ծննդյան օրից,
Թո՛ղ քեզ նախատեն մարդիկ հնության:

III

Նորա տեսնում են միայն թերություն,
Միայն դեռ անհույս, մատուկ խակություն.
Չեն լսում ձայնը մարգարեական
Նորա ապագա ներդաշնակության —
Նա ևս կը բացվի, կաճե զվարթագին,
Կը ծանրաբեռնվի որպես պերճ աբառ,
Եվ քնքուշաշարժ սրտի լաբերին
Եվ գտնեն՝ և խոսք, և հիշողություն:

IV

Չկամիմ հորի՛ տալ անկնիքը արքաներին,
Այն ոլորած ճարտասանություն,
Ես հատարել՝ եմ նորան մտու՛րդին,—
Անենամեծ գործ բթամտության.
Նորա մեջ տեսա մուգի՛ն հնության,
Բայց երբեք չտեսա ներկայի հոգին.
Խորամանկահյուս բաներ՝ խոսեցան,
Ես հեռուցի տարս լողակապին...

Եվ օղ սրտոցել կացնե բառերով,
Եվ միջնադարյան տարածել փոշին,
Բողոքում է խիղճն երկասյրի սրով.
Այդ սեփական չէ մեր ժամանակին,—
Ալեկոծվեցան ծերերն հնասեր,
Փրփուրը ժայթքեց մորուքի վրա.
«Վա՛հ, անմիտ կարծիք. վա՛հ, անմիտ խոսքեր.
Հե՛, անտես առնենք լեզուն Ադամա».

VI

Որդեր եռացին և լայն բացվեցան
Նոցա առաջն դժոխքի դռներ,
Եվ, ո՛վ կատաղի մոլեռանդության,
Եկա՛ն, կիսովեցան նախանձի լեռներ.
Լեզո՛ւ սիրեցին, աղե՛ղ լարեցին,
Որ առատ-առատ նետեր արձակեն.
Դատապարտելի գործ ձեռնարկեցին —
Ինչո՛ւ — որ ազգին խավա՛ր ժողովեն...

VII

«Խելքըդ ցնդել է, լեզվագա՛ր լակոտ,
Անպետ ապրա՛նք է ճարտասանություն»:
Եվ նոցա գոռը դըրըրդում է օղ,
Որպես մրմռող քափու սոսափյուն...
«Բթամություն՛ն», գոչում են ծերեր,—
Անեծք է վիժում անդուն բերանից.
Եվ մորուքների մի կանգուն ձարեր
Դոխում են որպես ահագին հողմից...

VIII

Անխոռվ եմ ես, եթե իմ վերա
Ամբաստանության գան դիպվեն բեռներ.

Երբ են բան տեսել, ինչպես որ նա կա,
Ճշմարտությանից վշտացած աչքեր:
«Կորի՛ր, Չարանե՛ր, լռի՛ր, Ամբարի՛ջտ,
Ես պիտի ձեզքեմ քո նեկ մեքեան,
Պիտի խորտակեմ սրտիդ սատանան,—
Պիտի ժամանեմ ես նավահանգիստ»:

IX

Ո՛չ քեզ, ո՛վ մուլա, բարձր Օլիմպից
Կանչում եմ այստեղ, հողանյութ երկիր.
Դու ինձ մի՛ հյուսիս պսակ դափնիքից.—
Այն քնարներին կիսաթել շնորհի՛ր.
Իմաստակների ցնդած ուղեղին
Դեռ ունիս ազդել թովիչ պորություն,
Հաշի՛ջ, ո՛վ մուլա,— թո՛ղ թևավորվին,
Թո՛ղ հարբեն — հետո ի՛նչ ճարտարություն.

X

Առասպելական կեղծյալ տիտաններ
Թո՛ղ խկականի ընդունին պատկեր,
Հրեշների շարքն երևութանան,
Եվ բոլոր ցնորք լայնափոր հնության:
Վեհափա՛ն սագե՛ր, քնա՛ր լարեցեք,
Ո՛չ ձեր պապերը Հոռմ փրկեցին.
Առանց հանաքի պուռնա փչեցե՛ք,
Թո՛ղ աշխարհ լսե, թո՛ղ փառք տա երգչին

XI

Ծաղրածուների գործերն ցավագար,
Աղաչում եմ ես, ժամ մի դադարեն,
Որոնք համոզմունք, ուխտյալ գաղափար
Այսօր պնդում են, որ էզուց հերքեն.—
Անտաջ մրողներ, որ գարջ քաություն

Հանապալ ունիք ձեզ հաղորդակից,
Կապեցեք սակալ ձեր ստղուն լեպուն,—
Առաւել օգուտ ունիք դորանից:

XII

Անցավ ժամանակն երևակայել
Ավազուտ դաշտում դալար ծաղիկներ.
Եվ դադարեցե՛ք ցնորաբանել
Հայի մեծության ոսկի երակներ:
Մեք խավարի մեջ մինչ գրուի թաղած,
Կամինք հասանել երկնի բարձրություն,
Մեք բարոյապես տնչտի հետ ընկած,
Ծխում ենք մեզ փունիկ և հարգո՞ւմուն:

XIII

Մեք պարմանում ենք և ծափ ենք տալի,
Որ Հայք պարթեց յուր երկար քնից.
Բայց մենք չենք տեսնում այն ասարասիւնի
Փոսը, որ նորան փարում են տակից.
Եվ մեզ գովելով, և մեզ խաբելով,
Չենք բացում արդյոք դուռը կորստալին.
Ո՛չ անտոռայամբ, ո՛չ չար ձեռներով
Չգում ենք կամուրջ մեր թշվառության:

XIV

Մաշեցինք մեր խելքն անօգուտ գործով.
Գիշեր ու ցերեկ անպտուղ անցան,
Մենք չխրատվեցանք անցածի սխալով,
Եվ ձեռնարկեցինք մենք ամենայն բան:
Ծախեցինք գրիչ ոսկու ճաճանչին,
Վաճառեցինք սիրտ ու ալիքի հողի.
Լռեցավ մեր մեջ խիղճը մարդկային,
Եվ մնաց ամեր կյանքը հայ ազգի...

XV

Եվ ապ գոչեցինք, և օղի վերա-
Դրեցինք հինքը նորա կրթության,—
Եվ մենք խաբեցանք, որպես երեխա,
Եվ հայի վերքը մնաց անդարման:
Խավար գրվածներ, կաղ, կույր, բռնադատ
Բանաստեղծություն և թարգմանություն
Տվեցինք Հային, և նա հուսահատ
Փակեց ականջներ և մտավ յուր տուն:

XVI

Չգեցե՛ք փետտուն աղապնեակուն,
Մերկապարանց եկե՛ք դուք հանդես,—
Թո՛ղ լավ ճանաչե աշխարհ ամենայն,
Որ ազոավ եք դուք կամ բու սևատես:
Այստեղ կտրում են իմ խոսակցություն,—
Ես շտապում եմ իմ վեպը պատմել.
Մենք կհանդիպենք մինչ ի տեսություն,
Չեր հետ հաշիվըս դեռ չէ՛ վերջացել...

XVII

Ո՛վ դու Մուկվես, քո փողոցներում
Արդեն խոնում է հեռեղենն շտապով:
Այլք ծորովիում են մազադիմենդում
Պատրաստել տոնին ընտիր ճաշակով
Նորագույն կարդեր. փողապատ, ձեռնաց,
Քորոց, նուրբ բեհեկ, շալեր մետաքսի,
Պատմուճան, սպրալ, լոռնետ, հովանաց,
Թաշկինակ բառխատ, մանյակներ ոսկի:

XVIII

Քողեր մեծարվատ ասեղնագործած,
Բուռնուս գույնպարուն վերջավորներով,
Եվ նոր գլխարկներ ոսկեթել նաշխած.

Եվ բարակահյուս ժապավեններով,
Եվ աճենայն բան, և ամեն լաթեր,
Որով պարապ մարդ կարող էր պճնել,
Եվ որ զեղազետ, և որ նորասեր
Ֆրանսիացու խելքն է ստեղծել:

XIX

Լի են բավութամբ ժողովարաններ:
Թնդում է թատրոն քաղցր երաժիշտով:
Աջ-ձախ թեքելով ճոճում է ոտեր
Դերասանուհին,— ի՞նչ արվեստով:
Ծափահարությունք ցածից, վերևից,
Խլացնում են: մարդու լսելիք,
Եվ թատրոնասերք բավկաթոռներից
Չոնում են առատ սիրո հետ դափնիք:

XX

Բայց նայի՛ր, Մոսկվա, սենյակ մտներով,
Փակում եմ դռներս երկար միջոցով,
Ծածկվեցե՛ք ուրեմն, աղմուկ աշխարհի,
Եվ թեթևաբայլ դերասանուհի...
Ողջույն ձեզ, պա՛տեր, ամրաշեն հիմնած,
Եվ ծաղկանկար թղթով պարդարած,
Ողջույն ձեզ, գրի՛չ և թանաքամա՛ն,
Ողջույն ձեզ, աթո՛ռ և գրասեղա՛ն:

XXI

Դեպի գո՛րծ ուրեմն, մի՛ գուցե հանգչի
Սրտիս փափագը ոտեր հյուսելու
Ի՞նչ պիտի անեմ, թե աչքըդ դիպչի,
Եվ կիսատ գործիս ուրախանաս դու:
Այժմ խնդրում եմ. թե բարեկամներ,
Թե չարյացակամքք, ինձ հետևեցե՛ք.
Չծոռե՛ք գրածս ըստ հաճույքին ձեր,
Ահա՛ և Լևոն,— հա՛պա լսեցե՛ք:

ԳԼՈՒԽ I

Ты хочешь знать давно — о чем моя печаль
Который никогда и не могу забыть!
Не спрашивай о том; тоску мою
Кто может излечить?

Байрон

(Чайльд — Гарольд пер: Минаева)

Ոչ ջրերի մոտ, ուր թռչունների
Նվագում է պարն քաղցր մեղեդիք,
Կամ անտառներում, ուր տերևալի
Եվ կանաչապարդ աճում են սուսիք,—

Կամիմ Լևոնի կյանքը նկարել.
Այնտեղ սրբապան էին մեհյաններ,
Որ քերթողները հաճեցան պատվել,—
Այժմ չէ՛ն կենում այնտեղ մուկաներ:

Այլ քաղաքի մեջ — և այն ահագին,
Ուր կենցաղական հոգսերն եռում,
Ուր ամենայն մարդ տեր է յուր գործին,—
Ա՛յնտեղ է Լևոն ձեզ ներկայանում:

Թե ո՛վ էր Լևոն, և ի՞նչ նորա ցեղ —
Չեզ ասելու չեմ,— այդ ավելորդ բան.
Մի հին հայ տանից, և այն ո՛չ շքեղ,
Ծագում էր Լևոն:— Այսքան բավակա՛ն:

Ոչ թե երկյուղ կա, իմ բարեկամներ,
Որ մեր Լևոնը մնում է ծածուկ.
Ո՛չ. ինչո՞ւ ասեմ — երբ օգուտ չուներ,
Եվ խնդրում եմ ձեզ չնեղանաք դուք:

Մայր մի ուներ ծեր: Նորա տեսության
Խիստ փափագում էր Լևոն կարոտից

Քաղվում էր հոգին, և առվի նման
Արտասուք հարուստ թափվում էր աչքից:

Մի մայր էր միայն. ծերության պիտ
Արդեն խորշումս ճակատի վերան
Տպավորե: էր յուր տխուր կնիք,—
Մասամբ Լևոնը պատճառեց նորան:

Եվ սիրում էր շատ այդ պետրը.
Երբեմն, ասում են. յաշված վշտագին
Կը մեռներ Լևոն.— բայց պատասխան մայրը
Յուր հիշատակով սաստում էր ցավին:

Ուներ մի քանի և բարեկամներ.
Որ, ինձ անհայտ է, մի կուրուքենով
Խորտակել նորան ոտով ու գլխով
Ջանադիր էին.— Լևոն այդ գիտեր:

Եվ այդ վայրատաչ անառակներից
Խիստ վշտացել էր առաքինություն,
Եվ խռովել էր Աստված դոցանից.
Խռով էր, այո՛, և ճշմարտություն...

Մարդիկ սովոր են, մանավանդ անկիրք
Եվ ասիացի նեղատես հոգով,
Հայիոյել մի մարդ, մի անկաշտ սիրտ,
Եվ ամեն գործին նայել չար աչքով:

Ինչ ասեցի է: բարեխոսի սրտին —
Դոքա գրվում են և համբուրում են,
Ողջուն չըտառով ասեր: հրեշտակին —
Բանասրկու դեր նախապատվում են:

Իմ ցավը այն է, որ այդ գարշելիք
Պտտորում են կյանքն պարպամիտների,
Թեև ի վերջո են ապրանելիք,
Պատճառ, չկա բան, որ չհասանալի:

Միտ չունելով ես երկաբանել
Լևոնի նախկին կրթության մասին,
Ընթերցողներից կամեի խնդրել,
Որ այդ պարսավանք ինձ չհամարին:

Այսքան. Լևոնը նման չէր նոցա,
Որ մտանելով համալրսարան,
Կամ թե բարձրագույն մի ուսումնարան,
Չկամին դնել պարտք յուրյանց վերա:

Ողջունել հոգով մայրենի լեզվին,
Ընչել նորա կյանք տրից մկրտվել,
Որպես մտածող անդամ յուր ազգին,—
Ընդունակ անձը նորան նվիրել:

Եվ մի ազգ թշվառ, որ բարոյապես
Հասել էր գրեթե յուր անփառք մահվան,
Կարող էր հուսալ դոցանից մի պես
Վերանորոգիչ հարության նշան:

Լևոն յուր բոլոր ուսման շրջանից
Այսքան ինչ կարաց հետևեցնել.
«Ես պիտի լինիմ մարդ ազատ, անբիծ,—
Եվ ես կարող եմ իմ ազգը սիրել»:

Ազատ մարդ... որքան է սա ավետարան
Խոստանում է մեզ անգին հավատարից:
Առանց լիաձեռն ապաստության,
Չկա լիաձեռն և կյանք երջանիկ:

Եվ ազատություն կարող է լինել,
Թե դադարեինք երազ երազել,
Թե գործելով դաշտ մտավորական,
Խեղդեինք ցնորք — սգետին սեփական:

Եվ բարոյական ուղղություններից
Մինը ուներ նա հաստատուն կանոն.

«Բարի գործեր»,— այս, ասում էր կյանքից
է այն հապվագյուտ մեկ մավկոյեռն:

Բարի գործելով մենք ընդհանրաբար
Կարող ենք գտնել բաղդը աշխարհիս.
Ես բաղդավոր եմ, թե այդ բաղդն ունիս
Եվ դու և հարուստ, և տնանկն անձար:

Ո՛վ հայրենակիցք, քանի՞ եք թըվով,
Ո՛ր այդ աչքերով նայեիք կյանքին,
Որ վայելեիք խաղաղ, անխռով
Այդ բարի վիճակ, այդ բաղդ քաղցրագին:

Քանի՞ եք թվով, որ վեհանձնաբար
Սկսեիք գործը հասարակության.
Որ ծեր, ծաղկեր, ամուր բարձրանար
Ոսկե տաճա՛րը սուրբ բարօրության:

Որ լույս և ուսում այցելու լիներ
Եվ քո պալատին, և քո խրճիթին,
Որ լուր բաղդն ու կյանք առատ անձրներ
Քրտնած, աշխատած ապգիդ ճակատին:

Տխուր, միակերպ անցնում էին
Լևոնի օրերն. սրտառուչ զրկված
Հարապատներից, տվել էր վշտին
Աճելով աճել, աշխարհից փախած:

Բայց և հարապատք, արժան է անել,
Չկարծեմ, որ վիշտն Լևոնի սրտի
Կարողանային մի օր փարատել.—
Ո՛վ, շատ կարծր է սիրտն այդպես մարդի:

Նա կյանք չէր վարում ճգնավորական.
Եվ, միշտ խնդրելով խոսք ու զրույցներ,
Պատրաստ էր մեկնել ձեռն մտերմության,—
Բայց ընդդեմ էին դորան շատ փորձեր:

Ոչ մեծ հանդեսներ, ոչ այլ խրախճանք
Կարող չէր նորան հաղորդել ծիծաղ.
Նա որոճում էր մի ներքին վարանք,—
Ի՛նչպես կարող էր լինել նա ուրախ:

Եվ ցրտասառույց խավար դագաղի
Երբեմն ճակատին պեկոծվում էր,
Եվ կծու խայթը ներքին տանջանքի
Խաղաղ րուպեք թունավորում էր:

Ոչ ոք չգիտեր հարցանել նորան.
Ի՛նչ է պատճառը այդ դառն դրության,
Եվ համըր կուրծքից ոչ ձայն, ոչ հնչյուն
Չէր գալի վշտի բացահայտություն:

Բայց թե խորամուխ հայացք ձգեիր,
Փոքր առ փոքր նշմարանք ցավի
Գուշակում էին, որ նա վշտակիր
Սըզում է կորուստն հարապատ ապգի:

Նա տեսնում էր, որ անօրինակ
Ոգևորությամբ ներշնչած ցեղեր,
Կյանք են նվիրում որպես նահատակ,
Մահաբեր դաշտը ծածկում են կոհեր:

Նա տեսնում էր և իտալական
Շաղկապյալ սիրո միությանը կնքած
Հաջողակ գործը, և գարիբալդյան
Չենքի հաղթություն, այնքան հոչակված:

Փրկության Քրիստոսն հաղորդիչ ձայնով
Ընթացավ ահա անպերի միջին.
Չարթեց բեռնավորն նորոգված ոգով —
Ողջունեց սիրով հասարակ գործին:—

Փայլում է դրոշն մեծահոգության,
Թափվում է արյուն հայրենասերի.

Իրավունք, պատիվ, եղանակ արժանապատան
Վերականգնում են որպես մի կտորի:

Ո՛վ ձայն Աստուծո՞ւ,— Ինչ աշխատարարներ
Գալիս են հանգչել մեծ վաստակներից,
Երկրպագությունք, դառնի՞սի պատկերներ
Բերում են նոցա ամենապի կողմից:

Լուսավորություն, որպես արեգակ
Հարապատ հողի երկնակամարին,
Սկսում է սփռել ճառագայթաբաժակ
Եվ ուսում, և կյանք, և բաղդ մեծագին:

Եվ բնությունե՞ր — այդ վաստակ քառասուն,
Անգույթ կորստի գրկում է հարված,
Մոլի իշխաններ և թզեկործան
Բարձր գահույթից գորվում են ցած:

Գորվում են ցած,— և այդտեղ դոցա
Պատրաստ է դամբան արհամարհանքի.
Ապատ ճանապարհի բացվում է անտա
Եվ մարդու հոգու, և մարդու մտքի:

Բայց Հայոց ազգը — սխուր շնորհալուստ...
Անբույժ նեւտերով խոցված վիրավոր.
Խաւար, նրաթաապշտ, երկչոտ և գիտատ,
Վիրոս չարություն: և փառք տեղաւոր:

Անա, ո՛րպիսի մտածություններ
Խոր շարժում էին Լեւոնի հոգին.
Նա՛ մինչև անգամ միջոց չգիտեր,
Որով ձեռնասու լիներ յուր ապգին:

Եվ սորա համար առավ նա յուր ձեռն
Այս մինակ հնարս. որոշեց գրել
Թյուր սկզբները այն կորստաբեր,
Որով Հայի կյանքն իսպա՛ռ էր խախտվել:

Լեւոն համատեղ բնկերներ ուներ:
Նոցանից շատերն պարծենում էին,
Որ Հայ են ծնվել, բայց Հայի խոցեր
Նոցա խաղաղ կյանք խանգարում չէին:

Նոցա նպատակ — սնափառություն,
Նոցա խոսքերը — աննշան հնչյուն:
Ազգ ու հայրենիք, պարծանք ու պսակ
Կրկնում էին, որպես մի թուփակ:

Անգործ պճնասերք, փառքից մոլորված,
Քան թե երապե՞լ կանգնու՞նք Հայի.
Լավ լինելու չէ՛ր, որ կոկված, ձգված
Կուլ տայիք փոշին դուք մեծ աշխարհի:

Այնտեղ կարող եք գտնել սիրելեան —
Տասնուհինգ, տասնուվեց, տասնույթ տարեկան.
Հրեշտակի լեպկով Ֆրանսիացիք:
Եվ Ռուս, և Լեւ, և Գերմանացիք:

Նոցա կերպարանք փայլում են պիտով,
Բայց, փախն, ախտո՛ւ, ջանեքի ջնաթով.
Երբ օրի լույսը դոցա ողջունեց,
Ա՛խ, սերը փախավ, գուպոնիքը բացվեց:

Այդ ձեռ բանք չէ՛. որոք ծառայական
Կարող եք խարժ, սալ դոցա հանույթին.
Գողգոշուն պրտով եղեգնի նման
Երեք տակ ձկնե՞լ և մնա՛լ փարձին:

Հայտնի է, որ Հայք խիստ են պա մափն
Եվ չեն ընդունում խեղճորն փարձության,
Թեև սիրո ախտ դոցա ցույց տային
Շքեղ արյունքը մեծ աշխարհական:

Այսպես առիթը ենք կոչել «մեծ աշխարհ»
Ուր խաղաղամասնով անթոխը ունայն.

Քնթը վեր բաշած, սիրում է տխմար
Պերճութեամբ փայլել, ձայն տալ մեծութեան:

Մեծ են խոսքերով, բայց վիատ հոգով,
Վերջացած ազնիվ ձգտողությունից,
Դատարկության մեջ կյանքը մաշելով, —
Ողորմելի են թշվառականից:

Չըսիրեց Լևոն և ո՛չ իսկ մեկին, —
Ապավինեցավ լուռ առանձնության,
Փախավ ժպիտը, և խեղճի հոգին
Չըգտավ կայծ մի մխիթարության:

Նա զուրկ չէ՛ր սերից, մի ժամանակ կար,
Երբ սիրո անուշ խորհրդածություն,
Որպես անձրևը գարնան զովարար,
Տալիս էր և կյանք, և նոր պորություն:

Ո՛վ սեր, ո՛ւմ արդյոք, որի մեջ մատաղ
Դեռ եռ է գալի մանկական արյուն,
Քնքուշ պատրանքով, ո՛վ ոգի չքնաղ,
Չես դրել թակարդ դեպ ի գերություն,

Եվ պոետական երևույթներով
Ո՛ւմ շրջակայքը չես լուսավորել,
Որ կենդանությանդ վառված նշույլով
Քեզ սրտի խորքում սեղան է կանգնել:

Սա՛ռն է այս դարը, — և ես ավելի,
Քան թե մեկ այլ ոք, արհամարհում եմ
Նյութապաշտությունն նորա անհոգի, —
Հակառակ դարիս, Սե՛ր, քեզ երգում եմ:

Երգում եմ թույնը դառն հարվածներիդ,
Որից ծաղկում է բաժակը կյանքի,
Եվ թո, որպես օձ, գալարուն ժպիտ,
Եվ դժոխք, և դրախտ հրապուրանքի:

Սիրելով միայն ես ճանաչում եմ
Չարդարո՛ղն աշխարհի, Ստեղծողն երկնի,
Սիրելով միայն ես բարձրանում եմ
Դեպի վեհավայրն Աբարչապետի:

Եվ ես մտախոտ կուսի աչքերում
Գտանում եմ այն, որ գիրք մի դեռ ևս,
Որ ոչ իմաստուն յուր գրվածներում,
Ո՛չ պոետն երգով չավանդեցին մեզ:

Թե ցուրտ կանոնը Նյութապաշտների
Սուրբ շեմիդ վերա ոտք կոխեր, ո՛վ Սեր,
Մեզ կը կաշկանդեր ձմեռ սուկայի,
Եվ հետքը անգամ երևելու չէր:

Այլ ես ուրախ եմ, դու ենթակա չես
Ոչինչ իմաստակ եպրափակության,
Եվ դավանում եմ քեզ առաջվա պես,
Կանոնը չունի մուտք քո ավապան:

Բայց ներողություն, որ ես այս անգամ
Ընդմիջեցի խոսքս և թել պրուցիս,
Ինքըդ մտածի՛ր, ազնի՛վ բարեկամ,
Չե՛մ կարող լռել, ի՛նչ թանկ է սրտիս:

Եվ ես մի մարդ եմ ո՛չ առանց մեղքի,
Եվ ես սիրել եմ առանց հանաքի,
Սիրել եմ մենակ, և բաղդն անարդար
Չէ՛ վարդարել իմ սիրո ճանապարհ:

Թեև Լևոնը սիրեց անհաջող,
(Դուք այդ կիմանաք — այլևս երկու տուն) .
Բայց այս դիպվածից չկարծես, ընթերցո՛ղ,
Որ Լևոն և ես — նույն ենք, մի արյուն:

Լսի՛ր, առնում եմ թելը պատմության,
Թո՛ղ նստի ախտը քո ինքնահավան.

Այդ ներքու չէ երբեք քեզ Աստված.—
Խորք է սիրո հուրն սրտիդ, քարացած:

Լևոն սիրում էր մանկության օրին:
Այն մի նազելի պարկեշտ աղջիկ էր.
Փոքրիկ, փափկամորթ ուներ նա ձեռներ:
Նորան շուտ թողուց, հոգով: վրդովված,
Երբ նախանձն ձգեց նորա մեջ կանկած,—
Եվ ա՛յս է սիրո ընկեր անսեփին:

Իսկույն նկատեց, աչքը սրատես,
Որ գիշեր ցերեկ, որպես մի սամփր,
Հաժում են ախտառա այն դժոխերես:
Նորա հետքերով երեսասարգներ:

Որքան ջերմեռանդ սիրում ենք մեկին,
Նույնչափ հեռամուտ ենք նորա սրտին:
Ամեն մի կանկած, խառն վատահասցավ
Սիրուհու վերա — պատճառում է ցավ:

Ապաստե՛ք զուր, կրակված աչքեր,
Թափում են նախանձ վեժմանորոգյան:
Եվ պատահում է, ո՛վ պիտ մահաբեր,
Որ կո՛հ է գնում քնքուշ առարկան:

Արյունաշագարի անկյակ հեղդեռն
Կատաղութենից սիրող ամուսնու...
Բայց մեղավոր էր կրակառ Փրկյալն,—
Նախանձը խռովեց կրոնքն Եկրիկեցու:

Թե՛ն դժվար է, որ մեք ժամանակ
Մի երիտասարդ, զոգոված նախանձից,
Խեղդեր ամուսին յուր բարձրի առեկ,
Եվ ինքը խեղդվեք ստուգին ցավից:

Այժմ տղամեղիկ ցատ մեծի մասին
Մեր կանանց համար երկյուղելի չեն:

Նոքա հետևում չեն այն ան Մալիին,
Թե անսրբության հետք ինչ ձգմարեն:

Բայց միայն նոքա մի այլ կին կրնաթեն,
Առնելով լոկ ինչ հավատարմություն.
Եթե սա խաբեց — և նոքա նորեն
Կըզունեն յուրյանց թաղգավորություն:

Արդեն մանուկ աղբն արձակվեցավ վատ.—
Փայլեց արևելք, օրի հոգսերով
Լցվեցավ աշխարհ: Քաղցր դայլայիկով
Ողջունեցին օր թռչունների պար:

Անգործ ժողովուրդն արգեն կառքերով
Ենդրում է յուրյանց ուրախություններ.
Բայց Լևո՛ն.— Լևոն հուսահատվելով
Թափում է սրտի կակիծ ու վիշտեր:

Եվ նա քայքայված հոտով և մեղմամով
Նման է, արես, ծովին այնկոծ.
Արտաալախասն հոնքերն կիտելով,
Վերջապես խանեց մի շատ խոր հոգեց,—

«Տխուր նայում են նեղակցի վերա —
Բոլոր գոյությունս արդ՛են է կրթում,
Եվ Հայի կյանքը կյանակցո՛ւսնա
Մի աքտրանցի խոսեց է երկում:

Մրածար մետեր, գրգռակ և նշտար
Ցգվում են սրտունս,— դեպատափ չո՛ւնին.
Խոցված է առեցա, զեռնացած խալիպ
Պաշարում է ինձ.— խո՛ր կրի տաքություն:

Հա՛յն, որ հորձանից արծաթեփորություն
Պաշտում է որպես նոր ավետարան,
Հա՛յն, որ ժողիկ է յուր ազատություն,—
Կարո՛ղ է հաշգիլ անթամ մարդկություն:

Որ բարոյական ցափի մեջ խեղդված,
Գարշում է գիտել խորհուրդը կյանքի:
Որ անշարժությամբ վիճակագրած,—
Կարո՞ղ է հուսալ մի ապագայի:

Հա՛յն, որ չէ ողբում յուր հայրենիքի
Հոյակապության փատակները,
Որ մոռացել է յուր դյուցապների
Հիշել արյունով կնքած գործերը:

Հա՛յն, որ չէ ծածկում կուրծքը զրահով —
Այրել խավարը անշեշ կրակով,
Գնալո՞ւ չէ զոհ անդարձ կորստյան,
Որպես գնացին մարդիկ աննշան:

Չկամիմ այսօր, ո՞վ սուրբ ապօրյուն,
Ջրուցել քո հետ կաշառված գրչով,
Հեռու մեզանից շողոքորթություն,—
Թող ողջունեն՝ քեզ ծերերն պիղծ գրկով:

Քե՛զ, ա՛յգ, սիրում եմ, բայց ոչ այն սիրով,
Որով սիրել են քեզ մինչև այսօր.—
Այն մեղք է եղել լի չարութենով,
Եվ տգիտության կեղծավոր ցնոր:

Եվ այդ նման էր այն հիվանդության,
Որից գարշեցան հմուտ բժիշկներ.
Չունեիր նշան դու կենդանության,
Լուծվել էր մարմնիդ զգայարաններ:

Եվ ահա՛ ինչու, թշվա՛ռ հայրենիք,
Չունեիր դու բաղդ և ապատություն,
Եվ ահա՛ ինչու քո ցավոտ որդիք
Խեղդվեցան, անկան անդարձ գերություն:

Ա՛յն, թե մի ժանտախտ կարեի բերել
Այդ հայրենասեր խելագարներին,

Եվ մի ահագին գերեզման գորել,
Եվ նո՛ր սկըպրունք ավետել Հային:

Ապօրինավոր որդիք ավնիվ մոր,
Չեր հետ է խոսքըս.— եկե՛ք հրապարակ,
Դուք, որ պնդում եք թաղել այն հպոր,
Այն անթաղելին ներկա ժամանակ:

Դո՛ւք, աղվեսք, որոնք առագաստ պարկած,
Առատ շահվում եք հաջողակ հողմից,
Որոնք սուրբերի զգեստով ծպտած,
Ծծում եք հյութը Հայի կյանքից:

Որոնց մեջ տարերքն այնպես են խառնըված,
Որ բնությունը ինքը սարսափած,
Կարող էր գոչել. «Ահա ձեզ մարդիկ,
Գնայուն մեռյալներ, գեհե՛նի որդիք»:

Ո՛հ, խե՛ղճ Հայ, խե՛ղճ Հայ, քեզ պատանեցին
Այդ ոչխարներով փաթաթված գայլեր.
Գլխիդ վարկեցին, գանձերդ խլեցին—
Վավաշ հարձերին տանելով նվեր:

Եվ եգիպտական դժնյա ախտերով,
Անբա՛խտ ժողովուրդ, վարակված ես դու.
Հարստահարող երկաթի բավկով,
Ո՛հ, կը լափե քեզ կորուստ մահացու:

Անգի՛ն հայրենիք,— ցավերիս պատճառ,
Մահ է ընթանում ճակատիդ վերա.
Հափշտակության ոգին չարաչար
Սրում է երկսայր գերանդին դժնյա:

Սոսկալի տանջանք, անթաղ դիակներ,
Շղթայք և կապանք, և դառն արտասուք,
Անգութ կոտորած, և մրմունջ, և սուգ,
Եվ հարապատիդ արյան առուններ,—

Դեռ այս դժոխքին դու պիտի տեսնես.
Թշնամու կողմը դարձյալ կը շարժվի.
Դեռ վերջին բաժա՛կը պիտի ընպես,—
Եվ այն բաժակն է օրհասականի:

Իսկ թե հորիզոն բացվի կրթության,
Կը բացվի և քեզ դուռը փրկության.
Նորից կը ծաղկեն քո բուրաստաններ,—
Նոր կյանք կը շնչեն մեռած անդամներ:

Եվ Հայությունը... և, ո՛վ դու ցեղը,
Ի՛նչ ես ինձ տանջում, աշխարհի առջև
Ուրացանք Հային և Հայի արև:
Ի՛նչ պիտի ասեն հետինք սրգավոր:

Հայրենի ազգ ին,— տխուր անտպաս,
Դեռ կարող էի խեղդել արտասուք.
Թե դառն անցածից քաղելով խրատ,
Քո փառ սերունդը մեկներ քեզ բազուկ:

Թե այդ քո թվառ վիճակի վիշտը,
Մերկացած դեմքով յուր դժոխապին,
Ուտեր, թափանցեր թոռներիդ սիրտը—
Բոպե՛ քեզսնով զոնքս ցավեն:

Որդի՛ք մոլորյալ, դուք պիտո՛ հասկանաք
Այդ նախատիքը հայրենի անվան,
Պիտի հետ բերեք ազգության պսակ,
Թե չկամիք դուք զեռալ գերեզման:

Նո՛ր ազգ, ո՛վ նոր ազգ, դու չես խոտախում
Հայության լիճել պատվար և ենցուկ.
Հայն հառաչում է,— դու չես նվիրում
Համազգացության նորան արտասուք:

Նո՛ր ազգ, անվառք է կյանքիդ աստվարեպ,
Թե ազգիդ համար քրտինք չլլթափես.

Մեռած էիք դու, որպես գերեզման
Թե չգնացիր մշակ ազգության:

Ա՛խ, դուք զգացե՛ք ձեր մոր խիստ կապանք,—
Դորան կարոտ է թշվառ հայրենիք.
Ապա եթե ոչ — անջինջ անարգանք
Ազգը կը դնե ձեր վերա կենիք:

Թո՛ղ քաղաքական մեծամեծ գործեր
Այսօր չանցանեն ձեզ համար ունայն,
Թո՛ղ ծաղկեն արթը քաջատող սերմեր
Անգին շինվածի ապագափրության:

Թող տխուր անցյալ մեր համար փոխվի
Մի պայծառապարզ փառավոր ներկա,
Որ վերածելով ազգության ծիլեր,
Երևան հանե թակե ասպագա:

Եվ այն ժամանակ, ո՛վ օր ոգեկից,
Որոտալու է ձայն պատության.
Չախջախված, փշրված անարգութենից
Փողփողկու է դրոշն ազգության...

Փառավոր Համառ հայրենասերի
Չարդարելու են դափնիք փառավոր,
Որ նահապետ է փրկության ապգի,
Արձան կը տնկեն մշտնջենավոր:

Դարեր են գնում, դարեր են գալի—
Ավանդությունքը անհետանում են.
Միայն արգասիք ազգաջեն գործի
Հասարակ երգով անանախում են:

Ես մեռանում եմ, որպես շնչավոր,
Բայց բարի գործերս մեռնել կարող չեն.
Նոքա անան էն, որպես երկնավոր
Նրաքի տիեզերք: Թե՛ն դառք ասինե:

Այսօր ծնել ենք, որ էգուց մեռնենք,
Որ մեր հողիցը նոր ապգեք դուրս գան,
Մենք, որպես այիք, միմյանց փոխում ենք,—
Այսպես է վճիռն մարդկեղեն կոչման:

Եվ նորա համար իմ կյանքն ունի ցին,
Որ պիտի շնջվի և ոչնչանա,
Որպես ծաղիկը աշնան միջոցին,—
Շնչեց փոթորիկ — և ահա՛ չըկա:

Եվ նորա համար ես բանավոր եմ,
Որ մինչ հետին շունչ պիտի մշակեմ,
Միշտ մտածելով և բարձրանալով,
Գիտության Հո՛րը ձեռներու պարպեմ:

Ո՛վ սուրբ հայրենիք, այդ ինչ պոբություն,
Որ կապե քո հետ սերը վեր սրտի,
Ինչո՞ւ մենք պայծառ, երբ բարօրություն
Արտերիդ վերա կեղում է ոսկի:

Ինչո՞ւ մենք անպաժ. երբ խոնարհում ես
Փառավոր ճակատ,— մենք մրդկալից
Չարի առջև կանգնում ենք, որպես
Դարևոր կաղնին անշարժ նետերից»:

Մի՞թե, ընթերցո՞ղ, դու չես նկատում,
Որ վառ է Լևոն որպես մի հեռոց,
Տես ի՞նչ հոսանքով է ևս ծավալում
Ազգասիրության այն սրբազան բոց:

Այդ հառաչանք է հոգով խոցվածի,
Մի խորին կսկիծ վշտալի սրտի.—
Միտո, որ պատրաստ է խուլառ պատառվել
Եվ հիվանդ եղբոր փրկություն գնել:

«Ցերեկ մրրկված, գիշեր դիվական...
Ճուրտ երա՛վ... բժժա՛նք... և քունը աչքիս

Հափշտակվում է — վշտի ուրվակա՛ն:—
Ո՛չ վերջ, ո՛չ հանգիստ արեկոծ մտքիս:

Ես չարագործ չեմ, ինչո՞ւ կապուտակ
Չէ ժպտում երկինք: Ո՛ւր օրեր վարդի.
Ավա՛ղ, վաղ ընկան տարտարի հատակ,—
Աշխա՛րհ Աստուծո, բանտ ես զվճելի:

Թարշամում է սիրտս — ակա՛նջ դրեցեք.
Այնտեղ կը լսեք մի տխուր շրշուն,
Որպես տերևը ծառից կիսաբեկ,
Տալիս է մահին հիվանդոտ աշուն:

Թներ տվեցե՛ք և մի ժամ պարապ,—
Ռեպի արևելք կանաչապզեցիկ,
Ահի պարանոց, որպես մի կարապ,
Ուրախ կը թռչեմ անգին հայրենիք:

Կը թողում հյուսիս, բնության դագաղ,
Եվ հիշատակներ պատանեկության,
Եվ բարեկամներ, և կույս մի չքնաղ,
Որ սեր շնչեց ինձ պղատոնական:

Այո՛, այն կույսը, որ իմ սրտիս մեջ
Ծավալեց և սեր, և խաղաղություն,
Երբ ցնորների քաղցր ելևեջ
Բացեց ինձ դրախտ և անմահություն...»

Եվ հիշատակը հեռու անցյալի
Հիշեց Լևոնին երջանիկ օրեր,
Երբ ոգեզմայլիչ և հրաշալի
Առաջին սիրո փայլում էր լապտեր:

Եվ ներկայացավ նորա ատուշև
Մաքուր առագաստն հրեշտակ գեղեցկի,
Եվ մեզի տակից նշմարեց արև,—
Երգե՛ց ակամա այսպես մեղեդի:

1

Թո՛ղ չըսահեն ցողու շիթեր,—
Ժա՛յո է, որ ոռոգում են.
Ի՛նչ մահացած և ոչ վարդեր
Այդ շիթերից եր բանես:

2

Ո՛չ սեր իմ մեջ վշտամարդի
Կը ետրոգեն քաղցրաբեր.
Ա՛խ, դժոխք և լիշտ շարաբաստիկ
Շորեն դուք շարժեցին:

3

Որպես երես թափառական
Ամեն տեղ եմ,— ո՛չ մի տեղ
Ո՛ր է վարում բաղդիս ուտյան,
Մի՛ հարցանի՛ր կույս անտեղ:

4

Ես չկամիմ, որ խանգարեմ
Ոսկի գրախուղ մանկության,
Որ քո աչքերդ ցածրով լցվի,
Կամ թե՛ նայալցի միտախժան:

5

Ռու տեսն՛դ ես արեկո՛ծ ծով,
Երբ փոթորիկ մի ուժգին
Տարբերվում է մոռաբով,—
Այդպես է և իմ հոգիս...

134

6

Իմ կյանքը ինձ բերը դարձավ,
Վերս հասավ սև գիշեր.
Անուշ ծայրաց հոգուս փախավ,—
Աստվա՛ծ օրնե՛ք քո օրեր:

7

Ծիածանի խաղաղություն
Թող փայլի քո երեսին,
Եվ սոխակի կվազածություն
Միշտ հնչե՛ք քո ակամջին:

8

Ես քեզ մի օր փառիանցի,
Որպես պայծառ աղավաղակ,
Սիրո ծոցին քեզ կոչեցի
Ե՛վ երկնային, և երեշտակ:

9

Այ այժմ կեռի՛՞ք, ճակատագիր.
Վերսս դրեց լուծ աստիկ,
Ես պիտ՛ շոջեմ երկրից երկիր—
Մինչև զոնեմ հայրենիք:

10

Եվ հայրենիք... քայք ո՛րք է նա.
Բանի՛ գլխաց, արդասուրբ—
Երբեք նորան ես չտես...
Գե՛ր երբուրև վարանգրակ:

135

Եվ հայրենիք... բայց ո՞ւր է նա.
 Ահա շարեր ծածկվեցան,
 Եվ արեգակն և ծով ահա՛
 Մեր աչքերից հեռացան:

Մյն հայրենիք, որ կապարյա
 Շղթաներով կապկպած,
 Անբույժ խոցեր կուրծքի վերա,—
 Բնավ դարձել է ավերած:

Սի՛րտ իմ, սի՛րտ իմ, վշտի հատակ,—
 Պարտե՛ց թուևտ բույսերի,—
 Զգացի՛ր ցավդ և այդ վիճակ.—
 Գուցե վերջն է բարի:

Գուցե, գուցե մի օր կը գա,
 Մի թանկագին ժամանակ,
 Երբ Հայի բեռն կը հեշտանա:
 Կըմայե կրթության բաժակ:

Մնա՛ն բարյավ, մաքո՛ւր հրեշտակ,
 Թո՛ղ քո սիրտը չմորմոքե.
 Թեև մեռնենք այլ աստղի տակ.—
 Բայց մա՛հը մեզ կը վուզե:

Պե՞տք է նկատել, իմ ընթերցողներ,
 Որ Լևոն հաջող գիտեր, չսերտած
 Գրքերից, տողել ոգելից երգեր.—
 Ազդու էր քնարն, լարերը վարժված:

Երբ առանձնություն տիրում էր նորան,
 Երբ հարձակվում էր դեը վիշտերի,—
 Ճապուկ մատներով սերդաշնակաձայն
 Չարկում էր քնարին. խիստ ախորժելի
 Տարածվում էին դաշըն ակորդներ.
 Եվ գիշերային անդորրությունը
 Նորա կախարդիչ կյանքով լցվում էր,—
 Քանում էր Լևոն յուր տաղտկությունը:

Երբ կենցաղական փոթորիկներից
 Ալեկոծվում ենք երկար միջոցով,
 Երբ ներքին ծանր պատերապմներից
 Խռովում ենք մենք կամքով և հոգով.—
 Մենք՝ զորանալով հիշում ենք օրեր,
 Ամենապայծառ բուպեք մեր կյանքում.—
 Մանկության դուռտըրը — այն առաջին սեր,
 Մեր մոռյլ մտքում է կենդանանում:
 Մեզ մի անգամից չեն թողնում հրճվանք,
 Հանկարծ չէ գնում և վառ մանկություն.
 Եվ մենք պզալու չէինք մեծ գրկանք,
 Թեև ուրանար մեզ ուրախություն.
 Բայց անմահ դրախտն այն նվիրական.
 Որ նախկին սերը հառաջ է բերել,
 Բայց ոգևորյալ ժամերն դյուրթական
 Երբեք չենք կարող մեր մտքից հանել:
 Արդարն այդ սերն կարող է թագչել
 Կամ թե խավարել, բայց ոչ թե հանգչել.
 Այսպես երկինքը, ծածկված ամպերով,
 Յուր հստակ կապույտ գիտե պահպանել,
 Որ գիտե սիրել, և որի սիրտը
 Բերել է յուր հարկ սիրո տաճարին,—
 Չէ մոռանալու այդ քաղցր վիշտը.

Թեև ծերանար ծերություն խորին,
Եվ ոչինչ չկա այնքան ցավալի,
Երբ մենք կտրում ենք, հրաժարվելով,
Հիշողությունքը և կապը սրտի,
Անհրաժեշտին հնազանդելով:
Դեռ երիտասարդ է, իմ բարեկամ,
Լևոն, քո միտն է, որ նա սիրում էր,
Ինչ պարմանք բան է, թե վերջին անգամ
Հավիտյան նորան հրաժեշտ ասեք...

Լևոն տխուր էր, շքում էր մեռակ,
Սիրտը ճնշում էր վիշտ և տապալակություն,
Եվ թե կատարված էր յուր նպատակ —
Խնայելու չէր կյանքի գոյություն:

Եվ բարոյապես յուր կոծման վերա
Խորհրդածելով, որտեղից ձգել
Ռուսաստանի մայր քաղաք մեռելիս,
Հետ չնայելով փախչելի և փակչելի:

Առաջին գրեցեք Լևոնի վշտի
Խնդրում է պատեղ ճաշակել վախճան,
Իսկ մնացողը կը շարունակվի —
Այն իրավունք է ոգևորության:

Նա հարամ կերթա, կուսիս կրթութե,
Շատ բան կտեսնե Կովկասյան կողմեր,
Նորան Կովկասը ժամ ինչ կը գրավե,
Ով վարդյա քաղե նորանից փուշեր...

Որ պայակից է խեղճ Լևոնի,
Գիտեմ, այդ անկիվն կը ցավե ետրան,
Բայց որ գրեկ է նախանձը չարի,
Նոր վարմ կը խաթ կատակերգության:

Եվ այդպես են միշտ ընթացել Հայեր,
Խորթ է նոցա ձայն սրտի համոզման,
Նախանձ ու նախանձ — խավարի սերմեր —
Առատ, լիաձնոն վիժել են միայն:

Թո՛ղ կոծվի գութաբլ խավարասիրի,
Նորա փաստակը ստրտե իջնածկե,
Սյ՛ արթարության թարթ արմավենի
Սնարվեստ վաստակն միշտ կը պակե:

Թո՛ղ, բառահույսը թղկալով անթուն,
Մե յուր տողերն, որ քանի գաժանե,
Նույնչափ գրված և արժողությունե,
Նույնչափ քերթողը հաճ և բավական:

Ինչ ընթերցողներ, պարծանք Լևոնին,
Նորան չէ զիպչում պատրանքը փառքի,
Թե պիտ՛ ասպատե՞ք դեռ դատաստանիե
Հընարակ հանած կատակերգակի:

Երեկոյան սգեք, որոնց պիտո էր,
Որպես խարովիակ պահ դրան դեկ,
Այժմ, իմ Աստված, առաւ գովեստներ
Քեղած աղաղակով կարծում են ինձ էլ...

Այո՛, խնրազիբ մի խեղցուոր,
Գուցե ձեր գործին կը ծախահարե,
Բայց կրիտիկոս — այդ սուրբ դատավոր,
Ինչ վարձ գա՞ն վճիռ պիտի հատանե:

Ինչ է ցանկությունդ, անբարդ իմաստակ,
Արդեն քեզ խեղդեց հնության փոշին,
Գալոց սերնդի, թզվառ նշավակ,
Ինչո՞ւ դու ծնար — վա՛յ այդպես կյանքին:

ԳԼՈՒԽ II

Люди привыкают к злу до такой степени, что считают жалобы не-разумием, если не преступлением.

Дж. Ст. Милль.

Երանի նորան, որ նախապաշար
Մերժելով կարծիք, սիրել է լսել
Սրտի համոզման, և անհիշաչար
Սուրբ ճշմարտության կողմն է համբուրել:

Երանի՛ նրան, որ նախամեծար
Առնելով պատիվ ոնոտի փառքին,
Ազատ գնում է կյանքի ճանապարհ,
Ձեռը պարզելով յուր նպատակին,

Որ բացել է սիրտն ուսման առաջն,
Չրահավորված ընդդեմ չարության,
Որ ներշնչելով գիտության անձրև,
Պտղագործել է հոգու անդաստան:

Իցե՞ թե՛ն Հայն, մի օր սրափված
Խավարի գրկից, նախանձող լինել
Այս մեծ խրատին, և, պայծառացած,
Յուր մեռելություն լուսով փարատել:

Իցե՞ թե՛ն, Աստված, Հայն խոստովանել
Յուր անոսրամիտ առաջնորդների
Վարդապետություն, յուր մտքի վերքեր,—
Եվ թափել զոցա, որպես թուլն իժի:

Հայն գոսացել է, վա՛յ նորա օրին,
Անզուրթ խավարի գավապանի տակ.

Եվ խեղճի կյանքը և խեղճի հոգին
Ապականվելով, դարձել է փլատակ:

Խավարն է Հայնն ճակատագրել
Կապույտ երկնի տակ հրանյութ շանթեր,
Եթե ոչ այդպես, պիտո էր կարծել.
Հայը կը փայլե՛ր, հայը կը տիրե՛ր...

Ո՛վ են վարժապետք այդ անբախտ ազգի:
Ո՛վ քարոզիչներ լուսավորության:
Ո՛ւր են դպրոցներ գիտությունների,
Քանի՛ աշակերտ ուսումնառության.

Հա՛յ ազգ, ինձ ասա՛, ի՞նչ վարժապետներ*
Ունիս դու քո մեջ դաստիարակիչ,
Որ հատանեին խավարի սերմեր,
Քո բարօրության այնքան խափանիչ:

Հա՛յ ազգ, ինձ ասա՛, ի՞նչ ես ինձ տանջում.—
Եվ լուսն է ազգ, չունի պատասխան.
Նա յուր արտասուքն է միայն սրբում,
Եվ ցույց է տալիս վերքը խեղճության:

Նա կամի ասել, որ անապատ եմ,
Ուր շատ վարժապետ մտավ և ելավ,
Շատ բաներ խոսեց լոկ և անխոհեմ —
Եվ դորանով ցավս չըթթթևացավ:

Այն մարդիկ էին անբարոյական,
Ճշմարիտ լուսից միշտ աքսորական,

* Ոչ ոք թող կողմնակի մեկնություն չտա մեր խոսքին, իբրև թե՛ ճակվում էինք հայտնի անձին վերս: այդպես մտածող ամենին չէ հս գործի ներքե կապը ու լըորհուրդը:

Վարժապետ է ի վերջը ազգասեր, կրոնուսույց ասելով, ունինք ս թե մի Մարկոս մի, Կիրակոս: մի Մարտիրոս, այլ, համարյա ընդհանր վարժապետությունը: Եթե մեզ ներել: մեր գործի չափը ո: պատշաճը: րող էինք մեծարելի փաստերով: համոզել այդ բանի: մեջ է: նո: լնիսկ ի: հակառակորդը մեր: Բայց թողնենք այժմ: մի այլ ժամանակ գուցե ճ

Անկյանք, անպտուղ, ծերությանը ճնշված,
Հնության փոշով համարյա մեռած:

Այն փարիսեցիք, որ տրտնջալով
Խաչեցին Հրիստոսն առողջ կրթության,
Եվ հոժարափրոտ խավար գնալով,—
Որդե՛ր նոցա մեջ միայն շատացան:

Նա կամի ասել, չունիմ ապգասեր,
Սո՛ւտ է ամենայն ապգաափրություն,
Որ դորդեց օդ, որպես մի հնչյուն,
Որ չբերեց կյանք, ո՛չ կյուր, ո՛չ գանձեր:

Դոքա Հայասեր, և ոչ Ապգասեր,
Մեկը անցավոր, մյուսը հաստատուն,
Մինը կուր պարծանք, մյուսն կենսաբեր,
Եվ մեծակշիռ առաքինություն:

Այսպես է խոսում Հայն անմխիթար,
Սո՛ւր է ամեն բառ, զրպես թե՛ նշտար,
«Չունիմ վարժապետ, չունիմ ապգասեր»
Ո՛վ իմ սիրելիք, դատարկ չեն խոսքեր:

Հայ վարժապետներ խելոք են միայն,
Որ Սաղմոս, Նաբեկ սիրտել են բերան,
Որ գիտեն Չամչյան քերականություն
Եվ ափեղ-ցփեղ ճարտասանություն:

Որ աշակերտի ցիտեն կամք ճնշել,
Նորա մատաղ կյանքն ամապատ դարձնել,
Եվ թե՛ այդ խելոճը օգնություն կանչեր,—
Ապտակ, փալախա և զա՛ն հարկանել:

Չունի տուր, պեղազգ, թե՛ կենդանի ես,
Բերդեմ չարության կրանավորվիր,
Մարդկության որդիքն, սե՛ն, ամառի պես,
Բեռնավորված են լծով մահանիք:

Հայ վարժապետներ խելոք են միայն,
Որ խիստ դահիճ, են դասավորության,
Որ շատ են ապրել երկրիս երեսին,
Եվ դորա համար մեծ հարգանք ունին:

Որ ծերությունը հիվանդոտ գունով
Խլել է վերջին գոյության նշան,
Եվ հոգաբարձու հայրական ձայնով
Կանչում է, դոցա փոսը հանգստյան:

Ինձ դուք ասացե՛ք, ո՞րքան, դոցա մեջ,
Ծաղկած է, հողին դաստիարակչության,
Չգիտեն ուսման դեռ այք, բեն, դա, եչ,
Եվ ահա՛ աթոռ վարժապետության:

Ո՞րքան հայ վավակն ուսումնարանից
Կարող էր քաղել կրոն և հողի,
Չե՛, հույս չկա այդ վարժապետներից,
Հի՛ն է շինվածը — ափ՛տը է նորոգի:

Դոքա ամբարիշտ և շատ չարաչար,
Վա՛հ, ուրիշի սիրտն կամին բարվոքել,
Դոքա հնասեր,— կրոնի տաճար
Ի՛նչպես կարող են մեր մեջ հաստատել:

Գիտության մեջ է, Աստուծո՛ւ տաճար,
Եվ մեծությունը ճարտարապետի:
Ով չի ըմբռնել այն վերին Հանճար,
Որով ենթարկվեց տիեզերք օրենքի,

Չէ կարող այսօր յուր խղճի առջև
Ուսուցանել մեկ գործը Արարչի,—
Եվ աղթում ենք, որ այսուհետև
Այդ կրոնուսույցն, որպես կայծ հանգչի:

Կրոնն է վեթին ըզգացողություն,
Այն զգացմունք է անեղբայրակի:

Կրոնը նույն է թե ճշմարտություն,
Որի թարգմանը — միտքը է սրտի:

Կրոնը չունի որոշյալ տաճար,
Նորա տաճարն է ընդհանուր աշխարհի,
Կրոնի համար սահման հատանել,
Նույն է, թե նորան լիովին ժխտել:

Բայց դուք, ո՛վ խեղճեր, փակած աչքերով
Կամիք տեսանել կրոնի մեծություն.—
Եվ ահա՛ ինչու մեռած եք սրտով,
Երբեք ձեզ չկա մի խաղաղություն:

Եվ ահա՛ ինչու մենք ձեր բերանից
Չենք լսում մի խոսք, որ մխիթարեր
Կյանքիս տրտունջը,— Ո՛ր են ոգեփոց
Կրոնի ուսմունք, ո՞ր այն մաքուր Սեր:

Ո՛ր է այն հպոր քրիստոնեություն,
Որ կամեր բերել մեզ արքայություն,
Որ կամեր մեր բեռն թեթևացնել,
Եվ բոլոր աշխարհ լուսով ծավալել:

Ով կրոնուսույց, ծանոթ է այս քեզ,
Հասկանո՞ւմ ես դու, ինչ եմ խոսում ես.
Բացատրե՛լ ես դու այդ ըսկզբներ,
Որ սեր խոսեին քո աշակերտներ:

Դու վարժապետ ես, ասա՛ մեզ արձակ,
Դու աստվածային տառերի թարգման.
Կրթեցի՞ր սրտեր, որ մի պատարագ
Խնկեին անկեղծ կրոնասիրության:

Կակազ է լեզուդ, և հապիվ ահա
Հնչում է խոսքըս, որ արդարանա
Թե «քո բանը չէ, դու աշխարհական,
Ուրեմն չունիս մա՛սըն քննության»:

Ո՛հ, իմ հայ եղբայր, ես ցավում եմ քեզ,
Ցավում եմ հոգով և ոչ խոսքերով.
Անապատ քո սիրտ — եղբայր իմ, խեղճ ես,
Անապա՛տ ես դու ցամաք ավազով:

Դու չունիս քո մեջ ոչինչ ուսուցիչ,—
Թե ունիս — գայլ են ոչխարի մորթով,
Ո՛վ պետք է լինի սրտիդ սփռփիչ,
Երբ մենք չափում ենք մեր օգտի չափով:

Եվ մի՞թե Լևոն իրավունք չուներ
Տանջվել ծովի մեջ հուսահատ վշտի,
Եվ մի՞թե Լևոն զոչել կարող չէր,
Որ Հայի կյանքն է խո՛ւց արքորանքի:

Բավական է այս, մի ա՛յլ ժամանակ
Չոհեյու եմ այդ մեծագնի գործին:
Բայց այժմ, խնդրեմ, եկե՛ք և գնանք,
Հետևենք սակավ ծանոթ Լևոնին:

Ի՞նչ եղավ Լևոն, տարակուսելով
Ինձ հարցնում է ընթերցասիրողն.
Կամի՛ս որ լսենք,— սկսի՛ր շուտով.
Տա՛ր Լևոն Կովկաս, հառաջ տար, քեթթող:—

Այդպե՛ս է, ուրեմն թո՛ղ հյուսիս օտար,
Թո՛ղ քո սիրածը. գնանք միասին,
Ուր բարձրանում է Կապրեկ մեծափառ,—
Եվ այն ժամանակ ողջո՛ւյն Կավկասին,
Իսկ թե սա ծածկվի — ողջո՛ւյն դաշտերին,
Փրփրածավալ գետերին ողջո՛ւյն,
Ուր հառաջ կը գա քեզ նոր բնություն:

Ներիր ինձ, Մոսկվա.
Կրկին տեսության քեզ խոսքըս տալով.
Երկար միջոցով կամիմ բաժանվել,
Եվ սրտիս հուզման հնապանդելով.

Իմ Լևոնի հետ ճանապարհորդել,
Պատրաստ կամ:— Ահա —

Միրած գրքերից մեծ պաշար առած,—
Տխուր մեղեդիք Հելլե պոետի,
Գեոտեի Ֆաուստ, այս անմահ քերթված,
Թափառաշրջիկ արկածքն Հարոլդի:

Երգիծանիչ գործը Հոբենայի,
Եվ Բեռանձեի ոգելից երգեր,
Եվ պատմությունը լրջամիտ Բեռքլի,
Եվ Շեքսպիրի ողբերգություններ:

Մի քանի համար Մեդվից Պոլիսի,
Մի քանի երգեր մեզ ծանոթ Կոմսի,—
Եվ այս բոլորը ամուր կապկպած,
Ամենդ լրագրի թերթերով փաթթած,—

Գնում է Լևոն: Խոտորնակ արպես
Յուր պացման մեջ ծիծառը գարնան,
Թռչում է Լևոն հեռու ասպարեկ,—
Դյուրիչ արևելք — ճնշված Հայաստան:

Արձակ ձգում է յուրյան ճանապարհ
Օդում սավառնող արծվի թռիչքով,
Նա հատանում է դաշտեր ծաղկավառ,
Հայրենի երկիր ուղիղ դիմելով:

Եվ տեսա ջաղաք... և այն հայ ջաղաք,
Առտեղ խռոված ժողովրդականք,
Պախարակում են վաթքը անառակ
Անբարիշտ հովվի անբարոյական...

Խավար բռնավոր և ծնունդ գահճի,
Դահիճ արարքով և դահիճ հոգով,
Հովվում է հոտը մեր Լուսավորչի
Անուղղա բարքով, թյուր քարոզներով:

Մեծ արվեստ ունի երապուրանքի
Եվ խորամանկ է այդ չարի հոգին,
Որպես անդունդը օվկիանոսի,
Գիտե բանտարկել յուր ահեղ գաղտնիս:

Որպես գիշերի թանձրամած խավար,
Նորա կուրծքի մեջ անճոռնի միաքեր
Ալեկոծվում են. նա ստրկաբար
Լսում է նոցա, պարզում է ձեռներ...

Եվ ամբողջ դժոխքն ամբարշտույթան
Ճնշում է Հովվին. նա գաղտագողի,
Պղծելով կնիքն ձեռնադրության
Նա դավաճան է յուր Հայրապետի:

Կը ճնշվես բաղդից, եզվի՛տ ինքնիշխան,
Եվ կը ճնշես քեզ առաքինություն.
Եվ այս քո սլափի՛ծ, խորամանկ շղթան,
Որ ծնանում է քո մեջ ցանկություն:

Շղթայել կանքը խեղճ ժողովրդի,
Բարօրությունը ոտնակոխ անել,—
Ճնշելու է քեզ, Լայլլի որդի —
Պատրա՛տտ է քեզ փռնս, որ դու ես փորել:

Այն գործը միայն փառք է պանտաշտում,
Որ քաղաքացու փաղում է կրանքով,
Որ ազգի վիճակն է բարեկարգում,
Որ վարդարում է աշխարհս շնորհով:

Դու չար ես գործում և կասիս, որ այդ
Հանցանքի ի՞նչ մենք բարի՝ հաշվենք.
Եվ ճշմարտության լարեր որդալթ
Դու խիստ եռձաք ես, մի՛թե չգիտենք:

Ընկեր քո գործին — դժոխք սևանա՞ծ.
Եվ բոլոր գներդ քո ինչ գինովաբան...

Ուր չարագործ է մատնիչ մի տգեղ,
Դու ռասնապատիկ Հուդա եւ այնտեղ:

Պատասխանի՛ր մեզ, ո՞ւր է արգասիք
Քո վաստակների. ինչո՞վ կարացավ
Քո անբաղյ հոտը լինել երջանիկ,
Դու գիտե՞ս, Հովի՛վ, քանի վշտացավ...

Մթին ախտերով զբաղված է նա,
Կամի գրավել սիրտը քաղաքի,
Որ յուր հանցանքը անպատիժ մնա,
Որ նա առավել հասանե փառքի:

Բայց ժողովուրդը հոգով բարկացած,
Շատ վշտացած է գավազանի տակ.
Բողոք է կարդում ձեռք-ձեռքի տրված,
Պատրաստ է հանել նորան հրապարակ...

Կանգնում է Լևոն, կամի բան խոսել,
Բայց լծած է կառք: Հովիվն շտապով
Դիմում է հյուսիս. կամի գանգատել,
Որ օրենքն լինի նորան շատագույ:

«Անմիտ սև եղբայր», գոչում է Լևոն,
«Դառն է քո գալոցք, ո՞ւր ես շտապում,
Ահա մթնեցավ կյանքիդ հորիզոն,
Ինքը օրենքը քեզ մահ է վճռում»...

Եվ հառաջ Լևոն: Սարեր, հովիտներ
Անհետանում են նորա աչքերից.
Մի չնաշխարհիկ բացվում է պատկեր
Սպիտակափառ Կապեեկի գլխից:

Սպիտակ կատարն բարձր լեռների,
Կարծես, երկնքի դիպչում են ամպին,
Եվ ձյունից հյուսած թագ աղամանդի
Պճնում են նոցա հպարտ գագաթին:

Եվ քարանձավից արծիվ մենավոր,
Թևերը լայնած, գիտե սավառնել
Այնքան անթափանց և այնքան հզոր,
Մինչև հետամուխ աչքերից կորչել:

Ո՞վ արծի՛վ, արծի՛վ, քանի՛ օդապար
Վերացել ես դու կապուտակ սահման.
Ա՛խ, եթե Հայի դրոշը բարձրանար
Անարգ կապանքից մինչ ա՛յդ աստիճան...

Ա՛խ, եթե Հայի ուսերը ճեղքեր
Ոխերիմ լուծը յուր բռնավորի,
Որպես ճեղքում ես դու արձակ եթեր,
Շքեղ կապույթյամբ կարո՞ղ թևերի:

Ի՛նչ գեղեցկությամբ փովում ես դաշտեր
Հայացքի առջև նորատես մարդի.
Ոսկի հոսանքով զույնզույն ծաղիկներ,
ձոճվում են, որպես խաղացքն առվակի:

Բայց, ափսո՛ս, ինչպես շտապ քայլերով
ձանապարհորդը ոտքը է կոխում,
Նա սկսում է անիծել հոգով
Այն, ինչ առաջուց դրախտ էր թվում,

Տեղ-տեղ պղծած է ավազակների
Գապանաբարո ավերածներից.
Աչքերդ լցվում են արյունով ցավի,
Խոր արձակում ես հոգոց ու կսկիծ:

Անպիտան՝ ցեղեր, արժանի՞ եք դուք
Վայելել բարիքն այդ պերճ երկրի.
Քանի՛ թափել է ձեր վայրագ բազուկ
Անմեղ արյունը խեղճ անցավորի:

Քանի՛ ծնողներ դառն արտասուքով
Ողբացին կորուստ հարապատների,

Բանի՝ ծովացան լացով կսկիծող
Առագաստները նորեւ, շարձների,

Ահագին ծայրեր և անպատճճեր,
Ծավալված լուսով նոր արշալույսի
Ցրցված են արստեղ: Մարգագետինների
Առողված ցողոյ նստեցես են գալի:

Հառուչ և խոռուչ, — և ոչ մի վայրկյան
Չէ կանգնում Լևոն: Թեքվում են շարեր
Ծածկվում են երանիք: — և նոր անհարման,
Նոր փոփոխություն և նոր արտաքիններ:

Թո՛ղ մեղ, սրբատեր որդիք թուրքյան
Չսիրեն Լևոն, որ, թափառական,
Չափում է վայրեր, չծնունդով «մեռապատ»,
Կերչ չընելով միայն իր անհատ:

Ոչինչ հաճություն թո՛ղ չսպասած
Նոցա, որ անբաժ են կնոջ ծոցից,
Որոնց դատարկ կյանք անհոգ շահում է
Ջրոսանքի մեջ աղաղակալից:

Լևոնի հոգին, որ այնքան ցածրով
Ատում է հանգիստ, նման է կյանքին
Հարապատ ապգի, որ ի բաժանկող
Ճաշակում է թուխ դագաղի կողքին:

Չմխտոյա դաշտեր, այստեղ հաճափյուն,
Մանուշակ հասմիկ — գարուն սիրելի —
Դալար հոգիտոց ժյուն է գեղիտու,
Բաղցր, ուսին: շունչ վերաբույս: Կուսին:

Տե՛ս, ականակիտ այստեղ շինչ սովակ
Հեղիկ վազում է ծաղիկների տակ,
Վայրի շուշանը գիմինը կախած,
Գզվում է շուրը և է գնալիս:

Լևոն կարծում է, որ այդ պարզ շերտ
Հեռու կտանեն կսկիծոց արտի,
Կը ծայտա գարուն. կը գան ծիծառներ,
Փոքր-ինչ կարգի վշտացած հոգի:

Չարկում է քնարին, — թայց ես հնչում ե:
Մի սրտասարսուտ, տխուր հղկական,
«Ողբա՛, պատանի», ես շնչում ե. —
Բեկ վաղ է ցնայել փրկության քաճակ:

Դու կորցնեցիր այն աստիճան,
Բարդի ծայրից, երբ: Հայաստանի
Փշրեցավ փառքը քո հատուկ ձեռից, —
Եվ կը գտանես, երբ կորից կը կանգնի:

Ո՛հ, մի՛ խնորհրե ինձ, իմ զին-թախտություն
Ուտում է հոգիս այնպես կատաղած:
Անսի՛տ պատանի, ի՛նչ ուրախություն, —
Հայ տրախ: մեջ գծի՛նք է ճանկված:

Դժոխք է, սսեմ, այն տգիտության,
Որ, որպես ճճի, ուտում է նոթան,
Որ խանգարելով և ուտում, և լուս,
Չէ թողել նոթան քարոքության հոյակ:

Ծա ամենայն բանը սրտորաստ է գործել:
Հայրենիք, պարծանք թմարունու մատնել,
Փո՛ղ նորան տվեցեք, ես փող է սիրում,
(Միայն սոսնց փողի դագաղ է զեռում):

Նյութապաշտ է Հայն, ցուրտ որպես ստույգ,
Հաշիվների մեջ թաղված և մեռած,
Ես արդեն սրտից մերժել է վաղուց
Բեղեցկի տխր — զիս է Աստված:

Արժաք — է ետրան փռեցեալ: այն
Հատված են այժմ, թույլում է հոգով:

Ո՛վ Արծաթ, դու միշտ Հայի առաջնու
Ներկայանում ես դրախտի դեմքով:

Ով և դու լինես, թե չար ախտակիր,
Թե պիղծ խաբեբա, թե ավնիվ հոգի,—
Հայն կառաջարկե քեզ միշտ մի՛ խնդիր.
Ի՛նչ է, հարո՛ւստ ես, ունի՛ս ջատ ոսկի:

Մեծատուն ես դու, բոլորի առջև
Դուներդ բա՛ց են, սեղանդ ծածկվա՛ծ.
Եվ լի՛ք են պարկերդ, մենք այսուհետև
Հա՛յր և որդի՛ ենք, ույստով հաստատած:

Եվ այս են նոցա օրի հոգսերը.
Ինչ որ կարող ես, քանդի՛ր, կործանի՛ր.
Ո՛վ է հարցանում, գանձ քեզ ժողովի՛ր.—
Թող մեռնի՛ տնանկ, կորչի՛ արդարը:

Գեթ մի ցավ, մի գուռ, մի կարեկցություն
Անտուն աղքատին ցույց տային դոքա:—
Այդպես ես դու միշտ, ո՛վ հարստություն:—
Երբ քեզ տիրում են կարողք անպա:

Գեղեցիկ է կյանք և հարստություն,
Թե աթոռակից է և գիտություն,
Բայց թե վերջինը, լույսը պակասեր,—
Լի աղտեղությամբ կյանքը դամբաներ:

Լռեցավ Քնարն, արտասանելով
Մտառությունքը այս նշանավոր:
Կանգնած է Լևոն, ցավից խեղդվելով
Բացականչում է նա կասկածավոր:

Գիտե՛ք, բարեկա՛մք, ի՛նչ պզտիկ հոգիս.—
Բայց ինչո՞ւ խնձորն երկպառակության
Զգեմ անվրոյով, ձեր կյանքի շրջան.
Ա՛յս, դուք չեք կարող օգնել ցավերիս:

Նիրհեցե՛ք անո՛ւշ թո՛ղ թևատարած
Հսկեն ձեր վերա անմեղ հրեշտակներ.—
Կանխակա՛լ կարծիք,— անլույս թանձրացած
Խավարում շրջող մահաթո՛ւյն դներ:

Ծանր ընկան վերաս անգուռ շղթաներ,
Եվ այն ժամանակ ես սաուպեցի,
Քանի՛ խավարեն հայրենի աստղեր,
Խավա՛ր է սիրտն հայրենասերի:

Եվ չը շնչել օդ սարերի ապառ —
Նույն է, թե չկա և երանություն,—
Եվ՛ չարքել հոսանք կյանքի հարապառ —
Հիվա՛նդ է, հիվա՛նդ և մահկանացուն:

Եվ երբ գիտության կը փայլի դրոշակ
Իմ անբաղդ եղբոր Հայի ճակատին,
Ես այն ժամանակ, ես այն ժամանակ,
Կը տեսանեմ կյանք իմ ապգի ծոցին:

Ասաց այս Լևոն. աչքերը ձգեց
Դեպի արևելք. մի խոր ախ քաշեց.
Այն կայծակնահար վերքի նշան էր,
Որ դեպ Հայաստան նորան գրավում էր:

Նա վշտանում է, բայց վշտի հարված
Ոչ ոքի աչքին տեսանելի չէ,—
Եվ այդ գաղտնի դևն, աղեղը լարած,
Հանապապ նորան առաջնորդում է:

Նորա ներքին կյանք — թախիծ տրտմության:
Մտքի շարժմունքը — այնկո՛ծ մի ծով,
Ուրախության դուռն, կնքած հավիտյան.
Այլ փչելու չէ՛ նորան գարնան հով:

Նորա մատաղ սիրտ, որ երբեմն պայծառ
Ծաղկում էր, որպես պարտեպ նապելի,

Խեղդված կործքի մեջ, քանում է խալատ
Փորձաբան բաժակ, որ նորից լցնի:

Կնճռում է ճակատն և դողդողալով
Բացում է Հարուստն գանձերը պարկի,
Նա ոսկի ունի և կա դրանով
Կարող է զնել սիրուն հեղինակի:

Վառվեցավ Չոխն, նայեց դեպի վեր,
«Պիտ' կորչի Չարը, պիտ' կորչի' Լևոն»:
Գոչեց սաստկությամբ, թոթափեց թներ,
Թռավ, ոտք դրեց քարձր Հելիկոն:

Ների'ր դու, Երգիչ, անշարժ աշխարհի,
Գերեզմանատան ուրվականների.—
Կոխում եմ անեծքդ հաստատ քայլերով,
Խորին նախատինք քեզ նվիրելով:

Ասա', ո'վ Չոխ, ինչ ես մտածում,
Ի՞նչ ծածուկ թակարդ ես ինձ պատրաստում:
Դու կարմրո՞ւմ ես, Հրե'չ անհեթեթ,
Կապվե՞լ է լեզուդ,— է՛հ, Աստված քեզ հետ:

Թշվա՛ն ծաղրածու, մահապա՛րոտ չապան,
Քերթի՛ր ճաշակը բանաստեղծության,
Բայց մեծ է քո մեղք և աններելի,
Մեր պարսալանքը քո վերա լինի:

Ան գործի հետքը կնքած ճակատիդ,
Քեզ խոստանում է վարձ մի խալտառակ,
Եվ, կամի՛մ կարծել, անպարձանք շքնիդ
Նա կիջուցանե մի դմնյա պսակ:

Ո՛ր է պաշտօնեք մարդկեզեն պատվի,
Ո՛ր ապնություն, ո՛ր է գրոշակ:

Լին սուրբ վաստակի: Ա՛խ, թե կործանվի
Քո վերա Երգի՛չ, մեղքիդ աշտարակ:

Թո՛ղ կատաղի Չարն,— բայց ես հանգիստ
Ինձ ոռականում են մարդիկ բանագետ:
Իսկ երկրորդ գլխին, բարեկամք, կարծեմ,
Արժան է զնել այստեղ վերջակետ:

Այո՛, այստեղ վերջ.— մյուս արկածներ
Հետո կը պատմեն, չկա՛ պորություն,
Ա՛խ, արթո՛ւն մուկայք, ա՛խ յո՛թը քույրեր —
Գե՛թ զինը ձեպնից գար ինձ օգնություն...

ԳԼՈՒԽ III

Ուր գանձք ձեր են՝ անդ եւ սիրոք ձեր լեղիցին:
Աւետարան.

Гласность не препятствует злу и не побуждает к добру, если общество не обращает внимания на самое дело; но без гласности, как препятствовать злу, как поощрять добро, если и видеть то их нельзя?

Дж. Ст. Миллз

Գիշերը փախավ: Երկնակամարից
Նուրբ և թափանցիկ վարագույրն ընկավ:
Ծածկվեցավ լուսին: Եթերն աստղալից
Քրքում-ծիրանի հանդերձ զգեցավ:

Վարդյա այգածին

Ավետում է օր: Որպես զուտ ոսկի,
Սփռելով նշույլ նիրհող լեռներին,
Հանդես է գալիս Սկայն երկնքի:

Ահա թռչուններն եղանակում են
Մի եղենային երածշտություն,
Եվ լույս Տվողն նոքա կարողում են
Բացատրական օրինաբանություն:

Եվ կրոնասեր երկյուղած սրտով
Չայնում է Աստված տաք արտասուքով
Եվ բարձրանում է նորա օթևան
Աղոթքը, որպես ցողն առավոտյան:

Չարթում է Լևոն:— Ահա աշխարհ նոր
Շաւ խայտաճամուկ բնակիչներով.—
Հայ Թուրք, Չետին, Քերքեզ ահավոր,
Հրեա խորամանկ, Ռուս ինքնագով:

Եվ թեթևամիտ ազգը Վրացի,
Անտես առնելով փառքը հայրենի,
Միշտ դատարկաձեռն, շոր չունի հագին
Անգամ կարուս է օտար փշրանքին:

Ասելու բան կա և լսելու բան,
Շատ հետաքրքիր վեպք ու կրույցներ...
Եվ շատ ցավում եմ, որ ես չեմ իշխան,
Որ արձակ խոսել կարելի լիներ:

Ի՛նչ ձայն, դղրդոց: Լայն մեղաններում
Խոնում է ամբոխ:— Եվ ի՛նչ պերճություն.—
Չլինի՛ Մամոն ոսկեվառ կառքում
Տոնախմբում է յուր իշխանություն:

Ա՛զգ մի՛ խաբիր ջեկ մնառի հույսերով,
Երբ սոված, ծարավ մոտեցար մահին,
Որ այդ մարդիկը քո խեղճ վիճակով
Վայրկյան մի գոնե, ասես, շարժվին:

Թե շորերդ ճռթած, թե մերկ քո մարմին,
Թե մուրացկություն ծանրացավ վերադ,—
Խաղալի՛ք դարձաք անպամների,
Ցեխո՛ւյ ծեփեցին քո անմեղ ճակատ:

Մենք գնահատել չգիտենք ազգություն,
Նորա ցավերին դեղ-դարման անել.
Ահա՛, ինչո՛ւ մենք սովոր ենք ատել,
Որ ատում են սուս առաքինություն:

Տեսե՛ք, նանրասեր, դատարկաշրջիկ,
Փայլում է խումբը հարստականների.

Ո՛ր եք շտապում, մեղկացած որդիք,—
Խլել սրբություն, ո՛ւմ ոչ այդ հայտնի:

Միայն Համբարն է, որ համեստ բարքով
Սիրում է վաստակ, հեռու վատ կյանքից.
Հպարտ է Համբարն, պարզերես դեմքով:
Ոչինչ ահ չունի վեխտո՞ հարստից:

Եվ նա սիրում է յուր ազգի պարծանք,
Բայց ո՛չ գիտակից, կույր է այդ սերը.
Նա հայատյացին բերում է վրկանք...
Երբեմն փայլում է նորա սուտերը...

Օր է յոթերորդ: Ժպիտ շրթունքին
ձեռում են այստեղ ընկերք մուգայի.
Սովեր է անկյանք սոցա առաջին
Գունաթափ, դեղնած աղջիկն Հուսիսի:

Մազերը սանրած, գեղեցիկ հասակ —
Հավանեի են շրջահած աչքին...
Ո՛վ երիտասարդ, բե՛ր դոցա պսակ,
Թո՛ղ տա յուր հարկը քո մատաղ հոգին:

Կերպարանք վվարթ, խոշոր, սև աչքեր,
Գիշեր հազորբող ցերեկի լույսին,
Ճղած վարդի պես վառվում են թշեր,
Բո՛ց ու կրակ է գոցա երեսին:

Բնական է այդ ո՛չ արվեստական,
Բայց ահա՛ շինծու ներկն Եվրոպայի
Բերում է դոցա մի սաստիկ հերձված —
Յուր մեռած փայլը. — Աստված այդ չանի:

Ո՛ր է այն պոետ, որ բացահայտիչ
Խոսքերով պատմեր շարժվածք գծերի,
Ո՛ր է այն բանաստեղծ, և ո՛ր է նկարիչ,
Գեթ իրագործեր կենս այդ հայացքի:

Ո՛վ դու Հեկարա, ուր անդրանիկ
Վաղուց Խաչակված է գեղեցկություն,
Այստեղ ճանաչի՛ր ամեն երջանիկ
Կախարդիչ սիրո կատարելություն:

Եվ չնաշխարհիկ դու Բուայիա,
Ոսկեշող ցնորք բանաստեղծներք,
Խլեցի՛ն դափնիդ այստեղ սևաչյա
Օրիորդները նիրհող Կավկասի:

Մշտագեղ գարնան ձունում են: Խույսեր,—
Թե այդ առ աչոք երա՛վ խաբուսիկ,
Աստվածատի՛պ եք մրահոն կույսեր,
Ա՛խ, եթե երբեք չթառամեիք:

Բայց ծարավի սիրոս, սիրո ցմորդ
Աստես առե՛նով, միշտ որոնում է,
Դոցա մե՛ջ գտնել հայություն տարրը,—
Երբեք չեն հասնում փափագիս — Կո՛ւր է:

Օտարի բարբառ, օտարի լեզուն,
Հա՛յ օրիորդներ, ինձ չէ՛ գրավում.
Ինչո՛ւ չունիք Հայ դաստիարակություն,
Ինչո՛ւ Հայ խոսքը ձեզ չէ կարդարում:

Թե կարծո՛ւնեք դուք որ նա չէ կարող:
Հայտնել ձե՛ք սրտի և ցարխ, և իրավանք:
Ո՛վ, և նորա մե՛ջ կտե՛ շատ Իրավանքի
Եվ սիրո խոսքեր, և մեղմ թթուվանք:

Եվ ձեր շրթունքը մե՛ղր, են ծայրում,
Եվ ձեր աչքե՛րը կրակ են ցայտում,—
Հրաշալի՛ Կավկաս, քե՛զ անգլա՛տ ալիք,
Ազգի համա՛ր չեք, Արմենուհիներ:

Ծաղկեցե՛ք, որպես ծիծաղող գարուն,—
Բայց ծաղկելու չէ հայրենի այգին.

Կծաղկի Կամկաս, ձեզ կամ Վրացին,
Կամ Ռուս, կամ Թուրք կտանեն կնություն:

Ձեր դատարկ կյանքը կանցանե ունայն...
Երբեք բաղդավոր լինել կարող չեք,
Ձեզ կնահատի աշխարհ ամենայն,
Դուք ձեր ծնունդը անիծել կսկսեք:

Կը գան ձեր դուռը Երգիչներ անտուն,
Կասեն, Տիկիներ՛ր, մայր մեր Հայաստան,
Հիվանդ է, մե՛րկ է — հասե՛ք օգնություն,—
«Ձենք ճանաչում ձեզ», — ա՛յս ձեր պատասխան:

Ո՛չ դառն արտանուբ, ո՛չ ձայն դողդոջուն,
Ոչ հայրենիքի անարգ պղծություն,
Կարող չեն ձեր մեջ առաքինական
Արծարծել գուրթ մի բեկված հայության:

Բայց այդպես չէին ձեր անցյալ քույրեր.
Նոքա սիրեցին անուն ազգության,
Նոքա սրբեցին մայրենի վերքեր
Անմեղ արյունով և անմահացա՛ն:

Քաղցրաձայն Բամբիռն մի ձեռն առնելով*,
Չինավառեցան Հայոց աղջիկներ,
Եվ մատաղ կուրծքը խաչակնքելով,
Պատերազմական հնչեցին տաղեր:

Կին էին ծնել, բայց երբ հայ ազգին
Ավեր ուղարկեց Պարսիկն այն գոռով**
«Կորո՛ւստ», գոռացին և սուրը ձեռին
Երիվար հեծան, որպես մի հերոս:

* Նվագարան կամ գործիք, որով մեր նախնիքը երգում էին ազգային հերոսների արարքը և քաջագործությունը:

** Հավկերտ երկրորդ:

Սուրբ առագաստը մոռացան նոքա,
Եվ չհիշեցին Խնջույքն հարսնության,
Ազգ ու Հայրենիք շրթունքի վերա,
Փռվեցան դաշտում,— ո՛վ մեծ քաջության:

Եվ փոշոտեցան, և ծխոտեցան
Անկողինները նորեկ հարսների,
Տրտմեցան նոքա և աչքով տեսան
Անողորմ տանջանք սիրող ամուսնի:

Գարունը հասավ: Եկան ծիծառներ.
Վարդը բացվեցավ: Եվ անհոգ մարդիկ
Տեսան, խնդացին:— Բայց նոքա, խեղձեր,
Երբեք չտեսան յուրյանց սիրելիք:

Շատ տարիք անցան... Լացով, կսկիծով
Անուշ հայրենիք հիշատակեցին...
Եվ նորա համար մեռան անխռով,—
Եվ այսպես յուրյանց սե՛րը ցույց տվին:

Սպիտակությունք սուրբ ոսկրների
Խնկով սրսկեցին դաշտն Ավարայրի.
Չարմացան ազգեր, եկան և տեսան.—
Մանուշա՛կ, շուշա՛ն նոցանից բուսան:

Դափնիք անթառամ թո՛ղ ձեզ պսակեն,
Թո՛ղ ձեր ոսկերքը ջերմ արտասուքով
Հայրենասերի աչքերը թացեն:—
Խաղաղություն՝ ձեզ սուրբ սաղմոսներով:

Մինչ դեռ հայկական ծավալվում է ցող
Աջխարհիս վերա — Հայն ձեզ կը հիշե,
Եվ քեզ, ո՛վ անցքիս կենդանագրող,
Ո՛վ ոգևորված չքնաղ Եղիշե:

Անմահ է վաստակն, որ ավանդել ես
Հարավատ ազգիդ գրականության.

Հայ լսելիքը դու կախարդում ես,
Որպես հանձարեղ մի պատկերահան:

Ո՛վ մեծ եղիշն, որպիսի՝ լեզվով
Նկարում ես դու անցքը աշխարհիս...
Ոգելից ես դու գիրքը կարդալով,
Ես մկրտվում եմ սուրբ անտամ ապօրհ:

Բայց դուք, ո՛վ պայծառ և շնորհատի
Հինգերորդ դարի Հայոց աղջիկներ,
Քանի՛ օրհնություն խոստովան սրտի
Ձեզ անկեղծաբար բերել են նրվեր:

Դուք Ձեզ կանգնեցիք շիրիմ անտառաց,
Ազգասիրության գործով պսակված,
Բայց վախ՛ անարժան թռուներիս օրին,
Որքա՛ն ցած ենք մենք,— հո՛ղը մեր գլխին,

Դուք Ձեզ կոհեցիք Հայի պարծանքին,
Բայց ձեր քույրերը,— ո՛հ, արտասուքից
Խեղդվում է ձայնը... անպե՛տք են ապօրհ...
Հանդիմանեցե՛ք դոցա շիրիմից:

Արդար չէ արդյո՞ք, ինչ կրուցում եմ,
Ո՛վ հայ աղջիկներ, ստո՛ւյգ չեմ խոսել:
Բայց ներեցե՛ք ինձ, եթե հարցանեմ,
«Գիտե՞ք հայերեն կարդալ և գրել»:

«Մենք մեղավոր չենք, ազելի՛ ազգասեր,
Ընչո՞ւմ է ինձ մի կանացի ձայն,—
Մենք էլ բունիկնք դրոշն ազգության...
Այդ արգելեցին մեզ մեր ծնողները:

Մենք կկապեինք մայրենի խոցեր,
Նորա կտայինք բոլոր մեր պարդեր,
Մենք Հայի վիշտով կվշտանայինք,
Եվ թշուառ դեմ տե՛ր կհանեինք:

Վկա է Աստված, ոչ քո անցանից
Ո՛չ խրատեց մեզ և ոչ կշտանիցեց,
Երբ սիրտս, սթափված անհոգ օրերից,
Սուաշին ծնունդն օտարին նվիրեց»:

— Ուրե՛մն ծնողներ, ուրե՛մն հա՛յր, մա՛յր
Պատճառ են արդեա՛հի ազգասպանության,
Բայց ո՛ր է ամոթ:— Ո՛վ անառակ դար,
Ով անշնչեղի խաղտառակություն:

Հայը կորչում է — անցա անհոգ են,
Խեղդված ծովի անշ շահրառացության,
Սուրբ ազգությունը արհամարհում են
Որպես անպիտան կոտրած մի անան:

Այսպես, ման գալով լայն փողոցներում,
Լսոն տեսնում էր մի անասուն կյանք,
Որ սիրելի էր հին Ասիայում,
Մի բթացած կրակը և անընդունակ:

Այդ դատարկ կյանքը, ուր լույս պերճություն,
Խառն ունայնասեր հրապուրանքով,
Ուր արևելյան անկարգ հղիություն
Գոռուկանում է յուր վկայի դեմքով:—

Այդ նանիր կյանքը թափում է յուր թույլ
Բոլոր շրջակա բնության վերա.
Հոգի, հավատ, կամք, ուսում, կրթություն,—
Սոքա մի խառքով մնում են անպա:

Աղջիկը չափի դաստիարակության
Ո՛չ ազգի հոգով և ա՛չ օտարի.
Արտաքին պջրանք և փայլողություն,
Ա՛յս է հոգևոր կերակուր կյանքի:

Նորա մանակ պջրա չէ ընդունարան
Այն անասխտ սիրտ և պգացմունքի,

Որ Տեսչությունը վարդարեց նորան,
Տալով մի նեցուկ դեմ բռնավորի:

Թարջամած է վարդ, վա՛րդ քնքշության,
Անգործ է ուղեղն անբաղդ աղջկան.
Այդ բարձր ճակատ, այդ մաքուր աչեր
Չունին ներքին հուր, ո՛չ լուսո կայծեր:

Եվ երանություն չէ բացվում ձեզնով,
Երբ դուք նայում եք աղջկա վերան.
Տեսե՛ք, ի՛նչ տխուր գծագրներով
Ներկայանում է քույր մեր անպաշտպան:

Ահա՛ ժամանակ հասավ պսակի,—
Նա մտնում է կյանք, ի՛նչ խորհուրդ ունի,
Ի՛նչ մայր մարող էր լինել այդ աղջիկ,
Երբ տղամարդին դարձավ խաղալիկ:

Այստեղ անօգուտ սուրբ ամուսնություն.
Նա մարմնական է միայն ցանկություն,
Այդտեղ տղամարդ կնոջ բռնավոր.—
Կի՛նը հնազանդ, կի՛ն անձայն, անկոր:

Նա ծառա, նա հարձ, նա ցած աղախին,
Նա ցավով ճընշված մայր զավակածին.—
Այդ ա՛յն Եվան է, որ մահի կնքով
Ստացավ վիճակ Մովսեսի գրչով:

Այդ ա՛յն Եվան է, որ, մտնելով կյանք,
Պիտի վշտանա և տանի գրկանք,
Այն Եվան, ա՛յն կին, որ հարյուրներով
Գնացին հարեմ, մեռան տանջվելով:

Ո՛ր է քո պատիվն, կի՛ն թըշվառական,
Ո՛ր է կանացի տաճարն սրբության,
Աստված սքեղծեց քեզ մեկ հավասար.
Բայց ի՛նչ տեղ տըղվեց քեզ անարգ աշխարհ:

Ի՛նչ սկզբունքով քեզ ջատագովեց
Եվ օրենստուն և իրավաբան,
Դու մի՛ջտ երեխա — օրենքը վճռեց,
Եվ միջտ անձնատո՛ւր հոգաբարձության:

Բա՛ց սրտիդ վերքը աշխարհիս առջև,—
Անարդարություն թո՛ղ այսօր մեռնի,
Թող հորիպոն զա փրկության արև,
Գեղեցկությունը թո՛ղ փառոք կարթնի:

Ո՛վ Հայոց հայրեր և Հայո՛ց մայրեր,
Ինչո՞վ կարող եք ձեր խիղճը սրբել,
Ի՛նչպես աշխարհում այդ խեղճ աղջիկներ
Կարող են յուրյանց բաղդավոր առնել:

Ծանր է ձեր գործը, քան թունով թափած
Անեծք ու նզով դառն հանցավորի.
Ձեզ ներելու չէ երկնային Աստված,
Ձեր առջև դժոխք օ՛րն դատաստանի:

Մայր մեկ տվեցե՛ք, որ սնուցաներ
Մեկ սուրբ կաթովը ազգաշինության,
Որ մի օր անբաղդ Հայն լուսավորեր
Յուր խեղդված մահով կյանքի գերեզման:

Մայր ենք պահանջում, կատարյալ մի կին,—
Այդ մեծ վարժապետն մարդկեղեն սրտի,
Այդ առողջ, քնքուշ կրթության որդին,
Որ տա՛ր ազգություն, որ տա՛ր մեկ հոգին:

Մենք այն ժամանակ լինելու չէինք
Եվ խորթ, և օտար, և անպետք անդամ,
Որ միայն Հայի անուն պղծեինք,
Որ նորա հոտը չտեսած անգամ:

Մենք այն ժամանակ կղաղարեինք
Անոթից խեղդված կարմրատակել.

Եվ Եվրոպային մենք կը հայտնենք,
Որ այժմ ազգ ենք... մեկ պե՛տք է սիրել:

Այո՛, մենք ազգ ենք և Հայի որդի,
Մարդկության: Իշակ և գործակատար,
Թող մեր առաջն անարգելք բացվի
Լուսավորության ազատ ճանապարհ:

Այս դուք չկամիք, Մտողք հայկական,
Թո՛ղ այստեղ Լեոն բանա յուր շերան,
Թո՛ղ յուր պարսավանք թափե ձեր վերա,
Լսեցեք նորան,— սկսում է նա.

«Ա՛խ, եթե խավարն լուսով ծավալել,
Որ ձեր չորս կողմին թագավորում է,
Դուք կը տեսնեիք ի՛նչ չորուստ, ~~սպեր,~~
Այդ չա՛ր սատանան ձեզ պատրաստում է:

Ո՛վ դուք Հայ ծնողք, հպարտ եք հուսով,
Թե սրբությունը պղծեցիք կեղտով,—
Եվ ծափ են տալիս ուշաբարձ տեսն՞ք,
Երբ ձեռք բերեցին ավելորդ կոպեկ:

Եվ բարձրանում են առաջիկա ևս վեր,
Քան յո՛ւս, քան Աստվա՛ծ, քան որեշտակեն՞ը,
Եվ երպոլում են երկնային ծաղկել
Երանությունով,— փառքոյ պատկել:

Բայց երբ անողոք հարվածներ բաղդի
Կը քաշեն դոցա ճանկերով վշտի,
Հասու կը լինեն, որ որդ են անկոր,
Որ տրորում է ամեն անցավոր:

Եռում եք հուսով, որ ուրախագին
Անխոռվ կյանքի վայելեք բարիք,—
Բայց այդ երջանիկ, այդ պայծառ բաղդին
Արժանի՞ եք դուք, դամբանի ճճիք:

Դո՛ւք, դա՛րան: գործող, ձեք պավակներին,
Վաճառեցիք խիղճ, պատիվ, ծախեցիք,
Եվ այժ դնելով նվազ գրպանին,
Անամոթաբար հափշտակեցիք:

Այդ հարստություն, որ դուք պաշտում եք,
Չեր ձեռից կը սողա, որպես թե ժիպակ*,
Եվ անկման պանգակն այնտեղ կլսեք,—
Մա՛հ կը գուշակե այդ տխուր պանգակ...

Ինչ որ ծնում է երկրիս երեսին,
Որս պիտո՞ր լինի յո՛կ ոչնչության՞
Բարի՛ գործեցեք, ո՛վ արտասավագին—
Հողանյութ որդիք անբարշտության:

Բարի գործն է, որ մնում է պայծառ,
Որպես պարզ երկինք չըխավարվելով;
Փռչի է փոխվում ամուր փորձաքար,
Եվ կերթա բոլորն յուր ծանանակով:

Բայց դժվարին է բան հասկացնել
Նոցա, որ կեղտին գերի են դառել,—
Եվ ահա՛, ինչո՛ւ տխուր է հոգիս
Եվ դժոխքի դեմ և յուր ծագելիս:

«ԱՎԱՌԱՎ ՉՍՅՆԵՐ»

Եվ զուտ ոսկին է իշխան աշխարհի,
Եվ մեծ պորություն նա յուր մեջ ունի.
Նա յուր ծանրությամբ տիեզերք է կշռում,
Դժո՛խք է ծախում, դրա՛խտ է առնում:

ԼԵՎՈՆ

Ո՛վ դուք Հայ մարդիկ, ո՛ւր պակշվություն,
Քանի՞ զկպել եք սպականություն,

* Ժիպակ — քլաք.

Չըկամիք սակավ սթափվել քնից,
Թափել ցեցերը, վարթեն՝ դագաղից:

Վերին Պատուհաս ձեզ վրեժխնդիր,
Երկինք է հասել բողոքն Աղքատի,
Դժոխք ընդդեմ ձեր, անե՛ծք մահակիր,—
Ուռչում եք գանձով, բայց ո՞ր խեղճերի:

Նստվում եմ ես այդ պիղծ ճանապարհ,
Որով հասել եք այդ կարողության,
Որքան Աստուծո կանգնած է աշխարհ,
Ցեխով լցնելու են ձեր գերեզման:

ՀՍԿԱՌԱՍՅ ՔԱՅՆԵՐ

Ո՛վ կարող արծաթ, սի՛րտ մեղ քեզ նվեր,
Դու մեզ տվեցիր այս պերճ պալատներ,
Եվ հանք, և ակներ, և գանձ պատվական,
Բոլորը մերն են և մե՛զ սեփական:

ԼԵՎՈՆ

Սո՛ւտ է այդ բոլորը, և Հարստական
Կարող է կոչել յուրյան սեփական:
Միայն մի դագաղ, երեք թիւ գետին,
Ուր որդ և ուտիճ կը լափեն մարմին:

Կամ թե մեռանեք մի այնպիսի տեղ,
Ուր խաբեության ունեիք աղբյուր,
Վա՛յ, առանց թաղման ձեր լեջը տգեղ
Ագռավներ, գայլեր կառնեն կերակուր:

Կերթա ժամանակ... և ձեր դիակներ
Կը դառնան փոշի, բայց անփառք գործեր
Կը ապականեն օդ, միշտ կը թափառեն,—
Ծնողներ յուրյանց սերընդին: Կը սլառմեն:

Անառակության ճանապարհներով,
Խեղճ չքավորի հացը կտրելով,
Դիպում եք առատ արծաթի թումբեր
Եվ ինչո՞ւ համար, աչքածակ գայլեր:

Արձան կանգնեցե՛ք, որին չը հասնի
Ռչինչ մարդկեղեն սնափառություն,
Որպես արեգակ երբեք չը մեռնի,—
Եվ այդ արձանն է Ազգասիրություն:

Այդ չնաշխարհիկ է այն սուրբ արձան,
Որին Ակնիվը գուլթ է խոնարհում,
Որին բուրվառով խոստովանության
Ակնիվ թռռները խունկեր են ծխում:

Անխարդախ պաշտոն, պատվավոր վաստակ,
Հասարակ օգտին անձնազոհություն,—
Սոքա են կյանքի գեղեցիկ պսակ,
Եվ սոցանից կա՛խ բոլոր գիտություն:

Կարկուտ է ընկել Հայ ազգի վերա,
Թողե՛ք արջինը, ժամանակը չէ,
Թե սի՛րտ չունիք դուք, մեռա՛ծ անպա,
Թե կամի՛ք, որ ևս ծանր հառաչե:

Բայց ազգի համար աշխարհ չեք եկած,
Կամակոր որդիք ժանգոտ Մամոնի,
Դուք ընդունակ եք, փորերով ուռած,
Լափիլիվե՛լ լուման և քամե՛լ գինի:

Եվ հետո, ո՛վ կեղտ, ո՛վ անմտության,
Վատնել քսակը,— շռայլո՞ղ, և ո՛ւմ.
Մաշված, վաճառված այն գեղեցկության...
Փափուկ մահճի մեջ... Աստղըկի ծոցո՞ւմ...

Ո՛հ, շատ-շատ օրեր դեռ պիտի սահեն,
Երբ հայի արևն փոշուց կը վարթնի,

Դեռ ամբողջ դարձեր պիտի անցանեն,
Երբ Թպատություն ծառի պես կը բունի:

Եվ պատությունն ա բայց ո՞վ ադ գիտե,
Ներկայի մեջ է գալոցքի հոգին.
Լա՛վ է մեր եերկան, — թո՛ղ պետասխտանե՛
Դատարկածեան Հայի տարակուսողին:

Սովորություն է արդ ժողովագրական
Դատարկութենով կանքը դրոշմել.
Եվ անպատվությանը ցնելով գրպան,
Մի-մի անեշտե գերեզմատ: մտնել:

Այսպես են նոքա կյանքը հասկանում,
Անբան կենդանուն հավասարվելով.
Նոքան կորչում են գիճի՞ն անեղևում,
Որպես Մուսթանը յուր պիղծ հարեմով:

Ո՛չ գիրք, ո՛չ ուսում և ո՛չ կրթություն
Չունին նոցա հետ հաղորդակցություն.
Սոքա և գյուտերն լուսավորության, —
Որպես դաշտերի մեջ դողանջող մի ձայն:

Բայց բոլոր կյանքը անօգուտ ասրել,
Եվ ոչնչանալ, որպես որդ կամ ցեց,
Եվ այս աշխարհից նախատինք տանել, —
Հայեր, ո՞վ ադպես ձեզ ծանր պատժեց:

Եեշտե՛ց վերջին խոսք, և շեշտե՛ց կրկին,
Ավարտեց արույց Լևոն ազգասեր,
Շատ կծու բաներ պատմեց հարստին,
Բայց խուլ և համր էր նորա ակամեջներ:

ձեմում է հարուստն նույնպես փառավոր,
Նույն ազահությամբ նա երապում է
Մթերել գանձեր միլիոնավոր —
Նորա ի՛նչ բանն է, որ Հայը մերկ է:

Նա սողալ գիտե Առյուծի դռան,
Խնդրելով ճնշող կնուտից ապավեն.
Արծաթով գնել գողակից իշխան,
Կաշառող կուրծքին ձգել ժապավեն:

Մեր մեջ սահում է մեծ թշվառություն,
Ոչ ոք չէր կարող մտածել յուր պես,
Ոչ ոք չէ հայտնում յուր դատողություն,
Որ չասեն նորան, ա՛խ, դու սներես:

Ի՛նչպես սիրում ես, ի՛նչպես հարգում ես
Առողջ արույցներ անկեղծ Լևոնի,
Ի՛նչ պատությանք և ի՛նչպես խոհեմ
Բացատրում է գաղտնիքը սրտի:

Շոայի հարստին չգիտե խունկ ծխել,
Անպնիպ գործի ծախելով գրիչ.
Նա ճշմարտության ուխտել է լինել
Պարկեշտ առաքյալ, համեստ քարոսիչ:

Լուռ սենեկիս մեջ ձանձրացալ հոգիս,
Արձակ օրի մեջ ձենել է խնդրում.
Եվ ժամանակ է հանգիստ տալ գրչիս,
Նա արդեն ճը... ճը... ք՛չինչ չէ գրում:

Ռուք տեսանում եք, որ ռճըս աղջատ,
Ջունի ներքին կապ, ներքին շարցություն,
Քատ տեղ խորք դարձված և անհարապատ,
Ների՛ր Հայկաբան — ետամե՛ծ գիտուն:

Արդեն դպրության արհեստավորի
Շարժվում է գրիչն անսանձ փխտերով
Խեղճ մարդ. չք գիտե ի՛նչ բանն է քարր,
Ճշմարտության հետ պատերազմելով:

Ճշմարտությունը լույս է կենդանի.
Ոչինչ երեսպաշտ մթող կամ գրող

Նորա ճառագայթ ծածկել չէ կարող,—
Եվ այդ ձի՛ր է մեր անկողողպտելի:

Ներեցե՛ք. գրիչս չէ հպատակում
Խրթին, խորիմաստ բանաստեղծներին.
Նա, քար ձգելով, ականջ չէ դնում
ճարտասանության պատվիրանքներին:

Թեև երբեմն սիրտըս գրավեց
Խրթին կանոնքս խրթին արվեստի.
Բայց վարզանալով խելքս չընդունեց
Հետ ուղարկեցի,— ապերա՛խտ որդի:

Խոստովանում եմ, ճարտասանաբար
Չըզգիտեմ գրել ես ոտանավոր,
Դորա համար է, որ շքեղափառ
Պառնասի վերա չունիմ ես աթոռ:

Թե ոգևորեր ինձ նորա մուգան,
Որպես այլ հայոց տողաչափներին.—
Ո՛հ, այն ժամանակ ո՛րքան վանապան
Ա՛ղբ կը ծախեի օրագրներին,

Հայկից սկսած երկար ու քարակ
Ես կը ճառեի տմարդի, անտաշ
Րիթմ թխելով, և նույնչամ: արագ,
Որպես փուռնչին, յուր տափակ լավաշ

Տաղեր, առակներ և խենթուխելառ
Ողբ, կական. երգեր կը կցկցեի,
Եվ այնքան անմիտ, և այնքան դժվար,
Որ ինքըս անգա՛մ չըհասկանայի:

Եվ թարգմանությունք ռուսաթաթար,
Թե հաճելի էր, և Հայ-Չինարեն —
Չեպ կընծայեի և ե՛ս վատթար.—
Այ փրկյա զմեզ, հայր մեր, ի չարեն:

Ո՛հ, ի՛նչ հաղթություն. ամբոխը դողով
Ծունըր կը դներ: Ես կը փքվեի
Կորովի գրչով, իմ մե՛ծ հանճարով,
Պղտոր ջուրի մեջ շատ ձո՛ւկ կորսայի:

Ապատ արվեստի վարձկան-դահիճներ,
Ատում եմ հոգով պիղծ պաշտոնը ձեր:
Եվ կը գա մի օր — պրոռոպով հարմար,
Որ ձեր հետ հաշվեմ, ձգելու եմ քնար:

Ապականվեցե՛ք և այսօր գոնյա
Գարշ հիշոցներով դիակալության.
Այդ է ձեր վարձը, մի ևս վարձ կա —
Եվ ճաշակում եք — ջո՛ւրն մոռացության:

Բայց քեզ հանում եմ այս տխուր դասից,
Ո՛վ նոր հայախոս և ապնիվ մշակ,
Քեզ կարող էի անմահ փուռներից
Քաջ մարտիրոսի բոլորել պսակ:

Քնարիդ լարերն ապատ շարժվում ե՛ն,
Երբ ապատ քո կամք, ապատ քո հոգին.—
Այդպես սոխակներ ներդաշնակում են,
Հեռու վանդակից, թփերի միջին:

Մրտիդ կսկիծը — կսկիծ է ազգի,
Եվ ո՛չ մի դիմակ կեղծավորության,
Գրչիդ վաստակը — մեծություն Հայի,—
Թեև հայասերք են քո դավաճան:

Ո՛վ ազգի անդամ, հավերժ հարգելի,
Թո՛ղ մխիթարե կուրծքիս հառաչանք
Պայծառ ճակատող Հայրենասերի,
Որի վարձն եղավ ապերա՛խտ զրկանք:

ԳԼՈՒՆ IV

Իշխանք գողակիցք գողոց, ծառայից հա-
մամիւոք, անընտրողք իրաւանց:

Մովսէս Խորենացի:

Հաւատ վաճառեալ ընդ սնտոյ կենցաղոյս:

Մովսէս Խորենացի:

Италия! Италия! о ты,
Кому судьба наследием несчастным
Дар роковой вручила красоты
О лучшеб ты была не так прекрасна
Зато сильна...

(Сов. 1859 г.)

Դո՛ւ իմ սիրելի, կարո՞ղ ես փոքրիկ
ձաշակել անխռով մաքուր թուփեր.
Ստո՞ւյգ չէ, որ դու խոսքըս «Հայրենիք»,
Շատ մեծարել ես, բայց ատել — երբե՛ք:

Ո՛վ իմ ստերիմ, ես շատ լավ գիտեմ,
Որ սպասում ես, երբ ես կըսկսեմ,
Հարազատ երկրի վիճակը նկարել,
Եվ ամենայն բան իսկապէս խոսել:

Արդարեւ տեսանք մենք բուն Հայաստան,
Եվ Լևոնի հետ ահա՛ ձեւում եմ..
Բայց ե՛ղբայր, գիտե՛ս, տխո՛ւր տեսարան,
Ես մի խորին ցա՛վ իմ մեջ պզում եմ:

Որպէս ապառաժ ծախր է իմ ցավ,
Նա ներգործում է, որպէս դառն լեղի,

Եվ համարյա կանգըս դադարեցավ,
Որպէս և կյանք անբաղոյ աշխարհի:

Ա՛խ, աղո՛թք արա քո ազգի եամար.
Նորա վիճակը նախանձելի չէ.
Նա անպատասխան, որպէս փայտ կամ քու
Նա լուռ, եւս համըր... ա՛խ եւս մեռած է...

Ես ման եմ գալի իմ ցավից խեղդված,
Բայց դարանապարդ տեսքը բնության
Փայլում է այլ տեղ հրաշքով պատկված:—
Գովասանե՛մ քեզ, կանաչ Հայաստան:

Չմայի՛ր, վնայի՛ր, իմ միա՛կ ընկեր.
Որքա՛ն շքեղ է բնակարանը Հայի,—
Չարմանալի չէ, որ Նախնայք մեր
Կարծեցին փնել դրախտն Եդէմի:

Դիրքն Մոսկվայի քեզ գրապետով
Այնպէս կարծում ես, այլ երկիր չկա,
Որ կարող էիր սիրել դու հոգով,
Թեք ընկած պայծառ կանաչի վերա:

Թե կամիս տեսնել Արարչապետի
Հրաշագեղ գործը ու ճարտարություն,—
Ե՛կ Հայոց աշխարհ առաջին օրի
Նա կառաջարկե քեզ գեղեցկություն:

Ի՛նչ ակնահաճո տեսարաններով
Առատաբաշխած են դաշտավայրեր,
Ի՛նչ ոսկենկար բուսականներով
Խնկահողում են այստեղ հովիտներ:

Կախված է գոհարն — ողկուլկ խաղողի,
Ծորում է հյութը սաթի շիթերով,
Եվ սիրուն թռչնակ մի գաղտագողի
Հյուսում է բույնը այստեղ մեծ հոգավ:

Փայլում է դեղին-կարմրագեղ ծիրան,
Քողարկված կանաչ թփերի հովով,
Լցված է այստեղ ներդաշնակության
Նոր այդ ավետող կաքավի երգով:

Վառվում է չըքնաղ, ոսկեփայլ նուռը,
Որի նեկտարով արձակում է լայն
Թաթար խաների դրախտի դուռը,
Երբ անուշ բուրմամբ ծխվում է կալիան:

Հոյակա՛յ աշխարհ. այստեղ վառ սալոր,
Այնտեղ սերկևիլի խոնարհած երկիր,
Տերևի տակից ծպտում է խնձոր,
Մի թուշը ոսկի, մյուսը կարմիր:

Ես երգ եմ երգում, գոհ է իմ հոգին,
Մեղմ խոխոջում են անհոգ առուններ:
Ինձ նկարում է նոցա ապակին
Վառ այգեստանի քաջառողջ բերքեր:

Եվ ձեղքված դուղման, և շամամ նարինջ,
Եվ ոսկի փշատ, և դեղձը թուրինջ,
Եվ ելեկտրոն մեղրը քիչմիջի,
Եվ խոշոր հակինթ քաղցր հաչաբաշի:

Հեռու է մահը. ես կյա՛նք եմ շնչում:
Շարժվում են վարդեր կանաչ ոստերով,
Եվ հոտ են բուրում, և խունկ են ծխում,
Չքնաղ տեսարան ինձ ընծայելով:

Թե Եվրոպայի բոլոր մեծագնի
Պատրաստած յուղերն և օձանելիք,
Եվ անուշ ջրերն այն ախորժելի,
Թափելիք այստեղ, այս չնաշխարհիկ

Վարդերի վերա,— ո՛վ, ես չեմ սըտում,
Որ սոցա անբոս, սոցա վառ ոգին

Հետք թողելու չէր մի ակնթարթում,
Ինքը բուրվելով կը մտներ ձեր հոգին:

Որպես մի աղջիկ նորաբույս կյանքով,
Կը գրավեր նա ձեզ անուշ հոսանքով,
Այն պայծառ աղջիկ, որ շատ կաթոգին,
Ոգեշնչում էր սիրածի կողքին:

Իսո՛ւր է, իսո՛ւր, թե խոսքով հարմար
Ցանկայի նկարել բյուրեղ ջրվեժներ,
Որ, ադամանդյա կապելով կամար,
Սրսկում են այստեղ դալարուն մարգեր:

Բյո՛ւր պտուղների հաջողակ խառնված,
Բյո՛ւր ծաղիկների բյուր գունով հյուսված,
Թե արձակ հովիտ, թե ամալի ձոր —
Եվ ամեն տեղ այդ վարդե՛ր մեղրածոր:

Պատվակա՛ն աշխարհ, ես չունիմ գրիչ
Որով գովեց քեզ քո մեծ նկարիչ.—
Այո՛, Փարպեցի, մեծ է քո լեզուն,
Երբ Այրարատի տեսար մեծություն*:

Ո՛վ վերին Աստված, դու պարզելի ես
Առատ ձեռներով այսքան շարություն,
Բայց ինչո՛ւ, Անհաս, դու խնայել ես
Պարզելի սոցա և ապատություն:

Ինչո՛ւ ամեն թուփ, թեև խիստ դալար,
Դողում է կարծես, ոսխի ձեռից.
Խեղճիկ, ծածկվել է նորա ոսկե դար,
Խեղճի՛կ, դողում է նա արտասուքից:

Հապիվ թե ծաղկած այստեղ մանկություն,
Խարշամած, տված է Թուրքի սբին,

* Ղապար Փարպեցի. սա մանրամասն նկարեց Արարատ նահանգ
վանդությունը, որ շատ աղճատված հասել է մեր ձեռքը:

Տաք դիակներից բաժնում է արյուն,—
Թուրքը երգում է նոր վրե՛ժ Հային

Քաղաքացու կյանք, այնքա՛ն հարկավոր
Մեծակշիռ գործի և վրադմունքի,
Երկյուղի տակ է. նա ամենայն զր
Ընդդեմ վտանգին պետք է պինդորվի:

Թույլ է օրենքը, գրեթե վերացած
Հովանավոր չէ գույքին բնակչի,
Ինքը հովիվը սպառապինված
Պատասպարում է հոտը ոչխարի:

Մերկ սպառածի վերա նա նստած,
Հնչում է թուրակ տիրուք եղանակ,
Թե ինչպես կնոց, դեռ նոր հարսնացած,
Տարավ գերության մի Թուրք ավազակ:

Մատաղ երեխայք, ձեռքը պարպեցով,
ձջում են անկրթ. «մեկ հա՛ց տուք, հա՛յրիկ»,
Հայրը, աչքերը երկինք ուղղելով,
Գոչում է. Ասավա՛ժ, ա՛ն կյանքս դժբախտիկ:

Այնտե՛ր, Ողորմա՛ժ, ունիս օթևան,
Կրհանգչի մարմինս, տաք արտասուքով,
Կերգեմ սուրբ Անվանդ, և այս տրամուրջան
Հովիտը կթողնեմ, ո՛րք լի է փշով:

Որ իմ եարակատը մեռնում են սովից,—
[(Ո՛հ, ի՛նչ կրակ է ծնողի հունար).
Մա՛յր մեր Մարիամ, Աղավե՛ի անբիծ,
Ա՛ն արտիս կսկիծ և Միածնի՛ր տա՛ր:

Խղճալի՛ աշխարհ, տեսնար, չքավոր,
Հեծում է, կարող մի կտոր հացի.
Քրտինք ճակատին, չարչարված, անկոր
Տանում է հարված. վատ բռնավորի:

Թագավորում է բարբարոսություն,
Եվ մեծ երկյուղ է ցերեկով շրջել.
Ո՛չ սրտի գուրը, ո՛չ կարեկցություն
Կարո՛ղ չէ կյանքդ երաշխավորել:

Այս Ասիան է, կրոնը Մահմետի
Սընուցանում է պատառող գայլեր,
Որ խմեն արյունը քրիստոնեի.
[(Սոքա կստանան մատղաշ հուրիներ):]

Այս Ասիան է. իրազմուք մարդի
Ոտի տակ ձգված և վիրավորված,
Նորա իշխողը — խավարը բանտի,
Նա մեներո՛ւթյամբ միշտ դատապարտված:

Այստեղ Մեծավորն քայլում է ապստ
Հպատակների սրտերի վերա,
Թշվա՛ն ժողովուրդ, խոնարհած ճակատ,
Սպասավոր է հաճույքին նորա:

Անհաս է ձայնը մարդասիրության
Կեղտի մեջ պղծած հին Ասիային,
Մուտք չունի նշույլ լուսավորության,
Եվ Եվրոպայի անանջ է հոգին:

Շաչում են պեկեր, — ընկնում են պեհեր,
Մա՛հ է ընթանում թևերը բացած.
Վառողն անպակաս... արձձե գնդակներ
Փայլատակում են օդի մեջ վառված:

Ո՛ր է օրենքի դատակնիքը:
Իմացե՛ք. այստեղ օրենքներ չըկան.
Եվ կաշառված է իշխանի կուրծքը,
Թեև մեծ պատիվ չէ այդ տիրության:

Բարօրությունը հառարակ ազգի,
Եվ վավերականն ապահովության,—

Վերին նըպատակն այս պետք է լինի,
Տապանակ Ուխտին,— մե՛ծ դաջնակցության:

Թե ժողովուրդը հաւձնեց մեկ յուր կյանք,
Յուր սուրբ իրավունք, յուր կամք ու հավատ,—
Ո՛հ, ի՛նչ սև գործ էր և ի՛նչ ժանտ դրժանք,
Թե չըպահեինք այդ ուխտն անարատ:

Այդտեղ պիտո էր իսկույն կրակվեր
Մի սարսափելի ռեակցիոն...
Այդտեղ մեղավորն պետք է խորտակվեր,
Որ նա ձեռնարկեց գործ մի անկանոն:

Այդտեղ ժողովուրդն է այն սուրբ Աստված,
Որի արարքին չըկա մի բողոք.
Նա պահանջում է կյանքը, պահ տըված,
Եվ այդ ուրանալ չէ կարող ո՛չ ոք:

Ուրե՛մըն թրեր, ուրե՛մըն սրեր,
Թո՛ղ հանդիսանան այստեղ դատավոր,
Թո՛ղ թափվեն անպարտ արյան առուներ,
Դա անմահ գործի է պետավոր:

Բայց, ո՛վ Ասիա, ի՛նչ է քո համար
Այս ապատության կենդանի քարոզ.
Մեռած եք, ազգեր, և ձեզ բռնաբար
Հարստահարում է թշնամին գոռոզ:

Այս վիճակի մեջ է այժմ Հայաստան.
Այսպես տեսնում է ցանկալի աշխարհ
Չեզ ծանոթ Լեոն: Նա թափառական
Ուղղում է այս դեհ, այն դեհ ճանապարհ:

Վաստակած է նա, քրտինք երեսին.
Ո՛հ, ի՛նչ ցուրտ քրտինք առանց ջերմության,
Դարձնում է երեսն անբաղդ աշխարհին,
Թավում է առատ ծով կարեկցության:

«Գեղեցի՛կ աշխարհ, դու հայո՛ց աշխարհ,
Լըցված, ողողած դառն արտասուքով,
Ո՛րքան խեղճ ես դու և ո՛րքան թշվառ.
Արյունաշաղախ տեսարաններով:

Ողջույն եմ բերել քեզ ես Հյուսիսից,
Գուցե, ո՛չ առանց դառն արտասուքի,
Թո՛ւյլ տուր, ո՛վ մայր իմ, հարազատ հողից
Օծանեմ մարմինս — հարություն առնի:

Քո մեջ ծաղկում է լիության պսակ,
Բոլորն պարզել է քեզ բնություն.
Բայց, ո՛վ քաղցրաշունչ Հայաստան հոգյակ,
Ինչո՞ւ Հյուսիսի չունիս կրթություն:

Ինչո՞ւ քո որդիք, այնքան կամակոր,
Գրկել են խավար, որ կորուստ չենի,
Ինչո՞ւ չեն վարթնում քնից դարևոր,
Որ կենդանության նշույլը ծագի:

Ես քանի՛ անգամ երկնքից հարցրի,
Քանի՛ աղոթքով դեպ երկիր դարձա.—
Ասացե՛ք դուք ինձ, ո՞ր Բռնավորի
Շարժեցա՞վ ձեռք Անպարտիդ վերա:

Եվ չունի՛ս արդյոք ոչինչ կորություն,
Հիվա՛նդ ես. ասա, կորո՛ւստ օրհասի.
Եվ ո՛վ խանգարեց քո վառ մանկություն,
Լուսի՛ն Մահմետի. թե քա՛րքը Հալի:

Եվ մի՛թե ոչ ոք քո զավակներից
Փայլատակելու չէ՞ սուսեր ձեռին,
Փոթո՛րիկ, որդե՛հ վիրավոր կուրծքից
Անվախ թափելով ոտխի գնդին:

Պատկառելի՛ կին, մա՛յր մեր նետահար,
Այրիության մեջ անպատիվ եղած.

Աչքերում արյուն, մազերն անհարդար...
Ապտակակոծ է, անբույժ խոցուոված:

Մի վե՛ր կաց, կա՛նգնի՛ր, աշխարհ Հայաստան,
Մի թա՛փ տուր ուժով, թո՛ղ ճեղքվին կապանք.
Ահա՛ քեզ արյուն իմ նվիրական,
Թո՛ղ ցողեն դաշտերդ փրկության հոսանք:

Ընչեց փոթորիկ,— օտար ալիքներ
Եկան, խեղդեցին քո կյանքի տապան,
Քանի սիրելի՛, հարապատ հույսեր
Փլատակվեցան և անդարձ կորան:

Այստեղ Հայի կյանք... չըկա Հայի կյանք.
Այլ կա մի կապանք, մի անվե՛րջ կապանք...
Ո՛չ լույս, ոչ ծաղիկ մի կենդանության...
Ցավեցե՛ք, մարդիկ, ցավի՛ր, Հայաստան:

Այստեղ ձգվում է, կանչից լրկված,
Մեծ անապատը թանձրը խավարի,
Ուր չեն դադարում մտնված աղմուկից
Սև ագռավները գունաթափ կյանքի:

Փակում են աչքերս... ո՛վ տխուր հանդես...
Եվ ահա՛ ցնորք... հապար մի տեսակ
Կիտվում են մի-մի սկաների պես:
Ահա՛, նոր երկիր... նոր հրապարակ...

Տաճարք, քաղաքներ ավեր ու կործան,
Ցանուցի՛ր նշխարք հոյակապության,
Եվ Ռուբենյան չարդված գայիտն...
Սոքա կազմում են մի տրտու՛ր քաերուն:

Եվ տեսանում եմ. սևազգեստ մարդիկ
Մտնենում են ինձ վառած ջահերով.
Սոցա բերանից տխուր մեղեդիք
Հնչում են թաղման վերջին հրաժեշտով...

Այդ ոգիզյաց սրտիչ ինտայան,
Որոնք յուրյանց կյանքն ավելի վառառակում
Ջոհեցին ազգին և տաժանական
Աշխատութենից մեռան անփառով:

Թե օր, թե գիշե՛ր գործի պարտաբաժ,
Ռոքա հասկացան խորհարդը կրակքի,
Որպես քաջ մըշակ, գրիչ ձեռն արած,
Պատրաստեցին կյանքն հարստաբաժ ազգի:

Սիրով սիրեցի անգին հայրենիք,
Եվ հայի անուն շատ մեծարեցին,
Մինչև մեր թախիծ և դառն մեղեդիք
Գերեզմանների խորքից լսեցին:

Մինն այդ Մերերից, առավել տխուր,
Մի ազրու, հպոր, ազնիվ աչքերով,
Բռնում է ձեռիցս, և, որպես մի սուր,
Խոցում է սիրտը կծու խառքերով:

Եվ հառաչո՛ւն է, որպես փոթորիկ,—
Եվ մի հեծեծա՛նք այնքան ջախջախ,
Նա պարսավում է անարժան որդիք,
Որքան մեծ կորուստ ավեցին ազգին:

Նա պարսավում է Հոռու արեւյան,
Որ պատանեցին հոտը Բրիտանոսի,
Որ աղմկեցին սիրտ ժողովրդյան,
Խավար ածելով անընդգրկելի:

Նա պարսավում է և ուրիշ ջաներ,
Եվ ուրիշ մարդիկ. և շատ արատներ...
Բայց, որ ընդհանուր չըծագի հերձված,
Թո՛ղ այս իմանա ծածկագետ Աստված:

Եվ ահա և այժմ միավորեցան.
Իսսահակ, Անարուպ, Մեծ-Ներսես, Ղապար.

Եվ ապատախոհ Ներսես Լամբրոնյան,
Կարծես, հընչեցին մեկ անմահ մի ճառ:

Մի մեծ գաղափար և մի մեծ հանձար
Այդ խոսքերի մեջ բացահայտեցավ.
Թեև չը գիտեմ կըրկնել ես հարմար,
Բայց այսպես իմ մեջ տըպավորվեցավ.

«Կըղե՛ր, մի՛թե ձեզ մի սև պարսավանք
Հասանելու չէ սեպհականություն.
Ինչո՞ւ թըշնամուն հայրենի պարծանք
Ծախեց ձեր եղեռն ազգադժություն:

Կղե՛ր, ի՞նչ անուն ձեր գործի համար
Կարող են ձեզ տալ գալոց թոռները.
Ո՛չ անփառունակ ամոթ դարեց դար
Նըշավակելու են ձեր օրերը.

Կղերիկոսի սաղմոսերգություն
Փոխանակել է քություն կանչյուն.
Մեղքի վարգույր, սփռած վարդերով,
Ծածկել է նոցա ախտոտ թևերով:

Կղե՛ր, ո՛վ Կղեր, դուք ավեր ազգին
Բերում եք միայն և ո՛չ փրկություն,
Եվ ուրախ է ձեր մեղավոր հոգին,
Երբ պատարագ է և մեծ բազմություն:

— Մոմե՛ր տակեցե՛ք. այնտեղ փառաձև
Կախած են պատկեր Հրաշուգործների:—
— Իմաստակություն. Աստուծո առջև
Ընդունելի չէ Կոհն խավարյալի:

Խաչհամբույր բերե՛ք, և անգին գանձեր
Կը պատրաստե ձեզ օրն ավետաբեր.
— Գո՛րծ քրեական,— և երեք շանթով
Գոռում է երկինք, բայց դուք անվըրդո՛վ:

Պոծեցե՛ք առատ, սակայն նույն չափով
Մեղա՛ ասացե՛ք, և ձեզ փրկություն.
— Մեղսապարտ դրժանք,— և ոտով գլխով
Կը ձգե անդունդ ձեզ արդարություն:

Եվ ո՛ւր տեղից այդ հեթանոսություն,
Ո՛ր դժոխք դորանց ձեզ ավանդեցին,
Ա՛յդ է վերհամբարձ Քրիստոնեություն.
Ա՛յդ ձեզ ավանդեց Որդին Միածին:

Կղե՛ր, ո՛ւր է ձեր անըստգյուտ պաշտոն,
Ո՛ւր ծիրանածին Քրիստոնեության,
Ընչասեր մարդի՛կ, դուք չունիք կրոն,
Ծե՛ս է ձեր հավատ — պտուղ կուրության:

Կրոնը ծե՛ս չէ, և ո՛չ կույր հավատ,
Նա թշնամի է ամեն կուրության,
Կրոնը սեր է, հոգի անարատ,
Թե մենք շինեինք մի նյութ գիտության:

Կրոնը կյանք է ամբողջ մարդկության,
Որ միշտ ձգտում է դեպի անվախձան,
Դեպ այն էություն անսահմանափակ,
Որին կոչում ենք Աստված միայնակ:

Նա իմ հոգու մեջ պետք է գտանե
Մի անխռով կյանք և խաղաղական.
Այդտեղ բռնավորն նույնքան անվոր է,
Թե փականք դներ իմ ազատության:

Ո՛վ աստվածաբան, ուրեմն դարձիր
Պարզ երկնքի տակ ճշմարիտ կրոնի,
Բա՛ց սըրտիդ դուռը, և նոր օղ շնչիր.
Քո մեջ կըծի՛ր մի առողջ հոգի»:

Ասացին նոքա և անհետացան,—
Դյուրող երազից ես սթափեցա.

Հիշեցի խոսքերն այն անմահական,
Նո՛ր կրոն պգացի, այլապես ուսա:

Քահի ծաղկած է մեր մտավոր կյանք,
Նույնչափ և սերտ է մեր սերն դեպ Աստված,
Նույնչափ բարեպաշտ հոգու աղաչանք
Տալիս ենք Նորան մենք համեստացած:

Բարձրացի՛ր հագով դու կրոնուսույց,
Քեզ շոշապատող խավարից մոյար,
Մեծ Ձորութուն՝ այն աշխարհակառույց
Քննելով քննի՛ր դու հայտնաբարբառ.

Եվ այն ժամանակ դու կըճանաչես
Ընդհանուր կարգը բոլոր բնության,
Եվ երբեք խղճի մեղանշեղու չես:—
Այսպես թո՛ղ լինի այժմ Աստվածաբան:

Վարդապե՛տ, չկա հակառակություն
Գիտության մեջը և սուրբ կրոնի,
Դոքա են մշակն այն ամենաարթուն,
Որ բարվոքում են ներքին կյանք մարդի:

Դոցանով միայն թագավորություն
Կարող է մնալ անխախտ հավիտյան,
Ըստ որում մարդուն ընչափրություն
Հերքում է ազատ կրոնը սրբազան:

Եվ այն ժամանակ ոչ ոք չէ ասում,
Թե պետք է խիղճը լսեր ծեսերին,
Սրտիդ մեջ մաքուր կրոն ես ըզգում,
Եվ դո՛ւ ես ազնիվ Աստուծո որդին:

Սրտակից Սերը, կրոնի հոգին,
Շողկապում է մեզ, որպես հաշտ եղբայր,
Բայց այն սնտոի Հավատն արտաքին
Խախտում է այդ կապ, այդ հոգու տաճար:

Եվ այդ տեսնում ենք մենք մեր օրերով —
Մարդիկ միմյանց գաղթը ձևացած,
Այլ մտածողին դարան գործելով
Պղծում են դոքա սուրբ սիրո Աստված:

Ճշմարիտն ասեմ, այդ պարոնները
Չը գիտեն պաշտել և ոչ մի Աստված,
Դոքա պաշտում են յուրյանց ախտերը,
Եվ չունին ոչինչ սե՛ր հասարակաց:

Ո՛ր կրոնն է լավ և ո՞րքա՛ն բարի
Պատրաստում է նա ուսաբանության,
Ա՛րդյոք ա՛յն, որ խիղճը առանց երկյուղի
Թողում է պաշտել Աստվածն անվախճան

Որ ազատապես քո հոգու վիճակ
Բարեկարգում է և կյանք մարդկության,
Որ ուղարկում է յուր սուրբ արեգակ
Բոլոր դավանող ազգի՛ն բանական:—

Թե՛ այն կրոնը, որ անհաշտ ձևով
Սփռում հերձված և քակտիչ սերմեր,
Չար նպատակի գործի դառնալով,
Գրգռում է մեզ, ճնշում խիղճը մեր:

Ա՛յն կրոնն արդյոք, որ թափեց այնքան
Արյան առուններ և խեղդեց մարդիկ,
Հղացավ յուր մեջ սաղմն ատելության,
Որ մեզ գիշատիչ առևե թշնամիք:

Սուրբ եկեղեցու Սեղան սրբության,
Կարծես փոխվել է բեռ թատրոնական,
Այդտեղ աչքըդ է միայն շըրշըրջում,
Բայց, քրի՛ստոնյա, սիրտդ ի՛նչ է պում:

Տեսե՛ք, բազմեցավ Քարոզիչն անհ՛,
Ա՛րդյոք, կա՛նք՞ նա մեզ ուսուցանել,

Որպես Քրիստոս սեղանի վերա,
Եվ մեր սրտերը հեղույթամբ լցնել:

Արդյո՞ք ճառի մեջ պիտո՞ւ է փայլե
Ամենագրկող սիրո մեծություն,
Եվ կյանքի կուռքը չը պիտի պաշտե,
Որ հանդիսանար Քրիստոնեություն:

Սակայն, ի՞նչ է միտքդ, ո՞վ դու Հռետոր,
Ի՞նչ պիտի տա մեզ քո երկար քարոզ,—
Այդ հայտնի է քեզ, ով Աստված հպոր.
Այդ սնտի ախտ և գործ է գոռո՞ւ:

Թե Հայերի մեջ կրոնը ծաղկած էր,
Մենք տասնիններորդ լուսավոր դարին
Տեսնելու չէինք վատ Միսիոներներ,
Որ Հայի խիղճը բռնաբարեին:

Թե Հայերի մեջ կրոնը ծաղկած էր,
Որպես գիտության այգի պտղաբեր,—
Գո՞րծ պիտի գործեր Հայոց արեղան,
Եվ ո՞չ սերմաներ որոմ չարության:

Չէ՛, մեզ պիտո են ուսումնարաններ.
Այլ հնար չըկա սորա փրկության,
Ազգային դպրոցք և պանսիոններ
Կը ծածկեն այդ ցեխ, այդ հոգու վնդտի:

Ուղիղ վարժապետ, ուղիղ մտածող,
Դաստիարակի՛չ մանուկ սերընդի
Ազգի պիտույքը հոր պես հոգացող —
Հառաջ քան դպրոցն ա՛յդ պետք է լինի:

Ուսո՛ւմ և ուսո՛ւմ մեզ հարկավոր է,
Ուսունը լինի թո՞ղ մեր թագավոր,
Ուսունը Հային թո՞ղ բուսուցանե
Մի բարի վիճակ և կյանք փառավոր:

Ակադեմիա հոգևոր կյանքի,
Մի մեծ ասպարեզ, մի վերին Սիոն,
Որ արձակ բացվեր դռներն երկնքի,
Քրիստոնեության փայլե՛ր հորիպոն:

Ակադեմի՛ա Մայր-Էջմիածնում,
Նախագահ Վանքի զավթին ու դռան,
Ուր ե՛՛ո է զալի այս ներկա օրում
Ընչասեր արյուն, ախտեր անարժան:

Քանի դար անցավ, և մինչև այսօր
Չունինք մենք դպրոց — այդ բանն առաջին.
Գումար կապմեցավ շատ նշանավոր,
Նորան սուրբ Հայրերն անպտուղ արեցին:

Խեղճ ժողովուրդը յուր հետին լուման
Բերեց Աստուծո, գանձանակ ձգեց,
Հոգևոր ուսում չտվեցին նորան,
Նա չընտածեց և չը բողոքեց:

Հասավ ժամանակ — մենք բողոքում ենք,
Մենք ազգի անդամ և երեսփոխան,
Ակադեմիա մենք պահանջում ենք,
Պահանջում է ազգ, թեև կիսաձայն...

Եվ այդ կարելի, և ո՞չ երապ այդ,
Միայն պիտո էր խնամք և վաստակ.
Կղե՛ր, ո՛ր ես դու լարում որոգայթ,
Կղե՛ր, քո տունը կործա՛ն, փլատա՛կ:

Ո՞վ անբաղդ Լևոն, այսքան շրջեցի,
Ի՞նչ օգուտ կամ գործ հառաջ բերեցի:
Ո՞վ Հայ, քո ցավով արդեն մաջեցա,
Ոչինչ փրկություն ցավիդ չը տեսա:

Բայց իրավի է. ոչինչ անապատ
Չէ կարող բերել պտուղ անարատ.

Հառաջ պիտո է նորան բարվոքել,
Եվ ապա առատ հունձի սպասել:

Որքան ցանել է, նույնքան կը հնձես.
Այս մի օրենք է համաշխարհական.
Չո՞ր է, ցամաք է Հայի առապարեկ,
Եվ դեռ չի ծաղկել Օսոը գիտություն:

Ուսման սերտ է, որ մեզ մշակում է
Մտավոր դաշտը հոգու անդաստան.
Եվ առանց ռսման մեր կյանքը նույնն է
Թե անշարժությամբ կապված գերեպան:

Ուրեմըն ուսի՞ք, ուրեմն մտածի՞ր,
Քննի՞ր խնդիրը խորին հայացքով.
Իրական կյանքը խեղճառափրի՞ք,
Ասածդ հաստատի՞ր հալար փորձերով:

Մեծ օգուտ ունիս և մեծ հետևանք,
Եթե ասածիդ գործը հառաջ է.
Գո՞ր՞ո՞ւ՞ ապուհեա՞ս, գո՞ք՞՞ և աշխատանք,
Ասածդ գործը թո՞ղ վարձաարե:

Ես շատ խոսեցի, բայց քիչ գործեցի,
Գուցե խոսքերըս ունայն գնացին.
Ասոված տա, որ սիրտս նոր հույսով լցվի.
Այդ օրից կյանքըս կըտամ ես գործին:

Առատ է հունձը լուսավորության,
Բայց մենք մշակներ չունինք հնձելու,
Կրթության գանձով լի է Եվրոպան —
Գա՛նձըդ մեկ պետք է առնել ձեռնտու:

Մ'զգ իմ, ո՞ղջ մասս, — և ես ջրորոտեմ,
Որ քո բազումներ մեկ նորուցանեն.
Ես Մեծ փրկության Չատիկը կը տոնեմ,
Երբ Հայերն ազա՞տ... մի օր ազա՞տ են:

Եվ ահա՛ Լևոն, ի՞մ ընթերցողներ,
Ղերջ դրեց արվե՞ն ծանր արկածքին.
Նորա սիրտն լցվեց դառն մտածումներ,
Որ նա չկարաց թավալել Չարին:

Բայց ձգած է սերմ, թող ծե՛ն, ծաղկեն
Այդ գաղափարքը հոյակապ գործի,
Թո՞ղ հային մի նոր կյանք առաջարկեն,
Այդ կյանքի հունձը թո՞ղ առատ լինի:

Նա ձեզ թողնում է երկար միջոցով,
Այո՛, շատ երկար... բայց ո՛չ հավիտյան.
Մեկնեցե՛ք ձեր ձեռն Լևոնին սիրով,
Ցանկացե՛ք նորան օրեր հանգստյան:

Թեև խանգարեց նա ձեր հանգիստը,
Բայց այդ խանգարումն չէր թշնամական.
Նա ցույց տվեց ձեզ յուր սրտի վիշտը,
Կամեցավ Հայի յույս պայծառության:

Նա չը գովեց ձեզ, և այդ կարող չէր.
Լավը միշտ լավ է, ասում էր Լևոն.
Ցրվեցե՛ք խավարն, որ յույս ձեզ ծագեր,
Այսպես թո՞ղ լինի ձեր կյանքի կանոն:

Երբեք չը պաղի սպեքան տրտմություն,
Երբ Լևոնի հետ ես բաժանվեցա...
Մ'հ, մի կապարյա ճնշող ծանրություն
Եկավ և նստեց իմ կուրծքի վերա:

Ես Լևոնի հետ ճանապարհ գնալով
Իմացա, որ կյանքն չէ մի կրոսանք.
Այլ պատերազմ է լի փորձությունով,
Որ Նահատակի բաժինն է կրկանք:

Ես սովորեցա ուղիղ մտածել,
Հայտնապես ազգիս արատքը գրել,

Եվ գովասանքից սաստիկ վախելով,
Ուսա առաջին փշրել հարվածով:

Ես արհամարհել գեղեցիկ ուսա
Նոցա, որ գիտեն երկդիմի լինել,
Խիղճը դնելով արծաթի վերա,
Լկտի սատանան յորեշտակ անվանել:

Ո՛չ տխուր ցնորքը պատվասիրության
Շարժառիթ էր ինձ այս գործ ձեռնարկել,
Ո՛չ անմիտ խոսքերն ինքնագովության,
Ինչպես սովոր են հիմարք կակապել:

Կամ ձգտողություն մի նախատելի,
Որին հավան է սներես հոգին.
Ո՛չ, ո՛չ, չեմ սըտում — կախաղա՛ն չարին
Սիրելի՛ք, ախտ չէր այս փառամոլի:

Այլ ապգիս վիճակ, տխուր բաղդն Հայի,
(Եվ այստեղ խիղճըս ունիմ ինձ վկա).
Գրգռեց գործս այս — և ողջունեցի: —
Ների՛ր, ընթերցո՛ղ, ես ափին հառա:

Ափի վերա եմ, Մա՛նուկ նորածին,
Բարի՛ ճանապարհ, ժա՛մ է թոթովել.
Կեցցե՛ Ազգասերն: Ողջո՛ւյն Ոստիսն.
Մեկ խաղաղ հոգով հա՛րկ է հրաժարվել:

1864 թ.

ՀՌՎՀԱՆՆԵՍ

ՀՌՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵ

Եվ դու տեսն' ես նորա գանձն անգին,
Դեմքով հըրեշտակ, հասակը փարթամ
Հարավը դուստրը, հրապույրքն աչերին,
Շրթունքը այ վարդ, ժըպիտն անթառամ...
Սիրատանջ այրված քնքուշ սպտերից
Քաղե' ես համբույր որ քաղցը և սեղից:
1880

Նվեր օր. Մարիամ Զ-ին

Ես պոստում եմ բերկրամիտ
Կանաչազգեստ պարտիվում,
Մանիշակը յուր ժըպիտ
Իմ աչքին է պարզում:

Սիրուն մանուկ, թո աչեր
Վառ են ինչպես այդ ծաղիկ,
Եվ սիրտի թո պատկեր
Նույնպես մատաղ, գեղեցիկ:

Քո ժպիտն էլ անմեղ է,
Ինչպես չքնաղ մանիշակ,
Մանուկ քաղցրիկ, ինձ սիրե' —
Մընա' այդպես միշտ հստակ:
1881

Առավոտս անցավ: Առաջ եմ նայում —
Պարզ է հորիզոն, և արևն ոսկի
Ինձ յուր անուշիկ ժըպիտն է նպիրում,
Եվ ողջ բնությունն այնպես գեղանի'...

Ականջ եմ դնում — մի ձայն անմեկին
Խոսում է ինձ հետ, բախտըս գուշակում.

195

Միայն այն կասիրի, որ միշտ է անմահ —
Սուրբ գեղեցկություն և սուրբ գաղափար,
Վեհ միտքը ազատ կենդանի կլմա
Ու սերն անձևաչոհ' խեղճ եղբոր համար...
1887

Դու հայրենիքը տեսն' ես, ասա':

Տեսն' ես արդյոք այն բլուրները,
Որ ճոխ ծաղկում է մշտական գարուն,
Կանաչում թաղված աղն այգիները,
Որ կրն գոհար խաղողն է հասնում:

Տեսն' ես դաշտեր, մարգագետիններ,
Ու բացված այնտեղ վառ ջուշան, մեխակ,
Շնորհառու արև, ոսկի կըշույրներ
Եվ միշտ սիրաշունչ երկինք կապուտակ:

Տեսն' ես ծերուկ ժայռերի միջով
Կատարած անջնեխ գետը փրփըրած,
Ականջ դրե' ես խըռոված եղով
Մն աղմկալից գոռոցին այլազ:

Տեսն' ես գյուղը հովտի մեջ մեռակ
Եվ շուրջը փոված շքեղ պարտեպներ,
Եվ ոսկի հասկեր և խաղաղ վրձակ,—
Լըսն' ես քաղցրիկ արտուտի երգեր:

Եվ իմ առաջն բընութայն գաղտնին
Կարծես թե բընայ բացուում, մերկանում:

Ահա տեսնում եմ իմ կյանքի սյուտկեր
Այնպես սրտառուչ գունով նըկարած —
Սեր, վայելչություն, դժբախտի երպաներ,
Կյանքը չընաջխարհիկ ահա իմ դիմաց:

Բայց, ճակատագի՛ր, դու ինձ չե՛ս խաբում,
Չե՛ք քո ցույց տվածն ոսկեպոծ դիմակ.
Ավա՛ղ, ցնդում է իմ հույսը օդում,—
Կեսօրվան արդեն մոտ է ժամանակ...
1882



Շտապի՛ր, պատանի՛, տալ վայելչության,
Կյանքի ծիծաղկոտ ոսկի օրերին
Հարկ լիաձեռն, քանի անսասան,
Ծախիչ ժամանակ քո բաց ճակատին
Չեղն չէ մըխել ակոս ձրգելու.
Քանի ժպտում է քեզ դեմքն արևու,
Քանի հաշտ աչքով քո երջանկության
Նայում է երկինք ծաղկավառ գարնան...

Կա՛նցենն շուտ տարիք, և դու կը փոխվիս,
Չըկա եռանդըդ պատանեկության,
Եվ նախկին կրքեր այլևս չունիս,
Եվ չի տըրոփում բոցով սրբապան
Քո մաշված սիրտը. աչերըդ մարած
Չէ վառում հուրը մանուկ արտասվաց,
Եվ միայն վերջին փոթորկից առաջ
Լսվում է ջարդված կրծքիդ թո՛ւյլ հառաչ:
1883

ԵՐԿՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ

Նայում եմ առաջ — երկու ճանապարհ
Բաց է իմ դիմաց. մեկը տանում է
Շըքեղ, բախտավոր, նվիրական աջխարհ
Քնքուչ պագսմունքի, ուր միշտ ծաղկում է
Գարունը սիրո երկնքից օրհնած:
Այնտեղ անթառամ վարդի պըսպկներ,
Երջանիկ օրեր սիրով վարդարված
Եվ վա՛ղելության անձկալի ժամեր
Աջխատավորի վաստակած գլխին
Պիտի պարզենն հանգիստ խնդագին:

Մյուսն անապատ ինձ դուրս է հանում,
Որ կարոտում է մըջակող բազկի:
Այստեղ պերճավառ վարդ չէ բուսանում,—
Միայն տատասվը և փուշը վայրի.
Եվ կյանքը մեռած և օղը խեղդող,
Մրտացավ խընամք, եթե այդ լիներ.
Միշտ երախտամոռ հոգուց ոտնակոխ.
Չէ ժպտում արև, սևաթույր ամպեր
Գոռ փոթորիկ են երկրին գուշակում:—
Եվ ես կանգնած եմ և խոր մըտածում,
Ո՛ր իմ անհաստատ քայլերըս ուղղեն,
Արդյոք երկուսից ես ո՞րը ընտրեմ:

Այնտե՛ղ, ըզգում եմ, փարթամ, երջանիկ
Գըլորվելու են իմ կյանքի օրեր
Աչագեղ կույսը հայացքը չընաղիկ
Պարզևում է ինձ, և սրբանըվեր
Նոճիների տակ պիտ գըլուխս հանգչի
Նորա մարմարիոն կուրծքին կապելի.
Եվ պիտի գըտնեմ այն վառ աչերուս
Ես դրախտավայել մի վայելչություն...

Այստե՛ղ ականջըս փայփայելու չէ
Կանաչ պուրակում թռչնոց մեղեդին,
Ոչ պիտի տեսնեմ սըփոռոց թավիշե

Ես անուշաբույր ծաղկոտ մարգերին:
Ոչ արուն-արցունք լքքյալ հառաչանք,
Անտեր ամբոխի անվերջ տառապանք,
Արդար քրտինքով սրջակած գետին
Ավարի մատնած — ահա՛ իմ բաժին:

Բայց այնտե՛ղ կյանքը չունի նըպատակ
Բացի անձնական բարօրությունից,
Իսկ այնտե՛ղ գործի ասուպրեպ արձակ,
Ապնիվ և վըսեմ, թեն փըջալից:—
Եվ ես կանգնած եմ և խոր սըրսածում...
Կու՛նք, ինձ երկուսից ո՛րն են պատրաստում:
1883

Ամբ օր 4 Ա-ին

Միևնույն վիշտը մեպ միացըրեց,
Երկու վիրավոր սրտեր յտեցան.
Անսեկի՛ն ընկեր, հոգիս վկայեց —
Դու իմ հրեշտակն ես մխթաբության:
Տեսե՛ր ես քուրի՛կ, երբ շոռ փոթորիկ
Փչում ահագին և մառաղ թփեր
Խիստ տատանում է, նոքա իրար գիրկ
Դիմում են սիրով, ասես, այդ լիներ
Փրկության անքույթ մի սրտասպարան...
Բայց հողմը ուժգին բախում է նոցա,
Եվ ահա՛ կրկին իրարից բաժան
Իրանց չար բախտը ողբում են նոքա:
Ո՛վ գիտե, գուցե խիստ ճակատագիր
Եվ մեպ անջատե մի օր հավիտյան,
Եվ դու, սիրելի՛, արդյոք տարագիր
Եղբորդդ չե՛ս տալ դու մոռացության.
Կըհիշե՛ս արդյոք միասին թափած
Մեր արտասուքը, իլուր հառաչանք,
Եվ դարձյալ կզգա՛ս քեպ համար միշտ բաց
Մի լքյալ սրտի անվերջ տառապանք...
1884

Որպես հաղթաներա մի ծերուկ իսկա,
Կախված է ժայռը ջրերի վրա.
Ալիքը կայտառ գնում են գալիս
Եվ ժայռին սիրո համբուլլը են տալիս:

Խաղում են անհոգ ալիքը գետի,
Ցուցնում են գրկած պատկերն արևի,
Եվ որպես մանուկ ժպիտն երեսին,
Մեղմիկ շշունջով խոտում են ժայռին:

«Լսի՛ր, ծերունի՛, ինչո՛ւ ճակատիգ...
Սև կնճիռները չեն տալիս դեմքիդ
Մի օր խնդության շողով ցղանալ —
Ողջը փոխվում է, դու նույնն ես դարձյալ:

«Ապառ լեռների ապառ զավակներ,
Մենք քեպ բերել ենք անթիվ գահարներ.
Երկնքի դատեր — վարդի լեռնատուն
Կը ցողենք կուրծքիդ անուշիտություն:

«Մենք երանավետ քնքուշ նվազով
Կըկոչենք խորքից ձկներն երամով
Եվ ոսկեգոծված գարնան արևից
Քեպ մեր զվարթ պարին կանենք խնդակից:

«Եվ քո ականջին միշտ սիրո երգեր
Մենք արշալույսից կասենք մինչ աստղեր,
Եվ քեպ կըփարենք և քո ծեր կուրծքին
Մենք հանգչել կըտանք մեր քաղցըր կրքին...»:

Ալիքը կայտառ գնում են, գալիս,
Սև ժայռը նախկին յուր վիշտն է լալիս...
Խաղում են ալիք, ուրախ կարկաչում —
Նա կրկին անշարժ, նա կրկին տրտում...
1884

ԱՂԵՐԱԿ

Որպես վաղեմի մի ավանդություն
Կամ շքեղ երազ անմեղ մանկության,
Կենդանանում է այսօր իմ մտքում՝
Խրոխտ ավերակն նախնայաց մեծության,
Այսուեղ բեկորներ վսեմ արվեստի,
Այսուեղ հիշատակն արքունի փառաց,
Եվ վկայարան սրբապան ուխտի,
Եվ տխուր հետքը մեծաշուք կենաց...

Ո՛հ, այսպես ողջ մեր կյանքն է վաղանցիկ,
Ողջը լոկ ծաղր է անսիրտ բնության,
Եվ սեր, և հրձվանք համայն գեղեցիկ
Ձոռ է ավերի և մոռացության,
Ինչպես պատրանքը հեշտասիրության,
Ինչպես զրգիռը պատանու արյան,
Խարուսիկ ժպիտն աշնան արևու,—
Բոլորը վաղն է անհետանալու:

1884

Ա՛խ, տվե՛ք ինձ քաղցրը մի քուն,
Կյանքից հեռո՛ւ սըլանամ
Այն աշխարհը, ուր խնդություն,
Ուր սերն է միշտ անթառամ:

Քնքուշ վարդերն ինձ քարձ լինին,
Վառ կանաչից իմ վերսակ,
Նոցա բույրը լըվարթագին
Ծծեմ անվերջ ես անհագ:

Եվ խայտալով իմ առաջին
Վտակն անուշ խոխոջե,
Մի թարմություն եղեմային
Չորս քոլորքս տարածե:

206

Եվ ինձ ժպտի արշալույսին
Գարնան մատաղ արեգակ,
Եվ գիշերով իս ճակատին
Խաղա գողտրիկ վառ լուսնակ:

Եվ աչագեղ կույսն ականջիս
Յուր մեղեդին մեղմ հնչե.
Եվ հերարձակ՝ սիրով վըպիս
Փարե քնքուշ, փաղաքշե...

Եվ հավիտյան վայելչություն
Գրկե հոգիս. չհագնեամ...
Ա՛խ, տվե՛ք ինձ քաղցրը մի քուն,
Հեռո՛ւ, հեռո՛ւ սըլանամ:

1884

ԵՐԳ

Աննան ես, ինչպես հրեշտակ երկնային,
Չեմ կշտանում նայելով քո երեսին.
Վառ աչերդ, ինչպես արև գարնանային
Ա՛խ, սիրակա՛ն, բորբոքում ես իմ հոգին:

Իրավունք տուր՝ ծծեմ մեղրը շրթունքիդ.
Քաղեմ կարմիր այդ վարդերը թշերիդ.
Ույ որ անկի հոտը շանամ ծծերիդ.
Էլ կարո՞ղ է թե մի գին տա լուր կյանքին:

Թե ասուված ինձ պիտի մահ տա, թող մուս
Վզովդ ընկնեմ, քեզ համբուրեմ մի անգամ
Թող ապրշում մապերովդ ինձ կախ տամ
Բընավ մի կյանք էլ չի հասնի այդ մահին:

1885

201



Իգուր է, հոգի՛ս, իգուր, իմ հրեշտակ,
Այդ գգվանքներդ, անուշ ժպիտներ,
Դու չես վառելու սրտիս մեջ կրակ,
Նորից կյանք չեն տալ ինձ քո համբույրներ:

Ինչպես որ աշնան արևը աղոտ
Չէր սթափեցնելու մեռնող տերևներ,
Ինչպես արհեստը ծաղկանցը անհոտ
Կորուսած բույրը էլ ետ տալու չէր:

Նույնպես քո սերը նորից բորբոքված՝
Իս մարած հոգուն հարություն չի տա,
Քեզ համար, հոգյա՛կ, իմ սիրտը մաշված
Այլևս չունի նույն սերն, հավատա՛:

Բայց իբրև ցնորք քեզ միշտ պիտ սիրեն,
Մի քաղցր ցնորք ոսկի մանկության,
Իբրև կորուսած վաղանցիկ եղեն,
Մի վառ շաղ անկեղծ ովորություն:
1885



Անապատուժը երերուն կյանքի,
Ամիտ ցնորքով մաշված սրտերին
Նավարի մեջը եռուն կրթերի
Միակ սփոփանքն ես դու, կա՛յծ երկնային:

Դու անգի՛ն գոհար, սե՛ր, գանձ մարդկության,
Դու ես որ միայն չարատանջ հոգուն
Բերում ես քաղցըր հույս երջանկության
Եվ կյանքը սիրել տալիս ես մարդուն:

Քանի՛ տանջվելով ծանր բեռի ուսկ,
ձնջված պիտույքիցն առօրեական,

Դարձնում եմ աչքըս այն ջինջ, կաս
Երկնքի վերա անցած մանկության,

Երբ նույնպես էին իմ օրերն անցնում
Անհոգ խաղերով, քաղցրիկ երգերով
Ինչպես վըտակը դալար ուփերում
Սահում է մեղմիկ կարկաչ հանելով:

Այդ քո պատկերն է, սե՛ր աստվածուհի
Դու իբրև մի շող կենդանի լուսով
Միշտ բորբոքում ես սիրտը մարդկու
Ապրել աննախատ անվախճան հուսով
1885



Այս օրերում ընդհանուր սուգի,
Ջարդված սրտերի, դառն հառաչանս
Երբ մենք միշտ պատրաստ մի ծանր
Վատնում ենք ուժեր, դեռ չըկապրուր

Եվ այս կռվի մեջ ահեղ, սուկայի,
Ուր որ գրկվածը նենգուժոր բախտից
Անհետանում է, որպես մի ճրճի,
Հաղթված ոսկեգոծ երկաթի բազկից,

Ուր միայն մեկի ծառն երջանկության
Բուսնում է տասի ավերակներից,
Ուր մի ժպիտը ծաղկում է միայն
Հարյուրավորի աղի արցունքից,—

Ես դեռ անվըհատ շարունակում եմ
Իմ ճանապարհը, դեռ հավատալով
Թե գուցե մի օր և ես գտնում եմ
Այն, ինչ չըկամի բախտը տալ սիրով:

Բայց եթե և ես տանջված, չարչարվա
Գըլուխ խոնարհեմ իմ ճակատագրին,

Խորտակված հույսով, արյունըս սառած,
Իբր աշնան տերև քամու առաջին,

Ընկե՛ր սիրելի, դու չընոռանաս
Հիշել անունը մատադիաս երգչի,
Որ գիտեր տանջվիլ, սիրելի հանապապ,
Գուցե՛ երջանիկ օրվան արժանի:
1885



Դարձյալ Նոր տարի. թող ուրախանան
Բախտավոր կյանքով վերածընության,
Ում ճակատագիրն այդ վիճակել է,
Ով միշտ հուսացել և ըսպասել է:
Բայց ինձ ի՛նչ պիտի բերե նոր տարին,
Ո՛չ արդյոք նոր ցավ իմ տանջված սրտին...
Ա՛խ, ոսկի շողը մի նոր պգացմունքի
Ինձ մի նոր վշտի աղբյուր պիտի լինի:

Չքնա՛ղ արարած, որ մի հայացքով
Անտեղ մանկության, մի անուշ ժպտով,
Կարող ես կյանք տալ լուսած քնարին
Եվ ոգևորել քուն մտած հոգին,
Ես հասկանում եմ որ չեմ արժանի
Վայելել սերը քո քնքուն սրտի.
Անմիտ խոսքերով ես չեմ կամենում
Խռովել հանգիստդ այդ քաղցր հասակում:

Ո՛չ, քեզ սիրելով, քո վառ պատկերին
Երկրպագության դարձնում եմ բազին
Իմ մաշված սիրտը և ակնածությամբ,
Անկեղծ արցունքով և անհուն պգացմամբ,
Միշտ պիտ աղոթեմ, տանջվիմ և սիրեմ,
Սերըս աշխարհից ծածուկ պիտ պահեմ.
Եվ լոկ մի խոսքըդ բարեկամության
Ինձ երջանկություն պիտ տա անսահման:
1886



Տըխուր երգիչը քնարը ձեռին
Ողբում էր անբախտ յուր ճակատագիր,
Քնքուշ ձայները խորտակված սրտին
Չունեին տալու մի խոսք կարեկիր:

Դառնացած հոգով նա խորատուկված
Անցած օրերում, ուլում էր այնտեղ
Գտնել այն հանգիստ, որ երգչին տանջվի
Տալ չէր կամենում աշխարհը տոգել:

Բայց և ա՛յն դատարկ որսիս անապատ,
Հիշողություններ անցած մանկության,—
Կուսի շերս սիրտը գլխին հուսահատ
Միայն պարզեց հանգիստ փրկության...

Ո՛հ, թույլ տո՛ւր և ինձ, ընկե՛ր նազելի,
Այս քաղցր օրին ցանկալ որ, պատած
Անկեղծ սիրովը մատաղ քերթողի,
Ծաղկիս դու չքնաղ, իբրև վարդ փթթած.

Եվ քո անարատ ըզգայուն հոգին
Լինի ինձ աղբյուր վառ երջանկության,
Քո անբիծ սերը կյանքիս խավարին
Ծագե արշալույս նոր բախտի զարնան:
1886



Ինձ մի՛ սիրիր, անբախտ օրիս
Այդ սերն ինձ չէ խնդություն.
Դաժան վշտից խեղդված հոգիս
Էլ չի առնի հարություն:

Ծածուկ կիրթը ինձ պիտ տանջե,
Ես չըկամիմ քեզ սիրել,

Բայց իմ սիրտը միշտ պիտ խնդրե
Քնքուշ սրտիդ մտա լինել...

Եվ պատրաստ եմ քեզ հավիտյան
Լինել անկեղծ կարեկից.
Եվ թող քեռը քո տխրության
Չըհեռանա իմ սրտից:

Ինձ մի՛ սիրիր... թող ավտավոր,
Մաշող սիրո փոխարեն
Մտերմություն մեզ բախտավոր
Կապե կապով բոցեղեն:
1886



Երանի նորան որ տեր է ազատ
Յուր պագսմունքներին.— սիրել և ատել,
Որին բռնություն չի տալ հուսահատ
Բախտիցը պված յուր կյանքն անիծել:
Որ երկնից հեռ հաշտ, ներպաշնակ հոգով.
Չէ դարձել գերի անթիվ կրքերին,
Կարող է սերը ողջունել ժպտով
Եվ նախատելով մերժել անգուրին:

Երանի նորան որ շքնորոք ունի
Սիրել անձևներ և անկեղծ սրտով,
Սրբել քրտինքը վատակավորի
Եվ տառապալիս խընամել փութով.
Եվ երկրպագու փրկչի սուրբ խոսքին
Անտրտունջ բաշխե յուր ձեռի լուման,
Եվ կարեկցաբար արհամարիվածին
Բաց անե դուռը մըխիթարության...
1886



Չգում եմ արդեն, հանգչում է հողիս,
Էլ չըկա բոցը ոգևորության.
Չուր է քո խրախույս, գուր է, սիրելի՛ս,
Էլ ինձ չի ծագի արևը գարնան:

Էլ աղմկարց կյանքը աշխարհի
Եվ ոչ սերն ունուշ յուր երազներով
Այն հըրապույրը չունին վաղեմի,
Այն քաղցրությունը և այն մեղմ գորով...

Վառվուն կյանքից ես դեռ չըքաղած
Եվ ոչ մի ծաղիկ, արդեն ուժասպառ
Ընկած եմ որպես մի ծերուկ մաշված.
Եվ վայելչությունն արդեն ինձ օտար...
1886



Գեղեցիկ օրեր, ծաղկավա՛ռ օրեր,
Իմ ցնորամիտ պատանեկության,
Գիտեմ, որ շուտով չարագույժ ասպեր
Կըպատեն երկինքն իմ սիրուն գարնան.
Գիտեմ, որ արևն, որ հիմա պայծառ
Ծիծաղում է ինձ, պատրր հույսերով
Լույ յոստանում է իմ կյանքի ռամար
Ծաղիկ ջուսցընել, ոսկե ջողերով:

Եվ այն բոլորը, բ'նչ ինքսահավան
Ստեղծում է սիրտըս վառված, ջորբոքված,
Չքանալու է շուտ ծուխի նցման
Եվ այն պատկերը սիրած, փայլալայած,
Որ մխիթարն է ամայի կյանքիս,
Գիտեմ պիտ ցնդի, ինչպես մի երազ
Հուլված ուղեղի, որ ցույց է տալիս
Երբեմն անբախտին մի վիճակ անհամ:

Բայց դարձալ քա՛ղցր եք, գեղեցի՛կ օրեր
Ընտանի՛ սրտիս... Ո՛վ գիտե հետո
Իմ տանջված հոգին ինչ նոր-նոր ցավի
Դեռ պիտի տեսնե. ծաղիկը սիրո,
Որ հիմա թոջնած մի հիվանդ ժպտով
Դեռ նայում է ինձ, արդյոք բընավին
Պիտի չըմեննի՞... գուցե և շուտով
Լուռ փոթորիկը ճայթի իմ գլխին:

Լուղորդի նըման ես ծովն եմ ընկնում —
Արդյոք մյուս ափն ինձ պիտի հանե՞ն
Գոռ ալիքները... պինվորը կովում
Գիտե՞ իրանցից ո՛չք պիտի ապրեն...
Գոնե դեռ շքեղ երապներ հիմա
Ավնիվ վայելքի բերում են ծամեր.
Ա՛խ, օրինյա՛լ լինիք, ձեզ չեմ մոռանա,
Գեղեցի՛կ օրեր, ծաղկավա՛ռ օրեր:

1886

ԳՅՈՒՐԻ ԺԱՄԸ

Տա՛ն-դո, տա՛ն-դո... Նապո՛ւ, վեր կա՛ց,
Արևն արդեն մայր է մտնում.
Տե՛ս, Խաթունն էլ գործը պրծած
Փողոցումն է, ժամ է շտապում:

Ժամը տվին — տա՛ն-դո, տա՛ն-դո,
Տե՛ր, փառքըդ շա՛տ, տա՛ն-դո, տա՛ն-դո...

Շուտով նախիրն հանդից կը գա.
Գընանք որ շուտ էլի ետ գանք,
Կովը կթենք, թը՛ո-թը՛ո կաթ տա,
Կովը կթենք, մեր ցավն հոգանք...

Ա՛խ, Նապո՛ւ ջան, չես իմանում —
Էգուց էլի աղան կը գա,
Նորա սիրտը միշտ անկշտում,
Էլ ամպի պես պիտի գոռա.

207

«Շուտով, Գրիգո՛ր, փողերը բե՛ր...—
Էլի չըկա՛. կովըդ հանի՛ր»...
Ա՛խ, Նապո՛ւ ջան, այն ի՛նչ բան էր,
Մի՛տող է հերու... Տե՛ր, դու փրկի՛ր:

Հայրիկդ արդեն գընացել է.
Որ փող ճարի. ե՛րբ պիտի գա,
Տեսնենք մեկը խղճացե՛լ է...
Ա՛խ, սև օրը տերն էլ չըտա...

Շուտով, Նապո՛ւ, գընանք ծամը,
Աղոթք անենք. քո ճայնն աստված
Շուտ կըլըսի — այս անգամը
Մեզ չի թողնի անկով, անհաց...

Բարի մարդիկ միշտ կը լինին,
Հայրիկդ հետը փող կը բերե.
Փողը կըտանք չար աղային
Որ մեր բիծոն էլ չըխըլե...

Տա՛ն-դո, տա՛ն-դո... Նապո՛ւ, գընանք.
Արևն արդեն մայր է մտնում,
Էգուց տեսնենք, որ վեր կենանք,
Ի՛նչ նոր արև է մեզ ծագում...
Ժամը տվին — տա՛ն-դո, տա՛ն-դո.
Տե՛ր, փառքըդ շա՛տ, տա՛ն-դո, տա՛ն-դո...

1886



Ես քեզ սիրում եմ, սուրբ գեղեցկության
Անարա՛տ հրեշտակ, տիպար մաքրության.
Սիրում եմ ոչ վառ աչերիդ համար,
Որ ցույանում է քո հոգին պայծառ,
Ոչ վարդ այտերիդ, նապուք շրթունքիդ,
Որ ծաղկում է քաղցր երկնային ժպիտ...

209

Այդ անմեղաբարձունն առ անրի՞ծ հողին,
Օտար աշխարհի տղեղ փխտերին,
Այդ սիրող սիրտը, ջերմ սիրտն անխարդախ,
Այդ վառ հավատը մանկության խաղաղ —
Ահա թե ի՛նչը, մանուկ պաշտելի,
Ես անկեղծ սրտով քեզնում սիրեցի:

Եվ սեղան կանգնած երկրպագության,
Հայվե՞ ու գմուռու, կնդրուկ սրբապան
Քեզ պիտի ձոնեն, թե սերն իմ սրտի
Քեզ պիտի սիրուհուն չէ՛ քո արժանի:
1886



Քանի՛, քանի՛ կամեցել եմ
Հանգիստ գտնել կյանքիս մեջ,
Եվ միշտ սիրտըս բորբոքել եմ
Երեւներով ես անկեղծ:

Ինձ աշխարհը չի կամի տալ
Անդորրությունն իս խնդրած,
Դատարն հուսով չուպե մընայ
Սրբաբու մաշված, խոտակված:

Եվ չեմ խնդրում սնկաբուխ —
Մի սիրտ, մի սիրտ ջգգայուն,
Որ և սիրվեք և սիրողը
Քեքեր սիրո վառ գարուն...
1886



Ամենայն անգամ, երբ տեսնում եմ քեզ,
Խնդրե՛ աչերիդ նայում եմ զմայրած,
Եվ հանկարծ անփորձ մի մանուկի պես
Ես կարմրում եմ հուզված, շփոթված...
210

Ամենայն անգամ որքան էլ տրտում
Ինձ տված լինիմ մաշող մաքերի,
Քո ներկայությունն ապրյուր է լինում
Ինձ համար ուրախ, զրկարթ ժամերի

Այս ի՛նչ է արդյոք, ո՛վ կույս տալելի,
Մի՞թե սեր արգեն, ո՛հ, եթե այդպես —
Թող ուրեմն, հողյակ, նվերն երկնքի,
Այս աստվածեղեն կայծն հասնի և քեզ,
Կուլեի և քո արյունը վառված
Միրո փոթորիկ հաներ քո սրտում,
Կուլեի տեսնել քո հողին խռոված,
Արցունքի ջիթեր և քո աչերում...
1887

ՀԱՏԻԿ

Լույսը բացվում է շուտ արտը գընամ,
Պատռեմ տուր խոփով ես կուրծքը հողի,
Իմ սփրո՛ւն հատիկ, քեզ նորան պահ տամ
Մինչև օրերը ամուսն այլևի:

Թաղեմ քե՛զ հատիկ, և դարդըս քեզ հետ,
Թե աստված ուլեց, դու կանաչեցիր,
Թող դարդըս մեննի գետնի տակ անկետ,
Դու ինձ մխիթար կրկին տուն դարձի՛ր:

Եվ ջերմ աղոթքով տիրանոր առջև
Ես մոմ կը վառեմ, ես խուսկ կը ծղխեմ,
Որ քեզ պարգևի մի առատ անձրև,
Որ քեզ միշտ սիրով նայե խնդաղեն

Բայց թե այդ շնորհին մեղքերիս համար
Արժանի չլինիմ, ծով կը դարձնեմ
Ես տաք քրտինքը ձակափս արևառ,
Որ քեզ, իմ հատի՛կ, ծարավ չըթողնեմ:

Ծրի՛ր, կանաչի՛ր, ոսկե տավանով
Ծածկի՛ր իմ արտը ողջ այեժածան,
Նոր այն ժամանակ անուշ շրջունով
Տո՛ւր ջարդված սրտիս մի քուն հանգստյան:
1886

Ա՛խ, ի՛նչպես, հոգյա՛կ, կրկամենայի
Քեզ հետ մնալ մենակ գոնե մի վայրկյան,
Եվ թեպետ կրկված գգվանքից բախտի,
Խնդրե՛լ քեզանից խոսք համակրության:

Մեր բոլոր կյանքը անցնում է չնչին
Փոքրիկ կրթերով, ունայն հոգսերում,
Անսխտ կուլի մեջ, ուր չունի մի գին
Վեհ սպաստ հոգու առաքինություն:

Եվ ես ատում եմ վայելչությունը
Կյանքի մեխորհուրդ եռուն խնջույքի,
Ուր տիրազուլիս է սև չարությունը,
Բուքմունքը չըկա սիրավառ սրտի:

Կուլե՛ի գտնել հանգիստ երգի մեջ,
Մի յեղուն, մաքուր հոգեբուլիս երգի,—
Բայց սիրտըս դատարկ, և ես մի անշեջ
Կարոտ եմ բոցոտ, անհուն պագսմունքի:

Ես քեզ եմ դարձնում, հոգյա՛կ, իմ աչեր,
Լի մի խանդակաթ սիրով անսահման...
Բայց մատաղ հոգուդ արդյոք իմ խոսքեր
Պիտի դասնի՛ն թե՛ լոկ ձայն պիտ մընան:

1886

ԵՐԿՈՒ ՀԱՄԲՈՒՅՈՒ

Քանի դեռ մատաղ արյունը եռուն
Երակներիս մեջ վարկում է ուժգին,
Եվ ծաղիկներով կյանքը վարդարուն
Խոստանում է մեզ դրախտ երկնային,—
Մեր չքնա՛դ, դու ես համբույրող տալի
Մեր ախտաբորբոք այրվող շըրթունքին,
Բախտի խաբուսիկ համբույր թունալի,
Ինչպես ոսկեվառ երազ հիվանդին:

Բայց կըզա ժամը, երբ հրաժարական
Պիտի տանք ողջուն բոլոր պատրանաց,
Եվ անուշաբույր կյանքի քաղցրության,
Եվ անագորույն դառն հառաչանաց,—
Եվ ահա գունատ մահը կըղրոջմե
Յուր սառն համբույրը մեր սառ շրթունքին,
Եվ գիտե՛մ որ ես պիտի չըխաբե
Մեզ փաղաքշելով լուր անկյանք կուրծքին:

1886

Ես անմոռնջ գընում էի ճանապարհ
Իմ հեղեղուկ բախտին տըզված ինձ խոնարհ.
Բայց այն օրից երբ ողջույնըս հրաժեշտի
Իմ մանկության քաղցր օրերին ես տըզի,
Երբ ես թույնը ճաշակեցի գիտության,
Երբ խաղալիք դարձա մարդկանց նենգության,—
Ես ասացի՝ աշխարհ, քո ողջ պարզեներ
Խաբեություն, դատարկ, անսխտ ցընորք եր:

Ես չըկամիմ ոչ քո փառքը, գիտություն,
Ոչ քո ոսկին և ոչ խարդախ ստություն.
Չըկամիմ քո արյամբ գնած սարդենին,
Ոչ կարճատև կուսի սիրո վարդենին.
Այն մեղրը, որ դու ոսկեգոծ բաժակով

Տալիս ես ինձ ծպտածօրձաղ երեսով,
Միայն ծածուկ մահադեղ է կործանող,
Ծաղկափունջքդ սիպն փուշ է ծակոտող...

Աշխարհ, ես քո կըտափատամ վայելքին,
Կըտափատամ երջանկության մարդկային,
Երբ որ ձգես դու կեղծավոր այդ դիմակ,
Երբ ողջունես մի նոր կյանքի արեգակ,
Երբ անխընա արդարության խսրապան
Քո սրտիցը խլըն սերմը շարունական
Եվ ականջըդ բանա լըսել երկնային
Անմահ սիրո սուրբ բարբառը անմեկին:
1886

Քնքուշ տողերում ես պիտի երգեմ
Սրտիս թագուհու սպեյն պատերի,
Ես նորա առաջ գոն պիտի բերեմ
Տոգուս անմեկին բոլոր պագսմունքներ:

Թե շունչ կա բերնումս և սրտումը հույս,
Դեռ չէ ցամաքել արցունքն աչերիս,—
Այդ դու ես, հոգյակ, որ ծագում ես լույս
Այս խավարի մեջ տեսապա կյանքիս:

Եվ ես կը հյուսեմ պատկ թո գլխին
Վառ արջապատ աակի շողերից
Եվ թո կուսական ջողեյա կուրծքին
Կըրելեմ բույրը հարապե վարդից:

Եվ կառնեմ ձեռքս յոթնադի ջընար,
Կընչեցընեմ երգըս ոլորուն,
Թող լսեն մարդիկ, ճանաչեն աշխարհի
Անմահ դիցուհուս սուրբ գեղեցկություն:
1886

Եվ այս գարուն կանցնի շաւտով,
Կըտափատամ մանուշակ,
Կըծածկվի սե՛ վարագույրով
Երկնից դեմքը անուշակ:

Միայն սերը միշտ կըմընա
Իմ սրտումը կենդանի.
Ոչի՛նչ սիրող սրտի վերա
Բունանալու ուժ չունի:
1886

Երբ ես նստած ես տխուր և մեչի՛
Պատանիների անհոգ շրջանում,
Որ քեզ շուրջ պատած, իս ընկեր բաղարիկ,
Հաճոյանալ են այնպես ցանկանում,
Ո՛հ, դու մի՛ կարծիր, թե այն մեծամիտ
Հպարտությունն է շրթունքըս կապում
Եվ ուրախության բախտավոր ժպիտ
Ամպամած յեմքիցս հեռու է պահում:

Ես լուռ եմ լինում, բայց թե քո աչեր
Հոգուս խորքերը թափ անցանեին,
Դու կըտեսնեիր թե ինչ պագսմունքներ
Այնտեղ շորթոված, կուտակված էին:
Ես չեմ կամենում իդուր վրդովել
Իս վառ երջանիկ հոգեպմայլություն,
Ես կամիմ լռիկ սրտումըս պահել
Սիրուն պատկերիդ անվերջ քաղցրություն:

Ահա հասնում է և խորին գիշեր,
Դու ճաշակում ես հանգիստ անխռով,
Իսկ ես քուն չունիս և երկար ծամեր
Անցնում եմ խաղաղ, բայց անուշ ցնորքով.

Պատկերդ առաջիցս էլ չէ հեռանում,—
Խորին գիշերով աղոթքի համար,
Քունըս սոռացած. ես վեր ես կենում,
Օրհնում եմ, հոգյա՛կ, օրերդ պայծառ:
1886



Երբ ես տեսնում եմ, որ ունայնասեր
Աշխարհը այսօր պսակում է փառքով
Նորան, որին ինքն հետո պիտի ծաղրեր
Նախանձով վառված մի աղքատ հոգով,—
Ես կամենում եմ այն կեղծ երեսին
Տալ Տոմարտության սուրբ խոսքն անկաշառ,
Իբր անեղ փողի որոտ՝ ականջին
Հասցնել մի մեծ, սուկալի բարբառ,—
Հող էիր, ով մարդ, հող դառնաս զարձյալ:
Եվ եթե մի է բոլորիս վախճան
Անվերջ երազով ապրիլ և հուսալ
Միայն մի թիզ հող վերջին հանգստյան,
Ի՛նչի է մեզ ստիպում անմիտ պարծանքով
Տուգամտության. մանկան արժանի,
Փառքի պսակը հյուսել մեր ձեռքով,
Որ մեր օտսերին կոխան պիտ լինի:
Մենք կտապալենք այն վեհ բարձրություն,
Որ մենք ենք կանգնում իբրև աշտարակ,
Եվ խրոխտ շենքի հոյակապություն
Կրմնա մեզ իբրև ռիտոր ավերակ...
1886



Ինչպես վտակ ես կրթափետ
Աչքերիցըս արտասուք,
Եվ նոցանից կրբուսզընեմ
Ես քեզ համար վառ ծաղկունք:

Եվ հրեպանդ իմ վիճակին
Ես կրտանջվիմ հանապազ,
Լինի՛ միայն, ընկե՛ր անգին,
Երջանկությունդ անապկաս:

Գիտեմ, որ ինձ չես մոռանա,
Երբ ես իջնեմ գերեզման,
Եվ կըհիշես, որ ես մեռա
Քեզ մտերիմ, սիրական:
1886



Երբ մատաղ մուսա ժպիտն երեսին
Սոռաջին անգամ ինձ երևեցավ,
Նա գեղեցկության, սիրո պատկերին
Երկրպագելու ինձ պատվեր տվավ:

Ես ուսա երգել և երգում էի
Անվարձ տողերով հրաշքները գարնան,
Նազեկի միշտը կուսական սրտի,
Սնուշ վայելքներ սկսե արբեցման:

Սնցան տարիներ, և ներքին մի ձայն
Մի նոր հուր վառեց իմ հուզված հոգում,
Երբ վերաս ինչպես կասպար ծանրացան
Կանքի պիտույքը, մարդկան չարություն:

Սիրո պվարձության մեղեդիների
Ժամանակը չէ, ո՛վ անհոգ երգի՛չ.
Դուրս ե՛կ ասպարեզ մահառիթ կովի,
Թունով թաթախված ա՛ռ կարող գրիչ:

Մեխնա դատի՛ր եղեռնագործին,
Մեծատան երեսն այրի՛ր ամոթով,
Մեր բոլոր ախտեր ցույց տո՛ւր աշխարհին,
Խայտառակության անարգ պսակով:

Թող որ չարություն սարսափի տեսած
Արժանի պտուղն ըստոր գործերի
Եվ կեղծավորը ուժաթափ եղած
Թող յուր ոսկեպոծ դիմակը հանի...
1886



Կինում է թույն, ես անիծում եմ
Եվ իմ վիճակը և ամբողջ աշխարհ,
Երջանիկ մի օր, ես մտածում եմ,
Բախտը չի բանա երբեք ինձ համար:

Չէ՛ կարող էի և ես բիրտ ուժով
Կամ մի ստորաքարը շողոթորթությամբ
Հաշտվել մարդկանց հետ, և պատած ոսկով
Հոչակ ըստանալ պատվավոր անվամբ...

Բայց ո՛չ, չըկամիմ գըլուխ խոնարհել
Արյունով կանգնած մեծափայլ կուռքին,
Եվ ոչ կարող է իմ սիրտը գրավել
Շլացնող փառքի փշափուս դափնին:

Իմ հոգու ձայնին ես հավատում եմ,
Եվ աղքատության ու երգի համար
Ես իմ դրոշակն ահա՛ պարպում եմ —
Եվ այսուհետև հավատըս պայծա՛ռ:
1886



Չքնա՛ղ մանուկ, հրեշտա՛կ դեմքով,
Որ մի դրախտ երկնային
Խոստանում ես հուր աչերով
Եվ այդ ժպտովն հեշտագին,

Թույլ տո՛ւր կուրծքիդ շուշանագեղ
Հոգնած գրուխըս Խանգչի:

Եվ մետաքսի մազեր ջքեղ
Լինին նորան հովանի:

Ճաշակել եմ վաղուց արչեն
Ես թույնն և մեղրը սիրո,
Բայց ինձ հանգիստ դեռ տրված չեն
Արցունք, ժպիտն իմ հուսո:

Դու այժմ, իբրև նոր արշալույս,
Ինձ նոր բախտ ես գուշակում.
Սիրո՛ւն մանուկ, ցաված հոգուս
Արդյոք դու էլ չե՛ս խաբում:
1886

26 ԱՊՐԻԼԻ

Անպտուղ կյանքիս քսաներկու գարուն
Անցան գնացին, որպես մի վայրկյան...
Ինչո՛ւ ապրեցա, ինչո՛ւ եմ ապրում —
Միտքըս չէ կարող տալ ինձ պատասխան:

Եվ իմ մանկության սերը ցնորամիտ,
Եվ անկեղծ սրտի ոգևորություն,
Եվ քաղցր արտասուք, և ոսկե ժպիտ,—
Ա՛խ, ո՛ւր եք, ո՛ւր է ձեր անուշություն:

Գիտությունն ինչպե՛ս մի թույն դանդաղու
Աննըկատեցի փարակեց հոգիս,
Ինչպես ցուրտ ձմեռ միտքըս կասկածոտ
Զաղեց, խորասակեց ծաղիկը կյանքիս...

Իբրև երեքուն եղեգն առվակում,
Տեսնում եմ պատկերս և սարսափում եմ.
Լսում եմ մարդկանց երգերը տրտում,
Անմի՛տ ու դատա՛րկ, և տաղտկանում եմ.

Եվ երջանկությունս թե անդարձ կորավ,
Փշրված ինչպես տխուր փլատակ.

Թե անհոգ տալիլի ձայնը մարեցավ
Եվ մրնաց ինձ լոկ նորս: հիշատակ:

Գոնե սրտիցս հիմա չհեռանար
Նոր ցնորքներիս տիպար սիրելի,
Տանջված հոգուս մեջ կենդանի մնար
Բուռն փոթորիկ ավնիվ կրթքերի:
1886



Դու արտասվում ես և չես ամաչում
Այդ անկեղծ սրտի արտասուքներից,
Եվ գիտես, որ վուր հանգիստ ես խնդրուս
Հուսահատության տառապանքներից:

Ա՛խ, ո՞ր չար ձեռքը քնքուշ թշերիդ
Վաղաժամ քաղեց վարդը կենսաբույր,
Քաղցր շրթունքիդ խըլեց վառ ժպիտ,
Ճակատիդ դըրեց թախիծը տխուր:

Այդ վանդակի մեջ դու ոսկեգօծած,
Սոխակի նրման մոռացած երգեր
Հավում, մաշվում ես, թներդ խուլված,
Չունիս, սիրելի՛, սրտացավ ընկեր.

Հուսա՛ դու, խեղճո՛ւկ, հուսա՛. թող լինի
Վշտի հրեշտակը քեզ հովանավոր.
Ո՛վ գիտե, գուցե պայծառ վիճակի՛
Օրը դեռ ծագի և քեզ փառավոր...

1886



Ահա քեզ ձեռքս, ընկե՛ր թանկագին,
Սեղմի՛ր դու նորան անվախ, անկասկած —
Բարեկամ է նա լքյալ թշվառին,
Փորձության բովում կոշտերով ծածկված:

220

Թող ծանր վշտիցն անցած օրերի
Հանգչի քո սիրուը գոնե մի վայրկյան —
Արի՛ իմ գիրկը, ընկե՛ր սիրելի,
Ես իմ ջերմ կուրծքին օրորեմ նորան:

Եվ ցավակցության այրող արցունքով
Տանջանքիդ այդ կուռ շղթան կործանեմ,
Գուցե և սիրո դյուրական շողով
Մի րուպե ես քեզ հանգիստ պարզեմ...
1886



Թող այսօր մութն է քեզ համար արև,
Չարատա՛նջ հոգիս, թող անվերջ ցավով
Բախտն իբրև խորթ մայր բերե քո առջև
Կյանքի բաժակը, լի դառն թույնով,—

Կըզա և մի օր քո վառ արշալույս,
Դու կըմոռանաս անցյալի ցավեր,
Խաղաղ վիճակի կըջոյա քաղցր հույս,
Ոգե՛որության կիսուն արցունքներ...
1886



Ես քեզ սիրեցի, բայց չեմ կամենում
Տալ սիրտըս, հոգյա՛կ, քեզ բընավ գերել —
Մի անկյուն նորա անմեկին խորքում
Ա՛յլ սիրո համար ես կամիմ պահել:

Ջերմոցում սընած դու վարդ նապելի,
Արցունքի մի շիթ չէ կաթել թշիդ,
Կյանքի փոթորիկն անվե՛րջ, ահռելի՛,
Դեռ քո շրթունքիդ չէ խըլել ժպիտ:

Եվ անհոգ խաչով, ինչպես թիթեռնակ,
Ճբագի բոցին դու մտա ես վալում,

221

Եվ չես հասկանում թե համաճարակ
Հրդեհն է այդպես թեկ հրապուրում...

Տե՛ս թշվառության հազարալեզու
Բոցը բորբոքված խնդրում է գոհեր,
Տե՛ս այստեղ խառնած իրար մոտ ահու
Վերջին են սպասում քանի՜ անբախտներ...

Եվ դոցա՛ համար ես սեր եմ պահում,
Այդ ճակատագրի խորը որդոց համար,
Որոնց առաջին դուռը չէ բանում
Մխիթարության՝ բարասիրտ աշխարհ...

Տո՛ւր ինձ, սիրելի՛ս, և քո՛ սերն անբիծ
Այս հառաչանքի հովիտը տանեմ —
Գուցե արցունքը ցաված աչքերից,
Մաշված ճակատից թախիծը խղբեմ:
1886



Երբ նա դեռ նոր էր լույս աշխարհ տեսել, —
Դառն աշխատության, կարիքի վավակ —
Ավանդ ստացավ սիրելի և գործել,
Ճակատին ծանրը խաչի նշանակ:

Եվ նա մեծացավ, և կյանքը մտավ,
Եվ հավատարիմ մնաց յուր խաչին,
Հանդուգն լուրորդ՝ այցաց մեջ ընկավ,
Մրցում էր, դիմում փրկության ասին:

Աներկբա մտքով, հավատող հոգով
Քարոզում էր յուր խաչի քաղցրություն,
Ինչպես խարապան երկաթի խոսքով
Նա հալածում էր շահ ու բռնություն:

Բայց ի՛նչ, չարանենգ ջուրմերը ուժի
Մահաթույն լեղի արքունցին նորան,

Կարմիր երկաթով նշանո խաչի
Չնչեցին պայծառ ճակատի վըրան...

Եվ հավատարիմ յուր կոչման մեռավ՝
Սուրբ ճշմարտության անբիծ նահատակ,
Իսկ սիրո նշան անմահ գրոշմվեցավ
Շատերի սրտում մեկի փոխանակ...
1886



«Սուրբեցե՛ք բարություն ա
ցե՛ք իրավունք, ուղղություն
գրկվածին, որի դատը տեսե՛ք,
դատը պաշտպանեցե՛ք»:

Մ ա թ Վ ա թ. Ե ս

Մի՛ թողնիր, երգի՛չ, քնաբլղ կախած,
Որ նորան ժանգով տարիքը պատեն,
Ոսկի լարերին դու ոգևորված
Չարկի՛ր մատներով, թող դարձալ հնչեն:

Թող հնչեն նորից հին երգը անմահ
Եվ վառեն սիրով սրտերը մարդկան,
Թող նաքա նորից օրհներգն անահ
Գործե՛րը բարվո և կարեկցության:

Ինչպես չէ կարող ձմեռն արգելել
Գալուստը շքեղ ծաղկաբույր Գարնան,
Նույնպես ճշմարիտ խոսքը խափանել
Չէ կարող ձայնը անմիտ չարության:
1887



«Տախ՛ր, սիրելի՛ս, բե՛ր ոսկի քընար,
Ես կամենում եմ ցովել իմ թախիծ,
Տեսնել եմ ուզում իմ կյանքն էլ պայծառ
Եվ վիշտը վանել հեռու իմ սրտից:

Բայ է ինչ լացի, հերի՛ք արտասուք.
Արցունքի տեղակ թող աչքիցս բխին
Վառ ցողի շիթեր, քաղցր ինչպես կնդրուկ,
Թող կյանք տան մարդ իմ անհույս սրտին:

Սուտ է, կարող եմ ես դարձյալ սիրել
Չոհեպով բոլորն ինչ ունի հոգիս,
Չէ՛, դեռ կարող եմ անուշ երգել
Չքնաղ պատկերը իմ սիրականիս:

Կուպես ինձ ատի՛ր, ո՛վ իմ թագուհի,
Կուպես ծիծաղի՛ր պագսմունքիս վըրան.
Հավիտյան մընալ քո ձեռին գերի —
Չըկա այլ վիճակ ինձ երջանկության:

1887

ԵՐԳՉԻՆ

Թող երգդ հնչե ներդաշնակ
Ապատ սրտի վառ վեղմունք,
Թող պարթևեցնե համարձակ
Մեր քնեած ուզագմունք:

Վառի՛ր դու մեր սրտերում
Հուրը ազնիվ կրթերի —
Երկրպագու ենք կանգնում
Ճշմարտության պատկերի:

1887

ԱՇՈՒՂ

Ասի՛ աշուղ, ա՛ն չունգուրըդ, մեկ բան ասա՛ սրտայի.
Կարոտ ենք քու անուշ ձենին, մի բան ասա՛ սրտայի.
Սրտի խոսք ենք ուզում քեզնից, որ վեր հանի մեր հոգին —
Ա՛ն չունգուրըդ, դարդո՛ւտ աշուղ, մեկ բան ասա՛ սրտայի:

Գիտենք, որ դու միշտ տանջվում ես հապար ու մի ցավերով.
Հայրենիքիդ խոր խոցերը համարում ես դարերով.

Չես լվանա էդ խոցերը արտասուքի ծովերով...
Ա՛ն չունգուրըդ, ցավո՛ւտ աշուղ, մեկ բան ասա՛ վշտ

Լուս մընալով մեր վերքերին դու չես անի դեղ դարմ
Արար-աշխարհք գիտի՛ չըկա մեր դարդերին չափ.
Մաշությունն էլ նըջան հո չի՛ մի գովելի հատկությա՛
Ա՛ն չունգուրըդ, մեկ բան ասա՛, թող խոսքըդ ընի ք

Էդպես խոսքեր շատ ենք լսել, էլ կըսենք անտրուտ
Մեր չիտական ըլնելուցն է՛ մընացել ենք անտրուտ
Լավ է ապատ լաց ընկից, քանց դարդ տանիլն անտր
Ասա՛ լսենք, ի՛նչ անենք որ խոսքըդ կընի ողբայի:

Տեսնում ես որ մենք թմրած ենք, քունն անուշ է թը
Է՛ր ես դու էլ մեկ բոլորիս մաշող քընիցն հաղթըվու
Ա՛ն չունգուրըդ, տո՛ւր լարերին, կըրակ վառի՛ր մե
Մեկ ամենիս նոր շունչ տվող մի բան ասա սրտայի:

1887



Դու չըկամիս, ո՛վ կույս, լինել
Իմ տանջանքին մասնակից,
Դու չըկամիս հըրածարվել
Այդ քո անհոգ վիճակից:

Բայց թե սիրտըս դու տեսնեիր,
Ճանաչեիր իմ հոգին,
Ինչ է վիշտը-կիմանայիր,
Կը սիրեիր դու երգչին:

Շատ գոհարներ վառ, աննըման,
Ալիքներումն են թաղված,
Շատ պագսմունք, սեր անասանս
Սրտիս խորքումն են պահված:

1887



Սիրուն գուլսը կործքիս խնամքիս
 Ռու լալիս էիր և ինձ մոռնում.
 «Անպարտ, հեղինք չէ՛ ես այսպես տանջվում —
 Անտանա՞նք սերս դու չես նկատում»:
 Եվ լալիս էիր պնակն կարթոզին,
 Գոհար շիթերը թո սրտասուքի
 Ինչպես հուր՝ շարունակ սիրտըս այրեցին
 Թեպետ երազ էր այս, իմ նապեղի՛:

Իսկ ես անդադար, վշտիցս խերբխած,
 Ողբում եմ սերս — դու չես նկատում.
 Իմ տխուր երգը թո անվանք հյուսված
 Ցրտացած սիրտըդ բընամ չէ շարժվում:
 Ա՛յն, ի՛նչ երջանիկ էր կրկնեի.
 Եթե երազում թափամ արցունքիդ
 Գունն երկու ջիթ հրավ տեսնեի,
 Իմ վշտի հրեշտակ, այդ վառ աչերիդ...
 1837



Ամենայն անգամ, երբ թեթևափուր
 Դիպչում է մուսաս սրտիս լարերին,
 Քնքուշ մատներով խըլում է ժուլիս
 Եվ դընում թախիծս իմ անհոգ ճակտին, —
 Անցած պատկերներս խառնըն երանով
 Լցվում են սիրտըս, պարթմունք է հոգիս,
 Եվ միտքս հեռու թռչում է սիրով
 Նապեղի աշխարհն մանուկ օրերիս:

Եվ կամենում եմ սեր երգել միտդ
 Եվ քաղցրությունը մտքուր հառաճիս
 Անուշ ժամերը անասկ խնդրության,
 Կենդանի հրճվանք կուսական սրտի:
 Բայց միշտ ականա լարերը բնկբեկ

Տխուր են հնչում օրհներգը սիրո,
 Էլ չէ երևում ինձ սերը երբեք
 Իբրև վառ գեղմունք երջանիկ հոգվո:

Եվ միշտ լսվում է մի ձայն լարերից,
 Որպես հառաչանք պաղատող սրտի,
 Էլ չէ հեռանում նա իմ ականջից.
 Այդ ձայնն անունեկին մի խորին վշտի.
 «Այնտեղ, ուր արցունք, շղթա և սուլբէլ,
 Ուր լսվում է լույ հառաչք լալագին,
 Քո քընարիցը թող ուրախ ձայներ,
 Ո՛վ թշվառ երգիչ բնավ չըլավիս»...
 1887



Ասում են. «Պոե՛տ, մենք չենք կամենում
 Արտասուք տեսնել լսել հառաչանք.
 Ի՛նչ ես թո այրող վիշտը մեկ պատումս,
 Ի՛նչ ես դու ողբում թո անվերջ տանջանքս
 Մենք միայն վայելք ուզում ենք կյանքից,
 Հրճվանք, խնդություն և ուրախ տաղեր.
 Կեկ անհոգ ժամեր երգի՛ր ոգելից,
 Կյանքի խնջուկը, գինով բաժակներ»...

Եվ դու լսում ես անմիտ ցնծության
 ձիչեր՝ արձակած անդուռն բերանից,
 Եվ չես սպասում մի ակնիվ զգացման,
 Սի հատակ սիրո նշույլ դոցանից...
 Տեսնում ես շուրջըդ կարիք և գրկանք
 Եվ ըսարկության ճնշող շղթաներ.
 Եղբայրքըդ, կյանքից չտեսած զգվանք,
 Վաղ ճաշակել են հոգեմասշ ցավեր:

Չես կարողանում քնքուշ մատներով,
 Ոգևորության երջանիկ ժամում,
 Դիպչել լարերին, թե հյու քնարով

Երգելու լինիս մի անհոգ խնդում:
Եվ կատաղում ես, որ քո զգացմունքին,
Վեհ հոգուդ չկա մի խոսք համակիր,
Հուսահատվում ես, որ քո քարուպին
Մարգարեական՝ չունիս ունկնդիր:

Բայց հանգիստ մնա, կըզա ժամանակ —
Կանցնե խավարը մոլեռանդության,
Կզա նոր սերունդ, զգալու ընդունակ,
Լուսածին որդիք սուրբ ապատության.
Եվ արքայական քո բաց ճակատին
Հպարտ սարդենին կըփայլի փառքով,
Եվ քո թունալից թվող տողերին
Մարգարիտ կշարեն սիրո արցունքով...
1887



Քեզ մոտեցա սեր հուսալով,
Պայծառ դեմքիդ նայեցի,
Ես — խավարած վշտի ամպով,
Դու — արշալույս նապելի:

Ես ասացի. «Ինձ քույր եղիր,
Եղի՛ր ընկեր ցավակից,
Սերըս, երգըս դու ընդունի՛ր
Նվեր տանջված մի սրտից»:

Բայց դու, գավակ փարթամության,
Չհասկացար երգս աղքատ.
Դու — նույն անհոգ թռչնակ գարնան,
Ես նույն երգիչն հուսահատ...
1887



Մընա՛ք բարով, արև, գարուն
Եվ խնկաբույր ծաղիկներ.
Կարկաչահոս վտակ սիրուն,
Կանաչազգեստ բլուրներ.

Մընա՛ք բարով, համբույր և սեր,
Դեմքով հրեշտակ կույս չքնաղ,
Վայելչության պայծառ ժամեր,
Քաղցրը ժպիտ, կյանք մատաղ...

Աղքատություն ես սիրեցի,
Խեղճի լացը. հառաչանք,
Ես ջընարըս նվիրեցի
Վիշտ երգելու և տանջանք:
1887



Դու ծաղկում ես, ինչպես վարդը հարավի,
Քեզ փարում է առավոտյան շողն ոսկի,
Եվ ցողում է ծաղկանց բույրը քո կուրծքին
Ձեփյուռն անուշ՝ գուրգուրալով հեշտագին.
Եվ աստղերը շողշողալով ճակատիդ
Քեզ ժպտում են գիշերները խնդամիտ.
Թեթևաքայլ եղնիկի պես նազ տալով,
Հայեցնում ես մատաղ սրտեր աչերով:
Բայց չգիտես դու քո ուժը, սիրելի.
Միամիտ ես, անփույթ, իբրև աղավնի.
Այրող, մաշող սիրո բուռըն փոթորիկ
Դեռ չէ հուզել մանուկ կուրծքըդ գեղեցիկ...

Եվ իմ միակ ցանկությունն է, որ անբիծ
Սիրտըդ զգար սիրո հրճվանք ու թախիծ,
Եվ գուրգուրանքը հասկանալիդ պեփյուռի

Եվ սիրտը թունդ վարկել տար բույրը վարդի,
Եվ ըզգայիր, որ բացի խաղն, անհոգ կրանք,
Կա ականա արցունք, և՛ վիշտ, և՛ տանջանք:
1887



Արալն եկավ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով—
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
Չոր գլուխս տափին տալով:

Ա՛յ իմ Արալ, ջուրդդ վարար,
Սիրուն լարին խորաբ աեաւհր,
Ես չքհասա իմ մաւրապին,—
Արա՛լ, յարաք կարտաւ աաւհր:

Անպերն ընկան Մասիս տարին,
Կարոտ մնացի ես իմ յարին,
Աստոծ սիրես, երված սրտիս
Ջուղաք բերես եկող տարին:

Գիշերն անքուն գիր կըզրեմ,
Արտաուրքս գետ կըշինեմ,
Արա՛լ, ծեգը ջրիդ չառած՝
Իմ սև դարդը քեզ կբերեմ:

Կասես՝ շողքը քարին ընկավ,
Կըրակցն իմ սրտին ընկավ,
Կամար ռևքից, թուխ աչքիցը
Ցափն իմ ջիւնս ջանին ընկաւ:

Արալն եկավ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով,
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
Չոր գլուխս տափին տալով...

1887.

Չարկեցե՛ք, դարբիններ, կրտանք ապին,
Չարկեցե՛ք կրտանք — ջղբայքն ամբանան,
Անիծյալ արքայի կապանքն ամբանան,
Չարկեցե՛ք դարբիններ, կրտանք ապին:

Ահարկու աստերը եկան ժողվեցաւ,
Ծեր Մասթազ ճակատին սե թող փաթթեցին,
Գոռում է փոթորիկ գազանի նըման
Հառաչում, աուում է կառառաքած թաւին:

Չարկեցե՛ք կրտանք, փորունկ քարալորից
Ահա չար փորձի մետ ժասնում են ձաթեր...
Յոլացավ փայլակը — արքայի աչքից
Դեպի վեր թռչում են բարկության կայծեր:

Կամի նա ելանէ վրեժխնդիր հոգով
Յուր անվերջ տանջանքի թույնը մահաբեր
Աշխարհի ջորս կողմը ջար, տալու մեղով,
Բայց ամուր են մորա ծանրը շղթաներ:

Արտերիմ գամփռները կրծում են կապակը,
Կրծում են անդադար կապակքն արքայի...
Արտավա՛ղդ, վերջ չունի հոգուդ տառտապանք,
Եվ դեռ շատ հեռու է վախճանն աշխարհի:

Եվ անպոր չարության քո վրեժ փարփածներ
Դեռ պիտի փշովին մեր մուրճի տակին —
Մենք սպասում ենք դեռ: Գեղեցիկ օրեր,
Դեռ հաշտ է երկինքը մեղտուտ աշխարհին:

Բայց եթե քարացած մենք ջենք խելու
Նոր կյանքի կոչն հուժկու, է: վերածնության
Սրբարար ապխապան մեկ ջե փրկելու,—
Արտավա՛ղդ, փշովի թող մեր կուռ կրտան:

231

Մենք էլ չենք պարկեղու երկաթի սալին:
Թող կրծեն գամփռերը՝ ոտքիդ շղթաներ,
Արձակվին բապուկներդ, և դու աշխարհին
Ռուս արի՛ քերելու կոտորա՛ծ, ավե՛ր...

Բայց ոչ, հավատում ենք դեռ մենք փրկության,
Մեզ մի նոր երկնքից նոր լույս կըբացվի,
Եվ տեսնում ենք ահա արդեն ծիածան
Մենք ապա՛տ, լուսավո՛ր մի նոր վիճակի...

Ջարկեցե՛ք, դարբիննե՛ր, կրոանը սալին,
Ջարկեցե՛ք կրոանը — շղթայքն ամրանան,
Անիծյալ արքայի կապանքն ամրանան,
Ջարկեցե՛ք, դարբիննե՛ր, կրոանը սալին:
1887



Հրաշալի՛ գիշեր... խաղաղ թուն մտած
Հանգչում է քնությունն քնքուշ երապով,
Պայծառ երկնքում լուսինը վառված
Նայում է երկրին սիրահար աչքով:

Այսպիսի՛ գիշեր այրված սոխակին
Յուր բույրն անուշիկ վարդն է պարզմունս,
Այսպիսի՛ գիշեր մատաղիաս երգչին
Առաջին սիրու շունչն է խռովում...

Եվ սիրոս մանուկ մի այսպես գիշեր
Ես գոհ քերեցի նենգավոր կուսին,
Էլ այնուհետև անցան տարիներ,
Հանգիստ չտեսավ իմ տանջված հոգին:

Եվ հիսուս մուսաս այսպիսի գիշեր
Ելնում է ինձ փուշ պսակ գլխին,
Եվ երգում եմ ես քո կուռ շղթաներ,
Սուրով հայրենիք, իմ մա՛յր տխրագին...
1887



Թեպետ խեղդված եմ ես դաժան վշտից
Եվ սիրոս մաշված անմիտ հույսերով,
Թեպետ մինչ այսօր խաբված եմ կյանքի
Կարոտ տեսնելու մի անկեղծ գորով,
Թեպետ դառնությանմ հոգիս է լցված
Եվ գանգատվում եմ չար բախտիս վերս,
Որ այս աշխարհում ես միշտ հայածված
Եվ ոչ մի սիտիանք ինձ համար չկա,—

Բայց դու մի՛ հիշիր իմ դառն վիճակ,
Նարբի՛ր ինձ դարձյալ շքեղ ցնորքով,
Թե դեռ ինձ համար զարնան արեգակ
Կըրցոյա պայծառ գոհար պսակով,
Թե արծաթափայլ ամոթխած լուսին
Գողտրիկ հայացքով դեռ ինձ կը ժպտի
Թե ծով-ծով աչերն անմահ կուսին
Սիրոս անուշ տենչով դեռ հուլեն պիտո
1887

ՄՅՈՒՆՅԱՑ ԻՇԽԱՆՆԸ

«... և նա ըստ առաջին
արթուների արկան էր
դերձն կոր ուներ ինչ
մենայն օրենս պատկեր
կեալ՝ Երթայր յարթ
քան գամենասեան էր»

Արյան փայլով, տանջանքներով անմահ
Ինչպես ցնորք երևում են շրերն անցա
Ես չեմ կարող նոցա լույսի լուռ պարծա
Այլ մի խորին ցավակցության ըզգացմ
Ի՛նչ մեզ թողին մեզ քաջարի գոված նս
Լացի՛, ողբի՛ անփառունակ մի հայրենի
Եվ անձրևը ճաղկապրսակ վառ փունջեր

Որ մանկական բերկությունով անմիտների
Առաջին ենք մենք տարածում, ես մի կըշան
Համարում եմ մեր փոքր հոգու աղքատության,
Շղթան սիրող զստրուկների մի ֆազմություն —
Ահա մոցա թողած անփառք ժառանգություն...

Բայց սղո անցյալի լեռնին լիավարից
Ահա անունս է հեղուկ. խարույթուն
Նա, որ մերժված է բոլոր աշխարհից,
Որի հիշատակն իմանդիանություն
Լրսել է միայն. Բայց անեծքների
Անվերջ կարկուտը ինձ չէ շփոթում.
Սև դրոշմի տակից սաշված ճակատի՝
Ես նորա այրող տանջանքն եմ տեսնում:
Ահա նա մենակ, առանց ժաշտության
Արտասուցների, առանց կարեկից

Մի սիրող սրտի մխիթարություն.
Հեռու աշխարհի փարթալ խնջուկքից,
Ընկած է բանտի խոնավ անկյունում՝
Գլուխն այնպարդ կուրծքին խոնարհած,
Հուսահատություն խորտակված պրտում
Եվ հուրը պղջման խեղդող արտասվաց...
Ընկած է մենակ, և խուլ տանջանքով
Նա թուր ուժիդը, անկումն է ողբում՝
Եվ հիշողության թույլը նոր ուժով,
Մչպես ջեն երկար, ուղեղն է այրում...

«Հեռու աչքիցդ, տաղտո՛ւկ տեսիլներ,
Սերունի կուրծքը դժոխք դարձրիք.
Հեռո՛ւ աչքիցդ, արթունում տուներ.
Եվ դու, անուղի յա՛մ, թշվառ ժայռենիդ:
Ո՛հ, ես երջանիկ պիտի փնեյի,
Թե՛ մեր անեծք քափեր իմ գլխին
Անեղ դաշտումը մահապիթ կռվի,
Պղտոր Տղմուտի չարագույժ ապիին...
Իսկ ույժն անջատված արևիցողից՝

Հեծում են մենակ բանտանդա ինս
Գործած հանցանքը... — ըստվեք թե
Մի օձ է խայթող իմ հաշտ համար...

Բայց ինչո՛ւ, ինչո՛ւ, մի՛թե այրոց պի
Քեզ, ի՛նչ հայրենիք, չքսիրեց Վասա
Միթե՛ քեզ համար սիրտըս սղեկե
Պիտի պոսկելու շիներ, ընդունակ...

Ո՛չ, ո՛չ, ես մի խեղճ, անկըշան ճճի
Արժանի է չեմ փնեյ քո ուտքին
Կոխելու տող... անե՛ծք դարերի,
Ես օրինակ եմ գաղթ սերունդին
Իբր չարագործ, որից գթառատ
Երկինքն էլ արդեն դարձրել է երե
Բայց դու, հայրենի՛ք, ինչո՛ւ ես վը
Միթե՛ կարող է չար Հակեբաբը քե
Ճուտի պես խեղդել յա՛ք մագիլներ
Ինչպես մի ուրախ... Դու, թագից պ
Միթե՛ մոռացար փառքդ անցյալ
Քո պրասկավոր, արի իշխանաց...

Ա՛խ, անցյալ օրերն անմե՛ղ շրջան
Այն ի՛նչ երջանիկ, քաղցր օրեր էի
Մի հանդարտ լրանակ ճրագն էր վ
Շուրջըս սիրական սրտիք, ամուսին
Ո՛հ, հեռու, սիրո՛ւն թշվառ պավա
Չեր հայրը մեռավ... Ի՛նչ հայր, ես
Հեռո՛ւ ինձանից, մեր հայրն իշխա
Ինձ շուտով խորունկ, շիրիմ կրիա
Դեռ լայն է բանտս...

— Նոքա փառավոր
Պայպատեցին անուն, հիշատակ,
Նոքա՛ քեզ բերին մահվան այս սև
Եվ բողբոցին տանջանքի պրսակ
Ավոր գլխիդ, և դու մոռացա՛ր,

Իմ խեղճ հայրենիք, արյան պալատներ,
Անտակության խայտառակ տաճար
Եվ արենապիղծ շամբշուտ գիշերներ...
Այդ քո թագապարոզ պետերը չէին:
Եվ դու, ուժասպա՛ն, վիրավոր եղնիկ,
Ի՛նչպես կամեցար պարսիկ առյուծին
Կռոիվ ելանել... Անբա՛խտ հայրենիք,
Արյունդ հոսում էր հեղեղի նրման,—
Դու նոր վերքերով մի՛թե հարուստ
Կամեցար առնել... երեսիդ վըրան
Դեռ չէր ցամաքել արտասվաց առուն —
Մի ժըպիրի ճակատ դու գոռ վըտանգին
Ցույց տվիր անահ: Եվ ի՛նչ, փոխանակ
Օրօր ասելու Նիրհող գապանին,
Սոսկալի մարտի պարկեցիր կոչնակ...

Եվ քո քաջերը շուտ հավաքվեցան,
Ինչպես փեթակի շուրջը մեղուններ,
Մահ տալ, մահ առնել նոքա երդվեցան,
Լինել ողջակեղ բոլորանըվեր
Սուրբ ապատության սեղանի վըրա:
Եվ ես... ո՛հ, թո՛ղ ինձ, չա՛ր հիշողություն,—
Ես էլ մըտերիմ քեզ հանդես ելա
Կռվին բերելու ոգևորություն,
Սուր սըլաք, շանթեր թշնամու գլխին
Շաղ տալ աներկյուղ մըտածում էի,
Ես կյանքըս փրկանք փառքիդ սուրբ օրին
Արդեն ցընորված համարում էի:
Եվ հոսավ ժամը — թնդաց Ավարայր,
Հայոց վենքերի լըսեց շառաչյուն.
Ասպարեզ ելանք այնտեղ քեզ համար,
Աշխա՛րհ սիրական, թափել հորդ արյուն...

— Բայց ի՛նչ եմ տեսնում, այդ մի՛թե դուք եք,
Անգի՛ն վավակներ... Ա՛խ, ծածկե՛ք շուտով,
Այդ կուրծքը պատռած, մի՛ մերկացընեք
Մատաղ գլուխներիդ ներկված արյունով...

Կուրացե՛ք, աչե՛ր, հանդիմանության
Այն հուրը չտեսնեմ նոցա աչքերում.
Այն էր, որ վառեց կայծակի նրման
Չարատանջ հոգիս գոռ մարտի դաշտում...
Ի՛նչ... ի՛նչ եք կամենում. Վասակը ձեզ հա՛յ
Հեռո՛ւ ինձանից, թշվա՛ր ուրուներ.—
Ահա՛ թշնամին հասավ զինավառ,
Պատյանի մե՛ջ են դեռ ձեր սոււերներ.
Հառա՛ջ դեպի մահ, փառավո՛ր օրհաս —
Ահա մեր նըվեր քեզ, մա՛յր հայրենիք,
Թող մեր որդիքը կրկնեն հանապապ,
Որ վիճակեցինք մենք մահ երջանիկ...

Նշավակության բանտի անկյունո՛ւմ,
Հուսահատության տառապանքներո՛վ,
Ո՛վ է այդ մահը արդյոք ժառանգում,
Ե՛ս — դավաճանի անարգ պըսակով...
Առանց սիրելյաց արտասուքների,
Առանց աշխարհի, երկնից հաշտության...
Ա՛խ, հանգիստ թող ինձ, տեսի՛լ սոսկալի,
Չ՛է ներումս երբեք բաժին մատնության...

Եվ դու, հայրենի՛ք, լսում եմ արդեն,
Կարդում ես ահեղ քո դատավճիռ.
Շրթունքըդ ինձ միշտ պիտի նըպովեն —
«Վասա՛կ, այս ի՛նչ էր, որ գլխիս բերիր»...
Ահա կենդանի դու մի կշտամբանք
Կանգնած առաջիս, պսակըդ փետած,—
Ես — ապուշ մատնիչ, բաժինըս — տանջում
Այս գերեզմանում հավիտյան փակված:

— Ո՛վ մատնիչ... Վասա՛կ, շարժեցե՛ք, պի
Տե՛ղ, կարկո՛ւտ, մրրի՛կ, պարկեցե՛ք գլխիս
Դու, հավատարի՛մ պողպատ, իմ ընկե՛ր,
Կուրծքըս պատառի՛ր,— արյունը սրտիս
Թող սև հեղեղով վերքըս լըվանա,

Ճակատիս դընտ անծոքի կընիք.
Թող դարեր անցնեն, աշխարհն իմանա —
Անա՛րգ Վասակը մատնեց հայրենիք»...
1887

ՏՂՄՈՒՏ

Մըտավ արև. Ավարայրին մութ պատեց,
Սև ամպերով երկնից դենքը քողարկվեց.
Բընությունը մի քուն մըտած հեշտասեր
Վայելում է անուշության վառ ժամեր:

Չէ նըվագում քաղցըր սրինգն հովվական,
Թռչունների քնքուշ տաղեր լոեցան.
Ծաղիկները նիրհած փափուկ մարգերում
Երբեմն մեղմիկ հովի հետ են համբուրվում:

Բայց այդ քունը մոտ չի գալիս հեշտագին
Ծեր Տղմուտի արյունակոխ աչքերին
Այն սև օրից, երբ որ կուրծքը կուսական
Ոռոզվեցավ արյունովը հայության:

Անցան դարեր, դեռ Տղմուտը հեծելով
Գիշերները խանգարում է անվրդով
Ավարայրի անուշ քունը, և չունի
Մինչև այսօր նա ողբակից յուր վշտի:

Եվ ծերունին հառաչում է սըգավոր,
Արյուն դարձած կոհակները պևոր
Գընում, գալիս, վարելում են ավերին,
Անցած փառքը հիշեցնում են հայերին:

«Զեր նախնազը էլ չեք նըման դուք, հայե՛ր,
Չունիք այլևս հայրենասեր այն ոգին,
Նոքա մեռան, և կուրծքերը անվեհեր
Արյամբ բուսած անմահ վարդեր պատկեցին:

Նոքա գըրվի չըտվեցին բուության,
Չըծախեցին նոքա խիղճը և աստթ,

Ապատության երկրպագու կանգնեցան,
Հավատալով փառքի լուսույն անաղտու:

Եվ անթառամ պարդարվեցան պըսակով,
Անմահացավ այն վեհ հոգին արության.
Եվ հայրենյաց կյանք տվեցին արյունով
Ահեղ մարտի դաշտում հայ մարդ, հայ կուսա

Դո՛ւք ի՛նչ արիք, դուք, փառավոր նախորդա
Ստրուկ ծընած, անփառք սընած զավակներ.
Հայ սար, հայ գետ, հայ դաշտորայք շունչ ա
Պիտ ամոթով պրեն ձեր սև երեսներ:

Ապատության սուրբ պատկերը կործանած,
Դուք ծաղրում եք սպատասեր ըզգացումը,
Նոր Հապկերտի անարգ բազին եք կանգնած
Եվ խայտառակ կատարում եք պաշտամունք:

Ո՛հ, թե ելներ կորած մոռցված դամբանից
Վարդանների առյուծական այն հոգին,
Եվ երկաթի խարապանը թունալից
Տար ձեր ժպիրի, ամոթասարսու, ճակատին:

Եվ արցունքով համբուրի՛ք սուրբ շիրիմ,
Ուխտ կապեիք հորից խաչով ու սըրով
Կանգնեցընել նոր Արտաշատ, Խոխոցիմ,
Վերջ տա՛ անարգ այս վիճակին արյունով»...

Եվ Տղմուտը հառաչում է սըգավոր.
Արյուն դարձած կոհակները պևոր
Գընում, գալիս, վարելում են ավերին,
Անցած փառքը հիշեցնում են հայերին:

Անցան դարեր, դեռ ծերունին հեծելով
Գիշերները խանգարում է անվրդով
Ավարայրի անուշ քունը, բայց չունի
Նա ուժ քունը խանգարելու հայերի...

ՋԻՆՎՈՐՔ ՄԱՀՁ

Ես հեռանում եմ, ո՛վ մայր հայրենիք,
Կարմիր արյունով անվեհեր կուրծքիս
Ներկելով սուրբ հողդ, և թող ջո որդիք
Չողբան իմ մահը, երբ քաջ պինվորիս
Թափած արյան տեղ պիտի բուսանին
Ո՛չ փուշ ու տատակ. այլ կարմիր վարդեր,
Եվ այդ վարդերից փնջեր պիտի հյուսվին
Պաակելու գոհված ապնիվ գըլուխներ:

Եվ թող ես գրկած կուրծքը մայրենի,
Քո ապատ կուրծքը, սիրո՛ւն հայրենիք.
Քընանամ մինչև ականջիս հասնի
Քո ապատության անուշ ավետիք.
Ես այն ժամանակ կելնեմ և պայծառ
Արևըդ տեսած՝ իմ քախտը կօրհնեմ,
Որ, ի՛մ հայրենիք, միայն ջեպ համար,
Քեզ համար միայն կյանքըս գոհնել եմ...



Տեսնում եմ ահա — ազգեր են մեռնում,
Ազգեր են ծնվում, և արմավենին
Սուրբ ապատության՝ գողգոջուն ձեռքում՝
Բախտն է մոտենում մատաղ ազգերին:
Եվ նախնյաց փառքը նոր արշալույսով
Ցոլում է նոցա պայծառ ճակատին,
Եվ ահե՛ղ կովում արյուն քրտինքով
Վատակած անմահ աճում է դափնին:

Եվ միայն դու ես, իմ խե՛ղճ հայրենիք,
Որ շղթայակապ հեծում ես դարձյալ,
Եվ պատա՛ն պատա՛ն կուրծքդ գեղեցիկ —
Ընկած ես որպես կենդանի մեռյալ...
Եվ անցած փառքիդ ավերակներից

Փրկության ոստղ զեռ չէ կանաչում,
Կրծքիցդ հուսած արյան շիթերից
Քո տանջանքների փունջըն է ցողվում:

Բայց, իմ հայրենի՛ք, դու պիտի չմեռնիս,
Ես հավատում եմ հարության օրիդ,
Մոտ է ժամանակ. վարթի՛ր, սիրելի՛ս,
Փրկության աստղը վառվում է ճակատիդ:
Ոտքի ե՛լ, հոգի՛ս, շղթադ թոթափի՛ր,
Աչքըդ բա՛ց արա այդ մահվան ջրնից.
Թեև մահամերձ, դու մի ձայն հանի՛ր —
Տրդիքդ օգնության կրգան չորս կողմից:

Մ-ԻՄ

Կուպեի լինել կարկաչուն վտակ,
Վճիտ այիք դրախտի բուրմունքով,
Եվ առավոտյանն, ինչպես ցող հստակ,
Երեսդ ոռոգել գոհար շիթերով:

Կուպեի լինել սոսի հովասուն,
Համարձակ փոված կանաչ սաղարթով,
Եվ միջօրին այդ դեմքիդ սիրուն
Հովանի լինել հեպիկ շրջունով:

Կուպեի լինել ծաղկոցում բացված
Քաղցրաբույր մի վարդ, երկնից արծանի,
Եվ սիրո ժամին, խանդիցս արբած,
Չարդարանք լինել կուրծքիդ գեղանի:

Եվ շող դառնալով զարնան արևի՛
Կուպեի պայծառ աչերումդ վառվել,
Կամ ինչպես քնքուշ ոսկեվառ գոտի
Չքնաղ իրանիդ փաթալթվել, փարվել:

Լուսափայլ աստղիկ կուպեի դառնալ,
Քաղցր մանկան պես ծիծաղն՝ երեսին,

Ինչպես աղամանդ շողջողել, ցորայ,
Ո՛վ իմ թագուհի, թո թաց ճակատին:

Կուլեի փնել լուսին ամոթխած,
Արծաթի փայլով մապերըդ ջղել,
Այտերըդ գգվել, սիրուց բորբոքված,
Դողդոջ շրթունքիդ համբույրներ գրոշմել:

Կուլեի փնել սիրանար սոխակ
Եվ ձեռիդ գերի, վաևդակում փակված,
Ականջիդ հնչել հրաշալի նըվագ,
Մեղս օրոր ասել թո հոգուն կմայլված:

Եվ կախարդակաւ տաճարում կանգնած
Կուլեի տեսնել ես թեկ Անահիտ,
Եվ երկրպագել, առաջիդ չոքած,
Սուրբ գեղեցկության անմահ տիսյարիդ:
1883



Դու երևեցար, ինչպես վառ գարնանը,
Լուսաշող այգի նշույլ ոսկեթույր,
Դու երևեցար — ժպիտդ աննման
Քաղցր եր վերթ սիրո առաջին համբույր:

Ծաղկոցում քացվույ թեկ վարդ կարծեցի,
Դըրախտի վայելք տեսա թո աչքում...
Ա՛խ, այդ աչերիդ ես կոհ բերեցի
Եվ անեղ վիճակ ե սրտիս խնդում:

Եվ եթե դու էլ խաբուս ես, ո՛վ կուլե,
Սեր չէ խոստանում հայացքըդ չքնադ,
Թե այս անգամ էլ ունայն է իմ հույս,—
Դարձյալ պի՛տ օրհենս հասա՛ղրդ մատաղ:

Պիտ օրհեն՛ ես այն, թեպետ կարճատև,
Բայց վեհ, հոգեկմայլ հրճվանքի համար,
Որ՞հոգուս բերիք դու, ինչպես արև,
Ինչպես խնկարույր մայիս կենարար:
1888



Արի՛, իմ հոգա կ, իմ գիրկը արի՛,
Կախարդի՛ր դու ինձ բոցոտ աչերով,
Անուշ պատրանքով անցնի օր, տարի —
Եվ չըհագենամ թո համբույրներով:

Գլուխըս կուրծքիդ՝ վառ աչքիդ նայեմ,
Թող ինձ նախանձեն անմահներն երկնից,
Մի ժպտիդ համար ես կիրաժարվեմ
Սրտսց վղջալու բուրբ աշխարհից:

Ո՛չ փառքը նորա, ո՛չ անարժ ոսկին
Գրկախառնությանդ ե ոչ սի վայրկյան
Երբեք չեն արժիլ հոգա՛յ իմ անգին:

Արի՛, կախարդի՛ր, թեն վազանցիկ,
Բայց քաղցր երազով ոգևորության,
Ո՛հ, դու իմ ամնուկ դշխո՛ գեղեցիկ՝
1888



Ճենում էի բուրաստանում,
Առավուտ էր մայիսյան, —
Խնդում էի, պվարձանում,
Ուրախակից բնության:

Անեղ խաղով ես մտաեցա
Քնքուշ բացված ալ վարդին,
Անուշ հուտից չկշաացա,
Չմայլեցա ալ վարդին:

Մեկ էլ տեսա՝ մատաղ կուրծքին՝
Չապիր որդն էր բույն դրել.—
Վա՛յ նապելի իմ ալ վարդին,
Կյանքի թելն էր կտրվել:

1888

ԿՅԱՆՔ

Որպես մի անուրջ դու պիտի անցնես,
Լոկ ունայն տեղը հուզելով արյուն.
Ամեն քաղցր իդձ դու պիտի տանես,
Անհոգ բերկրություն, և՛ սեր, և՛ ավյուն:

Մանուկ օրերից քո հույսով ապրած,
Մենք քեզ են սպասում անձուկ կարոտով.
Բայց միշտ թռչում ես դու թևեր առած,
Եվ մենք միշտ նույնն ենք խորտակված սրտով:

Չնչին վշտերով քո միշտ տառապանք՝
Արժանի էլ չեն երբեք վեհ հոգու,
Վայելքըդ առ ժամ միայն գառանցանք
Կարող են լինել տհաս պատանու:

Տո՛ւր մշտականաչ հրաշագեյլ գարնան
Վառ, երանավետ, անանց երազներ.
Թող մենք անձնատուր մի անհուն կգացման
Անվիշտ քուն լինինք օրեր, տարիներ.

Կամ բա՛ց մեզ մարտի ազատ ասպարեզ,
Անշրթա ձեռքով չարի հետ կռվենք —
Կամ անմահության փառք պսակե մեզ,
Կաս ինչպես ճճի՝ ոտի տակ կորչենք...

1888



Անցի՛ր, սև՛ անպ, դու իմ սրճից,
Բացվի՛ր, երկի՛նք կապուտակ.
Տխուր, խավար թուխպի միջից
Ցոլա՛ գարնան արեգակ:

Թող պատովի այս ցուրտ ձմռան
Սգո հանդերձ տաղտկալի,
Եվ շողշողա մանուկ բնության՝
Ոսկի ծափտ ցանկալի

Եվ բերկրության արտասուքներ
Այս լեռներից թող հոսեն.
Թարմ կանաչին ջինջ առվակներ
Քաղցր ավետիք թող խոսեն,

Թե մայր երկիրն ապատվեցալ
Յուր կուռ, ճնշող կապանքից.
Նոր ցնծության երգ լսվեցալ
Հեզ արտույտի բերանից...

1888



Տ՛վ իմ խղճուկ կյանք, խառնուրդ սոսկալի
Մանուկ հավատո, չար երկբայության,
Անուշ պատրանաց, խոկմանց վշտալի,
Ե՛վ հստակ սիրո, և՛ ատելության.
Խաղալիք ես դու նենգավոր բախտի,
Հողմավար նավակ պեծուփ ծովում,
Անհանգիստ թռչնակ մի վտարանդի,
Պարզամիտ տղա փորձության բովում...

Որպես խոռվահույզ լեռնային վտակ
Գլորվում ես առաջ արագ, անդադար.
Ալիքդ անհամբեր քերելով հատակ՝

Ողբում են, իբրև պանդուխտ վշտահար:
Քեզ չեն կանգնեցնում ջո դալար ափեր,
Որ սիրով գրկած սահանքդ այնկոծ,
Անուշ հանգստան կարողու են հրավեր,
Կանչում են գաբան սիրուն ծաղկանց ծոց:

Եվ ես կանգնած եմ ահա բընության
Հրաշալյաց առաջ, մոլորված մտքով,
Չէ՛, ինձ համար չեն այս գեղեցկության
Բոլոր հրապուրներ իրենց պատրանքով...
Հոգի լի ցավով նայում եմ միայն
Թե ո՛ւր են թոչում սրբնթաց ալիք,
Եվ գեթ պիտի տան ինձ մի պատասխան
Սըլացող կյանքիս կոռակներ գալիք:
1885



Կար մի ժամանակ, երապում էի —
Թե պիտի գտնեմ անդու վառաակով
Ես հանգիստ, որին կարոտում էի
Տանջված, վշտաբեկ, անհուն փափագով:

Անցան տարիներ, չկա վայելքի
Դախկին շոգավառ անուշ շունկություն,
Չկա սրտառույց հրապուրքը ցնորգի,
Որով միշտ ջաղգր է ծաղիկ մանկությունս:

Սիրտըս դառառվ է, ո՛չ կյանքի հոգսեր,
Ո՛չ աշխատություն չեն կարող ինձ տար
Այն իմ կորուսած ոսկի երապներ,
Մատաղ օրերիս սիրուն եղեսպ:

Եվ կյանքը ահա մի վայրի անտառ,
Որ ես մոլորված քայլերս եմ թողրոմ,
Առանց տեսնելու մի նշույլ պայծառ,
Որ միայնությունս եմ միայն ողբում:

Իբրև մի նավորդ արթաց երեսին
Գընում եմ անհույս վշտերից ընկճված...
Եմ պիտի հասնեմ մի օր փարոսին,
Կյանքի կատարի հոտանքից փրկված:
1889

ՄԱՆԿԱՆԸ

Շքանի՛ ջեպ, անհույց սեռունկ,
Դու անարատ դու դեռ անքի՛ծ,
Դեռ չըրացված գանձ ես ծածոնկ,
Մաքուր շող ես գարեան խրվկից:

Դու իավատով դիմում ես կյանք
Եվ սպառում ես երջանկություն,
Եվ ջեպ համար կյանքի տեսչանք
Որպես մի վարդ հրաձեռք սիրուն:

Դու չըզիտես թե ի՛նչ վշտեր
Խռովում են սիրող հոգին,
Դու չես տեսնում թե ի՛նչ փշեր
Բույե են դրած վարդի միջին:

Դու վըռանջվես և վիմանաս,
Ինչ է կյանքի դառն պրտաատուք,
Կանցնի՛ն օրեր, և վերահաս
Կըզա թախիծ սիրուն մանուկ...

Բայց և դարձյալ ջեպ երանի,
Դու ապրուս ես, ես ապրեցա,
Դու դեռ գարեան օդը գեղամի, —
Իմ վերջապետն մտտ է ահա...



Ամենայն անգամ, երբ ես միայնակ,
Հեռու աշխարհի անվերջ աղմուկից,
Մտքիս հետ ընկած մտնում եմ սենյակ
Եվ նստում լքյա՛լ, հոգիս թախծալի՛ց,
Սեղանիս առաջ սիրածս անկյունում,—
Թողթ ու գրքերիս դառնում եմ, ասում.
«Ո՛ր է ձեր նախկին հրապույր թուլչական
Ո՛ր գաղտնիքը ձեր սփոփիչ պորոթյան...»

Դուք լուռ եք հիմա և իմ մտքերին
Չեք կարող ցույց տալ ապառ ճանապարհ.
Այս անմիա կյանքի խորհուրդն անմեկին
Ինձ համար դարձյալ գիշեր է խավար:
Թե՛ մի հրեշ է դա առասպելական
Ահեղ ու գրավիչ, այլ անպատասխան —
Որպես մի Սիրեն կախարդում է մեզ
Եվ թունավորում մի նենգ ձկնի պես...»

1891

ՔՈ՛Ն ԵՂԻՐ, ՀՈԳՅԱԿ

ՔՈ՛Ն եղիր. հոգյա՛կ, թող, քաղցըր նիրհով
Աչերըդ փակվի՛ն շերտ կուրծքիս վերա
Սիրո անուշիկ մեղեդիներով
Թող մինչև նոր այգ ականջդ հեշտանա:

Քնքուշ վարդերով ես կպարդարեմ
Քո գուլիս ու կուրծքդ, օրրան փափկության.
Քնի՛ր, թագուհիս, մինչև լուսադեմ,
Մինչև արտույտներն երկինք սըլանան:

Եվ երբ առաջին նշույնն ոսկեփայլ
Արևը ձրգե կուսական գեսնիդ
Թող քեզ պարթեցնե՛ իմ սիրո դայլայլ,
Բոցավառ համբույրս այդ վարդ շրթունքիդ:
1891

Տեսա՛ իջավ խնայողության դիցուհին,
Չքնաղ, որպես մատաղ գարուն ձաղկավառ.
Տվել էր արևն փայլը նորա աչերին
Եվ շուշանի ճակատըն էր հավասար:

Իջավ, բերեց լուր հետ շուրմուկք եղեմի,
Եվ ջերմություն, և հույս, և երգ մայիսյան,
Չեղին բռնած կանաչ ոստիկ ձիթենի,
Շարժեց օդում, դարձավ ասաց նա մարդկան.

«Թող մեծ սիրո և հաշտության ջողերից
Չեր միտքը ուժ, սրտերը գուժ ընդունեն.
Անցնե՛ ձմեռ, և նոր գարուն լուսալից.
Կենաց գարուն, թմրած հոգիքն ողջունեն:

Ձարն հեռանա, և ձեր աչքիցն արտասուք
Հոսե որպես մաքուր վտակ հորդառատ.
Սմենօրյա բարյաց փթթին ձեզ ծաղկունք՝
Հույս կենդանի և հաստատուն միջոտ հավատ»:

Բայց... կարթեցա, և ո՛չ բուրմուկք եղեմի,
Ո՛չ ջերմություն, ո՛չ լույս, ո՛չ երգ մայիսյան...
Ե՛րբ մեզ համար պիտ կանաչի ձիթենի.
Մ՛իս, ո՛րն արդյոք կլինի տարի նոր գարնան:
1892

ԱՇՈՒՂ

Արևը վերջին անգոր շողերով
Ոսկեգծում է կատարը լեռան
Կանգնած է անջարժ անտառն անխոռով.
Չէ լավում արդեն ճովողը ծիծուս...
Չորս կողմն եմ նայում, տեսնում եմ անա
Էրբեմն միայն մի տերն դեղնած
Գրբվում է տխուր ցուրտ գետնի վերա,
Լսվում է նորա շրշուկը մարած:

Այն, այդ վայր թափվող գիշին տերևներ
Սիրտս են գրավում անտրտունը ողբով.
Ինձ պաշարում են ախուր երակներ,
Սիրքս երկրայության սրողվում է անպով.
Քո ծոցն են ձգտում, ո՛վ մայր — բրնձեղյուն,
Կամիմ հաղորդվել ջր-դուռ հանգստան
Վեսն խորհրդին չէ՞ կրգա գարուն —
Կրկին կրճալիս ծայրով մանեղական...

Ինչո՞ւ կարող ես որևէ տեղ քողով
Ծածկվիլ ու քնտնալ տեղաք ու յոթի
Եվ հանել դարձյալ երբ յուր ջերմ շողով
Խաղա ճակատիդ արևը գողտրիկ:
Իսկ մեզ, որ չունինք զգվանքը կենաց,
Գրկում է շիրիմն անգա՛րձ, հավիտյան,
Եվ մեր առավուտ, վշտով անցուցած,
Անվերջ գիշերում առեւում է վախճան...

Բայց սիրում եմ քեզ, հանգչո՞ղ բընություն,
Դու մի այլ մանկան հանդերձ ես պգնում
Եվ իմ մեջ ուժգին եռում է արյուն.
Երբ այդ ազավոր պատկերդ են տեսնում...
Զգում եմ լեքկա՛ծ, գարունդ եհիշելով,
Որ այդ ցնորք չէ, կա անմահություն...
Եվ գիրկդ եմ լսելնում, հագիս անխռով,
Քե՛զ կամիմ միանալ, ով մայր բընություն:
1892



Մի՛ վհատիր, ընթե՛սավեր
Եվ սուգն ընկալ քեզ բազին.
Թող ստրկության մտայլ գիշեր
Ան ջրբերն լճոսրտին:

Թե՛ կարգ տեղը սուրբ լեռնաբայրան:
Էլ տեղ չունի աշխարհում,

Թե՛ շղթայի հիմա դաժան
Շաչյունն է լոկ քեզ հասնում,

Մի՛ վհատիր, ե՛զ առաքալեր:
Ա՛ն յոթնադի քո բընադ
Եվ տանջանքի օրհներգ սուր մեզ,
Ողբի աղբյուր մեզ համար:

Կամ թող հնչեն հեղոր լալեր:
Որպես՛ փողով հաղթախան:
Թնդան սուճին լուրս՛մ՝ արտեր:
Փայլի՛ սուրբ խաչ վկայության...

Եվ, քո ձայնը թող որոտա,
Ինչպես անպրով խավարում,
Թուխալը ցրվի, փայլակ ցրա
Արյամբ փրկված աշխարհում:
1895



Բացվեցալ գարուն... <Նգիս բերկություն
Սըլանում է վեր, պե՛տեղ՝ ուր փրով՝
Ծիծաղում է ինձ մի երկրի՛նք անմահ
Ոսկի արևի պայծառ շողերով:

Կուլեի երգել, քաղցր ու ներկաշնակ,
Կորովի ձայնով, ե՛ վառելի՛ սրտեր:
Որ երգես: որպես՛ գարունն հորդ՝ փուսել,
Սադ, դաշտ ու անտառ: ձորեր՝ թնդացներ:

Եվ իմ նվագած հուսո մեղեդին
Նոր կյանքի գարուն կավետեր մարդկան,
Եվ մաքուր հավատն, ինչպես շող այգին
Կոցրվեր խավարն մոայլ գիշերվան:

Ես սեր կերգեի, բայց և ականիվ մարտ...
Այ, ա՛խ ցրտերից խամրեցավ գարուն,
Թռչնեցավ սրտիս անուշ կոկոն վարդ,
Կապված է և լուռ վտակ կարկաչուն:
1895



Հեպիկ կարկաչով վապուս են ալիշ
Փարում, փայփայում ափերը կանաչ
Ջրերի վերա կախված ռոռնիք
Նոցա հետ խոսում են լալահառաչ:

«Մի՛ վապեք, ալի՛ք, կացե՛ք, կոհակնե՛ր,
Մի՛ թողնեք չքնաղ այս վայրն հանգստյան
Եվ վայելեցե՛ք քաղցրության ժամեր,
Մինչ ժպտում է ձեզ շողն արեգական:

«Մ՛խ, դուք չեք տեսնուս, կանցսեք այս բլուր —
Եվ կըպողտորի ձեր ջուրը վճիտ.
Այնտեղ ա՛յլ երկիր, ա՛յլ ափեր տխո՛ւր,
Այնտեղ կըգրկե ձեզ արյա՛ն հովիտ:

«Այնտեղ հողն արյուն, արյուն են սարեր,
Ջինչ աղբյուրներն էլ կտրել են արյուն.
Վտակը քերում արյունոտ քարեր,
Թառամեցնում է ծաղկավառ գարուն:

«Դողում է երկինք սրի շաչունից,
Մթնել են ոսկի արևի շողեր.
Ո՛հ, մի՛ հեռանա, սիրուն գետ, մեզնից,
Մի՛ վապեք, ալի՛ք, կացե՛ք, կոհակնե՛ր»...

Բայց... մռայլվեցավ երեսը գետին.
«Իմ քույր, եղբայրն են այն ական ու վտակ» —
Գոչեց, վարկվեցավ սարսած ափերին
Ու հառաչ անցավ կոհակ առ կոհակ:

1895

ԳԱՐՈՒՆ

Մի նոր, հրաշալի կյանքով շունչ առած
Ժպտում է բնություն, վերդ մանուկ չքնաղ.
Եվ նոր վորությամբ երկիրն է վարթած,
Եվ երկինքն հստակ ու գեղածիծաղ:

Այս խորհրդավոր պահուն ես մենակ
Ծնկաչոք ահա՛ քեզ եմ աղոթում,
Խաչեցյա՛լ փրկիչ, քո հովանու տակ
Ցավատանջ սրտիս իղձերն եմ բերում:

Թո՛ղ այս բերկրալից գարնան ջերմ արև
Իմ հայրենի տան վերա էլ փայլի.
Մի՛ օր, գեթ մի օր, թող քո առաջև
Այնտեղ հեզ ծիծուռն օրհներգը լսվի:

Թե անցավ և մեր ձմեռ ցրտաշունչ,
Թե անպարտ արյունն հասցրեց վարդեր,
Եվ տառապելոց ողբերն ու տրտունջ
Դարձան գոհության խաղաղ մաղթանքներ:
1895

ՄԱՅՐՍ

Հոգեմաշ ցավով ամենայն գիշեր
Ես քուն եմ մտնում արտասուքն աչքիս,
Եվ խուռն երամով տանջող պատկերներ
Շուտ պաշարում են տառապյալ հոգիս...

Մենակ ապրեցա, կարոտ զգվանքի,
Փորձով ես ուսա խորհուրդը կյանքի,
Օրըս սևացավ այրող կրքերից,
Չըզըտա երբեք մի սիրտ կարեկից:

Եվ քուն եմ մտնում ամենայն գիշեր
Արտասուքն աչքիս, հոգեմաշ ցավով —

253

Հանգիստ չեն տալիս սև-սև պատկերներ,
Որ պաշարում են ինձ խուռն երանով...

Եվ ահա դու ես, որ ինձ այդ պահուն
Երևում ես, մա՛յր, պսակով վարդարուն,
Դու գրկում ես ինձ սիրով կաթոզին
Գոչում ես՝ «որդի՛» ձայնով անմեկին:

Եվ տեսնում եմ ես թո փշյա պրսակ,
Խոցերով ծածկված թո սիրուն ճակատ,
Եվ մի թափանցիկ նուրբ շղարշի տակ՝
Կուրծքիցդ հոսող արյունը կաթ-կաթ:

Աչքդ աղերսալիբ տեսնում եմ վերաս:
Կանչում եմ թեպ «մա՛յր» ես ձայնով նվազ,
Եվ կրկին ելնում անքուն, վշտահար —
Ա՛խ, մա՛յր, ի՛նչ անե որդիդ թեպ համար...
1896



Եվ եկավ գարուն, և անցավ ամառ,
Բայց ես չտեսա մի պայծառ արև,
Եվ կարկաչահոս վտակը կայտառ
Լոկ արյան շիթեր ցայտեց իմ առջև:

Եվ եկավ թռչունն իմ հայրենի տան —
Լայաձայն ողջույն առա նորանից,
Ա՛խ, ողբով եկար, կռո՛ւնկ սիրական,
Եվ անջատվեցար ողբով ինձանից:

Թոչնեցան ծաղկունքն իմ անուշ երկրի,
Սառույցը կապեց արյունոտ վտակ,
Էլ պիտի ծաղկի՞ կուրծքը սարերի,
Առուք կըտեսնե՞մ աղբյուրներն հատակ...

Երանի՛ մեկ էլ աչքս բանալի,
Եվ դու, իմ շեն տո՛ւն, այժմ գերեզման,
Ավետաբերիդ ես ընդունեի,
Լսե՛ի օրհներգ թո վերածնության:
1896

ՍԱՐՆ Ի ՎԵՐ

Դեպի՛ վե՛ր; դեպի՛ վե՛ր... Անվերջ է ուղիս;
Հոգնեցան բապուկներս՝ այս կուլումն անարդ:
Սպառեցավ և վերջին ուժն էլ ծնկներիս —
Դեպի՛ վե՛ր, սարն ի վե՛ր, քաջասիրտ պինվոր:

Ավելի կարծրանան թող այս սև ժայտեր,
Ավելի թող սպառնա անդուեղն ահալոր,
Դեռ շունչ թաքեա՞նումս, շարժվում եմ ձեռքեր —
Դեպի՛ վե՛ր, սարն ի վե՛ր, ո՛վ արի պինվոր:

Դեռ հեռու է կատարն անամպ ու հստակ,
Բայց եթե չհասնենք այնտեղ մենք այսօր,
Վաղն այնտեղ եեք անշուշտ, մերն է հաղթանակ —
Դեպի՛ վե՛ր, սարն ի վե՛ր, անվեհեր պինվոր:



Հավատում եմ — մեռնելու չէ, սուրբ գաղափար,
Եվ անմահ է, որ մեռնում է նորա համար,
Հավատում եմ — չկա ոչինչ հավերժական,
Բայց սուրբ գործի ուժը դյուրե՛իջ՝ չունի՛ վախճան:

Մի՛ վիատիր, հառա՛ջ գնա, անբա՛խտ եղբայր,
Թող խորտակվի բաց օվկիստում նախի հողմավար,

Թող պայրանա գլխիդ մրրիկ ահեղաշունչ
Եվ մոլեգին կլանե հորձանք դիզ անմունչ...

Բայց հավատա՛, դու չես հաղթված, ոչ ուժն հաղթո՞ւ:
Եվ նոր քաջեր կելնեն անշուշտ քեզ հաջորդող,
Եվ կըզրավեն նոքա այն ափը ցանկալի,
Եվ նոր այնտե՛ղ փայլը փառքիդ կըբորբոքվի:

Թող ավերվի հայրենի տունն հիմնահատակ,
Բայց քանի հուրն առկայծում է դեռ մոխրի տակ,
Նորա կորուստն, ո՛հ, մի՛ ողբալ դու սգավոր —
Իբրև փյունիկ նա կհառնե անշուշտ մի օր...
1896



Երբ լռում եմ ես, այս վիշտն ահագին
Հանգիստ չէ տալիս իմ յանջված հոգուն.
Սիրտըս կտրատում, մաշում են կրկին
Այս լացն ու հառաչ, հուսահատություն:

Եվ ասում եմ ես, հանցանք է լռել,
Երբ այսչափ մեծ է և անծայր չարիք
Մի՞թե պիտ սպասենք, որ մեզ անարգել
Հասնե և վերջին ահռելի մրրիկ:

Եվ խոսում եմ ես, բայց էլ չի հնչում
Գարնան ցնծալից իմ հին մեղեդին...
Ես էլ միայն կոծում, միայն հառաչում —
Իմ լացն եմ խառնում ընդհանուր ողբին:
1898



Չունիմ քեզ համար, ընկե՛ր թանկագին,
Սրտառուչ, քաղցրիկ վաղեմի ձայներ.
Ա՛, բեկբեկ լարերն իմ խեղճ քնարին
Շուտով սորվեցան երգել սև օրեր:

Կոխվ է այս կյանքն, և այդ կովի մեջ
Որքա՛ն անպատրաստ, տկար մեր ուժեր.
Բայց մենք գնում ենք մի հույսով անվերջ
Եվ չունենք ոչինչ մենք այլ քաջալեր:

Նույն տկարությամբ մենք ոտք ենք կոխում
Ահա նոր տարին, և առաջներիս
Մեր նույն առաջնորդ աստղիկն ենք տեսնում —
Այդ լույսն է, աղոտ դեռ լույս է տալիս:

Եվ քանի վառ է, չէ հանգել կրակ,
Հառա՛ջ, միշտ հառա՛ջ, ընկե՛ր թանկագին.
Կյանքն իբրև հեղեղ՝ կոհակ առ կոհակ
Շարժվում է, փրկում միայն քաջերին:

1897



Կուզեի հնչեր տավիղս մեղմիկ
Սրտառուչ նվագ, անուշ դալալիկ,
Եվ վառեր սրտեր սիրո կրակով
Դիմել դեպի գործ միաբան հոգով:

Կուզեի հնչեր իմ փողն ահարկու,
Թնդացներ սրտեր յուր ձայնովն հուժկու,
Քնածը պարթներ, թուլլն արիանար
Կուլեյու ցմահ սուրբ գործի համար:
1897

ՆՈՐ ԳԱՐՈՒՆ

Քեզ ըսպասող չըմընաց,
Ո՛ր ես գալի, ա՛յ գարուն,
Գովքդ ասող չըմնաց,
Չուր ես գալի, ա՛յ գարուն:

Սև-մութ պատեց աշխարհին,
Սար ու ձոր դառան արին,

Մեզ վայ բերեց ես տարին —
Ո՛ւր ես գալի, ա՛յ գարուն:

Բյուրբուրը գա՛ թող ձեն տա,
Էլ ո՛վ պիտի քեզ խնդա,
Էլ ո՛ր սիրտը կըթնդա —
Չուր ես գալի, ա՛յ գարուն:

Բյուրբուրն եկավ՝ վարդ չունի,
Ծաղկոցը կա՛ վարդ չունի —
Էլ ո՛վ ա որ դարդ չունի —
Ո՛ւր ես գալի ա՛յ գարուն:

Դու ետ բերիր հավքերին,
Ո՛ւց տեր ընեն բըներին —
Սա՛ղ տեղ չկա մեր երկրին —
Չուր ես գալի, ա՛յ գարուն:

Աշուղի բերանը փակ,
Սապ-քյամանչեն փակի տակ,
Սիրտն ա երվում անկրակ —
Ո՛ւր ես գալի, ա՛յ գարուն:

Քեզ ըսպասող չըմընաց,
Չուր ես գալի, ա՛յ գարուն.
Գովքըդ ասող չըմընաց —
Ո՛ւր ես գալի, ա՛յ գարուն:

1897



Գարնան կարկաչուն վտակի ափին
Մոլորվա՛ծ մտքով ես նստած էի
Եվ նայում էի պղտոր ջրերին,
Պես-պես ցավերով տանջված սիրտըս քի:

Եվ փունջը ձեռիս քրքրում էի,
Ծաղիկներն մեկ-մեկ ջուրն էի ձգում,

258

Եվ պղտոր ալիք գարնան վտակի
Միշտ հառաջ էին անդարձ գորում...

Եվ աչքըս ջրին՝ ասում էի ես.
«Կյա՛նք, դու էլ մեկմեկ օրերս ինձանից
Խլում ես պղտոր այդ վտակի պես:

Ինչպես ծաղիկներն իմ փնջի միջից՝
Անհետանում են անուշ երազներ —
Սի՛րտ իմ, դրո՛խտ էիր, և դարձար ալե՛ր»:
1897



Ա՛խ, ես գիտեմ, թշվառ եղբայր,
Ծանր է խաչը տկար ուսիդ.
Ճակատագիրն, իբրն խորթ մայր,
Չէ ժպտացել դեռ երեսիդ:

Գիտեմ՝ վաղուց ես դու սովոր
Անցնել անքուն երկար գիշեր,
Եվ արցունքով, վերդ սգավոր,
Մեկ-մեկ համրել կյանքիդ օրեր:

Բայց դու գիտե՛ս, որ դեռ անվիշտ
Չէ տեսված մի հողածին,
Եվ չեղածի հուսովն է միշտ,
Որ տալիս ենք կյանքին մի գին:

Հավատում ենք. թե կըգա օր —
Բախտը երազ չի թվիլ մեզ,
Թե կըբացվի նա փառավոր
Առափտյան վառ շողի պես:

Թե կըցամքի դառն արտասուք,
Լույս կըգաղնա այս սե գիշեր,
Կրփարատվին կսկիծ և սուգ —
Կըգա մայիս շնորհաբեր:

1897

259

ՃԵՄԱՐԱՆԻ ՏՈՆԻՆ

Երբ տեսնում եմ, ինչպես պայծառ
Եվ անարատ զգացմունքով
Խմբվում ենք այս տոնի համար
Մենք գիտության անունով,
Վերանում են մութ կնճիռներ
Իմ անպամած ճակատից
Եվ գեթ առ ժամ վիշտն ու հոգսեր
Հեռանում են իմ սրտից:

Եվ ասում եմ ես հավատով,
Ահռելի չէ՛ այս գիշեր,
Թե որ փայլին մի ջերմ լուսով
Առավոտյան վառ շողեր:
Եվ այս օրն է այդ առավոտ,
Որ բացվում է մթան մեջ —
Թող այդ լույսը լինի աղոտ,
Միայն մնա մի՛շտ անշեշ:

1897

Մենք միասին գնում էինք ճանապարհ,
Դու վաստակած՝ հանկարծ վիատ կանգ առար
Եվ ասացիր. «Տե՛ս երկինքն էլ մթագին
Գոռ փոթորիկ է պատրաստում մեր գլխին»:

Բարդ-բարդ ամպեր թող կուտակվին, թանձրանան,
Ամպրոպ ճայթի, շանթեր փայլին մեր վըրան.
Չվիատի՛նք, և միշտ հառա՛ջ անվրդով —
Գիտեմ, ընկե՛ր, տեղ կըհասնենք արևով:

Եվ մենք հասանք, անցանք դժվար ճանապարհ,
Պահ մի կրկին արևն ելավ ոսկեվառ.
Բայց չխաբվիս դու այս փայլից կարճատև.
Դեռ շատ փորձանք բախտը կիանե մեր առջև:

260

Կըզայրանա, կըկատաղի չարություն
Եվ դեմ առ դեմ մենք կտեսնենք թշնամուն.
Նա սպառապեն և ահարկու, մենք՝ անկոր,
Եվ մեր շարքեր կընսորանան օրեցօր:

Եվ կըխլե նա մեզանից լավերին,
Եվ կըհասնեն սգո օրեր մեզ բաժին.
Կը հալածվինք, կտառապենք մենք երկար,
Բայց և կապրենք — մեռնելու չէ՛ սերմն արդար...

Բեղմնավորված անկածների արյունով՝
Երկիրն էլի պտուղ կտա երկունքով.
Ժամը կըզգա, կըղաղարի փոթորիկ,
Եվ հաղթություն կըվաստակեն մեր որդիք:
1897

ՏՈՆԱԿԱՆ ԵՐԳԸ

Տավիղը ձեռին երգիչը մանուկ,
Վարպետի առաջ մտախոհ չոքած,
Անվարժ մատներով լարերին փափուկ
Չարկում էր մերթ-մերթ ահով ու հուկված:

Եվ հնչում էին լարերն ողբաձայն,
Դողդողում էին օդի մեջ ցնդում,
Ինչպես հեկեկանք սզավորի տան
Կամ ձմռան քամին ձյունապատ դաշտում...

Եվ ժպտաց վարպետն, ասաց դառնությամբ
«Երգել ուզեցիր դու տոնի՛ համար...
Բայց չէ որ միայն երկնքումն անամպ
Փայլում է արև ջերմագին ու վառ.

Եվ մի՛թե ցավոտ սրտից կըթռչեն
Տնծության և ոչ վշտալից ձայներ.
Ա՛խ, ոսկի լարեր պիտի հառաչեն,
Մինչ աշնան նըման խամրած են սրտեր»...

1897

261



Չգիտեմ ինչու, երբ մառախլապատ
Կախված է երկինք, և սրտիս վերան
Վիշտ է ծանրանում, և մինչ հուսահատ
Տեսնում եմ մրրիկ ցրտաշունչ ձմռան,
Ես երազում եմ մի չքնաղ գարուն,
Ոսկի արևով և՛ ջերմ և՛ պայծառ,
Կանաչ դաշտորայք, լեռներ վարդարուն,
Վտակն առաջիս վճիտ ու կայտառ:

Չգիտեմ ինչու, երբ տեսնում եմ ես,
Ինչպես սաստկանում, աճում է չարիք
Եվ անագորույն դաժան Աֆինքսի պես
Խլում է մատաղ մեր կյանքի ծաղիկ,—
Ես մտածում եմ, որ այս չարիքն էլ
Պիտի չըմընա անվերջ, անվախճան.
Թե չար, թե բարի, խի՞նդ թե վիշտ անել՝
Կանցնեն վերդ երազ, ինչպես ամեն բան...

1898

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆԻՆ

Հայրենիքիդ ծառ ու ծաղկունք,
Քար ու քարափ, խոր ձորեր,
Անմահական անուշ ակունք,
Արագածի քաղցր հովեր,

Շինականի չարն ու բարին՝
Ուրախություն, դարդն ու ցավ —
Թե՛ տվեցին քո հանճարին,
Կարող վրձինդ շարժվեցավ.

Եվ պատկերներ չքնաղ, սիրուն,
Կենդանացան՝ ջունչ առած.
Նոքա միշտ թա՛րմ, ինչպես գարուն,
Հոտն են բուրում հայրենյաց:

1899

ԻՆՁ ՈՒ ԻՆՁ

Օրերս անցան անպտուղ.
Սիրտըս որպես գերեզման
Լուռ է արդեն, և երկյուղ
Ինձ չէ ապրում ոչ մի բան...

Կորցնելու բան չունիմ,
Ոչ գտնելու էլ մի հույս.
Մեկ է, ուր էլ որ լինիմ
Մեկ ինձ համար՝ մութն ու լույս:

Բայց եթե կա հիրավի
Հրաշք ասածն աշխարհում,
Եվ հրաշքով կըվառվի
Հանգած կրակն իմ սրտում,—

Կամրացնեմ ես նորան,
Ինչպես մի բերդ անառիկ,
Իմ խեղճ անմիտ մա՛նկություն
Ցնորքների դեմ խաբուսիկ:

1900



Մրագրազ բարձր տարին
Չին ա կիտվե՞լ կատարին,
Սարի ճամփեք, բաց էլե՛ք,
Էթամ, հասնեմ իմ յարին:

Ա՛խ, իմ ճամփեն քարոտ ա,
Սիրտս երված, յարոտ ա.
Ղարջբի օրն ընկի սև,—
Ազիպ յարի կարոտ ա:

Յարիս տեսա, բայիս էր,
Լալիս, գլխիս տալիս էր.

Ճանիա տվե՛ք, ա՛յ սարեր,
Չեռով արի՛ գալիս էր:

Էն ի՛նչ դուռ ա էն քարին...
Սիրտըս կաթում ա արին,
Ա՛յ իմ թաղան, թև տուր ինձ,
Թունեմ, հասնեմ իմ յարին:
1901

ԱՐԾԻՎՆ ՈՒ ԱՐՏՈՒՅՏԸ

Արծիվը կանգնած սև ժայռի գլխին
Հանգիստ ու հպարտ նայում է չորս դին.
Ցածն ամպեր ճերմակ լողում են ձորում.
Վերևում վճիտ եթերն է ծորում:
Եվ ձյունազագաթ լեռների արքան
Չորս դին է նայում, ասում ինքն իրան.
«Ինձնից բարձր էլ ո՛վ կարող է պանալ,
Այս վեհ բարձունքին ինձ պես տեր դառնալ»:

Հանկարծ երկնքի անհուն կապույտից
Անուշ ճռվողյուն հնչեց բերկրալից:
Արծիվն ահավոր նայեց դեպի վեր,
Տեսավ՝ ուժը չէ աշխարհին միշտ տեր.
Արտույտը փոքրիկ մինչ երկինք հասած,
Արևի ոսկի փայլովն ողողված,
Գովքն էր գեղգեղում կենսաբեր գարնան,
Մահամերձ երկրի օրհներգն հարուստյան:
1904



Լուռ կա՛ց, սի՛րտ իմ. այս աշխարհում
Դարդ իմացող չես գտնի.
Մեզ պեսներին ջուրն է բերում,
Ջուրն էլ մի օր կըտանի:

Գետի երեսն ընկած տաշեղ՝
Մենք գնում ենք հա առաջ.
Հանգիստ չունենք, և ոչ սիրտ
Լսող չկա մեր հառաջ:

Լուռ կա՛ց, սի՛րտ իմ. ուրիշներին
Ափսոս է մեր ցավն հայտնենք.
Դարդն ընկեր է մեզ անունկին;
Մինչ գերեզման կըտանենք:
1904

ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Երկնեց երկին և երկիր
Երկնեց և ծով ծիրանի,
Եվ եղեգնիկը կարմիր
Երկնեց ծովում ծիրանի:

Ծուխ է դուրս գալիս եղեգան փողից
Բոց է դուրս գալիս եղեգան փողից.

Բոցն է պատել կարմիր եղեգնի
Բոց է դարձել և ծով ծիրանի.
Կարմիր բոցիցն ահա մի մանկի
Վահագն ահա՝ — մանուկ գեղա

Բոց մորուքով,
Հուր շրթունքով

Հուր հեր գլխին — հրեղեն պսա
Եվ աչերն են կույզ արեգակ:

Ալեծուկի ծովի ծիրանի ալիք
Գնում են գալիս, ծեծում են ափունք.
Ահեղամոռնչ գոռում է մանկիկ,
Սաստում է այլացն հրավառ շրթունք:

Վահագն ծնավ, լոեցե՛ք, ալիք.
Դու ծովահալած, դադար ա՛ռ, մորի՛կ:

Թներն ոսկեհուռ, հրահեր բաշով
Նժույզը տակին՝ սլացավ վերն —
Երեսըդ ծածկի՛ր համեստ շղարշով,
Տե՛ս, ո՛վ է գալիս, և դո՛ւ, հո՛ւր-արև.
Գլուխդ ակոր, քաջածի՛ն Մասիս,
Դու էլ խոնարհի՛ր, Վահագն է գալիս:
Երկինք ու երկիր՝ և ծիրանի ծով
Ավետում են քեզ, ցավերի դու ծով՝
Ցնծա՛, բյուր վիշապ Հայաստան աշխարհ,
Փրկության արև Վահագնիդ տեսար:
1904

◆
Պառկած էր նա ցուրտ մահճուս
Եվ լսում էր, թե ինչպես
Դուրսը հողմն է հառաչում
Եվ մերթ լալիս մանկան պես:

Դուրսը մութն էր. կեսգիշեր...
Եվ նա հիվանդ, ցուրտ մահճում,
Երազում էր ջերմ շողեր
Եվ անձկությամբ հառաչում...
1908

◆
Լուսնակ գիշեր, անքուն գիշեր
Դարդիս հետ եմ ես մենակ.
Սև երազներ, սև-սև հուշեր
Հոգիս արհիւ ավերակ:

Քե՛զ որ եղբայր անվանեցի.
Ի՞նչ՝ թշնամի խնացավ,

Եվ ես ամուր պատանեցի
Շիրիմ-սրտումս իմ սև ցավ:

Ա՛խ, և մեռնել, և՛ կենդանի՝
Ո՛չ ելք ունի, ո՛չ վախճան.
Դարդս էլ ուրիշ անուն չունի —
Կյանքիս ընկեր անբաժան:
1908

◆
Ա՛խ, իմ անուշ, ոսկի՛ օրեր,
Երազի պես դուք անցաք.
Ինչպես տավղի քնքուշ լարեր
Չայն տվեցիք ու անցաք:

Հանգավ իմ խանդ, սեր ու ավուռն,
Սիրտըս թռչնեց վերդ ծաղիկ.
Խլեց ինձնից մտայլ աշունն
Իմ անուրջներ գեղեցիկ...

Ու միայնակ, օր ու գիշեր,
Վիզըս ճրկած բեռիս տակ,
Չեզ եմ հիշում, անո՛ւշ օրեր.
Ա՛խ, այս ի՛նչ շուտ դուք անցաք:
1908

◆
Աչերիդ մեջ բախտս է վառվում,
Բախտի աստղիկ — անո՛ւշ յար.
Սիրտըս դարդոտ, սիրտըս տրտում
Չեզ եմ կանչում, անո՛ւշ յար:

Աշունն եկավ, թառամեցան
Նախշուն ծաղկունք պարտեպին.
Դու ինձ համար վարդ ես գարնան,
Ես միշտ կարոտ քո տեսին:

Ա՛խ, այս տխուր բուք ու մթուն
Իմ սոխակն ես մխիթար —
Քնքուշ երգով եղեմական
Կախարդեցի՛ր ինձ, անուշ յար:

Սիրող սրտիդ ապավինած,
Թող մոռանամ ողջ աշխարհի.
Ամեն բանով կյանքից խաբված
Գրկումդ հանգչեմ, անո՛ւշ յար:
1908



Օրը մթնեց, ճամփես երկա՛ր...
Ուժերս հատան, ես մենակ.
Ա՛խ, ո՛ւր ես դու, ա՛յ անջիգյար,
Ինձ ո՛ւր թողիր մեն-մենակ:—

Քո ճամփեն եմ բռնել գալիս,—
Դու փախչում ես, անգո՛ւթ յար,
Էլ ի՛նչ ես ինձ նշան տալիս,
Ի՛նչ ես թցում քարեքար:

Արևս անցավ. սիրուդ համար
Սիրտըս երվեց անկրակ...
Ա՛խ, դու անուշ իմ երա՛յ յար,
Ինչո՛ւ թողիր ինձ մենակ:
1908



Ա՛յ վարդ-աղջիկ, մոտ արի՛
Քեզ եմ կանչում, մոտ արի՛,
Նապո՛ւ աղջիկ, շե՛կ աղջիկ,
Քեզ եմ կանչում, մոտ արի՛:

Վարդերի հետ խաղում ես,
Երեսիս ծիծաղում ես,
Էրված սիրտըս քաղում ես —
Քեզ եմ կանչում, մոտ արի՛:

Աչքըդ ծով, ունքըդ կամար,
Աղջի՛, սիրտըս ո՛ւր տարար.
Բյուրբույ դառա քեզ համար —
Քեզ եմ կանչում, մոտ արի՛:
1908



Հայրենի տան ես ինձ տեսա —
Վառ գնարուն էր խնկաբույր,
Լողում էին երկնից վերա
Մանրիկ ամպեր ոսկեթույր:

Մեղմիկ շնչում էր զով քամին,
Ծառ ու ծաղիկ օրորում.
Կարկաչահոս վտակներիս
Ծիծառն ողջույն էր բերում...

Բայց այդ ուրախ բնության տոնին
Մեկը չըկար՝ խնդակցեր.
Մութ էր պատել մեր սրտերին,
Թռչուն էինք բնավե՛ր:
1908



Երբ կյանքի ունայն հոգսերից ճնշված
Ես վհատ հոգով իմ շուրջն եմ նայում,
Տեսնում եմ չնչին կրթերով լցված
Բոլորիս հոգին՝ ասում եմ տրտում,
Թե ապնիվ խոհեր, վսեմ ըզգացմունք
Էլ չեն մատչելի մեր քար սրտերին.

Թե դոքա որպես մի մի մատաղ տունկ
Խամրեցան, երբ ծանոտ փչեց հյուսիսին:

Բայց ահա, մինչ մենք իբրև սգավոր
Ողբում ենք պայծառ հույսերի ավեր,
Մինչ դեռ չբացված խավարում է օր
Եվ լիատուրյան տիրում մեզ գիշեր,—
Լուսւմ եմ մի ձայն, որ ջերմ հավատով
Գործի է կոչում մեզ լքայներին:

Վերքեր է ողբում նա խոցված սրտով,
Բայց յուր սերը մեզ ավանդ է տալիս:

Եվ ասում եմ ես թե կանցնի խավար,
Կրվառվի կրկին հուսո առջալույս,
Եվ ցանկալի օր կըգա մեզ համար,
Կըջողա բախտի ժպիտ սիրահույզ...
Եվ նախնայաց ոգին մոռացված դամբանից
Մեր խեղճ աշխարհում, որպես մի փյունիկ,
Կըզարթնի փառքով ավերակներից,
Գարնան պես մատաղ ու միշտ գեղեցիկ:
1911



Արի՛, ընկե՛ր, արի՛ ողբանք միասին,
Թող ուրիշներն ուրախ ասեն ու խնդան,
Արցունք միայն բախտը տվավ մեզ բաժին,
Չարչարանքով տոկալ մինչև գերեզման:

Այս է թերևս անգուրթ օրենքն աշխարհի...
Մենք ցավերով մի տեղ ընկանք ճանապարհ,
Վայր էլ ընկանք, վեր էլ կացանք, բայց արի,
Բայց աննկուն մնաց մեր հոգին վշտահար:

Այսօր խոնջած, հյուժված մարմնով կես ճամփին,
Մեզ սիրտ տվող պայծառ աստղին նայելով,
Մնացինք մենակ մեր վշտի հետ անմեկին,
Եվ այրվում ենք անպոր, անջառ տենետրով...

Մեզ համար չէր կյանքի բարիքն ու խնդում,
Մշակ էինք, այդ էլ մնա՛ մեզ բաժին —
Դարձյալ հառա՛ջ, անխիթար ու տրտում,
Բայց ձեռք ձեռքի՛ հառա՛ջ գնանք միասին:
1911



Ի՛նչ գիշեր է հրաշագեղ, ասողալից ու բուրավետ,
Պայծառ լուսինն երկնքից ժպտում, խոսում է ինձ հետ,
Խաղաղություն ամեն տեղ, ո՛չ մի ջրուկ, ո՛չ մի ձայն...
Երավներ են երանով ինձ այց գալիս լոկայն
Եվ խըռովում են հոգիս, պեկոծում ծովի պես —
Ա՛խ, իմ դարդերն ամեհի կոհակներ են դեպաղեպ:
Գարնան չքնաղ ջերմ գիշեր, սիրո գիշեր հեշտագին...
Ողբում, հեծում է անքուն միայն տանջված իմ հոգին,
Օրս սևացավ վաղաժամ, թև են առել սև հուշեր,
Այրում է ինձ անկրակ կախարդական այս գիշեր:
Ա՛խ, իմ իղձե՛ր, վա՛ռ իղձեր, իմ անուրջնե՛ր վաղեմի,
Չեպնով էր կյանքն ինձ համար գեղեցիկ ու սիրելի,
Չե՛կ եմ ուլում կարոտով, սիրտըս վառե՛ք դուք նորից
Մի անգամ էլ թող որ լամ արտասուքով բերկրալից...
1911



Երբ խոր գիշերով, ցուրտ անկողնիս մեջ,
Քուրը իմ աչքից հեռու է փախչում,
Եվ հոգուս վերա սև հուշեր անվերջ
Երկանի նման ծանրանում տրտում,

Երբ մեյամաղձոտ աշևան երկնքի
Պղտոր լուսնյակն էլ մարում է խաբառ,
Ու պատերը մուրս իմ խեղճ սենեկի
Գրկում ինձ, ինչպես մի շիրիմ խավար,—

Թվում է ինձ, թե հեռու, մենավոր
Գերեզմանի մեջ դիակ եմ անշունչ,
Բայց երազում եմ, թե դու անմռունչ
Կանգնած ես կողքիս լռիկ, սգավոր,
Եվ ջերմ արցունքիցդ, հոգյա՛կ իմ անգին,
Ես հարություն եմ առնելու կրկին:

1911



Մենակ, միշտ մենակ — ի՛նչ երջանկություն,
Մի գերերկրային բերկրությամբ լցված,
Լուռ եմ մատաղ սրտիս բաբախյուն,
Համարում ամեն վայրկյանն անցած:

Հեռու աշխարհի անմիտ ժխորից,
Ամեն խռովահույզ կրթերից ապատ,
Վշտիս անձնատուր ու անցավակից
Փայփայում եմ իմ տենչերն հարազատ:

Ո՛հ, ի՛նչ անպատում հոգեզմայլությամբ
Երազում եմ ես, այսպես միայնա՛կ
Իբրև երկնային մի սուլար ջինջ ամպ
Ցնդել երկնքումն անհուն կապուտակ:

Ինչպես ձյուն մաքուր լեռան գագաթին
Արևի շողից հալվել կուզեի,
Մարգեր շոյելով անցնել մեղմագին
Ինչպես սոսափյուն գարնան զեփյուռի:

Կամ սիրով արբջիռ, ինչպես պատանին
Մատաղ սիրուհու գրկումը անուշ,
Գլուխս դրած երկրի ջերմ կրծքին՝
Յուր հեն հավիտյան քունը ինձ հետ է...

1911



Ապրել ու տանջվել, ապրել ու տոկալ,
Լռիկ, միայնակ, անհույս, անխնդում,
Միշտ էլ հալածված բախտից ռիսակալ,
Գերի աշխարհումս, ինչպես մութ բախտում...

Օրեցօր հալվում մեղրամոմի պես,
Հատնում են ուժերս, և խանդ, և ավյուն.
Մանուկ իղձերիս եմ կարոտում ես,
Էլ բացվելու չէ ինձ համար զարուն:

Եվ սիրտըս, որ մի տավիղ էր անուշ,
Հնչում էր, որպես կարկաչուն աղբյուր.
Ա՛խ, այսօր բեկբեկ լարերը ջնքուշ,
Մահու դըրոշմով լռել է տխուր...

1913

ԻՄ ՄՈՒՍԱՆ

Ես միամիտ մանուկ էի տակավին,
Հոգիս ցնցեց գողտրիկ մի ձայն երկնային.
Մենության մեջ չնաշխարհիկ նվագից
Ես արթնացա և, իբրև նոր կապանքից
Ինձ զգալով ապատված,
Ելա նորա՛ն որոնելու, այն դյութին,
Որ մանկական ցնորքներիս մեջ մթին
Պատկերացավ մի աստված:

Եվ միզապատ երկնքի տակ հյուսիսի
Տեսա նորան, որպես չքնադ դիցուհի
Երազիս պես հրաշագեղ ու անմարմին,
Համակ ճաճանչ, համակ հրապույր անմեկին:

Անուշ ձայնով դյութական
Նա ինձ կոչեց, ես ինձ շուրթս վրայի կրակը,
Դեպի մի սուրբ, նվիրական աշխատանք,
Ազնիվ պայքար անվախճան:

Եվ շնչում էր ականջիս մեղմագին
Յուր սրտառուջ խորհրդավոր մեղեդին
Անձնակեր սիրո մասին ու գործի,
Վեհ տենչերի ու խանդավառ իղձերի:
Եվ քերկրությամբ ես նորան
Տեսնեցի հուռ, որպես սիրահար,
Եվ նորա երգն ընտանի էր ինձ համար,
Քնչպես օրոր մայրական:

Եվ սրտիս մեջ ասես վարդեր ծաղկեցին...
Եվ ոգելից ես երգեցի հեշտագին
Ազատություն, սեր ու արև և գարուն
Եվ քրտնաթոր աշխատանքի վեհություն:
Անցան տարիք, և այսօր
Մղում են ինձ կյանքի ալիքն հորձանուտ,
Գլխիս վերա բարդ-բարդ ամպեր սև ու մուր
Կուտակված են ահավոր:

Ու չբացա՛ն իմ երազներ վաղեմի...
Եվ մի՞թե ինձ դու, իմ կյանքի դիցուհի,
Այսպես ցայսօր պատրում էիր սիրելով,
Որ պահեցիր աչքս սքողած ցնորքով...
Սիրտըս խոցված կարևեր,
Չեր կարոտով մի՞թե իջնեմ գերեզման,
Ա՛խ, ո՛ր եք ո՛ր, հոգուս գարնան ծիածա՛ն,
Իմ ոգեշունչ ե՛րգ ու սե՛ր:

1913

<ԻՆ ԵՐԳ...>

Երկնքն անուշ, օդն անուշ,
Բացվեց մայիս, հոտն անուշ
Սոխակն եկավ առնելու
Իր վարդի կարոտն անուշ:

Ե՛վ, նազելիդ աննման,
Լնայիսի վարդ աննման,

274

Բացվի՛ր վարդի դու նման,
Տեսքդ անուշ, բույրդ անուշ:

Ես քա կանաչ թփին թառ՝
Քո սոխակն եմ սիրահար,
Մարդդ սրտիս բոցավառ
Կյանք թող տա համբույրդ անուշ:
1912



Մրրիկն անցավ, ցրվեցան ամպեր,
Եվ խնկաբույր ծաղկունք ու թփեր
Շողողալով ծափում են կրկին
Վերջապույսի ոսկի շողերին:

Բայց իմ հոգին, ինչպես թխամամ
Մռայլ երկինք, մընաց ու մընաց
Կարոտ յույսի, կարոտ շերտության,
Եվ օրս անցնում, մտտ է իրիկվան:
1912



Հոգիս սև դարդ է մաշում,
Սիրտըս լալիս է տխուր,
Ա՛խ, ձեր կարոտն է քաշում,
Իմ հայրենի հող ու ջուր:
Երազներիս մշտական
Տիրուհին ես պաշտելի,
Իմ այցելուն գիշերվան
Վշտի անքուն ժամերի:
Եվ այս օտար երկնից տակ
Աղոթում եմ քեզ համար,
Իմ հայրենի՛ց ավերակ,
Չքնաղ երկիր ու թշվառ...
1915

275

ՀՈՒՇԻԿ

Մտավ արևն, ապիպ յար,
Լույս եմ ուզո՛ւմ, դո՛ւրս արի.
Գիշերն անասող ու խավար,
Ո՛ւր ես, լուսնյա՛կ, դուրս արի:

Ծովը ծփում, վշվշում,
Աչքս քցած ջրերին
Էն իրիկունն եմ հիշում,
Կարոտ անուշ պատկերին...

Էն իրիկունն էլ խավար,
Ծովն էր ծփում, վշվշո՛ւմ.
Դու հետս էիր, անուշ յար.
Էն կարոտն եմ դեռ քաջում:

Լուսնյակ, աստղեր պետք չէին
Ջուխտ արև էր լույս տալիս.
Շողոտ, ցողոտ աչքերին
Ջանքս մատաղ լույս յարիս:

Էն շողն ու ցողն եմ ուզում,
Քեզ եմ կանչում յա՛ր, արի՛,
Սիրտըս ծովի պես հուզվում,
Քեզ է մնում, շո՛ւտ արի:

1915



Ահա և մայիս. ծաղկում են վարդեր...
Բայց մտայլ է երկինք, և ծովն հուզվում
Դաժան հյուսիսի շնչից մահաբեր:
Ա՛խ, իմ խեղճ սիրտն էլ զարուն է ուզում
Խեղճ սիրտս ավերակ անլույս ու անլույս,
Այս ծովի նրման միշտ խռովահույզ:

276

Ի՛նչ գաղտնիքներ ես ծոցումդ պահել,
Ծո՛վ դու պևոր, անժպիտ ծերուկ.
Ի՛նչ վիշտ է արդյոք քեզ այսպես պատել...
Ես էլ անմունչ իմ դարդը ծածուկ
Տանջված հոգուս մեջ փակված քեզ նրման
Հետըս կըտանեմ մինչև գերեզման:
1915

ԵՐԳԻՍ ՀԵՏ ՄԵՆԱԿ

Быть без людей, быть одному...

В. Брюсов

Երգիս հետ մենակ, երգիս թևերով
Թռչեմ, վերանամ
Եթերքը հստակ, խորունկ ինչպես ծով,
Թռչեմ, վերանամ:

Հեռու աշխարհից, ջինջ կապույտի մեջ
Լողա իմ հոգին,
Ազատ ու անբիծ երազով անվերջ
Լողա իմ հոգին.

Ես լո՛ւյս եմ ուզում, լույս տրվե՛ք ու սեր
Գեթ երազիս մեջ.
Իմ սուգն անպատում, սգերգիս թևե՛ր
Գեթ երազիս մեջ...

1916



Դուրսը ձմեռ. քամին սուլում,
Հառաչում է ողբագին...
Ես — խցիս մեջ մենակ, տրտում,
Տանջվում է լուռ իմ հոգին:

277

Եվ ցնորքի գինուց արբած
Սիրտըս, գերի վշտերի,
Քեզնո՞վ է լոկ թևավորված,
Ով ցնորքիս տիրուհի:

1916



Վ. Բրշախյան

Այնտեղ ուր ցարդ դարավոր
Տեսնում էին ավերակ
Ու բուերի սգավոր
Լսում ողբերգը մենակ,

Դու, ով քերթող վշտալի,
Քո հեռավոր հյուսիսից
Շունչ պզգցիր կենդանի
Եվ հնադարյան մեր թախիծ:

Ցույց տվիր, որ աշխարհին
Մենք երգ ունենք երգելու,
Մենք որ ստրուկ ենք տակավին...

Ոհ, այն ձիչն է մեր հոգու —
Շիրիմներից դեպի կյանք
Լուսավոր ու անկապանք:

1916

ԾՈՎԻ ԱՓԻՆ

Ծովի ափին խռովահույզ
Կանգնած եմ ես մենավոր,
Հոգիս մռայլ ու անհույս,
Գլխիս ամպերն ահավոր,

Ու նայում եմ ես հեռուն,
Այնտեղ ալիք լեռնացած

278

Չայրանում են ու եռում
Եվ փրփրադեպ ընկնում ցած,

Եվ գալիս են ոտքիս տակ,
Փշրվում են առաջիս
Եվ իրենց երգը վայրագ
Մոնչում են ականջիս...

Ի՞նչ են ասում գոռ ալիք,
Ի՞նչ են վշշում անդադար,
Ո՞ւմ ձեռին են խաղալիք
Կամ ողբում են ո՞ւմ համար...

Ա՛խ, իմ հոգին խռովահույզ
Քեզ նրման միջոտ սգավոր,
Ծո՛վ, դու մռայլ ու անհույս,
Ողբում է հար մենավոր:

1916

ԲԱՆՏԸ ԴԱՐԲԻՆ

Շոյնդ ու ջառաջ, որոտ ու թնդյուն,
Վիթխարի կայծեր,
Ծիրանի բոցեր...

Երկինքն ու երկիր պատել է արյուն:
Աշխարհը դարբնոց, և Բախտը դարբին,
Հսկա, անսասան, կուռ բազկով սալին
Կռանն է պարկում, հարված առ հարված,
Մահու եռանդով կույր Բախտը դարբին:
Եվ հրաբուխ քուրան՝ դժոխք բորբոքված
Ժայթքում է անվերջ գիշեր ու ցերեկ
Կըռելու ահեղ երկաթը հրաջեկ:

Եվ գնում գալիս
Սալին է տալիս

Բախտը յուր կռանն, հարվածն անտարբեր
Եվ ջախջախում է, և ստեղծագործում
Տիեզերական սալի վրա կյանքեր

279

Անհագ դարբնոցի հրեղեն ծոցում:
Ազգեր են մեռնում, և նորից ահա
Առնուս հարություն այլ ազգեր մեռած.
Կույր Բախտը դարբին կըրանը հսկա
Անխորտակելի: բազկովը բռնած
Չարկում է, պարկում,
Կյանքեր է կոփում:

Արյանը ողողված երկիր ու երկին,
Մարում են կյանքեր, վա՛յ տկարներին,—
Մահու հռանդով, հարված առ հարված,
Յուր մուրճն է պարկում կույր Բախտը դարբին:
1917

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր



(Պուշկինից)

Ո՛վ վարդ աղջիկ, գերի եմ ես,
Բայց կապանքից չեմ ամաչում.
Արքա-երգիչ սոխակն այսպես
Անցնում է կյանք դափնիներում
Հպարտ, չքնաղ վարդի մոտին
Գերության մեջ, սակայն անուշ,
Եվ յուր տաղերն երգում քնքուշ
Մութ, հեշտալի գիշերներին:
1880

ԱՆԱՎԱՐՏ ՊԱՏԿԵՐ

(Պուշկինից)

Այս ո՛ւմ խանդավառ միտքն է գուշակել,
Ըմբռնել գաղտնիքը գեղեցկության,
Ո՛ւմ արդյոք, երկի՛նք, վրձինն է դրոշմել
Այս ըսքանչելի գծեր երկնարժան:

Այդ դու ես, հանձար... Բայց խորտակեցին
Միրո տառապանք նորան. և անձայն
Աչքերը հառած յուր գործի վըրան՝
Հանգչում է արդեն բոցավառ հոգին...
1880

ՊՈՆՏԻՆ՝

(Պուշկինից)

Պոնտ, սիրույն դու անբոխի մի՛ տար գին —
Շո՛ւտ կըլոնն աղմկալից դրվատներ.
Ծաղր ու լուտանք՝ թող որ թափեն քո գլխին,
Այլ դու մընա՛ միշտ անխոռով, աներեր:

Արքա ես դու. ապրի՛ր մենակ: Քո ուղին
Գընա՛ վստահ, ուր որ տանն միտքդ ապատ.
Հասունացրու դու պտուղներն հարապատ
Վեհ խոհերիդ, վարձ մի՛ ուլիք քո գործին:

Վարձահատույց և դատավոր դու ինքդ ես.
Քո գործը դո՛ւ ամենից խիստ կըդատես:
Ինքդ գո՛հ ես , արվեստավո՛ր անաչառ:
Գո՛հ ես. խուժանն հայիոյն՝ թող քո վաստակ.
Ծաղրն բազինդ, ուր վառվում է քո կըրակ,
Եռոտանիդ դրոզվեցընն տղայաբար:

1883

(ԷԼԵԳԻԱ)

(Պուշկինից)

Անցած բերկրանքը անմիտ օրերի
Ինձ ծանր է որպես ըմպեյաց շոգի.
Բայց իբրև գինի, քանի հին, այնքան
Խիստ է հիշատակ անցյալ տխրության:
Տրտում է ուղիս: Կսկիծ ու տանջանք
Լոկ խոստանում է հեղհեղուկ իմ կյանք:

Բայց չեմ կամենում, ընկերներ՛ր, մեռնել,
Ես ապրիլ կամիմ, խորիիլ ու տանջվիլ.
Եվ գիտեմ, կյանքի վիշտ ու հոգսերում
Սպասում է ինձ և վայելչություն.

Քաղցրությամբ երբեմն հոգիս կըլցվի,
Արցունքովս մտքիս պտուղը կթրջվի:
Եվ գուցե տխուր իր արևմուտին
Տոլանա սերը մի ժպտով հետին:
1884



(Պուշկինից)

Ձեզ չեմ ավստսում, իմ գարնա՛ն տարիք,
Որ անցաք ունայն սիրո ցնորքով.
Ոչ ձե՛զ, գիշերվան վայելքնե՛ր գաղտիկ,
Որ երգել եմ ես հեշտաձայն սրնզով.

Ձե՛զ չեմ ավստսում, նենգո՛տ ընկերներ,
Պըսակ ու թասե՛ր անհոգ խրախճակի
Եվ ոչ ձե՛զ, մատաղ կույսե՛ր գեղանի.—
Մտքիս հետ ընկած՝ չունիմ կրոսանքներ:

Բայց ո՛ւր դուք արդյոք, հոգեվնայության,
Մատաղ հույսերի խաղաղ թուպենե՛ր.
Ո՛ւր է հուրն ու խանդ ոգևորության...
Ա՛խ, եկե՛ք կրկին, իմ գարնան օրեր:



(Պուշկինից)

Աղմկալից փոռոցում
Թե տաճարումն ես լինիմ .
Կամ խնջուլքի ժողովում,—
Իմ մտորմունքն ես ունիմ:

Ասում եմ ես, տարիներ
Կանցնեն, ու մեզ հավիտյան

Պիտի գրկե սև գիշեր—
Մեկինս էլ արդ մոտ է ժամ:

Կաղնի տեսնեմ մենավոր՝
Խորհում եմ ես, թե ինձ էլ
Կըթաղե այս ակտոր,
Ինչպես նախնայացս է թաղել:

Քնքուշ մանուկ գգվելիս՝
Ասում եմ, կա՛ց դու բարով,
Տեղըս ես քեզ եմ տալիս,
Ծլիս, ծաղկիս քաղցր օրով:

Եվ ամեն օր, ամեն ժամ
Մտածմունքս է անպակաս,
Աշխատում եմ իմանամ
Մահուս տարին վերահաս:

Եվ ո՛ր բախտն ինձ կը տա մահ —
Ճանապարհի՛ն թե կովում,
Թե՛ հովիտն է մերձակա
Իմ պաղ մարմնին ըսպասում:

Եվ անպզա թեպետ դիս
Մեկ է ուր էլ որ փտի,
Բայց հայրենի իմ հողիս
Կուլեի մոտ նա հանգչի:

Եվ դրան մոտ իմ շիրմի
Կյանքը մատաղ թող խաղա,
Եվ բուռությունն անհոգի
Միշտ էլ չքնաղ շողշողա:
1899

ԵՐԳ

(Բառի Կոռնուելից)

Թող երգը անուշ հնչե հեշտագին,
Ինչպես խոխոջը վրճիտ առվակի,
Թող հիշեցնե մարդկային ազգին
Սիրելի պատկերն անցած օրերի:

Վեհ ձայնը երգչի թող դնե վախճան
Մեր դառն սուգին, ստոր կրթերին,
Թող նորա երգը ազգասիրական
Ներշնչե աշխույժ, եռանդ մեր սրտին:

Ինչ մեկ հուլում է, թող այն ամենայն,—
Ե՛վ ծիծաղ, և՛ լաց, հանգիստ և՛ թախիծ,
Ե՛վ ուրախություն, և՛ վիշտը մարդկան,—
Թող մասն ունենան այն հպոր երգից:

Թող վարթեցնե նա միտքը քնեած,
Թուլլերին ուժ տա, քաջերին ոգի,
Եվ պարզևատրե որդոցն հայրենյաց
Փառքովը իրանց արդար գործերի:

1881

ԶԿՆՈՐՍ

(Գլոթեից)

Ջուրը վշվշում, ջուրն էր դիպանում,
Զկնորսը նորա նստած էր ափին,
Անխռով, հանդարտ կարթին էր նայում
Սսուրը քնի մեջ ընկղմած հոգին:
Եվ մինչդեռ կարթին նայում է նստած,
Ահա պատառվում, բացվում են ալիք,
Եվ դուրս է գալիս ջրիցը հուլված
Նորա առաջև մի կույս գեղեցիկ:

Եվ անուշ երգում, ասում է նորան:
«Ինչո՞ւ ես որսում իմ հպատակներին.
Խորամանկ խելքով մտե՛լ ես դարան,
Մատնում ես նոցա մահացու տոթին:
Բայց ի՞նչ երջանիկ, եթե իմանաս,
Ջրի խորքերումն ապրում են ձկներ,
Դու էլ ցած կիջնես, հենց ինչպես որ կաս,
Եվ սիրով, քաղցրիկ կանցնես քո օրեր:

Մի՞թե ոսկեշող արևն ու լուսին
Ծովի ցուրտ գրկումը չեն կովանում,
Եվ դեմքը նոցա ջրի երեսին
Ավելի չքնաղ չէ՞ պատկերանում:
Եվ պայծառ երկինք գրավո՞ւմ չէ քեզ,
Երբ վճիտ ջրումն է նա նկարված.
Եվ քո իսկ պատկերն, երբ այնտեղ նայես,
Քեզ չէ՞ հրապուրում դեպի ծոցն այլաց»:

Ջուրը վշվշում, ջուրն էր դիպանում,
Ոտները թրջում բոբիկ ձկնորսին.
Անուշ ցանկությամբ հոգին էր լցվում
Ասես այն սիրո հույսն էր առաջին:
Եվ կույսը նորան երգում էր, թովում,
Եվ ձկնորսը խեղճ իրանից գնաց.
Եվ կույսն էր քաշում, ինքն էլ հետևում,
Ահա՛ և անհետ ջրի տակ մնաց:

1881

ԴԱՇՏԻ ՎԱՐՂԸ

(Գրոթեից)

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ
Սիրուն վարդը դաշտի միջին.
Ուրախ-ուրախ ջուտ մոտեցավ:
Որ լավ նայե սիրուն վարդին:
Ա՛յ իմ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

286

Մանուկն առաց. Քեզ կքթաղեմ,
Ա՛յ իմ վարդիկ դաշտի միջին:
Վարդիկն առաց. Փշեր ունեմ,
Դու ձեռ մի՛ տալ՝ կարմիր վարդին:
Ա՛յ իմ վարդին, կարմիր վարդին.
Կարմիր վարդը դաշտի միջին:

Չար երեխան վարդը քաղեց,
Սիրուն վարդը դաշտի միջին.
Վարդը նորան խիստ ծակծկեց.
Բայց և գերի մընաց ձեռին:
Ա՛յ իմ վարդին, կարմիր վարդին.
Կարմիր վարդը դաշտի միջին:

1888



(Հայտեից)

Իմ արցունքից բուսնում են
Անուշաբույր շատ ծաղիկ,
Հառաչներըս դառնում են
Սոխակների դայլայլիկ:

Սիրի՛ր դու ինձ — քեզ պարզև
Տամ, իմ հոգյա՛կ, ծաղիկներ.
Պատուհանիդ առաջև
Անուշ երգեն սոխակներ:
1881



(Հայտեից)

Այս ի՞նչ երգ է հեշտագին
Թափանցում խորքն իմ հոգուն.
Հնչի՛ր, երգդ ու գարնանային,
Չսլփիկդ հասնե թող հեռուն:

287

Հնչի՛ր, հասի՛ր այն տնակ,
Ուր ծաղկունք են բողբոջում.
Այնտեղ կլինի իմ հոգյակ՝
Կըտաս նորան իմ ողջույն:
1908

ԿԱՐԱ

(Հայտեից)

Ամենայն օր իրիկվան դեմ
Չքնաղ դուստրը թագավորի:
Շատրվանի մոտ է գնում,
Որից ջուր է ցայտում վճիտ:

Մատաղ ըստրուկն ամենայն օր
Շատրվանի մոտն է լինում,
Որից ջուր է ցայտում վճիտ.
Ու թռչնում է նա օրեցօր:

Մի երեկո դիմեց նորան
Եվ ըջտապով կույսը ասաց.
«Ես անունըդ կուզեմ գիտնալ,
Քո հայրենիքն ու քո ծագումը»:

Եվ ստրուկն ասաց. «Մտնումե՞ղ է
Իմ անունը, Եմենցի եմ
Եվ սերված եմ Ասրա ցեղից,
Որոնք սիրուց մեռանում են»:
1908

ՆՈՐ ՏԱՐԻ

(Նեկրասովից)

Մաշվում է իմ կյանք, հալվում ամեց-ամ.
Տըկար է միտքըս, սառչում է արյուն...
Ես, մա՛յր — հայրենիք, կիջնեմ գերեզման՝
Չըտեսած քա՛ղցր քո ազատությունը...»

288

Բայց ես կուզեի — գեթ իմ օրիասրն
Դու ոտ կոխեիր հաստատ ճանապարհ,
Տանջանքից հետո դու քո առաջին
Տեսնեիր բացված քո օրը պայծառ:

Կուզեի գե՛թ այժմ հասցներ քամին
Հայրենի գյուղից մի ձայնիկ միայն,
Որ ինձ չըբերեր նոր բոթ ցավագին
Դառն արտասուքի, ծովացած արյան...
1882



(Հեռվեզից)

Կուզեի անհետ հեռանալ, կորչել,
Որպես ոսկեվառ շողն արշալույսի,
Որպես մի աստղիկ կուզեի հանգչել
Բարձր կամարու՜ք կապույտ երկնքի:

Որպես քաղցր երազ կուզեի անցնել,
Խանգարված տգեղ հոգեերիցն օրվան,
Կամ գիշերային ձայնի պես մեռնել,
Տեղ տալով խորին մի խաղաղության:

Եվ որպես ցողը ես շոգիանալ
Կուզեի հպոր արևի տապից.
Կուզեի դեպի երկինք բարձրանալ,
Որպես սրբապան կնդրուկ բուրվարից:

Եվ կը ցանկայի ինչպես ծուխ ցրվի,
Ինչպես օդումը բույր ծաղիկների.
Ողջ իմ էությանը բնավին ջնջվի
Կուզեի հանկարծ, առանց ցավերի:

Եվ կը ցանկայի... բայց ինչո՞ւ ցանկամ
Դյուրավ չէ գալիս մահը վերահաս,

289

Մինչ նորա գալը բաժին է մարդկան
Սրտամաշ ցավով տանջվի հանապապ:

Եվ ահա հետո հասնում է միայն
Բոլոր վշտերի տխուր փրկություն,
Եվ քեզ համար է լույս անվիշտ վախճան,
Քեզ համար, դու՛ մե՛ծ, անսիրտ բնություն:

1884

ԱՆԳՐԱԳԵՏ

(Սիրոկոմիկից)

Երբեք մեկին չեմ նախանձում ես աշխարհի երեսին,
Միայն, գրագե՛տ դուք պարոններ, նախանձում եմ ձեր բախտին:
Ա՛խ, գթացե՛ք գեղջուկ որբիս, մի լավություն միայն արե՛ք —
Տըվեք մի թերթ ինձ ձերնակ թուրթ, մի փետուրն գրիչ տվեք,
Եվ ինձ գրել սովորցրե՛ք, սովորցրե՛ք լա՛վ, շուտո՛վ,
Որ զրրիչս կայծակից էլ արագ թռչե գրելով.
Որ պատմելով թղթի վերա ես ձեզ ցույց տամ ամեն բան —
Մեր աշխատանք, մեր չարչարանքն՝ ու մեր խաչը վկայության...
Կը հայտնեի, ի՛նչ ցնորքներ, ի՛նչ մտքեր կան իմ գլխում,
Մի ողջ աշխարհ ցույց կտայի ես աննման պատկերում...
Բայց այժմ անհետ չքանում են բոլոր իմ քաղցր երազներ.
Ես անգրագետ, ես անուս եմ... Սովորցրե՛ք, պարոններ՛ր:
Կը գրեի ես առաջուց, ի՛նչ եմ տեսնում երազում...
Այս երազներն այնպես շքեղ, հրաշալի՛ են... Եվ դաշտում
Ահա գեղջուկ մատաղ աղջիկն հունձ է անում եռանդով.
Նորան հրեշտակն երկնքիցը ժպտում է վառ աչերով...
Երևի թե կարեկցո՛ւմ է նա հնձվորին... Եվ նորա՛ն
Արտուտիկը կամի սփոփել յուր երգովը քաղցրաձայն...
Կը գրեի, ինչպես ամառն արշալույսն է փայլփլում,
Եվ քարերին պարնըվելով կայտառ ջուրն է խոխոջում.
Ինչպե՛ս արտում ցորենի հետ պուլսը է անում մեղմ քամին
Եվ աղոթքի հրավիրում է փոքրիկ կանգը մեր ժամին.
Ես աղոթել կամենում եմ, բայց չգիտեմ աղոթքնե՛ր —
Ես անգրագետ, ես անուս եմ... Սովորցրե՛ք, պարոններ՛ր:
Ազնիվ գործ է՝ թե մարդ գրել յուր խոսքերը կարենա,

290

Բոլորն, ինչ որ մտածում է, բոլորն, ինչ որ գրուխը գա,
Գրչով պատմեմ այն ամենը, ինչ դիպել է յուր սրտում,
Ճշմարտություն միջոտ քարոպե, բարի գործի մեծություն.
Լավ է նույնպես, թ՞մ կարող է, գրչով կծու խոսքերին
Պատասխանեմ — սուսերի պես կհարվածե չարերին:
Ես շատ անգամ ծաղր եմ լսում, բայց իմ ուսլալ թշնամուն՝
Սիրոս այրվում է, պատասխանի չունիմ բնավ պորություն.
Եվ Կուր տեղը ես տանջվում եմ, և հուզվում եմ, և դողում,
Եվ միմիայն թղթի վրա անմիտ կերպով խափսպում.
Ինձ ծաղրում են, և անթուր կարմրում են իմ այտեր...
Ես անգրագետ, ես անուս եմ... Սովորցրե՛ք, պարոններ՛ր.
Շատ լավ բան է գիր իմանալ: Գրագետ է վաշխառուն.
Գրագետ են դատարանի ծառայողներն անկշտում.
Եռանդով էլ նոքա գրում են, նոցանն է դրախտն աշխարհի,
Իսկ այդ գրելն ի՛նչ փուլթ, որ խեղճ մարդու հոգին պիտ հանի...
Շուտո՛վ, շուտո՛վ, գրի՛չ տվեք, սովորցրե՛ք գործ ածել,
Կամիմ զրրել ազգիս համար, նորա համար աշխատել.
Եվ ես նորան կը պաշտպանեմ չարագործից, հիմարից,
Կարտագրեմ ավետարանն ես բոլորը ըսկպից...
Ա՛յ դու, սագ իմ ձերնակթևիկ, քեզ տվել եմ կերակուր,
Քեզ սիրել եմ — փոխարենը թևիցդ ինձ մի գրիչ տո՛ւր.
Սիրո՛ւն դու սագ, տո՛ւր, խնդրում եմ, ինձ թռչելու փուլց թներ,
Ուր ամենքը զըրագետ են, Սովորցրե՛ք, պարոններ՛ր:

1886

◆
(Գրեթադոմիկից)

Ցուրն ասողերը կապույտ երկնքում
Երգում են անուշ միասին խմբված,—
Եվ ըզգուշությամբ կամաց են երգում
Որ չպարթեցնեն երկիրը նիրհած.
Ա՛խ, ամբողջ օրը շրջող ոտներից,
Անվերջ աշխատող կուռ բազուկներից,
Ամուր բաբախող մարդկանց սրտերից
Խեղճ մայր-երկիրը սաստիկ է հոգեւած...
1886

291

ՄԱՍ ԲԱՐԵՎ

(Տեսնիսընից)

Պաղպաջուն առվա՛կ, սահի՛ր դեպի ծով,
Հանդարտ գըլորի՛ր այիքըղ վճիտ,
Էլ չեմ գալ երբեք խըռոված հոգով
Ես այցելության սիրուն ափերիդ:

Սահի՛ր մարգերով և հովիտներով,
Դարձի՛ր, սիրելի՛, հորդառատ մի գետ,
Էլ չես տեսնելու ինձ հուզված սրտով,—
Ո՛հ, մընա՛ս բարև, ընկե՛ր իմ, հավետ:

Վերադ խոնարհած կողբա ուռենին,
Կըլսվի այստեղ շրջունը բարդու,
Մեղուն կըճախրե քո կանաչ ափին,
Բայց դու ինձ երբեք էլ չես տեսնելու:

Ոսկեվառ շողեր գարնան արևի
Այիքներիդ հետ ուրախ կըխաղան,
Լուսինը քեզ հաշտ գուցե դեռ ժպտի,—
Բայց էլ չես տեսնիլ դու ինձ հավիտյան:
1887

ՊՈՏՏ

(Նաղստնից)

Թող քո երգում եռա հուրը բարկության,
Թող երգդ այրե հոգի անկեղծ արցունքով,
Թող արձագանք լինի ազնիվ ցանկության,
Ովևորե հայրենիքի սուրբ սիրով:
Նորա ամեն թող ձայնն առաջ մեզ կոչե,
Հույս ներշնչե անեղ մարտից ընկճվածին,
Անմահությամբ թող անկածին պսակե,
Նշավակե երկչոտությամբ փախչողին:

Ստության հետ և խավարի կոիվ մտած՝
Ճշմարտության՛ն, լուսո՛ համար մարտնչենք,—
Այն ժամանակ քո առաջին խոնարհած՝
«Դու պոետ ես», քեզ հրճվանքով մենք կասենք:
Թող երգդ հնչե, որպես վտակ կարկաչուն,
Որ սահում է մեղմ հորձանքով արծաթի,
Որպես աղբյուր եռան հույսեր, ցանկություն,
Եվ ուժ լավի և մի ծիծաղ կենդանի:
Թող մոռացվինք մատաղ ձայներ լսելով,
Թռչենք քեզ հետ երպանների այն աշխարհ,
Ուր չեն թափվում դառն արտասուք տանջանքով,
Ուր կա հանգիստ, գեղեցկություն սիրավառ,
Զվարճանանք՝ թողած ամեն վիշտ, հոգսեր,
Եվ մանկության անուրջներով մենք ապրենք,—
Եվ մենք կօրհնենք այն ժամանակ քո գործեր,
«Դու պոետ ես», քեզ հրճվանքով մենք կասենք:
1887



(Նաղստնից)

Ընկե՛ր իմ, եղբա՛յր, դու վաստակաբեկ եղբա՛յր իմ տանջված,
Ով որ էլ լինիս դու, մի՛ վիատիր,
Թող հեծե թշվառ, անարդարությամբ, չարիքով լցված
Դառն արտասուքով ողողված երկիր,
Թող որ խորտակված ոտնակոխ լինի քո սուրբ իդեալ,
Թող անմեղների արյունն հորդանա,—
Հավատա՛, եղբա՛յր, կըգա ժամանակ — կըկորչի Բաալ
Եվ նորից երկրին սե՛ր կըտիրանա:
Ո՛չ շղթաների դաժան բեռի տակ, ո՛չ փուշ պսակով
Եվ ո՛չ ծանր խաչ կորացած ուսին,—
Նա աշխարհ կըգա մի նոր կորությամբ և մի նոր փառքով,
Բախտի պայծառ ջահն անհողողող ձեռին:
Եվ էլ չի լինի աշխարհում արցունք, ոչ թշամություն,
Ոչ մոռցված շիրիմ և ոչ ըստրուկներ,
Ոչ կարոտություն, անլույս, մահառիթ սև կարոտություն,
Ոչ սուր, ոչ մահու խայտառակ սյուներ:

Գիտեմ, իմ ընկե՛ր, չէ մի պատիժ հույս, ոչ ցնորք վաղանցիկ
Միրո անձկալի գալուստը պայծառ.

Չորս կողմըդ նայի՛ր — չափապանց արդեն ճնշում է չարիք
Եվ խիստ է արդեն գիշերը խավար:

Տառապանքներից աշխարհը կընկճվի, և կըթուլանա
Նա անմիտ կռվից, արյան մեջ խեղդված,—

Եվ դեպի սերը, մեծ սերն անձնապոհ. աչքը կամբառնա,
Աչքը՝ վշտալի աղերսով լցված...

1887



(Գետեոֆիից)

Ես դուրս եմ գալիս դաշտը ամայի —
Չըկա մի ծաղիկ, վարդաբե նորան.
Չըկա և մի ուտ, որից սոխակի
Մեղեդին հնչեր քնքուշ, քաղցրաձայն:
Խավար է գիշեր, երկնակամարում
Չէ ցոլում ոչ մի լուսավառ աստղիկ —
Այսպես ծամանակ, ինչպե՛ս է լինում,
Որ միտս ես ընկնում, նազելի՛ աղջիկ:

Դու միտս ես ընկնում, և արեւայն բան
Փռնվում է այստեղ, պայծառ է գիշեր,
Եվ ճանապարհիս բացված են վարդեր,
Երգում է այնտեղ սոխակն աննման.
Առաջիս դաշան է բյուր ծաղիկներով,
Երկինքն էլ վառ է փայլուն աստղերով:

1888

ԵՐԳՉԻ ԱՆԵՅՈՐ:

(Ուլանդից)

Դարեր առաջ կար բարձրաբերձ պարիսպներով մի դղյակ —
Հոյակապ էր, փառքն հասել էր մինչև օվկիան կապուտակ.
Շուրջը փռված ծաղկապսակ անուշաբույք պարտեպներ,
Թարմ, զովաշունչ շառավառներ ցայտում էին վառ շիրտեր:

294

Եվ բազմախաղո արեւոնեղ եւտող գոռու պրքան հողաշատ
Բազմած էր յուր գտեի վերս մոռայ դեմքով ու գունատ.
Ամեն խորհուրդն արհավիրք էր, կատաղություն՝ ևն աչքերում.
Նորա ամեն խոսքը — կորո՛ւտտ, արյուն էր նա միշտ գրում:

Այս ամրոցը երկու առնիվ՝ երգիչ գնացին մի անգամ.
Մեկն արեւարդ, մին պատանի ոսկեգանգուր ու փառթամ.
Տավիղն ուսին, մի գեղեցիկ նծույզ հեծած ծերունին,
Նորա կողքին գնում էր առույզ ծաղկահաասակ պատանին:

Ծերունկն ասաց յուր ընկերին. «Պատրաստ եղի՛ր, իմ որդի՛րկ.
Մեր սրտառուչ տաղերն հիշի՛ր, երգի՛ր աչառտ, համարձակ.
Երգի՛ր և՛ վիշտ, և՛ խնդություն մատաղ ձայնով դու հպոր,
Գոռ արքայի քարե սիրտը պիտի շարժենք մենք այսօր»:

Արդեն շքեղ և սյունազարդ նոքա սրահումն են կանգնած.
Գահի վերա թագավորը և թագուհին են բազմած.
Նա սիգապանծ, ինչպես փայլը արյունավառ հյուսիսի,
Իսկ թագուհին քնքուշ՝ նման արուսայակին լուծալի:

Չարկեց ծերունկն ոգևորված նուրբ լարերին մատներով,
Ճոխ արձագանք տվին նոքա լիահնչյուն ձայներով.
Եվ գեղգեղեց տաղ երկնարժան չքնադատես պատանին,
Ինչպես համերգ ոգիների և խաձայն ծերունին:

Նոցա երգն է գարուն և սեր, երանավետ ոսկեդար,
Ապստություն, խոսք ճշմարիտ, արիության գործ արդար,
Եվ հեշտության ամեն վայելք, որ հուպում է սիրտ մարդկան
Եվ այն ամենն, որ կարող է մարդուն տալ տիպ վեհության:

Պալատական ասպետները ծաղու խոսքեր մոռացան,
Եվ անվեհեր զինվորները հպոր երգիցն հաղթվեցան.
Իսկ թագուհին՝ սիրտը շարժված, աչքին արցունք բերկրալույց,
Ահա հանեց ձգեց երգչին չքնաղ մի վարդ յուր կուրծքից:

«Գայթակղեցիք դուք իմ ապր. կամիք խել և իմ կի՛ն» —
Ահեղ գոչեց, դողաց մարմնով թագավորը մուկզին.

295

Չգեց սուսերն, օդում ցոլաց, մատաղ կուրծքը պատառեց,
Ոսկեհնչյուն երգերի տեղ կուրծքիցն արյուն դուրս ցայտեց:

Ասես մրրիկ իսկույն ցրվեց այն ունկնդիր ամբոխին.
Յուր վարպետի գրկումս հոգին փչեց դժբախտ պատանին.
Ծածկեց մարմինն նա թիկնոցով, նստացրեց երիվար,
Ամուր կապեց և ամրոցից նա հեռացավ վշտահար:

Եվ դուրս եկավ, կանգնեց բարձր դարպասի դեմ ծերունին
Եվ ձեռքն առավ տավիղն, ամեն տավիղներից մեծագին.
Ձարկեց նորան կճյա սյանը, փշուր-փշուր խորտակեց,
Դեպի ամրոցն ու պարտեպներ սոսկալի ձայն արձակեց:

«Վա՛յ քեզ, խրոխտ դու ապարանք. թող ոչ մի ձայն քաղցրության,
Լարի հնչյուն, երգ չլսվի քո հարկի տակ հավիտյան,
Այ ստրուկների երկչոտ քայլեր և հառաչանք, հեծություն,
Մինչ չար ոգին վրեժխնդրության քեզ դարձրեն սև աճյուն:

Վայ ձեզ, և դուք անուշաբույր, գարնանագեղ պարտեպներ.
Տեսեք ահա մանուկ երգչի դեմքին սառած տանջանքներ.
Թող սորա տեղ դուք թառամիք, աղբյուրներըդ ցամաքեն,
Գալ օրերին թող քար կտրած և անայի ձեզ տեսնեն:

Վա՛յ քեզ, նզո՛վքդ երգիչների, վայ քեզ, անա՛րգ մարդասպան
Արյունաբակ փառքի համար մարտըդ լինի թող ունայն.
Թող մոռացվի քո անունը մշտագիշեր խավարում,
Ինչպես մահվան վերջին հառաչք, սին ձայն, ցնդի՛ թող օդում»:

Ծերուկն ասաց, և երկինքը լսեց նորա պաղատանք.
Պարիսպները փոշի դարձած, կործանված է ապարանք.
Բարձր մի սյուն դեռ վկա է անցյալ ավուրց փառավոր.
Այն էլ շուտով պիտի լինի մի փլատակ սգավոր:

Չըկա բուրմուռնն այգիների, շուրջը միայն անապատ,
Չըկա վըտակ, սաղարթախիտ չըկա մի ծառ ստվերաջատ,
Եվ չէ հիշում մի տարեգիր կամ երգ անունն արքայի:—
Այսպես ահա կատարվեցավ անեծքն ահեղ ծեր երգչի:

ԱՆՈՒՆԸ

(Լեոպոլդից)

Սիրել եմ միշտ այս բըլրակ
Եվ այս տունկեր, որ իմ աչքից
Խլում են հեռու կամարն երկնից:
Երբ նայում եմ նստած մենակ
Այս ամենին, ես այն հեռուն
Եմ երպում, ուր լուսություն
Ու քաղցր հանգիստ սպասում են ինձ,
Եվ աներկյուղ, և անթախիծ:
Բայց երբ քամուց տերևների
Շրջունն է ինձ մեկ էլ հասնում,
Այն լուսությունն անխպելի
Մտքիս մեջ է պատկերանում:
Անհունի մեջ ես խորասույզ
Դարերն այնժամ բերում եմ միտ,
Հիշում եմ և խըռովահույզ
Ապրողներին հիմա անմիտ:
Եվ իմ հոգին անվախճանի
Ծոցումս հավվում է ընկղմած.
Պ՛հ, թե ինձ այս օվկիանի
Իրկն ընդուներ համատարած...

1889



(Լեոպոլդից)

Սիրո ցընորքնե՛ր, վսե՛մ երպներ...
Նոքա հոյակապ գործի են պատճառ.
Եվ գեղաժպիտ կուսի հրապույրներ
Տալիս են նոցա միշտ կյանք ծաղկավառ:

Բայց և նա բեռավ սեր չէ ճանաչում,
Ում սիրտը երկչոտ մնում է քընած,
Երբ ահեղ մորկից երկինքն է գոչում
Եվ դիպանում են ալիք կատաղած...

Երբ անպերի մեջ կորած լեռներին
Չարկում են ուժգին հըրեղեն շանթեր,
Միայն խանդավառ ապատ աչերին
Պատկերանում է ցընորք անվեհեր:

Ո՛վ կանայք, ով որ ստորոգոթյամբ
Ծունկ է խոնարհում չար բախտի առաջ,
Ով որ լռում է, ըստրուկ պագցմամբ,
Երբ հայրենիքի բաժինն է հառաջ,

Ով երկչոտությամբ փախչում է դաշտից,
Ուր որ պողպատի ցոլում են սբեր,
Եվ չուզե՞ս կրկվիլ անփառք հանգստից,—
Ո՛հ, նա չգիտե սիրել ձեզ, կույսե՛ր:

Երբ նա ձեզ սրտ գա՛ աղերս շրթունքին,
Հեռացե՛ք դուք լուռ արիամարհանքով.
Թուլամորթ, ըստոր, երկչոտ ստրուկներին
Դուք մի՛ պսակե՛ք սիրո պսակով:

1889

ԳԵՐԻ ԱՐԱԳԻԼԸ

(Արանիից)

Գերի արագիլն, ինչպես բանտարկված,
Բարձր պարսպի հետոն է փակված.
Կուպեր նա թռչել ու անցնել ծովեր,
Բայց, ափսո՛ս, խեղճի խուկած են թևեր:

Եվ ըզգում է նա յուր անպոր վիճակ
Ու պահում զըլուխը թևերի տակ.
Կուպեր մտիկ տալ, բայց, ավա՛ղ, ինչի՞ն —
Բարձր պատերն են կանգնած առաջին:

Կարող է տեսնել նա երկնակամար
Յուր սրտ, նեղ բանտից, բայց ինչո՞ւ համար...
Այնտեղ թռչում է ապատ կախավան,
Ինքը՝ մատնված դատրն գերության:

298

Եվ նա անհաճե՛ր սպասում է վշտով,
Որ մեջքին բուսնի՞ն թևերը շուտով.
Ո՛հ, այն ժամանակ չար գերությունից
Կըթոչե՛ս ապատ աշխարհ լուսալից:

Ահա ցրտաշունչ աշունն է փշում.
Արագիլները տաք տեղ են թռչում.
Թշվառ, ինչպես ստրուկ, նա անհամարձակ,
Վշտագին ու որբ, շրջում է մենակ:

Լսում է հանկարծ վերից կոընչյուն.
Այդ նորան ծանոթ կոունկների է ջուն...
Ականջ է դրնում չարատեսնջ գերին
Ապատ երամի ուրախ երգերին:

Կամենում է նա նորից փորձ փորձել,
Խուկած թևերը բարձր տարածել.
Բայց այլոց նման, ավա՛ղ, նա ապատ
Չէ կարող սլանալ երկիրն հարապատ:

Անբա՛խտ արագիլ, խե՛ղճ կապանավոր,
Է, այն հաղթական դու չես թևավոր.
Թե՛ս փորանան էլ թևերդ ուժգին,
Չո՛հ պիտի լինին անգուր դանակին:

1889

ԵՐԱՇԽԻՔ

(Դամոն և Ֆինտիաս)

(Շիլերից)

Դիոնիսիոս բռնավորի մոտ գընաց
Դամոնն՝ առած հանդերձի տակ մի դաշույն.
Նրան կապեցին թիկնապահներն իսկույն:
«Ասա՛, վերադ ինչո՞ւ էիր սուր պահած»: —
Եվ նա մռայլ պատասխանեց կատաղած.
— Ուզում էի քեզից քաղաքն ապատել:
«Նաչի վերա՛» կարող ես լոկ այդ քավել»:

299

Դամոնն ասաց. «Պատրաստ եմ ես մեռնելու.
Կյանքիս խնայել ես չեմ խնդրում քեզանից.
Սակայն թե շնորհ պիտի անես երբեք ինձ,
Գեթ երեք օր ժամանակ եմ հայցելու,
Գընամ քրոջս յուր փեսային հանձնելու:
Բարեկամիս թողնում եմ քեզ գրավական,—
Թե չըզդառնամ իմ տեղ սպանի՛ր դու նորան»:

Եվ գոռ արքան մի նենգ ժպիտ երեսին
Փռք-ինչ խորհեց, ապա դարձավ ու ասաց:
«Ես քեզ կըտամ երեք օրն այդ քո խնդրած,
Բայց պայմանի եթե օրերըն անցնին,
Եվ ետ եկած դեռ չըլինիս դու կրկին,
Նա, իմացի՛ր, քո փոխարեն կըմեռնի,
Իսկ քո պատիժն՝ այնուհետև կըներվի»:

Եվ նա եկավ յուր մտերմին. «Ինձ արքան
Հըրամայեց, որ իմ մահվամբ խաչի վրա
Քավեմ հանդուգն այն խորհուրդն որ հղացա.
Բայց շընորհեց երեք ավուր ինձ պայման,
Որ կատարեմ քրոջս հանդեսն հարսնեկան:
Արդ դու մնա՛ որպես պատանդ արքային,
Մինչև ես գամ և վերջ տամ քո կապանքին»:

Հավատարիմ ընկերն նորան յուր գրկեց
Եվ գնաց, հանձնեց բռնակալին նա իրան.
Մյուսն այնտեղից իսկույն բռնեց յուր ճամփան:
Եվ հենց երրորդ արշալույսը կարմրեց
Շտապով քրոջն յուր փեսային հասցըրեց
Ու շուտ ընկավ, տագնապ սրտում, նա ուղի,
Որ պայմանով որոշված ժամը չանցնի:

Տեղատարափ ահա անձրև երկնքից,
Եվ թափվում են սարից ջրեր հորդառատ,
Մըռնչում են վըտակներ ու հեղեղատ:
Նա ցուպ ձեռին հասավ գետը փրփրալից,—
Հորձանքն ահեղ պոկեց կամուրջն ափերից,
Եվ ալիքներն որոտընդոստ փշրեցին
Մեծ ճայթուկով կամարները կամրջին:

Եվ հուսահատ կանգնած է նա գետափին.
Հեռո՛ւ, հեռո՛ւ աչք է ձըզում անձկալից,
Եվ օգնության ձիչեր թոչում են կուրծքից:
Բայց նավակներն անշարժ անքույթ եվերքին,
Եվ նայում է նա ցանկալի ցամաքին.
Նավավարներն անցնելու սիրտ չեն անում —
Ալիքները կատաղում են, ծովանում:

Գետեվերքին կանգնած կոծում է մենակ,
Աղաչում է Ձևսին ձեռները մեկնած.
«Մ՛վ, սանձիր դու ալիքները մոլեգնած.
Ժամերն անցնում, ճաշին մոտ է արեգակ —
Եվ եթե նա մտնի, ու ես դեռ քաղաք
Չըժամանեմ՝ տըրված խոստմանս համաձայն,
Բարեկամիս էլ հույս չըկա փըրկության»:

Սակայն հեղեղն հորդանում է ամեհի,
Կոհակն ահեղ պարնըվում է կոհակին,
Ժամերն անցնում, հաջորդում են մեկ մյուսին՝
Երկյուղից նա սիրտ է առնում ու հոգի,
Եվ փըրփրադեպ հոսանքի մեջ գետակի
Նետվում, պատռում է հորձանքն այն մոլեգին.
Աստվածներից մեկը զըթաց խեղճուկին:

Հտուավ մյուս փին, հառաջ զընաց այնտեղից.
Շընորհակալ իրեն փրկող աստուծուն.
Բայց ահա տե՛ս, նորա հանդեպն են ելնում
Ավապակներ խիտ անտառի մուլթ խորքից
Եվ կտրում են նորա ճամփովն, աչքներից
Մահ է թափում, և սպանուալից լախտերով
Ուղևորի գապում են գնացքն հապճեպով:

«Ի՛նչ եք ուլում» սարսափահար գոչեց նա,
«Ա՛հ, ես չունիմ ոչինչ բացի իմ կյանքից,
Այն էլ արքան պիտի առնե ինձանից»:
Եվ խըլում է մեկի ձեռից լախտն ահա.
«Ի՛ սեր մտերմիս, ո՛հ, զըթացեք ինձ վերա»:

Եվ երեքին գորում է նա գետին
Հըզոր բազկով և փախցընում մյուսներին:

Կիպիչ արևն արդեն խանձում է երկիր, —
Եվ ուժասպառ, ճանապարհից ջարդըված.
Կանգ է առնում ու կանչում է նա աստված.
«Ո՛հ դո՛ւ, որ ինձ չար ձեռներից փրկեցիր
Եվ կատաղի այն հեղեղիցն հանեցիր,
Ո՛հ դու և այժմ ինձ մի մատնիլ կորստյան.
Բարեկամիս պատճառ չլինիմ թող մահվան»

Բայց ականջ դի՛ր, ահա բխում է վըտակ
Այնտեղ մոտիկ, մեղմ կարկաչով արծաթի,
Եվ նա կանգնում, լսում է ձայնն անձկալի.
Եվ տե՛ս, ժայռից խոխոջելով ու արագ
Թափվում է ջինջ մի կենսատու աղբերակ.
Եվ նա ուրախ խոնարհում է դեպի ցած,
Չովացընում է յուր մարմինը թալկացած:

Արեգակը սաղարթների ետևից
Խիտ ծառերի հսկա սուվերներն է սփռում
Մարերի վրա կանաչափայլ, վառվռուն:
Երկու ճամփորդ գնում են նորա առաջից,
Եվ ըջտապով կամի անցնել նոցանից
Ու լըսում է, որ խոսում են յուր առաջ,
«Այժմ արդեն նորան պիտի հանեն խաչ»:

Եվ երկյուղից արագ փոխում է քայլեր
Եվ անհանգիստ հառաչում է տագնապով.
Լուսավորված վերջալուսի շողերով
Սիրակուսան ցուցնում է յուր կատարներ.
Ֆիլոսոփատոս, որ Դամոնի տընպահն էր
Հավատարիմ, ահա ելավ նրա դիմաց
Եվ յուր տիրոջը ճանաչեց սարսափած:

«Դարձի՛ր դու ետ. չես ապատիլ ընկերիդ,
Հոգ տա՛ր ուրեմն դու քո՛ անձի փրկության.

Նա հիմա իսկ գոհ կըլինի չար մահվան:
Ահն մի ժամ նա սայատում էր քո դարձիդ,
Եվ հավատով վատահ էր միշտ խոստմունքիդ.
Եվ անըկուն նորա այն սերտ հավատքին
Բռնակալի ծաղրը չհաղթեց դառնագին»:

«Եթե արդեն ուշ է և էլ չեմ հասնի,
Որ ես նորան իբր ապատիչ մոտենամ,
Կերթամ, որ գեթ մահով նորան միանամ:
Եվ արյունուշտ բռնավորը չըպարծի,
Թե դժո՞ղ եմ ընկերական ես ուխտի.
Արդ նա երկո՛ւ կյանքի դահիճ թող դառնա
Ուխտանըվեր լոկ թող սիրո հավատա»:

Արեգակը մայր է մտնում, և ահա
Խաչը արդեն նշմարում է նա կանգնած,
Նորա շուրջն էլ խուռն ամբոխը բերան բաց —
Բարեկամին բարձրացնում են խաչի վրա,
Պատահում է խառնակը նա շրջակա
Եվ որոտում: «Ի՛նձ, ո՛վ դահիճ, դու կախի՛ր.
Այստեղ եմ ես, իմ պատանդիս արձակի՛ր»:

Եվ բազմությունն ապշեց, մընաց հիացած.
Եվ գրկախառն ընկերներն են համբուրվում
Ու վշտից ու բերկրությունից արտասվում:
Արցունքներից և ամբոխի աչքն է թաց,
Արջային էլ անցքն հայտնեցին չըլված.
Մի մարդկային զգացմունք նորան համակեց,—
Յուր մտ գալու նոցա հրաման արձակեց:

Եվ սքանչացած արքան նայում երկուսին
Ու ասում է. «Հաղթությունը դուք տարաք,
Դուք՝ որ հիմա իմ սրտին էլ տիրացաք.
Հավատարմությունն ահա չէ՛ ցընորք սին,
Եվ թե հավան կլինիք իմ աղետին,
Չեր մեջ նաև ինձ քարեկամ դուք առե՛ք —
Երկու էիք, այժմ փնինք մենք երեք»:

1895

ՏԵՆՉԱՆՔ

(Շիլլերից)

Ա՛խ, երանի այս միգապատ
Խոր անդունդից ահռելի
Դուրս թռչելու ես մի ապատ
Ինձ ճանապարհ գտնեի:
Մշտականաչ սիրուն զգեստով
Ահա այնտեղ բըլուրներ.
Ա՛խ, թե հուժկու ես թևերով
Սըլանայի դեպի վեր:

Մի երկնային անդորրության
Լսում եմ այդ նըվազներ,
Քաղցր բուրմունք անուշ գարնան
Բերում են ինձ մեղմ հովեր:
Սաղարթի մեջ գեղաժպիտ
Ոսկի պտուղներ շողշողուն,
Եվ ծաղիկներ մշտափթիթ
Իմ հոգին են կախարդում:

Ո՛հ, ի՛նչ չքնաղ պիտի լինի
Անվերջ լուսո այն աշխարհ,
Եվ ինչ անուշ ու սքանչելի
Այնտեղ օդը կենարար:
Բայց հեղեղատն իմ առաջին
Մոնչում է պայրույթով.
Նորա ալիքը մոլեգին
Պատում են ինձ սարսափով:

Ահա՛ նավակն այստեղ կանգնած,
Բայց, ա՛խ չըկա նավավար...
Հառա՛ջ անահ ու անկասկած —
Նա շունչ կառնե քեզ համար:
Լոկ հավատա դու աներկմիտ,

Քա՛ջ դու, սիրտ առ ու հոգի —
Հրաշքո՛վ կբացվի քո առաջիդ
Սիրուն աշխարհն հրաշալի:
1895

ՊՈԼԻԿՐԱՏԵՍԻ ՄԱՏԱՆԻՆ

(Շիլլերից)

Տանիքի վերա նա բարձր կանգնած
Նայում էր, հոգին հրճվանքով լցված,
Իրեն հպատակ շքեղ Սամոսին:
«Հնապա՛նդ է ինձ այս ամենը, տե՛ս.
Խոստովանի՛ր, որ երջանիկ եմ ես», —
Նա Եգիպտոսի ասաց արքային:

«Վայելում ես դու երկնից շընորհներ —
Ահա վաղեմի քո բախտակիցներ
Քո գայիսոնի ուժիցն ընկճվեցան:
Բայց կա վրիժառու մեկը տակավին.
Եվ մինչ կենդանի է քո թշնամին,
Երջանիկ քեզ չի՛ ասիլ իմ բերան»:

Եվ դեռ չէր արքան յուր խոսքն ավարտած,
Ահա Միլետից հրեշտակն ուղարկված
Եկավ, ավետիք բերեց իշխանին.
«Թող, տե՛ր, բորբոքվի Կոհերի ճենճեր,
Եվ դալարագեղ զվարթ դափնիներ
Հյուսվին փառավոր պըսակ քո գլխին»:

«Տյուգահար արդեն ընկավ թշնամիդ.
Հաղորդում է այս լուրն ուրախառիթ
Պոլիդորն ազնիվ, Կորավարդը քաջ»:
Ասում է, բանում նա մի սն անոթ, —
Եվ արյունաթաթախ գըլուխը ծանոթ
Սոսկալով տեսան նրանք իրենց առաջ»:

Եվ սարսուռ զգաց, նահանջեց արքան:
«Բայց մի՛ հավատար դու երջանկության», —
Մտահոգ ասաց յուր բարեկամին,
«Հարուստ նավերիդ — այդ մի՛ մոռանա —
Բախտըն է յողում նենզ այլաց վերա.
Կըփշրեն՝ նոցա փոթորիկն ուժգին»:

Եվ հապիվ թե նա յուր խոսքն ավարտեց,
Մի ուրախ գանչյուն նորաե ընդհատեց,
Որ ծովեկերքից հասավ թնդալով.
Ծանրացած գանձով օտար աշխարհի
Դատնում են ահա երկիրն հայրենի
Նավերն՝ իբր անտառ խիտ-խիտ կայմերով:

Ապշեցավ մրնաց ու ասաց արքան.
«Հաջողում է քեզ այսօր ամեն բան.
Բայց ըզգուշացիր հեղհեղուկ բախտից —
Ահա կրետացվոց գնդեր պինավառ
Պատրաստում են արդ վրտանզ քեզ համար.
Արդեն հեռու չեն նոքա այս ափից»:

Եվ խոսքը բերնից դեռ նոր դուրս եկած՝
Տեսան նավերի դրոշները պարպած.
«Հաղթություն», — հապար ձայներ գոչեցին —
«Այն թշնամու չըկան արհավիրք.
Կրետացիներին ցրվեց փոթորիկ,
Եվ հասավ վախճան գոռ պատերազմին»:

Սարսափով լսեց հյուրն այս ավետիք.
«Իրավ, պիտի քեզ ասեն երջանիկ:
Վախենում են սակայն ես կյանքիդ համար.
Աստվածոց նախանձն ահռելի է միշտ,
Եվ ուրախություն ոչ երբեք անվիշտ
Հողածնի բաժին տեսել է աշխարհ:

«Հաջողվում էր միշտ ի՛նձ ևս ամեն բան.
Բոլոր գործերուս ի՛նձ միշտ անբաժան»:

Հովանավոր էր ջընորին երկնային:
Սակայն ունեի ժառանգ սիրասուն —
Ես տեսա նորա մահն անագորույն.
Պարտքըս հատուցի իմ ճակատագրին:

«Արդ ապատ լինել թե կամիս ցավից,
Աղաչի՛ր անմահ դու աստվածներից
Շնորհել և վիշտ ընկեր քո բախտին.
Ես դեռ չեմ տեսել, որ մեկի վերան
Միշտ լիաձեռն մինչև յուր վախճանն
Աստվածներն ուրախ պարզև թափեին:

«Եվ թե չէ լսում աստված քո խնդիր,
Դու բարեկամիդ խորատին միտ դի՛ր,
Ինքըդ քո գլխին կոչի՛ր դու փորձանք,
Եվ գանձերիդ մեջ եթե պատվական,
Սրտիդ սիրելի դու ունիս մի բան,
Չգի՛ր, թո՛ղ տանի այս ծովի հորձանք»:

Եվ Պոլիկրատես տոսկալով ասաց.
«Իմ այս մատանին կղզում մթեթված
Բոլոր գանձերիցս է ինձ սիրելի.
Կամիմ այս կոհել ես աստվածներին —
Թերևս հաշտ աչքով նայեն իմ բախտին»:
Եվ ծովն է նետում գոհարն յուր մատի:

Դեռ նոր էր բացվել հաջորդ առավուտ,
Մի ձկնորս մտավ թագավորի մոտ,
Եվ ուրախություն փայլում էր դեմքին.
Տե՛ր, այս ձուկն այսօր ընկավ իմ ուռկան,
Չեմ բռնել դեռ մինն ես սորա նրման.
Այս ընծա բերի քեզ, իմ իշխանին»:

Եվ երբ խոհարարն ձուկը կտորեց,
Թագավորի մոտ պաշած նա շտապեց
Եվ խիստ պարմանքով գոչեց ու ասաց.
«Տե՛ր, ահա տե՛ս քո սիրած մատանին,

Գտա նոր բերած ես ձկան փորին: ...
Ո՛հ, ի՛նչ անսահման բախտ է քեզ շնորհված»:

Եվ հյուրը դարձավ, սրտումն ահ ու դող.
«Էլ այստեղ», ասաց. — «մընայ չեմ կարող.
Այլևս բարեկամ դու չես ինձ համար —
Կորուստդ են խնդրում աստվածներն երկնից.
Փախչում եմ՝ քեզ հետ մեռնելու վտանգից»:
Եվ շուտ նավ նստավ, ընկավ ճանապարհ:
1895



(Ցելսից)

Մի՛ ավստսիր անցած օրերիդ,
Էլ մի՛ ցանկար դու դարձը նոցա.
Չըդառնանա թող վշտից հոգիդ,
Թե վաղեմի բախտըդ միտըդ գա:

Մի՛ ավստսիր, ետ չես բերելու
Ինչ որ եղել, գնացել է արդեն.
Շուտո՛վ, շուտո՛վ, քո ճամփան հեռու
Ոտ դի՛ր, ընկե՛ր, կապմ ու սպառապեն:

Տեսնո՛ւմ ես ծովն առաջիդ հուզված.
Օն, շուտ հառա՛ջ, նավակդ է սպասում...
Վա՛յ և նոցա, որ կյանքին անցած
Վհատ հոգով նզովք են ասում:

Իսկ դու, ընկե՛ր, ապատ, համարձակ
Դու ծովն ընկի՛ր ու մի վախենա.
Եվ եթե քեզ ըսպառնան անհազ
Կատղած ալիք, կովի՛ր ու հուսա՛:

Եվ հավատա՛ — երկիրն ավետյաց
Նոցա: մի օր քեզ պիտի հանեն.
Ապառուջյունն ու սերդ երպպած
Այնտեղ բաժին քեզ պիտի լինեն:

Ինչ որ գարնանդ անցած օրերին
Կորցրել ես դու, տառապյալ եղբայր,
Բոլորն այնտեղ կըզտնես կրկին,
Իմ հուսահատ ընկեր վշտահար:

Մի՛ ավստսիր ուրեմն անցյալիդ,
Էլ մի ցանկար դու դարձը նորա.
Չըդառնանա թող վշտից հոգիդ,
Թե վաղեմի բախտըդ միտըդ գա:
1908



(Հյուզոյից)

Ուժգին հողմերը արձակ դաշտերում
Կանաչ ծառերի վարդերն են ցրվում,
Գոռում են, սուլում դառնաշունչ վայրագ
Եվ խաղացնում են բաց ծովում նավակ
Եվ սարսափ բերում մենակ ճամփորդին:
Դույնպես պատանի, անողոք բախտին,
Ճնշում է կյանքը մեզ խիստ հարվածով,
Խաղում է մեզ հետ անտարբեր ոգով,
Դույնպես ծաղրում է մեզ անողոքաբար:
Պատանի՛, դու որ գիտես վիշտ մարդկան,
Պատանի՛, սիրտըդ բաց կարեկցաբար
Զգալու անելու կարիք դառնության,
Տե՛ս ծանր պիտույքն համայն աշխարհի,
Տես քո շուրջն ինչ ցավ, հառաչանք, կական...
Եվ տխուր, մռայլ այս ժամանակում
Կարո՞ղ ես չանսալ օտարի վշտին,
Բեռն համարել կարեկից զգացում,
Անձուատուր լինել միայն քո շահին:
Ո՛չ, պատվիրանը Հիսուսի պահած
Ա՛ռ դու երգեցիկ քնար քաղցրուղի.
Փոքրոգի և կույր երկյուղը թողած
Ե՛լ փարատելու կարիքն աշխարհի:
Արհամարհելով անեծքը մարդկան

Եվ անուշադիր նոցա սպանակից,
Խիստ պատժիր ձեռքը չարագործության,
Խեղճի վրա թափիր հեղեղը արտասվաց:
Անկեղծ ջատագով կլինի՛ս ճշմարտին.
Խայտառակ դարուս խարապան անխնա,
Կլինիս սոսկալի բոլոր չարերին,
Անշուշտ կըլինես դու... մ ա թ դ, հաւատա՛:
1883

◆
(Լերմոստովից)

Ես դուքս եմ գալիս ճամփու վրան.
Փայլում է հեռու միգապատ ուղին,
Խաղաղ գիշեր է և նիրհած բնություն,
Աստղերն են հսկում կրուցելով լռիք:

Նայում է երկինք շքեղ հրաշալի
Եվ կապտապզեստ երկիրն է հանգչում,
Բայց ինչո՞ւ է այս վիշտը իմ սրտի.
Սպասում եմ մի բան, թե՛ կորցրածս ողորմա՛:

Կյանքից հուսալու էլ ոչինչ չունիմ
Եվ չեմ աստուում օրերս անցյալ,
Ես ապատություն, ես հանգիստ կամիմ,
Ա՛խ, ես կուզեի մոռացվիլ, ընտանա՛:

Բայց ոչ մահատիպ ցուրտ շիրմի մի քան.
Կուզեի մանեղ այնտեղ հավիտյան,—
Ոչ, որ իմ կուրծքը չտար պարություն
Միշտ երիտասարդ կյանքի քաղցրություն,

Որ գիշեր ցերեկ ինձ անուշ մի ձայն
Սեր երգեր, զգվեր իմ լսողություն,
Որ կանաչաթիտ կաղնին իմ վրան.
Խոնարհած հաներ մի աշխարհ ջրյուն:
1884

ԵՐԱՁ

(Միցկևիչից)

Գուցե նախանձուտ խիստ ճակատագիր
Եվ մեր օրերին դըրել է սահման,
Բայց ոչ մի խոսքով դու այդ մի՛ հիշիր,
Երբ վերա հասնի հրաժեշտի մեր ժամ:

Վերջին ժամերը վերջին գիշերվան
Աննկատելի սիրով թող անցնեն...
Եվ միայն վերջը տխուր տեսության
Դու ինձ թույն կըտաս — սիրով կընդունեն:

Եվ վերջին անգամ քաղցր քուն կլինեմ
Իմ շրթունքները քունին սեղմելով.
Եվ վերջին անգամ թույնը կըխմեմ,—
Թույնը համբույրի,— աչքիդ նայելով:

Եվ օրեր կանցնին, գուցե տարիներ —
Կըզա բոլորի ժամն ելնելու —
Ընկերիդ համար դու այս կամարներ
Կըթողնես, կիջնես ինձ պարթեցնելու:

Քեզ այն ժամանակ նորից կըգրկեմ.
Եվ թո ջերմ գրկում առաջվա նման.
Վառ սիրով աչքիդ կնայեմ, կասեմ,
Թե նիրհել էի քեզ հետ առ վայրկյան:
1885

ՊՈՒՏ

(Ա. Շերեթեյից)

Մերթ հիմար եմ, մերթ ինաստուն,
Մերթ ոչ արքեմ, ոչ այն,
Դրության շեփոր եմ,
Ոչ երկրինս եմ, ոչ երկնքին:

Մի հալածիր, եթե տեսնես հիմար,
Մի՛ հիանար իմ իմաստության վրա,
Ուրիշն է ինձ վրա իշխում,
Իմ մտքին, իմ պզգամունքին:

Այս սիրտը հայելի է,
Բնության պարզն է.
Ցույց է տալիս
Միայն իրեն նայող դեմքը:

Լեզուս էլ այն է ասում,
Ինչ որ ականջս է լսում
Աչքս է տեսնում
Կամ միտքս չափում կշռում:

Այն չեմ, ինչ որ կարծում եք,
Այն էլ չեմ, ինչ ուրիշներն են կարծում.
Միջակ մարդ եմ հասարակ,
Մերթ երկրինն եմ, մերթ երկնքինը:

ՆԱՄԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ

(Պ. Տիչինայից)

Կոմունիստ աղջիկ եմ — շորըս «ուրիշ»,
Ու մապերս էլ խուկած:—
Չե՞ք ամաչում, որ այս օրերում
Երգում եք դուք զեղ ու արև:

Գրում եմ ձեզ — սիրտս այսպես ուզեց:
Ասացեք ինձ,
Ո՛ւմն են պետք արդյոք ձեր այս հիվանդ
Սուանսն ու սոնետ գարնան մասին:

Ժողովրդի՛ն թե՛ քաղցածներին —
Ողորմելի է իմ աչքում
Նա, որ պրոլետարիատին
Տրիպետ է հրամցնում:

Մնաք բարով առայժմ: Հավան չեք՝
Պատանեցեք այս նամակ.
Բայց էլի,— լո՛ւմ եք,— ուժ եք դուք
Եվ կոմունիստ շուտ կդառնաք:



(Պ. Տիչինայից)

Մտնե՛նում եր գարունը:— Ասի նրան, գարո՛ւն ես:
Մալի թներով աղավնու պե՛ս՝
Անկյուններում շրթունքի
Ծիծաղավետ մի բան ճախրելով
Խորասուլպեց հոգու մեջ...

Հասնում էին արտերը:— Ասի նրան, իմ ոսկի՛:
Հոնքերը կիտեց նա բարկացած:
Եվ շուտ եկավ ու զքնաց:
Միայն երկար նա ետ էր նայում —
Կարծես կանչում էր. արի:

Սկսվեցին մշուշներ:— Ասացի, դու չե՛ս սիրում:
Կանգ առավ: Նայեց: Ու ասաց ինձ.
Ահա աշունն էլ եկավ:
Ուրեմն սիրե՛նք,— ասա: Դե՛, շուտ,
Շողաց ծիծաղ պերթ դաշույն:

Չլու՛նով ծածկվեց անտառը:— Է՛, մնաս բարով, ասացի՛:
Հանկարծ սրտագին ու ջերմ փայլով
Մի բան ցայտեց աչքերից...
Մալի թներով աղավնու պես
Սեղմվեց նա իմ շուրթերին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ

ԾԱՏՈՒՐՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՇՆԱՆ ՎԵՐՁԸ

Փըչեց ցրտաշունչ քամին հյուսիսից
Եվ այլանդակեց բընության պատկեր.
Մերկացան այգիքն իրանց վարդերից,
Մերկացան սար, ձոր, անտառ ու դաշտեր:

Երկինքը տխո՛ւր, մռա՛յլ, ամպամած՝
Էլ չի շողշողում լուսափայլ արև.
Երկրի երեսը մշուշով պատած՝
Երկնքից անվերջ թափվում է անձրև:

Լռել է սոխակ: Պարտիպի խորքում
Ո՛հ, էլ չի լսվում քաղցր դայլայլիկ.
Լռել է սարյակ, չվել է ծիծառ.
Էլ չի գեղգեղում սիրուն դեղձանիկ:

Կեռասն ու ծիրան, կարմրաթուշ խնձոր
Էլ չեն վարդարում պարտեպի ծառեր,
Այժըմ նոցա տեղ մերկ ճղանց վերա
Քամուց խշշում են դեղնած տերևներ:

Տխուր նստել է ն այգեպանը
Յուր մութ ու խոնավ. ցուրտ կացարանում,
Է՛հ, էլ ի՞նչ սրտով շրջի նա այգին,
Երբ մերկություն է նորա մեջ տիրում:

Ավերակ դաշտում, ամայի արտում
Արդեն դադրել են հոգս ու աշխատանք.

Չի շարժվում արոթ, լուռ է սերմնացան,
Դաշտային կյանքի կորել են բերկրանք:

Փըչում է քամին, փըչում կատաղած,
Չմռան գալուստը գուժում աշխարհին.
Նայում են շուրջը — սո՛ւգ, ամայություն,
Ողբում է երկինք, ողբում է գետին...
1886, 5 նոյեմբերի

ՍՈՆԵՏ

Թո՛ղ քեզ աշխարհը այս ունայնասեր
Ծաղրե կուրորեն, նազելի՛ ընկեր,
Որ դու քո շքեղ այդ փարթամ կյանքում
Միայն իմ անվարդ երգն են դու սիրում:

Թո՛ղ սերն անարգող մարդիկ անպա
Քեզ կոչեն «անփորձ, անմիտ երեխա»,
Եվ մատաղ սըրտիդ թախիծն ու հրճվանք
Համարեն հիվանդ հոգու պառանցանք:

Անվերջ չէ փայլը շրջանող ոսկու—
Վաղ-ուշ սև ժանգն է նորան պատելու,
Բայց անշահ սերը, որպես վառ արև,
Պայծառ կըշողա անվերջ, հարատև:

Եվ քո անունը, մանո՛ւկ աննման,
Իմ պարզ երգերում կապրի հավիտյան:
1886, 3 դեկտեմբերի

ՉՄԵՌԱՅԻՆ ԳԻՇԵՐ

Սպիտակ սավանով ծածկվել է գետին,
Դառնաշունչ քամին փչում է կատաղած,
Նայում են վերև— չի փայլում լուսին.
Մառախուղով է երկինքը պատած:

Նայում եմ շուրջըս — վշտալի՛ պատկեր.
Ամեն ինչ ճնշված ձմռան ճանկերում,
Տնքում, հեծում է և խուլ սրմունջներ
Անվերջ հնչում են իմ ականջներում...

Մերթ ես լսում եմ մի դառն հեծեծանք,
Մերթ խորին հառաչ չարատանջ սրտի...
Մերթ իմ ականջին պարսվում են արագ
Լաց, կոծի ձայներ անմեղ զոհերի...

Ճնշում է սիրտս... Եվ ահա՛ հանկարծ
Ինձ պաշարում են դառնալից մտքեր...
Եվ ի՛նչ եմ տեսնում աչքիս նկարված,
Օ՛, տե՛ր իմ, որքա՛ն տխուր պատկերներ...

Ահա՛ մերկանդամ, հարստահարված
Մի ծեր մուրացկան՝ զուրկ օթևանից,
Ծանր տնքում է ձյունի մեջ թաղված,
Եվ աղի արցունք թափում աչքերից:

Ահա՛ մի այլ տեղ. մի խուլ անկյունում
Կիսամերկ որբը խեղճ, անտիրակա՛ն,
Ցրտից փետացած «վա՛յ մա՛յր» է կանչում
Եվ դողում, որպես տերևը աշնան:

Ահա՛ գետնափոր, մուռ կացարանում,
Ուր օդն է խոնավ, սառը, մահաշունչ,
Քաղցած ու անտեր հեծում է մահճում
Մայրը որդոց հետ հիվա՛նդ, կիսաշո՛ւնջ...

Եվ չկա անկյուն, ուր հանգիստ տիրեր,
Ամեն տեղ տանջա՛նք, ամեն տեղ սո՛ւգ, լա՛ց,
Ամեն տեղ անզուրթ աշխարհի զոհեր,
Չար մարդկությունից ճնշված, հալածված...

1887, 2 փետրվարի

ԶԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ

1

Քո սիրովն եմ միայն շնչում,
Ա՛յգ իմ խղճուկ, տառապյալ,
Եվ քեզ արյան ահեղ դաշտում
Ես պատրաստ եմ հոգիս տալ:

Դու ես փառքը քաջ զինվորիս,
Փա՛ռք ու պարծա՛նք ինձ համար
Օ՛, առանց քեզ կյանքը աչքիս
Ե՛վ մռայլ է, և՛ խավար:

Այն օրից, երբ թոթով լեզվով
Ես սուրբ անունդ հնչեցի,
Անտեր փառքիդ, մորըս ուխտով,
Ես չերմ պաշտպան գրովեցի:

Այն օրից, ո՛վ ազգ՝ իմ թշվառ,
Քո գերության կուռ շղթան
Դարձավ կապանք և՛ ինձ համար,
Ցավ ու տանջանք անսահման...

Եվ ճնշում է հոգիս անհաղթ
Այդ կապանքը ստրկական.
Նա կոչում է ինձ դեպի դաշտ
Դաշտ բոցերի և արյան...

Քո սիրովն եմ միայն շնչում,
Ա՛յգ իմ խղճուկ, տառապյալ
Եվ քեզ կովի ահեղ դաշտում
Ես պատրաստ եմ հոգիս տալ...

1887, 14 մարտի

Շողա՛, շողշողա՛, պողպատե իմ սուր,
 Իմ անգին ընկեր.
 Հալածված ազգիս դու խաղաղ կյանք տուր,
 Եվ պայծառ օրեր...

Հերի՞ք է որքան քեզ, իմ մտերի՛մ,
 Սև ծանգը պատեց.
 Որքան թշնամին — ազգիս ռիսերիմ
 Քո ուժը ծաղրեց...

Թո՛ղ չար ոտիւը քո ծայրով խոցված
 Տապալվի գետին.
 Թո՛ղ փայլե պրսակ՝ իմ արյամբ գընված
 Ազգիս ճակատին...

Շողա՛, շողշողա՛, պողպատե իմ սուր,
 Ընկե՛ր հարապատ.
 Դու ըստրուկ ազգիս նոր ուժ ու կյանք տուր
 Եվ օրեր ապատ...

1890, 23 օգոստոսի

ՀԱՍԱՐԱԿԱՑ ՄՇԱԿԻՆ

Թե քո կրծքում բաբախում է
 Հոգի անկեղծ, անկաշառ,
 Եվ քո սիրտը միշտ ձգտում է
 Դեպի բարին ու արդար —
 Չո՛ւր է հուսալ, գործի՛չ ապնիվ,
 Այս աշխարհից անկեղծ վարձ.
 Դու չես գտնիլ հարգանք, պատիվ
 Եվ ոչ հանգիստ քո խնդրած:

Թե կոչված ես դու կյանքի մեջ
 Մի նոր շավիղ հարթելու.

Շավիղ դեպի լույսը անշեջ,
 Դեպի արև կենսատու —
 Դու մի՛ հուսալ, չարքաշ մշա՛կ,
 Սուրբ վաստակիդ հատուցում.
 Մարդկանց աչքում ծաղր է — ծանակ
 Ամեն մի վեհ պգացմունք...

Բայց թե քո մեջ չըկա անկեղծ
 Սեր դեպի մի վեճ գործ.
 Ավերիչ ես, որպես մի ցեց.
 Թունավորող — որպես օձ:
 Թե պատրաստ ես դու նենգ խոսքով
 Պաշտպան կանգնել բըռնության.
 Մերձավորիդ փոս փորելով՝
 Մատնել նորան դառն անկման...

Հուսա՛, ո՛վ մարդ, և լիահույս
 Դու քեզ խնդրիր դափնիներ.
 Դարուս ոգին անտարակույս
 Կարդարացնե՛ քո հույսեր...
 Կը վայելես դու փառք, հոչակ,
 Սև գործերիդ դըրվատում.
 Եվ իբր հաղթող — կը կրես պսակ
 Դու այս խարդախ աշխարհում...

1887, 6 օգոստոսի

ՁԵՅԹՈՒՆՆԵՐ ՀՐԴԵԿԸ

1887 թ.

(Հատված)

... Ահա՛ նա, առյուծ, հերոս վեյթունցին
 Անհաղթ զավակը ապատ բըռնության.
 Ձեռքում հըրացան, սուսերը մեջքին՝
 Կանգնած է առջև: Նայեցե՛ք նորան —
 Որպիսի՛ հսկա և պարթև հասակ,

Որպիսի՛ ուժեղ, երկր քաղուկներ,
Թիկունքը ամուր, կուրծքը լայնարձակ —
Ահա՛ քաջության կենդանի պատկեր.
Ահա՛ հայ հերոս, որի քաջ հոգին
Վառված է հըրով վեհ ազատության,
Եվ որի առջև ոտիս թշնամին
Դողում է, որպես տերևը աշնան:

Նա ահռելի է... Բայց, աճա՛ղ, այսօր
Մի ինչ-որ ծանրք, արտամաջ թախիժ՝
Խեղդած հսկայի ձայնը ահավոր՝
Արցունք է քանում նորա աչքերից...
Արցո՛ւնք... ո՛հ հերոս, ես չեմ հավատում,
Մի՞թե ողբում է, իրավ, թո հոգին.
Պատմի՛ր, ի՞նչ վիշտ է թո սիրտը կթռում,
Այդ ի՞նչ սև ամպ է թո վարթ ղեմքին...
Հերոսը լուռ է... բայց ահա՛ հանկարծ
Ընդհատվում է այդ խորին լռություն,
Եվ ես լսում եմ արցունքից խեղդված
Քաջի մրմունջը. «Այրվո՛ւմ է Ձեյթուն...»

Այրվում է Ձեյթուն... ողբալի՛ պատկեր,
Նայեցե՛ք ահա բոցը կատաղի
Լափում է անխնա և դարձնում ավեր
Անառիկ վայրը հայ հերոսների...
Այրվում է Ձեյթուն... օ՛, ծա՛նըր հարված.
Սարսափ է տիրել ամբողջ Տավրոսին.
Ողբում են հայրեր՝ ծուխի մեջ խեղդված,
Ողբում են մայրեր՝ որդիքը զըրկին.
Այրվում է Ձեյթուն... օգնեցե՛ք, հայե՛ր,
Դա՛ոն է ճգնաժամ, տխո՛ւր է վայրկյան...
Ո՛հ, մեր հարապատ եղբայրք ու քույրեր
Անտուն, անտեր են... հասե՛ք օգնության...»

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՍՄԲԱՏ ԸԱՀԱՁԻՉՑԱՆԻՆ

(25-ամյա հորեկյանի առթիվ) 5

Եթե մի վերին, անհաղթ կորություն
Ներշնչեր թո մեջ սիրտ դյուցապանական.
Հալածեիր դու անարգ բռնություն
Եվ անտեր ազգիդ կարգվեիր իշխան,—
Մի՛թե դու ես, որպես նենգ Վասակ,
Խեղճ ազգըդ պետք է տայիր ոտքի տակ...

Եթե կույր բախտը քեզ և՛ս ժպտեր,
Դառնայիր դու հայ կրեսոս մեծատուն,
Անթիվ գանձերիդ աշխարհ նախանձեր,
Եվ ամենուրեք թնդար թո անուն,—
Մի՛թե դու ես պետք է շուռ գայիր
Եվ աղքա՛տ, թշվա՛ռ ազգըդ ատեիր...

Բայց ո՛չ... ո՛վ ազգիս քաղցրախոս երգի
Դու մի պարզ էակ ծնար այս աշխարհ.
Դու ծնար պոետ — սիրո քարուպիչ,
Դու ծնար ազգիդ անկեղծ սիրահար:
Եվ հնչեց քընարդ պատ, համարձակ.
Նա ոգևորեց մեր սիրտն ու հոգին.
Եվ ահա՛ այսօր հարատև քեզ էյանք
Բարեմաղթում է թո ազգի որդին:
[1888]

ՄՈՒՍԱ

Դարձյալ նո՛ր երապ և նո՛ր ցնորքներ...
Ահա հրճվում է իմ մատաղ հոգին.
Շաապի՛ր, ո՛վ Մուսա, թո սըրբանվեր
Հանքույրը դրոշմել երգչիս շրթունքին:

Շաապի՛ր... ժղպիտըդ այրող, կախարդիչ
Թո՛ղ վառն սիրտըդ հըրով սրբապան,

Թո՛ղ ոգի շնչե հայացքդ դյուրիչ.
Ես կամիմ երգել հրաշքներ գարնան...

Թո՛ղ որպես անուշ պեփյուռ քաղցրաշունչ,
Քո թովիչ ձայնը հնչե ականջիս
Ե՛վ հուստ տաղեր, և՛ սիրտ մրմունջ,
Ես կամիմ երգել տենչանքը սրտիս:

Ես կամիմ երգել անվերջ քաղցրություն
Մի նոր, ոսկեհույս և խաղաղ կյանքի.
Ես կամիմ երգել սիրտ սրբություն
Եվ վսեմ փայլը անկեղծ վաստակի:

Ես կամիմ երգել, երգել հարատև,
Որպես թռչունը ապատ եթերում.
Օ՛, շտապի՛ր, Մուսա՛, թո՛ի՛ր սրաթև.
Քանի երազը չի ցնդել օդում...

1888, 9 փետրվարի

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՉՈՔ

(Իմ վաղամեռ ընկ. < Բարաջանյանի հիշատակին)

Ավա՛ղ, դու մեռար, թանկագին ընկե՛ր,
Բայց մեռար, որպես մի կոհ չարատանջ.
Ո՛հ, ինչո՛ւ խաբված՝ դու սիրանվեր,
Բացիր քո սիրտը ամենքի առաջ,

Ինչո՛ւ մանկական անկեղծ հավատով
Դու ձեռք պարպեցիր դավաճաններին,
Եվ եղբայրական անձնապոհ սրտով
Համբույր դրոշմեցիր չար շրթունքներին...

Ինչո՛ւ չարանենգ խաբեբայության
Դու կոհ բերեցիր քո սուրբ խորհուրդներ...
Եվ քու մարդկանց կեղծ մտերմության
Դու ընծայեցիր և՛ հավատ, և՛ սեր:

Մի՛թե ծանոթ չէր քեզ այս բիրտ աշխարհ,
Այս անվերջ ծովը դառնությունների.
Ուր ապատ միտքը, ապատ գաղափար,—
Ո՛ղջը կոհված է պապիր կրքերի...

Ուր ստրկությունը, որպես կուռ շղթա,
Խեղդում է և՛ սիրտ, և՛ վեհ ձգտումներ,
Ուր սև նենգության թույնը անխընա
Մարդկային կյանքը դարձնում է ավեր:

Ուր չկա անկեղծ ո՛չ մտերմություն,
Ո՛չ բուռըն ձգտում անձնագոհության,
Ուր անարգված է սուրբ ճշմարտություն,
Եվ փառքը շիջած առաքինության...

1888, 25 մարտի

ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ

I

Սքանչելի՛ պատկեր: Կանաչ պարտիպուս
Ո՛հ, ինչ ոգելից շարժումն է տիրում,
Ամեն ինչ ծաղկած, ամեն ինչ փթթած,
Նոր կյանք է շնչում: Եվ ես ներշնչված
Անխոս դիտում եմ այդ կախարդական
Կենդանությունը գեղապարզ գարնան:
Ահա՛ փրչում է պեփյուռ հովասուն,
Երգում է սոխակ, և նրա պգայուն,
Սիրալից ձայնը, կարծես թե մազնիս,
Դեպ ինքն է քարշում միտքս ու հոգիս...
Բայց միայն ես չեմ ականապիշ այդպես

Լսում տխրակին:— Ո՛չ, ամբողջ պարտեմ
Կախարդված նորա երգից ոգեշունչ,
Լսում է նորան, լսում անմոռունչ...

II

Ահա ժպտում է և՛ ծաղիկների
Վսեմ թագուհին — վարդը նապելի,
Եվ նորա դեմքին չքնաղ, սիրալիր
Կարծես կարողում եմ. «Պատանի՛, նայի՛ր,
Այն իմ ժրպիտն է, ժրպիտ կուռական
Ոգի ներշնչել երգչին բընության.
Այն իմ հայացքն է՝ անարա՛տ, պայծառ,
Որին նա վառված՝ ձոնում է քընար»:
Նայում եմ շուրջըս — ա՛ջ, ձա՛խ, ե՛տ, առա՛ջ
ձոճում են ծառեր, ծփում է կանաչ.
Եվ մանիշակը հեկ, կապուտաչիկ
Ժպտում է թաքուն: Բացվել է հասմիկ:
Բացվել են դալար ծաղկալից թփեր
Եվ շուրջ տարածել հովասուն սուվեր:

III

Անվե՛րջ տեսարան... Առաջ եմ գընում,
Եվ որքան առաջ, նույնքան իմ սրտում
Բոցավառվում են սրբապան կայծեր...
Ես աղոթում եմ... և հոգույս լարեր
Ապատ հնչելով՝ մեծ բարերարին
Փառաբանում են երգով սրտագին...
Բայց ահա ինձ հետ և՛ օդալաց
Երգում են թռչունք: Նայեցե՛ք նորանց,
Տեսեք որպիսի՛ անխաղաղախ սիրով
Եվ քաղցրահնչուն մեղեդիներով
Նույնպես օրհնում են աթաղչի անուն.
Եվ երկնքիցը հավետ վառվորուն
Լուսո աղբյուրը փռելով շողեր,
Ոսկեպսոճում է այդ դյուրեջ պատկեր:

IV

Հրճվում է հոգիս... Բայց, ավա՛ղ, Իանկարձ
Տխրության անպեր իրար կուտակված՝
Ծածկում են աչքիցս այդ անպատմելի
Սրբապան պատկեր — պարզևն արարչի,
Ծանր պզացմունք է պաշարում հոգիս,
Այլ պատկերներ են նկարվում աչքիս...
Մինչդեռ բընության լայնարձակ գրկում
Փոխադարձ սուրբ սեր և կյանք է եռում,
Սարդկային կյանքը... օ՛, արարի՛չ տեր,
Որպիսի՛ տխուր, դառն հակապատկեր...
Բռնություն, կապա՛նք, ո՛խ դժոխային
ձնշում, խեղդում են կյանքը մարդկային...
Եվ ո՛ր է անկյուն այս չար աշխարհում,
Ուր թույլն, անպորը չի հարստահարվում...
1888, 5 ապրիլ

(Օր. Սոփիա Դ.-ին)

Սիրավատ տխական յուր անուշ երգով
Սեր էր ներշնչում դեռաբույս վարդին.
Սիրահար երգիչն յուր անկեղծ քնարով
Սեր էր նվիրում մասադիաս կուսին:

Եկավ վառ գարուն — և վարդը ծաղկեց,
Նորա ջերմ սիրով հագեցավ տխակ.
Անցա՛ն տարիներ... և կույսը փթթեց,
Բայց երգչի սերը մընաց անպլտակ...
1888, 15 ապրիլ

ՍԻՐՈ ՎԻՇՏԵ

Որպես վառ կոկոն քաղցրաբույր վարդի,
Նոր փթթում էիր կյանքի ծաղկոցում,
Երբ հեկ հայացքով շնչեց ինձ հոգի
Եվ սիրո կայծը վառվեց իմ կրթքում:

Եվ այդ րուպեից ես ջերմ, հուսալի
Քանի՛ անկեղծ երգ քեզ նվիրեցի.
Ո՛հ, քանի՛ անգամ, մանուկ սիրելի.
Ձերմ արտասուքով կուրծքդ թացեցի...

Բայց երբ քեզ ժպտեց պայծառ արջալույս,
Նոր գարնան արև դու ողջունեցիր.
Ավա՛ղ, խեղճ երգչիս... խորտակվեց իմ հույս...
Դու մաքուր սերըս ծաղրի մատնեցիր...
1888, 30 մայիսի

ՈՐԲԵՐ

Մի՛ լար, քո՛ւյր իմ, դառն արցունքով
Եղբորդ սիրտը մի՛ այրիլ,
Մեր խղճուկ մոր դու լաց սուգով
Նորից կյանք չես պարզելի:

Անգուր մահը նորան անդարձ
Խլեց մեզնից հավիտյան,
Եվ մեզ սիրող մորից զրկված՝
Թողեց անտեր, անպաշտպան:

Բայց դու մի՛ լար... Քո՛ւյր իմ անգին,
Հիշի՛ր մեր մոր այն խըրատ՝
Որ նա մահվան տխուր ժամին
Մեզ կըտակեց, իբր ավանդ:

«Սիրե՛ք միմյանց, — նա մեզ ասաց —
Անվերջ սիրով, ի՛մ որդիք,
Սիրե՛ք անկեղծ ու անձնուրաց,
Որ միշտ լինեք երջանիկ»:

Մի՛ լար, քո՛ւյր իմ... այսուհետև
Թո՛ղ այդ սերը կյանքի մեջ
Լինի մեզ մայր, թիկունք ու թև.
Նա մեր ցավին կըտա վերջ...

1888, 4 օգոստոսի

ԻՄ ՈՒՆՏԸ

Քանի դեռ սրտունս վառվում է կըրակ
Անկեղծ, սրբապան ոգևորության,
Եվ քանի ձայնըս ապատ, համարձակ
Դեռ չի խպացրել սև գրողվը մահվան.
Քանի դեռ հոգիս պահում է յուր մեջ
Լիառատ պաշար արնիվ կրքերի...
Եվ քանի սիրույս ցընորքը անշեջ
Դեռ լի աղբյուր է վառ երակների.—

Ես պիտի երգեմ և շատագուցեմ
Անաչառ մարդոց մեծաշուք գործեր.
Ես պիտի երգեմ և փառաբանեմ
Սիրո քաղցրություն և կույսի պատկեր.
Ես պիտի երգեմ անկաշառ ձայնով,
Սուրբ ճշմարտության դրոշակը ձեռքիս.
Ես պիտի երգեմ... թեկուզ այդ երգով
Հալածանք միայն վաստակեմ անձիս...

Թո՛ղ տգիտության թանձր խավարում
Խարխափողների խուռըն բավություն,
Սպառնալով դրոշիս սուսկտի անկում,
Ճգնե խորտակել նորա վեհություն.
Թո՛ղ ստրկահոգին՝ կրքից կուրացած,
Նախանձ ու սև թույն թափե իմ գլխին.
Թո՛ղ բռնավորը գոռա կատաղած.
«Մա՛հ այդ անպատկառ, չնչին մժղուկին...»

Հըզոր է ուխտըս, հըզո՛ր իմ հավատ,
Ինձ չէ սարսեցնում կյանքի փոթորիկ.
Ճակատըս պայծառ, սիրտըս անվիա՛տ—
Ես ձեզ խղճում եմ, փոքրոզի՛ մարդիկ...
Փրփրացե՛ք անվերջ, գոռացե՛ք ուժգին,
Թո՛ղ օղ գորդեն ձեր ճիչ, աղաղակ.
Ես չեմ վրդովվում, վե՛հ է իմ հոգին,
Եվ անընկճելի հոգույս նպատակ...

1888, 11 դեկտեմբերի

ԱՆՋԱՏՄԱՆ ԺԱՄ

Տո՛ւր ինձ թո՛ւ ձեռքը, ո՛վ կույս նապելի,
Թող վերջին անգամ սեղմեմ ես նորան
Իմ մատաղ կըրծքին, ուր անջնջելի
Դրոշմված է պատկերդ չքնաղ, կուսական:

Թող վերջին անգամ քեզ հետ միասին
Վայելեմ սիրո անհուն քաղցրություն,
Եվ ջերմ արցունքով քեզ, ընկե՛ր անգին,
Վկայեմ սըրտիս վառ մտերմություն:

Եվ սիրանվեր համբույրն անուշիկ
Թո՛ղ վերջին անգամ անջատան ժամում
Սրբապան ուխտի դըրոշմն կընիք
Մեր սիրաբորբոք մատաղ սրտերում:
1888, 15 փետրվարի

ԱՌԱՔՅԱԼ

Խոսի՛ր, առաջալ վե՛հ ճշմարտության,
Քանի չեն փակվել թո սուրբ շրթունքներ.
Անարգի՛ր «եսը» գոռոպ մարդկության,
Հարվածի՛ր անխնա նորա չար գործքեր...

Թո՛ղ նա կատաղի, որպես փոթորիկ,
Կարկուտ ու հեղեղ թափե թո վերան,
Դու այդ հաւասրի՛ր մի անպոր ալիք,
Եվ ապատ քայլե՛ թո փշոտ ճամփան...

Մարտնչի՛ր անվախ, որպես քաջ պինվոր,
Անկաշառ խոսքի դրոշակը ձեռքում.
Եվ մի՛ վիատիր, թե դու էլ մի օր
Պիտ ընկնես կյանքի գոռ պատերապում:

Այո՛, դու կընկնես — և թո անջուռն դին
Մայր-երկրի կրծքում փռի կըգառնա,

Բայց թո վե՛հ քարոպ, թո հայարտ հոգին
Հավիտյան կապրեն աշխարհիս վերա:

Եվ անվերջ դարեր թո հեզոր բարբառ
Կը հնչվի ապատ, ահեղ թնդյունով.
Նա կըխորտակե մահաշունչ խավար,
Մեզ անջեջ լուսո տաճար կանգնելով...
1889, 1 փետրվարի

ԱՌԱՎՈՏՅԱՆ ԵՐԳ

Ե՛վ այսօր փայլեց առավոտս ուրախ,
Ես ողջունեցի ցարնան արշալույս.
Չեռք առա ջընար՝ երգելու անվախ
Քաղցր վեղմունքը սիրահար հոգուս:

Եվ ինձ յուր անջեջ, դյուրիչ հայացքով
Նորից փաղաքջեց կենսատու արև.
Սլացավ պեփյուռն ականջիս մոտով
Եվ ես լսեցի. «Բա՛րև քեզ, բա՛րև...»

Եվ թոչունների անթիվ երամներ
Ճախրելով շուրջըս՝ ինձ ավետեցին
Նորից քաղցըր լույս, քաղցըր երապներ,
Եվ պայծառ վիճակ իմ մատաղ կյանքին:

Հրճվիր, դու ապատ, սիրտ իմ սիրավառ,
Վայելի՛ր կյանքի բուռն քաղցրություն.
Հրճվի՛ր, քանի քեզ ժպտում են ապշառ
Ե՛վ անամպ երկինք, և ճոխ բընություն...

Անվերջ չէ գարուն... Կըգա ցուրտ ձմեռ,
Կըթոշնի վարդը, կըլոփ առիակ.
Եվ այնուհետև մեա՛ք բարյավ և՛ անր,
Ե՛վ անվերջ զգված ցընորք ու աննշանք...

1889, 5 փետրվարի
Մոսկվա

ԴԱՐՈՒՄ ԶԱՎԱԿԸ

Ծնվեց նա ի Կուր, ապրեց անօգուտ,
Թշնամի դարձավ սուրբ ճշմարտության,
Պաշտեց նա խավար, խոսեցավ միշտ սուտ,
Խեղդելով յուր մեջ խղճի արդար ձայն:

Ի՞նչ է բարություն, խընամք, գութ, փրկանք,
Սեր դեպի աղքատն — այդ նա չըզփտեր.
Նորա չար սիրտը պզու՛մ էր հրճվանք,
Տեսնելիս տանջվող բյուր անմեղ Կոհեր...

Եվ կնքեց նա յուր կյանքը երկրավոր,
Ամբարշտության դրոշմը ճակատին.
Նա մեռավ որպես խարդախ, նենգավոր,
Որպես հալածիչ ակնիմն ու բարին...

Բայց մի ամբողջ ապգ հոգով ստրկացած
Նորին կրկնիծով սգաց այդ վախճան.
Եվ դարուս ոգով իսպառ Կուրացած,
Նվիրեց նորան փառաշուք արձան...

1889, 18 փետրվարի

ՍՈՆԵՏԻՆ

Ո՛ւրում ես դու, սիրուն սոխա՛կ,
Տեսնել եղեմ ծաղկավառ,
Հնչել վարդի բույրն անուշակ —
Թո՛հի՛ր դեպի հայ աշխարհ:

Ուրո՛ւմ ես դու հնչել անվախ
Երզըդ անկեղծ ու ապատ,
Երգել սիրո ժամեր խաղաղ —
Թո՛հի՛ր դեպի Այրարատ:

Այնտեղ պայծա՛ռ, այնտեղ անո՛ւշ
Քեզ կըծպտի ճոխ գարուն.

Այնտեղ վարդի ծոցում քնքուշ
Դու կըզտես սեր անհուն:

Այնտեղ երկինքն է կապուտակ,
Պայծառ արև ու աստղեր.
Այնտեղ ծիծաղ, ժրպիտ, բերկրանք,
Այնտեղ կյանքն է անվերջ սեր:

Թո՛հի՛ր, սոխա՛կ, դու հարապատ
Երգիչ սիրո պզգման.
Թո՛ղ բիրտ երկրում ագռավն ապառ
Հնչե սիրով յուր դաղան...

1889, 20 մարտի
Մոսկվա

ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ ԵՐԳԸ

Ա՛խ, թե երկինք գեթ մի վայրկյան
Լսեր կրծքիս հառաչանք,
Փայլեր ինձ սուրբ ապատության
Վառ, կենսատու արեգակ.

Ա՛խ, եթե ես կարենայի
Որպես արծիվ անարգել
Գեթ մի րոպե ապատ կյանքի
Ապատ օդում սավառնել. —

Որպիսի՛ ջերմ, լի փափագով՝
Կարոտ պայծառ երկնքի՝
Կը թռչեի ես խնդալով
Դեպ հայրենիքս անձկալի:

Դեպ այն երկիր նվիրական,
Ուր սահեցան անխորով
Չքնաղ օրերն իմ մանկության
Լի դրախտային սուրբ սիրով:

Դեպ այն երկիր երջանկալից,
Ուր մայրիկըս նապելի
Յուր ջերմ գրկում պարզենց ինձ
Ե՛վ կյանք, և՛ սեր, և՛ հոգի:

Ուր առաջին ես կգացի
Ե՛վ սիրո վիշտ, և՛ հրճվանք.
Ուր ես անհագ ճաշակեցի
Կյանքի վայելք ու զգվանք...

Ա՛խ, հայրենիք, երկիր՝ չքնաղ,
Ե՛րբ պետք է իմ խեղճ հոգին
Հանգչի անդորր, հանգչի խաղաղ
Քո կենսաբույր վարդ-կրծքին...

1889, 1 ապրիլի

ԵՐԳ ԵՎ ՄԵՏԱՂ

Երգիչը քեզ երգ նվիրեց,
Մեծատունը — յուր ոսկին.
Երգիչը քեզ «կյանք» անվանեց,
Մեծատունը — «սիրուն կին»...

«Տո՛ւր ինձ ձեռքըդ» — հարուստն ասաց —
«Իմ ողջ գանձըս քեզ պարզև».
Իսկ երգիչը սիրուց տանջված՝
Միայն ողբաց քո առջև...

Բայց դու, կամե՛նք փարթամ կյանքի.
Երգչի երգը մերժեցիր,
Ե՛վ քո սիրտը ծանկ-մետաղի
Խավար փայլին կոհեցիր...
1889, 8 ապրիլի

ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

Աքանջելի զարնան այս քա՛ղցր ժամին,
Երբ բընությունը չքնաղ հարսի պես,
Դձնված, կարդարված, ժպիտը դենքին,
Կարծես, հարսանյաց առնում է հանդես.
Ե՛վ լուսո աղբյուր — արևը պայծառ
Անամպ երկնքից անուշ ժպտելով,
Առատ ցողում է շիթեր ոսկեվառ,
Այդ ճոխ հանդիսին վսեմ փայլ տալով.
Ե՛վ իմ չորս բոլոր բուռըն հըրճվանք
Եռում է կյանքը բընության ծոցում.
Տեսնում եմ մարդիկ երջանիկ, անհոգ,
Երգ ու գինիով զարուն են օրինում...
Այդ քաղցր ժամին, հայրենիք անգի՛ն,
Ինձ պաշարում է մի այլ կգացում.
Անհագ տենչանքով իմ մատաղ հոգին
Դեպի կենսատու քո ծոցն է թռչում:
Ե՛վ թուլեական շքեղ երպաներ
Իսկույն գալիս են ինձ այցելություն —
Ահա՛ տեսնում եմ քո կանաչ դաշտեր,
Այգիք ծաղկավետ, աղբյուրք կարկաչուն...
Ես քո գրկումն եմ... երկիր՝ անուշիկ,
Ե՛վ ոգեշնչված քո սերն եմ երգում...
Բայց ո՛հ, ցնդում են երպաներ գողտրիկ,
Ե՛վ նորից ինձ քո կարոտն է տանջում...

1889, 1 մայիսի
Մոսկվա

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Նա չէր նախանձում ո՛չ խշիանական
Մեծապանծ անվան,
Ո՛չ կարոտում էր հպարտ հարուստի
Շլացնող փառքի:
Նա չէր փափագում հպոր հաղթանակ,
Դափնիք ու պսակ.

Ո՛չ երպարում էր գովեստ դրդող,
Արձան ու կոթող:

Ցրվել թշվառի տանջված ճակատից
Դառնության թախիծ.

Եվ կանգնել պաշտպան յուր անմե՛ղ, ընկճվա՛ծ
Եղբոր իրավանց —

Այս է տենչալի նորա ջերմ փափագ,
Հոգվո նպատակ.

Եվ գոհված նա յուր ուխտին անսասան,
Իջավ գերեզման...

1889, 25 մայիսի

ԱՍԲՈՒՆ

... И толковала чернь тупая:
«Зачем так звучно он поет?
Напрасно ухо, поражая,
К какой он цели нас ведет?..»

Пушкин

Ի՛նչ ես պահանջում, կատաղի՛ ամբոխ,
Դու ապատ երգչի անկեղծ քընարից.
Ի՛նչ ես դու, որպես չարանենգ ոտիս,
Հալածում նորան՝ կուրացած կրթից:

Ի՛նչ ես պահանջում... Արդյոք ուզում ես,
Որ նա յուր սրտի խանդն ու պացմունք
Չոհած հաճույքիդ՝ երկրպագե քեզ՝
Եվ թո առաջն՝ խոնարհի՛ յուր ծունկ:

Արդյոք ուզում ես, որ նա սրբական
Յուր մաքուր երգը, որպես մի վաճառք.
Փողոց հանելով՝ քրտու մեծատան
Դրվատե՛ գործեր պապիր և անարգ:

Արդյոք ուզում ես, որ նա ստրկացած,
Որպես անկեզու մի թշվառ գերի,

Խոնարհվի՛ այնտեղ, ուր գետնատարած
Դու ոտք ես լիզում բըռնավորների...

Ո՛չ... ամբո՛խ խղճուկ, ամբո՛խ դու թշվառ,
Չուր են քո ջանքեր, ցընորք — քո պահանջ,
Ե՛րբ ես դու տեսել, որ լույսը պայծառ
Ընկճվի, խորտակվի խավարի առաջ...

Ե՛րբ ես դու տեսել, որ երկրի կրծքից
Ուժգին դուրս ժայթքող հրաբուխն անջեջ
Հանգչի գեթ վայրկյան հեղեղ-անձրևից,
Թե անգամ նոքա տեղան մի՛շտ, անվե՛րջ:

Ե՛րբ ես դու տեսել, որ դեպի երկինք
Անվախ սավառնող հըզոր արծվին
Սարսեցնեն մրրիկ, որոտ, փոթորիկ,
Երբ նա լողում է անպեթք միջին...

Օ՛, հաշտվիր, ամբոխ, սիրի՛ր դու երգչին,
Չեոք պարսի՛ր նորան դու փոթորության.
Նա թո առաջն կը բանա ուղին
Բարվո, գեղեցկի և ճշմարտության...

1889, հունիս

ՊԱՏԿԵՐ

(Նվեր նկարիչ Վևորգ Բաշինջադյանին)

Խորին գիշեր է: Հոգնած, վաստակած
Երկիրը, որպես քրտնաջան մշակ,
Քընած է անդորր, ասես մոռացած
Ցերեկվա անվերջ հոգսերն ու տանջանք...

Եվ չի վըրդովում ոչ մի արարած
Մայր-երկրի այդ մեղմ նինջը անուշիկ.
Խաղաղություն է չորս կողմը տիրած —
Լուռ է բըռնություն, լուռ է և՛ երկինք:

Եվ աստեղապարդ պայծառ եթերում
Հանդարտ լողում է նազելի լուսին,
Եվ բուռն սիրո հուրը աչքերում
Օրոր է կարդում քաղցրանինք երկփին:
1889, 5 հուլիսի

ԷԼԵԳԻԱ

Փարունն անցավ... և զարնան հետ
Չքնաղ վարդը թառամեց.
Խեղճ տխական էլ յուր սիրավետ
Գողտրիկ երգին վերջ տվեց:

Եվ պարտիզում կանաչապարդ,
Ուր տիրում էր կյանք եռուն,
Այժմ գունատ, որպես հիվանդ,
Խուլ տնքում է մերկ աշուն:

Էլ չի լսվում ո՛չ ճղվելուց
Անհոգ, անվիշտ ճնճողուկի.
Ո՛չ վեփյունն է՝ առած յուր ծոց՝
Բերում մեկ բույրն հասմիկի:

Աղպես, ավա՛ղ, սի՛րտ իմ խղճուկ,
Անցավ և՛ ջո վառ գարուն,
Եվ քեզ պատեց վիշառ խեղդուկ,
Որպես անկյանք, ցուրտ աշուն:
1889, 25 հուլիսի

ԱՂՈՔ

Ամեն անգամ, երբ լսում եմ
Ես թշվառի սուգ ու լաց,
Քեզ ծնվաւորդ աղոթում եմ,
Ո՛վ դու մեր հայր, մեր աստված...

Աղոթում եմ ես ջերմագին,
Աղոթում և արտասովում...
Իմ աղոթքով ես աշխարհին
Քեզնից սեր եմ աղերսում,

Սե՛ր մեծապոր, սե՛ր հաղթական,
Ո՞ր, չարություն խորտակող.
Սե՛ր փոխադարձ, եղբայրական,
Մարդկանց անուր շաղկապող:

Սե՛ր եմ խեղդում, ո՛վ արարիչ,
Քար սրունքը հարեցնող...
Սե՛ր փրկարար, սե՛ր սփոփիչ,
Հեզ թշվառին կյանք տվող...

1889, 13 օգոստոսի

ՄՈՒՐԱՑԿԱՆ

Գիտե՛ս, թե արդյոք ո՛ւմ դուռն ես եկել,
Տառապյալ եղբա՛յր, դու ի՞նչ հույսերով.
Ո՛ւմ սիրտն ես ուզում գթությունը լցնել,
Շարժել ջո անվերջ ցավ ու վշտերով:
Արքայավայել այդ մեծ փառաշուք
Բազում հարկերով ճոխ պապատներում,
Ուր աչքող հառած՝ թափում ես արցունք,
Եվ խեղդված ձայնով չոր հաց աղերսում —
Գիտե՛ս, թե արդյոք անհոգ, անտրտում,
Անծանոթ թշվառ, սև աղքատության,
Ո՛վ է այնտեղ միշտ երգում ու խնդում,
Անձնատուր եղած կյանքի փափկության...
Ո՛ւմ կյանքն է այնտեղ ցերեկ ու գիշեր
Եռում, աղմկում մոլի կրթերով,
Ո՛վ է անխնա մաշում յուր օրեր
Հեշտասեր կյանքի փխուրություններով...
Փարթամ մեծացած գոռուկ իջեանի
Ապարանքն է դա, խղճուկ մութացկան,

Որի ճոխ տեսքով խաբված, երևի,
Եկել ես և՛ դու շատերի նման
Ադի արցունքով կյանքըդ ողբալու
Եվ փարթամասեր իջխանի կրծքում
Ջերմ կարեկցության մի կայծ վառելու:
Բայց, ավա՛ղ, զուր են... զո՛ւր այդ արցունքներ...
Այդտեղ չես գտնիլ մխիթար վըշտիդ,
Անպա սրտից հուսալ գուր ու սեր
Դեպի աղքատը — ցընորք է անմիտ...
Եվ մի՞թե տխուր փորձերը կյանքի
Քեզ չեն համոզել, ո՛վ խղճուկ, թշվառ,
Որ լացն ու վիշտը ցավագար սրտի
Ծաղր ու ծիծաղ են մեծատան համար...
1890, 24 մարտի

10 ԱՊՐԻԼԻ

Թմրած աշխարհը կյանք առավ նորից,—
Ահա ամեն տեղ
Քո սերն է երգվում, գարո՛ւն ոգելից,
Գարուն շնորհագեղ:

Անտառի խորքում քո սերն է երգում
Սիրահար սոխակ,
Ծաղկալից դաշտում քեզ է հեզ ժպտում
Սիրուն մանուշակ:

Մատաղ գառնուկներ լեռան լանջերում
Քաղցր մայունով՝
Հովվի սրնգի հետ քեզ են ողջունում
Ներդաշնակ ձայնով:

Քո գալն են օրհնում արև ու աստղեր,
Եվ երկինք անամպ,
Քո սերն են երգում թե՛ մանուկ, թե՛ ծեր
Անվերջ ցնծությամբ:

Թմրած աշխարհին կյանք տվիր նորից,—
Ահա ամեն տեղ
Քո սերն է երգվում, գարո՛ւն ոգելից,
Գարո՛ւն շնորհագեղ:
1890, 10 ապրիլի



Իմ ընկեր
Միքայել Հովհաննիսյանին

Այնքան դառըն ցավ ու վշտեր
Կուտակված են իմ սրտում,
Որ եթե քեզ, ազնիվ ընկեր,
Ողբամ նոցա իմ երգում,—
Քո առաջև արտասուքի
Դու կը տեսնես մի մեծ ծով,
Որ հուզվում է վիշտ ու սուգի
Սիրտը մաշող փոթորկով...

Բայց կատաղի լողորդի պես
Ալիքները ծաղրելով,
Այդ մեծ ծովում լողում եմ ես,
Խորին կերպով հուսալով,
Որ անկասկած և ես մի օր
Ցանկալի ափ կը հասնեմ,
Ուր ապատված իմ խեղճ եղբոր
Ցանջված կրծքիս կը սեղմեմ...
1890, 12 ապրիլի

ԾԱՂԻԿՆԵՐ ԵՎ ԻՂՁԵՐ

Կա՛ն ծաղիկներ ապատ փթթող
Կանաչավառ պարտիպում.
Կա՛ն և իղձեր արյուն հուզող
Մարդու սրտի խորքերում:

Ճաղիկները անուշ բուրնամբ
Կյանք են շնչում պարտիպին.
Վառ խղճերն էլ միշտ թարմությամբ
Լի են պահում մեր հոգին:
1890, 15 ապրիլ

ԿԵՍ ԳԻՇԵՐ

Կես գիշեր է, մռա՛յլ գիշեր. մենակ նստած սենյակում
Մտածում եմ — և բոլոր վշտեր սիրտս ու հոգիս են մաշում.
Մտածում եմ — շուտո՛վ աքոյոք դու արշալույս ոսկեխառ,
Կը հալածես երկրին տիրած դժնատեսիլ այս խավար...:

Բայց մռայլը գիշերային, մռայլ թա՛նձր, անթափա՛նց
Ամենուրեք, ամենայն տեղ յուր թևերն է տարածած.
Եվ տխուր է մայր-երկիրը, ախա՛ր որպես սգավոր,
Նա տանջվում է խավարի մեջ՝ կարտոտ օրվան քուսավոր:

Տխուր է և՛ իմ խեղճ հոգին, մռայլ որպես այդ գիշեր,
Նորան հալում ու մաշում են ազգիս ցավերն ու վշտեր...
Եվ նա տանջվում, տառապում է մայր-երկրի պես ցավազար,
Խղճուկ ազգիս աղերսում է ևս երկնքից օր պայծառ...

Կես գիշեր է, մռա՛յլ գիշեր. մենակ նստած սենյակում
Մայր-երկրի հետ և ես տխուր լույս օրվան եմ սպասում...
Օ՛, հանդարտվի՛ր, դու խեղճ երկիր և դու սիրտ իմ խռովահույլ,
Ահա մըռայլն հալածվում է... քաջահաղթ է արշալույս...

1890, 5 մայիս

ՆԵՆԳԱՌՄ

Քանի թո շուրջ տգիտության
Դեռ տիրում է խոլ խավար,
Քանի լույսը ճշմարտության
Դեռ հալածվում չարաչար,—

Քո դիմակը դժոխային
Միշտ կը փայլե, կը շողա,
Եվ չարանենց թո սև հոգին
Աչքից անտես կը մնա...
Բայց երբ կը գա ցանկալի օր
Պայծառ լուսո հաղթության
Եվ խավարը էլ թեպ հըզոր
Չի լինիլ պենք ու պաշտպան,—
Այն ժամանակ, ո՛վ նենգամիտ,
Կը մերկանան մեր աչքին
Ե՛վ դիմակը վապիր դեմքիդ,
Ե՛վ թո խավար, սև հոգին...

1890, 7 մայիս

ԷԼԵԳԻԱ

Դպար եսվառում երգեց սոխակ,
Երգն էր անուշ ու գողտքիկ,
Եվ հիշեցրեց նա ինձ մի կյանք.
Անցած մի կյանք երջանիկ:

Ես հիշեցի սիրո գարուն
Եվ հըրապուր խանդավառ,
Ախրող կուսի պատկեր պիտու,
Հայացք անմեղ ու պայծառ:

Ես հիշեցի քաղցրիկ ժամեր
Միրաբորբոք վայելքի.
Այրող ժղպիտ ու համբույրներ
Ջերմ, կուսական շրթունքի:

Ես հիշեցի կախարդական
Շա՛տ գիշերներ, շա՛տ օրեր...
Ախրող սրբտին նվիրական
Շատ ցնորքներ ու հույսեր...

Դալար հովտում երգեց սոխակ,
Երգն էր անուշ ու գողտրիկ.
Եվ հիշեցրեց նա ինձ մի կյանք,
Անցած մի կյանք երջանիկ:
1890, 11 մայիսի

Տեսնիր Վեդ

Նվեր N...-ին

I

Тяжелый крест достался ей на долю;
Страдай, молчи, притворствуй и не плачь;
Кому и страсть, и молодость, и волю —
Все отдала — тот стал ей палач.

Некрасов

Անմեղ հրդեհուակ նա աշխարհ եկավ.
Երկնատուր մի պարզ երկրին պարզված.
Հույս, սեր ու հավատ նա յուր հետ բերավ,
Կուսական սրտի խորքերում պահված:
Եվ լի հավատով, ոսկեվառ հույսով
Մտերիմ ընկեր ընտրեց նա մեկին.
Նա սիրեց նորան անխարդախ սիրով,
Նորան նվիրեց յուր սիրտն ու հոգին...

II

Քայց, ավա՛ղ, խղճուկ, պարզամիտ մանկան,
Երկար չը ժպտեց նա այս աշխարհում...
«Սիրված մտերիմ» ընկերը նորան
Պատրաստեց դառըն, թունավոր անկում...
Եվ ընկավ մանուկն անբիծ, անարատ,
Վշտամաշ սրտով, փշրված հույսերով.
Թռչնեց նա որպես հրաշալի մի վարդ՝
Պոկված, տրորված կոպիտ մատներով...
1890, 31 մայիսի

ԷԼ ՄԻ՝ ԽՆԴՐԻՐ...

Էլ մի՛ խնդրիր, մանուկ սիրուն,
Տանջված սրտից քեզ նվեր՝
Ո՛չ երգ այրող, երգ վառվռուն,
Ո՛չ սիրո մեղմ նվագներ...

Չուր են, հոգյա՛կ, քո խանդալից
Այդ նոր ժրպիտն ու գգվանք.
Դու չես ցովիլ իմ հեգ սրտից
Նենգված սիրո տառապանք...

Այն սև օրից, երբ փշրեցիր
Դու հույսերըս ոսկեվառ,
Անկեղծ սերըս անարգեցիր,—
Քնարս լռեց քեզ համար:

Այն օրից իմ այրված սրտում
Շիջավ չքնաղ քո պատկեր.
Այժմ անվերջ իմ երգերում
Ես գգվում եմ մի այլ սեր:

Սեր դեպի հոգս ու կարիքի
Քրտինք թափող զավակներ,
Սեր դեպի իմ ստրուկ ազգի
Կյանքը մաշող կապանքներ...

Այդ սերն է ինձ այժմ, ո՛վ կույս,
Ոգևորում, սիրտ տալիս.
Նա՛ է բուռըն խանդը հոգույս,
Այրվող նյութը երգերիս...

1890, 10 հունիսի

ՄԻ՝ ՀԱՎԱՏԱՐ

Մի՛ հավատար դու ծիծաղկոտ կյանքի խաղաղ վայելքին,
Հաճախ փայլուն, կեղծ դիմակ է շողում նրա չար դեմքին,
Որպես երպ, մեկ էլ տեսար, այդ վայելքը խաբուսիկ
Օղը ցնդեց — և քեզ նորից ճնշեց կյանքի փոթորիկ:

Թո՛ղ ջո առաջ կյանքը բանա հըրապուրիչ մի աշխարհ,
Որ վայելես դու լիառատ օրեր անվիշտ ու պայծառ.
Թո՛ղ կախարդես նա ջո ուշքը երջանկության տաղերով,
Թո՛ղ խոստանա նա հարատև ջեզ մի վիճակ անվրդով...

Դու մի՛ խաբվիր, մի՛ հավատար այդ վայելքին եեշտությանը,
Եվ կա՛ց պինված միշտ կյանքի մեջ հոգույդ բոլոր կորությանը.
Զինվի՛ր տոկուն կանգի ուժով, պինակ՛ք սրտով քաջահաղթ,
Որ և՛ կյանքի փոթորկի գեմ դու մարտնչես անվիաստ:

Դու շատ անգամ հոգս ու վշտից ուժասպառ և վաստակած
կյանքի ծոցում ջեզ կը գանես անդորրություն ջո փնտրած.
Սակայն երբեք մի՛ մոռանալ, որ այդ հանգիստը կյանքի
Յուր մեջ գաղտուկ պահած ունի և՛ փոթորիկ տանջանքի...

Այդպես երբեմն և՛ լողորդին խաղաղ ծովը ծպտելով,
Խոստանում է նորան հաաջնել նավահանգիստն անխոռվ.
Սակայն որքա՛ն գոռ ալիքներ մրրկածո՛ւնի, փրփրաղե՛լ
Լուռ պահում է նա յուր կրծքում աչքից ծածուկ ու անտես...

1890, 10 հունիսի

ՄԱՅՐ

(Որքի հիշատակարանից)

I

Մայր ունեի, մայր ետպելի —
Մի փափկաթիրտ արարած.
Բուռն սիրով նորան էի
Սիրոս ու հոգիս նվիրած:

Նա էր միակ իմ պաշտելին,
Միակ ծաղիկն իմ հոգույս.
Նա էր իմ թույլ, մանուկ կյանքին
Միակ ննջուն, միակ հույս...

Նա էր ապրույթ իմ խնայության,

Մայրույթ ստատ, անտարտ:

Նորա կրծքին երջանկության
Վարդ էր ծաղկում ինձ հանար:

Եվ ես ուրախ, ես երջանիկ,
Որպես անհոգ մի թռչնակ,
Նետվում էի միշտ մորս գիրկ,
Վայելում սեք ու զգվանք:

Նրա գրկում, փափո՛ւկ գրկում
Հոգիս խաղաղ ու հանգիստ.
Զե՛ի տանջվում, չէի պղում
Կյանքի հոգսեր, կյանքի վիշտ:

Եվ թժում էր ինձ՝ երջանկիս,
Թե աղբյուր մի՛շտ, հարստուն՝
Ինձ կըծպտի մայր-նարկելիս,
Որպես կյանքիս վառ արև:

Մակախ, ափա՛ղ, մահն անփրայ,
Մահն անտոք ու դաժան
Ազիկ մտքու խեց, տարալ,
Տարալ անդարձ, հավիտյան...

Ո՛հ, էլ չունիմ ես մայր անգին,
Որ ինձ սիրե՛ր, փայփայե՛ր...
Որ իմ խղճուկ, անտեր կյանքին
Թև ու թիկունք նա լիներ...

1890, 15 հունիսի

II

Զգացե՛լ եք դուք անգին կոյուտտի
Սիրաք կեղեքող խորին դառնություն.
Կամ ճաշակե՛լ եք դառն հրաժեշտի
Վերջին վայրկյանի վիշտ ու թախծություն:

Պատահե՛լ է ձեզ արդյոք գեթ մի ծամ
Տեսնել ձեր ջուրջը յուր անպայտուն.

Չգալ ձեզ մենակ, անտեր, անխնամ,
Լացի մեջ միայն գտնել փրկություն...

Օ՛հ, որքան ծանր են, որքա՛ն դառնագին
Այդ ցնցումները հոգու տառապան...
Եվ այդ ամենը զգաց իմ հոգին,
Երբ խղճուկ մորըս դրի գերեզման...
1890, 16 հունիսի

ՎԱՍՏԱԿ

Հո՛գ չէ, տանջվի՛ր, չարքա՛շ մշակ, քրտինք թափիր դու անվերջ,
Թո՛ղ քրտինքովդ մայր-երկիրը կշտանա.
Չուր չի անցնիլ քո տանջանքը. այնտեղ երկրի կրծքի մեջ
Քո քրտինքը նոր ուժ, նոր կյանք կատանա:

Տանջվի՛ր, եղբա՛յր, ուրախ սրտով. քո տանջանքում քրտնալից
Կա սուրբ վաստակ. երկնքիցն է նա օրհնված.
Թափի՛ր քրտինք, երկրի մշա՛կ, մայր-երկիրը յուր կրծքից
Քեզ լիառատ կը պարգևե արդար հաց:

1890, 6 հուլիսի

ՆՈՐԱ ԱԼԲՈՄՈՒՄ

Լո՛իկ նայում եմ չքնաղ պատկերիդ,
Որպես սիրովդ կախարդված սոխակ,
Նայում եմ պայծառ, սիրուն աչերիդ
Եվ հոգիս կարծես զգում է նոր կյանք:

Կարծես քո զգվող, քաղցր հայացքում
Ժպտում է ինձ մի նոր սիրո գարուն,
Եվ հեզ, ցավատանջ իմ մատաղ կրծքում
Չգում եմ նորից սիրո շերմություն:

Կարծես իմ առջև տեսնում եմ բացված
Մի նոր երջանիկ ծաղկալից աշխարհ,
Ուր քո սիրովդ ճակատս պսակված՝
Ապրում, շնչում եմ միայն քեզ համար...

Օ՛, օրհնյալ լինի այն քաղցրիկ րոպեն,
Երբ քեզ բոցավառ պատմեցի իմ սեր,
Եվ վարդ-շրթունքիցդ սիրույս փոխարեն
Ես մի ջերմ համբույր ստացա նվեր...

ԵՐԿՈՒ ԳԻՇԵՐ

I

Այն գիշերը կախարդիչ էր,
Նվիրական իմ հոգուն.
Երգում էի ես վարդ ու սեր,
Օրհնում սիրո վարդ-գարուն.

Այն գիշերը գարնանային
Ինձ նոր կյանք էր ներշնչում,
Ինձ ժպտում էր սիրուն լուսին
Աստղավառ երկնքում.

Եվ նազելիս անհագ սիրով
Հառած վրաս յուր աչեր,
Շնչում էր մեղմիկ ձայնով.
«Սիրում եմ քեզ, իմ ընկե՛ր...»

II

Տաղտկալի է այս գիշերը.
Ցուրտ է պատել իմ սրտին.
Ինձ չեն ժպտում էլ աստղերը,
Էլ չի շողում պարզ լուսին:

Օ՛հ, այս գիշերն աշնանային,
Որպես խորին տառապանք,
Պաշարել է իմ խեղճ հոգին,
Չկա՛ էլ սեր, սիրո կյանք...

Եվ ես մենակ թափառում եմ
Ավե՛ր, անշո՛ւք պարտիպում,
Եվ վշտանում, տառապում եմ.
Միրույս կորուստն եմ ողբում...
1890, 8 հուլիսի



Սիրելի ես, նվիրական, դու իմ քաղցր հայրենիք,
Քո սուրբ ծոցում անցուցել եմ ես շատ օրեր երջանիկ.
Քո երկինքը անամպ, պայծառ, քո դաշտերը ծաղկավուն
Ինձ շատ անգամ ոգևորել, կյանք են շնչել իմ հոգուն:

Սիրելի եք և դուք, կուսանք իմ հայրենի աշխարհի,
Դուք նազելի, հըրապուրիչ, չքնաղ դստերք հարավի.
Ես շատ անգամ սիրականիս սրբախ սերը երգելով,
Ե՛վ ձեր սերն եմ ես հիացած՝ փառաբանել իմ երգով:

Թո՛ղ ես այժմ բախտահալած՝ երկրե երկիր թափառեմ,
Թո՛ղ ես այժմ սիրուց զրկված՝ օր ու գիշեր արտասվեմ,
Դուք ինձ համար դարձյա՛լ քաղցր եք և մի՛շտ քաղցր կը մնաք:
Օ՛, հա՛յ աշխարհ — իմ հայրենի՛ք և դուք, չքնա՛ղ հայ կուսանք:

1890, 10 հուլիսի
Մոսկվա

Ա՛խ, ԵՐԱՆԻ ՉԷ՛...

Ա՛խ, երանի չէ՛ մի օր մեր առաջ
Բացվեր ցանկալի մաքուրի դաշտն անեղ,
Ուր և՛ հայրերին՝ խղճո՛ւկ, ցավառա՛նջ
Գեթ սրով անեթ յուր ցավին մի դեղ,
Ուր կարողանաթ ես արցան գնով
Ազգին պարզել հաղթության սլակ,
Կամ թե չէ հաղթված, բայց ապատ եղզով
Շունչ փչեր իբրև ազգի նահատակ:

Ա՛խ, երանի չէ՛ սպա ստրկությունից
Չորավոր ձայնը սուրբ ապատության

Գոչեր մեկ մի օր դեպի ոգելից
Քաջ ճակատամարտ կյանքի և մահվան.
Այնտեղ սուր ձեռքին, բոցերի միջին,
Պատրաստ մեր կյանքը ազգին կոհեղու,
Մենք ցույց կըտայինք ամբողջ աշխարհին,
Թե ո՛վ է կոչված ստրուկ ապրելու...

Այնտեղ միաշունչ, միաբան հոգով
Մենք կհնչեինք երգն արիության,
Եվ հաղթանակի մեծաշուք փառքով
Մենք կըփշրեինք բռնության շղթան...
Ա՛խ, երանի չէ՛, ո՛վ ազգ իմ թշվառ,
Հասներ այդ օրը, բացվեր քո առջև
Քաջ կռվի դաշտը. այնտեղ քեզ պայծառ
Կըծպտեր անշուշտ նոր կյանքի արև...

1890, 15 հուլիսի

ՎԵՐՁԻՆ ՀԱՆԳԻՍ

Այնտե՛ղ, այնտե՛ղ, այն լայն դաշտում նվիրական աշխարհի,
Ուր հանգչում են սուրբ նշխարներ իմ նահատակ պապերի,
Ուր վեհ փառքով, կար ժամանակ, թնդում էին անվեհեր
Արիության, հազթանակի հյգոր երգ ու նվագներ.
Այնտե՛ղ, ուր, ո՛հ, այժմ մենակ պատկառեցին ծեր Մաախ
Տխուր, մըռայլ նայում է շուրջ, հիջում անցյալն ու լայիս,
Ուր սգավոր մայր-Արաքսը լուռ քեթելով յուր ամեր,
Արտասուքով ողողում է հայ քաջերի շիրմներ...
Այնտե՛ղ, այն մե՛ծ դաշտի միջին՝ պապերիս հետ միասին
Կցաքնկա՛ր և ես կոհված՝ գտնել հանգիստն իմ վերջին...
1890, 20 օգոստոսի



Մի՞թե արդեն, ո՛վ ընկեր իմ, հոգևեցար
Դու տանջանքի ճնշող լուծը կրթելով
Որ այժմ թույլ, արտով հիվանդ, ցավազար
Մահ ես խնդրում, կյանքից երես դարձնելով;

351

Չէ՛ որ. ընկե՛ր, դու անձնուրաց երդվեցիր
Խեղճ եղբորդ վերջին շունչդ պոհելու,
Եվ կյանքի մեջ արի փնվոր գրվեցիր,
Մինչ գերեզման չարության դեմ կռվելու:

Ո՛ր է պայծառ, ջերմ արևը փրկության,
Որ թշվառին ապաստ գարուն ավետեր.
Օ՛հ, ընկե՛ր քեզ: Կոպիտ ձեռքը չարության
Դեռ անողորմ կաշկանդում է շատ պոհեր...

Արիացի՛ր, ի՛մ մտերիմ. դեռ ապագան ցանկալի
Առա՛տ արյուն: շա՛տ պոհեր է պահանջում.
Տանջվի՛ր, ուրախ բարեկամը թշվառի
Տանջանքումն է յուր պըսակը որոնում...

1890, 7 հոկտեմբերի



Ես չեմ վրդովվում, որ իմ չորս բոլոր անթափանցելի
Տիրում է խափար խոր տգիտության.

Որ հայ եղբայրը կարող բարիքին լուսավոր դարի,
Խավարի լուծը կըրում է անձայն:

Ես չեմ վրդովվում... ես հավատում եմ, որ կըգա մի օր,
Ռեկեշիդ մի օր լուսատու գարեան,
Երբ կըթրթափի նա յուր վրայից փոշին դարեոր,
Փոշին խավարի, մաշիչ ստրկության:

Ես հավատում եմ, որ նորա առջև մի օր ընդարձակ
Կըբացվի նույնպես լուսավարդ ուղին,
Ուր նա կըբայե դեպի ազատ կյանք անվախ, համարձակ,
Մշտավառ լուսո սուրբ ջահը ձեռին:

Ես հավատում եմ, որ մի նոր կյանքի փառահեղ գարուն
Ե՛վ նորան մի օր կըծայտի պայծառ.
Ե՛վ նորա կյանքի անամպ երկնքում ուրախ շողողուն
Կարմիր ծիածան կըկապի կամար...

Թո՛ղ այժմ, եղբա՛յր դու տգետ, խղճուկ, տանջվես անպաշտպան
Քո այդ ստրկական, անպոր վիճակում.
Խորին հավատով երջանիկ օրիդ, գալիք փրկության
Ես հավատում եմ և չեմ վրդովվում...

1880, 13 հոկտեմբերի

ԳԵՏԱԿ

Քի՛չ էլ լացիր, գետա՛կ վճիտ, կարկաչուն,
Անկյանք ձըմռան ցուրտ կապանքը կըրելով.
Քի՛չ էլ սգա... և ուր որ է թեպ գարուն
Նոր կյանք կըտա՝ թո լաց-սուզին վերջ տալով:

Եվ ապատված սառցե մաշող կապանքից,
Նորից, գետա՛կ, կը թըռչկոտես համարձակ,
Եվ կարկաչըդ՝ ազատ ելած թո կըրծքից՝
Խոր անտառում կառնես ազատ արձագանք:

Քեպ վերևից կըփայփայե ժպտալով
Գարնան անամպ պարպ երկինքը կապուտակ.
Եվ դյութական հըրապուրիչ գույներով
Քո ջըրերում կըշողշողա արեգակ:

Եվ վաղորդյան հով պեփյուռը գարնային
Մեղմ կըհուպե մաքուր կուրծքդ կուսական,
Դալար ափիդ պարպ ժրպիտը երեսին,
Քեպ ամոթխած կ'ողջունես հեպ շուշան:

Քի՛չ էլ լացիր, գետա՛կ վճիտ, կարկաչուն,
Դաժան ձըմռան ցուրտ կապանքը կըրելով.
Քի՛չ էլ, քի՛չ էլ... և ուր որ է վառ գարուն
Նոր կյանք կըտա՝ թո լաց-սուզին վերջ տալով...

1890, 10 նոյեմբերի

Ես չեմ երգում: Իմ երգերում վշտալի
Այն թշվառն է՝ անարգ բախտից հալածված
Յուր վիճակը անվերջ սրգում ու լալի,
Յուր ցավերը երգով պատմում նա մարդկանց...

Ես չեմ երգում: Իմ երգերում ցավատանջ
Այն հարապատ իմ տառապյալ խեղճ եղբոր
Դուք լսում եք խուլ հեծեծանք ու հառաչ
Եվ կարդում եք ապգիս վիշտը դարևոր...

Ես չեմ երգում: Իմ երգերը բացազին
Արձագանք են մարդկանց վշտին, դառնության...
Քնարիս ճայնով արդարադատ երկնքին
Բողոքում են անանդ արեք չարության...

Երբ կգա օր մի օր վսեմ, փրկարար,
Կը խորտակվի չարն ավերիչ ու թունոտ,
Եվ թշվառը օրհնելով բախտն ու աշխարհի
Կը ողջունե մի նոր կյանքի ստավոտ...

Երբ չարանենգ, խավար ոգին բռնության
Կը ստրկանա, որպես անվոր մի գերի,
Եվ արդարի պատ ճայնը անխափան
Կը խլացնե խուլ շայունը շղթայի...

Երբ համաշունչ եղբայրական սուրբ սիրով
Կը հալածվի չար Բաալը աշխարհից,
Եվ այդ սերը, այդ մե՛ծ սերը վեհ փառքով
Քաջ հաղթության կառնե պղսակ երկնքից...

Հայնժամ տխուր, լացող երգչի շրթունքից
Դուք կըլսեք ուրախության երգ ու տաղ.
Հայնժամ միայն նորա երգում վշտալից
Դուք կըկարդաք և՛ խնդություն և՛ ծիծաղ.

Հայնժամ երգիչն անհոգ, ուրախ, բախտավոր
Լի ցնծությամբ նա ձեռք կառնե յուր քննար,
Եվ կըերգե հաղթանակը փառավոր
Ո՛վ դու վսե՛մ եղբայրության գաղափար...
1890, 23 նոյեմբերի

ԹՇՎԱՌԻՆ

Ո՛վ ես դու, եղբա՛յր,— քեզ չեմ ճանաչում,
Բայց քո սրտամաշ լացը տեսնելիս,
Ե՛վ ես վշտացած արցունք եմ թափում.
Հուլվում է սիրտս, տանջվում է հոգիս:

Մի՛շտ տխուր, տրտում, մի՛շտ լուռ, միայնակ,—
Դու չես մասնակցում կյանքի խնջույքին.
Չկա՛ն քեզ համար ո՛չ սեր, ո՛չ բերկրանք,
Լացն ու տանջանքն է միայն քո բաժին:

Թափառում ես դու խուլ փողոցներում,
Փախչում, ծածկվում ես մարդկանց հայացքից
Կարծես մարդկանցում էլ չես հավատում
Գտնել անկեղծ սիրտ վշտիդ կարեկից:

Կարծես քո աչքին բովանդակ աշխարհ
Սառցապատ ծով է անկարեկցության,
Եվ քո արցունքը — աշխարհիս համար
Անսպառ աղբուր վայրագ խնդության:

Օ՛, ո՛չ, հավատա՛, եղբա՛յր իմ թշվառ,
Դու հոգուս անկեղծ, խորին պագսման,
Հավատա, որ քո տանջանքի համար
Շա՛տերն են անկեղծ տանջվում ինձ նման...

[1890 թ.]

◆
Հերի՛ք է որքան բախտը խաբուսիկ
Չքնաղ վարդերով սփռեց իմ ուղին.
Որքան ջերմ սիրո երանգներ գողտրիկ
Անհույս հուլեցին իմ մատաղ հոգին:

Նոցա ծաղկայից, անհոգ վայելքին
Ահա՛ տալիս եմ իմ վերջին բարև,
Եվ նոր ողջունով փշալից կյանքին
Իմ երգն ու սիրտը բերում եմ պարզև:
1890.

ՉԵՄ ՆԱԽԱՆՉՈՒՄ

Ո՛չ, ընկե՛ր իմ, չեմ նախանձում
Ես կույր բախտի ընտրյալին,
Որի փառքը այս աշխարհում
Մեծ տներն են ու ոսկին:
Նորա համար կյանքը չունի
Ոչ մի վսեմ նպատակ.
Նա ըստրուկ է խավար-ժանգի,
Ըստրուկ հարուստ ու անարգ:

Չեմ նախանձում ես երջանիկ
Եվ սիրավառ պատանուն,
Որին սիրո ժամեր քաղցրիկ
Փափուկ կյանք են խոստանում:
Նորա համար կույսը չքնաղ
Ե՛վ հրեշտակ է, ն՛ աստված,
Կույսի սիրուն նա յուր մատաղ
Կյանքն ու սիրտն է նվիրած:

Ո՛չ, ընկե՛ր իմ, ո՛չ կույր բախտի
Ինձ պարզևած այդ փառքին,
Եվ ո՛չ սիրո եռուն կյանքի
Ախտաբորբոք վայելքին
Չեմ նախանձում... Այդ վիճակում

Չնչին է կյանքն իմ աչքին.
Ա՛յլ ըղձեր են սիրտըս հուլում,
Ես ձգտում եմ ա՛յլ փառչին:

Փառք ծանրագին ու վշտայից
Թույլ մարդկանցից անարգված,
Փառք տատասկոտ ու փշալից
Ազնիվ գործով վաստակած —
Այդ փառքին եմ, ո՛վ ընկեր իմ,
Ես նախանձում ողջ հոգով:
Եվ կուլեի մտնել շիրիմ
Անմահսցած այդ փառքով...

◆
Ա՛յ վարդ, լսի՛ր աղաչանքիս,
Թո՛ւյլ տուր թփից թեպ քաղեմ,
Եվ թեպանով սիրած կուսիս
Մատաղ կուրծքը վարդարեմ:

Մի՛ վախենար, նորա կրծքին
Չես թառամիլ, քնքո՛ւշ վարդ.
Այնտեղ մատաղ կրծքի տակին
Կյանքի աղբյուր կա առատ...
{1891}

ՄԱՅՐ

Ծաղիկ մանկության շա՛տ հիշատակներ,
Որ դեռ եռում եք իմ մատաղ կրծքում,
Եվ հաճախ այնքան խաղաղ թուլեներ
Ինձ պարզևում եք կյանքի փոթորկում,
Որ երբեմն այնպես խուռըն երամով
Հանդես եք բերում ուրախ անցյալից
Գողտրիկ պատկերներ և վառ թռիչքով
Միտքըս անջատում տխուր ներկայից,—
Ո՛վ գիտե, զուցե, ժամանակն յուր հետ
Չեպ մի օր տպնե՛, ավերե՛ անհետ...

Բայց այն օրերը, այն եփրական
Հիշատակները մանկական կյանքիս,
Երբ մորս գրկում առատ, անսահման
Մեր էր վայելում անարատ հոգիս,
Այն օրերն, օ՛ մաքր, որպես սրբություն,
Անջինջ կրպակիս սրտիս խորանում,
Անջինջ կրպակի կ' ջո սուրբ անուն
Իմ վառ շրթունքին, իմ ջերմ երգերում.
Եվ ինձ կյանք տվող ջո սերը, մա՛յր իմ,
Սրտիս հետ միայն կըմտնի շիրիմ...

1891

ՀԱՅ ԵՐԳՉԻՆ՝

Դա՛նն է մեր կյանքը, տխո՛ւր մեր օրեր,
Չկա՛ մեզ հանգիստ, չկա՛ խնդություն.
Միայն տառապանք և անվերջ վշտեր
Մեր հեզ սրտերից քամում են արյուն...
Նայում ենք վերև — անպամած երկինք,
Նայում ենք ներքև — շիրիմ ոտքի տակ,
Նայում ենք մեր շուրջ — ահեղ փոթորիկ,
Իսկ մեր ձեռքերին — շղթա ու կապանք...
Եվ որպես խավար, մռայլված գիշեր,
Անկոր ողբում են մեր սիրտն ու հոգին.
Եվ քանի՛ ըղձեր, քանի՛ խորհուրդներ
ձնշված սիրիում են մեր կրծքի տակին...

Դա՛նն է մեր կյանքը, տխո՛ւր մեր օրեր,
Մեզ կաշկանդեկ է ստրկության շղթան.
Օ՛, երգի՛չ, երգի՛ր մեզ հըզոր երգեր,
Բոցավա՛ռ երգեր ոգևորության:
Երգի՛ր մեզ անահ, կորովի ձայնով
Փառք և հաղթանակ փայլուն գործերի,

Երգի՛ր, որ պատ ջնարիդ լարերով
Ցնցես թելերը բռնած սրտերի...

Երգի՛ր մեզ այն հին երգը դարևոր,
Որ մի ժամանակ թնդալով ուժգին
Մարտի փոթորկում — վսե՛մ, փառավո՛ր
Դափնիք էր ձուլում մեր քաջ պապերին...

Երգի՛ր... Թո՛ղ քո երգն անկեղծ, ոգելից,
Որպես ջերմ աղոթք հայրենասերի,
Ցըրվե՛ մռայլը վհատ սրտերից,
Բանա մեզ աղբյուր ուկի՛ հույսերի...
Թո՛ղ քո ոգեշունչ, կարող երգերով
Ծովի պես հուկվի հայրենի աշխարհ.
Թո՛ղ նոքա մեր ծանր ուղին հարթելով,
Հային պատրաստեն նոր կյանքի համար...
Դա՛նն է մեր կյանքը, տխո՛ւր մեր օրեր,
Մեզ կաշկանդեկ է բռնության շղթան.
Օ՛, երգի՛չ, երգի՛ր մեզ հըզոր երգեր,
Բոցավա՛ռ երգեր ոգևորության...

ԳՆԱ, ՅՈՒՐՏ ՉՄԵՌ

Գևա՛, ցուրտ ձմեռ,
Խստասի՛րտ ձերուկ,
Քո մեջ չկա՛ սեր,
Չկա՛ զգացմունք.
Քո մեջ չկա կյանք,
Կյանքի հրապույր,
Ցնծություն, տարփանք,
Ծիծաղ ու համբույր:
Աշխարհ ես մտնում
Դու արհավիրքով:
Աշխարհ կաշկանդում
Քո ցուրտ կապանքով.
Նայվածքդ դաժան,

¹ Կարդացված է բաեսատեղծ Ս. Ըանուկյանի 30-ամյա հոբելյանի հանդեսին 1892 թ. ապրիլի 9-ին Մոսկվայում:

Շունչդ մահաբեր,
Մարդկանց, բնության
Բերում են ավեր...

Լռում է գետակ
Անտառի խորքում,
Մարում սեր, փափագ
Ե՛վ մարդու սրտում.
Ծաղիկն է թռչնում
Բլուրի կրծքին,
Ժրպիտը սառչում
Մարդու շրթունքին...

Գնա՛, ցուրտ ձմեռ,
Արի՛, ջերմ գարուն,
Բե՛ր մեզ կյանք ու սեր,
Լույս, եռանդ, ավյուն.
Բե՛ր մեզ դու պայծառ
Արն ու աստղեր,
Հույսերի աշխարհ,
Գարնա՛ն երազներ...

Բե՛ր ծիծաղ անհոգ,
Անհոգ թուպեներ,
Խանդ, հույզ ու բորբոք,
Սիրաշունչ երգեր.
Բե՛ր անուշ զեփյուռ,
Անձրև զովարար,
Կարկաչուն աղբյուր,
Սար ու դաշտ դալար...
[1892]

ԿՅԱՆԲ

Ո՛չ, ատելի չես, դու, կյա՛նք վշտալից,
Երբ քո խռովահույզ, բավանհոգ գրկում

Տանջելով մարդուն — նաև կարեկից,
Անկեղծ ընկեր ես նորան պարզում:

Ծանր չե՛ քո խաչն, երբ մենք կորացած
Այդ խաչի տակին՝ խուլ հառաչելիս,
Ունենք մտերիմ, որ մեզ համապագ,
Մեզ հետ խնդում է և մեզ հետ լալիս...

Երբ գիտենք, որ կա գոյության կռվում
Մեզ սիրող մի սիրտ — անձնուրաց ընկեր,
Որ միշտ պատրաստ է տանջանքի ժամում
Յուր սիրով սրբել մեր արտասուքներ:

Եվ որպե՛ս անհագ, որպե՛ս համարձակ
Հառա՛ջ, միշտ հառա՛ջ ձգտում է հոգին,
Երբ կյանքում, որպես հուսատու հրեշտակ,
Ընկերն ընկերին սեղմում է կրծքին:

Այնտեղ, մրտերիմ սիրառատ գրկում
Եվ փուշն է — ծաղիկ, և՛ լացը — ծիծաղ.
Այնտեղ ձրմենն է գարնան պես ժպտում,
Այնտեղ և՛ մահվան համբույրն է խաղաղ...

Ո՛չ, ատելի չես, ո՛վ կյա՛նք վշտալից,
Երբ քո խռովահույզ, անվերջ փոթորկում
Տանջելով մարդուն — դու և կարեկից,
Անկեղծ ընկեր ես նորան պարզում:
1892

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Կանգնի՛ր, ո՛վ անցորդ,
Դու այս շիրմի մոտ
Եվ հանգի՛ստ կարդա քա՛ջ նահատակին,
Որ կռվի դաշտում
Սուր ու կենք ձեռքում,
Չոհ բերեց կյանքը յուր ազգի փառքին:

Բայց կարեկցություն
Ո՛չ լաց, ո՛չ կակառ
Թո՛ղ չըպդտորեն թո սիրտն ու հոգին,
Նա լայ չէր սիրում,
Կովի վտորկում
Նահատակն ընկա՛վ ժըպիտը դենքին...

Վերջին անգամ ժպտաց արև,
Եվ որպես կայծ չըքացավ.
Փչեց քամին. դողաց տերև.
Մայր-բնություն մերկացավ:

Տիրե՛ց երկինք... և յուր պայծառ
Դեմքը պատեց սև թղթով.
Սգա՛ց երկիր... և վշտահար՝
Ամռան ասաց՝ «գնա՛ս բարով»:

Գնա՛ց տանուն... Եվ գունաթափ
Աչքան մրոսի կերպարանք
Մարդուն ազդեց ահ ու սարսափ,
Երկրից խըլեց շունչ ու կյանք...

ԵՎ, ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՎ:

Ե՛կ, գարնան անձրև, թափվի՛ր հորդառատ
Տրտացած երկրի սառ կրծքի վերա.
Թո՛ղ նորից երկիրն շունչ քաշե ապատ,
Թո՛ղ նորա կրծքին ջերմ կյանքը եռա:

Երկա՛ր նա տանջվեց դառնաշունչ. ձմեռն
Ցուրտ կապանքներում, քեզ սպասելով,
Նա շա՛տ համբերեց... կենսատու գարնան
Քաղցր կարոտը ջերմ փայփայելով:

Թափվի՛ր, ա՛յ անձրև, ինչպես մարգարիտ,
Ինչպես երկնառաք ցողը կենսաթեր,
Ոռոզի՛ր դաշտեր, անտառ ու հովիտ,
Կանաչով սրտի՛ր լեռներ ու ձորեր:

Թո՛ղ հորդանալով աղբյուր ու գետակ
Սառցե շղթաներ անահ խորտակեն.
Դուրս գան ավերից, վազեն համարձակ,
Ազատ խոխոջան, ազատ կարկաչեն:

Թող քեզ յույս-արև ժպտա սիրավառ, .
Եվ որպես երկնից հաշտության նշան,
Քո կաթիներում փայլուն ու պայծառ
Նա սիրով կապե կարմիր ծիածան...

Ե՛կ, գարնան անձրև, թափվի՛ր հորդառատ
Տրտացած երկրի սառ կրծքի վերա.
Թո՛ղ նորից երկիրն շունչ քաշե ապատ,
Թո՛ղ նորա կրծքին ջերմ կյանքը եռա:
[1893]

ՔԵՉ ՀԱՄԱՐ Է ԻՄ ՏԱՆՁԱՆՔԸ...

Քե՛կ համար է իմ տանջանքը,
Ճշմարտության գաղափա՛ր.
Թո՛ղ քեզ կոնկի երգչիս կյանքը,
Ես ապրում եմ քե՛կ համար:

Կյանքի կովում քանիցս անգամ
Ես քեզ պաշտպան կանգնելով,
Հայածեցին ինձ անպզամ
Մարդիկ — ուժքս ծաղրելով...

Հոգով աղքատ, մտքով տկար —
Նոքա իմ ձայնն անաչաղ

Շա՛տ ջանացին խեղդել խապա՛ռ...
Սխալվեցի՛ն չարաչար...

Եվ երբ նոցա սև սրտերին
Խոսքս դիպավ, որպես նետ.
Նոքա փրփուր բերաններին
Թույն խառնեցին հացիս հետ...

Բայց դու հուզի՛ր, հուզի՛ր հոգիս,
Ճշմարտության գաղափա՛ր.
Դո՛ւ ես միակ վահան կյանքիս,
Ես ապրում եմ քե՛զ համար:
1893

ՄԻ՛ Վ<ԱՏԻՐ

Դարերով անբա՛խտ, դարերով թշվա՛ռ,
Իմ խղճո՛ւկ եղբայր, դու մի՛ վիատիր,
Որ կարծես ոսոխ, անգութ, անարդար
Քեզ հալածում է սև ճակատագիր:

Գիտեմ, չարության ծանր լծի տակ
Դու շա՛տ ես տանջվել ու շա՛տ համբերել.
Շա՛տ ես փափագել դու մի ա՛յլ վիճակ
Երկա՛ր հուսացել, երկա՛ր սպասել...

Բայց մի՛ վիատիր... Թո՛ղ խորին հավատ
Դեռ այնկոծե քո տանջված հոգին.
Շատե՛րն են քեզ պես մնում հուսառատ
Ապտիչ գարնան քաջ հաղթանակին...

Եվ ի՛նչ կլինեք, թե դառն օրերին,
Մարդկային կյանքում, փոթորկի նման,
Ոսկեշող հույսեր սիրտ չբուսկեին,
Հավատը պոկվեր հուսահատության...

Վաղուց մարդկությունն անհույս, ցավագար
Վշտերի ծովում կրգտներ վախճան.
Չոր անապատի կըփոխվեր աշխարհ,
Կյանքը կըդառնար մըթին գերեզման...
1893

ՄԻ՛ ԼԱՐ, ԲԼՔՈ՛ՒԼ

Մի՛ լար, բըլբո՛ւլ, քեզ մի՛ տանջիր,
Որ փոթորիկն անիրավ
Վարդը սիրուն, վարդը կարմիր
Թըփից պո՛կեց ու տարա՛վ...

Կանցնեն օրեր... Կըգա կրկին
Մի նո՛ր գարուն վարդաբեր.
Եվ մոռացած քո վիշտը հին,
Նորից կերգես վարդին սեր:

Բայց վա՛յ կյանքի այն խեղճ երգչին.
Որ վաղածամ որբացած,
Յուր սիրելի, խոսուն վարդին
Ցուրտ հողին է նա հանձնած...

Երգչի համար գարուն չի՛ գա,
Ո՛չ նա նոր վարդ կըսիրե.
Նա պետք է լա, պետք է սրգա,
Մինչ հավիտյան կըլուե...
1893

ՍԵՐ

I

Սիրում եմ ես քեզ, մանու՛կ գեղեցիկ,
Բայց ոչ տղայական այն անմիտ սիրով,
Որով սիրեցին քեզ շատ պատանիք,

Լոկ գեղեցկությանդ երկրպագելով:
Գրավիչ էիր դու նոցա համար,
Որպես մի խոսուն, պճնապարդ տիկնիկ,
Որ ուներ միայն աչեր բոցավառ,
Վարդագույն շրթունք, սիրուն խոպոպիք,
Որի կուսական գեղանի կուրծքին
Ծաղկում էր փարթամ եղեմ փափկության,
Եվ որի համբույրն ամենքի աչքին
Հեշտալից կըրքի վայելք էր միայն...
Եվ նոքա քո շուրջ միշտ վիստում էին,
Որպես խաղալիք սիրող մանուկներ,
Եվ քո ականջին շըջընջում էին
Քաղցր գովասանք, սիրահաճ խոսքեր...

II

Սիրում եմ ես քեզ, բայց ո՛չ ադ սիրով,
Ո՛վ իմ նապեղի՛, թանկագին՛ն ընկեր,
Սիրում եմ ես քեզ այլ պգացմունքով,
Մի սուրբ պգացմունք, որ կով կենսաբեր
Ինչպես գարնան ցող թառամած ծաղկին
Ցողում է լքյալ սրտին թարմություն.
Որ ինչպես գեփյուռ հըրատապ շոգին
Բերում է այրված կրծքին զովություն.
Մի վառ պգացմունք, որ թովի՛չ լուսով
Փայլում է միայն անկեղծ սրտերում.
Որ լի ըղձերով, վարդաշո՛ղ հուսով
Մեզ կյանք է տալիս և ոգևորում:
Դու սիրելի ես, փափկասո՛ւն էակ,
Որպես անսայառ աղբյուր երգերիս,
Որպես իմ կյանքի լուսափայլ ճըրագ,
Որպես արձագանք լաց ու ծիծաղիս:

III

Սիրում եմ ես քեզ, սիրում ջերմագին,
Ինչպես անդրանիկ մի ծաղիկ գարնան
Որ ավետում ես իմ անվարդ կյանքին
Նորից ծաղկավառ օրեր խնդության.

Որ իբրև շքեղ, դալար մի օալ
Ժպտում ես դու իմ անապատ կյանքում,
Որ իբրև պայծառ, գողտրիկ մի երպ,
Ցնորքի հուր ես վառում իմ կրծքում:
Ի՛նչպես չըսիրել քո քնքուշ հոգին
Եվ այն կանացի գորովն ու գգվանք,
Որ գանձի նըման, ջերմ կուրծքիդ տակին
Պահում ես իբրև հոգուդ պարզսրանք.
Որ սիրաքղ լեցուն բո՛ւն խնամքով,
Պատրաստ ես դու միշտ անտեր, անպաշտպան
Թշվառի համար անկեղծ արցունքով
Ե՛վ լա՛ւ, և՛ սիրով փայփայել՛ Նորյան...
1893

ԳԻՐ

Գիր սիրճ՛, դալամ սիրճ՛, դավթար սիրճ՛.
Ս ա լ ա ք - Ն ո Վ ա

Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ,
Կարդա՛, զըրի՛ր տարին-բոլոր.
Գիր կարդողի խելքն է կտրուկ,
Միտքը — պայծառ ու լուսավոր:

Գիր կարդալով — դու գրքերում
Շա՛տ նորանոր բան կիմանաս.
Շա՛տ շատերից, շա՛տ բաներում
Մըտքով հեռո՛ւ կըսականաս:

Գիր կարդալով — դու աշխարհիս
Կըճանաչես չարն ու բարին.
Ո՛վ է խնդում, ո՛վ է լալիս...
Ո՛վ է կրկում խեղճ թշվառին...

Գիր կարդալով — դու քո սրտում
Առատ, անբավ գանձ կըղիպես,

Այնպիսի՞ գանձ, որ աշխարհում
Ամեն հարուստ գլուխ կտա քեզ:

Կյանքում ծածուկ էլ քեզ համար
Բան չի՛ մնալ, որ չիմանաս.
Քո մեջ կապրի արար-աշխարհ,
Հոգով այնքա՛ն կըզորանաս:

Դու կիմանաս, թե ինչո՞ւ մենք
Լողորդի պես կյանքի ծովում
Գիշեր-ցերեկ հա՛ լողում ենք...
Ո՞րտեղ է ափն... ո՞ւր ենք լողում...

Դու կիմանաս, ինչո՞ւ մարդիկ
Պետք է ապրեն իրար համար.
Ի՞նչ է մարդկանց ցավն ու կարիք,
Ի՞նչ է լույսը, ի՞նչ է խավար...

Կարդա՛, որդի՛ս, որ հորըդ պես
Դու էլ անուս, խեղճ չըմնաս,
Որ ամենքին վիպ չըծոես,
Եվ միշտ ապա՛տ առաջ գընաս...

Անբախտ հայրդ գիր չըզհատեր,
Հողագործ էր — կարոտ ուսման,
Գյուղի անգուրթ վաշխառուներ
Քաղցած, ծարավ թողին նորան:

Հապար ու մի թուղթ զըրելով.
Քո հոր տեղակ ստորագրեցին.
Հետո մեկ էլ օր-ցերեկով
Չեր ողջ տունը կողոպտեցին...

Շա՛տ թափառեց նա դես ու դեն,
Դատարանի շենքը մաշեց.
Բայց անգրագետ, անուս, անպեն —
Վերջին շունչը հողում քաշեց...

Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ,
Կարդա՛, զըրի՛ր տարին-բոլոր.
Գիր կարդողի խելքն է կտրուկ,
Միտքը — պայծառ ու լուսավոր:
1893

ՊԱՆԴՈՒՆՏԻ ԵՐԳԸ

Օտա՛ր երկինք, օտա՛ր արև,
Որ շողում եք գլխիս վերև,
Ինչքա՛ն շողաք... դուք ինձ համար
Միշտ կըմնաք գիշեր խավար...

Սիրտըս տոչոր՝ ձեզ նայելով,
Անտեր, պանդուխտ կյանքս լալով,
Օր չի անցնում — հայրենիքիս
Վառ կարտը չայրի հոգիս:

Մատա՛ղ լինեմ նորա պայծառ
Էն երկնքին, ուր սիրավառ
Ոսկի՛ արևն ինձ վերևից
Փայփայել է մանուկ օրից:

Հայրենիքիս խաղաղ ծոցում,
Ինչպես փափուկ օրորոցում,
Ես մեծացել, կյանք եմ առել,
Նրա շնորհով մարդ եմ դառել:

Ո՞նց մոռանամ ես էն օրինած
Սարն ու ձորը ծաղկով լցված.
Էն կենսատու ջուրն ու հողը,
Գարունքի էն հովն ու ցողը:

Ո՞նց մոռանամ ես էն փարթամ
Դաշտն ու արտը, ուր շատ անգամ

Ասես, թիպես թըրթըրացել,
Արար-աշխարհն եմ մոռացել...

Ուր լսել եմ սրտիս ապիկ
Գեղջուկ-մշակ եղբայրներիս
Դառն լացը, կուշտ ծիծաղը,
Ուրախ-տխուր երգ ու տաղը...

Օտա՛ր երկինք, օտա՛ք արև,
Որ շողում եք գլխիս վերև,
Ինչքա՛ն շողաք... դուք ինձ համար,
Միշտ կըմնաք գեշեր խավաք...

1893

ԵԹԻՄԻ ՍԵՐԸ

(Ժողովրդական մոտիվ)

Ա՛խ, սևաչիկ,
Ջա՛ն հայ աղջիկ,
Սև աչերիդ ես դուրբան,
Մտի՛կ արա,
Որ իմ յարա
Սրտիս անես մի դարման:

Էշխիդ առած,
Բլբուկ դառած,
Գիշեր-ցերեկ քո սիրուն
Հա՛ երգում եմ,
Հա՛ երվում եմ,
Աչքիս կարած անուշ քուն:

Ճամփես քարոտ,
Սիրտս յարոտ,
Էս աշխարհում վայնաչաք
Քաշ եմ գալիս,

370

Օրըս լալիս,
Ղարիբ, եթիմ ու անձար:

Ո՛չ հեր ունեմ,
Ո՛չ մեր ունեմ,
Ո՛չ էլ մի տեր, տիրական.
Սրտիս սերը,
Մտքիս տերը
Դո՛ւ ես, ա՛յ իմ սիրական:

Ա՛խ սևաչիկ,
Ջա՛ն հայ աղջիկ,
Սև աչերիդ ես դուրբան,
Մտի՛կ արա,
Որ իմ յարա
Սրտիս անես մի դարման...
1894 թ. Մոսկվա

ԻՄ ՕՐԱԳՐԻՑ

(Նվեր XXX-ին)

Չունիմ ոսկի, չունիմ արծաթ
Քեզ պարզենեմ, նապելի՛ս.
Մի սիրտ ունիմ — սիրով առաա
Եվ այդ սիրտն եմ քեզ տալիս...

Ոսկին, հոգյա՛կ, երբեք կյանքում
Երջանկություն չի՛ տալ քեզ.
Բայց դու սիրող սրտիս խորքում
Բախտի աղբյուր կըզտնես...

5 փետրվարի 1895 թ.

371

✦
Երկուսըս էլ ճնշված կյանքի խաչի տակ,
Երկուսըս էլ ճակատագրից հալածված —
Մենք կյանքի մեջ ժառանգել ենք մի վիճակ.
Եվ մի՛ վիշտ է մեր սրտերին ծանրացած...

Օ՛, տո՛ւր ձեռքըդ... թող մեր անհույս արցունքներ
Բուռըն սիրով իրար խառնվին, միանան.
Գուցե, ընկեր, մեկտեղ տանջվող մեր սրտեր
Մի նոր ուրախ կյանքի աղբյուր մեզ բանան...

11 փետրվարի 1895 թ.

✦
Մատաղ կրծքում սիրտ զգայուն,
Ոսկի հույսեր կրծքի տակ.
Պայծառ դեմքին աչեր փայլուն.
Աչերի մեջ — սիրո կրակ.
Թե ժպտում է — զարնան քնքուշ
Վարդ է բացվում շրթունքին.
Թե խոսում է — ձայնիկն անուշ
Կախարդում է իմ հոգին...
Եվ ամեն ժամ, երբ տեսնում եմ
Այդ նայելի էակիս,
Եվ վառ սիրով փայփայում եմ
Նստած ես իմ ջերմ կրծքիս,—
Ինձ թվում է, թե մահ չկա՛,
Մահու ժամն է — լոկ երազ.
Եվ չեմ ուզում ես հավատալ,
Թե կյանքն ունի ն՛ օրհաս...

16 փետրվարի 1895 թ.

Մոսկվա

ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

I

Հըզդու ժողովուրդ, փառավոր անուն,
Ազգաշինության փառավոր գործեր.
Արձակ ասպարեզ, անձնագոհություն,
Ազգային փառքի քաջանուն զոհեր...
Գահ ու պալատներ, թագ ու թագավոր,
Ազատ ծածանվող ազգային դրոշակ,
Չենք ու կրահներ, անձնուրաց պինվոր,
Մահ հերոսական կամ քաջ հաղթանակ...
Պանծալի՛ օրեր, փառաշու՛րք հրոշակ
Անկախ աշխարհի, ազգի մեծության.
Գեղեցիկ պատկեր... Իսկ պատկերի տակ —
Անցյալդ եմ կարդում,— ազա՛տ Հայաստան:

II

Անարգված անուն, թշվառ ժողովուրդ,
Բըռնավոր ձեռքի արյուն, կոտորած.
Սրտի մեջ խեղդվող բաղձանք ու խորհուրդ,
Փրկության քարոզ՝ շրթունքին սառած...
Բանտ ու աքսորանք, անսանձ բռնություն,
Ազգ ու հայրենիք ճնշող լքծի տակ,
Չորավոր շղթա, անկոր ստրկություն,
Փշրված թագ ու պենք, տապալված դրոշակ...
Եվ ամենուրեք միա՛յն ալերակ,
Միայն անցյալի տխուր ուրվական.
Ողբալի՛ պատկեր... Իսկ պատկերի տակ —
Ներկադ եմ կարդում,— ստոր՛ւկ Հայաստան:

ԿԱՅԾԵՐ

(Նմանողություն)

Ե՛րբ է արձակ, լայն դաշտերում
Արտը ծաղկում, կյանքը եռում,—

Երբ թափվում են գաղնախոտերը
Ձով անձրևի փայլուն շիթեր:

Ե՛րբ է սըրտի լուռ խորանում
Հույսը վարթնում, խանդը վառվում.—
Երբ ընկնում են սըրտի խորքեր
Վառ իդեալի փայլուն կայծեր...

ՄԻԱՅՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐ

Գիշեր է: Մենակ, տխուր, անընկեր
Նստած սենյակում,
Որպես բանտարկյալ — վշտի շղթաներ
Սիրտըս են մաշում.
Եվ ստեպ թռչում է իմ տանջված կրծքից
Խորի՛ն հառաչանք,
Բայց հառաչանքիս չունե՛մ ձայնակից,
Չըկա՛ արձագանք...

Չորս կողմս պատեր — անըզգա, անառնեչ,
Եվ միշտ անվրդով.
Նայում են վերաս անխոս, անմտունչ,
Սառն հայացքով:
Եվ ի՛նչ փուլթ նոցա, թե մի խեղճ էակ
Մինչև առավոտ
Թախծալից սրտով պիտ տանջվի մենակ
Խնդության կարոտ:

Դանդա՛ղ ու տաղտո՛ւկ սահում են ժամերն...
Ո՛ւր են քաղցըր քուն.
Թույլ պլպլում է ն՛ աղոտ լապտերն,
Մուռ է հանգչելուն:
Ա՛խ, ի՛նչ կըլիներ գեթ դու, նազելի՛ս,
Մոտըս լինեիր.
Այս տխուր ժամին արտաառա՛քն աչքի՛ք
Գեթ դու պրեկիր:

Քո մատաղ կրծքին գուլիս խոնարհած,
Երկա՛ր ծամերով
Ես զրույց կանեի քեզ հետ սրտաբաց,
Մտերիմ սիրով:
Քեզ կրպատմեի դարդերց սրտիս,
Իմ ցավն, արտաառա՛ք:
Թե ինչո՛ւ ես միշտ տանջվում եմ, լալիս
Մարդկանցից ծածուկ:

Թե ինչո՛ւ առույգ, մատաղ հասակում
Ես, որպես մի ծեք,
Կյանքի խնջու՛րքից: Խնու՛ւ եմ փախչում —
Միջու սա՛ռն, անառա՛րքեր...
Եվ գիտեմ, մանո՛ւկ, հոգիս ցավագար
Քո մեջ կըզտներ
Յուր դարդ ու ցավին անկե՛ղծ մխիթար,
Սփոփի՛չ ընկեր...

Բայց, է՛հ, իզո՛ւր եմ ես կարոտագին
Եվ լալահայաց
Նայում քո անխոս, սիրուն պատկերին՝
Սեղանիս դըրած:
Դու չըկա՛ս մոտս... Եվ չես էլ լինի...
Ի՛նչ ասեմ բախտին,
Որ ինձ պատժեի է — միշտ լալ, կարոտիլ,
Աչքըս քո ճամփին...

Գիշեր է: Մենակ, տխուր, անընկեր
Նստած սենյակում,
Հազա՛ր-մի ցավեր, հազա՛ր-մի վշտեր
Սիրտըս են մաշում.
Եվ շուրջս միայն չորս պատեր անշունչ
Եվ միշտ անվրդով
Նայում են վերաս անխոս, անմտունչ,
Սառն հայացքով...

I

Ասա՛ ինձ, մանո՛ւկ, չքնա՛ղ արարած,
Որ այս կախարդիչ, լուսնյակ գիշերին
Սիրավառ կրծքիս գլուխդ խոնարհած՝
Ականջ ես դնում իմ ջերմ երգերին,—

Արդյոք իմ ձայնը քո մատաղ սրտում
Գտնո՛ւմ է սիրո քաղցր արձագանք.
Թե երգըս անտես ցնդում է օդում,
Որ վաղն ինձ բերե նոր ցավ ու տանջանք...

II

Գեղեցի՛կ աչեր, սևորա՛կ աչեր,
Որ սիրած կուսիս նազելի դեմքին
Շողում եք, որպես վառվռուն աստղեր,
Դուք կախարդեցի՛ք իմ ազատ հոգին...

Եվ ահա, որպես ձեր հըլու գերին,
Ես ձեզ եմ, աչե՛ր, երգում ու գովում,
Ա՛խ, եթե և՛ ձեր հըլարտ տիրուհին
Երգըս փայփայե՛ր յուր մատաղ կրծքում...

III

Քո վարդ-շրթունքից ջերմ համբույր քաղած
Սիրտըս ալեկոծ ոսկի՛ հույսերով,
Ահա՛, իմ հոգյա՛կ, վվարթ, կրծքաբաց
Նորից նետում եմ ես ինձ կյանքի ծով:

Թո՛ղ գոռ ալիքներ շուրջըս փըրփըրան,
Անհաղթելի՛ է իմ սիրող հոգին.
Միայն այդ ծովում, փարոսի նըման,
Դու լուսավորի՛ր իմ մըթին ուղին...

Թըռի՛ր, իմ նծույգ, սըլացի՛ր շուտով,
Տա՛ր ինձ ցանկալի կովի փոթորիկ,
Կըզվի մեջ միայն ես արյան գընով
Կըփրկեմ իմ խեղճ, ստրուկ հայրենիք:

Տա՛ր ինձ այն աշխարհ — անցյալում հըզոր,
Պանծալի վայրը իմ քաջ պապերի,
Ուր, ավա՛ղ, դժբախտ եղբայրս այսօր
Յուր կյանքն է ողբում՝ օտարին գերի...

Անցան շա՛տ դարեր, անցան շա՛տ տարիք,
Ազգըս շատ ապրեց քաղցրիկ հույսերով,
Բայց նորան երբեք չըծալտաց երկինք,
Չըտեսավ նա կյանք խաղաղ, անվրդով:

Միշտ լուռ ու խոնարհ անողորմ բախտին,
Երկա՛ր սպասեց նա կյանքի զարնան,
Բայց նորա առջև ոսոխ թշնամին
Յուր սրով փորեց կյանքի գերեզման...

Դե՛հ, թռի՛ր, նծույգ, սըլացի՛ր շուտով,
Տա՛ր ինձ ցանկալի մարտի փոթորիկ,
Մարտուն է վինվորն յուր արյան գնով
Ազգին պարգևում հաղթության դափնիք:

ՀԵՐԻ՛Ք Է, Ա՛ԶԳ ԻՄ...

Հերի՛ք է, ա՛յգ իմ, որքան քընաբեր
Օրոր կարդացին քեզ անկյանք մարդիկ.
Դարևոր նիրհով փակված քո աչեր,
Չըտեսան ո՛չ կյանք, ո՛չ լուստ բարիք:

Հըպարտ անցյալիդ հիշատակներով,
Ներկայի առաջ ձեռքերդ ծալած.

Դու միշտ ապրեցիր հին-հին երգերով,
Պատմական բարձեր գրլխիդ տակ դրած...

Հնության ժանգից գոսացան քո մեջ
Ե՛վ ուժ, և՛ եռանդ, և՛ գործի փափագ.
Քեզ հին սերունդը քարոպեց անվերջ
Պաշտե՛լ մասունքներ, պաշտե՛լ ավերակ...

Սթափվի՛ր, ա՛յգ իմ, տես քո առաջն
Նոր կյանք է բացվում, նոր օր լուսանում —
Այդ նոր սերունդն է դեպի լույս-արև
Պարված յուր դրոշմ՝ քեզ առաջ տանում:

Նա մատաղ մըջակ, մատաղ աշխուժով
Փշրում է ժայռեր, խորթ ուղիդ հարթում,
Ասպարեզ ելած թարմ մըտքի ուժով,
Անշարժ սերունդիդ կուռքերն է ջարդում:

Նորա անվեհեր ձայնին ունկնդիր,
Այգ իմ, դու հառա՛ջ, հառա՛ջ համարձակ.
Դու նորան սիրի՛ր, նորան փայփայի՛ր,
Եվ կյանքի կովում քոնն է հաղթանակ...

ԵՐԳ

Սիրո՛ւն գարուն, կանա՛ջ գարուն,
Քեզ ի՛նչ սրտով ողջունեն.
Դու մեզ բերի՛ր լաց ու արյուն —
Էլ ես ուրախ երգ չունեն:

Երգում էի ջերմ կարոտով,
Գովքըդ անում ամեն օր,
Եբբ մեր երկրում քո քաղցր հոտով
Միշտ լցված էր սար ու ձոր:

Երգում էի քնարս լարած՝
Մեր կյանքի լույս օրերում.
Երգում էի բլբուլ դառած,
Քանի վարդ կար հայ երկրում:

Ա՛խ, ի՛նչ սրտով երգեմ հիմիկ,
Քեզ ի՛նչ սրտով ողջունեմ.
Փուշ են դառել վարդ ու ծաղիկ,
Էլ ես ուրախ երգ չունեմ:

Մեր տուն ու տեղ — հող, ավերակ,
Մեր լույս-օրերն խավարել.
Մեր հույսերը տն մոխրի տակ,
Մեր դարդերը՝ ծով դառել...

Անպ ու թուխայ է եկել, պատել
Հայ եղբորս սև կյանքին.
Երկար լափուց արցունքն հոտել,
Էլ վե՛րջ չըկա տանջանքին...

Սիրո՛ւն գարուն, կանա՛ջ գարուն,
Քեզ ի՛նչ սրտով ողջունեմ,
Դու մեզ բերի՛ր լաց ու արյուն —
Էլ ես ուրախ երգ չունեմ:

Մոսկվա, 1896 թ.

ԾՈՎԻ ՎԵՐԱ

Ողջո՛ւյն քեզ, ա՛յ ծով, դու ազա՛տ տարերք.
Առաջին անգամ տեսնում եմ ես քեզ,
Եվ անշարժ կանգնած ես նավի եզերք,
Անթարթ դիտում եմ քո պայծառ երես.

Նայում եմ վերադդ և չեմ կշտանում.
Զարմանքս — խորի՛ն, հիացքս — անհո՛ւն...
Ինձ հսկա նավը քո ծոցն է տանում,
Ավելի՛ խորքեր, ավելի՛ հեռուն:

Եվ որքան առաջ, նույնքան փառահեղ
Սփռում է ջրեր, ալիքներ խաղուն.
Քո ջինջ հայելում ցոլում են շքեղ
Հարավի երկինք, արև, բընություն:

Բայց այդպես չէի ես քեզ երազում
Հեովից քանի քեզ դեռ չէի տեսած.
Ես միայն այժմ, այժմ եմ պզում,
Որքա՛ն կախարդիչ, վսեմ ես եղած:

Ողջո՛ւյն քեզ, ողջո՛ւյն հըզոր ջըրերիդ,
Դու իմ փափագած սքանչելի տարերք,
Օ՛, դեռ շա՛տ օրեր սիրուն պատկերիդ
Ես պիտի նայեմ, նստած քո եզերք...

ԳԻՇԵՐ

Պարզ երկնքում լի աստղերով
Մեղմ սահում էր պարզ լուսին,
Նայում ներքև և մեղմ սիրով
Ժըպտում ծովի երեսին:

Ծովն էլ լռիկ վեր էր նայում,
Նայում փայլուն լուսնյակին,
Եվ ծփալով՝ մեղմ փայփայում
Լուսնի ժպիտն յուր կրծքին:

Գիշերային այդ լուռ ժամին
Հսկա մի ժայռ ոտքիս տակ,
Կանգնած էին ծովի ափին
Ես մտախոհ, մեն-մենակ:

Եվ նայելով մերթ դեպի վեր
Եվ մերթ ծովի երեսին,
Օրհնում էի ես կյանք ու սեր,
Գիշեր, երկինք, ծով, լուսին...

ԱԼԵԿՈՑ ԾՈՎ

Ասա՛ ինձ, ա՛յ ծով, ի՛նչ ես վրդովված,
Այդպես աղմկում դու օր և գիշեր.
Եվ խոբ հատակից՝ մոռալլ, պղտորած,
Եզերք թավալում գոռ-գոռ ալիքներ:

Արդյո՞ք քո անբավ, անմեղ զոհերիդ
Դառն հիշատա՞կն է քո կուրծքը հուզիւմ,
Թե՛ այդ մոնչյունն անկուշտ ջըրերիդ
Կյանքից՝ նորանոր զոհեր է ուսում...

Նստած եմ ափիդ ես տխուր, տրտում
Եվ քո՛ւր հարցեր են ծնվում իմ սրտում.
Բայց դու հուզվում ես, հուզվում, կատաղում
Ե՛վ իմ հարցերն էլ թո կրծքում թաղում...

1896, օգոստոս

Գուրպուֆ

ՍՐՏԱՄԱՆԸ ԺԱՄԵՐԵՆ...

Սրտամաշ ժամերն անցան, վերջապես,
Ա՛խ, ինչպես պայծառ շողում է արև.
Սևաթույր ամպերն, հաղթված գործի պես,
Փախել, պահե՞լ են սարերի ետև:
Եվ շուրջս կրկին ապառ, համարձակ,
Հարավի փարթամ բնության գրկում
Ետում է կյանքը: Ահա ներդաշնակ
Հյուսում է տաղեր ծառերի խորքում
Երգիչ-բլրուկը. նորան ձայնակից
Անթիվ թռչուններ, ասես, մրցելով,
Այս ու այն ծառից, թփերի տակից
Օդն են թնդացնում գողտրիկ երգերով.
Եվ վարդի թփեր, ծառ, ծաղիկ ու խոտ
Փոթորկից հետո կյանք առած նորից,
Ժպտում են ուրախ, սփռում անուշ հոտ.
Անուշ արվություն փչում է ծովից...
Եվ այդ ընդհանուր սթափմունքի մեջ,
Կարծես, լսում եմ մի ձայն հուսատու.
«Ո՛րք ազգի երգիչ, վիշտը չե՛ անվերջ.
«Ձվարթ, լույս օրեր կըսեսնես կ՛ դու»:

1896, Գուրպուֆ

ԾՈՎ ԵՎ ԺԱՅՈՒՆԵՐ

Երկա՛ր ժամեր նայում եմ քեզ,
Ո՛վ անհանգիստ, անհուն ծով.
Ինչպես հուզվում, փրփրում ես,
Դու լերկ ժայռեր լիպելով:

Ե՛վ գոռում ես, կ՛ խուլ հեծում,
Ե՛վ պայրանում, և լալիս.
Բայց ժանգ ժայռեր քեզ չեն լսում,
Քեզ արձագանք չեն տալիս:

Նոքա մի՛շտ խուլ, մի՛շտ անբարբառ,
Քեզ նայում են սառն, անփուլթ.
Նոցա խո՛րթ է, նոցա օտա՛ր
Վիշտ, տառապանք ու պայրույթ...

1896, Գուրպուֆ

6

ՓՈԹՈՐԻԿ

Սև-սև ամպեր կուտակ-կուտակ
Եկան, երկինք ծածկեցին,
Պոտորվեցավ ծովի հատակ
Նավեր խարխախ ձգեցին:

Շփոթ, աղմուկ, իրարանցում,
Նավ, նավապետ, նավաստիք
Շտապ պահվում են ծովածոցում,
Վրա է հասնում փոթորիկ:

Որոտում են ամպերն ահա,
Շանթեր սփռում վերևից.

399

Կուտակվում են ծովի վերա
Լեռներ՝ պղտոր ջրերից...

Ծով այլեկոծ, երկինք խավար,
Խավար տիրած չորս բոլոր.
Աղմկում են խառնված իրար
Երկու տարերք ահավոր:

Եվ ես հեռվից համըր վկա
Այդ մեծապոր պատկերին,
Լուռ նայում եմ — վե՛րջ չկա
Ինձ պաշարած մտքերին...

Մտածում եմ — և՛ կյանքի մեջ,
Որպես այս գոռ փոթորիկ,
Միջտ եռում են հոգսեր անվերջ,
Հուզվում կըրթեր ու չարիք...

Եվ կյանքի մեջ, որպես ծովում,
Շա՛տ է թափվում ուժ ու ճիգ.
Որպես նավեր, ափն են լողում
Ամբողջ ազգեր ու մարդիկ:

Ով լողորդ է հմուտ, փորձված,
Շո՛ւտ է հասնում եզերքին.
Իսկ ով անփորձ կամ թույլ, հոգնած,
Արագ կոհվում փոթորկին:

Կյանքը ծով է... Ե՛վ վա՛յ նորան,
Ով չէ՛ այնտեղ կապ-պատրաստ.
Ով չունի՛ դեկ, չունի՛ կայան,
Փարոս, խարիսխ, առագաստ...
1896, Գուրգուֆ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

(Ծովի առաջ)

Կա՛ր ժամանակ — սերըս ծով էր,
Սիրտըս — խաղուն մի նավակ.
Սիրո ծովում նա լողում էր,
Հառաջ սահում համարձակ:

Հեռո՛ւ չէր ափն, աղջի՛կ չըքնաղ,
Չէի՛ն հուզվում ալիքներ.
Ծովն էր հստակ, ծովն էր խաղաղ,
Հեռվում փարոս — քո պատկեր...

Բայց, ա՛խ, հոգյա՛կ, դեռ չըհասած
Ես դալար ափ — խաղա՛ղ վայր,
Մարդկանց կիրքը, մարդկանց նախանձ
Ծով նետեցին քար ու ժայռ..

Պղտորվեցավ ծովը սիրույս,
Փշրվե՛ց իմ սիրտ — իմ նավակ.
Հանգա՛վ փարոս — չըկա՛ս դու, կո՛ւյս...
Դարձյա՛լ ես ո՛րք, ես մենա՛կ...

ԱՐՇԱԼՈՒՅԱԸ ԾՈՎԻ ՎՐԱ

(Նվեր նկարիչ Վարդես Սուրենյանցին)

Ուզո՛ւմ ես դու տեսնել վե՛ս բնության
Մի հրաշքը — անպատմելի՛ մի պատկեր,
Որից դյուրված, անշարժ, որպես լուռ արձան,
Որին հառած խոր հիացքով լի աչքեր,
Նայե՛ս ապշած, նայե՛ս անվերջ ու անհագ —
Դո՛ւրս եկ ծովափ արջաբույսի ժամանակ:

Ուրո՛ւմ ես դու ողջ էութեամբ նորոգված,
Ամենայն ինչ, ողջ երկրայինն մոռանալ,
Մտքով ապա՛տ, կյանքի լուծը թոթափած,
Անուրջների պայծառ աշխարհ վերանալ,
Գրկե՛լ հոգով տիեզերքը բովանդակ —
Դո՛ւրս եկ ծովափ արջալուսնի ժամանակ:

Օ՛, այդ ժամին դու կրտսեմես, դու կրկասս
Աեհադո՞ ուժը, անմաս փառքը արարչի —
Ո՛վ է և մեծ, և՛ երկրի տերն հանապապ,
Եվ ո՛ւմ պետք է մարդս կյանքում ճանաչի:

1896, Գուրգուհ

9

ԵՐԿՐԻ ՓՈԹՈՐԻԿ

Այս չարագուշակ, ահալոր ժամում,
Երբ ծովն ալեկոծ քար քարին տալու
Խույ, դժոխային ձայներ է՛ հանում
Եվ ափեր լիսում սափտակ փրփուրով.
Եվ հսկայական լեռների նըման.
Մերթ բարձրանում են վայրագ ալիքներ,
Եվ մերթ խորտակվում ու ծովի վերան
Բացվում ահռելի, խավար անդունդներ,—

Ես նստած ափին, կղտոր հարացքով
Աեղ տարերքի քաղիքն եմ նայում.
Նայում — և տանջված, վշտահույզ մտքով
Հեռո՛ւն, դեպի մյուս եզերք սըլանում:
Ե՛վ այնտեղ ահա մի այ՛լ արհավիրք.
Յոսկայի՛ մի խաղ անողոք կյանքի.
Այնտեղ տեսնում եմ արյա՛ն փոթորիկ,
Նամասակույթո՛ւն մի ամբողջ ազգի:

385

Ե՛վ այնտեղ արյուն-արցունքի ծովում,
Որպես լեռնացած այդ սև ալիքներ,
Իրար են դիպվում փրլատակներում
Կիսամե՛ն գոհեր, անթա՛ղ դիակներ...
Եվ մտածում եմ — ծովի փոթորկին
Շուտ կը հաջորդե՛ արև փափազած,
Բայց, ա՛խ, ո՛վ՛ գիտե, այն քանբախտ ազգին
Փոթորկից հետո ի՛նչ է վիճակված...

1896, Գուրգուհ

10

ՆԱՎԱԿԱՐ

— Է՛յ, նավավար, ի՛նչ ես անում,
Ո՛ւր ես նստում դու նավա՞նի
Սև ամպերն են, տե՛ս, բարձրանում
Դեպի երկինք՝ կապուտակ:

Հորիզոնն էլ մութով պատած,
Հեռվում անպե՛ է՛ որոտում:
Նայի՛ր, ծովն էլ կանա՛ց, կանա՛ց
Պարզ երեսն է կնճռոտում...

«Է՛հ, աղա՛ ջած: դարդ մի՛ արա,
Ծովափին եմ ես ծնվել.
Մեծացել եմ ծովի վերա,
Ծովի ջըրով միշտ սնվել:

Մանուկ օրից շա՛ն եմ տեսել
Ե՛վ փոթորիկ: և՛ աղեռ:
Ծովն է՛ ինձ միջո: օրոր անել:
Յո՛ւր չեմ՝ ծանոթ ծովի հետ:

Հայր ունե՛ի — ծովում կորա՞լ
Ռիսի ելած մութ գիշեր:

387

Նորան ալիք լափեց, կերավ,
Նա ձկնորս էր անվեհեր:

Ծովում կորցրի երկու եղբայր,
Նավավարներ ինձ նըման,
Որ իմացա — երկինք, աշխարհ
Ասես գլխիս փո՛ւ կեան...

Է՛հ, աղա՛ ջան, դարդ մի՛ անիչ,
Թե ծովն ինձ էլ կուլ կըտա.
«Կուժն ամեն օր ջուր չի բերի»...
Ամեն բանի վե՛րջը կա...

Կյանքը լավ է... բայց ի՞նչ արած...
Համ էլ մահից ի՞նչ փախչեմ...
Ծովն է տալիս մեկ կյանք ու հաց.
Ծովի տակ էլ կը հանգչեմ...»:

Ասաց, շարժեց նա թիակներ
Եվ բարձրաձայն երգելով,
Քաջ սլացավ ծովի խորքեր,
Սև ալիքներ ձեղքելով...

1896, Գուրպուֆ

11

ՈՂՋՈՒԻՅՆ ՁԵՁ...

Ողջո՛ւյն ձեզ, զարնան նորեկ թռչուններ,
Որ ճվլում եք կանաչ թփերում.
Որքա՛ն ցնծություն, որքա՛ն կյանք ու սեր
Եռում են ձեր պարզ, անհոգ երգերում:
Խուռըն երամով ազատ, համարձակ
Մերթ սլանում եք դուք նետի նըման
Դեպի վեր — անհուն եթեր կապուտակ,
Մերթ իջնում երկիր — թփերի վերան...

888

Հեռո՛ւ մեր կյանքի հոգեմաշ, տըխնու՞մ
Վշտից ու ցավից — բնության գրկում
Մի ա՛յլ սուրբ կյանքի առատ, երկնատուր
Բարիքն եք երգում դուք ձեր երգերում:
Նստած եմ մենակ լուսամուտիս մոտ
Եվ հուզված նայում ձեր այդ հրճվանքին:
Ձեզ ողջունում է փայլուն առավոտ
Գարնան արևի շողերի տակին:
Ա՛խ, ինչպես սիրով կուլեի ես էլ
Ձեզ վարձակի համերգին խառնած
Հոգույս ձայները, երգել ու օրհնել
Արարած աշխարհ, արարող աստված.
Բայց, ավա՛ղ, կյանքում, զարնա՛ն երգիչներ,
Ինձ ա՛յլ երգեր է բախտը վիճակել —
Երգե՛լ արտասուք, կյանքի մութ գիշեր,
Գեթ երգով ազգիս ցավերն ամոքել...

1896 թ. Գուրպուֆ

12

ՀՈԳԻՍ ՄՈՒԱՅԼ...

Հոգիս մոա՛յլ, մոա՛յլ իմ երգ.
Էլ սիրտ չըկա տանջվելու...
Դուրս եմ եկել ծովի եպերք,
Դարդս ծովին պատմելու...

Ա՛յ ծով անեպր, ա՛յ ծով անհուն,
Ե՛վ դու հուզված ու պղտոր.
Իմ տառապայալ, տանջված հոգուն
Շա՛տ նման ես դու այսօր:

Ա՛խ, լսիր ինձ և ինձ հետ լաց
Տո՛ւր վըշտերիս արձագանք.
Թո՛ղ ցավերով մտերմացած՝
Մե՛կտեղ գտնենք սփոփանք...

389

Կամ լսող վիշտս քո վշտի տես,
Որպես քույրեր երկվորյակ,
Այնպես որում կորչեն անհետ,
Թաղվին պղտոր ջրրիդ տակ...

Հոգին մեա՛յի, մեա՛յի իմ երգ,
Էլ սիրտ ջրկա տանջվեալ...
Դուրս եմ եկել ծովի հարկը,
Դարդս ծովին պատմեալ...

Գուրգուֆ, 1896 թ.

ՆԱԻՔ

Մեղմ սուրալով, գուրգուրելով մի այիք
Ծովի ծոցից՝ ային էր գալիս սիրաշունչ:
Նա սիրել էր բարձր բազմած, խանայիք,
Մըռայլ մի ժայռ՝ հավետ անշարժ, անմունչ:

Փրփուր-կրծքում նոր պզգամ սեր, հուպում,
Կույս-այիքը, ծովի հավերժ հարսի պես,
Մեր-համբույրով շո՛ւտ հասնել էր երազում
Սիրած ժայռի բարձր լանջին վե՛հ ու վե՛հ:

Եվ նա հասա՛վ... հասա՛վ, փաղե՛ց, համբուրե՛ց
Ժայռի կուրծքը ու հառաչե՛ց ցափազին.
Փռչիացա՛վ խեղճ այիքը ու մարե՛ց,
Միայն արցունք թողեց ժայռի լուռ կրծքին...

ՎԵՐՆԱԿՆԱՅ

Վերջապե՛ս է... Մեռնող արփին
Վերջին զրոյանով ասկե՛վա
Լույս-համբույր է տալիս երկրին.
Շողաց է՛ թույլ, հի՛ ցափազ:

Մեռնում է օրն... Չուխ իրիկվան
Թալ սաղարթիւր փարեղով,
Խոնավ ջունչ է թողնում վըքան
Ան մեղմ սահուն դեպի ծով:

Եվ խաղում է նա ծովափին,
Ծովի ծրփուն ծալքերում.
Ու շընջում. «Մեռա՛վ արփին,
Գիշեր — կյանք եմ ես բերում...»:

ՄԵՏԵՐ ԳԵՐԵՉՄԱՆ

(Նմանողություն)

Միս՝ գերեզման մոռացվա՛ծ, անտե՛ր,
Թաք հանգչում է այն հերոսն, անվեհեր,
Որ հայրենիքի սուրբ սիրով վառված,
Նորա՛ն էր մատաղ կյանքը նվիրած:
Նա թաղվեց յուր չար ոսոխի ձեռքով,
Անպաք, անդազադ, խեղճ, անտիքական,
Ոնչ իսաչ է կանգնած, ա՛չ էլ քար դրված
Անմահ հերոսի սուրբ շիրմի վերան:

Միայն դեռաբույս համեստ ուռենին
Կանգնած է մենակ լայն դաշտի միջին.
Նա գիշեր ցերեկ ողբում է, սրգում,
Կատարը թեքած դեպի գերեզման:
Եվ այնտեղ նիրհող հերոսին պատմում
Հայրենի երկրի վիճակն՝ անպաշտպան.

«Դեռ չար ոսոխի ճնշող լուծի տակ
Տըքում, հեծում է քո խեղճ հայրենիք,
Եվ ապատության փայտուն արեգակ:
Դեռ նա չի տեսնի... Կանցնեն ջա՛տ տարիք,
Թո հայրենիքում ասկա՛վ են քաջեր,
Եվ դեռ կորեղ է թշնամին դաժան,
Անին տեղ ճնշում, անեն տեղ այիք,
Դեռ չեն դարդարել լաց կոծ ու շիփան...»

Ուրիս լուսն է... Բայց վայրկյան չանցած,
Նորից թեքվում է դեպի մոռացված
Յուրտ գերեզմանը— և նորից սրգում,
Նա ողբ է կարդում այն անբախտ, թշվառ,
Հարստահարված, ըստրուկ աշխարհին,
Ուր խոնարհվում է ամեն մի անձար
Անարգ, բռնակալ ուժի առաջին...

ՕՐԵՐ ԵՆ ԳԱԼԻՍ

(Նվեր Յուրի Վենյովսկուն)

Օրեր են գալիս և օրեր գրնում,
Անվե՛րջ են մարդկանց ցավերն ու հոգսեր,
Եվ նա՛ է կյանքի հարատև կռվում
Մարտնչում, որպես զինվոր անվեհեր,

Ով լույսի սիրով սիրտը բորբոքած,
Ուխտել է լինել մշակ աշխարհի.
Ապրե՛լ — վեհ գործի հերո՛ս անձնուրաց,
Մեռնե՛լ — մարտիրո՛ս վեհ գաղափարի...

ՀԱԼԱԾՎԱԾ ՍԵՐ

Տխո՛ւր ես, ա՛յ սեր, երբ անհամարձակ
Դու դողդողում ես սիրող սրտերում,
Որպես փոթորկից հալածված թռչնակ,
Որ կուչ է գալիս դալսւր թփերում:

Եվ որքա՛ն ծանր է զսպել արտասուք,
Երբ մարդ տանջվում է՝ թաքուն սիրելով,
Օ՛, ինչո՛ւ, հոգյա՛կ, բախտը չարաջուք
Կապեց մեր սրտերն այդ տխուր սիրով...

Սրտամաշ մի վիշտ, ծանր քարի պես,
ձնշում է հոգիս, նապելի՛ ընկեր,

Երբ մտածում եմ, որ այդ սերը մեզ
Ավա՛դ, չի՛ բերիլ լուսապարդ օրեր...

Սիրել ու տանջվել՝ կյանքում հալածված —
Ահա՛ երկուսիս սև ձակատագիր.
Բայց ես կըտանջվեմ... ես շա՛տ եմ տանջված...
Երանե՛ք միայն դու չտանջվեիր...

ԱՆՄՈՌԱՑ ԵՐԳ

(Գամառ-Քաթիպայի հիշատակին)

I

Մեզ համար կյանքն էր խորին սուգ ու լաց,
Երբ հանկարծ մի ձայն մեր հոգին ցնցեց.
Այդ ձայնը երգ էր — մի երգ անմոռաց,
Որի երգիչը հավիտյան լռեց...
Նորան մորմոքիչ, դառն երկունքով
Երգիչը ծնեց բոցավառ կրծքից.
Նորան շա՛տ տարիք արյուն-արցունքով
Երգիչը հյուսեց սըրտի թելերից...
Եվ թռա՛վ երգը, սլացա՛վ արագ
Դեպի տառապյալ հայրենի աշխարհ,
Ուր որպես անվոր, անպարտ նահատակ,
Տանջվում էր մի ազգ տարաբախտ, թշվառ.
Ուր չըկար կյանքի ո՛չ ուրախ գարուն,
Ո՛չ անամպ երկինք, պայծառ արշալույս,
Ուր կյանքն էր — շղթա, բանտ, աքսոր, արյուն,
Ուր մարդն ապրում էր վշտաբեկ, անհույս...

II

Եվ ներս սլացավ երգն այն անմոռաց
Աղքատ գյուղացու անշուք շթևան.
Այնտեղ նա ազատ ավետիք կարդաց,
Ավետիք հուսո, կյանքի նորոգման...

Որպես մայրական քաղցրալուր օրոր,
Նա դիպավ մանկան ընթուշ ակառջին.
Նա փայլեց, որպես ճըրագ լուսավոր,
Գյուղական մուսյ խոճիփի վիշին...
Արձակ դաշտերում հայրենիք երկրի
Նա վի դողանջեց փանգակի երեսն.
Նա օրինեց վաստակն անխոնջ ձեռքերի,
Օրինեց մըշակի արորն ու գութան:
Եվ մերթ ջերմ աղոթք — ծերի շրթունքին,
Մերթ ոգի, եռանդ — փատանու կրծքում,
Ապրեց ու հուպեց երգը սրտագին
Դարերով ստրուկ գեղջուկի կյանքում...

III

Թաավ մա գրուրից մարդաշատ քաղաք,
Եռան կենտրոններ՝ լեցուն աղմուկով,
Ուր շատին բախտը ծաղրում էր վայրագ,
Շատերին ժղպատում կորսացած աչքով,
Ուր մեկը մտանված լացի, գրկանքի,
Մաշում էր կյանքը հապար հոգսերով.
Իսկ միւսը — գավառի լիակրկն կյանքի,
Անվիշտ ապրում էր՝ վիշտը ծաղրելով:
Եվ մտավ երգը շրթեր պարաներ,
Կշտամբեց ոսկու գոռոպ ստրուկներին,
Այցեկեց անպարո, աղքատիկ տղեր,
Ողջունեց համեստ գործարարներին:
Մի տներ նա լացեց աղեխարջ, սրտում
Մի տներ կուշտ խեղաց, առեւ բախտավեր,
Քայց առեւտրեց սրտաշարժ երգում
Եւփում էր հայր վիշտը դարձալուր...

IV

Օ՛, երգ փափուկն, դու երգ ոգեղուն,
Բազմատանջ երգչի անկերձ հարազանց:
Դու հայր աղերս, դու հայր միտնեց,
Դու մեր վշտերի խորին արձագանց:

Թո՛ղ այսօր մահվամբ անողոք խոցված,
Քո ապատ երգին անկյանք, անբարբառ,
Լըռն հավիտյան, աչերը փակած,
Որպես տարաբախտ բըլբուլ նետահար.
Թո՛ղ մահու կապանք, խավար գերեզման
Խլացնեն երգչիդ ձայնը կորովի,—
Դու կայուն, որպես ժայռ անասան,
Դու հզոր, որպես ալիքը ծովի,
Չես մեռնիլ երբե՛ք, օ՛ երգ անմոռաց.
Եվ քանի հայ ազն ապրում է, տանջվում
Դու լքյալ հայի հոգին կախարդած՝
Հավերժ կըթնգաա հայրենի երկրում...

* * * - Ի ԱԼԲՈՄՈՍ

Անօթևան ճանկորդի պես վաստակած,
Ես շատ անգամ իմ անպաճույճ երգերում
Սիրույս համար մի անկյուն եմ աղբսում,
Բայց չեմ գտել ես այն կանանց սրտերում...

Գիտեմ, հոգյա՛կ, որ և՛ այժմ չըկոչված,
Պատահական ես մի հյուր եմ քո աչքում,
Բայց թո՛ղ գոնե սիրույս տեսչանքն անմոռաց
Մընա այստեղ — այս պրուփիդ էջերում...

ԴՆՉ ԱՍՈՒՄ ԵՆ

Ինձ ասում են. «Ձո՛ւր ես այդպես, ո՛վ պոետ,
Օր ու գիշեր դու սեր երգում աշխարհին,
Եվ ցավատանջ ու տխրագին երգիդ հետ
Փառաբանում նաև սիրած քո ցարին»...

Ինձ ասում են. «Հավատացիր, որ սիրուն
Չարժե բնավ մարդ յուր սիրտը եվիրե.
Խաբուսիկ են և՛ սիրո վարդ, և՛ գարուն,
Եվ նազելիդ վաղն ուրիշին կըսիրե...»:

Բայց իմ հոգին խուլ է մարդկանց այդ ձայնին, և
ես օրհնում եմ և՛ սիրո վիշտ, և՛ պատրասք:
Ես ոգեզմայլ սեր եմ երգում աշխարհին,
Առանց սիրո սրտի համար չկա՛ կյանք...

ԲԱՐԻ՝ ՀՐԵՇՏԱԿ

Մարդկանց մեջ մենա՛կ, խե՛ղճ, անմխիթա՛ր,
Ես լալիս էի, իմ օրն էր խավար,
Երբ դու փայլեցիր իմ աղոտ կյանքում,
Որպես մի աստղիկ մթին երկնքում:

Եվ մտերմական մի ջերմ համբույրով
Դու վիշտս դարձրիր ուրախության ծով:
Քո սերը որպես գարնան արշալույս,
Իմ սրտում վառեց նոր կյանք ու նոր հույս:

Եվ քանի՛ հույսեր, քանի՛ անուրջներ՝
Վաղածամ թաղված, վաղածամ ավեր,
Բուռն եռանդով նորից կյանք առան
Եվ ողջունեցին քո մտերմության:

Մենակ չեմ էլ ես... Քո սերն է, մանուկ,
Այժմ կյանքի մեջ ինձ ու՛ ու նեցուկ,
Քո սերն է երգչիս ընկերը միակ,
Ա՛խ, օրհնյալ լինիս, իմ բարի՛ հրեշտակ:

ԴԱՐՉՅԱԼ ՍԻՐՈ ԿՅԱՆՔ

Դարձյա՛լ սիրո կյանք, երջանի՛կ օրեր...
Ա՛խ, ինչպես սիրտս տրոփում է ուժգին.
Ուր էլ նայում եմ — ժպտում է ինձ սեր,
Սիրո է փոխվել աշխարհն իմ աչքին:

Արև, արշալույս, ջինջ երկնակամար,
Աղբյուր ու գետակ, հովիտ ու անտառ,

Թռչուններ օդում, ծաղիկներ դաշտում —
Բոլորն էլ ինձ սեր, սե՛ր են ավետում:

Եվ նախկին հեզնված սիրույս վերքերից
Տառապող հոգիս՝ ամոքված նորից,
Որպես վանդակից պատված թռչուն,
Օրհնում է նա կյանք, երկինք, բնություն:

Օրհնում է և՛ քեզ, իմ անգի՛ն ընկեր,
Դու քնքուշ ծաղիկ նոր սիրուս գարնան,
Ա՛խ, եթե քո այդ հրաշալի պատկեր
Շողա՛ր ինձ կյանքում մինչև գերեզման...

1897 թ.

Դարձյա՛լ՝ Նոր-Տարի... Օ՛, թո՛ղ նորանոր
Վառվռո՛ւն հույսեր, գարնան երակներ
Մեր կյանքը, հայեր, հուլեն և՛ այսօր,
Նորի՛ց բորբոքեն մեր լքյալ սրտեր:

Ի՛նչ անենք, թե ցուրտ, մահաշունչ ձըմեռ
Պատել է այսօր հայրենի աշխարհ.
Թռչնե՛լ են վարդեր, մարե՛լ են աստղեր,
Մեր կյանքը չունի՛ պարզ երկնակամար:

Ի՛նչ անենք, թե մեկ փափագա՛ծ կյանքի
Դեռ չէ շողջողում սիրուն առավոտ.
Անարգար մատնված վշտի, տանջանքի.
Ապրում ենք անլույս, անջուր ու անօդ...

Տանջանքը, հայե՛ր, ծընում է և՛ հույս,
Հուսով ներշնչված ընկնո՛ւմ են գոհեր.
Թո՛ղ տանջվինք... մո՛տ է և՛ մեր արշալույս,
Միայն թե հառա՛ջ, հառա՛ջ անվեհեր...

ՄԵՐ ԴԱՐԸ

Մոլեգին՝ դար է, եղբայր, մեր դարը.
 Հըպարտ՝ նա գենքով, հարուստ՝ գոհերով.
 Կաշկանդած՝ աստծո՝ ապատ՝ աշխարհը,
 Նա գան է, հանում՝ դահճին՝ յուր սրբով:

Չոհվում են ազգեր հանուն սուրբ խաչի,
 Արյան ծովերով՝ աղողուն՝ երկրի:
 «Թե՛ղ խեղճը մեռնի, թե՛ղ թույլը կորչի» —
 Կարդում է մեր դարն՝ յուր դատավճիռ:

Չարության ոգին, լայն ցանցի նրման,
 Պատել է և՛ կյանք, և՛ սիրտ, խղճմտանք,
 Ուր անպարտություն — այնտեղ կախաղան,
 Ուր արդար տրտունջ — այնտեղ հալածանք:

Լուսն ենք — յո՛ւյս, սե՛ր, ապաս գաղափար,
 Օրե՛նք, իրավունք, ազատ, խիղճ, ու ձայն —
 Օ՛հ, մեր օրերուն, մեր դարի համար
 Դոքա ծաղրելի խոսքեր են միայն...

Երկաթ ու վառոթ, արցունք ու ապրան,
 Գարի կուշտ՝ ծիծառ, գառուն խուլ՝ մարտ —
 Մահ, բարիքներ, դափնիք, պանծալի՛,
 Մեր առաջադե՛մ, լուսավո՛ր դարի...

[1898]

ՇԱՏՆՈՒՑ ՄԵՆԸ

Ես տեսա նորան — այն մատաղ կուսին
 Հարսնական շորով՝ տաճարում կանգնած:
 Տանջանքի՛ հետքեր՝ գունատ՝ երեսին,
 Տխուր հայացքը՝ գետին՝ խոճարնած:

Անգոր, անբարբառ, որպես մի գառնիկ,
 Սպանդանոց բերված բռնակա՛ ձեռքով.

Կույսը գապում էր սըրտի՝ փոթորիկ,
 Կույսը լալիս էր սրտի՝ արցունքով...

Եվ նորա կողքին՝ ինքնագոհ, հըստիստ
 Կանգնած էր քեան՝ Կրեստի փառքով.
 Չոհը — կենսավառ, որպես գարնան վարդ,
 Դահիճն — ուժասպառ, խորշոնած դեմքով...

Եվ խուռ բազմության, ծընող, ազգագան,
 Դպիր, քահանա՝ խաչ ու մոմ՝ ձեռքին՝
 Լուռ վրկա էին զոհաբերության
 Այդ սրբագործված վապիր՝ զատկեղին...

Օ՛, խղճո՛ւկ հայ կին, անարգված էակ,
 Հա՛մը ստրկություն — ահա թո անուն.
 Անգարո՛ւն — թո կյանք, անլո՛ւյս — թո վիճակ,
 Արդյոք ե՛րբ պե՛տք է բացվի թո լեզուն...

[1898]

ԴԱՐԱՆԵՐԻ ԲԱՆՔԵՐԻՑ

«Մահ Չոլային, բքել Չոլայի վերա...»
 (Կրագրներից)

Տխո՛ւր մտքերուն՝ ինձ հույզում ապար,
 Այս ի՛նչ՝ ողբալի, յոճվար՝ ժամանակ
 Մեզ վիճակվել է՝ ապրել և անցոր
 Տեսնել չարության լրկտի՝ հաղթանակ:

Խիղճ, պատիվ, օրենք՝ սուրբի ասկ ասված,
 Մարդիկ՝ ժողովում են՝ ապատ՝ զգացմանը.
 Եվ ազգասերի՝ վեղձ ջիւղակի՝ հազված,
 Կոկորդիլոսի՝ բաժնում՝ արտասանք...

Եվ կույս՝ ամբողջի՝ զայրության՝ ու՛ հույզում
 Կորո՛ւստ է՝ ապստոնում՝ շեղքին, աստղանդին,

Որպես պղտոր ծով, լափե՛ք է ուպում
Դալար ափ դիմող արի՛ լողորդին:

Չինամոլության ոգին ավերիչ,
Հանուն ազգային առաջդիմության,
Մարդասպան սրբով փշրում է գրրիս
Անպարտին ճնշում երկաթե շղթան..

Օ՛, մե՛, յ լուսավո՛ր, գովա՛ծ դարավերջ,
Ահա քո բաշխած լույսը աշխարհին.
Կեղծի՛ք, չարություն՛ն, հալածա՛նք անվերջ —
Ահա՛ քո ավանդն հետագա դարին...

[1898].

ԹԵ ՔԵՉ ՕՏԱՐ ՉԷ...

Թե քեզ օտար չէ, ո՛վ կույս նապելի,
Այն վառ աշխարհը վառ երապների,
Ուր միայն սիրող հոգին անարգել
Սիրո թևերով գիտե սավառնել.
Թե մատաղ սիրտըդ պզու՛մ է անհագ
Ծարավն իդեալի, գործելու փափագ.
Թե կրծքիդ խորքում կա մի սրբապան
Անձնուրաց սիրո մաքուր պոհարան,
Ուր միշտ հնչում են անկեղծ, ոգեշունչ
Ե՛վ սիրո աղոթք, և՛ սիրո մրմունչ. —

Ա՛ռ քեզ իմ սերը... Իմ մենա՛կ կյանքին,

Եղի՛ր, հա՛յ աղջիկ, ընկեր անմեկին:
Բայց թե քո սրտին խորթ են ու օտար
Սիրո անուրջներ, ցընորքի աշխարհ,
Թե դու պավակ ես փարթամ ու շքեղ
Այն անմիտ կյանքի, ուր միշտ սիրո տեղ,
Փայլում է ոսկին, հնչում է մետաղ,
Ուր կեղծ է և՛ լաց, շինծու և՛ ծիծաղ...
Թե քո օրերն էլ անցնում են, ո՛վ կույս,
Անհոգ, անխորհուրդ — և՛ հոգիդ անհույս
Նիրհում է անշարժ, կանգուն ջրրի պես,

Կիրք, ավյուն ու խանդ թե ծանո՛թ չեն քեզ, —
Գընա՛, հեռացի՛ր... Տանկալի՛, անգի՛ն
Դու շքեղ պարզ ես մեծատան կրծքին...

[1898]

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Որպես ձմռան շղթաներում կաշկանդված
Մայր-երկիրը լուռ հեծո՞ւմ է ըղձալով,
Որ կա՛ գարուն և նա մի օր անկասկած
Փայլելու է՛ երկրին նորից կյանք տալով. —

Այդպես և՛ դու, իմ տառապյա՛լ ժողովուրդ,
Դու տանջվելով, չես դադարում հուսալու,
Որ կա՛ քո մեջ մատաղ մի ուժ — նոր սերունդ,
Եվ այդ ուժն է քո կուռ շղթան փշրելու...

[1898]

ՏՈՒՐ ՉԵՌՔԴ, ԸՆԿԵՐ...

Տո՛ւր ձեռքըդ, ընկե՛ր, — այս ծանր օրերին
Թո՛ղ գործի սիրով հուպվին մեր սրտեր.
Նայի՛ր — մեր առջև շա՛տ նեղ է ուղին.
Մեր շուրջը — դժգոյն: սրտամաշ պատկեր...

Դեռ խոր թմրություն հայրենի երկրում,
Ազգը ծարավի ուսման, գիտության.
Ազգային դեկը անշարժ ձեռքերում,
Եվ իշխող ոգին հետադիմության...

Վառ մտքի առաջ փակված ասպարեկ,
Թզուկին պահած և՛ գործ, և՛ դափնիք.
Օ՛, ընկեր, կարձե՛ս, մեր կյանքն է՛ երրկես,
Ուր քաջ վխտում են խեղկատակ մարդիկ...

Տգետը — գիտուն, անգործը — մշակ,
Ազգային հացով նա՛ է կշտանում,
Ով հոգով առքատ, երեսին դիմակ,
Հայրենի արտում որոմն է ցանում...

Ազգի գանձերին դեռ գողեր պաշտպան,
Լույսին թշնամիք — մեկ լուսավորիչ.
Ոչխարի վերա գալին է պահապան,
Կույրը — առաջնորդ, համիրը — քարոսիչ...

Տո՛ւր ձեռքդ, ընկե՛ր, լարե՛նք մեր ուժեր,
Անդով գործի է մեր կյանքը կարոտ.
Առա՛տ է հունձը, սակա՛վ — մշակներ,
Դեռ խո՛ր է նինջը, դեռ լույսը աղո՛ւ...

[1898]

ԽԱՂ ՉԷ...

Խա՛ղ չէ իմ սերը, ո՛վ կույս գեղեցիկ,
Ես քեզ սիրեցի անձևներ սիրով.
Մի՛ սեր, որ չէ՛ միշտ անհոգ, երջանկե՛կ,
Որ միշտ չէ՛ հուզվում խաղուն կրթերով...
Սե՛ր, որ սիրողին անուշ վարդի հետ
Բերում է ն՛ փուշ դառն հոգսերի,
Սե՛ր, որ չըզիտե կյանք էրանավետ,
Առանց տանջանքի, առանց մշտերի...
Եվ այդ բազմահոգ, վշտառատ կյանքում
Միշտ քաշ, անվիատ տանջվելու համար
Ես սեր եմ երգում. կյանքի փոթորկում
Սերն է եռանդի աղբյուր տեսաբար:
Ես քեզ սիրեցի, չքնա՛ղ արարած,
Սիրավառ սրտով խաչս կրելու.
Ես քեզ սիրեցի — միշտ ոգևորված՝
Կյանքում ապրելու, կյանքում գարեկու...

[1898]

ԵՐԿՐԻ ՄՇԱԿՆԵՐ

Օ՛, ծանր Խոզսերի խղճուկ պավակներ,
Որքա՛ն համբերող, քաշ է ձեր հոգին.
Տանջվում էք անվերջ — օրեր, տարիներ.
Կարծես, տանջանքն է միայն ձեր բաժին...

Մանուկ օրերից ձեր մեջ ապրելով,
Վկա եմ եղել ձեր շա՛տ ցավերին.
Տեսել եմ, ինչպես տանջանքի գընով
Դուք հաց եք տալիս հայրենի երկրին:

Տեսել եմ, ինչպես հուսալից, զվարթ
Դուք մշակում եք անմշակ դաշտեր.
Ինչպես տանջանքում անկաց, անվիատ
Դուք երգ եք երգում — վաստակի՛ երգեր:

Տեսել եմ, ինչպես անապա շոգին,
Երբ կրակ է թափում արեվառ երկինք,
Ոսկեշող արտում, մանգաղը ձեռքին,
Դուք մեջք խոնարհած՝ թափում եք քրտինք:

Տեսել եմ, ինչպես գունաթափ աշնան
Հայրենի երկրի կուրծքը պատռելով,
Այնտեղ թաղում եք գանձերի նցման
Ոսկի՛ հատիկներ, ոսկի՛ հույսերով...

Տեսել եմ զարնան սիրուն օրերին,
Պայծառ արևը դեռ նոր ծագելիս,
Կանաչ, ալեծուփ արտերի մոտին
Չեզ ծունկ խոնարհած՝ ջերմ աղոթելիս:

Տեսել եմ, ինչպես է՛ ցուրտ, տաղտկալի
Չմռան գիշերներ անսասձ խրճիթում,
Հոգևած ձեռքերիդ գաղար չե՛ք տալի —
Խոփն եք նորոգում, մանգաղը սրում...

Եվ այդպես ապնիվ գործին անձևներ
Ապրում, տանջվում եք անբավ հոգսերում,
Եվ ձեր տանջանքում, հերո՛ս-մշակներ,
Արդաք յաստակն է ձեզ ոգևորում:

Օ՛, հայրենիքիս քրտնաջա՛ն որդիք,
Որքա՛ն համբերող, քաջ է ձեր հոգին.
Չեզնո՛վ է միայն կանգուն հայրենիք.
Համբո՛ւյր ու օրհնա՛նք ձեր սուրբ վաստակին:

[1898]

ՍԵՐՄԱՑԱՆ

Փա՛ռք և երանի՛
Քեզ, քա՛ջ սերմնացան,
Որ դաշտն հայրենի
Չես թողնում խոպան,
Որ ջերմ հույսերով
Դու նորա գրկում
Ապրում ես սիրով,
Եվ սիրով տանջվում...

Փա՛ռք քեզ, որ հպոր,
Անվիատ հոգով
Թափում ես, մշա՛կ,
Դու առատ քրտինք.
Քո սուրբ քրտինքով
Բազո՛ւմ — բյուրավո՛ր
Ապրում են մարդիկ
Խաղա՛ղ, երջանի՛կ:
Անխոնջ, ժըրաջան
Դու մեղվի նըման,
Հանգիստ չըզիտես
Հայրենի երկրում.
Վիշտ, ցավ ես կըրում
Դու նորա կրծքին,

Մի՛շտ ուրախ-երես,
Մի՛շտ զվարթագին:

Դու երգ ես երգում
Վաստակի ժամին,
Ոգեվի՛ց երգեր,
Սրտառո՛ւջ երգեր,
Եվ նոցա քամին
Առնում է, տանում
Սարեր ու ձորեր,
Անտառի խորքեր...
Ծիծաղ ու հրճվանք,
Կյանքի վայելքներ,
Լաց ու տառապանք,
Դառըն զրկանքներ,
Օրհնանք ու աղոթք —
Չայրույթ ու բողոք,
Բոլո՛րն էլ երգով,
Վառ՝ զգացմունքով
Պատմում ես միայն
Դու մայր-բնության...
Եվ նա ձայնակից,
Ո՛վ ժիր սե՛րմնացան,
Սրտաբուխ երգիդ,
Քո ջերմ զգացման,
Յուր սրտի խորքից
Տալիս է քեզ միշտ
Քաղցր արձագանք,
Սիրող մոր նըման:

Վաղ առավոտյան
Վառ արշալույսին,
Օրը բացվելիս,
Արևը գարնան
Քե՛զ է առաջին
Ողջույնը տալիս.
Իրիկնաղենին,

Երկրի երեսին,
Երբ մութ է իջնում,
Քե՛յ է նա նորից
Լեռան հետևից
«Մա՛ս բարև» ասուս,
Քե՛յ է համբուրում,
Քո դեմքը շոյում
Ցուր հեցիկ շնչով
Չեփյունն հովասուն,
Քե՛յ է կախարդում
Քո ուշքը խըլում
Անուշ կարկաչով
Անհանգիստ առան,
Գետակը ձորում,
Թռչունը օդում —
Բոյո՛րն էլ պիրով
Քե՛յ են ողջունում,
Քո վառասկն օրհնում
Ներդաշնակ ձայնով...
Քո սերն է երգում,
Անխուճ սերմնացան,
Եվ իմ հեկ ժառանգ
Յուր անկեղծ հրաքով,
Քե՛յ եմ կրանք ժողովում,
Քեկ կյանք բարեփից
Գըթոտ երկնքից
Արտիս աղոթքով,
Ես աղոթում եմ,
Որ միշտ լի՛ ժիրով
Քեկ ժպտա երկինք
Քո վաճճ գործում,
Որ միշտ երկնառատ
Արև-անձրևով
Ծաղկի քո վառասկ
Հայրենի երկրում...

Քա՛ղք է երանի՛
Քեկ քա՛ջ սերմնացան,
Որ դաշտն հայրենի
Չես թողնում խուզան,
Որ վառ հույսերով
Գու նարազ գրկում
Ապրում ես սիրով,
Եվ սիրով տանջվում...

[1898]

ԱՅ ՍԵՎ ԱՄՊԵՐ...

Ա՛յ, սև ամպեր, վա՛յ սև ամպեր,
Սիրոս պատեց սև ու մութ,
Յարաք ի՛նչ եք դուք ինձ բերում,
Գարնան անձրև՝ թե կարկուտ...

Հուամվ-լուսով արտ եմ ցանել,
Արյուն թափել ու քրտինք,
Ողջ սուրբերին մոմ եմ վառել,
Ազոթք արե՛ն, ոք երկինք,
Արտիս նայի, տունս խնայի,
Օր տա, կյանք տա իմ հացին,
Վա՛յ, ցալեքիս... աստված չա՛նք,
Թե որ անես՛ց, մընացի...

Ա՛յ սև ամպեր, ի՛նչ եք գոռում,
Սիրոս պատեց սև ու մութ,
Յարաք ի՛նչ եք արտիս բեքում,
Գարնան անձրև՝ թե կարկուտ...

[1898]

«ՍԻՐԵՑԵՔ ՄԻՄՅԱՆՑ»

Ես տաճար մտա... «Սիրեցե՛ք միմյանց»
Լսվում էր բեմից քարոզ փրկչավանդ,
Եվ ստվար շարքեր բարեպաշտ մարդկանց
Աղոթում էին այնտեղ շերմեռանդ:

«Սիրեցե՛ք միմյանց»... Օ՛, վե՛՛մ ուսմունք,
Որ միշտ կրկնվում ես միայն տաճարում.
Եվ միայն այնտեղ անչար պգացմունք,
Գուցե, վարթեցնում մարդկանց սրտերում...

Շա՛տ եմ փափագած, որ լսեմ ես քեզ
Ե՛վ կյանքում — հեռու տաճարի բեմից,
Բայց ի՞նչ փափագ... դու հալածված ես
Ե՛վ մարդկանց սրտից, և՛ կյանքի շեմից...

ԵՐԱԶ

Ես երազ տեսա... Արյունով ներկված
Հայրենի երկիրն նորից կյանք առած,
Դարևոր ահեղ, հա՛մառ կովից հետ,
Նա ողջունում էր գարուն լուսավետ:

Եվ հնչում էին այնտեղ ոգելից
Ապատ երգ ու տաղ ապատ սրտերից.
Այնտեղ շրջում էր դափնիներ ձեռին
Սուրբ ապատության չքնաղ դիցուհին:

Շրջում էր սար, ձոր, մտնում գյուղ, քաղաք,
Ամեն տեղ երգում գարնան հաղթանակ.
Եվ լսում էի ես նորա թովիչ,
Քաղցրալուր ձայնը. «Լսի՛ր, ո՛վ երգիչ,

Աշխարհ եմ եկել, բայց ո՛չ երկնքից,
Ծնվել եմ ազգիդ արնաներկ կրծքից,

Ուր ապրում էի ես այնքա՛ն դարեր
Եվ տեսնում ազգիդ սրտամաշ ցավեր...

Ես տանջվում էի, անպոր արտասվում,
Հայրենի երկրիդ նոր կյանք երազում.
Եվ փա՛ռք քո ազգի մարտիրոսներին,
Նոցա շիրիմներն ինձ աշխարհ բերին:

Անցել են օրերն անսանձ բռնության
Փշրվել է արդեն և՛ սպանիչ շղթան:
Էլ մի՛ լար, երգի՛չ... Թող այսուհետև
Քո մուսան երգի նոր կյանք ու արև...»:

Ասաց դիցուհին և ձեռքին բռնած
Վերջին պըսակը դեպի ինձ պարպեց.
Նայեց քընարիս, խոնարհվեց կամաց,
Եվ մի ջերմ համբույր ճակատս այրեց...

Չարթեցա իսկո՛ւյն... Ավա՛ղ, երազիս...
Խորին տրտմություն համակեց հոգիս...
Նայեցի շուրջըս — լաց, սուգ ու խավար
Դարձյա՛լ պատել էր հայրենի աշխարհ...

Ա՛Ն, Ի՛ՆՉ ԱՍԵՄ

Ա՛խ, ի՛նչ ասեմ ես իմ յարին,
Անգուժ յարըս ինձ խաբեց.
Սերիս նետը դիպավ քարին,
Սիրտըս արնի ծով կապեց...

Բլբուլի հետ խոսք մեկ արի.
«Ե՛կ վարդ սիրենք ու աղջիկ,
Դու ալ-վարդի, ես կույս-յարի
Սիրովն ապրենք երջանիկ...»:

Բայց ինչ ասեմ անգուժ կուսին,
Գարուն կյանքս սև արավ...
Բլբուլն հասավ իր մուրապին,
Սիրտըս արնի ծով դառավ...

ՄԻՔԵ ՎԵՐՁ ԱՐԴԵՆ:

Մի՞թե վերջ արդեն մեր նվիրական
Բողոք հույսերին ու երազներին,
Որ միշտ լուսավառ աստղերի նման,
Մնալ շողում էին կյանքի գիշերին...

Որպես ճամփորդն է չոք անապատում
Օսպի հույսով՝ անցնում ձիգ ուղին.
Որպես ծաղիկն է գիշերվա մթում
Նվազած՝ մընում վաղորդյան ցողին.

Ա՛յս այդպես և՛ մենք հոգնած, տառապած
կյանքի կռիվներում, ձմռան գիշերին,
Երազում էինք գարնան լուսաբաց...
Մի՞թե վերջ արդեն մեր երազներին...

Բայց ո՛չ... Թո՛ղ ազգիս անլույս երկնքում
Կեռ շանթ ու ամարոպ որոտան՝ ուժգին.
Մե՛րն է գարունը... Քանի մեր կրծքում
Զե՛՛ հանգել կըրան, չէ՛՛ մնել հոգին...

ՊՈՇՏԻՆ

Պոե՛տ, դու Խպարտ, սեզ արծվի նման,
Բարձրից մի՛ նայիր տղգետ ամբոխին.
Եվ կըծու երգով մի՛ ծաղրիր նորան,
Շանթեր մի՛ թափիր խղճումի գլխին:

Ինչո՛վ է, աաա՛, ամբոխն, եանցավոր,
Որ խողթ եւ նորան ցր հոգու ձայներ.
Դու վարդ ես երգում, պոե՛տ բախտավոր,
Երբ նորա կյանքին պատած մն փշեր...

Ի՛նչ անե՛ ամբոխն, ի՛նչպես հասկանա
Քո գողտրիկ տաղերն, երբ թներ առած,

Դու միշտ ապրում ես ամպերի վերա,
Կյանքից անջատված, եթե վերացած...

Ամբոխը, պոե՛տ, գավակ է երկրի,
Լուսապուրկ գավակ, քրոնաթոր մշակ,
Նա միշտ կարո՛տ է կյանքի երգերի —
Երգի՛ր նորան հաց և արդար վաստակ:

Երգի՛ր նորան լույս, բարիքներ ուսման,
Եղի՛ր ամբոխին ուսուցիչ-ընկեր.
Նստի՛ր նորա հետ մի ճաշի սեղան,
Շոշափի՛ր մատից դու նորա փերքեր...

Ապրի՛ր նորա հետ, նորա տանջանքով,
Մի՛ գվիր նորան ձեռքը պարպելու.
Դու ուժ ներշնչիր նորան քո երգով —
Խավարի կապանքն անվախ փշերելու...

Եվ տե՛ս, ո՛վ պոետ, քեզ այն ժամանակ
Որպիսի՛ վիրով կըսիրե ամբախ.
Սե՛րն այդ կրկնուսե քեզ դափնե պսակ,
Սե՛րն այդ կրկնագնե քեզ հավերժ կրթող...

[1898]

ԴՈՒ ԵՆՎԻՐՏ...

Դու անվիշտ երգ ես խնդրում հայ երգչից
Ներկա օրերին, նապեյի՛ ընկեր.
Բայց, տե՛ս, այդուն է կաթում իմ սրտից,
Աչքիցս հոսում այրո՛ղ արցունքներ...

Չարագուժ ամպեր, լեռների նըման,
Եկել կիտվել ես մեր անտեր գլխին.
Մոա՛յլ եարիպուն, հեռովում Գողգոթան,
Ծա՛նրը է մեր խաչը, դժվա՛ր — մեր ուղին...

Մենք կյանք մաշեցինք այս անհավասար,
Դարևոր կովի փոթորիկներում,
Բայց հաղթանակի այգը լուսավառ
Չշողաց մի օր հայրենի երկրում:

Թափվեց ն' արյուն, ընկան ն' զոհեր,
Բյուրավոր զոհեր անպուսպ չարության,
Բայց դարձյա՛լ նույն վիշտ, նույն դաժան օրեր,
Նույն խավար կյանքը, որպես գերեզման...

Վերջ ուրախ երգիս, իմ չքնա՛ղ մանուկ,
Էլ ի՛նչ ուրախ երգ ներկա օրերում.
Տե՛ս, ծով է կապել հայի արտասուք,
Կյանքը սևացել հայրենի երկրում...

ԴԱՐԵՐ ԵՎԱՆ...

Դարեր եկա՛ն, դարեր անցա՛ն,
Բայց դու հիվանդ, ուժասպառ.
Քո վերքերը չամոքվեցան,
Իմ բազմատանջ հայ եղբայր:

Երկինք հասավ սրտիդ մորմոք,
Քարը ճաքե՛ց քո լացից.
Լսե՛ց աշխարհ... Բայց քեզ ոչ ոք
Չեղավ անկե՛ղծ կարեկից:

Որպես բախտի մի խորթ զավակ,
Մոր զգվանքին կարոտած,
Դու քամեցի՛ր վշտի բաժակ,
Սրտիդ — արյուն, աչքիդ — լաց...

Մանուկ օրից տեսա ես միշտ
Փշյա պսակ քո ճակտին.
Կյանքիդ ընկեր — ցավեր ու վիշտ
Կյանքիդ երկինք — միշտ մորթին:

Եվ այսօր էլ քեզ տեսնում եմ,
Դու դարձյալ խեղճ, դու անտեր,
Հոգիս մնայլ՝ արտասվում եմ,
Երգում խորունկ քո վերքեր:

Բայց, ա՛խ, իմ թույլ, հիվանդ եղբայր,
Քո խոր խոցերն երգելու
Թույլ է իմ ձայն, թույլ — իմ քընար,
Անկոր — ն' խոսք, ն' լեզու:

ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻՆ

(Սասունի կոտորածի առթիվ)

Որդեկորույս խղճո՛ւկ մայրեր,
Մի՛ լաք այդպես դառնագին,
Որ սիրասուն ձեր զավակներ
Կյանքը կոհած հեզ ազգին,
Մատա՛ղ օրեր, ծաղի՛կ հասակ,
Ծընող, քույրեր մոռացա՛ն,
Եվ սուրբ գործի քաջ նահատակ՝
Ռազմի դաշտում փռվեցա՛ն...

Ո՛չ հոգեբուխ սուրբ աղոթքը
Օրհնեց անթաղ դիակներ,
Ո՛չ մայրական դողողջ ձեռքը
Փակեց անկյանք, սառն աչեր,
Միայն երկինք — խավար երկինք
Արյամբ ներկված աշխարհի
Տեսավ բարձրից, օրհնեց լռիկ
Վերջի՛ն ջունչը քաջերի...

Բայց դուք մի՛ լաք, ո՛վ հայ մայրեր,
Ձեր սնուցած քաջ որդիք
Ձեին սիրում արտասուքներ,
Երբ բազմատանջ հայրենիք

Ազատության ջերմ փառագով
Ազգից խնդրեց ողջակեպ,
Նոքա անլաց, վառված հոգով
Վերջին համբույր տվին ձեզ...

Վերջին համբույր.. Եվ սրբացան
Դեպի լեռներ արևաներկ.
Մատաղ ձեռքին — սուր, հրացան.
Վարդ-շրթունքին — ապառ երգ...
Մի՛ լաք, մայրե՛ր, դուք երջանի՛կ
Եվ անմահ եք, որ ազգին
Պարզեցիք հերո՞ս որդիք.
Փառք չի՛ հասնիլ ձեր փառքին...

ԻՄ ԺԱՆՊՈՒՆԻՑ

Այսքան չարություն, այսքան անողորմ
Բախտի հալածանք և թույլ տանջանքի,
Անմեղի արցունք, աեպրիք բողոք...
Յ՛, մի՛թե այս է կամքը երկնքի,
Մի՛թե քեզ ծաղրի ծամար նա, աստված,
Խեղճին, տկարին դու կյանք պարգևած..

ՕՒՐԵԼԻ՛ ԸՆԿԵՐ...

Միտե՛լ՝ ընկեր, դու մի՛ վարմանար,
Որ մատաղ կյանքիս եռուն հասակուն
Այնքան տխուր է հնչում իմ քընար:
Վիշտ ու թախիծ են կարդում իմ երգում:

Ծնված հեզ երգիչ մի դժբախտ ազգի,
Միշտ մըռայլ տեսա երկինքը գլխիս.
Ես շատ վա՛ղ ուսա տանջանքը կյանքի,
Վա՛ղ մտերմացավ վըշտի՛ հեռ հոգիս:

Անմեղ հասակից օրորացիս անտ,
Ուր պետք է սքրտս մեղմ օրոր շոյեր,
Ուր պետք է ժպտար կյանքի առավոտ,
Ես տեսա միայն սե ու մութ օրեր...

Տեսա կատաղի չարության մատնված
Անպէս թշվառներ ժանտ դահճի առաջ
Լսեցի անտուն, դռնե-դուռ ընկած
Հարապատ ազգիս աղերսն ու հառաչ...

Այո՛, ընկե՛ր իմ, դու մի՛ վարմանար,
Որ գարուն չունի էլ մատաղ հոգիս.
Արյուն-արցունքով եերկված իմ քընար
Ազգիս վշտին է արձագանք տալիս...

ԱՆԲՈՒՆ ԳԻՇԵՐ

Խորին գիշեր է: Բուռն տենչանքով
Ես քուն եմ խնդրում, քուն չկա աչքիս.
Բարձրս թրջում եմ աղի՛ արցունքով,
Այնքան՝ հուզված է ցավատանջ հոգիս:

Եվ շուրջս տիրած թանձր խավարում
Ծանր խոկումներ, դառն զգացումներ
Ճնշում են հոգիս, միտքս սլաշարում,
Եվ հանդես բերում ահեղ տեսիլներ:

Տեսնում եմ արյուն, դժոխքի տանջանք
Ոտնակոխ եղած հայրենի երկրում.
Ապիկա՛ր բողոք, անհե՛ղա աղերսանք,
Արնաներկ տապար դահիճի ձեռում...

Եվ օհրա մորմոռոզ չաց, կոծ, աղաղակ.
Արյուն ա հրդեհ, աեգուր ավերած.
Բռնե՛լ է և՛ գուռ, և՛ ջեն, և՛ քաղաք.
Եվ լուռ՝ երկնքից նայում է աստված...

Եվ դու վիպ ճըկած, հուսահատ դեմքով,
Իմ անձա՛ր, եղբայր — անձա՛ր մոր զավակ,
Դու խաչ ես հանվում չարախինդ երգով,
Օ՛, արևելքի ծաղրված նահատա՛կ:

Ա՛հ, սև տեսիլներ... ողբո՛ւմ եմ անպոր,
Եվ ջերմ կարոտում վառ լուսաբացին.
Շո՛ւտ ծագիր, արսի՛ր, հասի՛ր, սպաճառ օր,
Գուցե, դուք վերջ տաք իմ սուգ ու լացին...

ԳԻՇԵՐՎԱ ԵՐԳԵՐԻՑ

Լեռան լանջերից հովաբուրյո ջնջով
Գիշերն է իջնում լույսերը վառած.
Իջնում նրբաքող թևերը փրոած.
Ու հուշիկ անցնում սաղարթի միջով:

Եվ գով համբուրյով նա ճանապարհին,
Սիրող մոր նըման, անուշ զըզվանքով
Նի՛րի է շըջընջում մեզմ օրորանքով
Թավշյա դալարին, ճաղկին ու ծառին...

Նիրհում է երկիրն օրորների տակ,
Հոգնած ցերեկվա անլուռ աղմուկից.
Լուսինն էլ որպես մի քույր ետքերից,
Սփռում է վերան շողահյուս վերմակ...

ԿԱՐՈՏԱՆՔ

Մտքի ծով ընկած՝ ծովի ափերին
Լուռ թափառում եմ, որպես ուրվական.
Վարդ-լուսաբացին թե խոր գիշերին
Երկինքն է թախծիս անմոռնջ վըկան...

Թախծում եմ, ընկե՛ր, ու քեզ փափագում
Գեղուն վայրերի կապույտ երկնի տակ.
Այս ճոխ բընության թավածիլ զըրկում
Միայն դո՛ւ չըկաս, ա՛յ իմ հըրեշտակ:

Խաղուն առվակի կարկաչն եմ լըսում,
Թե ականջ դընում բըլբուլին հովտում —
Չայնի՛կդ է անուշ հոգիս երապում,
Անո՛ւջ լեզվիդ եմ երված կարոտում...

Ա՛խ, ո՛ւր ես, թե ա՛ն, թըռի՛ր, իմ թըռչնա՛կ,
Շողա՛ գեթ վայրկյան, որպես լույս-երապ,
Իմ կարոտ աչքին... Այս շող-երկնի տակ
Միայն քո շողուն պատկերն է պակա՛ս...

Ո՛ՒՐ ԵՍ, ՀԱՅ ԲԸԼԲՈՒԼ...

(Գամառ-Քաթիպայի հուշարձանի առաջ)

Ո՛ւր ես, հա՛յ բըլբուլ, ձայնիդ է կարոտ
Մեր հոգին երված, մեր սիրտը յարոտ...

Սև սուգ է պատել մեր կյանք ու օրին,
Սև թուխպ է կապել մեր սար ու ձորին.
Գիշերն է անլույս մեր կյանքը մաշում,
Քո լույս-երգերի կարոտն ենք քաշում,
Էլ մեզ չես երգում զարնան առավոտ...
Ո՛ւր ես, հա՛յ բըլբուլ, երգիդ ենք կարոտ:

Սարե-օար ընկած՝ մենք վա՛յ ենք կանչում...
Բախտավոր ազգեր մեզ չեն ճանաչում.
Ծարա՛վ, անոթի՛, օտա՛ր, խըղճալի՛,
Հաց-ջուր ենք ուլում — մեզ թո՛ւլն են տալի.
Մեր ճամփեն դըծվա՛ր, մեր ճամփեն քարո՛տ...
Ո՛ւր ես, հա՛յ բըլբուլ, ձայնիդ ենք կարոտ:

Անտեր հոտի պես, անկայան կյանքում
Մենք հոշոտվում ենք գայլերի ճանկում...

Երկի՛նք ենք նայում — նա չի՛ մեղքանում,
Մեր լեզուն կըտրած՝ մեկ խաչ են հանում.
Անձեն մատա՛ղ ենք՝ կապած ձեռ ու ոտ...
Ո՛ր ես, հա՛յ բըլբու, ձայնիդ ենք կարոտ:

Լեզվով չի՛ պատմվի հայու դարդ ու ցավ,
Հայի արյունով աշխարհ ներկվեցավ...
Սիրտըն է մըղկտում, սիրտն է սևանում.
Ոչ ոք մեր լացին ականջ չի՛ անում.
Եթի՛մ կանգնել ենք գերեզմանիդ մոտ...
Ո՛ր ես, հա՛յ բըլբու, երգիդ ենք կարոտ:

Բըլբո՛ւ, դու մեկ հետ տանջվում ու լալիս,
Մեր անհույս օրին — հույս էիր տալիս.
Դու երգում էիր — ապգ ի՛մ, մի՛ սըգա,
Հուսով եմ, թո վարդ — գարունն էլ կըգա...
Ո՛ր ես, հա՛յ բըլբու, ձայնիդ ենք կարոտ...*

ԱԼԵԿՍԱՆԻ ՄԱՔՐ

Բա՛ց թո գիրկը — լո՛ւյս օթևանդ սրբապան,
Հայր զըթառառ ողորմած
Քե՛զ է գալիս հայ աշխարհի մեծ գուսան,
Ազգի սիրով պըսակված:

Ջերմ սիրահար հեզ հայրենի աշխարհի,
Բեղուն մըշակ գիտության —
Մերմնացան էր նա անձանձիր, քաջարի,
Գլխին այիք ծերության:

Ավարայրի խոսնակ բլբու տըխրաշունչ,
Հայ գարունքին կարոտած,
Նա երգում էր հայի մորմոք ու մըրմունչ,
Հայի փառքը կորուսած...

Նա երգում էր, նա պատմում էր աշխարհին
Հարաչարչար հայ կյանքի
Տըխուր վեպը — հայ վիճակը նոր ու հին,
Հայի խաչը տանջանքի...

Բա՛ց թո գիրկը, հա՛յր զըթառառ, ողորմած.
Հո՛ւր է գալիս քեզ հավետ
Հայի սըրտում լույս-անունով սըրբացած
Ազգի գուսան-Նահապետ:

ԴԵՊԻ ՎԵՐ

Ես սիրում էի միջոտ ելած վերև —
Բարձր սարալանջ, վաղորդյան կովին.
Այնտեղից դիտել երկինք ու արև,
Այնտեղից նայել կապուտակ ծովին:

Այնտեղ, իմ սիրած ընկույզենու տակ,
Թավիշ-դալարում թարմ օղ շընչելով
Ես գմայում էի, արբենում անհագ,
Հավերժ անհունին հոգիս ձուլելով:

Այնտեղ իմ հոգին ցընորում ապատ,
Ապատ օրհնում էր ջինջ երկնակամար.
Խանդըս էր մաքուր, տեսչըս — անարատ,
Որպես լեռների կուսական դալար:

Այնտեղ իմ միտքը — արծիվ սրբաթև՛,
Իմ պագումը — նըման խոր ծովին.
Իմ հանգրվանն էր այնտեղ, միջոտ վերև —
Վեհ սարալանջը վաղորդյան կովին:

*) Հեղ ծանոթ.

Այս ոտանավորը կարդացված է Նոր-Նախիջևանի մոտ գտնվող Մուրթ Խաչ վանքում, Գամառ-Քաթիպայի Խուշարձանի բացման հանդեսին (23 սեպտեմբերի 1901 թ.), ուր մենք բախտ ունեցանք ներկա լինելու, իբրև հատուկ ուղարկված պատգամավոր Մոսկվայի հայ գաղութի և հայ ուսանողության կողմից:

◆
Լույս-վայրերից նա իջած,
Օթևանեց իմ հոգում.
Հոգուս մի երգ շըշընջաց —
Եվ ա՛յդ երգն եմ ես ոգո՛ւմ.

— Կյանքն է՝ երա՛յ վաղանցիկ,
Բայց հարափա՛յլ, գեղեցի՛կ...
Եվ վի՛շտ ու խի՛նդ, խա՛նդ ու սե՛ր,
Պատրանք, կարո՛տ, վառ հույսեր,
Ապրումների մո՛ւթ ու լո՛ւյս,
Սիրո համբո՛ւյր, բախտի հո՛ւյս...
Թե չեն խոսում սըրտիդ հետ —
Դու չե՛ս ապրում, ա՛յ պոետ:

— Երկի՛նք, արև՛, ա՛մպ ու ծո՛վ,
Ամռան խորշա՛կ, գարնան զո՛վ.
Ժըպիտն աշնան հեզ վարդի
Դալուկ գըրկում սաղարթի,
Պաղ բարձունքնե՛ր ձյունաթագ,
Գեղեցկի փա՛յլ ու փափա՛ց,
Թե չեն խոսում սըրտիդ հետ —
Դու չե՛ս ապրում, ա՛յ պոետ:

Լույս-վայրերից նա իջած,
Օթևանեց իմ հոգում.
Հոգուս մի երգ շըշընջաց —
Եվ ա՛յդ երգն եմ ես ոգում:
Մոսկվա

ԱՂՋԻԿ ԵՎ ԹԻԹԵՌ

Լացի՛ր ինձ հետ, խղճո՛ւկ թիթեռ,
Լացող ընկեր քեզ գըտար.
Թո՛ղ երկուսիս տանջված սրտեր
Միմյանց լինեն մխիթար:

Մանուկն անհոգ, զվարճասեր
Բռնեց քեզ մեր պարտիպում,
Փշոեց քնքուշ քո թևիկներ
Ու բաց թողեց քեզ օդում.
«Գընա՛, թռի՛ր» — ասաց նա քեզ.
Ծիծաղելով, ծաղրելով.
«Տեսնեմ, ի՛նչպես դու կըճախրես
Ջարդվա՛ծ, անվո՛ր թևերով...»:
Ե՛ս էլ քեզ պես ապատ թիթեռ,—
Ինձ օտար էր վիշտ, թախիծ,
Բայց մեկն անգութ, զվարճասեր,
Սիրո ցանցում բռնեց ինձ.
Բռնե՛ց... փշրե՛ց իմ սերն ու հույս
Եվ ծաղրելով ասաց ինձ.
«Գնա՛, դարձյալ ապրիր, ո՛վ կույս,
Գոհ կ՛ բախտից, կ՛ կյանքից...»:

Լացի՛ր ինձ հետ, խղճո՛ւկ թիթեռ.
Լացող ընկեր քեզ գըտար,
Թո՛ղ երկուսիս տանջված սրտեր
Միմյանց լինեն մխիթար...

ԿՌԻՎ

Մաշող ցավերից մեզ չըկա դադար...
Ի՛նչ անենք... թախծի, վիատման ամպեր
Նորից պատել են մեր երկնակամար,
Մեր շուրջը խավար, անթափանց գիշեր:

Մաշող ցավերից անվերջ հայածված,
Չենք գտնում անկյուն կյանքի խնջուկքում.
Անվարդ մեր գարուն, մեր ճրագը մարած,
Թույն է ծովացել մեր տանջված կրծքում...

Բախտին խորթ զավակ, աշխարհին օտար,
Կըռվի մեջ անցավ բովանդակ մի կյանք.
Ուրեմըն նորից կռիվ անդադա՛ր...
Կըռվումն է կ՛ մահ, կըռվում — կ՛ փրկանք:

ՕՏԱՐԻ ՍԵՐԸ

Մի՛ հավատար, իմ հայրենի՛ք, դու օտարի ներբողին,
Վարդ մի՛ ձոնիր օտար սրտի զեղումներին սիրաշունչ...
Ով օրոցքից չէ՛ աղոթել քո սուրբ անվան, սուրբ հողին,
Ով չէ՛ ապրել քո դարավոր անլուր մորմոքն ու մրմունչ —
Դու օտա՛ր ես նգրա հոգուն... Եվ միշտ օտա՛ր կմնաս.
Շուտանցո՛ւկ է սերն օտարի, որպես պատրանք ու երապ...

Հերի՛ք, որքան, հեզ հայրենի՛ք, կյանքիդ հավերժ պայքարում
Հավերժ հուսով դու անսացիր օտար ձայնին հուսատու...
Դու անօ՛գ ես, դու տեր չունես... Այս դժնաշունչ աշխարհում,
Ա՛խ, հայրենի՛ք, կյանքիդ տերը միայն դու ես, միայն դո՛ւ...

Կիսովորդ

ԱՂՔԱՏԻ ԵՐԳԸ ՄԱՀԻՑ ԱՌԱՋ

Է՛հ, սև կարիք, ծնածղս օրից —
Կյանքիս ընկեր անբաժան.
Ես չըպրծա քո չար ձեռից —
Ինձ տանո՛ւմ ես գերեզման...

Աչք բաց արի — ու քեզ տես,
Գըլխիս կանգնած, դահճի պես.
Լայ ու տանջվել քեզից ուսա,
Հաց չըկերա առանց քեզ:

Օրոցքիս մոտ մայրըս նըստած.
Երբ օրոր էր ինձ ասում,
Օրորներում խոյ ու ճընջված,
Քո ձայնն էի ես լըսում...

Ես կյանք մտա... Դու և՛ կյանքում...
Ինձ չըտվիր քուն, դադար,
Կյանքըս անցավ օտար շենքում,
Կյանքըս ընկավ սարե-սար...

Գիշեր ցերեկ աչքիս առաջ,
Կյանքիս դեկը քո ձեռին.
Ես չըտեսա կյանքի կանաչ,
Պայծառ արև, լույս երկին:

Գետին ընկած հիվանդ օրիս,
Ոչ ոք ցավիս չարավ դեղ.
Քար ստացա հաց խընդրելիս,
Թուք ու լեղի — ջրի տեղ...

Եվ ապրեցի, աչքից ընկած,
Քո ճանկերում — գերի քեզ.
Կյանքըս մաշվե՛ց, հատա՛վ, գընա՛ց...
Կյանքըս հավվեց, մոսի պես...

Է՛հ, սև՛ կարիք, ծընածս օրից
Կյանքիս ընկեր անբաժան,
Ես չըպրծա քո չար ձեռից —
Դե՛հ, շուտ, տա՛ր ինձ գերեզման...:

Տեսնիր ԵՐԳ

Հայրենիքիս սարե՛ր, ձորեր,
Խաղո՛ւն առվակ, ճո՛խ հովիտ —
Անկյանք ձըմեռ, դաժան օրեր
Տարան ձեր փայլն ու ծրպիտ...

Հայի հույսե՛ր, հայի՛ իղձեր,
Այնքա՛ն շողուն, լուսավառ —
Ձեզ կաշկանդեց կյանքի ձըմեռ,
Ձեզ պաշարեց սև խավար...

Եվ դու, եղբա՛յր իմ հուսափաթ,
Ուղիդ անծա՛յր ու անծիր.
Դեռ չըհասած ցանկալի ափ,
Դու կես-ճանկին մընացիր...

Ու լալիս ես՝ դու վիպ ճըկած,
Ավեր երկրիդ լուռ վըկա.
Բայց, էհ, պո՛ւր են քո սուզ ու լաց —
Սուզ ու լացում — կյա՛նք չըկա...

Եղբա՛յր, լացով կյանքի թըփից
Ո՛վ է քաղել գարնան վարդ...
Հեռո՛ւ քեզնից թուխպ ու թախիծ,
Հեռո՛ւ քեզնից ցավ ու դարդ...

Որպես պողպատ՝ կըրակն ընկած,
Դու ամրացի՛ր, կարծրացի՛ր.
Նո՛ր ույծերով, նորից վառված,
Ապրի՛ր, կըռվի՛ր ու գործի՛ր...

Անդու կըռվում, անդու գործում
Քեզ չի՛ հաղթիլ ժանտ ձըմեռ.
Գործի՛ր, եղբա՛յր, կըռվի ծոցում
Ու փայփայի՛ր գարնան սեր...

ԱՇՆԱՆ ՏԵՐԵՎՆԵՐ

Թափվում են աշնան դալուկ տերևներ,
Մեռնում է կյանքը թոշնող պարտիպում.
Տխուր դիտում եմ այդ մահու պատկեր
Եվ սև մտքեր են իմ հոգին հուպում...

Հայրենի՛ աշխարհ — մեր վարդ հույսերի
Դո՛ւ էլ թառամող, ամայի պարտեպ,
Շրջում ենք ցիր-ցան, քո ծոցից հեռի,
Աշնան հողմահար տերևների պես...

ՎԱ՛Յ ԷՆ ՍՐՏԻՆ...

Վա՛յ էն սըրտին, որ սեր չունի...
Խըղճո՛ւկ իմ սիրտ, անսե՛ր ես.
Մեք-սիրածըդ կորա՛վ անդարձ —
Անսիրակա՛ն, անսե՛ր ես...

Վա՛յ էն կյանքին, որ տեր չունի...
Անսե՛ր իմ կյանք, չո՛ր ծառ ես.
Էսօր՝ անբույս, էսօր անհո՛ւյս,
Վաղն է՛լ անլո՛ւյս կմարես...

ԵՐԳ

Գարնան երգին ականջ դըրած
Գարուն — կյանքըս հիշեցի.
Ի՛նչ կար սրտումս վաղուց լըսած
Նորագ կյանքի կոչեցի:

Ես ասացի — ելե՛ք, հույսեր,
Վըշտոտ սըրտիս փարեցե՛ք.
Այս մութ օրիս, որպես լույսեր,
Մութ երկինքըս վառեցե՛ք:

Ես ասացի — սի՛րտ իմ, վարթի՛ր
Եվ նոր երգով սիրավեա
Խանդ ու ավյուն, հույզ ու թըրթիռ
Խառնի՛ր գարնան երգի հետ...

Եվ ձեռք առա քընարն իմ լուռ
Ու լարերին խըփեցի,
Բայց երգի տեղ — աղեկտուր
Սըրտիս ողբը լսեցի...

ԴԱՇՏՈՒՄ

Ամռան տոթ օր է: Օղն անշա՛րժ, խեղդո՛ւկ,
Վերից արևն է անողորմ կիպում.
Եռում է հունձը: Գեղջկուհի. գեղջուկ
Ոսկի՛ արտերում խուրձեր են դիպում:

Դիպում են անխոնջ, պվարթ, հուսալից,
Խընդում, քըրքըլում, կատակներ անում.

Կըրտեցի նըման, աբբա՛ս ղեմքերից
Քըրտինքն է վապում ա ջոզիանում:

Եվ խո՛րթ է նըրանց թուլանորթ տրտունջ.
Արյունն է եռում բանուկ ձեռքերում.
Արդար վաստակի սերն է սրբաշունջ
Նըրանց ուժ տալիս ու ոգևորում:

Երկի՛նք գըթառատ, որ լույս-հայացքով
Նայում ես չարքաջ մըջակի կյանքին —
Այդ կյանքը լի է հազա՛ր վըրկանքով...
Մի՛ թող դու նըրան կարոտ թո խնամքին:

ԿՅԱՆՔԻ ԽԱՂԸ

Կյանքի խաղ էր — պատահեցանք,
Մըտերմացանք մենք իսկույն.
Ե՛վ սիրեցինք, և՛ հիացանք,
Օրե՛ր տեսանք վարդագո՛ւյն...

Կյանքի խաղ է — բաժնվում ենք,
Ձո՛ւր են և՛ վիշտ, և լալիք...
Է՛հ, սիրելի՛ս, միայն մենք չենք
Կյանքի ձեռքին խաղալիք...

ԱՆՎԵՐՋ ՄԱՔԱՌՈՒՄՆ

Հո՛գ չէ, թե՛ կորից կյանքը չարաչար
Մեզ խաբեց, եղբա՛յր... Եվ աբո՛ր մեր շուրջ
Նորից տիրել է սըրտամաշ խաւար,
Չե՛ն ջողում էլ մեկ ո՛չ հույս, ո՛չ անուրջ...

Եվ խաւար հեռուն աչքներդն հտտած,
Անեղատն հուր ենք կրտեջի խընջույքում,

Մեր զարունն — անվա՛րդ, մեր լույսը — մարա՛
Թույն է ծովացել մեր տանջված կըրծքում...

Մենք օրորոցից ուսանք մաքառել,
Կըրկի մեջ անցավ բովանդակ մեր էյտնք,
Կըրվե՛նք աննահանջ, քանի չենք մեռել —
Կըրվում է և՛ մահ, կըրվում — և՛ փրկանք...

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ

Հայ բանաստե՛ղծ, պոկիր ճակտից
Անփշտ երգիդ այդ պըսակ.
Թո՛ղ նա հյուսված լինի վարդից —
Նըրան ձըզի՛ր ոտքի տակ...

Այս ցավ օրին, այս սև օրին,
Երբ լո՛ւյսի ենք մենք կարո՛տ,
Անհոգ եբգով գընած դափնին
Նափառի՛նք է և ամո՛թ...

ՀԱՌԱՋ...

Հառա՛ջ, իմ եղբայր... հերիք է, որքան՝
Խըղճուկ, անձնատա՛ր ապիկար բացին՝
Ողբացի՛ր անպառ, սըզվորի նըման,
Ձո՛ւր սպասելով վարդ-լուսաբացին:

Հառա՛ջ... քաջաշունջ, հաղթական հոգով
Բա՛ց քեզ ճանապարհ — վաղ թե անագան —
Քո հարթած ուղին կը ծածկվի ծաղկով.
Ա՛յլ ուղի չունի քո լույս-ապագան...

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԲՈՒԹԻ

Չմայլուն հայացքով նայում եմ, ինչպես
Գարնան վառ արփին պայծառ երկնքում
Ժըպտում է և, ջերմ սիրահարի պես,
Երկրին առաջին համբույրն է դրկում:

Եվ լույս-համբույրից ա՛յնքան խանդավառ
Հուզված ցընցվում է նիրհուն բնություն.
Չարթնում ոգեշունչ նոր կյանքի համար
Եվ պզու՛մ իր մեջ մի նոր պորություն:

Հալչում են ձյուններ — սարալանջերից
Արագ, անհամբեր վապում դես ու դեն,
Պարտված արևի հըպոր շողերից
Փախչում է ձըմեռն անպոր ու անպեն:

Եվ ես լսում եմ — մերձակա ձորից
Ինչպես հորդացած անհանգիստ գետակ
Ապատ վըջջալո՛ւմ, դուրս ելած ափից,
Կարծես երգում է գարնան հաղթանակ:

Եվ սարալանջից սուրալով հողմիկ,
Գետակի սահուն երեսն է շոյում.
Մեղմ հուպում ջըրեր, օրորում ալիք,
Ու անուշ սուլում դալար ափերում:

Եվ նորաբողբոջ ծաղիկներ գարնան
Գետակի ափին գըրավիչ շարված,
Ժպտում են քընքո՛ւշ, բուրում դուրեկա՛ն,
Հենց նոր արևից լույս — համբույր քաղած...

Չմայլուն հայացքով նայում եմ, ինչպես
Կյանքն է նորոգվում բընության կըրծքին.
Եվ ջերմ, հոգեթով օրհնում եմ ես քեզ,
Կենսաբեր գարնան համբո՛ւյրն առաջին:

ԵՍ ՀՈԳՆԵԼ ԵՍ...

Ես հոգնել եմ սըրտիս ցավից,
Անժամ հոգնել ու հյուժվել.
Վայ իմ սըրտին, իմ խե՛ղճ սըրտին,
Արցունքով է նա լըցվել...

Տըխուր կյանքիս ամեն մի օրն,
Որպես դալուկ մի տերև,
Ընկած դաժան հողմի բերան,
Թռչնեց անշո՛ղ, անարև...:

Անլույս անցա՛ն, լուռ մարեցին
Իմ շա՛տ հույսեր, շա՛տ փափագ.
Ո՛ւմ էլ սիրո վարդ ձոնեցի —
Վարդըս ձգեց ոտքի տակ...

Ա՛խ, հոգնել է սիրտըս ցավից,
Հոգնել այս փուշ աշխարհից,
Հավերժ հանգիստ, գեթ դու ժըպտա՛
Սըրտիս — շիրմի խավարից...

ՏԱՐԵՄՈՒՏԻ ԵՐԳԵՐԻՑ

Ե՛կ, ընկե՛ր իմ, էլի՛ ասենք
Ես նոր-տարուն նո՛ր բարև.
Էլի՛ հուսանք ու երապենք
Ես մութ օրին — լո՛ւյս արև...

Հինը անցա՛վ, հինը գընա՛ց...
Աստված անի՛ — հե՛տ չըգա.
Մեր դարդերին նա խո՛ւ պընաց,
Մեր ցավերին՝ լո՛ւտ վըկա...

Ամե՛ն ճամփորդ մութ գիշերին,
Ամե՛ն լողորդ ժանտ ծովում.
Իրան տված վառ հույսերին՝
Երապեն՛ր է միշտ շոյում...

Մե՛նք էլ, ընկե՛ր, արի՛ ասենք
Ես նոր-տարուն նո՛ր բարև.
Էլի՛ հուսանք ու երապենք
Ես մութ օրին — լո՛ւյս արև...

ԿՅԱՆՔԻ ՉԱՅՆԸ

Լինում են ժամեր — հոգիս մըտորուն
Մի անպուսպ տենչով կյանքի ժղխորից
Անձկում է թըռչել, սավառնել հեռուն,
Ա՛յն երպ-աշխարհն, ուր պա՛տ ցավից,
Ապա՛տ հոգսերից, արթուն հրձվանքով
Սահում են օրերն անդորր ու փափկուն,
Ուր հավերժ գարունն մեղմ օրորանքով
Սըրտին բերում է երջանի՛կ մի քուն...

Բայց հուժկու մի ձայն՝ անկուռ, անմեկին,
Իմ մըտորմունքի այդ վառ ժամերին,
Համառ կրոպի է կոչում իմ հոգին
Եվ ինձ ասում է. — երգի՛չ, քո ձեռին
Քընար կա՛ ապրու. երկինքը նըրան
Խաղի համար չէ՛ քեզ պարզև տված.
Վե՛հ է քո կոչումն, ծանր — քո ճամփեն,
Եվ անյո՛ւս գիշեր — քո շուրջը տիրած...

Նայի՛ր, տես, ի՛նչ դառն, ի՛նչ թույն օրերի
Մըռա՛յլ պատկեր է՝ կյանքը բովանդակ.
Ամե՛ն տեղ կըսկիծ անհուն ցավերի,
Ամեն տեղ արցունք՝ ճընշող խաչի տակ...
Եվ չարն անպատիժ, երկաթե բավկով
Խեղդած ամեն հույս, ամեն վառ ձգտում,
Խաղում է թըշվառ ամբոխի կյանքով,
Խաղո՛ւմ մոլեգնած ու վայրա՛գ խընդում...

Չարկի՛ր քընարիդ հնչուն լարերին,
Թո՛ղ նըրանք խոսեն կյանքի ցավերից.
Լեկու տո՛ւր անգամ անխոս քարերին,
Դալուկ դեմքերից վանի՛ր սև թախիծ...
Երգի՛չ — դու կյանքի առաքյա՛լ-վավակ.
Կյանքը հըրաշունչ երգի է կարո՛տ.
Երգի՛ր, որ լույսի կա մեծ հաղթանակ.
Որ կա՛ և կըզա՛ռ ոսկի՛ առավոտ...

[1905]

ԹՈՂ, ԸՆԿԵ՛Ր ԻՍ...

Թո՛ղ, ընկե՛ր իմ, դըժոխաշունչ, բիրտ ձըմեռ,
Որպես դահիձ, առջարժ հսկե մեր դրոսն...
Թո՛ղ անդալար, անջերմ սահեն մեր օրեր,
Եվ մեր ուղին աչքից ծածկեն բուք-բորան...
Մի՛ վրհատիր... հուսով նայի՛ր դու հեռուն.
Մե՛ր սրտումն է — մեր գարուն...

Թո՛ղ, ընկե՛ր իմ, չարագուշակ, սև ամպեր
Մեր հեզ կյանքին սպառնան ամպրոպ ու կայծակ...
Թո՛ղ թանձրանա մեր շուրջ գիշեր մահաբեր,
Եվ մեր աչքից ծածկե ոսկի՛ արեգակ...
Մի՛ վրհատիր... անվախ նայի՛ր դու վեգև.
Մե՛ր սրտումն է — մեր արև...

[1905]

ՄԵՆԱԿ ՃԱՄՓՈՐԴ ԵՄ...

Մենա՛կ ճամփորդ եմ... հոգևա՛ծ, ուժասաքա՛ր.
Անցել եմ կյանքի փըջոտ ճանապարհ.
Անցել եմ, քուրի՛կ, սարե՛ր ու ձորե՛ր,
Մեն-մենա՛կ քաջել սևամաշ օրեր...

Մենա՛կ ճամփորդ եմ... ճանկիեքով քարոտ
Քո դուռն եմ եկել, քո սերին կարո՛տ.
Ա՛խ, քուրի՛կ, կյանքըս բո՛ւք է ու բորա՛ն,
Մի՛ թող ինձ անհույս, անտեր քո դրոսն...

[1908]



Հեռուն — խավարի թա՛նձր վարագույր...
Առա՛ջ եմ գնում, բայց ո՛ր չըզխտեմ...
Կյանքըս թախձախ աշուն անհամբո՛ւյր,
Եվ մեռնող օրըս նըվա՛ղ, դավադե՛մ...

Եվ աչք եմ դարձնում անցած օրերուն,
Միտ բերում կյանքիս խաղացկուն հասակ —
Ա՛յնտեղ էլ՝ անփա՛յլ ու անվա՛րդ զարուն
Ա՛յնտեղ էլ՝ սըրտի տխու՛ր փլատակ...

Եվ միտք եմ անում — էլ ինչո՞ւ համար,
Օ՛, խիպախ ասպետ, որ մանուկ անմեղ,
Սիրեցի՛ր ես կյանք, մղեցի՛ պայքար
Մերթ ջերմ հավատով, մերթ ուժով ահեղ ..

Է՛հ, վիճա՛կ իմ հեզ, աշխարհեն վտա՛ր,
Անցի՛ր լո՛ւտ ու մո՛ւնջ, անհո՛ւյս ու անլո՛ւպ.
Քեզ հավերժ նընջի կըզրկե խավար —
Ա՛յնտեղ է կյանքը անխա՛բ ու անհո՛ւյզ...

ԼՈՒՍԾ ՔՆԱՐԻՍ

Ո՛չ, քեզ չեմ ձրգած, իմ սիրա՛ծ քընար,
Հեղհեղուկ կյանքիս ընկե՛րն անմեկին.
Որպես հարատարփ, խանդոտ սիրահար,
Մի՛շտ քո կարոտն է քաշել իմ հոգին:

Կյանքի պայքարում հոգսը դըժնդակ,
Որպես ապառաժ, ծանրացած վերաս,
Փակե՛լ էր լեզուս... Բայց էլի միակ
Դո՛ւ էիր հոգուս տենչանքն ու երակ...

Լուս էիր, ընկեր... վաղուց չէր հնչում
Խոսուն լարերիդ ոգիչ ելևեջ.
Բայց սերըդ կյանքի ժըխտրի միջում
Ես պահում էի միշտ վա՛ռ ու անշե՛ք...

Եվ տանջվում էի անլո՛ւր, անպատո՛ւմ,
Որ չէիր խոսում դու էլ հոգուս հետ.
Կյանքըս անիծում... Բայց ն՛ հավատում,
Որ չե՛մ կորուսել քեզ անդա՛րձ, հավետ...

Եվ ահա՛՛ նորից, իմ լռա՛ծ քընար,
Քեզ ձե՛րք եմ առնում, սեղմում իմ կըրծքին.
Թո՛ղ հնչե, ընկե՛ր, քո ամեն մի լար,
Ու քեզ հետ մեռնե՛՛ իմ սիրող հոգին...

1908

ՄՈՒՍՍ

Այս սև կյանքի մաշուկ օրերն երգելով,
Քո ձայնին եմ հնապանդում, ո՛վ մուսա.
Կյանքը սիրել սըրտի խորո՛ւնկ վերքերով —
Քո պատգամն էր՝ մանուկ օրից ես ուսա:

Դու ինձ արիր — «Երգի՛չ, կյանքը չէ՛ երակ,
Կյանքը խա՛չ է տառապանքի, փորձության.
Այնտեղ կըռիվն անհավասա՛ր հանապազ,
Այնտեղ չա՛րն է դափնին տանում ~~հարթություն~~...

Դու ինձ ասիր — «Դուրս եկ կյանքի ~~ասպարեզ~~,
Վերք ու ցավից դու երգ հյուսիր սըրտալի.
Թո՛ղ քո երգում, արշալույսի վանգի պես,
Արև-կյանքի հընչե՛ ավետն ըղձալի...

Դու ինձ ասիր — «Վըշտի ծո՛վ է քո երկիր,
Եղբայր ունիս անմխիթա՛ր, անտերունչ,
Նա դարերով բախտահալա՛ծ, տարագի՛ր,
Արյան խա՛չ է կըրծքին կըրում անմռունչ...

«Թո՛ղ հույս հընչե, վիշտ մըրմընջե քո քընար,
Թո՛ղ նա խոսի քո հեզ ազգի սըրտի հետ.
Քանի քո շուրջ դեռ տիրում է ժանտ խավար,
Դու ա՛յլ կոչում չունիս կյանքում, հա՛յ պոետ...

Մեր սև կյանքի մաշուկ օրերն երգելով,
Քո ձայնին եմ հնապանդում, ո՛վ մուսա.
Կյանքը սիրել սըրտի խորո՛ւնկ վերքերով —
Քո պատգամն էր՝ մանուկ օրից ես ուսա...

ՆԱՎՈՐԴՆԵՐ

Հուզվում է ծովն անլույս, մրոռայ գիշերին,
Գոռ մըռնչում, որպես առյուծ վիրավոր.
Մերթ կատաղի ցաւկում ժայռոտ ափերին,
Մերթ թուլացած՝ քաշվում խորքերն հեռավոր...
Լուռ կախվել են երկնից գուժկան, սև ամպեր...
Չար սուլում է մոլեգնածուփ, ժանտ քամին.
Ժամն է ահեղ, դըժոխաշունչ, մահաբեր —
Ահռելի՛ է տարերքի խաղն այդ ժամին...

Բայց մի անահ նավորդների քաջ խըմբակ
Ծովի խորքից — այդ ծովահույզ խավարում,
Խոր ճեղքելով ալիքները դըժընդակ,
Իր հաղթ նավը դեպի ափն է նա վարում...
Վարում է քաջ, վարում, կովում անընդհատ,
Նըրան պայքարն ափելի՛ է ուժ տալի.
Նըրա կըրծքում վառ շողում է ջերմ հավատ —
Պիտի հասնի — նավահանգիստ ցանկալի:

Ո՛վ ընկերներ իմ ոսկեվառ խոհերի,
Որ ներջնչված ապագայի հույսերով,
Դուք ձգտում եք միշտ վարդաշող օրերի՝
Մեր ծով-կյանքի փոթորկի դեմ կըռվելով.
Կըռվե՛ք անվախ, կըռվի կոչե՛ք փոթորիկ,
Առաջ տարեք կյանքը այս ժանտ խավարում.
Դուք էլ՝ հերոս-նավորդներ եք, սիրելի՛ք,
Իմ հայրենի ծով-ալեկոծ աշխարհում...

1909

ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՕՐՈՐԸ

Մի՛ լար, որդի՛ս, որ չես լսում
Էլ մայրական քաղցր օրոր.
Ես մեծ կովի երգ եմ հյուսում
Օրոցքիդ մոտ ամեն օր:

Դու լսո՛ւմ ես՝ այնտեղ՝ դրսում
Շաչ ու շառա՛չ, լաց ու կո՛ծ,—
Մեր արյունն է այնտեղ հոսում
Ներկած և՛ տուն, և՛ փողոց...

Այնտեղ գնդեր խառն ու ցրիվ,
Բանվոր գնդեր ահարկու,
Քաջ մղում են մի մեծ կռիվ —
Աշխատանքի և ոսկու...

Այնտեղ ոսկին՝ տեր-տիրական
Որպես դահիճ դըժնադեմ,
Սուր է պարպում մեր օրական
Թույնով շաղախ հացի դեմ...

Այնտեղ հայրեր, այնտեղ որդիք
Մի նոր կյանքի ելերթում,
Որպես մի-մի հերոս-մարտիկ
Մահն են գրկում ու երգում...

Այնտեղ է և մեր աչքի լույս,
Մեր օջախի վառ ճրագ՝
Հայրդ կովում, սիրտն ալեհույզ,
Մթառում և՛ թույն և՛ կրակ:

Մի՛ լար, որդի՛ս, որ չես լսում
Էլ մայրական քաղցր օրոր.
Ես մեծ կովի երգ եմ հյուսում
Օրոցքիդ մոտ ամեն օր...

[1910]

«Դարդ ունեցողը աշուղ կըկտրի»
Ժողովրդական խոսք

1

Մ ՍԱԶԸ

Սալ եմ առել,
Աշուղ դառել,
Միրտ եմ դըրել իմ սապում.
Սըրտի՛ վերք եմ,
Սրտի երգ եմ
Մապիս ձենով ձեզ ասում...

Ձեզ անհատնում
Դարդ եմ պատմում,
Դարդի ծո՛վ կա իմ սապում.
Է՛ն եմ երգում,
Ի՛նչ կա կյանքում —
Կյանքի երգ եմ ձեզ ասում...

ՄՈՐ ՑԱՎԸ

Յա՛ սիրտ տվեք, որ դիմանամ
Գըլխիս ընկած ժեռ քարին...
Յա՛ մահ տվեք, որ չիմանամ
Ապիկ բալես ո՛ւր տարին...

Մեր վաթանը կըրակն առավ,
Կըրակն ընկա՛ է՛ն օրեն,
Գյուպալ բալիս թուրքը տարավ...
Տունըդ քանդվի՛, անօրեն:

Սև եմ հագել, սուգ եմ անում,
Վա՛յ եմ տալիս սև գըլխուս.
Քեզ եմ կանչում — ձե՛ն չես հանում,
Ո՛ւր ես, ո՛ւր, իմ աչքի լուս...

Ախ սիրտ տվեք, որ դիմանամ
Գըլխիս ընկած ժեռ քարին...
Յա՛ մահ տվեք, որ չիմանամ
Ապիկ բալես ո՛ւր տարին...

3

ՂԱՐԻԲԻ ԵՐԳԸ

Օ՛խտը սարով, օ՛խտը տարով,
Հե՛յ սիրական իմ աշխարհ,
Հեռացել եմ քեզմեն լալով,
Լալո՛վ ընկել սարե՛-սա՛ր:

Կյանք եմ մաշում, սև օր քաշում,
Ընկա՛ծ խալխի դըռներին.
Քո սերն է ինձ հալում, մաշում —
Հոգիս կըտրում եղ սերին...

Կուզեմ հողիդ կարոտն առնեմ
Հող ու ջըրիդ ես դուրբա՛ն.
Ա՛խ, ո՛նց անեմ — ճամփեդ բըռնեմ,
Բախտն է կապել իմ ճամփան...

Վա՛յ դարիքին — ո՛վ ա, ո՛վ չի —
Վալո՛վ կյանքն է անցընում.
Դուրսը մեռնի, չլուծ կորչի —
Ո՛վ ա խեղճին հարցընում...

ՍԵՎ ՎԻՃԱԿ

Վա՛յ քու օրին, ա՛յ ախպեր,
Քու սև՛ օրին, հայ ախպեր:
Կյանքիդ դարդը չի՛ չափվի —
Ծո՛վ է խորին, ջան ախպեր:

Ախպեր, անբուն թռչուն ես,
Վաթան չունես, տուն չունես.
Գըլխիդ բարձը՝ չոր քար է,
Քնի կարոտ՝ քուն չունես...

Ախպե՛ր, չորցած մի ծառ ես,
Բաղչա-բաղին օտար ես,
Հարգ ու պատվից ընկել ես,
Խալխին դռան նոքար ես...

Վա՛յ քու օրին, ա՛յ ախպեր,
Քու սև՛ օրին, հայ ախպեր,
Կյանքիդ դարդը չի՛ չափվի —
Ծո՛վ է խորին, ջա՛ն ախպեր:

ԷՐՎԱԾ ՍԻՐՏ

Սրտիս խորում խոր ցավ ունեմ,
Ամա՛ն, ցավիս դե՛ղ արեք.
Կորած գլուխ եմ, ծով-ցավ ունեմ,
Կորած գըլխիս տե՛ղ արեք...

Աղջիկ տեսա, ա՛լ-վարդի պես.
Վարդ — հույսերով սիրեցի՛:
Երգ ու վերքըս, մարգարտի պես,
Ոտքի տակը փրոռեցի՛...

Բայց՝ նա անցա՛վ, մրտիկ չարա՛վ —
Բ՛նչ կար փրոռած ոտքի տակ.
Խեղքըս առա՛վ, ուշքըս տարա՛վ,
Սիրտըս էրավ անկըրա՛վ...

Սրտիս խորում խոր ցավ ունեմ,
Ա՛խ, իմ ցավին ճա՛ր չըկա,
Սրտիս վըրեն ժեռ քար ունեմ —
Էդ քարն առնող յա՛ր չըկա...

Ա՛Ն, ԹԵ ՍՐՏԻՂ...

Ա՛խ, թե սըրտիդ անուշ լեզուն
Էրված սըրտիս հետ խոսեր.
Ա՛խ, թե աչքիդ ցող-արցունքը
Սև արցունքիս հետ հոսեր.

Թե շողայիր, շող-աստղի պես,
Կյանքիս անույս երկնքում, —
Էլ իմ բախտին, ա՛յ սիրական,
Բա՛խտ չէր հասնի էս կյանքում...

ՁԱՆԳԻ ՉԱՅՆԸ

Բանտըս խոնա՛վ, բանտըս մըռա՛յլ
Ու խո՛ւլ, որպես գերեզման.
Ես չեմ տեսնում ո՛չ օրվա փայլ,
Ո՛չ կենդանի լըսում ձայն:

Միայն հեռվից աստուծո տան
Ձանգն է անո՛ւշ դողանջում.
Է՛հ, սո՛ւտ կոչնակ արդարության
Ի՛նձ համար չես դու հնչում...

2

ԱՐԵՎԻ ՇՈՂՔԸ

Բանտիս խորքը շողք է ընկել,
Շողքիդ մեռնեմ, ա՛յ արև.
Թո՛ղ ինձ գոնե շողքըդ գրկեմ,
Մոտըս պահեմ, ջա՛ն արև...

Գիտեմ, գիտեմ, դո՛ւ էլ շուտով
Կանցնես, ինչպես շող-երապ...
Ա՛խ, արև ջա՛ն, շողքիդ մեռնե՛մ,
Յարաբ վաղն էլ կըշողա՛ս...

3

ՄԻՆԻԹԱՐԱՆՔ

Մենանցըս նեղիկ մի խուց,
Խեղդո՛ւկ, անօ՛ղ ու անլո՛ւյս.
Սպասում եմ՝ էսօր-էգուց,
Բայց փրկության չըկա՛ հույս...

Միայն բանտի «խելոք» ծառան,
Վըկա իմ լուռ տանջանքին՝
Հույս է տալիս, «հո՛գ չէ, տղա՛ս,
Կըսովորե՛ս էս կյանքին...»

4

ՅԱՐԻՍ

Յա՛ր եմ կանչում — ձե՛ն չես տալիս,
Ա՛խ, սիրակա՛ն, դու ո՛ւր ես.
Էս նեղ օրիս, անձար հալիս,
Ճա՛ր չես անում, դու ո՛ւր ես...

Սև արյուն է սըրտես կաթում...
Յարաբ դո՛ւ էլ տըխո՛ւր ես...
Մենակ, մեռա՛ էս մութ բանտում,
Իմ լույս — ճրագ, դու ո՛ւր ես...

1

ԱՆՋԱՏՄԱՆ ՀՈՒՇԵՐԻՑ

Անծի՛ր ու անծա՛յր դաշտերի միջով,
Օձի գալարով, սուլոց ու ճիչով,
Գընացքն է առա՛ջ թռչում, սրլանում,
Ծանոթ վայրերից ինձ հեռո՛ւ տանում:

Ու ո՛րքան առաջ, ու ո՛րքան հեռի,
Ա՛յնքան սիրաշունչ ու թարմ հուշերի
Վառ պգացումն է իմ հոգին հուլում —
Ես քե՛զ եմ հիշում, քեզ՝ իմ երապում...

Հնչո՛ւմ է, ընկե՛ր, դեռ իմ ականջին
Իմ ուղին օրհնող քո խոսքը վերջին.
Հնչում թախծալի սրբոտիդ աղոթանք —
«Տե՛ր, քե՛զ եմ հանձնում սիրելի մի կյանք...»

Մի՛ թախծիր, ընկեր, անշա՛տ-անմեկի՛ն
Քե՛զ հետ է հավերժ իմ սիրող հոգին,
Եվ միտքըս՝ թռչուն, սիրո թև առնում,
Քո՛ գիրկն է հեռվից անպուսպ սավառնում...

2

ՆԻՐՀՈՒՆ ԴԱՇՏԵՐ

Ո՛ր էլ նայում եմ — նիրհո՛ւն ու անծա՛յն
Դաշտեր են միայն...
Դաշտեր ու դաշտե՛ր... կարծես վերջ չըկա

Անհուն դաշտերի լո՛ւտ ծավալանքին.
Ճերմակ, ձյունահյուս վերմակի տակին,
Որպես հեքիաթի քուն մտած հսկա,
Նրանք մընո՛ւմ են — ե՛րբ գարուն կըգա...

Կըզա՛ր նապելին շողափա՛յլ դեմքով
Ծաղկո՛վ ու երգո՛վ.
Եվ որպես թովիչ, լուսածին փերի,
Արև-աչերով, այրող համբույրով
Նա սեր կըերգէ սիրաշունչ բույրով.
Նա կվրդովե նրիզը դաշտերի,
Նա կյա՛նք կավետե, նա կյա՛նք կբերի...

3

ԴԵՊԻ ՀԱՐԱԿ

Նորի՛ց լեպի քեզ, հարա՛վ հիասքանչ,
Դեպի քո վայրեր ծաղկո՛ւն, հարափա՛յլ,
Գալիս եմ հիվանդ, բերում ջափատանջ,
Անուրախ մի կյանք՝ շիրմից էլ մըռայլ...

Գալիս եմ... և իմ պրդոտոր, մնասուգ
Հայացքիս առաջ կյանքիս ապագան
Պատկերանում է անշունչ ու անշուք,
Որպես երեկոն մահացող աշնան...

Ա՛հ, օրհնյա՛լ աշխարհ, դու վերջի՛ն իմ հույս,
Ի՛նչ ես դու արդյոք երգչիս պատրաստած —
Նորոգված կյանքի մի նոր արշալո՛ւյս,
Թե՛ կյանքի տենչանք՝ շրթունքիս սառած...

4

ԳԱՐՆԱՆ ՀԱՄԲՈՒՅՐ

Ահա՛ պզում եմ արդեն ջերմաշունչ
Գարնան արևի ախո՛րժ համբուրում.

Ու նայում դուժված, նայում անմոռուչ
Շողերի խաղին ճերմակ ամպերում:

Եվ հորիզոնում ջի՛նջ, լուսատարա՛ծ,
Որպես հայելի, արծաթի ցուքով,
Գարնան արևից վառ համբույր առած,
Ծովն է փայլփրլում վեհապանծ դեմքով.

Եվ որքա՛ն առաջ, ա՛յնքան իմ դիմաց
Հանդես ես գալիս լի՛ կախարդանքով
Դո՛ւ գարնան համբո՛ւյր — դաշտերում փռած
Ծաղկահյուս գորգեր նազելի շարքով...

ԳՐԶԻ ՀԱՆԱՔՆԵՐ

Գնա՛, իմ գրքո՛ւյկ, ա՛յ գրչիս հանաք,
Խոսի՛ր մարդկանց հետ դու հանաքներով.
Շատերի սըրտին կըլինես դանակ...
Շատերն էլ, գուցե, կընդունեն սիրով:

ՄԵՂԱ՛ ՔԵԶ, ԱՍՏՎԱ՛Ծ...

(Շատերից մեկի ինտստովանանքը)

Կուշտ եմ և առողջ, կյանքից բավական,
Մեղանըս առատ, ճաշըս պատվական,
Բայց թե ի՛նչպես եմ այդ կյանքին հասած —
Այդ մեր մեջ մընա... Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Շատ կարճ միջոցում ես հարուստ դառա,
Հողեր, կալվածներ, կառք ու ձի առա,
Բայց ի՛նչ փողերով, ի՛նչպես վաստակած —
Այդ մեր մեջ մընա... Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Տըներ շինեցի ջքեղ, փառավոր,
Ապրում եմ մեջը, ինչպես թագավոր:
Բայց քանի՛ մարդու ես տուն եմ քանդած —
Այդ մի՛ հարցնեք... Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Խանութ բաց արի, գործ սկսեցի.
Կարճ ժամանակում մեծ գանձ դիպեցի,

Բայց քանի՛ անգամ ես կտոր եմ ընկած —
Այդ մեր մեջ մղնա... Մեղա՛ քեզ, աստված՝

Կյանքում ես գտա մի «ապնիվ ընկեր».
Գործիս մեջ դրեց տասնյակ հապարներ.
Բայց վե՛րջը... վերջը նա քաղցած մղնաց.
Իսկ ես կշտացա... Մեղա՛ քեզ, աստված՝

Ես միշտ ասում եմ և միշտ քարոզում.
«Աղքատն էլ մարդ է, ուտել է ուկում».
Բայց քանի՛ մարդ եմ ես քաղցած թողած —
Այդ մի՛ հարցնեք... Մեղա՛ քեզ, աստված՝

Երբ տեղն է գալիս, սուրբ եմ ձևանում,
Ժամում ծնկաչոք աղոթք եմ անում.
Բայց հոգիս վաղուց սատանին ծախած,
Աշխարհք եմ խաբում... Մեղա՛ քեզ, աստված՝

Թե մեկը պատվիս դիպչի աշկարա,
Ես կրակ կըթափեմ այդ մարդու վերա.
Բայց ծածուկ ինչքա՛ն ես թուք եմ կերած —
Այդ մեր մեջ մղնա... Մեղա՛ քեզ, աստված՝

Է՛հ, բավական է ձեր գլուխը տանեմ,
Ախար. «զո՛րն ասեմ, զո՛րն խոստովանեմ...»
Ի՛նչ մեղքեր ասեք, որ ես չեմ արած...
Մեղա՛ քեզ, աստված՝, մեղա՛ քեզ, աստված...
1896

ԹՈՒՔԸ

Ասում եմ — թուքը ո՛ւժ է պորավոր,
Մարդուն կարող է իր պատվից զրցել.
Բայց տեսե՛ք, մեր մեջ... նա՛ է պատվավոր,
Ով միշտ երեսը թքրով է վաացել...

ԾԻԾԱՂՍ Է ԳԱԼԻՍ...

Երբ ես տեսնում եմ աշկարա գողին
Կյանքին տիրացած՝ փարթամ ապրելիս...
Իսկ ինձ ասում են — ջիտակ ապրողին
Կյանքը մեկի տեղ՝ հապա՛ր է տալիս —
Ծիծա՛ղս է գալիս...

ԽԵՆԹԸ ԵՎ ԽԵԼՈՔԸ

Քսուբախտ մի երկրում մե՛ծ սով էր ընկել...
Երկրի խելոքներ ժողով գումարած՝
Միտք էին անում, թե ի՛նչպես փրկել
Խեղճ ժողովրդին, սովից չո՛փ դառած...
Ու խոսում էին, խոսո՛ւմ, հա խոսո՛ւմ,
Ասես մարգարտի աղբյուր էր հոսում...
Մեկ էլ՝ որտեղից, այդ մեծ կաճառում
Ելավ խենթի մեկն, այսպես բան ասաց.
«Էհ, կո՛ւշտ խելոքներ, ի՛նչ եք շատ ճառում,
Շտապե՛ք, քաղցածին սով՛ք կըտոր հաց...»:
Խելոք կաճառը, տեսավ, որ իրան
Խըրատ է կարդում մի խենթ, բաց-բերան.
Քիթը վեր քաշած՝ քա՛հ, քա՛հ ծիծաղով,
Խենթի խոսքերը նա արհամարհեց...
Ընտրեց բազմամարդ մի հանձնաժողով
Եվ սովի հարցը փակված համարեց...
Սա՛դ տարի-խորհեց հանձնաժողովը
Ու ա՛յնքան բազում նիստեր ունեցավ,
Մինչև որ մարդկանց կոտորեց սովը
Ու վերջն էլ՝ անցավ...
Ընթերցո՛ղ, հիմա դու ինքըդ դատի՛ր,
Ու ի՛նքըդ խենթին խելոքից պատիր...

ՅԱՄԴ ՈՒ ԿԻՆ

Կընկատեր, գիտեմ, ու չի՛ ամաչում,
Ինչ տեղ կին, փեշիցն է կըսչում —

Լինի դա տընում, փողոցի միջում,
Կաֆե-շանտամում, թե խոհանոցում...
Ու այդպես լըրբին մենք չենք քարկոծում...

Բայց, աստված չանի՞, կինը բա՛ն անի,
Մի շա՛տ թեթև բան — մեկին հավանի
Ու հետը թեթև սիրախաղ անի.
Կամ թողնի մարդուն, չուպենա խաբի...
Աշխարհը խեղճին սա՛ղ-սա՛ղ կըլափի...

ԿԱՇԱՌՎԱԾ ՄԱՄՈՒԼ

Երբ հայոց թերթում
Ներքող են կարդում
Տըպրուկ աղայի անվան ու փողին,
Իսկույն իմ մըտքում
Մի հարց է ծագում —
«Թերթը ո՞րքան է ստանում տողին...»:
[1896]

ԵՐԿՈՒ ԵՐԵՍ

Թուքը երբեք չի բերիլ մեծ վընաս,
Թե որ կյանքում երկու երես ունենաս.
Մեկ երեսին ի՛նչքան ածեն թուք ու մուր,
Մյուսը կըմնա մի՛շտ մաքուր...

ԿԱՇԱՌՔ

Յուղ են քըսում կառքի անվին,
Որ ընթացքը թեթևանա.
Կառքը յուղած անիվներով
Ծանրը ճամփան հեշտ կընթանա:

Կյանքում կաշառքն, ո՛վ բարեկամ,
Շա՛տ նըման է անվի յուղին.
Կաշառք տալով՝ մենք շատ անգամ,
«Եշտ անցնում ենք դըժվար ուղին...»

[1896]

ԺԱՄ ՇԻՆՈՂ

Մարդու մեկը մեծ գանձ դիպեց
Հոգին ծախած սատանի,
Բայց մի օր էլ սիրտը ուպեց
Դըրախտ գընալ... Ի՛նչ անի.—

Նա միտք արավ մի ժամ շինել
Խեղճ, հետ ընկած հայ գեղում,
Եվ այդ ճամփով աթոռ գընել
Արքայության մե՛ջտեղում:

Գյուղացիք էլ ուրախացած՝
Հենց լըսեցին այդ համբավ,
Գյուղի բերքից հետներն առած՝
Եղ ու կարագ, ճուտ ու հավ,

Ժամ շինողին բերին ընծա
Եվ զո՞ն տվին օրհնանքին.
«Աղա՛, աստված ջեբիդ ո՛ւժ տա,
Դըրա՛խտ երթա քո հոգին...»:

Բայց մի գիշեր աղեն քընած՝
Հանկարծ տեսավ երապում,
Ժամը պատրաստ, իսկ ինքն ընկած
Դըժոխքի սև կարասում¹

¹ Հայկական ավանդություններում պատմվում է, որ դժոխքում կա կիրճ, միշտ եռացող մի մեծ սև կաթսա, որի մեջ գցում են ամենաթուրանգ վորներին:

Եւ տատանեն գրիտի վերս
Բըջփըջում էր ականջին.
«Ա՛, բարեկա՛մ, գալըդ բարև,
Ծանկայի՛ հյուր մեր միջին...»:

Աղեն սուկաց... «Վա՛յ իմ փողեր,
Վա՛յ, խաբվեցի...» — նա գոռաց,
Եվ երբ վապրեց, ջա՛տ ուրախ էր.
Որ դեռ ժամը չէր ջինած...

ՆԵՇ ՃԱՄՓԱ

Ի՛նչ ճամփով հեջտ է միջտ լըցնել գըրպան —
Հարուստն այդ ճամփեն լա՛վ է իմանում.
Մեկին քաջիում է նա իր հին գուպան,
Իսկ հարյուր-մեկի շապիկն է հանում...

[1896]

ԿՅԱՆՔԻ ԽՆՁՈՒՅՔԸ

Թե կյանքի խընջույք հյուր գնաս ոտով,
Կասեն. «Տեղ չկա՛» — և կանցնես մոտով.
Իսկ թե ջնորի տանես սեփական կառքով,
Հխա՛ր էլ փնես... կընդունեն փառքով:

[1896]

«ՋՈՒՆՏԸ» ԵՎ «ԿԵՆՏԸ»

Մարդը տըգեղ, կոշտ ու կոպիտ,
Հոգին՝ դատա՛րկ, ջեբը՝ լիք.
Կին է առել ծաղկափըթիթ,
Իբրև ձեռքի խաղալի՛ք...

250

Արջի՛ն, հաշի՛վ մարդոտ գլխում.
Ուշ ու միտքը փողի մեջ.
Սիրո ծարավ կընկա սըրտում,
Երասկերփն չըկա՛ վերջ...

Կրոնք են անցնում մի հարկի տակ,
Բայց սըրտերով խորթ իրար.
Տարբե՛ր ձըգտում, տարբե՛ր ճաշակ,
Կինը — կըրա՛կ, մարդը — քա՛ր...

Եվ նայելով ես այդ գույզին
Միտք եմ անում — թե մի օր
«Ջոխտի» կողքին... «Կենտը» բըռնի...
Ո՛վ է արդյոք մերավոր...

ԹՂԹԱՍԱՂ

Թա՛ղթ ու կառքի՛ճ, սեղա՛ն կանաչ,
Անքա՛ն գիշեր, կոհի՛վ ու վե՛ճ —
Անա՛ տոր քաղ դեպի առաջ,
Նո՛ր գործի սեր ազգի մեջ...

Թուղթ են խաղում հարուստ, անփող,
Տերտեր, ուսյալ և անուս,
Նույնիսկ հոջ կին, հոջ ուսանող...
Ցնծա՛, հա՛յ ազգ, աչքըդ լո՛ւյս...

ԳԱՅԼ-ԲԱՐԵՊԱՇՏ

Անթի՛վ-են մեր մեջ զայբարեպաշտներ.
(Մեկին, մանավանդ, լա՛վ են ճանաչում...)
Մուրթով նա պաշտում տատանի պատկեր,
Լուսով անբարաբար արտփած է կանչում...

Արտասուք խըրեղ կամ արթուն նըծել
Պատրաստ է նա միջտ — ամեն թըջվառից.

251

Բայց փորձի՛ր մի ճանճ ոտքի տակ գրցել,
Նա ահո՛ւմ, դողո՛ւմ կանցնի վերայից...

Նա ժամ կըմտնի, աստծու գառան պես,
Երեսին անվե՛րջ, անվե՛րջ խաչ կա՛նի,
Բայց թե կյանքի մեջ նրրա ճանկն ընկնես,
Մըսագործի պես, կաշի՛դ կըհանի...

ՊԱՏԻՎ

Ասում են, մարդըս պետք է իր անձից
Միշտ բարձրը դասի պատիվն անարատ,
Եվ ով վըրկված է այդ անգին գանձից,
Նա՛ է կյանքի մեջ ամենից աղքատ...

Բայց թե որ հարցնեք դուք հայ կրեստսին,
Կասե. «Պատիվն է՝ արծաթ-աբասին,
Եվ կյանքում անփող, դատարկ գըրպանը —
Դա՛ է ամենից անպատիվ բանը...»:

1896

ՁՈՒՐ ՎԻՇՏ

Ո՛վ հայ աղջիկ, անդուր դեմքով,
Դարդ մի՛ արա ու մի՛ լար.
Մեծ օժիտով, փոքր խելքով
Երբե՛ք տանը չես մընար:

Մերունդ ունենք ուսման տված,
Կանցնի չորս կամ հինգ տարի,
Եվ կըտեսնես շուրջդ խըմբված՝
Դիպլոմավո՛ր մուշտարի...

ՀԱՅ ԲԱՀԱՆԱ

Մանրավաճառի նա խանութ բացեց,
Ծախում էր կոճակ, ասեղ ու մաստակ,
Բայց առուտուրին խելքը չըպատեց.
Փակեց խանութը, չունեցավ վաստակ:

Նա շա՛տ թափառեց, դես ու դեն ընկավ,
Որ կյանքում իրան մի ապրուստ ճարի.
Բայց իպո՛ւր... ո՛չ մի բանի պետք չեկավ,
Զուխտ էջին բաժնել չէր կարող գարի...

Վերջը ճարահատ, երբ տեսավ որ էլ
Մարդ չի դառնալու, հույսն էլ է կորել.
Հայոց «այբուբենն» նա անգիր արավ
Եվ ազգի գըլխին քահանա դառավ..

[1898]

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԻ

Մեղքից փրկվելու կա հեշտ ճանապարհ.
Շատե՛րն են կանգնած այդ ճանապարհում —
Աջ ձեռքով նըրանք քանդում են աշխարհ,
Զախ ձեռքով ժամում մումեր են վառում...

ԱՂՄՈՒԿ

Ուզում ես անուն, որ հասնի երկինք,
Խոսի՛ր բարձրաձայն, հանի՛ր մեծ աղմուկ,
Եվ երբ պահանջեն քեզնից գործ, քըրտինք —
Կոկորդիլոսի՛ թափիր արտասուք...

Հայ արտում ո՛վ լուռ քրտինք է թափում,
Բախտը նըրան է չարաչա՛ր խաբում...

ՄՐՁՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽԼՈՒՐԴ

Գարնան ջերմ օրին մայր-երկրի երես
Ձերմ գործի ելան արի մըրջուններ.
Վապեցին հա՛ դեն, վապեցին հա՛ դես,
Ռբայես ժըրաջան, անխոնջ մշակներ:

Եվ կարճ միջոցում, պարտիպի խորքում
Կանգնեցրին մի տուն — հողաջեն թըմբիկ,
Եվ ապրում էին ամենքն այդ շենքում,
Ասես, մի՛ սիրով կապված ընտանիք:

Բայց մի օր (ավա՛ղ, երկրի երեսից
Չարն է անպակաս) խըղճուկ մըջուններ
Հոգնած, ուժասպառ տուն գալով գործից,
Տեսան տունն իրանց քանդված ու ավեր...

Ստորերկրյա ճամփով, թաքուն գողի պես,
Սուսիկ փորելով սիրուն շենքի տակ,
Լույս-արևն ատող խըլուրդն էր այդպես
Խեղճ մըրջունների ավերել վաստակ:

Լույսի մշակներ, երբ կյանքի գարնան
Գործի եք ելնում, դուք մի՛ մոռանաք,
Որ մեկնում նույնպես խըլուրդներ ջա՛տ կան —
Թաքուն փոս փորող ամեն գործի տակ...

ԻԳԵԱԼԻՍ

Երբ ռուսերող էր համադարանում,
Իդեալ էր փնտրում նա ամեն բանում.
Նա միշտ ասում էր. «Առանց իդեալի
Կյանքն է անապա՛տ, մարդն է խղճալի»:

Բայց ահա՛ կրանքի նա դըպրոց մըտավ,
Եվ, գիտե՛ք, իդեալն ի՛նչ բռնեմ գտնավ —

Հարուստ օժիտով մի աղջիկ առավ
Եվ կընկա փողով... հայտնի ժաբոյ դառավ...

[1898]

ԱՇԽԱՐՀԻՍ ԲԱՆԸ

(Նամեողաթրան)

Չըմեռվա ցըրտին խեղճ, քաղցած մի շան
Ես ոսկոր տվի. նա ուրախացավ,
Չեռքերըս լիպեց է իր շընական
Ամբողջ չարություն իսկույն մոռացավ:

Իմ մի բարեկամն ընկել էր նեղ տեղ,
Օգնության հասա, փըրկեցի նըրան.
Բայց նա մարդկային երախտիքի տեղ,
Թաքուն ամեն ցեխ թափեց իմ վերան...

ԵՐԿՈՒ ԳԵՏ

Ահա՛ երկու գես: Մեկն հուժկու ու խոր,
Հոսում է կորեղ, բայց ձայն չի հանում.
Մեկելը — ծանծաղ, հասանքն էր — անգոր,
Բայց իր աղմուկով ականջ է տանում:

Խորամիտ մարդն էլ ամեն ազգի մեջ
Գործում է քաջուժ, բայց լուռ ու անտես.
Եվ միայն ցանցառ գործիչն է անվերջ
Բոռում, աղմըկում, ծանծաղ գետի պես...

ԴԵՊԻ ՄԱՍՈՆԱՆ

Մի օր հարց տվի ես Մաճմառային.
«Ասա՛, ի՛նչ անեմ, որ քո սեղանին
Ես էլ հյուր լինեմ ն հյուր ցանկալի՞».
Ի՛նչ ճանապարհ ես դու ի՛նչ ցույց տալիս:

— Իմ ծոցըս գալու կան շա՛տ ուղիներ,—
Ասաց Մամոնան,— ծուռ, ձախ, վար ու վեր...
Եվ ո՛րն էլ ընտրես, իմ սիրած հյուրն ես,
Լոկ շիտակ ուղուց դու դարձրու երես...

[1901]

ԽԵԼՈՔ ԽՈՍՔ

Երբ խելապուրկը խելք է քարոպում,
Լալիկն ուզում է ծաղրել հոռետորին,
Բըլբուլի մասին ազոռալն է խոսում,
Սոխն էլ «հոտա՛ծ» է կոչում սըխտորին.
Երբ քոռը լույսի դասեր է տալիս,
Էջն էլ ուղտին է գըցում մասխարա,—
Այս խելոք խոսքն է միշտ միտըս գալիս.
«Քաջա՛լ, դեղ ունես, քո՛ գըլխին արա»...

ԻԴԵԱԼ

«Իդեալ, իդեա՛լ» ենք գոչում ամեն օր,
Բայց ո՛չ ամեն օր ապրում իդեալով.
Որպես պըճնամուլ կընկա սիրած շոր,
Իդեալն հազնում ենք՝ տեղին նայելով...

1901

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԱՂՋԿԱ ԱԼՈՒՄԸ

Պոետն հավանեց մի քընքուշ եակ,
Նըրան անվանեց երկնային հրեշտակ.
Եվ մի օր ասաց հավնած աղջըկան.
«Ի՛նչ գրեմ այբոմումդ — վառ սիրույս նըջան»:

— «Գըրի՛ր,— կույսն ասաց,— միա՛միտ պոետ,
Որ քո հրեշտակը կըկապվի քո հետ,

456

Թե որ թողնելով դու մոռաս, **Պարնառ,**
Բորսայում ոսկու մե՛ծ երգիչ դառնաս...▲

[1901]

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԻՏԻԿԱ

«Գիրքն ստացանք... Էջ չորս հարյուր,
Գինն է աժան, տիպն է մաքուր,
Փլանի գըրած, փստանի տըպած.
Փլան քաղաքումն է լույս տեսած.
Խոստանում ենք ա՛յլ ժամանակ
Խոսել երկա՛ր և ընդարձա՛կ...»:



Եվ անցնում են ջաբաթ, ամիս,
Տարիք գընում, տարիք գալիս.
Իսկ կրիտիկան՝ տե՛ր իր խոսքին՝
Գիրքն է քըննում... Էջի՛ պատկին...

ՕՐԻՈՐԴ X-ԻՆ

(Որ խնդրել էր լուսանկար պատկերս՝ մակագրված
որևէ «գրչի հանաքով»)

Ուղարկում եմ քեզ իմ պատկերն,
Վերան գըրած երկու տող.
«Խենթ հարուստին ծախի՛ր քո սերն,
Խելքը գորշ է՛, առանց փող...»:

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՂՈՔԸ

Ասովա՛ծ, չեմ խնդրում քեզնից դափնիներ,
ձառեր, հոբեյան, ուղերձ, հեռագիր,

457

Փառավոր բաղում, մահից հետո սեր —
Այդ ողջն ինձ կըտա հայրենի երկիր...

Մի բան է խնդիրքս, ո՛վ տեր երկնավոր,
(Այդ բանն ինձ ազգոս երբե՛ք չի տալու):
Տո՛ւր ինձ կըտոր հաց, կամ այնպես շընորհ,
Որ կարողանամ օրով ապրելու...

1901

ԺՈՂՈՒՄ

Հավարքի էինք բազմաթիվ հայեր
Մի շատ կարևոր մեծ գործի համար...
Ժողովում կիրքը — մեզ նախագահ էր,
Ուշունցը — հոետոր, Ոխը — քարտուղար...

Եվ ակնթարթում մենք իրար անցանք,
Տեղ տվինք նույն իսկ տուր ու դմփոցին.
Վերջն էլ ժողովը թողինք, հեռացանք.
Մալի՛՜ չափ մի շահ չըբերած գործին...

Միայն դուրս գալիս՝ դրան մոտ անձայն
Տեսանք մի էակ՝ վիզը ծուռ կանգնած —
Արգարությանն էր այդ եպիսկոպոսական,
Որին նախապես ժողով չէր թողած...

[1901]

ՀԱՅ ԵՎ ՄՈՂՈՒՅՑԻ

(Մեր աղայական տիպերից)

Էջն են էջն է — փառան է փոխել:
Ժողովոր. ինքս

Երնկ հազինն իմն արիտալուդ,
Ուտքին — ջորուք, տրեխն ու թոջ.

458

Մանանունն էր «եղան գրուկ»,
Կերած ճաշը — սոխ ու թոջ:

Տո՛ւր — տուն չէր, այ հավի թուն,
Քընում աղտոտ պուճախում.
Արհեստ չունեք — նա օրն ի թուն
Չու էր առնում, ձու ծախում:

Այսօր... Տեսե՛ք, նա մեծ մարդ է
Հա՛մ ապրուստով, հա՛մ շորով.
Ում տուն մըտնի — նա տան կարդ է
Իր լի՛ ջերով, լի՛ փորով:

Ասիական կյանքն է ատում,
Եվրոպայով շըլացած,
Մանց լաքեյ հաց չի ուտում,
Սոխն ու լոջը մոռացած:

Սեյր անեղիս փողոցներում
Քիթն է ցըցում միշտ վերն.
Ինքն առաջին չի բարևում,
Բարևներն են բազման՝...

Պինդ հազում է, բարձր խոսում,
Հաշվով շարժում ձեռ ու ոտ.
Իսրիջին է խելք քարոպում,
Ինքը խելքի միշտ կարոտ:

«Երկրի աղն» է իրան կարծում,
Հարզանք, պատիվ սպասում.
Ապրի կյանքում, ամեն գործում
Դեր խաղալ է միշտ ուզում:

Հոգի՛ն կըտա, որ քիթ խոթի
Հասարակաց գործի մեջ.
«Ինչ որ խոթեց, տե՛րն ապատի
Անտանձ «ես»-ին չըկա վեջը...

459

Բայց ի՞նչի հայ-եվրոպացին
Խոսքի, վեճի բըռնվելիս,
Ա՛յնքան սիրում էջի քացին
Եվ քացի է միջտ տալիս...

Ի՞նչի... Թե որ լավ միտք անեք,
Հե՛ջ չըպետք է վարմանալ —
Փայանը փոխած էջը երբեք
Ազնիվ նըժույգ չի դառնալ...

ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

Կուլտի լինել հայ աստվածաբան,
Նոր վերադարձած արտասահմանից.
Ցույց տալ խեղճ ազգիս դըրախտի ճամփան,
Ազատել նըրան «բազում մեղքերից»...
Շատերի նըման, և՛ ինձ մայր աթոռ
Կըտար, անկասկած, պաշտոն փառավոր...

2

Կուլտի լինել ես հայ խըմբագիր,
Հայոց «այբուբենն» ակնոցով ջոկող.
Ֆանդ ու բեկլամով տըպել լըրագիր,
Կյանքում չըզըրած բընավ ոչ մի տող...
Համբերող հայ ազգն իմ պեսին, անշուշտ,
Կըտար հա՛մ անուռ, կըպահեք հա՛մ կուշտ...

3

Կուլտի լինել հայոց վանքերից
Մեկի վանահայր — հեռու անկյու նուր,
Որ մարդ չըտեսներ — եկամուտներից

Որքա՛ն է ծածուկ իմ ջեբը գընում...

Եվ, հարկավ, իմ պեսն ինձնից գոհունակ՝
«Պի՛նդ տեղդ նըստիր» — կըտար ինձ կոնդակ...»

Կուլտի լինել հայ երեցփոխան,
Հաշիվ չըտվող տասնյակ տարիներ.
Հենց ժամի կողքին ես էլ սեփական
Շենք կըշինեի, դառած տընի տեր...
Եվ թե մի հայ թերթ անվաներ ինձ գող,
Մի ուրիշ հայ թերթ կըկարդար ներբող...»

[1901]

ԽՈՍՔԵՐ

Օ՛ր, հավատացե՛ք, անձայր երկնքում
Չեն փայլում ա՛յնքան բազմաթիվ աստղեր,
Որքան լըտում եմ ես հայի կյանքում
Խոսքե՛ր և խոսքե՛ր...

Ահա՛ ժողով է: Հայերն հավաքվել
Ազգային մի մեծ աղետի համար,
Խորհուրդ են անում, թե ի՛նչպես փըրկել
Հայ սովյալներին անտերուսչ, թըջվառ.
Եվ սկսվում է աղետի առթիվ
ձառե՛ր, կարեկցա՛նք, խոսո՛ւմ են, խոսո՛ւմ.
Խոսքերն են սիրո՛ւն, խոսքերն են անթի՛վ...
Իսկ խեղճ սովյալներն հա՛ց են աղերսում...

Գործիչ ենք թաղում: Դամբանի առաջ
Խոնկած է երկսեռ բազմաթիվ ամբոխ.
Լըսում ես չորս կողմից կարեկցանք, հառաչ.
«Ա՛հ, ի՛նչ վաղ մեռավ, ափսո՛ս, հայ գործող»...»
Եվ սկսվում են հայ գործչի մասին

Պարանականներ, թե ի՞նչ է արել.
Բայց նայե՛ք խեղճի մաշված երեսին,
Այնտեղ կըկարդաք. «Քաղցի՛ց եմ մեռել...»

Շըքեղ խնջույք է: Ըամպայնն ու գինին
Թափվում է առատ, հեղեղի նման.
Սեղանավորներ լի թասեր ձեռին
Գոռում են. «Կեցցե՛ հայն ու Հայաստան»:
Ճառեր են ասում՝ կատարը տաք-տաք,
Էն էլ ի՞նչ ճառեր, ի՞նչ ուխտ ու խոստում
Ապգին օգնելու... Բայց մի՛ հավատաք —
Վաղն այդ բոլորը կըցնդի օդում...

Մի այլ տեսարան: Մայրաքաղաքում
Հավաքված մի խումբ հայ ուսանողներ
Ճառում են՝ ծղխղ լըցված սենյակում,
Քարոզում իդեա՛լ, վե՛հ սկզբունքներ...
Անցնում են յարիք... պատկերը նախկին
Տեսնում են փոխվեց... Կյանքի քապարում
Նույն ուսանողներն ա՛յլ շարիք հագին,
Սուրբ իդեալներն են փողով վաճառում...

Օ՛, հավատացե՛ք, անծայր երկնքում
Չեն փապում ա՛յնքան բավաթիվ աստղեր.
Որքան լըսում են ես հայի կյանքում
Նոսքե՛ր հա՛ խոսքե՛ր...

ԱՆՀՈԳ ԿՅԱՆՔ

Անգո՛րծ ու փափո՛ւկ ապրելու համար,
(Իմ այս խղրատը լա՛վ միտքդ պահիր.)
Հագիր փարաջա, զըլխիդ դի՛ր վեղար
Եվ հայոց թեմի առաջնորդ եղիր...

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՕՐՈՐԱՆՔ

Օ՛ր-օ՛ր-օ՛ր, բալա՛ս, օ՛ր-օ՛ր-օ՛ր, ջանի՛կ,
Կուլեմ քեզ կյանքում տեսնել երջանի՛կ:

Հերըդ հարուստ էր, հարուստ էլ մեռավ,
Ո՛ւմ փողերն ասես կյանքում չըկերավ.
Ժըլատ ու զըծուծ, մարդ չէր մեղքանում,
Խիղճը փողուն էր, հոգին-գրպանում.
Գրպանից փողով կոպեկ հանելիս,
Հետն էլ հոգուցն էր մի կտոր տալիս...
Ողորմի՛ հոգուն... Էդ ճանապարհով
Քեզ էլ զանձ թողեց ու կյանք ապահով.

Օր-օր-օ՛ր, բալաս, օր-օր-օ՛ր, ջանի՛կ,
Կուլեմ քեզ կյանքում տեսնել երջանի՛կ...
Կըվարձեմ դայակ ու դաստիարակ՝
Մամկել ու մյուսիտ, որ ապա՛տ, արա՛գ
Միտքըդ պարգացնեն, աչքըդ բաց անեն,
Կյանքի նորանո՛ր ճամփեքով տանեն...
Փորձ, շիկ ու ճաշակ շատ ունեն նրանք,
Ամեղ գառի պես, դու կյանք չես մտնիլ.
Կյանքի համ ու հոտ, գաղտնիքներ բոլոր
Նըրանք լա՛վ գիտեն... Որդի ջան, օ՛ր-օ՛ր...

Օր-օր-օ՛ր, բալա՛ս, օր-օր-օ՛ր, ջանի՛կ,
Կուլեմ քեզ կյանքում տեսնել երջանի՛կ:

Քեզ ուսում կըտամ, բարձրագույն ուսում,
Մեր դարը, որդի՛ս, դիպում է ուլում.
Դիպումը ծոցիդ՝ հինգ տասը տարից
Հայրենիք կըզաս օտար աշխարհից,
Կոկված ու փոխված, քեզ չե՛ն ճանաչի,
Կասեն — սա իսկի հայի նըմա՛ն չի...
Տա՛ աստված, որդի՛ս, նըման չըլինես,
Հայի անունը կե՛ղտ կըբերի քեզ...
Օր-օր-օ՛ր, բալա՛ս, օր-օր-օ՛ր, ջանի՛կ,
Կուլեմ քեզ կյանքում տեսնել երջանի՛կ:

Կյանքը թատրոն է... Ամեն մարդ պիտի
Նախշած երեսով բեմ դուրս գա, որդի՛.
Սաղ կյանքը խաղա՛, եղի՛ր դերասան —
Մի օր Ժան-Պիեռ, մի օր թուրք Հասան...
Նեղի՛ր անպորին, պատվի՛ր ուժեղին,
Միշտ դերեր փոխիր ժամի՛ն ու տեղի՛ն...
Թե կին էլ ուզես՝ ծուռ քիթ ու բերան,
Ասո՛ր չի, միայն մե՛ծ օժիտ վերան...
Օր-օր-օ՛ր, բալա՛ս, օ՛ր-օ՛ր-օ՛ր, ջանի՛կ,
Կուզեմ քեզ կյանքում տեսնել երջանի՛կ...

ԵՐԿՐԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ

— Տեր-հա՛յր, մեղք՛նրիս թողություն՛ն արա.
«Պատմի՛ր, զավակըս, ի՛նչ մեղք ես գործել».
— Ոստիկան էի՛ բանտապետ դառա,
Իմ ճանկից մարդիկ մահո՛ւյ են պլրծել...
Վա՛յ ինձ, բազո՛ւմ են իմ մեղք ու արատ —
Սիրե՛լ եմ կաշառք, սիրե՛լ գողություն...
«Է՛հ, ոչի՛նչ, որդիս, տե՛րն է գթառատ,
Մեղքիդ թողություն՛ն...»:

— Տեր-հա՛յր, մեղքերիս թողություն՛ն արա,
«Պատմի՛ր, զավակըս, ի՛նչ մեղք ես գործել»:
— Միավամբ պաս-օր բերանըս առա
Մի կտոր երջիկ... Պասն էի մոռցել...
Տեր-հա՛յր, մասն արա ինձ սուրբ հաղորդի,
Ուրիշ մեղք չունեմ, երկի՛նքըն է վկա.
«Օ՛, մե՛ծ է մեղքդ... քեզ համար, որդի՛,
Թողություն չըկա...»:

ՄԵԾ ՎԻՇՏ

Ասա՛, հայ աղջիկ, ի՛նչի ես տղրտում,
Ի՛նչ ցավ ու դարդ կա քո մատաղ սրբտում.

Ի՛նչի ես այդպես հուսահատ լախս,
Մապերդդ փետում, զըլխիդ վա՛յ տալիս.
Արդյոք քո ընտրած սիրահա՛րն է քեզ
Անողորմ խոցել ու դարձրել երես...
Թե՛ անզին ծնողքի կամ ապիկ եղբոր
Մահն ես դու ողբում՝ այդպես սրգավոր...
Արդյոք այդ տղխուր, այս սև օրերին
Քո դժբախտ ազգի ցավե՛րն են խորին
Քեզ այդպես հուզել, պըղտորել հոգիդ,
Խըլել քո դեմքից կուսական ժղպիտ...
Ասա՛ ինձ, ասա՛, քո սըրտի գաղտնիք,
Գուցե, քո ցավին մի ձար կա, աղջի՛կ...
— «Ա՛խ, մի՛ ժամից հետ հյուր պիտի զընամ,
Կույսը հառաչեց՝ արցունքն աչքերում,—
Իսկ դերձակուհիս — այդ կինն անզգամ —
Դեռ մինչև հիմա շորըս չի բերում...»:

ՄԵԾՈՒԹՅԱՆ ԱԹՈՒ

Ես գիտեմ կյանքում աթոռ մեծության.
Խաչեր ու աստղեր շարեշա՛ր վերան...
Ով այդ աթոռին հասնել ուզենա,
Երկու հատկություն պետք է ունենա —
Մեծի առաջն խոնարհվի՛լ, դողա՛լ...
Մեծի հետևից կամացո՛ւկ սողալ...
(1901)

ՍՈՒԼԹԱՆ ԵՎ ԱՍՏՂԱԳԵՏ

(10 հուլիսի, 1908 թ.)

«Մի տես, աստղագե՛տ, ես չար գիշերին
Ի՛նչ են մեզ ասում երկնային լույսեր...
— Ասում են, տե՛ր իմ, այսօրվա գերին
Վաղն ապատություն կըերգե լույս-սեր...»

«Ի՛նչ... ազատութի՞ւն... փրփրեց Սուլթան.
Հապա, իմ ո՛ւժը... զո՛րք, զե՛նք. թնդանո՛թ...
Ասա՛ աստղերիդ — թո՛ղ գան օգնության,
Պիտ մորթեմ Օսմանն հենց վաղ առավոտ...
— Ների՛ր ինձ, Խալի՛ֆ, դուրբա՛ն եմ գահիդ,
Ծաղրո՛ւմ եմ այսօր մեկ էն քի՛րք աստղեր.
Ասում եմ — անհաղթ տեր-փաղիշահիդ,
Ասա՛ էն փա՛ղ էր,
Որ էջք կաղ էր...

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿԻ ԿՏԱԿԸ

Երբ որ մեռնեմ, աստված սիրե՛ք,
Պըսակի տեղ՝ շիրմիս վրա
Լոկ մի կըտոր չոր հաց դըրե՛ք,
Վըրեն գըրած՝ «Քաղցից մեռա՛...»:

[1910]

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ս. ԳՈՒՇԿԻՆ

ՀՐԵՇՏԱԿ

Քնքուջ իրեշտակը գլուխ խոնարհած՝
Համեստ ջողում էր եղեմի դրոսն.
Խեղ մըռայլ գեղ թռչում վըրորված՝
Մութ, դժոխային անդունդի վերան:

Եվ չար, կասկածոտ ոգին ուրացման
Անթարթ նայում էր մաքրափայլ ոգուն,
Եվ պզու՛մ յուր մեջ, ակամա պղծման
Մի նոր ու անհայտ ջաղցըր ջերմություն:

Ների՛ր, ասում էր, որ տեսա ես քեզ,
Օ՛, ինձ քո պատկերն իպուր չըջողաց.
Դեռ կրանքից իսպառ չե՛մ դաթձրել երես,
Դեռ ողջ աշխարհը չե՛մ արհամարհած:

ԵՍ ԿԱՐԾՈՒՄ ԷՒ...

Ես կարծում էի, սիրուքս մոռացավ
Սիրո տառապանքն — էլ չի՛ տանջվելու.
Ես ասում էի. «Ի՛նչ կար ու անցավ,
Ել չի՛ կրկնվելու, էլ չի՛ կրկնվելու»:

Անցավ սիրո վիշտ, անցավ յուր թախիժ,
Խաղաղ նիրհեցին և՛ մեղմ անուրջներ...
Բայց ահա նոքա հուզվում եմ նորից՝
Քո ուժն պզալով, ո՛վ հաղթական սեր...

Ահա՛ աղմուկ—դաշտում սրինգը սուլելով,
 Իմ մենավոր, խաղաղ ժամը վերողովեց,
 Եվ սիրավատ ցընորքներս վանելով,
 Վերջին գողտրիկ երապիս էլ վերջ տվեց.
 Փախավ արդեն մութ ըստվերը գիշերի,
 Լույսը բացվեց. փայլփլում է գունատ օր.
 Էլ նա չըկա՛... Համըր, անշարժ, տաղտկալի
 Դատարկություն է տիրել իմ չորս բոլոր...
 Գետափ ելա, ուր հաճախ էր նա սիրում
 Դուրս գալ պոսանք գիշերներին լուսնկա,
 Սակայն այնտեղ, մարգագետնի դալարում
 Նորա սիրուն ոտքի հետքն էլ չըգտա:
 Եվ մտախոհ ընկած թավուտ անտառներ,
 Սկսեցի ձայն տալ էռգուս հատորին,
 Անունն հիշել, բայց, ո՛հ, դատարկ հովիտներ
 Միայն հեռվից լոկ արձագանք ինձ տվին...
 Եվ հնայված ես առվակին մոտեցա —
 Նա յուր սահուն կոհակներն էր թավալում.
 Բայց անմոռաց այն պատկերը չըտեսա
 Ե՛վ առվակի պարպ ու վճիտ ջրերում:
 Էլ նա չըկա՛... Մինչ քաղցրաշունչ, նոր գարուն
 Անջատված եմ ես սիրասուն իմ յարից.
 Անկյանք ձեռքով ահա արդեն ցուրտ աշուն
 Ծառեր, թըփեր վըրկել է թավ դալարից.
 Եվ ժանտ աշունն աղմկում է անտառում,
 Օդում պըտտում տերևն անկյանք ու անուժ.
 Աշնան քամին մերթ սուլում է, մերթ լըռում,
 Չորս բոլոր ծով են կապել մեզ-վըշուշ:
 Օ՛, դա՛շտ, բըլո՛ւր, օ՛, դուք ծանոթ հովիտներ՛ր,
 Որ պահում եք անդորրություն սըրբապան,
 Դուք իմ վըշտի և խնդության վըկաներ՛ր,
 Մնա՛ք բարև... Մինչ գալուստը նոր գարնան:

Թույնի ծառ

Չոր, ամալի անասլատում,
 Հավերժ կիպող արևի տակ
 Անչարն, ասես ահեղ պահնորդ,
 Կանգնած է լուռ ու մեն-մենակ:

Անապատի ծարավ կուրծքն է
 Լի վայրույթով նորան բուսցրել.
 Ե՛վ ոստերի կանաչն անկյանք,
 Ե՛վ արմատը — թույնով լըցրել:

Թույն է ծորում չոր կեղևից,
 Հալչում տոթից միջօրեին.
 Եվ սառչելով թանձրը, փայլուն
 Խեժի փոխվում երեկոյին:

Մահու ծառին չեն մոտենում
 Ո՛չ մի գապան, ո՛չ մի թըռչուն.
 Լեկ մրրիկն է հետը շըփվում
 Եվ վարակված թըռչում հեռուն:

Եվ թե ամպն է ցողում անձրև,
 Թափառելով ծառի գըլխին.
 Անձրև իսկույն թույն է կըտրում
 Ու ոստերից թափում գետին:

Բայց, տես, մի օր մարդը մարդուն
 Իշխանական խի՛ստ հայացքով
 Ղըրկեց թունոտ այն ծառի մոտ,
 Որ թույն բերի նա յուր ձեռքով:

Եվ նա անխոս ճամփա ընկավ,
 Հընապանդած խիստ հայացքին.
 Եվ երկրորդ օրն առավոտյան
 Վերադարձավ թույնը ձեռքին:

Բերավ նա թույն — խեղ մահաբեր
Եվ ոստ՝ չորացած տերևներով,
Նորա ճակտից մահու ջըրտինք
Թափվում էր սառն կաթիլներով:

Բերավ... դողա՛ց... և թուլացած
Երեսն ի վար ընկավ գետին,
Չոհվե՛ց ըստրուկ, անկոր գերին
Յուր պորավոր, քաջուժ պետին:

Իսկ պետն անհաղթ՝ բերած թույնով
Յուր հընապանդ պենքը սըրեց,
Եվ այդ պենքով մահ սփռելով,
Շա՛տ աշխարհներ առավ, տիրեց...

ԲԱՂՉԱՆՔ

Դանդաղ սահում են կյանքիս հեզ օրեր,
Եվ ամեն վայրկյանն իմ թոշնած սըրտում
Լըցնում է դըծօթախտ և՛ սիրո ցավեր,
Ե՛վ անմտությանը խելքըս վրդովում:
Բայց ես անտրտունջ լալիս եմ լըռիկ...
Լացն ավելի՛ է ինձ մըխիթարում.
Հոգիս պաշարած վըշտի փոթորիկ,
Լացի մեջ նա դառն հըրճվանք է պզում:
Օ՛, կյանքի երա՛վ, դու պատրու՛ն տեսի՛լ,
Քեզ չե՛մ ավստում, չըքացիր շուտով.
Թա՛նկ է ինձ համար սիրել ու տանջվի...
Հո՛գ չէ, թո՛ղ մեռնիմ... միտքն սիրելի՛վ:

ԿՈՎԿԱՍ

Ահա՛ Կովկասն իմ ոտքի տակ: Ես մեն մենակ վերևում
Սպիտակափառ լեռան լեռնչին լուռ կանգնած եմ ու նայում.
Ինձ պես բարձր, արծաթե հեռվում, դեպի եթեր վերացած՝

Օդում հանգիստ տավառում է՝ թևերն հըպոր տարածած.
Եվ տեսնում եմ ես այստեղից հեղեղատներ փըրփրալից
Ինչպե՛ս ծընվում, ինչպե՛ս ձյունի հյուսեր փըլչում սարերի

Այստեղ ահա շա՛ր-շա՛ր ամպեր մեղմ սահում են իմ դիմաց.
Գոռ ջըրվեծներ նոցա ճեղքում ու սըլանում դեպի ցած
Եվ աղմուկով դիպչում այնտեղ լերկ ժայռերի կույտերին.
Իսկ քիչ ներքև — չոր մացառ է, մամուռ կըպած քարերին.
Քիչ էլ այն կողմ ես տեսնում եմ կա՛ռաչ, թափուտ անտառն
Ուր վըխտում են եղջերուներ և ծըվըլում թըռչուններ

Այստեղ արդեն և՛ մարդիկը բուն են դըրած սարերում
Եվ խաշները մեղմ մալում են դադարախոտ վայրերում,
Եվ խաշնարածն իջնում է ցած — դեպի ուրախ հովիտներ,
Դեպի խաղուն Արագվայի կանաչագեղ, Կով ափեր.
Եվ չըքավոր ասպատակն է դարան մտնում կիրճի մեջ,
Եվ Թերեքի կատաղալից, Կըվարճ խաղին չըկա վերջ:

Նաղում է նա ու փըռչում, որպես վայրագ մի կորյուն,
Որ վանդակից որս է տեսել, աչքը կոխել սև արյուն.
Ե՛վ խըփվում է նա ափերին, և՛ ապարդյուն կոիվ տալիս,
Ե՛վ յուր քաղցած աղիքներով ժայռեր լիպում ու լալիս...
Սակայն ի կո՛ւր: Նորա համար չըկա ուրախ ո՛չ մի օր.
Նորան ճընշում ու խեղդում են լուռ քարափներն ահավոր:

ԹԵ ՇՐՋՈՒՄ ԵՍ

Թե շրջում եմ ազմկալից փողոցում,
Թե մտնում եմ ես մարդաշատ սուրբ տաճար,—
Թե նստած եմ շահիլների շրջանում,—
Միշտ նույն մտքերն ինձ հուլում են անդադար

Ես առում եմ — տարիք կա՛ծցնեն ու կըզան,
Եվ ամենքըս, որ կա՛նք այստեղ խըժրովին,
Պետք է նընչենք երկրի խոթքում հավիտյան,
Եվ, գուցե, մե՛նք արդեն մոտ է թա՛ր մահին:

Թե նայում եմ մենակ կանգնած լուռ կաղնուն
Ես խորհում եմ — այդ նահապետն անտառի,
Որ վըկա է իմ պապերիս մեռնելուն,
Ե՛վ ինձ թաղած՝ էլի կապրի շատ տարի:

Թե սիրասուն մանուկին եմ փայփայում,
Մըտքումս արդեն ես ասում եմ մնա՛ս բարև,
Քե՛ց եմ տալիս ես իմ տեղն այս աշխարհում,
Ինձ — մահ, իսկ քեզ — դեռ կըծպտի նոր արկ:

Եվ այսպես միշտ — ամեն մի օրն ու տարին
Սովորել եմ մըտածմունքիս հետ կապել,
Եվ նոցա մեջ ըսպասելով օրհասին,
Աշխատել եմ գալիք մահըս գուշակել:

Եվ, ո՛վ գիտե, ի՛նչ տեղ է մահ պատրաստում
Ինձ օրհասը — ծովում, մարտում թե ճամփին.
Գուցե հանգչեմ հենց մոտակա այս հովտում —
Նա ընդունե իմ ցըրտացած անշունչ դին:

Թեպետ մե՛կ է, ո՛ր էլ հանգչեմ հավիտյան,
Ո՛ր էլ փըտի սառն, անպզա իմ դիակ.
Բայց, ա՛խ, քաղցր էր, թե գըտնեի գերեզման
Սիրած երկրում — հայրենիքիս հողի տակ:

Եվ թո՛ղ կյանքը, մատաղ կյանքը սիրավետ
Շիրմիս ափին զվարճանա ու խաղա.
Եվ անտարբեր բընությունը յուր հավետ
Գեղեցկությամբ շուրջըս փայլե ու շողա:

ՎԵՐԱԾՆՈՒՄՆ

Անկոչ մի տաղանդ յուր կոշտ վըրձինով
Հզոր հանճարի պատկերն է ուկում
Կոկել, նորոգել — և անմիտ կերպով
Նա նոր նըկար է վերան խըզբըզում...

Բայց օտար ներկը, չանցած շատ տարի,
Մաշվում, թափվում է ձըկան թեփի պես,
Եվ ահա՛ դարձյալ գործը հանճարի
Յուր նախկին փայլով գալիս է հանդես:

Այսպես ջնջվում են և ի՛մ հեզ սրտից
Կործքըս կեղեքող մոլորություններ,
Եվ այնտեղ զարթնում, եռում են նորից
Նախկին օրերիս պայծա՛ր տեսիլներ:

ԿԱՆԱՆԱՎՈՐ

Խոնավ բանտում պատուհանիս մոտ նըստած,
Ես նայում եմ, ինչպես տխուր ու դարդոտ
Արծիվ-ընկերս ապատ օդում մեծացած՝
Աչքիս առաջ որս է կըտցում արյունոտ:

Եվ կըտցածը դեն ձըգելով՝ վըշտահար
Նայում է ինձ, ասես, միտքըս գուշակած,
Աչքով անում, բարձրը կանչում անդադար.
«Թըռչե՛նք, ընկե՛ր, թող այդ բանտըդ անիծա՛ծ»:

«Մենք բընության ապատ որդիք՝ համարձակ
Թըռչենք այնտեղ, ուր կա՛ն ամպեր ու լեռներ,
Ուր փայլում են ծովի ջըրեր կապուտակ,
Ուր քամի՛ն է միայն մեկ հետ — մե՛կ ընկեր...»:

ՄԱՐԳԱՐԵ

Հոգնա՛ծ ու տանջվա՛ծ, հոգով ծարավի՛
Մութ անապատում թափառում էի.
Եվ ահա այնտեղ տեսա վեթթկյան
Ելավ Սերովբեն իմ դեմ-հանդիման.
Եվ նուրբ մատներով թեթև ու քընքուշ
Շըփեց իմ աչերն, կարծես նինջ անուշ.

Եվ պարիուրանքով նոքա բացվեցան,
 Ահաբեկ արծվի աչերի նման.
 Եվ նա ականջիս դիպավ կամացուկ,
 Եվ իմ լսելիքն հուլեց ձայն, աղմուկ.
 Անսացի երկնի սասանունն ու դող,
 Հըրեշտակների թռիչք լեռներում,
 Ծովի հատակին գեռունների լող,
 Ողկույզի աճումն ճոխ հովիտներում:
 Եվ նա հպվեցավ իմ սառ շըրթունքին,
 Եվ պոկեց, հանեց լեզուս մեղսալի՝
 Սովոր նենգության և նանիր խոսքին,
 Եվ այնտեղ դրեց իմաստուն օձի
 Թունավոր խայթոցն յուր արնոտ ձեռով.
 Եվ նա պատառեց իմ կուրծքը սըշով
 Եվ հանեց սիրտըս դողող, բաբախուն
 Եվ նորա փոխան՝ իմ բացված կրծքում
 Նա դըրեց բոցոտ ածուխ վառվոռն.
 Եվ ընկած էի ես անապատում,
 Որպես մի դիակ: Եվ ահա բարձրից
 Անսացի տիրոջ կոչը դեպի ինձ.
 «Ե՛հ, ո՛վ մարգարե, և լո՛ւր, և հայի՛ր,
 Եվ հըզոր կամքիս հըլու, անձնվեր,
 Ըըրջի՛ր դու ծովեր, շըրջի՛ր դու երկիր,
 Եվ խոսքով այրի՛ր մարդկային սըրտեր»:

ՓԱՌՔԻ ՏԵՆՉԸ

Երբ քո սիրով ու զըզվանքով հըմայված,
 Ես քո առաջ լուռ ծունկ էի խոնարհած,
 Եվ նայելով քո նայելի պատկերին՝
 Խորհում էի, որ դու իմն ես, ո՛վ անգին.
 Դու լավ գիտես, որ այդ քաղցրիկ ժամերում
 Փառքի տենչը կուրծքըս իսկի չէր հուլում.
 Դու լավ գիտես, որ այս ունայն աշխարհի
 Աղմուկառույ կյանքից իսպառ հեռացած,
 Պոետ անունն ինձ թվում էր տաղտեղալի,

Ար կյանքի մեջ երկար կրովեց վաստակած,
 Ես խուլ էի և անտարբեք բընավին
 Մարդկանց անվերջ և՛ գովեստին, և ծաղրին.
 Եվ փոթե ինձ կարող չիս, ո՛վ ընկեր.
 Հասարակաց ծաղր ու ծափը վըրդովել,
 Երբ հայացքըդ սըրտիս խորքը թափանցած,
 Եվ այնպես մե՛ղմ ձեռքըդ գըլխիս խոնարհած,
 Դու քաղցրաձայն շըրջնշալով ականջիս՝
 Հարցնում էիր՝ «Ասա՛ յայ իմ սիրեցիս,
 Բախտավո՛ր ես, սիրո՛ւմ ես ինձ անասեման,
 Արդյոք երբեք էլ ուրիշին ինձ նըման,
 Դու չե՛ս սիրել և ինձ չե՛ս տալ մոռացման...»
 Իսկ ես... Ես լուռ ես հայի՛լ հաչ ինձ պսպած
 Երջանկությունս ողջ երթունս պաշարած,
 Կարծում էի թե այդ քնքուր վիճակում
 Էլ չեմ տեսնի; երբեք ես դառն անջատում.
 Կարծում էի կյանքն էլ չունի ապագա,
 Եվ անջատման դաժան օրը է՛լ չի գա...
 Բայց ի՛նչ եղավ... Ցավ արտասուք ու տանջանք,
 Ուխտի դըրծումն. նենգ պացուս, սև լուտանք,—
 Այդ բոլո՛րը հանկարծ, խարխուլ ջենքի պես,
 Փըլչե՛ց գլխիս... Եվ, ո՛հ, այժմ — ի՛նչ եմ ես,
 Եվ ի՛նչ տեղ եմ: Ահա մեռակ ու լըռիկ,
 Որպես ճամփորդ՝ որին դաժան փոթորիկ
 Կաշկանդել է խուլ, ամառի մի վայրում,
 Ես կանգնած եմ, և ամեն ինչ իմ աչքում,
 Իմ չորս բոլոր մուր-խավար է երևում.
 Եվ մի նո՛ր իղձ, մի նոր տենչանք այս ժամին
 Բորբոքում են ու աղմկում իմ հոգին.
 Փառք եմ ուլում, որ անուներս փառավոր
 Բո լըսելիքն այնկոծե ամեն օր,
 Որ ամեն տեղ, ամեն րուպե ու վաքրկյան
 Քեզ պաշարեն փառքն ու հըռչակն իմ անվան.
 Փա՛ռք եմ ուլում, փառք փափառում ես միայն,
 Որ իմ համբավն քո չորս բոլոր բարձրաձայն
 Օղ դըղդղի՛: Եվ դու անտորր ժամերին
 Լուռ ունկերդ անասու, անկեղծ իմ ձայնին,

Հիշես, ինչպես դառն հրրածեշտ քեզ տալիս
Եվ յըխրալից մեր անջատումն ողբալիս,
Վերջի՛ն անգամ խոր գիշերին ես այգում
Քեզնից հուսով ջերմ սեր էի աղերսում...

ՐՈՄԱՆՍ

Աշնան մի խոնավ, մրոռայլ երեկո
Անցնում էր կույսը խուլ-մութ տեղերով
Եվ գաղտնի պըտուղն յուր դըժբախտ սիրո
Նա բռնած ուներ դողող ձեռներով:
Լուռ էր և՛ անտառ, անդորր և՛ լեռներ,
Ամեն ինչ նիրհած գիշերվա մըթնում,
Դես-դեն ձգելով պզույշ հայացքներ,
Կույսը երկյուղով չորս կողմն է դիտում:

Եվ նորա աչերն լի հառաչանքով
Կանգ առան անմեղ էպի վերա...
«Չավա՛կ իմ, աշխարհ նկած տանջանքով,
Անգիտակ վըշտին, քնած ես հիմա...
Կը բանա աչերդ և լի անձկանոք
Սեղմվիլ կուպենա մայրական կըրծքին,
Բայց դու համբույրիս ջերմ, սիրաբորբոք
Չե՛ս արժանանալ, պավա՛կ իմ անզին:

Ինձ պո՛ւր կկանչես, անունըս կըտաս.
Անջի՛նջ է մեղքիս արատն իմ վերան.
Գիտեմ, դու շուտով ինձ կը մոռանաս,
Բայց չեմ մոռանալ ես քեզ հավիտյան:
Օթևան կը տան քեզ օտար մարդիկ
Եվ միշտ խորթ աչքով կը նայեն վերադ.
Դու կասես — ո՛ւր են ծընող, ընտանիք,
Բայց մարդ չես գըտնիլ, սըրտիդ հարապատ:

Քո հասակակից մաուկների մեջ
Միշտ կը տառապես մըռայլ մտքերով.

Մայրական զըզվանք մինչև կյանքիդ վերջ
Դու կըփափագես դառնացած հոգով:
Ամեն տեղ մենակ. ամենքին օտար,
Միշտ անիծելով և՛ բախտ, և՛ վիճակ,
Բիրտ նախատինքից չես շտնիլ դադար...
Ո՛հ, ների՛ր, ների՛ր ինձ այն ժամանակ:

Քընած ես հիմա... Թո՛ղ, պավա՛կ չըջվառ,
Քեզ վերջին անգամ սեղմե՛ս իմ զըրկում.
Օրենքն անողոք, օրենքն անարդար
Խուլ տանջանքի է մեզ դատապարտում:
Եվ քանի տարիք դեռ չես հալածել
Ամմեղ հըրճվանքը քո անմեղ կյանքի
Քը՛նիր, սիրելի՛ս, չե՛ն հուպիլ վըշտե՛ր
Անհուպ օրերըդ մանուկ հասակի»:

Բայց հանկարծ լուսինն անտառի հետքից
Շողաց — և կույսը լուսնյակի փայլով
Տեսավ մո՛տ խրճիթ... Գունատ, թախծալից՝
Մոտեցավ դրոռն դողդոջուն քայլով
Եվ խոնարհվելով՝ կամացուկ դըրեց
Սիրելի մանկանն օտարի շեմում.
Եվ պարհուրանքով երես շուռ տվեց
Ու գիշերային ծածկվեց խավարում:

ԹԱԼԻՍՄԱՆ

Այնտեղ, ուր միշտ ծովն է խաղում
Ժայռերի հետ անսասան,
Ուր լուսինն է ջերմ շողջողում
Մեզ-մշուշում իրիկվան,
Ուր հարեմում լի հեշտանքով
Օրն է անցնում մյուսույման,
Այնտեղ տվավ ինձ զըզվանքով
Կախարդուհին թալիսման:

Նա գրգվում էր և շըընջում.
«Պահիր իմ այս թախտան.
Խորհրդավոր ուժ կա ֆիջում,
Ջերմ սիրով եմ տալիս այն.
Ո՛չ ցավերից և ո՛չ սեռից.
Ո՛չ փոթորկից ժանտ-դաժան,
Օ՛, սիրելի՛ս, կյանքդդ նրբեք
Ձի՛ փրկի՛ր իմ թախտանն»:

Եվ ո՛չ նա քեզ Արևելքի
Կը պարզեն ճոխ գանձեր.
Եվ ոչ հասցրած գահ ու փառքի՛
Եա՛տ ստրուկների կանե տեր.
Մըտերնի գիրկ, օտար երկրից,
Դեպի աշխարհ հարստեան
Դեպի հյուսիս — քեզ հարավից
Չի՛ թոցնի՛ր իմ թախտանն»:

Բայց թե հանկարծ հրրապուրեն
Քեզ ենեզաֆից փառ աչք-ունք,
Կամ տուտ սիրով քեզ հանքուրեն
Մուք գիշերին կեղծ շըրտուք, —
Օ՛, սիրակա՛ն, քեզ հանցանքից,
Նոր վերքերից եզեկան,
Նենգ դըրժումից, մոռացմունքից
Կը փրկե՛ իմ թախտանն»:

ԿՅԱՆՔԻ ՍԱՅՆԱԿ

Թեպետ հաճախ ժամեր է բեռը տալիս կում,
Բայց շարժում է նա և՛ թերև, և՛ սրբազ.
Միշտ հառաչ է նորան վըդում, չի հոգնում
Քաշ կատապանն — հին, ախոր ժամանակ:

Առավուտից կյանքի տալիս կըտուտիով,
Կառապանին ընկեր դառած անվերեր,

Մենք ըզում ենք հեղզ ու հեշտանք ասելով.
Եվ գոչում ենք. «Կառա՛ջ, կառա՛ջ, ա՛յ ձիեր»:

Բայց կեսօրին չըկա՛ էլ այն ուժը վառ,
Մենք շարդում ենք, ահալի՛ է և ճամփան.
Մեր առաջին խորեր, ձորեր, թունք ու քար,
Մենք գոչում ենք. «Կամա՛ջ, հիմա՛ր կառապան»:

Սայլակն էլի ընթանում է յուր ճամփան,
Մենք էլ արդեն ընտե՛լ ու մե՛թձ գիշերին,
Նիրհելով ենք դիմում գեպի օթևան,
Ժամանակն էլ հա ըզում է ձիերին»:

ՀԱՎԵՐԺԱՀԱՐՍ

Լըճի եպերքին, խուլ անտառներում
Ճըզնում էր երբեմն մի ծեր մենակյաց,
Թաղված միշտ զըճնյա պարապմունքներում,
Պասին, աղոթքին անձնատուր եղած.
Արդեն հնապանդ բահ ու թի ձեռքին՝
Ծերուկն յուր համար շիրիմ էր փորում
Եվ միայն մահ էր ջերմ, կարոտագին
Սուրբերից հայցում յուր աղոթքներում:

Մի անգամ, ամառն, յուր անշուք ու հին
Խըրճիթի ջենքին՝ աղոթք էր անում
Աշխարհից քաշված ճըզնող ծերունին.
Թավ անառն արդեն սըթնում, սևանում,
Մառախուղ պատում փճը կապուտակ.
Մեղմիկ ընթացքով ամպերի միջին
Երկնի երեսով տանում էր լուսնյակ,
Ծերուկն սկսեց նայել շըրերին...

Նայում է — ահից ակամա հուզված,
Եվ ընթրն յուր վերա անչա՛փ կարմանում...
Տեսնում է — ահա շըրերը հանկարծ

Ետում, հուզվում են, նորից մեղմանում...
Եվ մեկ էլ... թեթև, նրման ըստվերին,
Եվ ճերմակ, որպես վաղեկ ձյուն դաշտում,
Ջրից ելնում է մերկ մարմնով մի կին
Եվ լուռ ու նազով լըճի ափ նըստում:

Նա աչք չի պոկում ծեր արեղայից,
Նայում, սանրում է գիսակները թաց.
Սուրբ ճրգնավորը դողում է ահից.
Եվ ինքն էլ նորան դիտում ջրլացած.
Տեսնում է, կույսը ձեռքով է անում,
Կանչում է գրլիսի շարժումով արագ...
Եվ հանկարծ որպես աստղիկ չըքանում,
Ծածկվում ու կորչում նիրհուն ջրի տակ:

Մըռայլ ծերունին չըքնեց ողջ գիշեր.
Չարդթեց ողջ օր. հակառակ կամքին՝
Այն թովիչ կուսի տեսնում էր պատկեր
Շարունակ կանգնած աչքի առաջին.
Նորից թավ անտառն ծածկվեց խավարով.
Լուսինն ամպերում սահում է դանդաղ.
Եվ նորից կույսը ջրից դուրս գալով
Նստում է ափին գունա՛տ ու չըքնա՛ղ:

Նստում է, նայում ու գլխով անում,
Հանաքով հեռվից համբույրներ տալիս.
Մանկան պես խաղում ու վվարձանում,
Ջրերն է հուկում, քրքրջում, լալիս...
Կանչում է ծերին, քնքուշ հառաչում.
«Ա՛խ, արի՛ ինձ մոտ, արի՛, ճրգնավոր».
Եվ հանկարծ փայլուն ջրերում կորչում.
Նորին լռություն տիրում չորս բոլոր.

Եվ երրորդ օրը անքուն սիրավառ
Ծերուկն ափի մոտ նստած անհամբեր,
Չըքնաղ կուսին էր սպասում երկա՛ր.
Իսկ թավ անտառը պատում էր գիշեր:

Անցավ գիշերը: Վառ արշալույսին
Չինացվեց թե ո՛ր չըքացավ ծերուկ.
Միայն գյուղի տղերք ջրի երեսին
Տեսան լողում է մի ճերմակ մորուք...

ԵՐԿՈՒ ԱՍՊԵՏ

Երկու ասպետ խըրոխտ կանգնած
Սպանուհու առաջին,
Վառ նայում են աչնիվ կուսին,
Նայում աչքի հե՛նց միջին:
Երկունս էլ քաջ, սիրուն դեմքով,
Կըրա՛կ կըպած սըրտերին,
Քաջ հենվել են կորեղ բազկով
Իրանց կըտրուկ սըրերին:

Նոցա համար կույսն աննման
Թա՛նկ է կյանքից ու փառքից.
Բայց ընտրյալը մեկն է միայն —
Ո՛րն է արդյոք երկուսից:
«Ո՛վ է, վըճոհ՛ի՛ր, քո սիրելին» —
Հարց են տալիս երկուսով.
Նայում ուղի՛ղ կուսի աչքին
Եվ սպասում ջերմ հուսով...

ՊՈՏ

Քանի Ապողոն չէ կոչել երգչին
Դեպի սըրբապան ոգևորություն,
Ունայն աշխարհի հոգսերի միջին
Թաղված է երգիչն անխանդ, անավյուն.
Չէ՛ հընչում նորա քընարն ոգելից,
Ցուրտ թըմբությունն է հոգին ճաշակում,
Եվ, գուցե, չընչին շա՛տ էակներից՝
Ամենից չընչին նա՛ է աշխարհում:

Բայց, հենց եսանում է բարբառն երկնային
Երգչի ականցին արթուն, հուշապագա,
Ցընցվում է իսկույն պոետի հոգին,
Որպես մի արծիվ քընից սթափված:

Եվ նա անհաղորդ ծափին ու գովքին,
Տխրում, տրտնում է գվարճ աշխարհում.
Ամբոխի պաշտած և ո՛չ մի կուռքին
Երգիչը երբեք գլուխ չէ խնայարհում.
Եվ, կարծես, կյանքի խորք, դաժան պախակ,
Երգով, հույզերով կուռքըը արեկոծ,
Փախչում է նա միշտ դեպի լայնարձակ
Դաշտեր, անսպաս, թավ անտառի ծոց:

ԳՅՈՒՂ

Ողջո՛ւյն քեզ, ո՛վ գյուղ, խաղա՛ղ ապաստան
Գործի, հանգրստի, ոգևորության,
Ու քաղցր մոռացման և բախտի գըրկում
Հոսանքն օրերիս իմ մենակ կյանքում
Անցնում է, անտուն այնպես թուռ, անտես —
Մայրենի անկյուն, ողջուն՛ում եմ քեզ:
Ես քո՛ն եմ: Եվ ճոխ խընջույք, խրախճանք,
Ե՛վ արքաների պարտտներ շըթե՛զ,
Ե՛վ մոլություններ, խաղեր ու վրոսանք —
Ողջը մոռացել... Այժմ նոցա տեղ,
Նո՛ր կյանք եմ, ո՛վ գյուղ, քո մեջ վայելում,
Քո լայն դաշտերում, թավ անտառներում,
Ինձ տված ապատ, պարապ ժամերին՝
Իմ բյուր խոհեթիս այդ ընկերներին:
Քո՛ն եմ: Սիրում եմ այս ազգին ստվերոտ,
Յուր մեզմ գովանին, ծաղկի անուշ հոտ,
Այս մարգագետինն հոտեղ, դեպաշար,
Ուր արմկում են առվակներ պայծառ,
Աղմուկ, խաղում, թըփերի տակին:
Այստեղ իմ աչքին.

Ուր էլ նայում եմ, իսկույն են գալիս
Շարժո՛ւն մրատներնեք: Տեսնում եմ անուշ
Երկու կապառախալ, հարթ լըճի վերա
Մի բան է հանկարծ սպիտակին տալիս.
Այդ դո՛ւ ես, ճըկեղթա, քո առազաստով.
Լըճերից: այն կողմ տեսնում եմ շաքրով
Կանաչ բըլուրներ, շաքրով
Ծավալուն արտե՛ր,
Դես ու դեն փըղված խըրճիթներ՝ր հեռվում,
Թափառող հոտե՛ր թոնավ ափերում,
Մարագներ՝ր ծըխոտ, ջաղաց քաակոր...
Ամե՛ն ինչ աչտեղ՝ հեռո՛ւն, չորս բոլո՛ք,
Տեսնում եմ, ինչպես կըրում է վերան
Հեռքեր վաստակի և առատության:
Եվ այստեղ, հեռու նանիր կապանքից,
Ես ուսանում եմ — զըտնել, ճաշակել
Ճըմարտության մեջ կյանք երջանկայից:
Ես ուսանում եմ — պաշտել օրենք...
Անառաժությունն անկասանք հոգով,
Ականջ չըղնել անկիրթ անբոխի
Բողոք-տրտունչին: Եվ կարեկցանքով
Լըսել ամոթխած, երկչոտ աղերսանք,
Աղերսին տալով միշտ ջերմ արձագանք:
Ես ուսանում եմ — աչտեղ աննախանձ
Նայել հիմարի կամ չարագործի
Բախտին ու վատքին — թաղված սիզապանծ
Մեծության գահին անարդարացի...
Բա՛րճը է խընդարեր ձեր ձայնը հընչում,
Ես ձե՛զ եմ այստեղ հիշում ու կոչում.
Այս վեհ մեծության վայրումս առավել
Բարձր է խընդարեր ձեր ձայնը եղնչում.
Նա հալածում է կիրեղ ծուլության,
Գործի հույք ու խանդ իմ մեջ բորբոքում.
Եվ ձեր խոկումներն աստեղծագործական
Շըլում, հասնում են իմ սըրտի խորքում:
Բայց մի սև միտք է այստեղ իմ հոգին —
Արտում թե դաշտում այս դապարաշատ —

Սև ամպի նրման՝ ճընջում, պաշարում,
Ա՛խ, վիշտ է միայն աչքըս տխրագին
Եվ տրգիտության կործանիչ արատ
Այստեղ նըջմարում...

Արցունքի առաջ խպառ կուրացած,
Սառն ու խուլ վրկա դառն հառաչանքի,
Բիրտ աղայությունն կույր բախտից ընտրված,
Առանց ըզգացման, առանց օրենքի,
Այստեղ իշխում է ձեռքին գավապան,
Եվ բռնի դարձնում իրան սեփական՝
Խեղճ երկրագործի թե՛ ինչք թե՛ վաստակ,
Տուն-տեղ ու արդյունք ուժ ու ժամանակ:
Ե՛վ գործն յտարի, և՛ գութանն օտար,
Մեջքը կորացրած լախտին հընապանդ՝
Այստեղ հերկում է ճորտությունն անձար
Անողոք տիրոջ հողերն արգավանդ:
Այստեղ ա՛մենքն էլ ծանրը լրծի տակ,
Մինչև մահի դուռ տանում են կրծքում
Երկյուղից սպանված հույս, հակում, փափագ,
Այստեղ նորատի կույսերն են ծաղկում
Պիղծ չարագործի վավաջ ու մուլար հաճույքի
համար:

Մատաղահաս որդիք՝ օգնական գործում,
Միա՛կ նեցուկներ ծերուկ հայրերի,
Խըրճիթն հայրական թողած ակամա,
Այստեղ տանջվում են, որպես լուռ գերի,
Աղայի շան մեջ դարձած խեղճ ծառա:
Ո՛ւր է թե իմ ձայնն ընդունակ լիներ
Ցընցելու մըտքեր, հուպելու սըրտեր.
Ա՛խ, էլ ինչո՞ն ես իմ մեջ շարունակ
Վառվում, բորբոքվում, ապարդյո՛ւն կրակ.
Ա՛խ, ինչո՞ն չունեմ և՛ ես ահավոր
Պերճախոսության տաղանդ ու շընորի,
Ընկերնե՛ր, արդյո՞ք կտեսնեմ աչքով
Ես մի օր իմ ազգն ապատ անհալած,
Եվ արքայական քաջահաղթ բազկով
Անարգ ստրկությունն իսպառ տապալած.

Եվ թեպ, հայրենի՛ք, վերջապես, մի օր
Կը շողա՛ արդյոք պայծառ, լուսավոր
Ա՛յնքան փափագած, ա՛յնքան տենչահույզ
Սուրբ Ապատության սիրո՛ւն արշալույս...

ՇՈՒՏ ԱՆՑԱՆ...

Շո՛ւտ անցան, ընկե՛ր, պատրանքներն անուշ,
Սիրո, հույսերի և հըպարտ փառքի.
Որպես ծուխ, որպես վաղորդյան մըշուշ,
Չըքացան խաղերն մեր ծաղիկ կյանքի:
Բայց դեռ եռում են մեր մեջ վառ իղձեր.
Եվ կանգնած ճընջող ուժի առաջին,
Մենք ունկնդիր ենք անհազ, անհամբեր,
Հայրենի երկրի սըրբազան կոչին:
Մենք սպասում ենք անձուկ, հուսավառ,
Ոգեշունչ ժամին սուրբ ապատության.
Սպասում, որպես մատաղ սիրահար,
Թովի՛ջ ըրպեհն ջերմ տեսակցության:
Քանի ապրում ենք, քանի վառվում ենք
Մենք ապատության և պատվի սիրով,
Ընկե՛ր, հայրենի երկրին նվիրենք
Մեր սիրտն ու հոգին վեհ ձըգտումներով:
Հավատա՛ — կը գա, կը գա՛, անկասկած,
Շողավառ այգը բախտաբեր գարնան.
Եվ հայրենիքը ջընից սթափված,
Ինքնակալ ուժի բեկորների վրա
Կը դրոշմե, ընկե՛ր,
Անունները մեր:

«ԲԱՆՉԻՍԱՐԱՅԻ ՇԱՏՐՎԱՆԸ» ՊՈԵՄԱՅԻՑ

(Հատված)

... Հասավ գիշերը, պատեցին սուվերներ
Փարթամ Տավրիկի անուշակ դաշտեր.
Եվ ես լըսում եմ դափնու հովանում

Հեռվից բղբույն է անուշ դայլայլում.
Ելնում է լուսինն աստղերի հետքից,
Եվ շուրջ սփռելով շողեր մեղմավառ,
Էուսավորում է անամպ երկնքից
Սար, ձոր ու հովիտ, բլուր ու անտառ
Անա և ձերմակ չարսավներ վերան,
Մերթ երևալով, մերթ չըջանալով,
Անցնում են, թեթև ստվերների եղման,
Բախչիսարայի խուլ փողոցներով
Թաթար կին-մարդիկ՝ դիմում են շտապ
Նոքա տղնից-տուն, իրար այցելում,
Որ երեկոյան ժամերը պարապ
Միատեղ քնցեն խոսք ու կրույցներում:
Լո՛ւտ է ն պալատն. հարե՛մն է քընած՝
Անդորր հեշտանքին անձնատուր եղած.
Եվ խաղաղ ժամը կես-գիշերային
Խանգարող չըկա: Արդեն ներքինին
Պահապանների
Խոււթը հուսալի
Հըսկող հայացքով աչքի անցուցած՝
Ինքն էլ է արդեն քընի ծոց մըտած.
Սակայն սրբո՞ւ ահն այնքան փութաշան
Եվ քընում հանգիստ չէ տալիս նորան:
Նա ամեն մի ժամ տիրոջ հարեմում.
Կանանց նենգության կասկած է տանում.
Մերթ նա լըսում է խուլ շըջուկ ու ձայն,
Մերթ ճիչ. աղաղակ — և պարթնում խաբված,
Դողդողում ահից, մոտենում դըռան
Եվ երկա՛ր լըսում ականջը լարած...
Սակայն չորս բոլոր լո՛ւտ է ամեն ինչ.
Լոկ շատրվաններ քաղցրաձայն ու ջինջ
Ցայտում են շիթեր մարմար բանտերից.
Եվ բլբուլները սիրաշունչ վարդից
Անբաժան, անտես, խավարի ծոցում
Մեր են գեղգեղում, սիրելում մըրցում:
Երկա՛ր լըսում է նոցա ներքինին
Եվ նո՛րից իրան տալիս խոր քընին...

Մ. ՅՈՒ. ԼԵՐԱՆՆԵՐ

ՀՐԵՇՏԱԿ

Կես գիշերային անհուն երկնքում
Հրեշտակ էր թռչում և մեղմիկ երգում.
Եվ լուսին, աստղեր, ամպեր խըմբովին
Սըրբապան այդ երգն լուռ լըսում էին:

Երգում էր նա բախտ և երջանկություն
Եղեմում ապրող սուրբ ոգիների.
Երգում էր գովեստ նա տեր-ատարծուն,
Եվ այդ գովեստն էր անկե՛րծ, սըրտայի՛:

Մատաղ էակ էր նա գըրկին տանում
Երկրային վըջտի, արցունքի համար.
Եվ երգն հրեշտակի այդ մատաղ սըրտում
Մընաց կենդանի՛, թեպետ անբարբառ:

Եվ երկրիս վերա, լեցուն փափագով,
Երկա՛ր տառապեց այն մատաղ հոգին.
Բայց նորան երկիրն յուր տըխուր երգով
Չը փոխարինեց երգը երկնային:

ՊՈԿՎԵՏ ԿԱՂՆՈՒ...

Պոկվեց կաղնու խորճուկ տերևն յուր ուստիցը հարապատ,
Եվ հալածված գոռ փոթորկից՝ գընաց, ընկավ անապատ.
Թոշնեց այնտեղ ցուրտ ու տոթից, թափառելով շա՛տ երկա
Եվ, վերջապես, Սև ծովի ափ հասավ մի կերպ ուժասպառ:

Ծովի ափին լուռ կանգնած է դալար, մատղաշ չինարին,
Նորա հետ է միշտ քըչփըչում, նորան շոյում զով քամին.
Նորա կանաչ, թարմ ոստերին դրախտի թըռչունք խմբերով
Ծովի չըքնաղ ձուկ-թագուհու փառքն են պատմում երգերով:

Պինդ կայուն է խեղճ պանդուխտը դալար ծառի արմատին
Եվ չինարուց ապաստան է նա աղերսում լալագին.
Նա ասում է — «Ես խըղճալիս՝ կաղնու տերև անպաշտպաւ
Ո՛հ, վաղածամ հասունացա օտար երկրում ցուրտ-դաժան:

«Եվ վաղո՛ւց է թափառում եմ աննպատակ ու անտեր,
Թառամել եմ, թարշամել եմ անքուն, անօդ, անստվեր.
Ա՛ն ինձ քո մտտ, թո՛ղ զըմբուխտյա տերևներիդ հետ ապրեմ,
Ես շա՛տ ու շա՛տ քեզ սքանչելի, քաղցր գրույց կպատմեմ»:

Սեզ չինարին պատասխանեց. «Է՛հ, ի՛նչիս է պետքական,
Ռու դեղնած ես ու փոշոտված, գավակներիս չե՛ս արժան.
Ինձ ի՛նչ, թե դու գիտես գրույց և տեսել ես շա՛տ բաներ,
Առանց այն էլ ձանձրացրել են ինձ եղեմի թռչուններ:

«Գընա՛, անցի՛ր, պանդխտակա՛ն, ո՛վ ես, քեզ չե՛մ ձանաչում,
Տե՛ս այն արևն — նորա համար ես ծըլում եմ — կանաչում.
Այստեղ ապատ տարածվում են իմ ոստերը երկնքում,
Այստեղ ծովի սառն ալիքներն իմ արմատն են ոռոգում»:

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Պարպասիրտ որդին վեհ ապատության
Զգացման համար կյանք չէր խընայում.
Եվ հավերժ գըծերն ապատ բընության
Նա կենդանագրել հաճախ էր սիրում:

Նա հավատում էր մութ գուշակության,
Հավատում սիրույն, թալիսմաններին.
Եվ կյանքը գոհեց շա՛տ անբնական
Նա բուռն հույսերին, ցանկություններին:

Վըշտի, կըրքերի և երջանկության
Նորա մեջ հոգին պահում էր պաշար.
Փըչե՛ց նա շունչը: Ահա՛՛ գերեզման:
Մարդկանց համար չէ՛ր նա եկած աշխարհ:

ՄԵՂԵԴԻ

Ես իմ մտքում մի ա՛յլ աշխարհ ստեղծեցի,
Մի ա՛յլ գողտրիկ պատկերների գոյություն.
Եվ շըղթայով նոցա իրար կապեցի,
Տվի նոցա ես միա՛յն տեսք — ո՛չ անուն:
Սակայն հանկարծ ձըմոռան հողմը շառաչեց
Եվ իմ մտքի սըխալ շենքը կործանեց...

Այդպես քաշված մի ծառի տակ ստվերախիտ,
Ուշքը տված յուր չունգուրի լարերին,
Աշուղն ապատ, անշահասեր, պարզամիտ,
Զբաղեցնում է զվարձամոլ ամբոխին...

Մե՛կ էլ ուժգին նա մի ձայն է արձակում,
Նա սիրեկնի սերն է երգում բարձրաձայն,
Բայց չունգուրի լարն է հանկարծ կըտրատվում,
Եվ լըսվում է երգի ըսկիպը միայն...
Եվ իպո՛ւր եք դուք փափագում վերջաբան —
Ո՛վ կարող է սիրո երգին տալ վախճան...

ԵՐԲ ՄԵՂՄ ԾՓՈՒՄ Է...

Երբ մեղմ ծըփում է արտը ոսկեշող,
Դալար անտառում սոսափում քամին
Եվ կարմրիկ սալորն անտես, զաղտագող
Պահվում է այգում, տերևի միջին:

Երբ անուշաբույր ցողով թարմացած՝
ձերմակ շուշանը ա՛յնպես սիրալից,

Վառ արշալույսին կամ մութը պատած,
Ինձ ողջունում է թղիների միջից.

Երբ սառն աղբուրի կարկաչը ձորում
Հուպիչ ցընորթով սիրտըս պաշարած,
Ինձ խորհրդավոր երգ է թոթովում
Այն երկրի մասին, ուր ինքն է ծընած,—

Այնժամ դադրում է իմ հուզված հոգին,
Մըռայլ ձակատիս թախիծը ցըրվում.
Եվ ես զգալով բախտը երկրային,
Հոգով տեսնում եմ աստծուն երկնքում...

ՆՎԵՐ «ԴԵՎ» ՊՈՆԵՄԱՅԻՆ

Քեզ, ո՛վ Կովկաս, դաժան արքա մայր-երկրի,
Քե՛զ եմ նորից անհոգ երգըս նվիրում.
Օրհնի՛ր նորան, իբր հարապատ վավակի,
Տո՛ւր հովանի քո ձյունազարդ լեռներում.
Անկասելի բախտը վաղուց իմ հոգին
Շրջթայել է քեզ հետ անվերջ ցընորթով.
Ցուրտ հյուսիսում քեզ խորթ, օտար բընավին՝
Քո՛նն եմ, Կովկա՛ս, ես միշտ սըրտով ու մըտքով:

Մանուկ օրից իմ թույլ, երկչոտ քաղերով
ձըգնում էի եկնե՛լ հըպարտ քո ժայռեր,
Որ պատած են գորշ, միգագույն չալմայով,
Որպես դորան երկրպագող մերկ գուլաներ.
Այնտեղ հըզոր արծիվներ են գիշերում,
Այնտեղ ապատ միշտ սուրում է պաղ քամին,
Այնտեղ էի ես կապտտով սըթանում,
Սըրտով նոցա ընկեր էի օդային:

Անցան ծաեր շա՛տ տարիներ այդ օրից,
Դու ինձ նորից տեսար ժայռոտ քո գըրկում.
Եվ քո ողջունն՝ աքսորայիս հյուսիսից՝
Քա՛ղցր էր, որպես երբեմն մանուկ հասակում.

Եվ ես վանեց սըրտիս խորքից տառապանք,
Հոգիս լռեց մըտերմության արձագանք.
Եվ ա՛յժմ էլ, կիսախավար այս երկրում
Քո մասին եմ ես միշտ երգում ու խորհում:

ԱՀՈՎ ՆԱՅՈՒՄ ԵՄ...

Ահով նայում եմ գալիք օրերին,
Նայում անցյալիս տըխուր, վըշտալից,
Եվ իբր հանցավոր պատժի առաջին,
Շուրջըս որոնում մի սիրտ կարեկից...
Եվ կը գա՛ արգյոք փըրկաբեր հրեշտակ,
Որ մեկնե նա ինձ կոչումն այս կյանքի,
Ցույց տա ինձ կըրքի, հուսո նպասակ,
Հայտնե ինձ հըզոր կամըք երկնքի —
Թե ինչո՛ւ երկինքն ա՛յնպես դառնագին
Հարվածեց իմ վառ, խանդալից կյանքին:

Երկրին հատուցի ես տուրք երկրային,
Տո՛ւրք սիրո, հուսո, բարվո, չարության —
Եվ պատրաստ անձս տալ մի ա՛յլ կյանքին՝
Լուռ սպասում եմ բաղձալի ժամվան...
Միա ն այդ ժամն... Բայց ես աշխարհում
Չեմ թողնիլ ո՛չ մի եղբայր հարապատ,
Ցուրտ ու խավար է իմ կրծքում տիրում,
Ավա՛ղ, ես արդեն հոգնա՛ծ եմ, հիվա՛նդ...
Եվ որպես անհյուս, վաղաժամ հասած
Մի դըժգույն պըտուղ, իմ խըղճուկ հոգին
Թոչնե՛լ է կյանքի արևից կիզված,
Բախտի խռովահույզ փոթորկի միջին...

ՈՉ, ԵՍ ՉԵՍ ՌԻՉՈՒՄ...

Ո՛չ, ես չեմ ուզում, որ խորհրդավոր
Իմ կյանքի վեպը հայտնվի աշխարհին.

Տերն ու խիղճըս են միայն դատավոր
Ե՛վ իմ վառ սիրուն, և՛ իմ տանջանքին:

Եվ նոցա առաջ սիրտըս կը բացվի,
Հույս դըրած նոցա ջերմ կարեկցության.
Եվ թող նա՛ միայն, թող նա՛ ինձ պատժի,
Ով վերաս դըրավ տանջանքի շղթան:

Մարդկանց անարգանք, մարդկանց նախատինք
Անպո՛ր են վըսեմ հոգին վըրդովել.
Թո՛ղ գոռա ծովի կատաղած ալիք —
Անպո՛ր է կանգուն ժայռը կործանել:

Նորա ճակատն է ամպերի միջին —
Մըռա՛յլ բընակիչ երկու տարերքի
Եվ միայն ահեղ որոտ-փոթորկին
Պատմում է նա միշտ խորհուրդը մըտքի:

ՔԵՉ ՄԻ՝ ՀԱՎԱՏԱՐ

(Ազատ թարգմանություն)

Քեզ մի՛ հավատար, երպուն կյանքով ապրող պատանի՛,
Եվ միշտ երկնչի՛ր ոգևորության վառվռուն բոցից...
Այդ բոցն՝ է երպ, ծանըր պառանցանք թո հիվանդ սըրտի,
Կամ բուռըն պայրույթ՝ ծընած թո ստրուկ, կաշկանդված մտքից.
Եվ մի՛ որոնիր երկնային նըջան իպուր նորանում —
Այդ թո մեջ առատ եռում են ուժեր, բորբոքիչ արյուն.
Փութա՛ դու արագ սպառել թո կյանքը դառըն հոգսերում,
Վըջտի, տանջանքի թույնով ավերի՛ր դու թո գոյություն:

Թե քեզ պատահի մի նվիրական, սքանչելի ժամին
Բանալ թո սրտում, թո համըր սրտում, անապակ, մաքուր
Մի անհայտ աղբյուր, ու պարզ ու անուշ հընչելիս լինին
Ոգևորության, բաբախուն կըրծքի ձայներ քաղցրալուր,—
Ականջ մի՛ դընիր, մի՛ հափշտակվիր դու այդ ձայներով,
Եղի՛ր անտարբեր և նոցա խապառ տո՛ւր մոռացության.
Ո՛չ ցուրտ խոսքերով, ո՛չ հարթ, համաչափ, կոկված երգերով,
Հավատա՛ դու ինձ, նոցա խորհուրդը չես մեկնիլ մարդկան:

Թե հանկարծ գաղտուկ վիշտ կը մերձենա սըրտիդ խորանի
Թե խանդն ու կիրքը նորան կը հուպեն ահեղ փոթորկով,—
Մի՛ ել ասպարեզ. մարդկանց մեծաշուք, ուրախ խընչույթին
Դու մի՛ մասնակցիր թո միա՛կ ընկեր-փոթորկված հոգով,
Քեզ մի՛ ստորացնիր: Ամաչի՛ր հոգուդ բարկությունն ուժգին
Կամ համր ու հըլու թախիծը կըրծքիդ հանել վաճառքի.
Ամաչի՛ր սըրտիդ վերքն ու շարավը ցույց տալ ամբոխին,
Եվ հպարտությամբ վաստակել ցույցեր մարդկանց պարման.

Մեզ ի՛նչ փույթ, ասա՛, թե դու տանջվել ես կամ չես տանջվա
Մեզ ի՛նչ փույթ, թե քեզ անվերջ մաշում է հուպմունք հոգեմ
Մեզ ի՛նչ փույթ՝ գիտնալ անմիտ թո հույսերն անցած, խորա
Տեսնել — չարաթույն ցավակցությունը բանականության.
Նայի՛ր, տե՛ս, ի՛նչպես երգով, ծիծաղով առաջ է գընում
Ուրախ ամբոխը՝ բըռնած մշտական յուր անշեղ ուղին.
Չվարթ դեմքերին հապիվ է հոգսի մի հետք նըջմարվում,
Չե՛ս տեսնում երբեք անվայել արցունք ոչ ոքի աչքին:

Մինչդեռ հապիվ թե գտնես գեթ մեկին դու նոցա մեջում,
Որ ծանըր վշտից, վաղահաս հոգսից մաշված չըլինի.
Նոքա բուր՛ն էլ տարածամ ծեր են և ընկճված կյանքում,
Բուր՛ն էլ արդեն արբել են թույնով ծանըր հանցանքի.
Հավատա՛, նոցա ցընորք են թվում թո լացն ու տանջանք,
Եվ ծաղրելի ես դու նոցա աչքում թո վարժ երգերով,
Որպես երեսը ներկերով նախշած մի քաջ ողբերգակ,
Որ բեմի վերա օդն է սըղոցում յուր թըղթե սրով...

ՄԵՌՅԱԼԻ ՄԵՐԸ

Փույթ չե, թե, ընկե՛ր, սառն հողի տակին
Գտա ապաստան.
Մի՛շտ և ամե՛ն տեղ քեզ հետ իմ հոգին
Կըլինի հավիտյան:
Քաղցըր մոռացման քաղցըր հանգստի
Աշխարհ վերացած
Ե՛վ այնտեղ հուպերն սիրո ու վըջտի
Ես չեմ մոռացած:

Անվախ թողնելով երկունքի ժամում
Թե՛ քեզ, թե՛ աշխարհ,
Հոգիս տենչում էր, որ գար անջատում —
Անջատում չը կա՛ր:
Ես տեսնում էի երկնային ոգիք,
Տղխրո՛ւմ, հառաչո՛ւմ,
Որ քեզ նոցա մեջ, ընկե՛ր գեղեցիկ.
Չէի ճանաչում:

Ինձ ի՛նչ, թե հրկոր փայլում է երկինք,
Դրախոս է սրբազա՛ն.
Այնտեղ տարել եմ երկրային ես կիրք՝
Ինձ հետ անբաժան:
Եվ ամենուրեք ես փայփայում եմ
Նորան իմ կրթքում,
Լալիս, կարոտում ու նախանձում եմ,
Ի՛նչպես անցյալում:

Թե հանկարծ օտար համբույր է խաղում
Քր վառ այտերիս,
Համըր տանջանքով հուզվում է, դողում
Իմ սիրող հոգիս.
Թե երբեմն օտար մի անուն տալով,
Դու նիրհ ես մտնում.
Ո՛հ, այդ անունը կրթակ դառնալով,
Կուրծքս է այրում:

Ո՛չ, դու չըպետք է սիրես ուրիշին,
Երբե՛ք, հավիտյա՛ն.
Սըրբազան ուխտով, ընկե՛ր թանկագին,
Դու իմն ես միայն:
Եվ ավա՛ղ, թո լաց, թո աղերսն ու վախ
Իպո՛ւր են, հոգյա՛կ.
Ինձ չե՛ն հարկավոր ո՛չ օրեր խաղաղ,
Ո՛չ անդորր վիճակ:

ՏԽՈՒՐ ԵՄ, ՏՐՏՈՒՄ...

Տղխո՛ւր եմ, տըրտո՛ւմ և չը կա՛ ոչ ոք, որին ձեռք պարպեմ
Կյանքիս խռովահույզ, դառնաղետ, ժամում.
Իդձե՛ր... Բայց, ավա՛ղ, անվերջ իդձերով սիրտըս ի՛նչ հ
Երբ վառ տաքիքս էլ գընա՛ւմ են, ասիո՛ւմ...

Սիրե՛լ... Ասկայն ո՛ւմ, սիրել կարճատև, չարժեք բընավին.
Իսկ անվերջ սիրել — ո՛հ, չէ՛ կարելի.
Սըրտիս եմ նայում — այնտեղ և՛ հրճվանք, և՛ վիշտն է չնչ
Այնտեղ հեղք անգամ չըկա անցյալի:

Կըրքե՛ր... Բայց չէ՛ որ կըրքերն էլ վաղ-ուշ իրենց հուզմուն
Անհետ փոհ կերթան բանականության.
Եվ կյանքը, օ՛, երբ նայում եմ իմ շուրջ սառնն հայացքով —
Ի՛նչ փուչ ու անմիտ կատար է միայն...

ՔԵՉ ԷՒ ՊԱՏՄՈՒՄ...

Քեզ էի պատմում ես մի ժամանակ,
Այնուպ սըրտիս երազներն, հոգյա՛կ.
Ես աղքատ էի — դու այդ գիտեիր,
Բայց դու աղքատիս մենակ չըթողիր:

Եվ դու հաշտեցրիր վիճակս ու հոգիս,
Ես խոնարհվեցա հուզվող կըրքերիս.
Քեզանով միայն, ընկե՛ր սիրելի,
Դարձյալ ա՛յն եղա, ինչ առաջ էի:

Եվ ոգևորիչ իմ մուսան նորից
Լքեսց իմ աղերսն, իջավ սուրբ սարից.
Բայց, օ՛, հավատա՛, թո՛նն են, իմ անգին,
Եվ նորա պարզեն, և՛ նորա դափնին:

ԵՐԲ ԿՅԱՆՔԻՆ

Երբ կյանքին վերջին հըրածեջտ տալիս,
Այստեղ, մարդկանցում կը թողնեն միայն
Լոկ հիշողություն մուր կըրքերիս,
Փոխանակ ջըքեղ, փառավոր անվան.

Երբ ցուրտ հողի տակ կը նիրհե հանգիստ
Այն սիրտը, ուր ջերմ արյունն էր եռում,
Ուր այնպես իկո՛ւր, ուր այնպես անմի՛տ
Սերն ու թըշնամանք կռիվ էին սըղում.

Երբ հասարակաց վըճռով մեղապարտ,
Դու գլուխ խոնարհած՝ կը լըռես խպարո.
Եվ անմեղ քո սերն, այդ սերն անարատ,
Ամոթ, նախատինք կլինի քեզ համար,—

Նա՛, ով կըրքերով ու արատներով
Քո պայծառ կյանքը մատնեց խավարին,
Օ՛հ, աղերսում եմ, կըծու խոսքերով
Նորան մի՛ հիշիր այդ տըխուր ժամին:

Բայց երբ կը կոչե քեզ ամբոխն ատյան,
Ասա — մեզ դատող կա մի ա՛յլ էակ,
Որից գընել ես հանցանքիս ներման
Սուրբ իրավունքը՝ կըրելով տանջանք...

ՄԱՐԳԱՐԵ

Այն օրից, երբ տերն հավերժ, երկնավոր
Ինձ մարգարեի պարզակեց ջընորի,
Ես խոր կարդում եմ, կարդում էջ առ էջ,
Արատ ու չարիք մարդկանց աչքի մեջ:

Ես ըսկսեցի քարոզել մարդկան
Ե՛վ սեր, և՛ ուսմունք սուրբ ճշմարտության.

Բայց պինված իմ դեմ իմ մերձավորներ,
Մոլեգին վերաս նետեցին քարեր:

Մոխիր ցանեցի գըլխիս — ու աղքատ
Ես քաղաքներից փախա անապատ.
Այստեղ ապրում եմ գոհունակ կյանքով,
Որպես թըռչուններ — տիրոջ բարիքով:

Այստեղ բարձրալի պատվերը պահած,
Ինձ խոնարհվում է ամեն արարած.
Այստեղ և՛ աստղեր եթերի միջից
Խնդագին փայլով ունկնդիր են ինձ:

Բայց երբ անցնում եմ արագ քայլերով
Ես աղմըկալից քաղաքի միջով:
Ցույց տալով վերաս՝ ինքնասեր, սիզանձ
Ժպտում են ծերերն ու ասում մանկանց.

«Նայեցե՛ք, ահա ձեզ լավ օրինակ,
Գոռո՛ւ էր. մեզ հետ չըվարեց ~~հաշտ կրոնք~~.
Անմիտն ուզում էր համույել մարդկանց,
Որ նորա լեզվով խոսում է ասոված:

Նայեցե՛ք, որդի՛ք, դուք նորա վերա,
Ի՛նչպես և՛ մոռ՛յլ, և գունա՛տ է՛ նա,
Ի՛նչպես նիհար է, մե՛րկ, անօգնակա՛ն,
Ի՛նչպես ամենքն էլ ատո՛ւմ են նորան»:

ԾՈՎԱՐՔԱՅԻ ԱՂՋԻԿԸ

Արքայորդին ծովի ջըրում նըժույգ-ձին է լողացնում;
«Արքայորդի՛, նայի՛ր վերաս» — իանկարծ մի ձայն է լըռում:

Փընչում է ձին, ականջ սրում, գանգուր բաշը շարժելով,
«Հառաջ լողում, ծովը ճեղքում, ջըրի ցույթեր շաղ տալով:

Եվ նույն ձայնն է նորից հասնում արքայորդու ականջին.
«Ծովարքայի աղջիկն եմ ես, գիշերն անցնե՛նք միասին»:

Ահա մի ձեռք, սիրուն մի ձեռք ջրի միջից երևաց,
Եվ ձրգնում է բռնել փունջը՝ մետաքս-սանձից կախ ընկած.

Հետո սիրուն մի գրկիկ է ելնում խաղուն ջրերից,
Ծովի խոտն է խըճըճվելով՝ կըպչում երկայն մապերից:

Սեր է վառվում, սեր է վառվում կուսի կապույտ աչերում,
Պարանոցին, մարգարտի պես, կաթիկներ են շողողում:

«Օ՛, սպասի՛ր, քեզ ցույց կտամ» արքայորդին մատածեց,
Եվ շուտափույթ ձեռքը տարավ, ծամին հասավ ու բռնեց:

Բռնե՛ց ամուր: Չորեդ ձեռքը ո՛չ դող-գիտե, ո՛չ ցնցում...
Իսկ խեղճ գերին և՛ դողում է, և՛ աղերսում, և՛ լացում:

Անահ հերոսն առաջ լողաց, լողաց ծովափ դուրս ելավ,
Ելավ ցամաք, և խրոխտագին ընկերներին ձայն տվավ:

«Եկե՛ք, եկե՛ք, քա՛ջ ընկերներ, որս եմ բռնել ես ծովում,
Նայե՛ք, տեսե՛ք, ինչպե՛ս խեղճը թըպըրտում է ու դողում:

Հը՛, ի՛նչ եղավ, ի՛նչ եք կանգնել այդպես սառած ու ապշած,
Մի՛թե այդպես գեղեցկություն ձեր կյանքում հե՛ջ չե՛ք տեսած»:

Ու ետ նայեց արքայորդին և, ի՛նչ տեսնի տե՛ր առաված,
Աչքը մըթնեց, տեղնուտեղը ի՛նքն էլ մնաց քար կըս

Տեսավ — փայլուն, ոսկեավազ ծովեպերքին տարածված՝
Կանաչ պոչով մի չըտեսնված ծովի եղջեր է ընկած.

Պոչն է պատած օձամաշկով: Եվ հրեջք փոքառդում,
Ամբողջ մարմնով թափանում է, և՛ գալարվում, և՛ դողում.

Եվ ճակատից, որպես աղբյուր, փըրփուր, քըրտինք է վազում.
Մահու խավար դեմքը պատում, աչքի լույսը նվազում.

Եվ դողողուն, գունատ ձեռքերն թուղ բռնում են ավալից.
Մուտք, անորոշ նախատինք է լըսվում նորա շըրթունքից:

Տուն է դառնում արքայորդին ի՛տ, մըտախո՛հ ու փոշմա՛ն...
Դեռ շա՛տ ու շա՛տ նա կը հիշե ծովարքայի աղջկան:

ԸՆԿԵՐԻՆ

Ոգևորության գրկում փայփայված՝
Երբե՛ք իմ աշխուժ, մշտավառ հոգին
Երկնային փայլով չե՛՛ հըրապուրված.—
Ես միշտ սիրել եմ հիացքն երկրային:
Եվ կանցնի, ընկե՛ր, կը կորչի իմ սեր,
Որպես խաբուսիկ երազի ըստվեր.
Եվ ես երջանիկ երբեք չեմ լինիլ
Նապելուս կողքին: Բայց ո՛վ է արդյոք
Սըրտիս ընտրյալը — այդ մի՛ հարցնիլ,
Նորան չը պե՛տք է ճանաչե՛ ոչ ոք:
Մեկ ճակատագիրն անջատեց՝ հավետ,
Ա՛խ, նորան հաղթել ես ուժ չունեցա.
Բայց քենն ու մերժումն իմ մեջ են, ինձ հետ,
Եվ իմ սիրո մեջ ես ունակացա:
Այդպես ձեր գողը քաշված խուլ անտառ,
Անպղջում թաղված յուր շա՛տ մեղքերում,
Դեռ նա սպանոնա՛նք է ճամփորդի համար,
Եվ սիրով արևոտ դաշույնն է սըրում...
Մանկության գրկից մինչ մահու դագաղ,
Որպես խաղալիք բախտի ու կըրքի,
Մարդկանց ամբոխը ձըգտում է դանդաղ
Մի անմեկնելի, սուրբ նայատակի...
Ե՛ս էլ անցյալում դեպ վըսեմն էի
Թըռչում և՛ հոգով, և՛ վառ մտքերով.
Բայց ինձ առավել քա՛ղցր է, սիրելի՛
Երկրային տանջանքն յուր հուկումներով,
Եվ այդ տանջանքին սովոր եմ ա՛յնքան,
Որ նա միշտ ինձ հետ կապրե անբաժա՛ն...»

ՊԱՐԵՍԻՆԻ ՈՍՏԸ

Ասա՛ ինձ, ո՛ստ Պաղեստինի,
Ո՛ր ես բուսել, ո՛ր — ծաղկել.
Ո՛ր բլուրի կամ ո՛ր հովտի
Չարդարանք ես դու եղել:

Արևելքն է արդյոք շոյել
Քեզ յուր շողով ոսկեվառ,
Եվ Հորդանան բունըղ ցողել
Յուր ջրերով կովարար.

Թե՛ քամին է աղմկելով
Խոր գիշերվա խավարում,
Քեզ օրորել լի ցասումով
Լիբանանու լեռներում:

Աղո՛թք էին արդյոք ասում,
Թե՛ երգ երգում վաղեմի,
Երբ քո սաղարթն էին հյուսում
Խեղճ որդիքը Սաղեմի:

Եվ կա՛ դեռ այն արմավենին
Լայնատերև գանգուրով,
Անցորդներին նա տապ օրին
Պարզևում է հով ու կով:

Թե՛ քեզ նրման նա՛ էլ թոչնել
Անջատման մեջ հեզ, տըրտում.
Եվ սաղարթն է նորա դեղնել
Հովտի փոշուց անկըջտում...

Ասա՛, ո՛ւմ ձեռքն աստվածավախ
Քեզ բերել է այս աշխարհ.
Տըխրե՛լ է նա արդյոք հաճախ,
Եվ ջերմ լացել քեզ համար:

Թե՛ նա տիրոջ պինվոր էր քաջ,
Ճակտին կընիք մաքրության.
Մարդկանց միջում, աստծո առաջ
Նա՛ էլ, քեզ պես, երկնարժան:

Խնամվա՛ծ անտես՝ դու կանգնած ես
Հանդեպ այս սուրբ պատկերի,
Հավատարիմ պահնորդի պես,
Ո՛ստ սրբապան աշխարհի:

Կիսախավա՛ր, կանթեղի՛ լույս,
Խա՛չ, տապալուա՛կ — սո՛ւրբ նշան...
Ո՛ղջ շնչում են խինդ, սեր ու հույս
Քո չորս բլուր՝ քո վերա՛ն:

ԺԱՅՌ

Վիթխարի ժայռի լերկ կըրծքի վերան
Ոսկի ամպիկ էր հանգիստ գիշերում.
Եվ երբ լույս ծագեց — վաղ առավոտյան
Նա պվարճ խաղով սահեց եթերում:

Բայց ծերուկ ժայռի կըրծքին խորշումած
Ոսկի ամպիկից խոնավ հետք մընաց.
Եվ ահա մենակ, խորախոհ, տըրտում
Մեղմ արտասվում է ժայռն անապատում...

ԿԱԼԱՆԱՎՈՐ

Ա՛խ, բաց արեք իմ մուրթ բանտի
Փակ դռները — տվե՛ք լույս.
Տվե՛ք ինձ մի սևաբաջ ձի,
Եվ սևաչյա մատաղ կույս.
Մատաղ կուսին պինդ գըրկելով,
Առաջ մի ջերմ կը պաչեմ,

Հասա դեպ դաշտ, ձի կըստեպի,
Եվ քամու պես կը թըռչեմ:

Բայց, ա՛խ, բարձր է իմ պատուհան,
Բանտիս դռնին՝ պինդ փականք.
Եվ հեռո՛ւ է կույս — սեւաչյան,
Քաշված յուր ձոխ ապարանք.
Եվ բարի ձին կանաչ դաշտում
Մենակ, անսանձ արածում,
Ե՛վ խնդում է, և՛ թըռչկոտում,
Ե՛վ պոչն օդում խաղացնում:

Ես մենա՛կ եմ — աքիտ՛ւր, դարգոտ,
Իմ չորս բոլոր — մերկ պատեր.
Լոկ կանթեղն է շուրջըս աղոտ
Սփռում մարող, թույլ շողեր.
Եվ լսում եմ, լքսո՛ւմ միայն
Գիշերային լուռ ժամում —
Լուռ պահնորդի քայլերի ձայն.
Բանտիս դռան հեռևում:

ԿԱՋՐԵԿՐՆ

Հեռավոր երկրից՝ ջերմ, մըշտագարուն
Հայրենի Հյուսիս ուղղած իմ ճամփան,
Ես քե՛զ եմ, կապե՛կ, բերել իմ ողջույն.
Քե՛զ Արևելքի կարո՛ղ պահապան:

Դարերից ի վեր ճերմակ չալմայով
Պատած, ո՛վ հըսկա՝ քո կընճոտո՞ւ ճակատ.
Չե՛ն հուլում բընավ հանգիստըդ անվրդով
Մարդկային գոռու պըրտունք ու գանգատ:

Բայց սըրտիս աղերսն մեղմի՛կ, կաթոգի՛ն
Թող տանեն, հասցենն քո հըսկա ժայռեր
Մըշտընչենական ալլաի գահի՞ն —
Ասողերից վերև, քո տիրած երկր:

Թո՛ղ, աղերսում եմ, կովույրունն օրվա
Պատե տապ հողիտ և փոշոտ ուղին,
Որ հանգիստ առնեմ ես քարի վե՞րս
Ամալի վայրում, կեսօրվա ժամին:

Թո՛ղ, աղերսում եմ, պիսված, սպառնալի
Քո գոռ փոթորկին ես չհանդիպեմ,
Երբ խորունկ կիրճում մըռայլ Դարայի
Իմ հոգնած ձիով անցնելիս լինեմ:

Բայց դարձյալ մի իղձ ունեմ ես սըրտում...
Կապվո՛ւմ է լեզուս... դողո՛ւմ եմ ահից...
Մի՛ գուցե... արդեն հայրենի երկրում
Ինձ մոռացել են աքսորման օրից:

Արդյոք կըզտեմ՝ն ես այնտեղ նախկին
Ե՛վ սիրո վերկանք, և՛ ջերմ հասրույթներ.
Եվ կը ճանաչե՛ն լըջյալ պանդըխտին
Ա՛յսքան աարուց հեռ՝ եղբայր ու ընկեր:

Թե՛ լուռ շարքերում ցուլտ շիրիմների
Ինձ սպասում են աճյուններ նիրած
Բարի, բունն եռանդ ա՛յն էակների,
Որոնց հեռ մատաղ կյանք եմ անցուցած:

Ո՛հ, թե այդպես է... շուտափ՛ր, ով կապեկ.
Փըջի՛ր բուք-բորան, ինձ տակո՞վն արա՛
Եվ իմ աճյունն էլ անտեր, անուրեք
Կիրճում չորս բոլոր սփռի՛ր անխընա...
Կիրճում չորս բոլոր սփռի՛ր անխընա...

ՄԱՐԿԱՍՍ

Մեզով պատած ծովի վերա կապուտակ
Անազատուն է ահա լողում մեն-մենակ...
Ի՛նչ է փնտրում նա այն հեռու վայրերում.
Ի՛նչ է թողել նա հայրենի աշխարհում:

Եվ խաղում են ալիքները հողմահար,
Կայան է թեքվում ու ճրճնչում անդադար...
Բայց նա, ավա՛ղ, ո՛չ բախտի է ման գալիս,
Ո՛չ էլ բախտից երես դարձնում, խույս տալիս:

Նորա վերև— ոսկեճաճա՛նչ արեգակ,
Նորա ներքև— ջրերը լալո՛ւր ու հըստա՛կ.
Բայց նա խըռով, փոթորիկ է փափագում,
Կարծես հանգիստ պահվա՛ծ լինի փոթորկում:

ԹԱՄԱՐ

Դարյալի խորունկ, միգապատ կիրճում,
Ուր Թերեք գետն է հուլվում, մըռնչում,
Կանգնած մի մըռայլ դըղյակ հընօրյա,
Սևին էր տալիս՝ սև ժայռի վերա:

Դըղյակն այն դատարկ, բարձրաշեն ու նեղ,—
Թամար թագուհին ապրում էր այնտեղ,
Գեղեցի՛կ, որպես հրեշտակ երկնային,
Նենգամիտ ու չա՛ր, որպես չար ոգին:

Եվ կես գիշերվա մըռուշի միջից
Ոսկեշող լույս էր ցուլում դըղյակից.
Անցորդի ուշքն էր նա հըրապուրում,
Ե՛վ նինջ, և՛ հանգիստ նորան խոստանում:

Եվ մեղմ լըսվում էր մի ձայն տենչալի,
Ախտահույզ ձայնը չըքնաղ Թամարի.
Եվ կա՛ր այդ ձայնում մի թովչանք քընքուշ,
Կար և անմեկին, հաղթական մի ուժ:

Անտես փերիի ձայնից հըմայված՝
Հովիվ, սովդաքար, մարտիկ պինպզյաց
Դիմում էր դըղյակ— և ժանտ ներքինին
Բացում էր դըռներն եկող հյուրերին:

Փետրալից մահճում, թաղված մետաքսում,
Այնտեղ Թամարն էր հյուրին սպասում,
Վերան ակ, գոհար— և գինով լըցրած
Երկու հատ գավաթ առջևը դըրված:

Եվ փարում էին ձեռքեր ջերմագին,
Հըպվում վառվռուն ջըրթունք ջըրթունքին.
Եվ ախտաբորբոք, վայրախինդ ձայներ
Դադա՛ր չունեին այնտեղ ողջ գիշեր:

Աես, դըղյակում այն լուռ, ամայի
Հարյուրով վառսիրտ աղջիկ, պատանի
Եկած լինեին հարսանյաց հանդես,
Կամ հարուստ թաղման կատարում մի ծես:

Բայց հենց որ լույսը վաղ առավոտյան
Սփռում էր շողեր լեռների վերան,
Մութն ու լըռություն պատում էր կըրկին
Մի ակնթարթում մըռայլ դըղյակին:

Միայն Թերեքն էր Դարյալի խորքում
Անդորրությունը խըռովում, աղմըկում,
Ալիքի ետքից ալիքն էր վալում,
Ալիքն ալիքի հասնել էր ուլում:

Եվ տանում էին իրանց հետ արագ
Նոքա ողբալով անմոռնչ դիակ.
Եվ մեկն այդ ժամին սպիտակին տալով՝
Կանչում էր հեռվից. «Ա՛խ, մընա՛ս բւրով»:

Եվ ժամն անշատման ա՛յնքան էր քընքուշ,
Եվ ձայնն էր հընչում ա՛յնքան մեղմ, անուշ,
Որ կարծես կըրկի՛ն խոստանում լիներ
Նո՛ր տեսակցության հիացմո՛ւնք ու սե՛ր...

«ԽՄԱՍԵԼ ԲԵՅ» ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԵՊԻՑ

(Հատված)

I

Քե՛յ եմ, քե՛յ, իմ ջերմ ողջույնը բերում,
Այն՝ր Կովկաս: Ես քո լեռներում
Օտար ճամփորդ չեմ: Մանկության օրից
Նոքա ճանաչել, փայփայել են ինձ,
Եվ ընտելացրել իմ մատաղ հոգին
Քո խուլ վայրերին, քո վառ երկնքին:
Եվ միշտ այդ օրից ցընորքս է եղած
Հարավի երկինքն, լեռնե՛ր սեպացած:
Գեղեցի՛կ եք դուք, ով ապատության
Մըշտընջենավոր, անսասան գահեր,
Երբ, ծուխի նըման կապուտակ ամպեր,
Թըռչում, գայիս են իրիկնադեմին
Հեռվից դեպի ձեզ— և ձեր գըլխներին
ձախրում, շըշընջում, ստվերների նըման:
Եվ կապուտակում անեզր, անսահման
Ըըրջա՛ն է առնում պանդուխտ, միայնակ
Նազելի՛ լուսնյակ:

II

Օ՛հ, իմ վե՛հ Կովկաս, ես սիրում էի
Ռազմատենչ բարքերն քո պավակների:
Սիրում երկնքիդ կապուտակն անհուն,
Եվ այն սքանչելի, ահեղ մըռնչյուն
Քո հանկարծահաս փոթորիկների,
Որոնց չորս կողմից միշտ ձայն են տալի
Խորո՛ւնկ քարայրեր, սե՛պ-սե՛պ բըլուրներ
Որպես գիշերվա քաջ պահապաններ...
Բա՛յց մեկ էլ տեսար փայլեց արեգակ:
Եվ ոսկեգօծեց հեղեղատն արագ:
Եվ տափաստանի ծաղիկն անուշիկ
Դեպի վեր ուղղած իր հոտոտ գըլխիկ,

Յոգում է, որպես ծաղիկն եղեմի...
Իրիկվան ժամին ես դիտում էի,
Դիտում լո՛ւռ, երկա՛ր,
Այն պատառ-պատառ

Շածկոցն ամպերիդ՝ լեցո՛ւն անձրևով,
Որոնցից ջատերն բաց-կապույտ փայլով,
Եվ նուրբ եպերքներն շիկնած, հըրակեպ՝
Սպառնում են նորի՛ց — և մեկ էլ տեսնես,
Մի ակնթարթում ժայռերի վերա
Պատկերանում է հըրաշք հընօրյա—
Մի կախարդական ամբողջ ահագին,
Բայց շուտով ա՛յն էլ կը ցրվե քամին:
Այդպես և գողորիկ երապն է բանտում
Կուռ շըղթաների շառաչն ընդհատում
Երբ բանտարկյալն է ցընորում դալար
Հայրենի երկրի դաշտերն ու անտառ...
Մինչդեռ ա՛յլ ամպեր՝ առավել ճերմակ,
Քան ձյունոտ լեռներ, թըռչում են արագ
Դեպի արևմուտք— և օրն անցուցած՝
Շարվում իրար մոտ, կողք-կողքի կըլպած:
Եվ նայում ա՛յնպես պայծառ հայացքով,
Ա՛յնպես ձոխ, զվարճ և անփույթ կերպով,
Որ, կարծես, նոքա այդպես հավիտյան
Պետք է և՛ ապրի՛ն, և՛ հավետ դո՛ւր գան...

III

Եվ այդ լեռներում, այդ խոր կիրճերում
Վայրենաբարո ցեղեր են ապրում:
Նոցա աստվածն է լոկ ապատություն,
Նոցա օրենքը— պատերազմ, արյուն:
Եվ մեծանում են, խորիում օր-գիշեր
Նոքա արտակարգ և անգութ գործեր՝
Մատաղ հասակից նվիրած իրանց
Թաքուն ու վայրագ ասպատակությանց:
Այնտեղ փոթրերին դեռ օրորոցում
Ռուս անունով են մայրերը վախցնում,

Այնտեղ հանցանք չէ սպանել թըջնամուն,
Անսուտ է ն' վրեժն, ն' մըտերմություն.
Այնտեղ սովոր են բարիքին՝ բարիք
Արյան տեղ՝ արյուն— պարզևել մարդիկ.
Այնտեղ, սիրո պես խո՛րն է, անսահմա՛ն,
Ե՛վ զգացմունքը չար ատելության...

Ա. Վ. ԿՈՒՅՈՎ

ԵՐԳ

Հողմ է փըջում, հողմն — օրորում
Դաշտում խոտ, դալար.
Թույ է բերում, թույով ծածկում
Իմ ո՛ղջ ճանապարհ:

Դո՛ւրս ել, ա՛յ թուխպ, անցիր ահեղ
Երկնի կամարով.
Գոռա՛, գոչի՛ր, լույս-աշխարհը
Ծածկի՛ր խավարով:

Կըտրիճ տըղի սիրտն է անվախ—
Բըլբուկ կըկըտրի.
Նա իր բախտը— առանց ճամփի,
Անլույս— կը գըտնի:

Ի՛նչ բան է հողմ, մըթին ճամփա,
Կամ թուխպ ու կայծակ,
Երբ որ սըրտում կրակ են գցել
Աչեր կապուտակ:

Դարդըս ո՛րն է: Այս աշխարհում
Դարդ ու ցավ չըկա՛ն,
Երբ սիրում է կըտրիճ տըղին
Ջահել սիրական:

ԵՐԱԿԱՆԻ ՄՏԱԾՍՈՒՆԸ

Խըրճիք եմ քաշվում
Ու միտք եմ անում,
Թե ո՞նց մեն-մենակ
Ապրեմ աշխարհում:

Ջահել, ջիվան եմ,
Ջահել կին չունեմ,
Հալալ մի սերով
Ընկեր էլ չունեմ:

Չունեմ տաք անկյուն...
Չունեմ գանձ, ոսկի,
Ո՛չ արո՞ր-տափան,
Ո՛չ քանուկ մի ձի...

Աղքատ կյանքի հետ՝
Հերքս ինձ տվավ,
Մենակ մի պարզև—
Երկաթի պես ուժ:

Բայց է՛ն էլ կարիքն
Հալ ու մաշ արավ
Օտարի շենքում,
Օտարի դրռան:

Խըրճիք եմ քաշվում
Ու միտք եմ անում,
Թե ո՞նց մեն-մենակ
Ապրեմ աշխարհում...

ԾԵՐՈՒԿԷ ԵՐԳԸ

Կառնեմ, կրթամբեմ
Նըժույզն իմ վապուկ,
Թեթև կըթողչեմ,
Բապեից թեթև:

Կանցնեմ ծով, ցամաք,
Հեռու աշխարհներ,
Ու ետ կըբերեմ
Իմ ջահել օրեր:

Կոկված դուրս կգամ
Կըտրի՛ճ աթաշկան,
Նորի՛ց դուր կըգամ
Սիբուն աղջկան:

Բայց ա՛խ, ա՛նց հասնես
Անցածի՛ հետքից,
Արև չի ծագում
Մայր մըտած տեղից:

ԵՐԳ

Մարդու չեմ ասի,
Ի՛նչի գարունքին
Ծաղիկ չեմ քաղում,
Մար ու ձոր ընկած:

Չորցա՛ն ծաղիկներ,
Անցա՛վ են գարուն,
Էրբ մենք միատեղ
Փունջ էինք կապում:

Անցա՛ն են օրեր,
Աես նետ արագ,
Երբ մեր սըրտերում
Սե՛ր կար ու կըրա՛կ:

Անցա՛վ ամեն բան,
Էլ ո՞նց ետ բերեմ,
Ի՛նչ սըրտով մենակ
Ես ծաղիկ քաղեմ:

Մարդու չեմ ասի,
Ի՞նչի եմ սըրտում,
Ի՞նչ ցավ ու դարդ կա
Թաղված իմ սըրտում...

ՎԵՐՁԻՆ ԿՌԻՎ

Կրկին վերև փոթորիկ էր մըռնչում,
Որտում էր երկինքն ամպոտ ու մըթին.
Իմ թույլ միտքը ճակատագրից երկնչում,
Պաղ ու սարսուռ կաշկանդում էր իմ հոգին:

Բայց ես չընկա՛: Ինձ չըհաղթեց տառապանք,
Տարա՛ հարվածն խիպախ հոգով, աննըկուն,
Եվ պահեցի սըրտումս փափագ ու տենչանք,
Մարմնիս մեջ՝ ուժ, հոգուս խորքում՝ ջերմություն:

Պիտի փրկվեմ թե պիտ կորչեմ կըռվելուց,
Ողջը մե՛կ է— ի՞նչ էլ լինի վիճակված.
Նախախնամող արարչին եմ ես վաղուց
Ապավինել— նորա կամքին հույս դըրած:

Եվ իմ հավատն աներկբայ է ու անշեջ—
Նըրանո՛վ է բոլոր կրանքըս միշտ լեցուն.
Անխախճա՛ն է ամեն ձըգտում նրա մեջ.
Նրա մեջ է հանգիստ անհո՛ւյզ և անհո՛ւն:

Եվ դու գո՛ր ես աղետներով ինձ սպառնում,
Չո՛ր ես դու ինձ կըռվի կոչում, ա՛յ վիճակ.
Միշտ պատրաստ եմ քեզ հետ բռնվել ես կըռվում,
Երբե՛ք ինձնից դու չեմ խնդի հաղթանակ:

Հոգուս խորքում ես ուժ ունեմ անսասան,
Սըրտիս խորքում—արյան բորբոք ու կըրակ.
Խաչիս ներքո—հանգստյանս է օթևան,
Խաչիս վըրա—իմ սերը սուրբ, անապակ:

ԽՈՂԵՐ

1

ՄԱՐԴ

Բրքա՛ն թովիչ է աստծո աշխարհում
Ասեն արարած— ո՛րքան գեղանի.
Բայց մարդ-էակից չըկա՛ գեղանին,
Ո՛չ մի բան նրա թովչանքը չունի:

Մերթ նա բուռն ու խոր ատում է իրան,
Մերթ նա իր անձին ընծայում գըզվանք.
Մերթ նա սիրում է, մերթ հիասթափվում,
Վայրկյան ապրելու— դողդողում ո՛ղջ կյանք..:

Երբ սանձ չի դնում նա իր կըրքերին,
Նա հագեցնում է երկիրն արյունով.
Երբ նա չի կըսպում իր կամքը մոլի,
Նըրա տակ եռում, փոթորկվում է ծով:

Բայց կանցնեն մի օր այդ մութ հակումներ,
Լուսով կըջողան խել ու միտ մարդկան.
Եվ երկրիս վըրա իր գեղեցկությամբ
Կը կըսենմացնե մարդըս ամեն բան:

2

ԿՅԱՆՔ

Հե՛շտ է մեզ խելոք աշխարհն ընդգըրկել,
Ուր միտքն է ապատ թըռչում, սավառնում.
Ինչին մեր միտքը չէ կարող հասնել,
Մենք ա՛յն էլ, կարծես, լա՛վ ենք ըմբռնում:

Դատում ենք խըստիվ, ամեն ինչ հաշվում,
Չը բացած սակայն ծածկոցն դարերի.

Ա՛յնտեղ է հասել, որ չենք էլ քաշվում
Խրոխտալով մեկնել գաղտնիքն աշխարհի:

Գոյության օրից մենք մինչև հիմա
Ինչե՛ր չենք տեսել՝ եկա՛ծ ու անցա՛ծ—
Ախտերի՛ ճընշում մեր կյանքի վըրա,
Ազգեր ~~պարսպա՛ծ~~, ազգեր տապալվա՛ծ:

Ապրելով մենք միշտ խո՛րքն ենք թափանցել
Բընության խորքեր: Եվ մեր գիտցածից
Շա՛տ բան դյուրի՛ն է մեր միտքը անցել,
Շա՛տ էլ քաղել ենք մենք համառ կրոմից:

Եվ ո՛րքան քիչ ենք մենք առաջադիմած...
Ի՛նչ եար հընում— դեռ մո՛ւթ է մեզ համար
Ի՛նչ է մեր գալիքն— ա՛յդ էլ թողարկված,
Ի՛նչ ենք մենք այժմ— ա՛յդ էլ է խավար...

Լոկ փորձն է ասում, որ այստեղ արդեն
Մեզից առաջ էլ մարդիկ են ապրած,
Ապրում ենք ն՛ մենք, հետո՛ էլ կապրեն—
Անա ի՛նչ գիտենք և ի՛նչ է եղած...

ԽՐՃԻԹ

Գետի է՛ն կողմ, լեռան վըրա
Կանաչ անտառն աղմըկում,
Լեռան տակին, գետի ափին
Մի խըրճիթ է եքնում:

Այն անտառում երգ է եղում
Բջջույն անուշ, բարձրաձայն,
Այն խըրճիթում կին է ապրում—
Այրի, ջահել, մեծ-միայն:

Եվ այդ գիշեր— կես գիշերին
Պեսք է կրթիթն, տարաբյուրե

Ջահել մի տղա ջահել այրուն
Գար անպատճառ տեսություն...

Ուշ գիշերին ձուկ էր որսում
Չկնորսն գետում թոռ զըցած.
Քե՛ֆ անելու, գիշերելու
Դեպի խըրճիթ նա լողաց:

«Ա՛յ իմ ձրկնորս, ա՛յ իմ հոգյակ,
Մի գար դու իմ օթևան
Իմ «կետրաբըր տունն է այսօր,
Սիրելի չես դու եղբուն:

Մի՛ նեղանար ու ետ դարձիր
Չըկնորսական թո տընակ.
Էգո՛ւց արի, մեկ տեղ ապատ
Մենք քե՛ֆ կանենք մեծ-մեծակ»:

— Ա՛հ, քա՛մի՛ է, սատո՛կ քամի,
Գիշերն է մո՛ւթ, ո՛ւր զընամ...
Լավ է այստեղ, գետի վըրա
Մինչև լուսը կը սընամ:

Ուշ գիշերին մի սովորաբար
Կես ճամփին էր մընացած.
Ճամփինն ծըռեց, ջահել այրուն
Գիշերելու նա զընաց:

«Ձան սովորաբար, ի՛նչով այրիս
Քեզ այս ժամին մեծարի...
Ո՛չ խորճիթն էմ վառել այսօր,
Ո՛չ խոտ ունեմ, ո՛չ գարի:

Լավ է, շտապես, դու գեղ զընաս,
Սանահերիս հյուր լինես.
Միայն, տե՛ս հա՛, եզուց ինձ գաս.
Աչքի՛ս վըրա տեղ ունես»:

— Գեղն հեռո՛ւ է, համ էլ խեղճ ձիս
Էլ շարժվելու հալ չունի.
Ես ամեն բան հետս եմ առել,
Հոգի՛ս, դու հոգս մի՛ անի:

Երեկ սաղ օր քաղաքն էի,
Այնտեղ առա ամեն բան.
Ահա վաղուց քեզ խոստացած
Ե՛վ իմ ընծան պատվական:

«Ա՛խ, չեմ ուզում ես քո ընծան...
Հա՛մ քեֆըս չէ իրա տեղ.
Գըլուխս սաստիկ ցավ է բրոնել.
Սանահերիս գընա՛ գեղ»:

— Է՛հ, եղ ցավը դատա՛րկ բան է,
Ես ճար ունեմ քո ցավին.
Երկու խոսք է, կասեմ, ձեռաց
Ցավըդ կանցնի, իմ անգի՛ն:

Ահա՛ շողաց լույս ու կըրակ
Ջահել այրու խըրճիթում.
Նա թանկագին իր հյուրերին
Արդեն հաց է պատրաստում:

Չըկնորսի հետ հացի նըստած՝
Քեֆ է անում սովդաքար.
Պատուհանից աչք չի պոկում
Կըտրիճ տըղան՝ սիրտը վառ...

— Չըկնո՛րս ախպեր, գինի խըմի՛ր,
Հա՛մ ինձ ածա, հա՛մ այրուն.
Թե շնորիք ունես, վե՛ր կաց, մեկտեղ
Պար գա՛նք, երգե՛նք ես ու դուն:

Ես սիրում եմ միշտ մարդու հետ
Ջա՛ն ասել ու ջա՛ն լըսել.

Չեր փեշակն է— որսը բրոնել,
Մեր փեշակը— որս գընել...

Դե՛, խնդրում եմ, հետըս վարվի՛ր
Պա՛րզ, հասարա՛կ, եղբոր պես.
Ամեն մի լավ , բարի մարդուն
Այ ի՛նչ խրատ եմ տալիս ես.—

Երբ դարդ ունես— դարդ մի՛ անի,
Երբ գործ ունես— գործ արա՛,
Իսկ տեղն եկավ— էդ երկուսն էլ
Մոռացի՛ր ու քե՛ֆ արա:

Ու ըսկեսց սովդաքարը
Չըկնորսի հետ հա՛ երգել,
Հա՛ պար գալով՝ ջահել այրուն
Հա՛մ պաչպըչել, համ գըրկել...

Չըհամբերեց կըտրիճ տըղան,
Սիրտն ու հոգին կրա՛կ առավ.
Աչք ճըպելում՝ դուռը բացեց,
Կայծակի պես նե՛րս թըռավ...

Եվ այդ օրից էլ խըրճիթում
Մարդ չի ապրում... Նա միա՛յն
Եվ ամայի՛— լոկ բըլբուլն է
Շուրջը երգում բարձրաձայն...

ԵՐԱՁ

Երազ եր... Ժայռի գագաթին կանգնած՝
Ես ուզում էի ինձ ծովը նետել.
Հանկարծ ինձ հուտ հրեշտակ երևաց
Եվ անուշ ձայնով ըսկսեց երգել.

«Սպասի՛ր գարնան: Ես կը գամ շուտով
Կը գամ, քեզ կասեմ— մա՛րդ եղիր նորից,
Մըռայված միտքըդ կը վառեմ լուսով,
Թըմրեցնող նիրհըդ կը ցրվեմ աչքից:

Կըտամ քեզ նորից երջանիկ օրեր,
Նո՛ր ոգի կառնե մուսաղ ինձանից.
Եվ դու բախտավոր՝ կը քաղես հասկեր
Քո նվիրական չըհնձված արտից»:

ՆԵՐՈՐ

Ների՛ր... Մի հիշիր դու օրերն անկման,
Օրերը վըշտի և վըհատության.
Մի՛ հիշիր ո՛չ ցավ, ո՛չ դառն արտասուք,
Ո՛չ խանդոտ սըրտի վայրույթ ու հուզմունք:

Բայց, ա՛խ, այն օրերն, երբ ոսկեայլուսակ
Մեզ փաղաքշում էր գարնան արեգակ.
Երբ մեր ուզին էր պայծա՛ռ, լուսավա՛ռ,—
Այն օրերն օրինի՛ր և մի՛ մոռանար:

ՍԻՐՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔ...

Սիրո՛ւն հայրենիք, դեռ այսպես ուրախ, ջերմ պգացմունք
Երբեք չեմ անցած ես քո դաշտերով:

Տեսնում եմ մանկան մայրական գըրկում անհոգ խաղալ
Եվ վըսեմ վըտքեր հուզում են հոգիս:

Բարի՛ ժամին ես դու աշխարհ եկել, նապելի՛ մանուկ,
Դու է՛լ չես տեսնի ճորտի արտասուք:

Դու մանկությունից հեռու կապանքից, անվախ ու ազա
Քեզ պգացմունք կընտրես՝ սըրտից հարապատ:

Կուլես— դու անվախ երկինք կը թռչես, սեզ արծվի նըմ
Կուլես— դու հավետ կը մնաս ջինական:

Օ՛, ԵՐԳԵՐ, ԵՐԳԵՐ...

Օ՛, երգեր, երգեր— միա՛կ վըկաներ
Աշխարհի համար թափած արցունքիս.
Չեզ միջա ծընում են դառնազե՛տ ժամեր,
Երբ փոթորիկ է պաշարած հոգիս...

Ճընվո՛ւմ եք, դիպչում մարդկանց սըրտերին,
Որպես ալիքներ կարծր ժայռերին...

ԵՐԲ ԱՂԵՐՍԱԼԻ...

Երբ աղերսալի խառնով համուզման
Ես ապատեցի քո կորած հոգին
Մաշիչ խավաքից անկման, մոլորման.
Եվ ողջ ետքամբ դու խոր տանջանքին
Անճատուր եղած՝ դառն անթծեցիր
Քեզ պատող արատն ու արտասուցի՛ր.

Երբ դու անցյալի տրխուր հուշերով
Մոռացկոտ խիղճըդ պատուհասելով,
Ինձ պատմում էիր քո կյանքի արկած,
Ա՛յն բոլորն, ինչ որ առա՛ջ էր եղած.

Երբ դեմքըդ հանկարծ ծածկելով ձեռքով,
Դու լի՛ անոթով, լի՛ վարիուրանքով,
Խոր հեկեկացիր անպուսպ, դառնագին,
Խռովվա՛ծ էր քո միտքն, խռովվա՛ծ— քո հոգին.

Հավատա՛, այնժամ ես անփո՛ւյթ չէի,
Ես անհագ ուշով քեզ լըսում էի...
Եվ, դըժբախտ էակ, ես քեզ հասկացա,
Ողջը ներեցի, ո՛ղջը մոռացա:

Բայց էլ ի՛նչու ես գաղտնի վարանքին
Դու ամեն մի ժամ տված քո հոգին.
Միթե անհեթեթ կարծիքին մարդկանց
Դո՛ւ էլ ես արդեն գըլուխ խոնարհած:

Ո՛չ, մի՛ հավատար ու կեղծ ու պատիր
Ամբոխի խոսքին— և հեռու վանի՛ր
Քեզնից կասկածանք, մաշող պգացմունք—
Երկչոտ սըրտիդ մեջ թաքուցա՛ծ խորունկ:

Չո՛ւր տառապելով, անձնատո՛ւր թախծին,
Ո՛հ, մի՛ ջերմացրու քո կըրծքում օձին...
Ե՛վ դու սիրակոչ, ապատ, համարձակ
Մըտի՛ր, տիրուհի, իմ տան հարկի տակ:

ԳԻՇԵՐ Է...

Գիշեր է... Քընի ախորժանք չըկա,
Արդեն վայելած ամեն զվարճանք,
Մե՛նք աղոթելու պատրաստ ենք հիմա,
Միայն չըգիտենք— ում ի՛նչ ցանկանանք:

Ցանկա՛նք մենք նրա՛ն գիշեր բարեբեր,
Ով հանուն փըրկչի հա՛մր է և համբե՛ր.
Ում դըժնյա աչքից չե՛ն հոսում արցունք
Ով չե՛ տըրտնջում, միշտ փակ են շըրթունք:

Ում կոշտ ձեռքերը միշտ բան ու գործում,
Տայիս է հընար մեզ առո՛ք-փառո՛ք
Թաղվել արվեստի, գիտության ծոցում,
Սիրե՛լ անուրջներ, ախտերի՛ բորբոք...

Ով միշտ խավարում անլույս, անթափանց,
Անգիտակ— ի՛նչ է իրավունք, աստված,
Անդե՛կ է կյանքի շավղովն աստանդում,
Որպես անձըրագ ստորերկրյա բանտում...

ԵՐԱՆԻ ԱՆՉԱՐ ԱՅՆ ԲԱՆԱՍԵՂԾԻՆ...

Երանի՛ անչար այն բանաստեղծին,
Ում մաղձն է սակա՛վ, պգացումը— լի՛.
Ողջագուրո՛ւմ են նրան սըրտագին
Բարեկամները խաղաղ արվեստի:

Ամբոխի միջում նրա ականջին
Անվերջ հասնում է շոյիչ համակրանք.
Օ՛տար է նրան կասկածանք ներքին—
Ստեղծագործ ոգու այդ խորի՛ն տանջանք:

Անձնատուր անփույթ և հանգիստ կյանքին,
Խըստաշունչ, հեզնող նա երզն ատելով,
Խո՛ր տիրանում է ամբոխի սըրտին
Իր խաղաղասեր, շոյիչ քընարով:

Չմայլվո՛ւմ, տարվո՛ւմ են նրա մեծ խելքից,
Չունի՛ նա նեղիչ, չունի՛ բամբասող.
Եվ նրան մարդիկ ժամանակակից
Մահից առաջ են պատրաստում կոթող...

Բայց վա՛յ արև կոզչին, որ քաջ, անվեներ
Հանդես է հանում արգիվ հանձարով
Եւրոսի ախան՛ր ու ստորություննե՛ր—
Լախան է դեսի նա անգութ, անգորով:

Կրթքում արնուցած սերմն ատերության,
Չիւղած եւզնանջով, ծաղրը—չըրթունքին,
Նա միշտ անցնում է տառապանոտ ճանվան՝
Իր պատուհասող ջրնաքը ձեռքին:

Եվ մատնված անկուսպ, չար պարսավանքի,
Նա դրբատներին տկարը է պրնում
Ո՛չ անաչ խաղաղում փռոցի ու գոփոխ,
Այ գառ ու վայրազ արդարակներում:

Վառ ցընորներին իր վեսն կոչման
Եվ հաճառարով, Մ կամկածելով,
Նա կյանքում սեր է քարոզում մարդկան,
Քարոզում ժըխտիչ, հակաճառ լեզվով:

Եվ նրա խաղցի ասեն մի հընչյուն
Շընում է անուշառ թըշնամից գաժան՝
Թե՛ դատարկամիտ, թե՛ խել, թե՛ գիտուն—
Անն՛քն էլ պատրաստ խաչելու նրան:

Անն՛ժը են բաժնում չորս կողմից վըրան...
Բայց մարդիկ նրա մտիը տեսներով,
Ի՛նչեր նա արեց—ա՛յնժամ կիմանան,
Եվ ի՛նչպես սիրեց—նա միշտ ատերով:

ԿՄԸՅ

Նա հեզ կին էր—մա՞ք բազմահոգ ու թըշվառ,
Եվ նրա շուքը միևնդեւ պկարո ու կառատ,
Վըխտում էին երեք փոքրիկ ականակներ,
Մայրը կտրած մանկանց փքրա իբ աչեր,

Լի աղխրութեամբ մըրմընջում էր. «Այ՛ որդիք,
Երանի՛ դուք իսկի աշխարհ չըզայիք
Անշեղ կանցնե՞ք դուք ձեք ուղին, քայց էլի՛
Միշտ կը սընաք ճակատագրին խեղճ գերի...»

Մի պըղտոթիբը պավակներից շինչ հոգին
Քո վըշտերով, ա՛յ ցավատանջ, դըծբախտ կին.
Պատմի՛ր նրանց, պատմի՛ր մաւուկ հասակից,
Որ կա՛ն օրեք, կա՛ն ժամանակ ու տարիք,
Եթե կյանքի մեջ տառապանիտու պըսակից
Չը կա՛ ոչինչ—տառակել քա՛ղցը, երջանի՛կ...

ՄՐԻՍԱ

Ո՛չ, չեմ հիշում երբեք ես մեղմ, գըզվայի,
Գողթորի՛կ տաղեր չըքնաղ, ջընքուշ մուսայի.
Որպես ոգի, նա երկնային քարձունքից
Չե՛ սավանեչ անլըսելի դեսի ինձ,
Չե՛ վարժեցրել իմ լըսելիքն մանկական
Հարթ, ներդաշնակ տաղերգության դյուրական.
Եվ ո՛չ արինգ է թողել նա իմ օրբանում.
Ծաղիկ կյանքիս խոկումներում, խաղերում
Նա չե՛ հուսել միտքըս աղոտ ցընորքով,
Ո՛չ ցոլացել հանկարծ գեղուն իբ դեմքով,
Որպես սիրող ընկերուհի սըրտագին,
Չմաղկած աչքիս — իմ ա՛յն զարուն հասակում,
Երբ շարժապված սերն ու մուսան անմեկին
Լի անձկութեամբ մեր արյունն են բորբոքում...
Բայց ինձ վըրա վա՛ղ ծանրացած լուծ, կապանք,
Ա՛յ մուսայի՛ աչքից ընկա՛ծ, անգըզվա՛նք,
Որ միշտ կյանքում ուղեկցե՞րվ խեղճերին,
Հեզ վըկա է նրանց ցավին, վըշտերին.
Այն մուսայի՛ լացո՛ղ, տըրտա՛ղ ու ցավո՛ղ,
Մի՛շտ տենչացող, մի՛շտ գըլխակոր աղեքսող,
Որի աչքում միակ անեսա պաշտելին,
Երազ-կտորը—լուկ ոսկին է ու ոսկին...

Եվ ա՛յն օրից, երբ են եկա լույս աշխարհ,
Որպես հաճույք և քաղցրություն ինձ համար,
Հին խորճիթում, իջևող ճրագի առաջին,
Ցավից սպանված, գործի բեռը կոր մեջքին,
Նա երգում էր—և նրա պարզ, վըջտառատ
Երգում անվերջ լըսելի էր մի՛ գանգատ:
Իսկ երբեմն էլ հանկարծ նեղված սուր վշտից
Նա ողբում էր՝ իմ ողբանքին ձայնակից.
Կամ խռովում էր նա իմ նիրհը մանկական
Շվայր կյանքի խինդ ու տաղով... Եվ, սակայն,
Նույն լաց-հառաչանք ավելի՛ էր խիստ հընչում
Նրա այդ նոր աղմկալի խրախճանքում.
Եվ ի՛նչ չըկար այդ խելահեղ խառնվածքում—
Նանիք կյանքի մա՛նր ու գըծո՛ւծ հաշիվներ,
Մատղաշության տե՛նչ ու ցընո՛րք գեղեցիկ,
Խեղդվա՛ծ արցունք և խորտակվա՛ծ հույս ու սեր
Անե՛ծք, բողո՛ք և ուժպո՛ղբկ սպառնալիք...
Եվ սըրտմըտած՝ անխել՝ մուսան երգվում էր
Կեղծիքի՛ ղեմ համար կըռի՛վ շկսել...
Նա խաղում էր օրոցքիս հետ մոլեգին,
Իրան տված ժանտ ու վայրագ հրճվանքին.
«Վրե՛ժ» էր կոչում—և հուր, որոտ երկնքից
Ցասկոտ լեզվով կանչում իրան աջակից:

Բայց դըժնության փոթորկահույզ բըռնկումն
Հաստատուն չէր նրա սիրող, մեղմ սըրտումն.
Մաշիչ ցավը կամա՛ց-կամա՛ց մեղմացած՝
Հանդարտվում էր ու թուլանում... և հանկարծ
Ողջ այդ վայրի կատաղությունն կըրքերի,
Այդ դըժնաշունչ սաստկությունը վըջտերի
Քաղցր հատուցում փըրկանք էին շտանում
Այն գեղեցի՛կ և վեհագո՛ւյն րուպեում,
Երբ հեզ մուսան թեքված վըրաս լիագուր՝
Շըջնչում էր «Ների՛ր, ների՛ր թըջնամուղ»:
Այդպես մի կույս՝ հավետ լացող, անմեկին՝
Ինձ երգում էր իր երգերը խըստագին,
Մինչ, վերջապես, և՛ նրա ղեմ կատարի

Սովորական հերթով ելա ես կըռվի:
Բայց ամուր կապն, որ իրա՛ր էր մեզ կապում
Մանկությունից—մուսան խըզել չէր շտապում.
Նա շըրջեցրեց ինձ անյունղներ չարիքի,
Կուպիտ ուժի, քաղցի, վըջտի, կարիքի,
Եվ իմ հոգին մըտերմացած իր ցավին՝
Օրինե՛ց, որ այդ ցավը պատմեմ աշխարհին...

ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ

Ա՛յ ճոխ արտեր՝ լի՛ հասկ բըռնած՝
Իմ հայրենի աշխարհի.
Դուք ծաղկում եք, բայց ես քաղցած,
Ես հապի՛վ եմ կենդանի:

Է՛հ, ա՛յսպես եմ ծընվել մորից,
Ա՛յսպես է գիրն իմ ճակտիս,
Որ ճորտերի ցանած հացն ինձ
Ո՛չ մի օգուտ չի տալիս...

ԳՈՂ

Խընջույք կոչված՝ շտապ անցնելիս աղտ ու ցեխով լի ջուկան,
Երեկ հանկարծ ինձ ապշեցրեց մի այլանդակ տեսարան.
Հացավաճառն, որի տաշտից թըռցրել էին կըտոր հաց,
Լեղին պատառ ու գունաթափ, լաց-վայնասուն բարձրացրած՝
Տաշտը թողել ու վազում էր. «Բռնե՛ք գողին» բողալով,
Եվ բըռնեցին հացի գողին՝ չորեք կողմից վրա տալով:
Կըծած հացը բըռնած ձեռին՝ դողողոլում էր խըղճալին,
Հապար տեղից սերթուկը ծակ, կոշիկ չուներ ոտքերին.
Դեմքի վրա հիվանդության ու տանջանքի թարմ հետքեր,
Ամո՛թ, աղե՛րս, երկյո՛ւղ էին արտահայտում թաց աչքեր...
Հայտնվեց իսկույն և՛ ոստիկան, պահապանին ձայն տվեց,
Մեծ խըստությամբ և կետ առ կետ նա հարց ու փորձ ըսկսեց...

Վերջն էլ գողին առան քաղցած ու հանդիսով բանտ տարան,
ես կոչեցի կառապանիս. «Քշի՛ր, գևա՛ ըո ճամփան».
Եվ փութացի ջերմ գոհություն, օրհնանք ուղղել առ աստված.
Որ ինձ կյանքում ծառանգական կըտոր հաց էր պարգևած...

ԱՆՅՆՈՒՄ ԵՆ ՏԱՐԻՔ...

Անցնում են տարիք—և ես զգում եմ,
Սպառվում են ուժերս, սառչում—իմ արյուն.
Օ՛, քա՛ղցր հայրենիք, գուցե ես մեռնեմ,
Աչքով չըտեսած ըո ապառույթուն:

Բայց մահվան ժամին կուզեի սրբտով
Չգալ, որ լա՛յն է ըո բըռնած ուղին.
Որ մըշակ որդիդ դաշտը հերկելով,
Մընում է պայծառ, փըրկավետ օրին...

Կուզեի, որ ըո հեղաշունչ քամին
Ականջիս հասցներ մի ձայն անուշիկ,
Կախարդիչ՝ մի ձայն, ուր էլ մարդկային
Չը լըսվեր լաց-կոծ, արյան փոթորիկ...

ԷԼԵԳԻԱ

(Հատված)

Թո՛ղ մեր արգի խախուտ մողան պընդե միշտ,
Որ՛ի՛ն նյութ է—«ժողովրդի ցավն ու վիշտ»,
Որ արվեստը պետք է նրան մոռանա.—
Մի՛ հաժառաք, չէ՛ հնանում երբեք նա:
Երանի՛ չէ տարիներից նա մաշվեր,
Աստծո աշխարհն այնժամ զվարթ կը ծաղկեր.
Բայց քանի դեռ ազգեր նեղված ու աստածոջ
Կյանք են վարում խարապանին հրևազանդ,
Որպես նիհար հոսե՛ր սարված դաշտերում,—
Նրա՛նց սև օրն պետք է ողբալ երգերում.

Նրա՛նց պետք է սպասավորե միշտ մուսան,
Եվ այդ տաղն է ամենից վե՛հ, սըրբապա՛ն...
Ժողովրդի ցավն ու դարդը հիշեցնել
Ամբոխ դասին, երբ խրախճանքին անձնվե՛ր՝
Նա անփույթ է, նա խընդում է ու երգում.
Շարժել խիղճը հըզորների չոր կըրծքում,
Նրանց ուշքը հանուր վըշտին դարձնելով.—
Օ՛, դրանից է՛լ մեծարժան, մեծագույ
Ի՛նչ նըրպատակ, ի՛նչ կոչում կա, ընկերնե՛ք,
Որին պոետն իր քընարով ծառայեր...
Ես հեզ ազգիս նվիրեցի իմ քընար.
Գուցե, մեռնեմ նրան անհա՛յտ ու օտա՛ր,
Բայց ես նրան ծառայեցի—և խաղաղ,
Հանգիստ խըղճով կը ողջունեմ ցուրտ դազադ:
Կըրի՛վ, կըրի՛վ ազգի համար եռանդուն:
Թո՛ղ չըհաղթե ամեն կըռվող թըշևամուն,
Թո՛ղ նա ընկնի...բայց ամեն մեկն, սիրելի՛ք,
Պետք է անշուշտ նետվի կըռվի փոթորիկ...
.....

Օ՛Ր-Օ՛Ր, Օ՛Ր-Օ՛Ր

Ճընշում է կուրծքըս անձկություն անհագ,
Տանջանքին հաղթել չեմ կարողանում...
Եվ, որպես զոհին դեպի սուր դանակ,
Ինձ մահի դուռն է իմ ցավը տանում:
Ո՛ր ես, ո՛վ մուսա, ո՛ւր—երզըդ նախկին.
Ես էլ երգ չունե՛մ, հայացքըս անյո՛ւս,
Հապիվ եկել եմ՝ հենվելով փայտին,
Որ ասեմ—մեռնե՛նք, էլ չըկա՛ մեկ հույս:

Եվ ես լըսում եմ, ինչպես բահ, թիակ.
Խույ թընկոթըսկում են... և ապա լըսում...
Եվ չըկա՛ մուսաս—իմ կարող հրեշտա՛կ,
Եվ հանգ հյուսելն է ինձ դավաճանում:
Բայց այդ խորանինչ գիշերվա ժամին

Ես միայնակ չեմ... Ահա՛ սքանչելի
Մի ձայն է հասնում իմ ականջներին—
Այն մորըս ձայնն է. «Որդյա՛կ սիրելի,
Ժա՛մ է, ժամ է քեզ,— ասում է նա ինձ.
Որ միջօրեի այդ կիպիչ տապից
Դու ազատ՝ գըտնես խաղաղ օթևան,
Նընջի՛ր, իմ վավա՛կ, նընջի՛ր, աննըմա՛ն.
Առ քեզ վաստակիդ ցանկալի պըսակ,
Ստրո՛ւկ չես այլևս, այլ—պսակված արքա,
Չես մաշվիլ այլևս ծանրը բեռի տակ,
Ոչ ոք չէ՛ կարող իշխել քո վըրա»:
«Մի՛ վախիր շիրիմից—օտա՛ր չէ նա ինձ,
Մի՛ վախիր, թե կան որոտ ու կայծակ,
Մի՛ վախիր թույնից և ո՛չ էլ սըրից,
Երկյուղալի չե՛ն ջըղթա ու մըտրակ.
Մի՛ վախիր հողմից, ահեղ փոթորկից,
Անսուտ օրենքից, ապօրեն գործքից,
Մի՛ վախիր—էլ լաց, հառաչք մարդկային
Չեն հուզիլ մաշված քո սիրտն ու հոգին»:

Քընի՛ր, մարտիրո՛ս, հեզ, համբերատար,
Եվ դու կըտեսնես հայրենի աշխարհ,
Ազա՛տ ու հըպա՛րտ, քա՛ջ ու բախտավո՛ր,
Քընի՛ր դու հանգիստ... օ՛ր-օ՛ր-օ՛ր, օ՛ր-օ՛ր:
Դեռ երեկ մարդկանց չարաթույն լեզուն
Ա՛յնքան անարգանք հասցրեց քո հոգուն.
Բայց դու աներկյուղ ողջունի՛ր մահվան,
Վե՛րջ ամեն ինչին, վե՛րջ և չարության...
Մի՛ վախիր, հոգյա՛կ, և՛ վըրպարտանքից,
Դու տուրք կենդանի հատուցիր նրան.
Մի՛ վախիր ձըմռան դըժնդակ ցըրտից,
Ես քեզ կը թաղեմ ջերմաշունչ գարնան»:
«Մի՛ վախիր թույնից դառըն մոռացման,
Տե՛ս, արդեն, որդյա՛կ, բըռնել եմ ձեռքիս
Պըսակը սիրո, պըսակը ներման,
Որ հայրենիքն է քեզ պարզև տալիս...
Համառ գիշերին կը հաղթե ցերեկ,

Եվ հայրենիքումդ դու ամենուրեք
Կը լսես, ինչպես բըռնած սար ու ձոր՝
Կը թընդա՛ քո երգն... Օ՛ր-օ՛ր-օ՛ր, օ՛ր-օ՛ր...»

ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ՕՐԵՐ...

Անցնո՛ւմ են օրեր... Նո՛ւյն օդը խեղդուկ, նո՛ւյն կյանքը թշվառ...
Նո՛ւյն օրհասական ջավղի վըրա է վառանյալ աշխարհ...
Մարդկանց մեջ, ասես, մեռած, քարացած խիղճ, կարեկցություն,
Թույլին, անպորին չըկա ոչ մի տեղ սեր ու փրկություն:

Բայց լըռի՛ր, երգի՛չ... Արդար պայրույթով, երգով սըրտմըտած
Դու մի՛ անիծիր մեր անգութ դարը, արարքը մարդկանց.
Թե՛ պգացմունքիդ տա՛ս ազատություն այժմյան օրերում,
Արցունքից հյուծված՝ վախճանդ կլինի սոսկալի անկում...
...

ՍԵՐՄՆԱՑԱՆՆԵՐԻՆ

Լուսո սերմնացա՛ն հայրենի դաշտում,
Արդյոք դու հո՛ղն ես անբերրի գըտնու՛ ,
Թե՛ սերմն է փչացած.

Թե՛ ինքդ ես անուժ կամ անհամարձակ.
Տե՛ս, վըտիտ բերք է տալիս քո վաստակ,
Սակա՛վ է լավ հաց:

Ո՛ւր եք, ո՛վ հըմուտ, զվարթ դեմքերով
Քա՛ջ սերմանողներ, լեցո՛ւն պարկերով,
Ո՛ւր եք... Թույլերի՛ն երկչուտ, սըրտաբեկ
Դուք առա՛ջ տարեք:

Սերմանե՛ք պանիվն, սերմանե՛ք բարին,
Սերմանե՛ք հավերժն—ն ձեզ սըրտագին
Շնորհակալություն կասե դարեդար
Հայրենի աշխարհ...
...

ԱԿԱՆՁ ԴԸՐԱԾ

Ականջ դըրած մարտի անեղ, փոթորկին,
Ամեն անգամ, երբ նոր գոհ է նա տանում,
Ես չե՛մ ցավում, թե գոհն ունի ընկե՛ր, կին,
Եվ ո՛չ իրան հերոսին եմ մեղքանում...
Ավա՛ղ, կինը կը սփոփվի իր ցավից,
Կըմոռանա ե՛ ընկերը ընկերին...
Բայց կա՛ մի սիրտ—միշտ բարախո՛ւն, սիրալի՛ց,
Նա մինչ ի մահ չի մոռանա հեզ գոհին:
Կեղծ ու պատիր մեր արօթյա գործերում,
Ուր չըկա վերջ ամեն տեսակ լրկություն,
Տեսա մենակ անկեղծ արցունք աշխարհում—
Խեղճ մայրերի այն արցունքն էր սրբապան:
Նրանք երբե՛ք չեն մոռանալ ողջ կյանքում
Իրանց որդոց ընկած արյան փոթորկում,
Ինչպես երբեք չի՛ ամբառնալ դեպի վեր
Լացող ուռին գետին կախած իր ոստեր...

ԽԱՄԱՂԱԻԹՅՈՒՆ

(Հատված)

Շուրջըս հաճա՛ր, դաշտերը լի՛ք.
Ո՛չ տաք, ո՛չ ծով, ո՛չ ակեղ...
Շնորհակա՛լ եմ, ո՛վ հայրենիք,
Ինձ անդեց քո լայն ծոց:
Միջերկրական ծովից անդին,
Հեռուն, պայծառ երկնի տակ,
Ուրում էի հաղթել վըշտին,
Բայց նա տաքով հաղթանակ:
Մաշվում էի տաղտուկ, անձայն՝
Ճակատագրից ես պարտված,
Մեջք ծըռեցի այնտեղ նրան,
Բայց ահա՛ շունչըդ պազարձ:
Գուցե, ես ուժ առնեմ կրքիկե՛
Եվ դիմարթեմ գառ կըռվիկե՛...

Քո՛նն եմ: Փո՛ւրջ չէ, թե իմ հեռքից
Միշտ վապե՛լ է նախատինք.
Միշտ գերադաս օտար երկրից՝
Ես երգե՛լ եմ հայրենիք.
Եվ հիմա էլ ես քո գըրկում,
Սըրտով անհա՛գ, լիասե՛ր,
Քե՛ց եմ ահա ես պարզում
Իմ փայփայած երպակներ.
Եվ պզգզված՝ ողջունում եմ
Ամենայն ինչ իմ չորս դին...
Ո՛ղջը տեսնում, ճանաչում եմ—
Ահա՛ գետերդ խըստագին,
Որ պատրաստ են կըռվի բռնվել
Փոթորկի հետ անդադար.
Ահա՛ սոճի ճոխ անտառներ,
Նրանց աղմուկն հավասար.
Մըշտախաղա՛ղ շեներ, գյուղեր,
Լայնածավալ ցանք ու վար...
Ահա՛ լեռան լանջին փայեց
Փոթորիկ տաճար—աստուծո տուն.
Եվ ջինջ հավատ նա ներշնչեց
Հանկարծակի իմ հոգուն.
Եվ հեռո՛ւ են ժըխտում կասկած.
Ինձ ասում է մի սուրբ ձայն—
Մըտի՛ր այնտեղ դու գըլխաբաց,
Տուր քեզ խանդի ու պղծման.
Որքան և ջերմ, սիրուն լինի
Օտար երկիրն ու իր ծով,
Նա մեր ցավին դեղ չի՛ անի,
Ոչ կըցավի մեր ցավով:
Վա՛յր է վըշտի ու հեծության
Անշուք տաճարն քո երկրում.
Ո՛հ, նրա չափ լաց և կական
Դե՛ռ չեն լսած Հըռոմում
Ո՛չ սուրբ Պետրոսն ճոխ, հոյաշե՛լ
Ո՛չ գոհավայր Քոլիպեն...
Ա՛յստեղ է միշտ ապգըղ սերած

Բերել անհաղթ վիճտ, թախի՞ծ,
Որպես սուրբ բեռ— և թեթևացած՝
Անխռով ելել տաճարից:
Մըտի՞ր: Վըրադ պարզած ձեռքեր,
Իր սուրբ կամքով տեր-փորկիչ
Շուտ կամոքե սըրտիդ վերքեր
Եվ թո ցավոտ, հիվանդ խիղձ...
Ականջ դըրի... Ըզգացվեցի՞,
Մանկան նըման... Եվ երկա՞ր,
Ես լիարցունք աղոթեցի,
Մըտած անշուք սուրբ տաճար:
Լայիս էի և աղերսում
Ես արարչին երկնքում,
Որ պարզևե մեղքիս ներում,
Պաշտպան կանգնե ինձ կյանքում,
Որ պահպանե ինձ իր խաչով
Աստվածն համա՛յն խեղձերի՝
Երկիր լեցնող լաց՞, հառաչով.
Աստվածն իմ սուրբ աշխարհի,
Ուր սերունդներ այս սուրբ վայրում
Պետք է խոնարհ, ջերմագի՞ն
Երկրպագեն ապագայում
Այս աղքատի՛կ սեղանին...

Բ. Ս. ՆԿԻՏԻՆ

ԽԵՂՃՈՒԹՅՈՒՆ

Է՛հ դու, խեղձությո՛ւն, միշտ սովոր լացին,
Տան մեջ համբերող ամեն դառնության.
Դու ընտելացած կըտոր սև հացին,
Քաշվող ու վախուկ օտարի դըռան:

Ամենքի աչքին նայում ես երկչուտ,
Անտե՛ր ես, անձա՛ր, ամոթից սպանվա՛ծ,
Անկյուն ես կանգնում հարուստների մոտ,
Որպես աչքի փուշ, մերծվա՛ծ ու լքվա՛ծ...

Դու լո՛ղ ես տալիս—ո՛ր ջուրն է տանում,
Ո՛ր ճամփա կըտան—այնտեղ ման գալիս.
Արև ես խընդդում—անձրև ըստանում,
Բերանդ են փակում շիտակ խոսելիս:

Գարունդ անկանա՛ջ, գարունդ անձաղի՛կ,
Սիրում ես՝ կարոտ խընդալից սերին.
Խընդում ես՝ խընդումդ անժամ ու լըոհկ,
Վերջն էլ քաղց ու ցավ՝ ծերության օրին:

Ո՛չ կյանքըդ է—կյանք, ոչ էլ օրըդ—օր,
Հալ ու մաշ եղած, սըրտում հապա՛ր դարդ.
Մահն է վրա հասնում, թաղվում ես դու խոր,
Վայրի ծաղիկն է գերեզմանիդ պարդ...

ԱՍՏՂԵՐ ԵՂՂՈՒՆ...

Աստղեր շողուն, աստղեր պայծա՛ն,
Երկինք կապուտա՛կ.

Շողշողում է և՛ խիտ անտառ
Լուսնի շողի տակ:

Ջուրն է նայում, ջինջ հայելում
Անտառը նիրհած.

Անտառի լուռ թավուտներում
Խաղարն է փրոված:

Հրեծվորներն են թընթերի մեջ
Խումբ-խումբ նըստոտեք,

Ծիծաղում են, խառում անվերջ,
Խաբույկ բոբբոքել:

Արոտներում մարդախասակ

Շըղթան ոտքերին,

Թափառում է մըթնում մենակ:

Գյուղի ձերմակ ձին:

Եվ խոր երգ է փչ ըսկսում

Աշխույժ երգասան.

Խըմթի միջից դուրս է փայում:

Գյուղի ջահեղ տղան:

Գընդակն առնում, օղն է նետում

Բընում—աչքը փա՛կ.

Նա պարում է, նա թըռչկոտում,

Ասպում, ցեթթ սոխակ:

Ծայն է տալիս երգին սիրուն

Լորին մարգերում.

Երգն է գընում, մարում հեռուն,

Արձակ գաշտերում...

Լըճեր փայլո՛ւն, հարթ-հավասա՛ր,
Անծա՛յր, ճոխ վայրեր.

Ջըթածոցեր ջինջ ու պայծա՛ն,
Ոակի՛ ճոխ արտեր:

Վերն—աստղե՛ր, ներքն—դաշտե՛ր,
Եղեգնի՛ պուրակ...

Եվ բըխում են սըրտից երգեր
Ապա՛տ, համարձա՛ւն ..

ՄՈՒՐԱՑԿԱՆ.

Իրիկվան պահուն թե վաղ առավոտ
Որբեր ու այրիք՝ պարկերը մեջքին,
Գալիս, կանգնում են լուսամուտիս մոտ
Եվ ողորմություն հայցում լալագին:

Անճարությունն է արդյոք խեղճերին,
Թե՛ հոժար կամքը դարձրել մուրացիկ.
Ո՛հ, ձեր վիճակը դա՛նն է, ծանրագին,
Ո՛վ անօթևան, կիսամերկ մարդիկ:

Կըճարվեն կյանքում ձեզ միշտ մեղքացող,
Չըմեռվա ցըրտին չեք մեռնիլ անտուն.
Բայց լա՛վ է տեսնել կեղտում մուրացող
Աստճո ստեղծած բանական մարդուն:

Սակայն առավել և՛ խեղճ, և՛ թշվառ
Կա ա՛յլ մուրացկան: Նա հաց չի մուրում
Դըննե-դուռ ընկած, բայց հացի համար
Մաշում է կյանքը ծանր հոգսերում:

Ազտոտ հյուզի մեջ, չոր հարգն անկողին՝
Քընում է հերոսն անել տանջանքում
Անո՛ւր է ջարհից խոնջության ժամին.
Անո՛ւր է պղնձից՝ հոգսի կապանքում:

Մինչ մահ նա վարում, մինչ մահ սերմանում,
Ավա՛ղ արդյունքն է սպառում սև կարիք.
Մըթին երկինքն է նրա սուգն անում.
Նրա ցավերն է երգում փոթորիկ...

ԴԱՆԴԱՂ ՍԱՀՈՒՄ ԵՆ...

Դանդաղ սահում են օրեր, տարիներ,—
Պահի՛ր հույս, հավատ սըրտիդ խորքերում...
Աճի՛ր, նո՛ր սերունդ, անվա՛խ, աներեր,
Լա՛յն է քո ուղին գալիք օրերում:
Ահա՛ մեզ շողաց փայլակ լուսավոր,
Նայե՛ք, մենք ճամփի ծայրին ենք կանգնած...
Մեռյալներն արդեն նիրհում են անդորր,
Գործն է մընացել կենդանի՝ մարդկանց:

Ցանվում է սերմը կյանքում դարեդար,—
Խորո՛ւնկ է հողում նա արմատ ձըգել.
Կացնով կարող ես կըտրատել անտառ,—
Բայց չարն արմատով դըժվար է պոկել.
Եվ մեր պապերը այդ չարին սովոր,
Մանուկ օրից են մեզ ա՛յն պատվաստած...
Մեռյալներն արդեն նիրհում են անդորր,
Գործն է մընացել կենդանի՝ մարդկանց:

Ամո՛թ, ով անխել տըխրում է, ցավում,
Տերն խըշշալիս—համրի է նըման:
Փա՛ռք, ով ճըջմարտին սիրով ծառայում,
Նրա՛ն է կյանքում գոհում ամեն բան:
Մենք ո՛ւշ աչք բացինք, ո՛ւշ տեսանք լույս-օր,
Դե՛հ, փութա՛նք գործի՝ միաշունչ խըմբված...
Մեռյալներն արդեն նիրհում են անդորր,
Գործն է մընացել կենդանի՝ մարդկանց:

Շո՛ւտ արեք, հողն է պատրաստ ու բերրի,
Սերմանե՛ք, քանի փայլում է գարուն.

Շահավետ խոսքի, բարի գործերի
Սերմը չի՛ կորչում անհետ, ապարդյուն:
Մենք հաշիվ կըտանք թոռներին մի օր—
Ո՛ւր և ինչպես ենք այդ սերմը ճարած...
Մեռյալներն արդեն նիրհում են անդորր,
Գործն է մընացել կենդանի՝ մարդկանց:

ՊՈՆՏԻՆ

Ո՛չ, մի՛ կոչիր դու կյանքն անշահ ու անպետ.
Փոթորկահույզ, խավար օրերն անցնելիս,
Անդու մըղած խըռով, դաժան կըռվից ետ.—
Նա և՛ բողբոջ, և՛ պտուղ է մեզ տալիս:

Եվ անվե՛րջ չեն քո այդ ցավերն ու վըշտեր...
Քո՛ մեջն է հենց ուժի աղբյուրն անսպառ.
Նայի՛ր քո շուրջ—չէ՛ որ այսքան բարիքներ
Աստված ստեղծել, ճոխացրել է քե՛զ համար:

Թավ անտառը գեղազանգո՛ւր ու դալար,
Ճոխ սաղարթում արշալո՛ւյսն է փայլիլում,
Վերից ամպերն հեպի՛կ ձեմով հրավա՛ռ
Ցոլանում են գետի շողուն հայելում:

Բըլրի լանջը ծաղկյա գորգով կարդարո՛ւն.
Վե՛ր ել գազաթն, աչքըդ դարձո՛ւր չորս բուր—
Ի՛նչ սքանչելի արձակություն. քիչ հեռուն
Նըջմարվում է մեզում գյուղը մենավոր:

Ապատ երգ է թըռչնիկն օդում պիլ հընչում,
Իմացի՛ր—նա ի՛նչ է երգում եթերին,
Ի՛նչ է լեցուն հասկը հասկին շըջնջում,
Ի՛նչ է պատմում աղբյուրն կանաչ ափերին:

Ահա՛ կյանքի, ապատության վե՛հ հանդես,
Հավերժափայլ այստեղ տո՛ն ու խրախճա՛ն.
Դու բընության ուսի՛ր լեզուն— և կասես—
«Այո, աշխարհն գեղեցի՛կ է, անվախճա՛ն»:

ՄԱՐՄԱՐ

Մենակ քնկած էր ամայի վայրում
Անշարժ մարմարը չոր մացառներում.
-Անձրև-օր նրան երկինքն էր թըրթում,
Ավրան միայն թըրթուններ հանգչում:
Բայց ահա մի օր արվեստագետին
Ցույց տվին այդ շյուտն: Նա անշունչ քարին,
Նայե՛ց—ու իսկույն ոգևորության
Շողա՛ց աչերում հուրը սրբապան.
Առավ նա մարմարն, տարավ գործատուն,
Աշխատեց վրան գիշերներ անքուն.
Կյա՛նք տվավ քարին արտոճագործ ձեռքով...
Այդ օրից ամբոխն ապշած հայացքով
Դիտում է մարմարն, անխոս հիանում,
Եվ նրա առջև ծո՛ւնկ է խոնարհում:

ԱՆ, ՀԱՆԳԻՍՏ ՏՎԵ՛Ք...

Ա՛խ, հանգիստ տրվե՛ք... Հանգի՛ստ եմ փնտրում
Խոտվառույզ մըտքիս, ցավատանջ կրթոճքիս.
Ո՛ղջ օր ետում է իմ շուրջ անդադրում
Ա՛յն ամենն, ինչից խոցված է հոգիս:

Ո՛ւր փախչել մեծ-մեծ, փղջուն խոսքերից,
Խոսքով ա՛մենքն են մաքուր, աննախա՛նձ.
Մենք ճըջմարտություն պաշտողներ անբիժ՝
Պատրաատ ենք անվե՛րջ պաշտելու մեր անձ:

Խղզմտանք սպանվա՛ծ, ամոթանք մեռա՛ծ,
Խավարում սուտն է տիրազուխ ապատ.
Ոչ ոք չէ՛ ողբում անկեղծ, սրտաբաց,
Ոչ ոք չէ՛ պատժում չարիքն ու արատ:

Մենք մարտիրոսներ չունենք մեր միջում...
Զենք պատասխանում փղբության կոչին.

Արևից պահվում, արևից փախչում,
Լուսից վախում է մեր ըստրուկ հոգին:

Գուցե, օդումն է ո՛ղջ ցավն ու վտանգ.
Ի՛նչ պետք է թոշնի— ծըլում է, ծաղկում,
Ի՛նչ պետք է ծաղկի—կորցնում է երանգ
Եվ թըշվառ մահով հեզ կյանքը կընքում...

<ԱՌԱՋ

Հառա՛ջ, դեպի գո՛րծ—մի գործ սըրբական
Դիմենք, ընկերնե՛ր: Երկյուղ ու կասկած
Թո՛ղ կորչեն անհետ: Ահա՛ փըրկության
Տեսնում եմ արդեն ոսկի՛ լուսաբաց:

Ձեռք ձեռքի տված՝ ապատ, համարձակ
Գրո՛հ տանք միասին, հառա՛ջ ընթանանք:
Թո՛ղ մեկ փողփողի գիտության դրոշակ,
Ամրանան մեր ուխտ, մեր սուրբ դավանանք:

Արդար քարոզով անվերջ նախատենք
Սըտության մեղսոտ, խարդախ քուրմերին:
Եվ թըմրածներին դեպի կյանք կոչենք,
Դեպի սուրբ կըռիվ դիմենք խըմբովին:

Չը կանգնենք երբեք կուռքերին բազին
Ո՛չ երկրիս վըրա և ո՛չ երկնքում:
Այս սին աշխարհի պատվին ու փառքին
Գլուխ չխոնարհենք մեր ծաղիկ կյանքում:

Քարոզենք միշտ սեր, սիրո գաղափար,
Ե՛վ աղքատներին, և՛ հարուստներին,
Տանենք հալածանք այդ սիրո համար,
Ներելով մեկ կո՛ւր հալածողներին...

Երանի՛ նրան, ով ջերմ փափագով
Ապրել է կըռվում, մաշիչ հոգսերում,
Ով երբեք ընկճված, ստըրկական հոգով
Իր վառ հույսերը չէ՛ թաղել հողում:

Թո՛ղ մեկ ուղեցույց փարոսի նըման,
Շողա՛-շողողա սուրբ ճըշմարտություն:
Օ՛, հավատացե՛ք, ձայնը փըրկության
Չի՛ կորչում երբեք կյանքում ապարդյուն:

Լըսե՛ք, եղբայրնե՛ր, ձեր եղբոր ձայնին,
Եվ քանի մեր մեջ եռում են ուժեր,
Մատա՛ղ, վա՛ռ ուժեր—գրոհ տանք խըմբովին,
Հառա՛ջ, միշտ հառա՛ջ դիմենք անվեհեր:

ԹՈՉՆԻԿ

Ասա՛, ինչո՛ւ, այ՛ իմ թռչնիկ,
Իմ ժի՛ր խոսնակ-փետրավոր,
Այդպես վա՛ղ ես թըռել, եկել,
Մեր այս աշխարհն հեռավոր:

Տե՛ս, արևն է դեմքը ծածկել,
Նորե՛լ երկինքն ամպերում:
Դեղնած ու չոր եղեգներն է
Հողմը գետին խոնարհում:

Եվ անձրև է գալիս անվերջ,
Ասես հեղեղ ջըփշըփա՛ն:
Օրերն են ցո՛ւրտ ու տաղտկալի՛—
Իսկի գարնան չի՛ նըման:

— «Ինձ չէ՛ բերել այստեղ երկինք,
Եվ ո՛չ արև շողջողուն:
Չոր ու դեղնած եղեգներում
Ես չեմ հյուսել ո՛չ մի բուն:

Բուն կրդնեմ խեղճ-թըզվառի
Կըտրան տակին: Ինձ աստված
Սփոփանք է խեղճի համար
Վեռու երկրից ուղարկած:

Երբ նա դաշտից տուն կըդառնա,
Իր հին, անշուք օթևան,
Տըխտը կընկնի հարդի վըրա,
Երգ կը երգեմ ես նըրան:

Ես նրան եմ բերել պարզև
Այդ երգն հեռու վայրերից,
Բախտավորներ դեռ չեն լըսած
Երբեք այդ երգն ինձանից:

Ես իմ երգում կը նըկարեմ
Նրա աչքին ա՛յլ աշխարհի.
Ուր չըկա՛ ցավ, չըկա՛ն հոգսեր,
Ո՛չ սեծատուն, ո՛չ թըշվառ:

Եվ այդ երգը հոգնած կըրծքին
Կը պարզեմ՝ հաշտություն.
Եվ կը նիրհե չարքաշ մըշակն,
Վույսը դըրա՛ծ աստըծուն»:

ՈՉ, ԼԱՎ Է ԿՈՐՉԻԼ...

Ո՛չ, լավ է կորչիլ, չըքանալ անհետ,
Քան սփրել խավար, հաշտվել չարի հետ.
Քան եղբոր անկման չարախփնդ վըրա՛
Նայել անհաղո՛րդ, նայել անըպգա՛:

Ո՛չ, լավ է, որ մարդ իր հետ անբաժան
Վաղածամ տանե մըթին գերեզման—
Ե՛վ սըրտի բորբոք, և՛ հոգու հուլպեր,
Եվ լո՛յս-անուրջներ, ոսկի երապներ.

Քան փոխե պվարձ քընի հետ անհագ
Ե՛վ ապնիվ կըռիվ, և՛ ապնիվ վաստակ.
Ե՛վ ողջ էությանը թաղվի աննշմար
Ժահահոտ տըղմում, ցեխի մեջ իսպա՛ռ...

ՊՈՇՏԻՆ

Թո՛ղ անխոնջ ուղին քնի գըրավի՛չ.
Դու քո վեհ կոչման, վեհ նպատակին,
Կա՛ց հավատարիմ, կա՛ց անշեղ, երգի՛չ,
Թե՛ քո երգերում, թե՛ գործի ժամին:

Եվ առա՛ջ գընա—սուրբ ճշմարտության
Չորավոր կոչին հըլու, հըպատակ.
Անցի՛ր խոցոտիչ տատասկի ճամփան,
Առանց հուսալու դըրախտ ու պըսակ:

Եղի՛ր մարտնչող անվեհեր հոգով,
Պաշտպան մարդկային իրավունքների.
Մի՛ թող, որ դարուս սև արատներով,
Վարակվի՛ հոգիդ և անարգ քընի՛:

Որպես շանթ երկնից, որպես հուր ու սուր,
Թո՛ղ հըպոր քնի քո ուժն երգերում.
Թե մարե քո ձայնն ապնի՛վ ու մաքո՛ւր,
Երգըդ չի՛ մարիլ մարդկանց սըրտերում...

ՎԱՅՐԵՆԻՔ

Անշո՛ւք բնություն հայրենի երկրի,
Դու սիրելի՛ ես հեզ սըրտիս համար.
Բայց կա՛ր ժամանակ—ես դեռ պատանի—
Ինձ գըրավում էր օտա՛ր մի աշխարհ:

Եվ վառ անուրջներ աչքիս շարունակ
Նըկարում էին փայլո՛ւն պատկերներ—

Երկնային կամար վրձիտ, կապուտակ,
Հըսկա լեռների սուր-սուր գագաթներ:

Եվ միջօրեի շողով ոսկեվառ՝
Թըվում էր, թե ինձ սոսիք, ձիթենիք
Կոչում են դեպի ստվերներ գովարար,
Եվ ինձ ողջունում վարդերը լըռիկ...

Եվ անխոհ մըտքիս, դեռ այդ օրերին
Ծանոթ չէր կյանքի նըպատակ, կոչում...
Ես դեռ անձնատուր մեղկ պատրանքներին,
Լոկ վայելք էի կյանքից պահանջում:

Բայց արագ, անհետ անցան այդ օրեր.
Ինձ վիշտն այցելեց անսպասելի՛.
Եվ շա՛տ բան, ինչին խորթ էի ես դեռ,
Հանկարծ իմ սը յին եղավ սիրելի:

Եվ թողի այլևս երազել օտար
Հեռավոր աշխարհն հըմայի՛չ, սիրո՛ւն.
Ես տեսա՝ նանիր աչքին աննշմար
Ե՛վ հայրենիքումս շա՛տ գեղեցկություն:

Ակոսա՛ծ դաջտեր, ոսկեհա՛սկ արտեր,
Վըսե՛մ ծավալումն տափաստանների,
Թաքուն ջըրջյունով թավո՛ւտ անտառներ,
Եվ հո՛րդ հեղեղներ գարնան գետերի:

Անշուք գյուղերի անդո՛րր սրբազան,
Ուր չարքաջ կյանքի ծանըր բեռի տակ՝
Սուրբ ապատության մի նորոգ օրվան
Աղոթքն է անում ջինական մըշակ...

Տեսա՛, հասկացա՛—և սըրտիս այնքան
Մըտերիմ թըվաց երգն հայրենիքի.
Սիրեցի՛ անչար և՛ խինդ, և՛ խրախճան,
Ե՛վ խորին վիշտը հարապատ երգի:

Հայրենի՛ք, թո՛ղ դու չունենաս թովչանք
Օտարի աչքում: Բայց ո՛վ քեզ նըման,
Եվ ի՛նքն է ճընշված՝ երազել լո՛յս կյանք—
Դու նրա համար թա՛նկ ես, աննըմա՛ն...

Օ՛, ԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ...

«В надежд славы и добра,
Гляжу вперед я без боязни».

Пушкин

Օ՛, կա՛ր ժամանակ—հայրենի աշխարհ
Մարտի էր կոչում իր զավակներին
Ոսոխների դեմ անբա՛վ, անհամա՛ր.
Եվ ոտքի ելած կորքեր խրոխտագին,
Փողեր հընչելով զվարթ ընթանում,
Մա՛հ էին տալիս և վճի՛հ ըստանում:

Բայց լըռեց զենքի ձայն-շառաչն ուժգին
Եվ պաշտպանելով երկիրն հարապատ՝
Ազգը շո՛ւնչ քաջեց, ո՛ւժ առավ հոգին.
Եվ ա՛յդ մարտից էլ նա ելավ ապատ,
Ելավ հա՛ղթ ու քա՛ջ, ինչպես անցյալում
Հաղթող էր եղած նա շա՛տ կռիվներում:

Եվ ահա դարձյա՛լ իր զավակներին
Համառ կըռվի է կոչում հայրենիք,
Բայց սա նըման չէ էլ ա՛յն կռիվներին.
Դիմադրե՛լ կեղծին, հալածե՛լ չարիք,
Հաղթե՛լ խավարը—ահա՛ մեր այժմյան
Նո՛ր մարտը՝ հանուն սո՛ւրբ ճշմարտության:

Բայց չէ՛ ահավոր և՛ նոր թըրջնամին,
Նրա՛ն էլ կընկճե հայրենի աշխարհ.
Նայեցե՛ք, արդեն ցանկալի՛ ափին
Շողո՛ւմ է չորս կողմ, նոսրանո՛ւմ խավար.
Եվ ահ ու դողով ոգին չարության
Չգում է անկո՛ւմն իր իշխանության...

Ո՞՞, ԸՆԿԵՐՆԵ՛Ր...

Ո՛չ, ընկերնե՛ր, դուք մի՛ ասեք, որ իպուր,
Որ անպտուղ կըրովի համար ձեզ երկինք
Պարզեյ է ա՛յդքան փայլուն ու մաքուր
Սուրբ ձգտումներ—սիրե՛լ վաստակ ու քրտինք:

Ո՛չ, մի՛ ասեք—կյանքի ծանրը խաչի տակ
Մեր իղձերը, մեր հույսերը կը հանգչեն.
Եվ ամեն ինչ—գո՛րծ, հըրապո՛ւյր, նըպատա՛կ,
Անհետ, անձայն անապատում կը կորչեն:

Ի՛նչու է ձեզ այդպես հուսում, վըրդովում
Դա՛նն կասկած... Հառա՛ջ, հառաջ համարձակ
Դուք, սիրեյի՛ք, նրանից չե՛ք, ում կըրծքում
Շո՛ւտ է մարում հըրապույթի սուրբ կըրակ:

Թո՛ղ մեր սըրտերն միշտ տառապեն, միշտ տուկան,
Կյանքի կըրովում չըզգան ո՛չ ահ, ո՛չ կասկած.
Միայն կըրովով ծանրը բովից փորձության
Նրանք կեղևեն հըստա՛կ, շողո՛ւն, ամրացա՛ծ:

Օ՛, պահեցե՛ք, փայփայեցե՛ք ձեր սրտի
Անքիծ, փայլուն անուրջները սըրբապան,
Եվ նրանց մեջ ջերմ, կիսաշունչ հավատի,
Պայծառ հուրը թո՛ղ չմարն հավիտյան:

ՀԻՉԻ՛Ր, ՀՈՂԱԾԻՆ...

Հի՛շի՛ր, հողածի՛ն, որ պարտք կա վըրադ՝
Օգնելու նրան, ով մերկ ու աղքատ,
Հոգսի բեռան տակ շըրջում է ցավոտ,
Աչքին արտասուք, օգնության կարոտ...
Հի՛շի՛ր, որ աստված կ՛ նրան, քեզ պես,
Ստեղծել է ազատ, շնորհել միապես
Սուրբ իրավունքներ—ապրել երջանիկ,
Ճաշակել կյանքի վայելք ու բայթիք:

Հի՛շի՛ր և այն քաջ, ապնիվ, անձնվեր
Նահատակներին, որոնք անվեհեր
Հառա՛ջ են կոչել անուս ամբոխին,
Դափնու տեղ՝ փըշյա պըսակներ գըլխին:
Թո՛ղ խեղձ եղբայրներդ գըտնեն ապաստան
Խաղաղ հարկի տակ հյուրասեր քո տան.
Եվ ապա՛տ վըշտից, հեռո՛ւ փոթորկից,
Քաղեն սիրո խոսք—եղբոր շըրթունքից...

ԱՄՊԵՐ

Դաշտում պառկած՝ նայում էի դեպի վեր,
Ինչպես ամպերն լողում էին երկնքում.
Մեզմ հովիկն էր շոյում սոսի տերևներ,
Եվ ոստերը թեթև դեպի ինձ թեքում:

Սահում էին շարունակ ամպերն իմ վերև,
Սահում, հալչում ու չըքանում հեռուներ.
Եվ լի խանդով մերթ սքողում վառ արև,
Որ մայր երկրին նա չըբաշխե իր շողեր:

Կարծես, ամպերն ասում էին արևին.
«Շողուն շողեր մի՛ պարզևիր դու երկրին.
Քո ջերմ շընչով, քո լույս սիրով դադարի՛ր
Փայփայելու, փաղաքշելու մայր-երկիր:

Այնտեղ, ուր լուռ տարածում է իր թներ
Իրիկնամուտն, ու մարում են քո շողեր,—
Այնտեղ անվերջ գործվում է սև չարություն,
Այնտեղ անվերջ թափվում արցունք ու արյուն:

Միթե երկիրն արծանի՛ է գըզվանքիդ,
Կամ այն մեղստուն քեզ սիրո՞ւմ է ճըշմարիտ.
Օ՛, մեզ միայն, դու մեզ սիրի՛ր ու լույս տո՛ւր,
Միայն մե՛նք ենք և՛ անարատ և՛ մաքուր»:

Եվ ամպերը թըռչում էին, սըլանում
Անեպր հեռուն—երկնի վըրա կապուտակ.
Եվ իրարու հետքից հալչում, չըքանում...
Ասես, նրանց չէ՛ր էլ խըղճում արեգակ:

Նա չէր ուզում ամպերի սառն ու անքիծ
Մաքրությունը սիրած երկրի հետ փոխել,
Եվ ըսկսեց ջերմ ջողերով բարձունքից
Գարձեա՛լ մեղսոտ մայր երկիրը համբուրել...

ԼՈՐԻ ԲԱՅՐՈՆ

ՀՐԵԱԿԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐ

Ա՛խ, ԼԱՑԵ՛Ք...

Ա՛խ, լացե՛ք, ինչպես խորթ Բաբելոնի
Գետերի ափին մե՛նք էինք լալիս.
Քանդվա՛ծ տաճարներ մեր սուրբ Սիոնի...
Այնտեղ կուռքին են այժմ փառք տալիս.
Լացե՛ք... գերի է հայրենի աշխարհ,
Եվ ջարդված արդեն Հուդայի թընար:

Ա՛խ, ի՛նչ տեղ լվանանք այժմ մեր ոտքեր,
Հոգնել ենք, տանջվել... Արդյոք մեր սըրտին
Կըբերե՛ն հանգիստ Սիոնի երգեր,
Արդյոք կըլինի՞ վախճան մեր վշտին,
Կըհնչե՛ մի օր և՛ քնարն Հուդայի
Առաջվա նըման, որ սիրտ հըմայի:

Խե՛ղճ ազգ, որ հավետ դատապարտված ես
Թափառել պանդուխտ, անհող, անբնակ.
Ո՛ւր պետք է արդյոք դու հանգիստ գտնես.
Որչ ունի աղվեսն, բուն ունի տատրակ,
Միայն, Իսրայել՛, դու անտուն, անտեր,
Քեզ վիճակվել են տխուր շիրիմներ...

ՍՐԲԱՆՎԵՐ ԱՅՍ ԱՓԵՐՈՒՄ

Սրբանվեր այս ափերում, ուր հոսում է Հորդանան,
Այժմ, ավա՛ղ, արաբների թափառում է կարավան.
Եվ քո Սինա լեռան վերա փառք է երդվում Բաալին,
Աստված, ինչո՞ւ կայծակներով դու չես շանթում չարի

Այստեղ, թո այս սրբավայրում, արդարադատ, հպո՛ր տեր,
Մոռացել են թե՛ հողածին, չար, անբարիքտ Կավակներ,
Ե՛վ չես իջնում էլ դու այնտեղ, նոցա ցրվում շանթերով,
Ուր դու առաջ հայտնվում էիր թո լուսավառ պատկերով:

Աչքդ՝ փայլակ, ձայնդ՝ որոտ, ո՛վ դու անհաղթ տեր մարդկան,
Արդյոք բախտը ջո՛ւն կըժպտա Իսրայելի ավեր տան...
Ե՛վ դեռ երկա՛ր նորան պետք է բռնավորներ հայհույն
Ու անարգեն և՛ օրենքդ, և՛ տաճարդ, սրբաշեն:

ԴՈՒ ԼԱԼԻՍ ԷՐՐ...

Գու լախե էիր և արտասունքից
Մեղմ սքողվում էր կապույտն աչերիդ,
Կարծես այն ցողն էր իջնում երկնքից
Ե՛վ ծածկում երկիր, որպես մարգարիտ:
Դու ժպտում էիր,—ցուրը գոհարի
Հայացքիդ առաջ թվում էր խավար...
Կենդանի հուրը թո փառ աչերի
Հաղթում էր այդ ցուլքն—անկոր էր գոհար:

Որպես արեն է երկնքի վերա
Մեղմ շողեր սփռում, ամպեր թափանցում,
Ե՛վ կամա՛ց-կամա՛ց մուրը գիշերվա
Մարող բարձունքից քըջում, հալածում,
Օ՛ր, այդպես և՛ դու պայծառ ժպտալով
Բուռն հրճվանք ես հեզ սրտին բերում,
Ե՛վ հուր-աչերիդ բերկրալից փայլով
Վշտի խավարը միշտ լուսավորում:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՎԵՐՈՒՄԸ ՏԻՏՈՍԻ ՉԵՌԲՈՎ

Ա՛յն բլուրից վերջին ժամին տեսա քաղաքն հայրենի,
Ուր ճամփորդներ հրբաժեշա են տալիս մեր մայր Սիրենի,
Այնտեղ այրում, պղծում էին անբարիքաներ կատաղի:
Ի՞նչ հայրենի տարք քաղաքը՝ մասնաժամ անեղ հրդեհին:

Մեր տաճարն ու իմ տնակն էր այնտեղ աչքիս երևում,
Սակայն, ավա՛ղ, այնտեղ հրդեհն աղմկում էր որպես ծով
Ես նայեցի թույլ ձեռքերիս և— օ՛հ, տխու՛ր զգացում—
Հոգիս վառվեց համըր, անուժ վրեժխնդրության ծարավ:

Այդ բլուրից ես առաջ էլ նայում էի նույն ժամին
Դեպի քաղաք, ուր արևը մայր էր մտնում ժըպտալով,
Որ վարդաշող քողի նման մեզն իջնում էր սարերին,
Ուր Սիրուն փայլվում էր վերջալույսի շողերով:

Այստեղ էի և՛ այս վերջին, տխուր ժամին ես կանգնած.
Բայց էլ սիրտս չէր գրավում մուտք խոնարհվող արեգակ.
Ես անհամբեր մննում էի, որ Եհովան կայրացած՝
Թափեր երկիր անեղ որոտ, շանթ, փոթորիկ ու կայծակ...

Բայց ո՛չ... Բո սուրբ տաճարի մեջ, ուր դու էիր թագավոր
Հեթանոսներն անկարող են այնտեղ դառնալ տեր, իշխալ
Փո՛ւյթ չէ, թե թո տաճարն ընկավ, մի ա՛յլ տաճար փառ
Սիրած ապգրդ յուր սրտի մեջ թե՛ կանգնել է հավիտ:

Օ՛, ԵՐԵ ԱՅՆՏԵՂ...

Օ՛, եթե այնտեղ, ամպերից վերև,
Պահում է հոգին յուր սերն հարատև,
Եթե մահից հետ, իրավ, պիտի մենք
Սիրած սրտերին նորից հանդիպենք.
Մ՛խ, հապա որչա՛փ քաղցր է վերանալ
Ան անհայտ աշխարհ, հանգչի՛լ, մահանա՛լ,
Թողնել երկրային վիշտ, թախիժ անվերջ
Ե՛վ սուսվել հավերժ պայծառ յուտ մեջ:
Մեզ հաճար չէ այն, երբ մահվան ժամին
Դողում ենք կանգնած անդունդի ծայրին.
Ե՛վ անուր կայուն կյանքի շղթայից,
Դենք թողում վերջին օղակը ձեռից:

Ես երջանիկ եմ այն վառ ցնորքով,
Որ ապրելու եմ մի հավերժ կյանքով
Եվ մի ա՛յլ հոգի՝ անվե՛րջ սիրելի,
Իմ անմահության հաղորդ կրկնի...

ԹԵ ՈՒՆԵՆԱՅԻ...

Թե ունենայի ես այնքան արատ,
Որքան կըրում եմ քեզինից նախատինք,
Չէի թափառիլ այստեղ անապատ,
Մատնված գերության, թողած հայրենիք,
Հերիք էր միայն, որ ուրանայի
Պապերիս կըրոն, պապերիս հավատ,
Եվ չէր հալածվիլ ապզը Հուդայի,
Նորա վերայից կըսրբվեր արատ:

Թե քեզ ճնշում է չարություն խեղդուկ,
Դու հաճելի ես երկնքին, մարդկանց.
Թե մեղանչել ես դու, իբրև ստրուկ,
Դու ն՛ ապատ ես, ն՛ մաքուր—քո անձ:
Երբ վիճակված է բարձրյալի կամքով,
Որ հայրենիքի չըտեսնենք երես.
Ուզում եմ մեռնել ես ի՛մ հավատով,
Իսկ քոնը— պաշտի՛ր, որքան դու կուզես:

Աշխարհիս փառքը բերել եմ ես Կոհ
Իմ սուրբ հավատին—այդ գիտե աստված,
Որ քեզ ներում է ապրել ինքնագոհ,
Կյանքի խրախճանքին անձնատուր եղած.
Նորա ձեռքին է իմ սիրտն ու հոգին,
Ե՛վ իմ ջերմ հույսեր, ն՛ իմ սփոփանք,
Եվ լի բերկրությամբ նորա սուրբ կամքին
Ես Կոհ եմ բերում հայրենիք ու կյանք:

ՍԱՎՈՒՂԻ ՎԵՐՁԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԱՌԱՋ

Երբ մարտի դաշտում ես առաջ անցած,
Կրնկնեմ նետահար կամ սրբից խոցված,
Թո՛ղ իմ դիակը, հերո՛ս Կինվորներ,
Չեզ չըթուլացնե՛: Լարեք ձեր ուժեր
Եվ ապավինած դուք նետ ու սրբին
Մահով մեծարեք մեր ոսոխներին:
Եվ դու, քաջ Կինվոր, որ իմ հետևից
Վահանս ես տանում—երբ պատերազմից
Տեսնես փախուստը իմ հերոսների,
Սպանի՛ր ինձ իսկույն... Թո՛ղ ճակատագրի
Կատարվի կամքը, որին բռնավին
Չէ՛ կարող հաղթել ոսոխ թշնամին.
Մնա՛ք բարև... բայց քեզ, ժառանգ սիրասո՛ւն,
Քեզ բարև մնաս, որդյա՛կ, չեմ ասում.
Կամ քեզ հաղթությո՛ւն, թա՛գ արքայական,
Կամ ապագայում՝ մա՛հ հերոսական:

ՔԱԲԵԼՈՆՅԱՆ ԳԵՏԱՓՆԵՐԻՆ

Բարեկոնյան գետափներին նստած տխուր, վշտագին,
Լալիս էինք ն անցյալն էր պատկերանում մեր աչքին.
Հիշում էինք այն սև օրեր, երբ թշնամին մեր վայրագ
Քարքանդ արեց մեր Սալեմը, դարձրեց տխուր ավերակ,
Եվ Սիոնի մատղաշ կույսեր դառն արտասուքն աչքերում,
Իրանց տեսան վտարանդի, հեռու, օտար վայրերում:

Եվ երբ լքյալ, երբ անձնատուր շա՛տ անուրախ մտքերին
Մենք ակնապիշ նայում էինք արագ վազող ջրերին,
Մեզ սպառնացին մեր թշնամիք. «երգե՛ք, երգե՛ք, նվագե՛ք»:
Չուր սպառնալիք...Նոցա երգել մեր սուրբ երգերն—օ՛, երբե՛ք
Թո՛ղ չորանան մեր ձեռքերը, թո՛ղ մեր լեզուն դառնա քար,
Թե խնդության մի երգ հնչենք, շարժենք տավղի գեթ մի լար:

Սիո՛ն, ահա՛ քո տավիղներն մենք կախել ենք ավերում
Թարմ ոստերից:— Ապատ երզը պահել ապատ լարերում—

Մենք ուխտեցինք ա՛յն ժամանակ, մեր ա՛յն թշվառ վիճակում,
Երբ, մա՛յր-Սիոն, նոստանք վերջին փառապատկ թո անկում:
Ո՛չ, չենք երգի թո երգերը և չենք խառնիլ մենք հավետ
Նոցա ձայնը մեր թշնամու նյութած անախտ երգի հետ...

ՀԵՐՈ՛Ս, ԴՈՒ ԱՆՅԱՐ...

Հերո՛ս, դու անցար թո կյանքի ուղին,
Այժմ թո փառքը կա՛պրի աշխարհում.
Կա՛պրի թո վսեմ անձնուրաց հովին
Սուրբ հայրենիքդ հպոր երգերում.
Կա՛պրի թո գործը—գո՛րծ հերոսական,
Որ ապատություն պարզենց նորան:

Քանի թո ապրը շնչում է ապատ,
Կենդանի կրմնաս դու նորա կրծքում.
Դու ընկա՛ր... բայց թո արյունն անարատ
Կրճուտ դարձալ մեր երակներում
Եվ թո գործերի փառահեղ դափնին
Միջտ ուժ ու եռանդ կրտա թո ապրին:

Կովի փոթորկում անունդ հիշելով,
Սարսափ կրճգենք թշնամու սրտում.
Հերոսիդ մահը կերգեն մեծ փառքով
Մեր մատաղ կույսերն իրանց երգերում.
Եվ դու չես լսիլ երբեք լացի ձայն—
Լացը կանարգեր թո սուրբ գերեզման...

ՀԵՐՈՍՅԻ ԱՂՋԻԿԸ

Օ՛, հայր իմ, եթե և՛ ապր, և՛ աստված,
Հաղթությանդ համար իմ մահն են ուզում.
Երբ այդ մահն է ջեպ հաղթանակ տված,
Ենեա՛ իմ սիրուդ—ջեպ եմ նվիրում:

Խոցիր դու նրան—ես չեմ արտասվիլ,
Մնա՛ք բարև, սարե՛ր, էլ ինձ չե՛ք տեսնիլ.
Ընկնե՛լ սիրելի հոր ձեռքով սպանված,
Ինձ չե՛ սարսեցնում այդ անեղ հարված:

Չավակին զգվող մոր սիրո նըման,
Մաքուր է արյունն և՛ թո աղջկան.
Օ՛, հայր իմ, թող ինձ օրհասի ժամին
Հովանի լինի թո ջուռնչն ու հոգին:

Հո՛գ չէ, թո՛ղ հոսե թո արցունքն առատ,
Երբ դատավոր դու ջաջ, տեսնաս.
Քեզ վե՛ն հաղթանակ տվալ թո աղջկե
Ու վրե՛կեց և՛ ջեպ, և՛ յուր հաղթանիք:

Երբ ես կը մեռնեմ, և սև գերեզման
Կըփարե՛ խառուն լեզուս հավիտյան,
Դու հիշի՛ր, հայր իմ, որ ջուռնչե փչեցիս,
Ես ժողովում էի, և ո՛չ թե բայլա...)

1 Գեղիադի որդի Հեմիտալը, որին հայրը դուրս էր արած տնից, գնում է մ
վայրենի երկիր և նշանավոր ավազակապետ է դառնում: Նրա հայրենակիցներ
տանջվելով օտարի լծի տակ, նրան ետ են կոչում և իրենց ջաղաքի կառավարի
են կարգում: Ամմոնիտների դեմ պատերազմի դուրս գալուց առաջ, նա ուխտու
է, որ եթե հաղթող հանդիսանա, աստուծոն կոն կբերե այն մարդուն, որ առաջին
կհանդիպի իրեն պատերազմից ջաղաք վերադառնալիս: Նա փառավոր հաղթո
թյուն է տանում: Այդ լսելով նրա միակ աղջիկը՝ շոջուպատված իր նաժիշտներո
և ուրախությունից պարբյուճ ջաղաքից դուրս է գալիս— ազգի ապատչին ողջո
նելու: Խեղճ հայրը տեսնելով աղջկանը՝ իուսահաս սեղում է հանդերձանքը պ
տառոտել, բայց սկսիվ աղջիկը չի թողում, որ նա դրժն իր ուխտը: Նա միայ
թույլտվություն է խնդրում հորից ամժամանակ հեռանալ սաքերը, որպեսզի այնտե
Սոփոկլեսի Անտիգոնեի նման, ողբա յուր բախտը, որը դատապարտելով նրա
մահվան, մատաղ հասակում կրթում է խեղճ աղջկան և՛ ամուսին, և՛ մայր լինե
հույսից, այնուհետև նա հնարանդվում է իր ճակատագրին:

ԿԱՊՈՒՅՏ ԱՉԵՐՆ...

Կապույտ աչերն, ասես մի փույգ մանիշակ.
Փոքրիկ ձեռքերն՝ շուշանի պես, թարմ, սպիտակ:
Թշիկները ջիկնած ու միշտ վարդագեղ—
Ահա՛ ձեզ մի փունջ ջքեղ:

Նա ծաղկում է, նա փայլում է—և ուրախ
Միշտ արձակում անուշ քրքիշ ու ծիծաղ,
Բայց փայլ չկա մատաղ կուսի և՛ կրծքում—
Այնտեղ սերը չի՛ ծաղկում:

ՇՈՐՈՐՈՒՄ ԵՆ ԱՆՎԵՐՋ ԴԱՐԵՐ

Շողջողում են անվերջ դարեր
Պայծառ աստղեր երկնքում—
Երկրին հառած փայլուն աչեր,
Մե՛րթ խնդալից, մե՛րթ տրտում:

Եվ նոքա միշտ ջերմ, վառվռուն
Չրույց են անում իրար հետ.
Բայց չի մեկնել դեռ այդ լեպուն
Ոչ մի հըմուտ աստղագետ:

Բայց իմ սիրտը շուտ հասկացավ
Վառ աստղերի այդ բարբառ.
Ինձ քերական հանդիսացավ
Քո հայացքը բոցավառ:

ԵՐԵԿ ԲԱՆՏԸ ԻՆՉ ՀՈՅՈՒՄ ԷՐ

Երեկ բախտը ինձ շոյում էր, փայփայում,
Բայց ա՛խ, ո՛ւր է նա այսօր...
Չո՛ւր ջանացի գոնե մեկին ես կյանքում
Կապել ինձ հետ գեթ մի օր:

Փորձի համար քանի՛ կանայք շատ անգամ
Եկան գիրկըս նետվեցան.
Բայց նայելով սրտիս խորքը—ո՛չ մի ժամ
Չսպասեցի՛ն, հեռացա՛ն...

Հեռանում էր մեկը զվարթ, խնդազին,
Մի ուրիշը—լուռ խապառ.
Եվ դո՛ւ միայն ինձ թողնելով, ո՛վ անգին,
Դու դառնազին լա՛ց եղար...

ԱՆ, ԹԵ ՆԿԱՐՉԻ ՉԻՐՔ ՈՒՆԵՆԱՅԻ

Ա՛խ, թե նկարչի ձիրք ունենայի,
Հո՛գս, չէի տանջվիլ ես քո ճանկերում.
Նախշուն պատկերներ կընկարեի,
Նոցա կառնեին ճոխ պալատներում:

Թե դաշնամուրի քա՛ղցր ձայներով
Կանանց ազդելու շնորհ ունենայի,
Գիտեմ, ինձ համար կանայք հալվելով,
Ո՛չ միայն ոսկի—կյա՛նք չէին խնայի...

Բայց, է՛հ, չըսիրեց ինձ կույր մամոնան,
Եվ կարոտ թողեց ապահով կյանքին.
Քաղցած արվեստը բանաստեղծության
Կյանքի մեջ ընկավ խղճուկիս բաժին...

Եվ երբ տեսնում եմ, ինչպես փրփրած
Շամպայնով մարդիկ սիրտ են փովացնում.
Ես էլ ծարավի, բայց ճարըս կըտրած,
Ստամոքսս մի գլուխ ցուրտ ջուր եմ լցնում...

ՊԱՏԿԵՐԻԴ ԱՌՁԵԼ...

Պատկերիդ առջև գլուխ խոնարհած,
Կանգնած եմ ես լուռ, մտահույզ, տրտում.
Եվ ինձ թվում է, թե ահա հանկարծ
Քո անշարժ դեմքը նոր կյանք է առնում:

Եվ ես տեսնում եմ կախարդիչ ժրպիտ
Քնքուշ շրթունքիդ խաղճում, թրթռում,
Տեսնում եմ արցունք, ինչպես մարգարիտ,
Փայլում է քո վառ, խորունկ աչերում:

Եվ ես կանգնած եմ, դառնագին լալիս,
Նորից տանջվում ես նորից սիրում,
Եվ չեմ հավատում, չքնաղ թագուհիս,
Որ հավես կորցրի քեզ այն աշխարհում...

<Ո՛՞Ք ՉԵ՛...>

<Ո՛՞Ք չէ, դուքադ թող փոթորիկ մոնչե,
Թո՛ղ ձյունախառն քամին սուլե, հառաչե,
Եվ հառաչքով մերթ կամացուկ, մերթ ուժգին
Գա և կարկե պատուհանիս փեղկերին.
Չե՛մ վախենում ես ցրտաշունչ փոթորկից.
Սրտիս խորքում, հեռու դաժան, չար աչքից,
Ես պահում եմ զարուն դալար, ծաղկալի,
Այդ զարունը—քո պատկերն է, նայելի՛:

ԾԵՐՈՒԿ, ԱԼԵՎՈՐ...

Ծերուկ, պևոր
Կար մի թագավոր...

(Երգըս վաղուց եմ լսել, սիրելի՛ ք).

Ուժասպառ արքան
Կին առավ իրան,

Ծաղկի պես բացված մի ջահել աղբիկ:

Ժիր, կապուտաչիկ
Կար մի ճանկավիկ
Նորա մեջ մատաղ արյունն է եռում.
Նա՛ էր փափկատուն,
Ջահիլ թագուհուն
Սիրով, եռանդով միշտ սպասավորում:

Վերջ տա՛մ արդյոք հին,
Վազուցվա երգին.
Օ՛, նա ենչում է այնպե՛ս վշտալից...
Նորա բոցավառ
Սիրեցին իրար,
Եվ սպանված ընկա՛ն արքայի ձեռից:

ԱՆԿՈՒՄՆ

Մի՛թե արդարև անկավ բնություն,
Վարակվեց և՛ նա մեր արատներով...
Սիւս մարդկանց պես, կենսամի բույսեր
Կեղծում են— և այն ակնահայտ կերպով:

Ո՛՛չ, էլ չեմ ուզում բռնավ հավատալ
Համեստ շուշանի սուրբ անմեղության.
Վերջին ժամանակ թիթեղը գաղտուկ
Անչափ հաճախ էր այցելում նորան:

Կասկածելի՛ է և՛ մանուշակը
Յուր չքնաղ տեսքով, յուր անուշ հոտով.
Օ՛, անշուշտ և՛ այդ փոքրիկ ծաղիկը
Մեկ պես տանջվում է փառքի ծարավով:

Չկա աղև անկեղծ զգացմունք
Վառված տխրակի գողտրիկ երգերում
Միայն կեղծ լացի ես ձայն եմ լսում
Նորա պես ճարտար դալայիկներում:

Ճշմարտությունը կորել է անհետ,
Զբացել նշույն հավատարմության...
Ահա շնիկս էլ պոչն է խաղացնում,
Բայց էլ նշան չէ դա մտերմության:

ԸԱ՛Տ ՈՒ ԸԱ՛Տ ՄԱՐԴԻԿ...

Շա՛տ ու շա՛տ մարդիկ ինձ գիշեր-ցերեկ
Ե՛վ խրատներ տվին և՛ շատ խորհուրդներ.
Ինձ ասում էին. «դեպքին սպասե՛ք»,
Եվ սպասեցի շա՛տ ու շա՛տ օրեր:

Բայց այդ խրատներին ականջ դրնելով,
Քաղցածությունը հոգիս կրհաներ,
Թե բախտը մի օր ինձ չըխճալով,
Զուղարկեր երգչիս սրտացավ ընկեր:

Եվ նո՛ր ընկերս փրկարար ձեռքով
Կերակրեց ինձ կուշտ, ցրվեց իմ վշտերն.
Կուլեի փարել ես նորա վըպով,
Բայց... ա՛խ, դժվար է... Ե՛ս եմ այդ ընկերն:

ԵՐԳԵՐ

Մեր իղձն ու փափագ ծաղկում են, փթթում,
Որպես ծաղիկներ քաղցրաշունչ գարնան.
Ծաղկում են, բայց և նորից թարշամում,
Եվ այդ կրկնվում է մինչ կյանքի վախճան:

Մեր վառ կըրքերի այդ անվերջ խաղից
Թունավորված է իմ սերը վաղուց.
Օ՛, ի՛նչ խելոք ես, սի՛րտ իմ վշտալից,
Որ կամիս դադրել դու բաբախելուց...

Անհոգ կացի՛ր, ես չեմ պատմում
Երբեք մեր սերն աշխարհին.

Թեպետ հաճախ ես իմ երգում
Քեզ գովում եմ, իմ անգի՛ն:

Ո՛չ, ես հեռու մարդկանց աչքից
Վարդի ծոցում պահեցի
Գաղտնի սերը մեր ախտալից,
Եվ իմ երգով կնքեցի:

Եթե անգամ երբեմնապես
Դավաճանե մեզ այն վարդ,
Եվ մեր սերը վառ կայծի պես,
Նա դուրս ցոլա,—ի՛նչ մեծ դարդ,

Ես գիտեմ, որ մենք մարդկանցում
Զենք պարթեցնիլ կասկածանք.
Մարդիկ բիրտ են, մարդկանց աչքում
Սիրո կայծն է—պառանցանք:

Որպես չար ծերուկ, արևալից աչքով
Մըռայլ երկինքը նայում է երկրին,
Եվ սև անկերը խիտ-խիտ շերտերով
Դիպել է յուր մութ, կնճռոտ ճակատին:

Լալիս են ծաղկունք, լալիս ու թոշնում
Երկնքի այդ չար, դաժան հայացքից.
Լալիս, թոշնում են և մարդու սրտում
Երգ ու պագսմունք, խանդ, ալլուռ ու իղձ:

1887, 13 հոկտեմբերի



Գիշեր ցերեկ միայն դու ես
Ուշք ու միտքս գրբաված,
Հեզ աչերով մատաղ ժպտով
Սիրտս ու հոգիս կախարդած:

Ախ, ինչպես ես կրցանկայի
Մենակ նստած թո կողքին
Ողջ գիշերներ թեպ իմ երգով
Պատմեյ սերըս, իմ անգին:

Եվ կուզեի թո ջնջուջեյ
Չեղքը սեղմեյ շղթթունքիս,
Եվ ջերմաջերմ իմ արցունքով
Թրջեյ նորան, նապեյինս:

1889, 24 հունվարի



Գետափին բուսած շաջանը հեպիկ,
Քաղցր հայացքով նայում է երկինք.
Իսկ վառ թուփեր՝ սիրահար, տրտում
Նորան յուր պայծառ համբույրն է դրկում...

Բայց ահա նորից ջուշան—նապեյին
Անորով աչքը գգում է ջրին.
Անկասկե և՛ արևունկ թուփեր նորան
Տխուր ծախում է, որպես արվապան...

1889, 8 սեպտեմբերի



Երկար շողում է այս մռայլ կյանքում
Ինձ նապեյիիս պատկերն աննման.
Բայց նա չքացավ—և խոլ խավարում
Ես մնացի դարձյալ խեղճ թափառական:

Որպես մանուկը մութը տեղ ընկած
Բարձր երգում է, գոռում է ուժգին,
Որ գունե երգով՝ իրեն պաշարած
Ցրվե երկուտը, հանգիստ տա սրբին,

562

Ո՛հ, այդպես և էս—մանուկ խղճալի,
Անվերջ երգում եմ խավարի միջում.
Գուցե և երգես չէ պարճալի,
Բայց նա իմ սրտի թափածն է ցովում:

1888 թ., 22 նոյեմբերի



Դու մանուկ չքնաղ, եղեմ ծաղկապից,
Որքան ջնքուջ ես, որքան սիրասուն.
Նայում եմ վերադ— և եռգիս նորից
Չգում է նոր կրանք, նոր երջանկություն:

Ա՛խ, ինչպես սիրով այդ փոքրիկ գիսիդ
Չեղքերը դարսած՝ ես ջերմ, արտեսանդ
Աղոթք կանեի, որ տերը թեպ միշտ
Պահպաներ այդպես մաքուր, անաղա՛տ:

1888, 8 հոկտեմբերի



Ահա՛ նա— անկոչ կաթին արցունքիս,
Դարձյալ հեղտնվեցավ նա աչքիս միջում...
Ո՛հ, միայն նա է ճնշում խեղճ հոգիս,
Եվ պարզ հայացքս նորից պղտորում:

Նա անտես մընաց յուր ընկերներին—
Նորա չքացան անդա՛րձ, հավիտյա՛ն...
Չքացան որպես վշտեր դառնազին—
Նոցա չորացրեց քամին գիշերփուն:

Եվ այն աստղերը այնքան վա՛ռ, չքնաղ,
Որ այնպե՛ն սիրով, այնպե՛ն քաղցրավետ
Ինձ բաշխում էին և՛ վիշտ, և՛ ծիծաղ,
Ավա՛ղ, նորա էլ չքացան անհետ:

563

Եվ սերըն անգամ, սերս կենսատու
Վաղուց հանգել է իմ սառած սրտում.
Օ, շտապի՛ր, կաթի՛լ, շո՛ւտ արա և դո՛ւ
Ընկերներիդ պես չքացիր օդում...

1889. 19 օգոստոսի



Որպես երբեմն գիշերվա ժամին
Լուսնի ջինջ շողքը դողում է ջրում,
Իսկ լուսինն ինքը երկնի երեսին
Հանգի՛ստ ու վե՛՛մ առաջ է սահում,

Այդպես իմ առջև ն՛ դու, նազելի,
Հանգիստ, սիգաճեմ քայլ էիր փոխում,
Եվ քո պատկերը չքնաղ, պաշտելի
Անդրադառնում էր սրտիս խորքերում...

1889. 9 հունվարի



(Նմանողություն)

Այս աշխարհին՝ ո՛վ նազելիս՝ դու մի՛ հավատար,
Նորա բոլոր խորհուրդները խարդախ են ու չար.
Նա ծաղրում է քո կուսական պատկերը սիրուն,
Պարսավում է մատաղ սըրտիդ թելերն զգայուն:

Այս աշխարհը, իմ աննմա՛ն, կույր է ու անմիտ,
Նա չէ կարող գնահատել քո լացն ու ժպիտ.
Նա ի՛նչ գիտե, քո մի քնքուշ, ջերմ համբույրի մեջ
Որքա՛ն սիրո հուր է եռում—հուր պայծառ, անշեջ:

1889, 30 մայիսի



Մանո՛ւկ, մի լինիր այդպես անհամբեր,
Եվ ների՛ր, որ դու իմ նոր երգերում
Անվերջ լսում ես հին վշտի՛ ձայներ,
Եվ միայն անցյալ տանջանքս ես կարդում:

Սպասի՛ր, հոգյա՛կ. կըլո՛ն շուտով
Նախկին վըշտերիս տխուր արձագանք,
Եվ սիրտըս նորից քեզ ջերմ եռանդով
Կերգե՛ նոր գարուն, նոր սեր ու նոր կյանք:

1889 թ. 12 հունվարի

ԱՄՍՈՐԱԿԱՆ

«Վա՛ն ծաղիկներ, անո՛ւշ բուրմունք դաջտերում,
Հյուր է եկել մայիսն ուրախ, գեղեցիկ.

Մի՛թե ոչ մի ուրախություն չեն բերում,

Աքսորակա՛ն, քեզ ո՛չ արև, ո՛չ ծաղիկ»:

— «Այն ծաղիկներն, որ հայրենի աշխարհում

Ես բուսցրել եմ և փայփայել սիրավառ,

Այժմ մենա՛կ, ես նոցա եմ միտ բերում...

Առանց նոցա Մայիս չըկա ինձ համար»:

«Աքսորակա՛ն, նայի՛ր, անշարժ շիրիմներ—

Նոքա անգամ սթափվել են, կյանք առել.

Այդ արևն է, նորա պայծառ, ջերմ շողեր

Տխուր, նիրհած շիրմավայրում կյանք վառել»:

— «Ես հիշում եմ ա՛յլ շիրիմներ անբարբառ

Եվ իմ ձեռքով իսկապես փակած ա՛յլ աչեր

Սիրելի չեն աքսորյալիս այս օտար

Ո՛չ երկինքը, ո՛չ արևը կենսաբեր»:

«Աքսորակա՛ն, տե՛ս, ինչպես են թռչնիկներ

Բներ հյուսում թավ անտառի խորքերում.

Օ՛, որքան կյանք, երջանկություն, մաքուր սեր

Նոցա գողտրիկ, անուշաձայն երգերում»:

— «Ես հիշում եմ հայրենական իմ բռնիկ,

Իմ պաշտելի նվիրական այն աշխարհ,

Ուր թաղել եմ հարապատներ, սիրելիք...

Օտար երկրում Մայիս չըկա ինձ համար»:

ԱՄՆՈՒԿ

(Ապառ թարգմանություն)

Այստեղից անցան անգութ տաճիկներ...

Սհա՛ ամեն ինչ քարուքա՛նդ, ավե՛ր.

Քիտը—գինու այդ երկիրն առատ,

Ուր կյանքն էր առաջ պվարթ ու ապատ.

Քիտը, որի այգիքն ու դաշտեր

Ոռոգում էին կապուտակ ջրեր,

Եվ ծովի ափին կույսեր փափկասուն

Պար բռնած՝ նայում ծովի հայելուն.—

Այդ երկիրն այժմ տխուր ավերակ,

Միայն նստած է այնտեղ մեն-մենակ

Մի հույն երեխա չոր քարափներում,

Որք, անտիրական, խղճուկ ու տրտում.

Եվ դաժան քամուց, անձրևից նորան

Տալիս է այնտեղ անշուք ապաստան

Մի չոր մասրենի—նորա պես մենակ,

Մոռացվա՛ծ ահեղ ջարդի ժամանակ:

Ո՛հ, դժբախտ մանուկ, որ ոտաբորիկ

Այդ լերկ ժայռերում նստած ես լռոիկ,—

Ասա՛, ի՛նչ տամ քեզ, որ քո աչերից՝

Շողջողուն, որպես կապուտակն երկկից,

Ցամաքե պրցունք և վարդ-շրթունքիդ

Խաղա մանկական երջանիկ ժղպիտ,

Որ դու մոռացած աղետ, փոթորիկ,

Չեղք առնես նորից սիրած խաղալիք:

Ասա՛ ինձ, ասա՛, ի՛նչ տամ քեզ, մանուկ,

Որ ցրվին սրտիդ այդ թախիժն ու սուգ.

Որ ճոխ մալերիդ պեծուկի հյուսեր

Դարձյալ վարդաբեն քո ձերմակ ուսեր,

Եվ ոչ թե անշուք կախ ընկած այդպես

Մուկ սովերով պատեն քո ձերմակ երես,

Նըման ուռենու լալկան ուսերին,

Ակոր ու տխուր խոնարհված գետին:

Ինչո՞վ փարատեմ քո լացն ու մորմոք...
Խոսի՛ր, սիրելի՛ս: Պարզև տամ արդյոք
Քեզ սիրուն ծաղիկ—շուշանն Իրանի,
Թե՛ անուշ պտուղն այն Թյուրքա ծառի,
Որ միշտ եղեմի դրախտում աճելով
Եվ հեռո՛ւ, հեռու սուվերներ սփռելով,
Նժույզն հրեղեն նորա սուվերի տակ
Հարյուր տարի է սրլանում արագ...

Գուցե դու ժպտա՛ս, թե պարզև տամ քեզ
Փոքրիկ բլբուլին, որի երգն այնպե՛ս
Հնչում է քնքուշ, շոյում լսելիք...
Օ՛, ասա՛—ծաղի՛կ, պտո՛ւղ, թե թռչնի՛կ
Ուլուն է սիրտդ, մանուկ նպելի՛...
«Քարեկա՛մ»—ասաց նա դառն, թախծալի,
Արևելք հառած աչերն կապուտակ,—
«Ինձ պե՛տք է վառող, ինձ պե՛տք է գնդակ...»

ՈՂՈՐՄԱԾ ԵՂԵՔ

Երբ ձեր հոյակապ, շքեղ տներում
Անթիվ գարդարանք ձեզ շրջապատած—
Գոհար, ադամանդ, դիպակ, ապրեջում,
Դուք ծիծաղում եք՝ կյանքից լիացած.
Եվ այդքան գանձերն առա՛տ ու անբա՛վ
Չեն էլ շլացնում ձեր աչքը բնավ.

Երբ դուք բախտավոր, «կենաց բաժակներ»
Ուրախ պարում եք փարթամ խնջույքում,
Ասացե՛ք դուք ինձ, ո՞վ մեծատուններ,
Այդ պվարթ ժամին դուրսը, փողոցում
Դուք նկատո՞ւմ եք անձար աղքատին.
Լայով նայելիս ձեր լուսամուտին:

Խղճուկը քաշված փողոցի անկյուն,
Քաղցած նայում է նա ձեր խնջույքին

Եվ խուլ մրմնջում. «Ահա՛ լիություն,
Առա՛տ բարիքներ, ահա՛ խնդագին
Եվ պայծառ օրեր, և՛ վիճակ խաղաղ,
Ահա՛ ամեն ինչ—կյանք, վայելք, ծիծաղ...

«Իսկ ե՛ս... ես թշվառ, ես մերկ, անոթի,
Իմ օթևանը խարխուլ ու մըթին,
Վա՛յ ինձ... ես մի այլ դառն վիճակի
Դատապարտված եմ երկրիս երեսին.
Կինս թոքախտում. տանս հոգս ու ցավ,
Խեղճ գավակներս քաղցած ու ծարավ...»

«Եվ շատ քչերին տված է կյանքում
Վայելել օրեր լի՛ երջանկությամբ.
Անարդար բախտը կյանքի խնջույքում
«Ապրիր»—ասում է հարուստ մեծատան,
Իսկ ինձ—«դու հեռո՛ւ, դու բախտին օտա՛ր,
Անվերջ երապիր բախտալից աշխարհ...»:

Օ՛, նա, միայն նա՛ կարող է ըզգալ
Թե ի՞նչ ասել են այս դաժան խոսքեր,
Ով ինքն է եղել թշվառ, տառապալ...
Բայց դուք, դուք բախտի հարո՛ւստ ընտրյալնե՛ր,
Չե՛կ ի՞նչ փույթ... Չեր կյանքն առատ է, լեցուն.
Ողորմա՛ծ եղեք, աստօծ սիրուն:

Ողորմությունն մա՛յր է որբերին,
Մայր նոցա, որոնք իրանց սև բախտին
Խորթ մայր են կոչում: Եվ այնտեղ, ուր միշտ
Տիրում է տանջանք, ցավ, կարիք ու վիշտ,
Այնտեղ է նա միշտ թոչում, սլանում
Եվ մարդկանց աչքից արտասուք սրբում:

Աղերսում եմ ձեզ հանուն որբերի,
Հալածված բախտի անողոք վճռով,
Թո՛ղ մարդս բարի՛, ողորմա՛ծ լինի,
Թո՛ղ նա գթառատ, սիրաբուխ սրտով

Յուր ճոխ գանձերից և հեզ թշվառին
Ջերմ կարեկցությամբ միջոտ հանե՛ք բաժին:

Ողորմա՛ծ եղեք: Անա՛ գործ փնեմ...
Երբ անտեր մի որբ կամ ծեր մուրացկան
Չեր դրռան առաջ ահով, տխրադեմ,
Լուռ սպասում է ձեր ողորմության,
Եվ դուք մնում եք անհեզ, անտաբբեր—
Դուք տիրոջ սիրուն եք խոցում, հաբուստնե՛ր:

Ողորմա՛ծ եղեք, որ հպոր աստված
Չեզ և ձեր որդոց լինի պահապան,
Որ ձեր ամբասներ ցարենով լցված՝
Նրա օրհնությամբ անապառ մընան.
Ողորմե՛ք... և ձեզ ամենայն գիշեր
Կայցեցեն պաշտառ, սիրուն երազներ...

Ողորմա՛ծ եղեք, որ մահվան ժամին,
Որբին, անձարին ձեր տված տուրքից
Հանդերձյալ աշխարհ գուք տաներ բաժին:
Որ նա, ում այստեղ կյանքն էր ողբալից,
Նա՛ կարողանա ձեր գրռան մոտով
Անցնել աննախանձ ու խաղաղ հոգով:

Ողորմա՛ծ եղեք, որ ապրեք զվարթ,
Որ տիրոջ սիրուն լինեք արժանի.
Ողորմե՛ք անվերջ, ողորմե՛ք առատ...
Ջերմ առթոքները տառապալիների
Քոչում են այնտե՛ղ, ա՛յն սուրբ օրեան,
Որ ազրառությամբ եպար ենք միայն...

ՇԵՐԻ ԼՈՆԳՅԵԼԼՈ

ԿՅԱՆՔԻ ՍԱՆՄՈՍԸ

Օ՛, մի՛ ասիր, հուզող կըտրած,
«Կյանքն է երազ». թո՛ղ լռո՛են
Այդ տրտուռներ, միայն թըմրած,
Երկչոտ հոգիք կյանք չունեն:

Ո՛չ, մեր կյանքը երազ չէ լու՛կ,
Թեպետ ունի նա վախճան.
Մեր բաժինը—խիղճ չէ անհոգ,
Ո՛չ էլ միջոտ կամ գերեզման:

Եվ ո՛չ հոգվո համար աստված—
Երկինք, երկիր արարող,
Խոր անցյալում մարդուն ասաց.
«<Ո՛ղ էիր և դառնա՛ս հեզ>»:

Հանի՛ր մտքից մահ ու դագաղ,
Ճակատագիր, անզուրթ բախտ.
Մի լինիր գառն—անխոս մատաղ,
Հերոս եղի՛ր քաջահաղթ:

Անշարժ, անգործ մի՛ երապիր
Գալիք օրեր ըղձալի.
Եվ ուժերդ զուր մի՛ թաղիր
Սառ աճյունում անցյալի:

Ուժիդ համար այդ աճյունում
Չկա՛ն երկնից սուրբ կայծեր.
Սիրով գործի՛ր դու ներկայում,
Եվ փայփայի՛ր կյանքի սեր:

Թո՛ղ քո գործից մի հետք մընա,
Գուցե, նորից ուժ առած,
Այդ թարմ հետքով առաջ գընա
Քո եղբայրը մուրրված...

Գուցե, եռուն ծովում կյանքի
Բազուկդ անհաղթ ուժ պահած,
Առաջն առնե շա՛տ փորձանքի,
Մահից փրկե շա՛տ մարդկանց:

Կյանքը գործ է և ո՛չ—երազ,
Գործ սեփական և հանուր.
Գործի՛ր ապատ, չվախենա՛ս,
Գործի՛ր ապնիվ ու մաքուր:

Ապնիվ գործն է—մեր սուրբ դրոշակ.
Պահիր կրծքումդ վառ, անշեջ,
Ոգի, եռանդ, կյանքի կըրակ...
Եվ միշտ հառա՛չ կյանքի մեջ:

ԱՄՐՈՅՆԵՐ ԵՒՆՈՂ

Իմ գանգրահեր մանկիկ սիրուն ու կայտառ,
Սիրում եմ քո հայացքն անմեղ ու պայծառ.
Ճիպոտներից դու կանգնում ես ահագին
Բուրգ ու ամրոց, որ նայում են երկնքին:

Քաջ ձիավոր՝ խրոխտ հեծնող հոր ծընկան,
Որ սիրում ես և՛ դայակի հեքիաթներ,
Թե ի՛նչ գործեր, ի՛նչ արկածներ հաղթական
Հեքիաթներում կատարել են հերոսներ:

Կըզա ժամը, դու ա՛յլ շենքեր կըշինես,
Ա՛յլ նժույգներ դու կհեծնես քաջ ու վարժ.
Կյանքից առած դու ա՛յլ պրույցներ կըլսես
Ե՛վ բազմապան, և՛ ավելի սրտաշարժ:

Օ՛, կառուցի՛ր, շո՛ւտ ամրոցներ կառուցիր,
Մտքով նոցա երկինք հասցուր, թե կուլես.
Եվ երկնային վեհ ձայներին ունկնդիր.
Դու մանկական վառ հավատդ չկորցնես:

ՓՈՔՐԻՎ ՈՏԻՎՆԵՐ...

Փոքրիկ ոտիկներ, ժըրաքայլ, թեթև,
Նեղ է այդ ուղին՝ փոքրած ձեր առջև.
Հաճախ կայթքեք, հաճախ վայր կընկնեք,
Չեպ տոթը կայրե, ցեխով կըծածկվեք.
Այդ ուղին անցա ես մեծ տանջանքով,
Եվ ձեզ նայում եմ տխուր հայացքով,
Տանջող թախիծ է իմ կրծքին տիրում,
Երբ ձեզ սպասող փուշն եմ միտ բերում:

Փոքրիկ թաթիկներ, ձեզ գործն է օտար,
Բայց կըզա ժամը, չէք գտնիլ դադար.
Հըպոր կլինեք, իշխան աշխարհիս,
Թե թույլ—ձեր պարենն հապիվ հոգալիս,
Թշվառին կօգնեք ջերմ կարեկցանքով,
Թե հաց կըմուրաք լի աղերսանքով,
Մե՛կ է... Նայում եմ տանջված ձեռքերիս,
Եվ ձեր տանջանքն է իմ միտը գալիս...

Մանկակա՛ն սրտեր, վիշտ չունեք բընավ,
Բայց դուք կըտեսնեք դեռ շա՛տ վիշտ ու ցավ.
Անհույս երապել բախտ, լույս, իրավունք,
Դողալ պայրույթից, թափել արտասուք,
Վշտանալ անվերջ, բորբոքվիլ սիրով,
Ապրել անարգված, փշրված հույսերով...
Օ՛, փորձով գիտեմ ես սրտի վշտեր,
Եվ ձեզ խղճում եմ, մանկակա՛ն սրտեր:

ՌԻՐԱԿԱՆՆԵՐ

Այն լուռ ժամին, երբ օրն անցած՝
Վրա է հասնում մութ գիշեր.
Եվ պարթնում են սրտում նիրհած
Շա՛տ կգացմունք, շա՛տ մտքեր,

Երբ խավարում ճրագն է շողում,
Մտորմունքիս այդ վրկան,
Պատի վերա սովերներ դողում,
Հապա դառնում ուրվական,—

Այդ լուռ ժամին, հանգա՛րտ, հուշի՛կ
Ներս են մտնում իմ սեկյակ
Սրտիս ապի՛կ, անգի՛ն ոգիք,
Հանգիստ գտած հողի տակ...

Ահա այն քաջ, մատաղ ոգին,
Որ տենչալով կյանքի մարտ,
Ընկա՛վ վվարթ ծիծաղ դեմքին,
Ընկա՛վ անվախ ու հըպարտ:

Ահա և հեպ, սուրբ էակներ—
Աղն և երկրի և՛ կյանքի,
Որ մինչև վերջ տարան համբեր
Ծանր խաչը տանջանքի:

Ահա՛ նոքա—և՛ այն սիրո՛ւն,
Քնքո՛ւջ սրտերն, որ այնպես
Սիրում էին կյանքիս զարուն,
Եվ ինձ ծպտում ծաղկանց պես,

Լուռ, համրաքայլ ներս են գալիս
Նոքա միմանց հետևից.
Եվ ամենքն էլ նստում կոզքիս
Ու ձեռք պարպում դեպի ինձ

Ահա՛ և՛ նա—մոտս նստում,
Ինձ նայում է դալկադեմ.
Խոր հայացքով սեր են կարդում,
Չույգ աչերում—վառ եղեմ:

Եվ աղոթք է սրբամրմունջ
Լսում սիրտս նոր նորից,
Լսում օրհնանք և մեղմ տրտունջ
Նորա քնքուջ շըրթներից...

Կյանքի դժվար խաչի տակը
Վի՛շտ ու սև օր տեսնելիս,
Նոցա քաղցր հիշատակը
Նո՛ր աշխույժ է ինձ տալիս...

ՍԵՐ

Ո՛չ հույսերի, ո՛չ խնդության օրերում
Սիրո իշխող, անհաղթ ուժն է մեզ տիրում,
Կամ սիրտ հուլում նորա խորին հրապույր,
Կամ կգում ենք նորա շունչը կենսաբույր:

Սիրո շողը շողում է մեր սըրտերին
Դառն հոգսերում, կյանքի անույս գիշերին,
Երբ մեզ թողնում, չքանում են, որպես սովեր,
Մեր լույս-օրվա թուփեական ընկերներ...

Այո, սերը կայծ չէ, որ շուտ կմարի,
Եվ ո՛չ մի խաղ երկնապաղ ամպերի,
Նա խարույկ է, որ փառում է խոր մթին,
Նա փարոս է, որ փրկում է լողորդին:

Նա փրկարար բայասան է մեր կյանքում,
Որ չար վշտից խոցված սիրտն է ամոքում.
Սերն օջախ է, որ վառվում է աղքատիկ
Խրճիթի մեջ, երբ դուրսն է ձյուն ու մրրիկ:

ԱՆՁՐԵՎԻ ԿԱԹԻԼ

Փայտն կաթիլը գարնան անձրևի
Մի օր հարց տվավ յուր ընկերներին.
«Ինչո՞ւ մենք այս հին, աղքատ խըրճիթի
Լուսամուտն այսպես բախում ենք ուժգին»:

Կաթիլներն իսկույն տվին պատասխան.
—Այստեղ երկրագործ-մշակն է ապրում,
Ուրախ ավետիք տալիս ենք նորան,
Որ նորա արտը ծլում է, ծաղկում:

ԾԱՂԻԿՆԵՐ

Օր չէր լինում, որ դուրս գալով ես տնից,
Դըռանս մոտ չըտեսների գանգրահեր
Մի երեխա, որ մոտ գալով իսկույն ինձ,
Աղերսում էր. «Պարո՞ն, առե՛ք ծաղիկներ»:

Եվ սովորած՝ համարյա թե ամեն օր
Առնում էի մի-մի հատ փունջ նորանից
Ու տուն բերում—և իմ փոքրիկ, մենավոր
Սենյակումս կախում նոցա պատերից:

Բայց Խաղիկներն ամեն անգամ նո՞ր քաղած
Այնքա՞ն անուշ բուրում էին սենյակում,

Որ ես մի օր տղին հարցրի կարմացած՝
—Այս ծաղիկներն ի՞նչ տեղից ես դու քաղում:

«Հորեղբայրս պահապան է շիրմատան,—
Խեղդուկ ձայնով ինձ րըջ՝ շաց երեխան.
«Նո՞րա հետ եմ ես էլ ապրում, բարի՛ տեր,
Եվ այնտե՛ղից միշտ քաղում եմ ծաղիկներ»:

Ես տուն դարձա յուր մտախոհ ու տրտում,
Սիրտըս հուլաված երեխայի խոսքերից.
Է՛հ, բա՛խտ, դարձյալ քո հանաքն եմ տեսնում.
Այստե՛ղ էլ քեզ ճանաչեցի քո խաղից...

Չըկա՛ ծիծաղ, որ կյանքի մեջ գեթ մի օր
Դու մեզ առանց ծածուկ վշտի պարզես.
Չըկա՛ ապրուստ, չըկա՛ վիճակ լուսավոր,
Ուր դու գաղտուկ թույն ու լեղի չը խառնես...»

ՎԱՀԱՆ
ՄԻՐԱՔՅԱՆ

ԼԱՆՎԱՐԻ ՈՐՍԸ

Ծագում է մանուկ արևը գարնան
 Կովկաս լեռների ձյունի պատնեշից,
 Ջարթունում են մեկ-մեկ սարերն աննման
 Չմռան անվրդով քնի մշուշից:
 Ահա Լավարի¹ վիթխարի ուսին
 Բազմում է արփին թարմացած ուժով,
 Սարեր ու ձորեր իրար երեսին
 Նայում են, ժպտում ամպի մշուշով...
 Վերջին ձյուններն էլ արդեն հալ ընկան,
 Արտասպեց իսկույն լեռների հսկան.
 Ամեն մի ձորից աղբյուր է հոսում,
 Ամեն մի թփից բյուլբյուլ է խոսում.
 Ե՛վ դալար հովիտ, և՛ ժայռի կրծքեր
 Արձագանք տալով գարուն են հնչում.
 Չմռան փարախից հովվական երգեր
 Ձեփյուռի թևով սարերն են թռչում.
 Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի
 Բացվում է, ժպտում կոկոնից զվարթ,
 Փարթամ գեղության ոգին Գուգարքի
 Շնչում է գարնան բույրով անաղարտ.
 Ամպերն էլ իրար համբույրներ տալով,
 Չվում են կայտառ, Լավարը գրկում,
 Առաջին անգամ խիստ որոտալով,

¹ Լոովա ամենաբարձր սարը:

Գուգարք աշխարհին ողջույն են երգում.
 Եվ հայրենիքում փայլակ-կայծակի
 Գիշերվա դրոշմած գաղտնի համբույրներ
 Երգում են երկրին սերը երկնքի,
 Դողում են սիրուց սարեր ու ձորեր
 Եվ խորհրդավոր մի թովիչ ձայնով
 Խոսում են նրանք, իրար հետ փարվում,
 Երգում են, խնդում, հապար բերանով
 Լավարի վիթխար հասակը գոփում:

Ահա գարնան հետ և շարան-շարան
 Դաշտավայրերից դեպի զով սարեր
 Չգվեց սայլերի, ուղտերի քարվան—
 Փախչում են շոգից թե՛ թուրք, թե՛ հայեր:
 Թնդում են ձորում զանգի հնչյուններ,
 Չիերի խրխիսչ, պայտերի դոփյուն,
 Մեկ-մեկի կցած անվերջ քարվաններ
 Քաշում է նառը, ահեղ մոնչում.
 Որը տանում է ալախչի¹ քեչան,
 Կուժն ու խնոցին, ճիպտոն ու չաթան²,
 Որն էլ վարդարված գիր³ ու փնջերով՝
 Օրորվում, անցնում լեռան լանջերով.
 Բայց նառն ինքնագոհ քայլում է հանդարտ՝
 Բոժոժ ու զանգեր վկին ու կրծքին.
 Եվ օրորելով կապերտներ ու վարդ,
 Գեղեցիկ հարսն է նա տանում մեջքին.
 Մերթ բարկանալով կանգնում է հպարտ,
 Մերթ փրփուր թափում կատղած բերանով,
 Մերթ երկար շուրթը կախելով բարդ-բարդ,
 Նա պարծենում է գեղեցիկ բեռով:
 Բռնել է ճամփեն խիստ իրարանցում,

¹ Հովվական վրանի մեծ տեսակը:

² Բարակ ճիպտներից հյուսած վրանի շրջապատ:

³ Թղթերում կարած չար աչքից ապահովող աղոթքներ:

Գովուս են ձիեր, սանձերը կրծում—
 Այնիսկ մետաքսից ոսկեթել գործած—
 Աղաչարիներ¹ թամբերին զըցած,
 Հուժկու կրծքներից կապած թալիսման,
 Արևելյան ճոխ արծաթն ու ոսկին,
 Ճերմակ դաթիթան, քողն անախ նահան
 Գովուս են սիրուն հարսների դեմքին:

3

Լեռների տունն է, մարդ և անասուն
 Ուրախ երգերով դիմում են սարեր,
 Մոռնալով ձմռան քաշած վայնասուն,
 Ծաղկի փնջերով անցնում են ձորեր.
 Անցնում են արագ քոչ-քոչի միջով.
 Գարնան արևից փաղում են զենքեր,
 Եվ թարմ կենսաբույր թավիչ կանաչով
 Բացվում են, ժպտում սարվորի դեմքեր:
 Մայում են, բայում գառնուկն ու մաքին,
 Թնդում կովերի, հորթերի բառաչ.
 Իսկ տըրտընկալով գոմեջը ձագին
 Կանչում է դաժողաղ վապելով առաջ.
 Վազում են հոգնած շները հոտի
 Եվ լեզուն հանած թանչին են տալիս.
 Լսվում է հանկարծ ձայնը լակոտի,
 Որ քոչից ընկած կալանչ է գալիս:
 Փոքրիկ երեխան պինդ մեջքին կապած
 Խեղճ հովվի կինն էլ վազում է ոտքով,
 Օգնում է մարդուն գոն և սրտաբաց
 Բախտի որոշած ծանր փճակով:

4

Քարվանի ծայրը սարերը հասավ,
 Հասավ ու ձուլվեց թուխ անապիտ ելու:

¹ Մետաքսից գործված ձիու ծածկեր:

Վրան-վրանի ետևից, բաավ
 Ծաղիկների մեջ գույն-գույն սքրավետ,
 Դաշտերից խանձված, սառ ջրի կարող¹
 Գալիս են, իջնում անեն մի անառ
 Լոք, Լազար, Լեջան¹ աղբյուրների մոտ
 Շոգերից ապաստ ապրելու համար:
 Այաչուխ, դագա², անվերջ վրաններ,
 Շրջան կապելով սառն աղբրի ափին,
 Ինչպես ծեր արծվի կարկատած բներ,
 Հենվում են մեկ-մեկ քարեր քարափին
 Գուգարք սարերի սիլավետ թանջին
 Բազմել են հալի, թուրքի թիևներ,
 Բայց դարձյալ խառնված քոչ-քոչի միջին³
 Դեռ երերում են ուղտի քարվաններ.
 Խրինջում է ձին, կովը բառաչում,
 Բոլորն էլ իրանց յուրդն են ճանաչում.
 Մայում է անուշ ափիկը³ գառան.
 Սարեր ու ձորեր նորից կյանք առան:

5

Գիշերը հասավ մեին է ճանփան,
 Մարում է կանաչ ազմուկը քոչի
 Առվակի ափին քարվաններն իջան.
 Կանչում են. «Տղերք, սարսեր չկորցի»:
 Չիերի ջուկեր, ուղտերի քարվան,
 Մայերի ճրոռոց, ոչխար ու տամբար,
 Գունելով ձորում գիշերն իջան,
 Հանգիստ են առնում մյուս օրվա համար:
 Կրակի վրա, առվակի ափին
 Մի տեղ ընթրեք են շաապ պատրաստում,
 Մի տեղ էլ կորած գառանն ու հորթին.
 Սար ու ձոր ընկած հովիտն է կանչում:

¹ Լողակ սարեր:

² Հովվական վրանի վրայ տեսակց:

³ Մոլ ինչ անբաժան ապրող և ծնող գառ:

Մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած՝
Ուտում են նրանք կաթն ու խորոված.
Գիշերն էլ արդեն մնչում է, լռում,
Հոգնած քոչվորին հանգիստ քուն բերում.
Միայն մի կով է դարձյալ բառաչում
Եվ քունը կտրած հորթուկին կանչում.
Լսելով նրան գիշերն անդադար,
Հնում է տխուր ծերունի անտառ:
Ամպի փեշերն էլ կախած մի ծայրին՝
Լավարն էլ կարծես նույն վիշտն է պզում,
Ինչպես վիրավոր արծիվը ժայռին,
Թները փռած քոչվորին հսկում:

6

—Լսե՛լ եք, տղերք, ո՛ւմ պաշուխն է
Լավարին բազմած արծվի նման.
Լսե՛լ եք՝ էն ո՛ւմ օջախի ծուխն է
Խեղճ ու նաչարին միշտ լինում դարման.
Լսե՛լ եք՝ ինչպես բազեն ինքնակամ
Նրանից ապատ որս չի պլտըրտում.
Նրա մի ձենը, անունը անգամ
Մարդուն, հարամուն սարսափ են ապրում:
Եվ ուզում է միշտ ամեն մի սարվոր
Էն պաշուխին լինել դրացի,
Հիշելով նրա տիրոջն ալևոր,
Առանց օրհնելու չի նստում հացի:
—Շատ բան ենք լսել Ավագի մասին,
Բայց դեռ կարոտ ենք նրա երեսին,
Քնած թե արթուն, թեկուզ երապում
Ամենքն էլ նրա մասին են խոսում.
Պատմում են ահով դաշտին ու սարին,
Թե ինչպես է նա պատժում միշտ չարին,
Թե ինչպես էրեն փախչելիս հովտում
Հեռվից էլ նրա ձենն է ճանաչում.
Բայց, ապի՛, ապի՛, չենք տեսել նրան,
Երգիր Ավագից մի քանի բերան.

Մենք կտանք առատ քեզ եղ ու պանիր,
Դու իգիթներին լավ գովաբանիր:
Եվ նա լարելով նորից սիմերը,
Երգում է՝ որքան քաջ են հները.
— Ավագ որսկանի անունն է մենակ
Սարերին հայտնի ամեն մի մարդու,
Ավագ որսկանի գոչյունն է մենակ
Լավարի գոռու որոտից ապրու.
Մանուկ օրերից նա որք մնալով,
Ապրել է ինչպես սև ամպը սարին.
Օրոր է երգել քամին սուլելով,
Եվ նա ննջել է մամոռտած ժայռին.
Մթին ձորերի ահավոր կիրճում
Սիրել է թանձր վառողի ամպեր.
Ուր փայլակ-կայծակ մահ են շառաչում,
Գրկել է կայտառ պաք ու շանթեր,
Ընկերն է եղել մի հին հրացան,
Իսկ անուշ երգը՝ գնդակի բըպպոց.
Թշնամու ջարդը ահից ցիր ու ցան,
Հարան-տարանը և տուր ու դմբոց:
Թեև նա ծեր է, ութսուն տարեկան,
Բայց նրա նման չկա մի որսկան.
Աչքի լույսի պես դեռ պենք է սիրում,
Երկնքի ծոցից էլ որս է բերում.
Դեռ հեծնում է նա ձին արագավապ,
Սև ամպերի հետ թռչում սար ու ձոր,
Դիտելով լուսնի սահը նապենապ,
Հիշում իր թափած արյունը ծործոր.
Անցնում է ձգված անտառի խորքում
Նեղ օձապտույտ ժայռոտ կածանը,
Որից հոսում է առուն, աղմկում,
Կամ թե դղրդում խուլ հրացանը,
Ուր միշտ ծարավի թշնամու արյան՝
Նա թափառելով գիշերը անահ,
Մռայլը դեմքին դժոխքի նման
Նամարդի համար պատրաստել է մահ...
Զիրուխի վրա կրակ դնելով,

Աշուղը կտրեց իր երգի թելը.

Իսկ մեկն էլ այսպես նրան հարցնելով,

Կրակին դարսեց նորից փայտերը:

— Բա, ապի՛, ապի՛, դեռ չես իմացել,

Մի նոր իգիթ կա սարերը ընկած,

Ավագ որսկանից ետ չի մնացել,

Դեռ նրա պես քաջ աշխարհ չի եկած.

Չահելներին մեջ նրա հասակում

Ոչ ոք չի եղել էնպես շնորհքով.

Աստու՛ր գիշերը անցնում է, վարկում

Ամենահարուստ բեգի օրերով.

Արյուն է կաթում են օրը սրտից,

Թե որ չի թոցնում ձի, տավար հանդից.

Ո՛չ ապգ ունի նա, ո՛չ տեր, տիրակալ.

Կարո է նրա անունն իսկական.

Էլ բեզ չի մնում, որ չթալանի,

Նրան ասում են «Դալի-Էրմանի».

Էլ նրա ահից, հարան-տարանից,

Վեռու չեն քշում ապրանքը տանից:

Մինչդեռ խոսում էր Կարոյի մասին

Վառ հափշտակված երխտասարդը,

Աշուղը կանչեց, վարնելով տակին.

— Դե, տեսե՛ք, ո՛րն է քաջ սղամարդը.—

Լսել են, գիտեն էդ ավազակին.

Բայց ո՛ւր գող Կարո՛, ո՛ւր Ավագ որսկան.

Ավա՛գն է ինչպես Լավարն ահագին,

Կարոյի նման բլուրներ շա՛տ կան.

Թեև մարդիկ է Կարոն կողոպտում,

Չի, տավար հանդից քշում ու փախչում,

Բայց դուք ջահել եք, Ավագ որսկանին

Ինչպես որ հարկն է, չեք էլ ճանաչում.

Կարոյի նման ձիու գողերին

Նա իսկի մարդու տեղ էլ չի դնում:

Որսկա՛ն են ասում. ո՛չ թե արջերի,

Որ տանձ ուտելով ապրում են մեղում.

Ռոսկան են ասում ավազակների,

Որոնք սարերին փորձանք են քերում.

Որսկան են ասում, որ ամեն չարին

Մառաղ է անում կարմիր գնդակին.

Որսկան են ասում, որ խեղճ նաչաթին

Պահում է սիրով իր թևի տակին,

Որ ինչպես ձյունը անպամած սարին

Գլուխ չթեքած նամարդի սրին՝

Մի դաս է անել լեռներից դաժան—

Արյան վրեժը արյունով անել,

Քնած թե արթուն վենքից անբաժան՝

Թշվառի սիրով ապրել ու մեռնել.

Որի ձենիցն էլ գնդակ է թրջվում,

Անցած ձորիցն էլ արյուն է հոսում,

Եվ միշտ վառողն է անկերով բուրում,

Կաշձակի նման շանթում, խորովում...

Այսպես բարի է Ավագ որսկանը—

Խոսքը օրե՛նք է, գործը՝ հաղթությո՛ւն.

Նա տարածում է դուրսը թե տանը

Իր ապրու ձենով սեթ ու հաջողությո՛ւն:

Երբ լսեց ծերի սազը վնգալով,

Սարերից ձորեր արձագանք տալով,

Տղերքը նորից խնդրեցին նրան.

— Ա՛յի ջան, ա՛յի, երգի՛ր որսկանից.

Միմեդ անուշ, դու քաղցրաբերան,

Մենք չենք հեռանալ քո սալի ձենից:

«Ավագ որսկանի արած գործերը

Շատ են ու երկար,— սկսեց ծերը,—

Բայց ես կպատմեմ շատերից մեկը,

Թե ինչպես փախավ որսկանից քեզը:

Սրանից կլիներ տասն տարուց էլ վաղ,

Դրացի էր մեկ Սալմանի օրեն¹.

Թալանում էր նա աչ ու ձախ անվախ,

Աղա էր նրա ամեն մի գրադեն²,

Մի օր դուրս եկավ Սալյանի բուլեն³,

Գոռալով վառեց ինչպես կրակին,

1 Վրանների խումբ:

2 Օտա:

3 Տուլ:

Եկավ, որ քչի մերին տավարից.
 Մերն էլ բարկացավ նրա հավարից՝
 Մի քիչ կովերից գնաց, հեռացավ,
 Բուզագոռ տալով նրան մոտեցավ.
 Դեռ գոռգռալով երկունսն էլ կրծքից,
 Հեռվից բարկացած կանչեցին իրար.
 Վապելով եկան թուրք, հայ օրեքից՝
 Մեծ բուղակովին նայելու համար.
 Խառնվել են միմյանց մեր, մանուկ ու ծեր,
 Հըռ-հռի ձայներ, հա՛յ-հո՛ւյ, դղղըրդյուն,
 Ամեն կողմերից լսվում են հարցեր.
 «Ո՛րն է երկուսից տանում հաղթություն»:
 Երկու բուղեն էլ ահեղ պարկերով,
 Պոպերով, ոտքով գետինն են փորում.
 Երկու բուղեն էլ ուռած կրծքերով՝
 Հսպարտ բչալով կռիվ են գոռում.
 Մեկ պինդ ոլորած պոչն օձի նման
 Լախտ արած ուժգին՝ գետինն են ծեծում,
 Մեկ ինչպես վերջին ահեղ հրաման,
 Նորից հերստտած կռիվ են բչում.
 Սպանակի բուղի մընդավը՝ փըրփրում,
 Տեսնողի վրա սարսափ է բերում:
 Հանկարծ երկունսն էլ նայելով խեթ-խեթ
 Դեռ կոթանելով², գնացին ետ-ետ,
 Եվ նորից եկան պատրաստի պարկով,
 Մոտեցան միմյանց դեմ տված կողքով.
 Մընդավն ու պոպեր տալով պահապան,
 Երկու ճակատներ դեմ ելան, կպան,
 Թըրա՛խկ, հա՛, թըրա՛խկ, պոպերով, գանգով
 Ջարդում են իրար անխնա պարկով:
 Խառնվում են նորից բեզ ու սարվորներ,
 Նայում են կռվին սրտի տրոփով.
 Թնդում են նորից հըռ-հըռի ձայներ.
 Եվ բուղաները վարնվում են թափով.

¹ Ուղը:

² Պոպերով սպանալով:

Փահլևանի պես հե՛նց են պըտըտվում,
 Որ կուրծք ու ճակատ փրփուր է պատում.
 Դեռ չըրըխկում են, պըրըխկում պարկեր,
 Սալմանի բուղեն ետ-ետ է նայում:
 Կրծքին ու կողքին բացվել են վերքեր,
 Բայց նա երկյուղից դեռ չի հեռանում:
 «Չոռեց հա՛, պոռե՛ց»,—հանկարծ գոռացին
 Սալմանի բուղեն պըրիսկաց գետին.
 Մեր բուղեն էնպես գոռաց ու բչաց.
 Որ նրա ձենից սար ու ձոր թնդաց.
 Իսկ բեզի հաղթված բուղեն հևալով,
 Վեր կացավ հապիվ, գնաց կաղալով:
 Երբ մենք պարտվածին ծաղր ու ծանակով
 «Ղո՛ւ» էինք տալիս, թքում ու մրում,
 Բեզը կոտրված մեր հաղթանակով՝
 Նոր կռվի համար ատամ էր սրում.
 — Էս բուղակռվի ամոթի մրից
 Մենք չենք պատվիլ ոչ մի ժամանակ,
 Մինչև ոխ չառնենք էն բինաներից,
 Մինչև, որ չուտեն նրանք դազանակ:
 Հենց որ լռեցին վերջին խոսքերը,
 Կալմեջ արին մեկ դազանակներով.
 Թրերը հանած՝ հասան բեզերը
 Ու վրա տվին թունդ աղմուկներով:
 Քար ու դազանակ ամենքի ձեռքին՝
 Իրար դեմ ելան տղամարդ ու կին,
 Երկու կողմերից կարկուտից վարար՝
 Քարերով, փայտով շարդում են իրար:
 Հենց որ բեզերը հաղթված սարվորին
 Քշելով հասցրին արխաջի¹ ծերին,
 Հանկարծ սարիցը մի ձեն որոտաց.
 «Ո՛ւր եք փախչում, ո՛ւր, գետինը մտած.
 Մի՛ք վախիլ, տվե՛ք, տվե՛ք բեզերին,
 Որ հանգիստ թողնեն ձեզ էս սարերին»:
 — Փախե՛ք, հա՛, փախե՛ք, վա՛յ,— կանչեց բեզը

¹ Անասունների բացթոյա հանգստյան տեղը:

Ավագ որսկանն է սարիցը վապում.
Փախե՛ք, հա, փախե՛ք, մեռք դազեք.
Նրա հետ կռիվ մեզ էլ չի սապում:

Էլ շունչ չմնաց դուրսը ոչ ոքից.
Ավագն է նրանց դեռ կանչում դազից.
«Ո՛ր եք փախել, ո՛ր, է՛յ, դո՛ւք, անամորդներ,
Գուրս եկեք, տեսեք ձեր հոգեատին,
Թե չէ կպոկեմ քինա-դազաներ,
Չեմ թողնիլ մեկիդ շունչը բերանիս»:

Բեզերից ոչ մի իգիթ դուրս չեկավ.

Սալմանի հայրը կորացած մեջքով
Եկավ որսկանի ոտները քնկալ,
Ու նա հեռացավ ծերի խնդիրքով...
Եվ վառ խարուկի շուրջը բոլորած՝
Տեսած ու լսած արկածն են պատմում,
Եվ մեծ ու փոքր անբաններ լարած՝
Աշուղ-Գիթուի երգերն են լսում.
Պատմում է, երգում աշուղն անցյալից,
Չորերում տեսած հին իգիթներից,
Կրակին գցած կաղնի մեծ գերան՝
Սարկորն էլ արքուն խում է նրան:

— Էն օրից ես օր բեզերն անորով

Հանեցին գլխից կռիվ մտքերը.
Պատմում են թուրք, հայ՝ ահ ու սաբասախով
Ավագ որսկանի արած գործերը,
Պատմում են, որ նա ինչպես գորավար
Թիվուսը ունի չար դև ու սուրբից.
Ոչ էլ կենտրոն նա մարդու ձեռքից.
Որ երկու թան է Ավագ որսկանը
Ամենից մոտիկ պատում իր արտին—
Մեկը Դրխու ոհն հրացանը,
Մեկն էլ միևնույն սիրուն Ավարդին.
Ու գրանց հետը ժախտ օձի նման
Եվ մի լուռ վիշտ է միշտ նրան կրծում,
Որ աստված տղա չտվեց նրան,
Որ Ավագ անունն պատեր իր ապրում.

Որ միշտ տեսնելիս սիրուն Ավարդին,
Զգում է նա իր դատարկ վախճանը,
Եվ սև մտքերը փաթաթած սրտին՝
Տանջում են նրան դուրսը թե տանը:

«Մի օր աղջիկս ես մարդու կամ,
Ինքս էլ ծերացած աշխարհից կերթամ.
Հրացանս կմնա պատիցը կախված,
Ժանգում ու փոշում անբան շաղախված,
Երկար խանչալս էլ, արծաթով պատած,
Վախկոտի մեկը կանոնի իր փողով,
Հապար փորձանքի արնով աշխատած
Անունս էլ հետը կծածկի հողով.
Սիրուն Գուգարքն էլ առանց պահապան,
Զանդելու կգա ամեն մի անբան.
Էլ չեմ դուրս գալ ես խոր գերեզմանից,
Էլ չեմ գցիլ իմ հին հրացանից»:
Երկնքի գրկում լողում է լուսին,
Դեռ նստած են ծեր, երիտասարդ,
Ավագ որսկանի, Ավարդի մասին
Խարուկի շուրջը լսում են հանդարտ:
Կաղնի գերանը կրակին ընկած՝
Առատ բոցերով դեռ լույս է սփռում.
Ճարճատում է նա, բռնկում հանկարծ,
Հետն էլ աշուղի երգերը վառում,
Տեսած ու լսած անթիվ դեպքերով
Եվ մեկը մյուսից արժան գործքերով
Դեռ երգում է նա և այն հաստատում,
Որ առաջի՛նն է Ավագն աշխարհքում,
Նրանից իգիթ, նրանից հսկա
Էլ թուրքում, հայում, ո՛չ մի տեղ չկա.
Եվ ուշի-ուշով նստոտած համար՝
Խնդրում են նորից տղերքն աշուղին.

«Ապի ջան, ա՛պի, երգի՛ր մեզ համար,
Էլ չենք քնելու մենք լուսնի շողին»:

Բոլորի ուշքն էլ որսկանը տարավ.
Մարում են կամաց խարուկի կայծեր,
Զահել տղերքը դեռ երգի ծարավ՝

Ավեցընում են կրակին փայտեր.
Ո՛րը հոգնելուց գուխը թեքած՝
Նիրհելով կամաց, վարթնում է հանկարծ,
Որն էլ վաղուց է անուշ խըռռացնում,
Ավագ որսկանին երպում տեսնում:
Երկնքի գրկում լողում է լուսին.
Ննջում են արդեն ծեր, երիտասարդ,
Ավագ որսկանի, Ա-վարդի մասին
Լուսինն է խորհում երկնքում հանդարտ:

1

Արևը չեյած՝ սարվորն արթնացավ,
Նորից ձորերում աղմուկ բարձրացավ,
Նորից սայլի տակ ճըռռում է ճամփան,
Փըռփըռում հարսի քողն ու դաթիբան.
Դալար յուրդերը անպերի տակին
Աչքերը գցած քոչվորի ճամփին՝
Ժպտալով հակինթ ցողերով առատ,
Կանչում են կարծես բույրով անարատ,
Կանաչի վրան ալթալան՝ ձեռքին՝
Կրոնասեր թուրքը չոքեց նամակի,
Ձեռները պզույշ տանելով միրքին՝
Աղոթք է անում աստծուն մեկուսի:

2

Կեսօր է արդեն. կանաչ Լավարից
Իջնում է հանգիստ ոչխարը կթի.
Կթվելով մաս-մաս, անցնում է բերից².
Լսվում է անուշ փըշշոցը կաթի:
Հովիվ, հովվուհի նստոտած շարքով՝
Կթում են ուրախ և անհոգ խնդում,
Երբեմն էլ այրված անուջիկ երգով
Սեր են վարթեցնում մեկ-մեկի սրտում:

1 Ջրամանի տեսակը:

2 Ոչխարի կթելու տեղը:

Վերջացավ արդեն ոչխարի կիթը,
 Կաթսաներ տարան թարմ կաթով լիքը.
 Մեկն էլ գդակը շարժելով օդում,
 Դեռ գառնարածին՝ «հե՛յ, ե՛կ» է կանչում.
 Երկար չանցնելով, սարի գագաթին
 Գառների կայտառ հոտը երևաց.
 Խառնվելով նրանք մայրերի հոտին,
 Բերկրանքի հույզով մայում են ցրված.
 Կանչում են, բայում գառըն ու մաքին,
 Անուշ ձայներով փնտրում են միմյանց.
 Որը գտնելով իրա գառնուկին,
 Ծծել է տալիս, փայելով սրտանց.
 Որը խաղում է մոր հետ կուշտ փոքրով,
 Որն էլ մնում է տխուր մայելով.
 Եվ ամեն անգամ գառը մեր տալիս¹,
 Կարծես թե անուշ համերգ են տալիս:
 Եվ շուտ ջոկելով մայրերը գառնից,
 Հովիվը քշեց նրանց դեպ արոտ,
 Մահակն էլ ուսին գառները բինից
 Տարավ գառնարած՝ սառն աղբյուրի մոտ:

3

Հովիվ, գառնարած մի տեղ խմբվելով,
 Լախտի են խաղում, առույզ թռչկոտում.
 Հրճվում են նրանց կայտառ խաղերով
 Ծերերը ծածկված գառան մուշտակում.
 Ամեն մի նրանց ճարպիկ թոխչքով
 Հիշում են վաղուց կորած մանկություն,
 Շոյելով ձերմակ մորուքը ձեռքով,
 Կանչում են՝ «Նամա՛րդ, նամա՛րդ ծերություն»:
 Մեկն իր մուշտակը մի կողմն է ձգում
 Եվ դիտմամբ խառնվում տղերանց խաղին,
 Մի լախտ է խլում, ոլորում ձեռքում
 Եվ առիթ տալիս անվերջ ծիծաղին.

¹ Մայրերին տալիս — ծծեցնելիս:

Կանչում են, «Աթո՛, լախտը թոցրո՛ւ,
 Մեր պապի մեջքը մի լավ տաքացրո՛ւ»...
 Աթոն էլ լախտը ոլորած ձեռքին՝
 Տանում է, բերում մեր պապի մեջքին...
 Մի տեղ ձիերը տրտնգի տալով
 Փղռռացնում են, սարերը փախչում.
 Ջահել տղերքը քամանդ¹ բռնելով
 Նրանց ետևից սյուրազ² են թռչում,
 Մի խամ, չևստված վայրի ջուռակի
 Ամեն կողմից էլ կայմեջ են անում.
 Ով նրան մենակ բռնի ու թաւթի,
 Նա մի քայլադի նամառ³ է տանում.
 Բայց տաքացել է, կատաղել խամ ձին,
 Տղերանց վրա ծառա-ծառա⁴ է լինում.
 Երկար քամանդը քաշելով վզին,
 Խեղդում են նրան և թամբը դնում.
 Չուռնեն էլ՝ թողած մի կողմը լախտին,
 Փչում է արդեն տաք-տաք ջրիդին,
 Տղերքը միմյանց առաջ են քշում,
 Ծերերը դարձյալ խոր ա՛խ են քաշում:

4

Հարս ու աղջկեքը ապօրոջ ուսին՝
 Գնում են խումբ-խումբ աղբյուրը ջրի.
 Դողում են նրանց ժպտուն երեսին
 Բոլոր գույները Գուգարք լեռների.
 Եվ բլուր ծաղկանիչ նախշուն շորերով
 Անցնում են նրանք ուղին հոտավետ,
 Եվ թարմ կուսական հմայիչ բույրով
 Մրցում են սարի ծաղիկների հետ:
 Եռում է խաղը հարսների դիմաց,

¹ Բամանդ — ձի բռնելու պարան:
² Չխարշավ առաջ ընկնելու նպատակով:
³ Մրցանակ է տանում:
⁴ Հետին ոտների վրա կանգնում — ծառախառն:

Նայում են միմյանց աչքերի տակով.
Կարմրում են, ժպտում կույտերը կամաց,
Անցնելով անուշ սիրո տրոփով:
Բայց, ա՛յ քեզ հրաշք, մի շշուկ անցավ.
«Այ-վա՛րդն է գալիս, Այ-վա՛րդն է գալիս».
Եռուն ջիրիդը իսկույն դադրեցավ,
Բոլորն էլ սառան նրան տեսնելիս՝
Հուրիրին տալով քողի արանքից,
Նրա աչքերը հանեցին խելքից.
Էլ ոչ ջիրիդ կա և ոչ էլ գուռնա.
Այ-վարդի նետին ո՛վ կդիմանա.
Ջիրիդներն ընկան հուժկու ձեռքերից,
Ախ ու հառաչանք թռան կրծքերից.
Չուռնան էլ մոռացած լախտն ու ջիրիդին՝
Նրանց տեղ զլեց այրող բայաթին.

Ջեյրանի նման
Բինից դուրս գալը,
Սափորը ուսիդ
Սարին սուրալը,
Ա՛խ, էդ աչքերիդ
Վառվռուն հուրը,
Սիրուն պատկերիդ
Նոր կյանքի բույրը,
Շուրթերիդ բացվող
Վարդը ժպտալիս՝
Մեզ, սիրուն աղջիկ,
Հանգիստ չի տալիս:
Ա՛յ, սիրուն աղջիկ,
Ա՛յ, սարի աղջիկ,
Շուտ-շուտ դուրս արի
Աղբյուրը ջրի:
Մեն-մենակ դու ես
Ծաղիկը սարի,
Մեն-մենակ դու ես
Չարդը աշխարհի:
Առանց քեզ սարին

Հատնում է բույրը,
Առանց քեզ աղբրում
Ցամքում է ջուրը:
Ծաղիկ ու դալար,
Աղբյուրը փուլալ,
Սուրալով արի՛,
Շունչ տուր, կարողարի՛:
Ա՛յ, սիրուն աղջիկ,
Ա՛յ, սարի աղջիկ,
Հասիր մեզ սիրով—
Սափորիդ ջրով:
Ա՛խ, մեր սրտերը
Վառել ես հրով,
Բայց դեռ ապրում ենք
Հեռվից քո բույրով.
Ապրում ենք, ջե՛յրան,
Երգերի ծոցում:
Ինչպես բյուբյուլը
Երգերի բոցում:
Ջահեկ սրտերում
Քո վառած հուրը
Չի մարում, աղջի՛,
Սափորիդ ջուրը:
Ա՛յ, սիրուն աղջիկ,
Ա՛յ, սարի աղջիկ,
Թեկույ մեզ վառի,
Շուտ-շուտ ջուրն արի՛:

Այ-վարդի համար ա՛խ են հառաչում
Գուգարք լեռների ամեն մի ձորից,
Այ-վարդի համար մեղուն է թռչում
Լոռվա առաջին խամ մեղրի ծորից.
Ուտում են աչքով ամենքն Այ-վարդին,
Բայց սերն անհայտ է դեռ նրա սրտին.
Նա դեռ ապրում է երպանների մեջ,
Նրան չի այրել դեռ սերը անջեջ.
Բայց են էլ ասած Ավագի ահից

Ո՛վ կարա անցնել Ալ-վարդի մտում,
Կամ թե փախցնել նրան աղբյուրից՝
Ո՛վ կարա իսկի անցկացնել մտքով:

5

Սև ստվերները հսկա լեռներից
Չորերն են ընկել, մեկ-մեկի գրկել.
Լուսնի եղջյուրը մռայլ ամպերից
Հալածված դեմքը դեռ չի ապատել,
Թանձր եթերյան սև քողը դեմքին
Վազվվում էր նա սոված ու անքուն
Նայելով հերթով բոլոր օրեքին,
Հսկում էր նրանց գիշերը արթուն.
Օրոր էր երգում առուն ձորերում,
Մարում էր մեկ-մեկ կրակն օրեքի,
Բայց ականակիր սարի խավարում
Մենակ մի կայծ էր դողում ճրագի.
Ղարխախաչ¹ սարի գիծ գագաթներին
Լուսինն էլ գերի մնաց ամպերին.
Այնտեղ ծովիանն է խաղում, որոտում,
Հրեղեն գոտին երկնքով պատում:
Շրփշրփաց անձրև, ամեն մի տեղով
Առուներ դառան պղտոր հեղեղով:
Չարթնելով քնից սարվորը հանկարծ,
Ամրացրեց դագի հին ծակ ու ծուկը.
Տավար ու ոչխար իրարով ընկած՝
Խառնեցին միմյանց գառն ու հորթուկը.
Հովիվը հասավ ազդարար ձայնով
Հավաքեց նրանց դեպի արխաշը,
Բայց դեռ լսվում էր տխուր ոռնալով
Դոլանից² փախած ջների հաչը:
Սարեր ու ձորեր ահից դողալով,
Արձագանք տվին փախակ-կայծակին,
Լեռների որդին մթին գիշերով

¹ Լուովա և Շիրակի սահմանում ձգված բարձր սար
² Ըան կստելու և հուսիս հսկայա տեղ:

Անցնում էր հեղեղ՝ մի սև ձի տակին,
Չին առանց վարդի, սանձի ու թամբի
Ցատկում էր արագ ժայռերի վարսեր,
Ինչպես մի սովեր սևակնած ամպի,
Թռչում էր գետեր և դար ու փոսեր.
Իսկ դոփյունները պինդ սմբակներից,
Արձագանք տալով խորին ձորերում,
Կայծին են տալիս և հանկարծ մարում.
Ռնգներից ամպի փրփուր է հոսում,
Խառնվում պղտոր վշշան հեղեղին.
Չին իր հեծվորին այնպես էր սապում,
Ինչպես որ նետը իրեն աղեղին:
Գոռում էր, ճչում ահավոր կիրճում
Փրփրած բաշով սևացած ուրկուն¹,
Բայց ձիավորը մի աղոթք մտքում
Դեռ մրմնջալով, քշում էր անքուն.
«Էս ուրկունիցն էլ թե դուրս թռավ ձիս,
Մուրալ եմ անում գնամ Սուրբ Սարգիս,
Հասվե՞հաս եմ, հա՛, ճրագ եմ տեսնում,
Գիշերս կմնամ Սառն-աղբրի քինում.
Հենց որ անձրևը մի քիչ դադարի,
Նորից կրունեմ ձամփեն անտառի»:
Աչքերը հառած քինի ճրագին,
Հեծվորն էր այդպես ձիուն մրմնջում
Նրա սև բաշը դորած ձեռքին,
Կարծես ուլում էր հասնել մի ջնջում...:

6

Փռացրեց սև ձին, դոփեց սմբակով,
Նետի պես ցզվեց արխաշի ծայրին.
Մի շուն դրանից վեր թռավ հաչով
Եվ թարջարծ արավ քնից աքավորին.
Շներն աղմուկով վայրացած հառան,
Ան ձիավորին կայունք արեցին.
Իսկ հովիվները՝ «ո՛վ ես» ու «քի՛մ ասն»,

¹ Հեղեղից առաջացած մեծ գետ:

Նրան խավարից մեկ-մեկ ձայնեցին:

— Մթին գիշեր է, կորցրել եմ ճամփեն,—
Պատասխանեց նա,— հյուր եմ եկել ձեզ:

Ութսունին մտիկ, վեհ, բարձրահասակ,
<երթը ակոր ձյունից էլ ճերմակ,
Արծաթապատյան դաշույնը գոտկին,
<ին արկածների կնճիռներ դեմքին,
Սև մազ յափնջին ուտերին բազմած
Երկար չիբուխն է բերանին սեղմած,
Կանգնելով ծերը ալաշխի շեմքին՝
Խրոխտալի ձայնով կանչեց ճամփորդին:

— Ե՛կ, ճամփորդ ախպեր, արխաջի մոտով,
Դուրսը անձրև է խառը կարկուտով.
Մինչև չնստես դու էլ իմ տանը,
Պատառ չեմ դնիլ ես իմ բերանը.
Ե՛կ, ախպեր ջա՛ն, ե՛կ, դոնադն Աստծունն է,
Անմեռ աշխարհն էլ իգիթ մարդունն է:
<եծվորը եկավ ծերի հրավերով,
Սև ձին էլ տակին սև ամպի նման,
Ուռած ոնգներից թառանջ քաշելով,
Թռավ ու կանգնեց նրան հանդիման:

— Բարի իրիկուն,— ասաց նա,— սարվո՛ր,
Վատ օր չտեսնի գլուխդ ակոր:

Թող վառ լինի միշտ բինում ճրագդ,
Թող տափը չառնի վերջին գնդակդ:

— Բարին արևդ. համեցե՛ք, որդի,
Թո՛ղ ձիդ օրյուկի՛ հանդումը ծառան,
Դու ե՛կ անձրևից ալաշուխ մտի:
Ալ-վարդ ջան, վե՛ր կաց, դու էլ տաքարան,
Որսի խորոված շամփրի՛, պատրաստի,
Էուշտը սովածին մանր կբրդի:

Այդպես պատվերներ տալով Ալ-վարդին,
Ալաշուխ տարավ ծերը ճամփորդին,
Որի յափնջից ծորում էր ջուրը,
Ինչպես մամոռտած ժայռից աղբյուրը.
Բայց նա թափ տալով շորերը շեմքին:

Մոտեցավ նստեց ծերունու կողքին:
Թուրն ու դաշույնը կեռ արծաթապատ,
Գնդակ-վառողի ամանը գոտկին,
Չախմախի հրացան կուզված տասնաբանդ.
Շահմար¹ օձի պես լուռ փարված մեջքին,
Չենք ու կրահում, արծաթում մտած՝
Ճրագի լույսով հյուրը շողշողաց:
Սերն ու կարագը առաջ բերելով,
Ալ-վարդն եփում է դեռ տաքարանը.
Մի քանի խոսքով սուփրեն օրհնե՛լով,
Ծերունին դարձավ աղոթարանը:

— Թող նրան տանի սելավն ու գետը,

Ո՛վ աղ ու հացի օրենքն ուրանա,
Ո՛վ դոնադ եկած թշնամու հետը
Չի նստիլ ուրախ մարդի-մարդանա².
Թշնամի կլնես, թե ինձ բարեկամ,
Դուռս բաց կլինի քեզ ամեն անգամ.
Քանի որ կուպես իմ ալաշուխում
Սիրտդ բաց՝ արա ինձ հետ կերուխում:

Երբ շամփուրները մեկ-մեկ շարելով,

Դարսում էր կույսը կարմրած շեղջին,
Կամ խորովածը արագ շրջելով,
Բերում էր դնում հյուրի առաջին,
Ցուլուն աչքերը հոնքերի տակից
Ընկնում էին միշտ փայլուն պենքերին
Եվ ալեծածան մապի արանքից
Նա զաղտագողի դիտում էր հյուրին:
Խիտ գանգուրները հանկարծ ցնցվելով,
Մերթ այտերն էին վարդի պես փայլում,
Մերթ շամփուրները նորից շարելով,
<յուրի սիրտն էլ էր նա հետը այրում:
Ե՛վ անքնություն, և՛ երկար ճամփե՛ն
Վերացան իսպառ ճամփորդի մտքից.
Սև-սև աչքերը շանթերով արդեն,
Անցան շեշտակի սուր նրա կրծքից:

¹ Օձերի թագավոր:

² Տղամարդորեն:

Մոռցալ ինքն իրան, երկիր ու երկին,
Երեքաց անուշ, անստփոր դողով,
Եվ կյանքի գնով գողցած կոմայգին
Նա մոռցալ միայն երկու աչերով:

Տեսնելով հյուրի թևի արդունը,
Օերունին հարցրեց նրա անունը.

— Ինչի՞ չես, որդի՞, դարդդ ինձ առում,
Էդ ի՞նչ արդուն է քեզոց հոտում.

Ե՛կ, դու մի՛ ծածկիր, անունդ ինձ բացիտ.

Չես բողբոջ, որ քեզ էդ ցավը սաշի:

Ավագ որսկանն եմ Գուգարաց երկրի,

Կոնվենտի մեջ հերքե ձերմակած.

Քեզ նման ես էլ հապար վերջերի:

Խոռոչներ ունեմ մարմնիս քեկած:

— Տերն ինքը հաստատ պահի՛ քո տունը,

Վաղուց եմ լսել քո մեծ անունը.

Չախ թե՛ս միջին գևոսով է մնացել,

Ինչ անես, ա՛պի, դժվար է հանել:

— Ա՛նհոգ կաց, որդի՛, ինչ վերք է լինի.

Ազդիս նրան դե՞դ ու ճար կանի:

Նա ստփորն է հանգուցցող սերնց.

Որ բժշկում էր գեղակ ու սրից:

Ա՛յ-վարդ ջան, ա՛ղջի, ճար ունես, դե՛ անես.

Չահել է, մեղք է, կոնատ չթողնես:

Եվ Այ-վարդն նկատ գեղի փայտթուփ.

Գնդակը հանեց մի երկար կարթով,

Վերքը նա լվաց, դեղը փաթաթեց.

Վրան մետաքսի բաշկինակ կապեց.

Իսկ հյուրն Այ-վարդով ակնքա՛ն հիացավ,

Որ գևոսակ ու ցավ իսպառ մոռացավ:

— Դե՛, պատմիր, որդի՛, զգե՛ր անցածը,

Թե որտե՛դ հասավ քեզ էդ արկածը:

— Ա՛յ, ապի՛, լսի՛ր սրտիս գարտնիքը.

Ոչի՛նչ չես ծածկի, կորստունն անփոխ.—

Եվ ետքն արյունով աչքերը թփռ

Չե՛ն վազրի նման նետեց աչ ու ձախ.

— Բայց առաջ բաշխի ինձ, Ավագ որսկան.

Որ ինձնից ճարպիկ գողեր էլ չկան.

Իսկ թե քեզ մոտ էլ դուրս գամ մեղավոր,

Ինձ համար եղի՛ր դու խիստ դատավոր:

— Իպուր ես եկել, մտել իմ տունը,

Ինձ մոտ չես գտնիլ քո փրկությունը.

Հոգիս էլ կտամ ես իմ դնադին,

Բայց չեմ խնայի, պաշտպանիլ գողին:

Գիշերս կտամ ես քեզ ապաստան,

Կպարթնես քնից, կերթաս ապահով,

Հետո կփնտրեմ ես ինչպես որսկան

Եվ կանեմ մի օր քեզ գնդախորով:

Դե՛, պատմի՛ր, տեսնեմ, էդ ինչ ահարկու

Սարերը ընկած ավապակ ես դու:

— Գարուն էր, ապի. սարը քոչելիս

Մի քանի հարուստ թուրք աղայարներ

Աղբյուրի ափին նամապ անելիս,

Օրյուկեյ էին իրանց ձիաներ:

Երբ ես անտառից հանկաթած դուրս եկա,

Նրանց միամիտ բարով տվեցի,

Նրանք ծաղրեցին և հռհռապով

Հարցրին ինձ.— Է՛յ, ձո՛ւ գողցար, թե՞ ձի

Էն օրից թե՛ն տարիներ անցան,

Բայց նրանց ծաղրը մնաց իմ սրտում,

Եվ ես երդվեցի էն ծաղրի թուլտով—

Լինել ավապակ, գող և մարդասպան,

Գիշերը անցնել բեգերի բինով

Եվ մահ գոռալով, ջշել ամեն բան:

Հենց էն ինձ ծաղրող մեծ աղայարին

Գիշեր ու ցերեկ փնտրելով արթուն,

Վերջը ես գտա Ղարախաչ սարին,

Ուր նա հայտնի է ինչպես մեծատուն:

Արան-բեգն է նա, քաջ և անվանի,

Տավար-ոչխարի հոտերով հարուստ,

Բոց ամենից լավ մի մե ձի ունի,

Որ աշխարհ արժի մենակ արտաբուստ.

Չի հասնիլ նրան հին հեքիաթների

Թեկուկ հրեղեն ձին իր թևերով.

Չի հասնիլ նրան և գնդակների
Կարմիր տոժոցը մոռալլ գիշերով.
Առաջուց գիտե նա՝ թե՛ փորձանքը.
Եվ թե՛ հեծվորի սրտի բաղձանքը:

Մթին գիշեր էր, հենց գողի գիշեր,
Երբ Ասլան-բեգի օրին մոտեցա.
Հենց որ օրյուկը բիրից կտրեցի.
Վեր կացավ հանկարծ մի շուն դուլանից,
Երկաթի ոտկապն էլ որ կտրեցի,
Դորդաց օքեն հարայի ձենից.
Մարդիկ վազում են, շները հաչում,
Բայց ես փորըսող գետնին եմ կաչում,
Եվ հարահրոցի թունդ տրաքտրաքոցին
Թռչում եմ, սանձում ոտկապով սև ձին:
Նորից դորդաց, գնդակ որոտաց.
«Տարան, հա՛, տարա՛ն բեգի սևուկը».
Բայց ես նետի պես ականջը մտած,
Քշում եմ նրանց գոված նժույզը.
Տրա՛ք, հա, տրա՛ք, գնդակներ թռան.
Խառնվելով օքեն, գոռում էր. «Տարա՛ն,
Հասե՛ք, հա՛, հասե՛ք, Դալի-Էրմանին
Կենդանի թաղեց իգիթ Ասլանին»:

Խրխնջում էր ձին, ոտկապը կրծում,
Փրփուրն ամալի պես ոնգներից գցում
Եվ կրակ կտրած էնպե՛ս էր վազում,
Որ կասես հեռվից գնդակ էր բռպուում,
Թե որ ես նրան հեծած չլնեի,
Ո՛վ գիտեր, թե ողջ էստեղ հասնեի...

Հանկարծ գրույցը Կարոն կտրելով,
Դիմեց որսկանին, այսպես խնդրելով.

— Հերիք է, ա՛պի, ես լույսն եմ ընկնում,
Տավար ու ոչխար արոտ են գնում.
Թե նամարդ եմ ես, կարկի՛ր գնդակով,
Թե չէ՛ ձամփա տո՛ւր ինձ քո օրհնանքով:

— Համբերի՛ր, Կարո, համբերի՛ր մի քիչ,
Մի օր էլ կլնես թույլերի փրկիչ.

Էս գիշեր պատմած գլխիդ անցքերդ
Մոռցրին ծերիս ճերմակ հերքերդ.
Թե գող լինեիր շատի պես անմիտ,
Ես չէի ասիլ քեպ երբեք իգիթ.
Բայց երբ որ գող ես մենակ թասիբից,
Նամարդ բեգերին պատժելու համար,
Օգնություն կգա քեպ ամեն սուրբից
Եվ դու կլինես անհաղթ պորավար.
Մարդը նամարդին թե մյոհտաջ կանես,
Ավագ որսկանից պատիժդ կառնես:
Դե՛, տուր խանչալդ. օրհնեմ իմ սրով,
Որ քեպ տեսնելիս դողա թշնամիդ,
Քեպ պես թասիբի ավապակներով
Լցվեն մեր երկրի սար, դաշտ ու հովիտ:

Ծերը պատյանից դաշույնը հանեց
Եվ խաչ քաշելով Կարոյի սրին,
Պասպական ծեսով նա քաջին օրհնեց.
Այա օրյուկից նրա ձին բերին.
Եվ Կարոն թռավ առույգ ոստյունով,
Կպավ մերկանդամ սևուկի մեջքին.
Խրխնջաց սև ձին ու փռնչյունով
Թռչկոտաց հուժկու հեծվորի տակին:
Եվ սիրտն ու հոգին թողած Ալ-վարդին,
Նա մնաս բարով ասաց Ավագին:

Ծեգում է արդեն, բայց Կարոն չկար՝
Ալ-վարդը գնաց ինչպես խելագար,
Ալաջուխ մտավ, սափորը ուսեց,
Երգի մրմունջով աղբյուրը վապեց:
Չիու հետքերը հանկարծ նա գտավ,
Այնտեղից պոկեց մի փուռնչ կանաչ խոտ
Եվ համբուրելով նրա մեջ դրավ
Կարոյի թողած գնդակը արնոտ:
Բայց խոր ձորերում կամաց մարելով,
Դեռ վնգում էր պայտերի դոփյուն.

Մրան երբեմն արձագանք տալով,
Չուզում էր երգի անուշիկ հնչուն.
Ալ-վարդն էլ հենված դեռ ժայռին՝ գաղտնի
Կարծես ուզում էր երգողին գտնի:
Բայց երգ ու դոփյուն խառնվելով իրար,
Հնայով անցան անտառից անտառ.
Իսկ թևից հանած գնդակը ծոցում
Այրում է նրան, որպես հնացում.
Վիրավոր հյուրի պատկերն էլ սրտում
Սափորը ուսին երգում է տրտում.

— Մեր տուն եկող ձիավոր,
Արծրվի պես վիրավոր,
Էդ ո՛ւր թռար դու շուտով
Մն ձին նստած յափնջով:
Ա՛խ ո՛ւր թռավ էն տղեն.
Միրոս հանեց նա տեղեն:
Ա՛խ հեռացար դու աչքես,
Չես հեռանում վառ մտքես.
Դեռ տեսնում եմ նստած ձին՝
Վրեղ քաշած յափնջին:
Ա՛խ, ո՛ւր թռավ էն տղեն.
Միրոս հանեց նա տեղեն:
Անպ ու հեղեղ, մութ գիշեր,
Լավար սարի սև փեշեր,
Դուք էն տղին գրահով
Պահպանեցեք ապահով:
Ա՛խ, ո՛ւր թռավ էն տղեն.
Միրոս հանեց նա տեղեն:

8

Օրվա հոգսերից հոգնած արևը
Նեջում է հանգիստ սարի քամակին.
Անպերի նման սարի վերևը
Բինեքի ծուխն է փարվում ահագին:
Սարեր ու ձորեր լուռ են հուտերով.
Աղբյուր ու ծաղիկ արթուն տեսնելով

Դալար սարերի կենսառու օդում
Երասյների մեջ սեր են թրվորտում:
Ախագ որսկանը, հայրը Ալ-վարդի,
Չիրուխը բերին դեռ նստած արթուն՝
Հիշում է մաքում կանթը սրարդի,
Դիտելով ծուխը գիշերը արթուն.
Եվ արյունաներկ ծեր հիշողության
Ամեն մի մոռցած, կորած անկյունում
Սև ծխի մռայլ անպերի նման
Անցած օրերն են մեկ-մեկ բարձրանում.
Իսկ պաշտոնում պատկած առանձին
Գլուխը բարձին այրվում է Ալ-վարդ,
Քնի մեջ կարծես թռել է հոգին
Մի աշխարհ՝ անվերջ անուշ ու անդարդ:

Մարեկ են ճրագի կայծերը ազոտ,
Ննջում է ամբողջ օրեն մրափած.
Հանկարծ հեռվում թնդաց մի որսա,
Խոր քնից իսկույն Ալ-վարդը պարթևած՝
Աչքերը հառեց ծերունու դեմքին
Եվ պատմեց հուզված մի երապ մքին.

— Քնած էի ես, տեսա երապում
Մի սիրուն պախրա անտառից վապեց,
Մեր կովերի հետ կանգնած արխաջում
Աղաքարերից մի քիչ աղ լիպեց.
Նա պոպեր ուներ մեկ-մեկի վրան
Անտառում քսած ծառերի նման.
Ինչպես մի ընկեր կարտած սիրով,
Եկավ փաթաթվեց, փարվեց իմ շորով.
Բայց մեկ էլ տեսա ապխա բարկացած,
Հրացանը չցրեց, դարձավ դեպի մեզ.
Ես էլ վեր թռա տեղից վախեցած,
Կանչեցի նրան, խնդրեցով էսպես.
«Ապի ջա՛ն, ա՛պի, մի՛ ապանիդ պոփրան»:
Ապի ջանեց, խեղճ պախրան ընկավ,
Կասես թե գնդակն իմ սրտով անցավ:
Վերջն ապախես խոսեց խոթ հոբանջելով,
Հարևան քնի մի պատույթ կնկով.

Որ թափանցել էր զարի գցելով,
 Մեծ երպաների խորհուրդ ու գաղտնիք.
 — Երպան է անվերջ մի սիրուն աշխարհ,
 Ուր միշտ ապրելով ինչպես ոգիներ,
 Կարոտ սրտերը գտնում են իրար.
 Ընչում են անուշ, թափում արցունքներ
 Լսում են, Ա՛յ-վարդ, սրտիդ տրոփից՝
 Դու դեռ դողում ես մահվան սարսափից:
 Ո՛վ է բաժանել կյանքը երկուսի,
 Ո՛վ է խանգարել հանգիստը կույսի:
 Գնդակ ու պախրա, լացը կուսական,
 Խաղեր չեն եղել անհոգ մանկական,
 Այ մարմնից պատ երպի ոգին
 Գուշակել է քո մռայլ ապագան.
 Ե՛վ տանջանք է նա պատրաստում կրծքին,
 Ե՛վ խոստանում, թե լավ օրեր կգան:
 Կապտովես, Այ-վարդ, դու չար փորձանքից
 Թե պախրա չընկնի հորդ գնդակից:
 Եվ Այ-վարդն այնպես պառավից լսեց,
 Որ այն երպից ցավ չկա իրան.
 Երպախանն էլ ծերին համուպեց,
 Որ այնուհետև որս չանի պախրան:

9

Խոր ձորի միջին մի ժայռի կրծքից
 Աղբյուր է բխում ուրախ քչքչան.
 Նրա ձայները անուշ բյուր երգից՝
 Սարեցու համար վաղուց սրբացան.
 Սիրո-աղբյուր է նա հնուց ասվել,
 Սիրուն կույսեր են միշտ նրան ուխտել,
 Եվ գուշակել է ջրի ելևեջ,
 Թե ով երջանիկ կլինի սիրո մեջ,
 Դարերից ի վեր աղբյուրը հոսում,
 Դեռ սիրո մասին երգեր է հյուսում,
 Եվ գլգլալով ձմեռ ու ամառ,
 Դեռ նա երգում է սիրելու համար:

608

Գնում է Այ-վարդ դեպ Սիրո-աղբյուր՝
 Իրանց տան համար տանելու պաղ ջուր:
 Հասնելով ձորը մի նեղ կածանով,
 Դեռ ծաղիկներ է նա շարում կրծքին
 Եվ գյուլուններից մեղմ, անուշ ձայնով
 Երգում է Սիրո-աղբյուրի ափին.
 Սարերն էլ նրան ուրախ քրքիջով
 Արձագանք տվին ժայռերի միջով.

«Աղբյու՛ր, աղբյու՛ր, ջա՛ն աղբյուր,
 Ջուրդ գլգլան աղբյուր,
 Վարդը բացվում է բույրով,
 Մերն ապրում է համբույրով.
 Թե որ գտնես իմ յարին,
 Մոմ կվառնեմ քո քարին»:

— Այ-վարդ, Այ-վարդ, ջա՛ն Այ-վարդ.
 Բյուրբյուլն երվում է անվարդ.
 Հեռվից տանջված քո սիրով,
 Դեռ կովում են հուր-սրով,
 Բայց ամենից՝ աշխարհում
 Քաշ Կարոն է քեզ սիրում:

«Աղբյու՛ր, աղբյու՛ր, ջա՛ն աղբյուր,
 Ջուրդ գլգլան աղբյուր,
 Վա՛յ թե ապիս իմանա
 Ու մեկ վրա բարկանա.
 Եթե Կարոն ինձ տանի,
 Վայ թե նրան սպանի՛»:

— Այ-վարդ, Այ-վարդ, ջա՛ն Այ-վարդ,
 Բյուրբյուլն երվում է անվարդ.
 Թե որ մեռնեք երկուսով
 Աշխարհի մեջ նամուսով.
 Սիրո ջեմքում ձեր ճրագ
 Վառ կմնա անկրակ:

609

Սև անպի նման օն ձիավորը
 Սարից աղբյուրն է բափ առած ջրում.
 Վեր թռավ հանկարծ կույս ախտապաշտ,
 Վազում է քիչեն սիրա մշտնաբուն:
 Աղբյուրի ափին Լազվարի կույսին
 Կարոն սիրել է սափորք օտին.
 Թեկուզ և զարկեն զնդակ մահազրո,
 Կարոն ընտրել է կրան հարսնացու:

Չարթնեցով սերը երկու սրտերում,
 Աղբրի ափերն են միշտ նրանց քաշում.
 Փնտրելով միմյանց դուրս ափերում,
 Սիրո երգերով սրտերն են մաշում.

«Լազվարա քարձր սարից
 Ըստ սիրուն է աջխարից.
 Անպի տակն աղբյուրից
 Չուր է տանում իմ յարը:

Աղբյուր, ծաղիկն ա յայտ¹
 Ըստ առատ են Լազվարին.
 Բայց իմ սիրած մարազը
 Արծի արագ-աշխարհին:

Սարի շուշան մատերով,
 Հանեց ևս իմ զնդակը,
 Սարի անխառն աչքերով
 Անցավ սրտիս հատակը:

Ա՛խ, են աղջիկն աչք-ուկերով
 Չարկեց ինձ նոր զնդակով.
 Չուր է թռչում իմ օն ձիւ—
 Սիրտս կայսր Ալ-վարդին:

— Ո՛ւր ես թռչում ձիավոր,
 Չորերն ի վեր վիրավոր.
 Քո զնդակը վառ բոցում
 Չէ՛ որ մնաց իմ ծոցում:

Ա՛խ, հեռացար մեր բինից,
 Ինձ զրկեցիր դու քնից.
 Ե՛տ արի՛, ե՛տ, բինեքով,
 Անպի նման քուլեքով:

Ե՛տ արի, ե՛տ, ձիա՛վոր
 Մուք գիշեր է ահավոր,
 Թողք սարի քամակով
 Կայծակի պես փախակով:

Դե՛, թը՛ն, արի՛, ձիա՛վոր,
 Արծաթի պես թևավոր.
 Ե՛տ արի, ե՛տ Լազվարը,
 Մենակ մնաց մարազը:

Ուր սուր ծերպերով ահեղ ցիր ու ցան,
 Լեռներն են բազմած բնության արձան,
 Ուր մութ ամպեր են գունդագունդ պինվում
 Փայլակ կայծակով իրար հետ կովում
 Չարնելով միմյանց երկիր ու եթեր,
 Թռչկոտում են հուր կայծակի շանթեր,
 Խաղում են, գոռում ճայթյուն որոտով,
 Ծեծում լեռներին, ծաղրում կարկուտով—
 Այնտեղ գիշերվա խավարի միջին
 Մի խարույկ վառվեց Լավարի լանջին.
 Չորերի քաջեր որսի են եկել,
 Կրակի շուրջը կարգով նստոտել.
 Ոմանք շտկում են շողջողուն պենքեր,
 Կարմիր բոցերից փայլում են դեմքեր,
 Ոմանք խորովում եղնիկ կամ վարապ
 Երկար ձողերը շեղջերին շարած,
 Եվ լուռ նստոտած յափնջի տակին՝
 Ըարունակ լարված լսում են մեկին:
 Ինչպես խոր ձորում գնդակ ու վառող՝
 Թնդում է մեկի ձայնը կրակոտ,
 Այնպես էլ գլխի անցածը պատմում,
 Կարծես Լավարին ամպ է որոտում.
 — Անցնելով հապար արյուն-փորձանքից,
 Մահվան հետ ընկեր, ախպեր են դառել,
 Նամարդ չի պրծել դեռ իմ գնդակից,

Գլխիս մապի չափ որսեր եմ արել.
 Դեռ ուժ ունեմ ես վագրից առավել,
 Գնդակս էլ որսից իսկի չի շեղվել.
 Բայց աղջիկս արդեն տեսավ երապում,
 Որ որս անելը էլ ինձ չի սպում.
 Ես էլ ուխտում եմ արյուն չթափեմ,
 Այլ ջահելներիդ համար աղոթեմ,
 Որ դուք էլ գնաք իմ թողած հետքով,
 Պահեք ավանդը մեր հին պապական,
 Մեկն իր կատարած արժանի գործքով
 Իմ տեղը լինի նո՛ր Ավագ-որսկան:
 Չարմացած ծերի վերջին խոսքերով,
 Տղերքը դարձան նրան հարցնելով.
 — Քեզնից ձորերում՝ գող ու մարդասպան՝
 Դողում են մարդիկ, հարամի, գապան.
 Ով որ գնդակիդ ձենը լսում է,
 «Ավագ որսկանն է էլի»— ասում է.
 Թեկուզ դու լինես հարյուր տարեկան,
 Ով կարա լինել քեզ նման որսկան:
 — Մի շաբաթ էլ կա դեռ Վարդավառին,
 Որ սար ու ձորից ուխտ գան Լավարին.
 Երբ որ էն օրը գան ծեր, պատանի.
 Թող, ո՛վ որ քաջ է, նամառը տանի:
 Մինչև որ անցնեն ես չորս-հինգ օրը,
 Տակն ու վրա արեք դուք սարն: ու ձորը.
 Ով որ մեծ որսով կզա Սուրբ-Սարգիս,
 Նա էլ կլինի ժառանգն Ավագիս:

Երբ գիշերը անց, հենց լուսադեմին,
 Խոսքը վերջացրեց Ավագ ծերունին,
 Տղերքը մեծ-մեծ որսերի հուսով
 Պարկ ու հրացան գցեցին ուսով,
 Ռ՛րը սարերում, ո՛րը ձորերում
 Հրացանը ձեռին որս է որոնում:

Մի տեղ եղևի՞ն է տնայ բառաչում,
 Մի տեղ պախրան է հանկարծ հառաչում,
 Մի տեղ էլ արջին որջից հանելով,
 Կախում է մեկը իր ատր խանչարով:
 Գալանը տալով որսորդին ապրուստ,
 Դեռ պաշտարանում է նրա սրի տակ,
 Վայրի վարպետ ժանիքը սրած՝
 Մացանն է նետվել ռեյը փրփրած.
 Նորից գնդակ են հրացանը լցնում,
 Նորից վազելով ետևից հասնում.
 Եվ որս ու որսկան պուրագ՝ ընկնելով
 կետրում են շատին շան ոհմակներով:
 Ոմանք էլ Լոքում լիջկապ են անում
 եվ փախածներից նորից կոտորում:

3

Ամեն տեղ գնդակ, կրակ, որսուսում,
 Բայց ինչի՞ կարոն որս չի պատրաստում.
 Նա բախանելով հրացանը ձեռին,
 Դեռ նոր էր գունդ մի հարսետք դարձնում
 Եվ մտածելով իր որսի մասին,
 Լուռ զանգատվում էր բախտից ինքն իրան.
 «Ես էլ եմ ուզում գնալ Սուրբ-Սարգիս,
 Ե՛ս էլ եմ ուզում տեսնել Ալ-վարդիս.
 Բայց ինչ արած որ դեռ նրա բախտից
 Որս չդորս եկավ որսառատ հանդից.
 Երևել անմուրապ էս ձորում մնամ,
 Քան թե ես դատարկ Լավարը գնամ:
 Մեն-մենակ ե՛ս եմ
 Սարերին թշվառ.
 Ո՛չ թի՛նա ունեմ,
 Ո՛չ էլ յուրդ, Լավա՛րք:
 Դաշտին թե սարին
 Բուն չունեմ, Լա՛վա՛րք».

Կարոտած բարից
 Լուր չունեմ, Լավա՛րք»

Որս կուլեմ, Լավար,
 Որ տանեմ բարիս,
 Որս կուլեմ, Լավար,
 Ճար արա՛ դարդիս»:

4

Որ ամբակները մտնուկ կտրվալով
 Դիմում են ձորեք, լցնում հառաչով,
 Ժայռերից ժայռեր թափ առած ուժով
 Թնդյուն որոտով փրփրում է ջրվեժ,
 Մուտքը կիտած հին ապարաժով
 Ջարգվելով անհույս, երզում է վրե՛ժ.
 Որ պեփուռ մեղսիկ ցրվելով բույրը,
 Սուլում է սիրտը վայելքի ծովում,
 Իսկ թարմ ջուրքերի կույսի համբուրքը
 Ծաղիկների հետ անմեղ բարևում.
 Որ պագումն է բռնկում հուժկու,
 Աղավնուցը հեկ, արծվից ահարկու
 Որսի հրաթափ գնդակի թափչ,
 Ջրվեժի վայրի երզը ձորեղում,
 Ամեն մի հնչյուն անուշիկ, թովիչ
 Անցնում է սիրտը, նրանով փարվում,—
 Այն կամարի տակ անաստնան կապույտ
 Լավարն է պարթնում հարսի պես անփույթ:
 Գուգարքի հսկան բարձր եթերից,
 Գլուխը հալթվ հանած ամպերից՝
 Ժպտում է, խնդում փոքր լեռներով,
 Որպես ծերունին իրա թոռներով:
 Այսօր նա ժպտն անուշ ճակատին՝
 Ամպ-երեսկալը գցած երկնքով,
 Չուզվում է ուրախ Սուրբ-Սարգսի ուխտին
 Գուգարք աշխարհի վարդ ու պշրանքով.
 Իսկ նրա բարձր, դալար գագաթին

Անուշ քարակույտն առանց տանիքի,
Հին սուրբ խաչքարը բազմած քարափին
Գրավում է սիրտը ուխտավոր բինեքի.
Սար, դաշտ ու հովիտ անթիվ ցիր ու ցան,
Փրփրուն գետեր, դալար անտառներ
Մի նվիրական նեղ, մոլոր կածան
Այնտեղ է տանում բոլոր բինաներ:

5

Ասում են՝ ով որ միշտ վառ հավատով
Գալիս է Լավար որևէ ուխտով,
Խնդրում, աղերսում քաջ Սուրբ-Սարգսին,
Հասնում է անշուշտ սրտի մուրափին.
Եվ թե՛ մարդ, թե՛ սար, թե՛ ժայռ, թե՛ բլուր,
Հաղթված զիններով խոնարհվելով լուռ,
Գալիս են նրա պորոթյան ծառա,
Որպեսզի հասած ցավը վերանա:
Ոմանք հասնելով քրտինքն երեսին,
Հանգստանում են Լավարի ուսին,
Ոմանք էլ հեռվից երկար շարքերով
Աչքերը հառած դեպի սուրբ սարը
Գալիս են բարձված հապար մեղքերով,
Որպեսզի գտնեն փրկության ճարը:
Արդեն շերմեռանդ ծեր, պատանի, կին՝
Հազար զունավոր պզեստներ հագին,
Մատուռի շուրջը խունկ ու մոմերով
Պտույտ են գալիս բոքիկ ոտներով:
Բերել են այնտեղ և՛ հիվանդներին,
Ե՛վ խաչ-փաթաթուկ՝ թույլ ընկածներին.
Ռըը մի ցավից, կամ չոռից տկար՝
Ընկել է կծկված սուրբի ոտները.
Ռրն էլ ուշաթափ, մորուց ցավագար
Իրար է պարկում պինդ ատամները,
Բերանը փրփրած տանջվում չարաչար,

Քաջ պորավարից աղերսում մի ճար.
Եվ մուրազներով՝ թշվառ, բախտավոր,
Մոմեր են վառում սուրբ խորհրդավոր:
«Մուրապատու ո՛վ սուրբ Սարգսի,
Դու պահպանի՛ր ձմռան բուքից:

Ամեն տարի պաս ու ծոմով
Մենք ուխտ կզանք խունկ ու մոմով
Եվ ծունկ չոքած մենք Լավարին՝
Խնդիրք կանենք պորավարին.

Ջահել-ջիվան մեր սիրածին
Հասիր որսի դժվար ճամփին.
Հասիր նրան, որ նամուսով
Շուտ գա Լավար մի մեծ որսով:

Երգ ու պարով իրար գրկած՝
Աղաչում ենք ոտը ընկած.
Բուք ու բորան տուր դու չարին,
Անուշ մուրապ՝ սիրած յարին:

Մուրապատու ո՛վ սուրբ Սարգսի,
Դու պահպանի՛ր ձմռան բուքից»:

Մի տեղ ուխտավորը նստում է ճաշի,
Մի տեղ գնում են կոխի՝ թամաշի,
Մի տեղ խնձորը նշան են խփում,
Մի տեղ մատաղը դեռ նոր են եփում,
Մի տեղ աշուղը լի սուփրի ծերին
Բազմած, խփում է սապի սիմերին.
Մերթ իզիթների գործերն են զովում,
Մերթ նամարդների սիրտը նպովում.
Մի տեղ նաղարան վում է պարին,
Չունա-բայաթին կանչում է յարին,
Մեկը տեսնում է իր նշանածին,

Մեկը եջատում մտքում սխառօքին.
Մի տեղ էլ անտեղ կուսակառն սրտեր,
Զգալով սիրո առաջին շարեր,
Չեղք-ձեղքի տված երգում են, տարում,
Ամենքի դեմքին ժպիտ է փայլում:

— Չինարի պես բոյ ունեւ,
Սարի ծաղկի հոտ ունեւ,
Աճառն քեզ, որ տխար ես—
Անուշ բարից լուր չունեւ:

— Ես սարերին ուխտել եմ,
Որ միշտ մատաղ ես կանեմ.
Թե գա յարս մեծ որսով,
Սերս երան բաց կանեմ:

Ավագ որսկաեղ սարին
Էսօր հանդես բաց կանի,
Ա՞յ, երանի էն յարին՝
Ավազութայանն արծառի:

6

Իսկ այնտեղ խմբով անվանի բաշեր
Չենք ու գրահը գցած ունեղով՝
Բերել են եղնիկ, եղջերու, արջեր
Եվ պարծենում են իրենց որսերով:
Բայց հանկարծ լավեց կանացի հառաջ.
Մի խումբ աղջիկներ վազեցին առաջ
Եվ հեկեկաղով, հաղտնեցին ծերին.

— Սիրուն Ալ-վարդին բեզբող փախցրին...

Չորս-հինգ ձիավոր պիտե՞ված հրացանով՝
Անցնում էին լուռ մոտոր կածախով.
Հենց որ թե՛ գտեսան, նրանք կանգնեցին,
Իրար հայտնելով առաջ վազեցին.

«Մի տե՛ս, էն սիրուն լեյլի աղջկան,
Նրա պես հյուրիք երկնքում չկան.

618

Դալի-երմանու գողցած սևուկն է,
Արար աշխարհն է մտքես հանեց նա
Դե՛, տեսնեմ, տղե՛ք, ով կարա բանե,
Նրան փախցնողը ջաննաք կզնա»:

Եվ նրանք տարան սիրուն Ալ-վարդին,
Կորած ձիու տեղ կապեցին թարթին,
Մենք լուռ էինք դեռ նրա հարան.
«Ա՛յի ջան, ա՛յի». կանչում էր՝

7

Ծերունին կանգնած քարափի գլխին՝
Չայրացած ուժգին՝ դարձավ անբոխին.

— Հե՛յ, տղեք, սև առգ պահեցեք,

Դալի ու վուռնայի ձենն էլ կտրեցեք.
Տեսնում եմ, որ դուք շատ ուժ եք թափել
Եվ գապանների մեծ որսեր բերել.
Բայց ոչ ոք չիլնի դեռ Ավագ-որսկան,
Մինչև չապատի գերի աղջկան.
Վա՛յ թե բեզերն էլ անպատկեն նրան,
Ամոթ, նախատինք կմնա հավիտյան...

Էլ ժպիտ չմնաց ոչ մեկի դեմքին,
Վիշտն ու վրեժը տիրեց ամենքին.
Լսեց և՛ քե՛զ, և՛ ամեն ջրուց,
Մարեց արձագանք ձորերում լուռ-մունջ:

Դեռ ժպից նա էր իջել ծերունին,
Մի արագոց լավեց կաղնուտի ձորում:

— Դե՛, հասնե՛ք, տղե՛ք, հասե՛ք էն ձենին,
Կոյվ է էկտեղ, մարդիկ են գոռում:

Ուխտավորը մտացած հանդեսի օրը,
Շեշտակի վազեց կաղնուտի ձորը:
Եվ տեսավ այնտեղ աղբյուրի փոսում
Ընկած բեզերից արյուն է հոսում.
Կարոն Ալ-վարդի դեմ կանգնած արի՝
Երգում է որսած աչեղը յարի.

«Ա՛լ-վարդ, Ա՛լ-վարդ, սև աչեղից
Ես ընկել եմ սար ու ձոր.

619

Ա՛լ-վարդ, Ա՛լ-վարդ, սև աչերից
 Դադար չունեն ոչ մի օր:
 Քեզ տեսնելով՝ կռիվ ու շարդ,
 Չար մտքերս ցրվեցան.
 Նրանց տեղը, սիրուն Ալ-վարդ,
 Դու ես կապել ծիածան:
 Էն օրվանից չոր ժայռն էլ է
 Անուշ բուրում, կանաչում.
 Էն օրվանից սիրտս էլ է
 Արնածարավ քեզ կանչում:
 Առ վենքերս դու մեկ-մեկ,
 Ես հաղթված եմ քո սիրով.
 Առ վենքերս, որ երբեք
 Ես չեմ տվել խիստ կովով:
 Ա՛լ-վարդ, Ա՛լ-վարդ, սև աչերից
 Ես ընկել եմ սար ու ձոր.
 Ա՛լ-վարդ, Ա՛լ-վարդ, սև աչերից
 Ես հալվում եմ օրեցօր»:

8

Հետո ուխտվորի հետ նա միասին
 Գնաց պատմելով բեգերի մասին.
 — Հրացանս լցրած երկու գնդակով՝
 Ես նստած էի կաղնուքու կողքին.
 Մեկ էլ ի՛նչ տեսնեմ, գալիս են շարքով
 Չորս հինգ ձիավոր մի աղջիկ թարթին:
 Տեսա որ մեկը ճանաչս է գալիս,
 Աղջիկն էլ ասի, թե խեղճ է, թշվառ,
 Ասլան-բեգին էր նմանը տալիս,
 Տե՛ս, թե ի՛նչ ողբով ետ կերթամ Լալվար.
 Հանկարծ լսեցի՝ «Վա՛յ, տանո՛ւմ են, վա՛յ»
 Տեսա որ կապածն աղջիկ է, և հա՛յ.
 Մի գնդակ թողի հենց ծառի կողքից,
 Ասլան-բեգն ընկավ իր ձիու մեջքից.
 Ես նորից լցրի և նորից ընկան,
 Մի մարդ ու մի ձի հապիվ թե պրծան.

620

Ալ-վարդն էլ եղավ իմ որսը անգին,
 Ահա՛ քերել եմ, որ տամ Ավագին:

9

Ուխտվորը խառնվեց, փնտրում է նրան,
 Ուպում է տեսնել ո՛վ է քաջ տղան:
 Մերը դաշույնը հանեց իր գոտկից,
 Տվեց Կարոյին ամբոխի դիմաց
 Եվ համբուրելով նրա ճակատից,
 Դողդոջուն ձայնով օրհնելով, ասաց.
 — Ապրիս դու, Կարո՛, երկար տարիներ,
 Որ միշտ ապատես անմեղ գերիներ.
 Լալվարն էլ լինի թող խոսքիս վկան,
 Որ քեզ օրհնում եմ ես Ավագ-որսկան:
 Նորից նույն պուռնա-նաղարան հնչեց
 Եվ քաջ Կարոյին կյանք ու ուժ մաղթեց.
 Ուխտավորն էլ վերջին ջերմ համբույրներով
 Իջավ Սուբ-Սարգսից նեղ կածաններով.
 Եվ պար ու երգով Լալվարից նա ցած
 Գնաց իր սրտի մուրապը առած.
 Կույր աշուղներն էլ երգ հորինեցին
 Եվ նոր իգիթին գովաբանեցին:

— Կարոն է պարկել
 Բեգերից մեծին,
 Կարոն է փրկել
 Սիրուն Ալ-վարդին:

Թույլերի պաշտպան
 Չկա նմանը.
 Օրհնել է նրան
 Ավագ-Որսկանը:

Թնդում են լեռներ
 Երգերով գովքի—
 Կարոն է, Կարո՛ն
 Արժանն Ավագի...

621

Աշունն էլ եկաւ Գուգարք աշխարհուն,
 Սարին ու դաշտին աղ կտանք է ետեւ.
 Խուլեցով գառան, ոչխարի բարդը,
 Քոչեր է բինեն բազեցով յուրդը.
 Լեռներից պխարք, գիրացած ետեւեր
 Զմեռվան համար իջել են դաշտեր.
 Զարդերը գառարկ անին են տալիս,
 Աղբյուր առ ծաղիկ ողբում են, լալիս.
 Մենակ խառնում է, բաշխումս պաշտան,
 Սարեր ու ձորեր մտային երան.
 Արծիւն էլ տխուր ստամ ժայռերին՝
 Որսեր է փնտրում իր սոված փորին:

Դաշտերում հոգնած խեղճ առ նաչարին
 Լավ հաց ու գինով պարգևեց տարին.
 Փոխվելով սալից ամենքն արանք՝,
 Լցրին բարիքով հորն ու մառանք.
 Հասել են արդեն մրգեր մեղրածոք,
 Կանաչ թփերը բունած դաշտ ու ձոր,
 Հասել է ամռան միջօրյա տառլին
 Բյուր շարաններով խաղողը մի-ճիթ.

Քաղամ են նրանք առվակի ափին.
 Հանակից անուշ մաճաղը ջիւ ջիւ
 Կարասն է լցվում ութախ բարիչով.
 Եվ փրփրալով դեռահաս գինին
 Հանգստանում է միայն թակիչով՝.
 Նորից խաղալով հասնում է քեթնին,
 Եվ հուլված, գծված խոր գետնի գրկում՝
 Իր ստորերկրյա խուլ երգն է երգում:
 Վերջացավ թե չէ անկրակ եկեք,
 Սկսվեց խակոյն գյուղացու թե՛ք,
 Չունա-դեռի ձայնը պվում է,
 Հարսանիքների ծայրը բացվում է:

— Այ-վարդ ջան, ա՛ղջի, եկ յայր դու ինձ
 Ես օրենում եմ քեզ կայրական սիրով.
 Ե՛կ, թեև ծանր է քաճախակի քեզից,
 Բայց նշանված ես գուր իմ երդումով:
 Վաղ ես ունեի մի ողջում-սխալեր,
 Նա գեներով որսի գնալ չգիտեր,
 Արջերի հետն էլ միջա կոխ էր բանում,
 Կռների քրոսով իր որսը անում:
 Ողորմած հողի Արջակեր-Մոսին,
 Էդպես էր նրա ալել անունը,
 Մի օր խոսք գցեց իր տղի մասին.
 — «Իմ ու քո չկա, մեկ է մեր տունը.
 Թե որ քեզ փնի մի աղջիկ կավակ,
 Արի նշանենք տղիս հետ, Ավագ.
 Նրանց պասկենք կենդանի օրով
 Ու մենք հեռանանք հավիտյան սիրով.
 Թե աստված էսպես մեր ուխտը կամի,
 Խոսք տուր, որ լինենք իրար խնամի»:
 Եվ ես երդվեցի, երբ որ մեծանաս,
 Մոտունց Աթաի հետ կամամանաս.

Վաղուց է պառկած Մոսին հողումը,
Վաղուց հեռացա՛վ նա փուչ աշխարհից.
Բայց չեմ մոռացել ես իմ խոստումը,
Որ բարձր է երկրի ակն ու գոհարից.
Իգիթի խոսքը օրենք ու կարգ է,
Նամարդ ապրելուց մեռնելը փառք է:
Ե՛կ դու՝ լսելով ծնողիդ կամքը,
Հավատարիմ կաց քո նշանածին,
Եվ միշտ հիշելով մորդ խնամքը,
Ապրիր ու մեռիր միշտ մեկի բարձին:—
Եվ մի համբույրով գթոտ հայրական,
Ավագ որսկանը օրհնեց աղջկան:

4

Հանկարծ խեղճ կույսը գլուխը թեթեց,
Դեմքը այլայլեց, նա դողաց լուրից,
Եվ մատաղ կուրծքը նետի պես շանթեց
Այն ավետիքը, որ լսեց հորից:
Նա ճնշված գաղտնի ներքին հուզումով,
Չյունի պես ձեռնակ ձեռքերը կրծքին,
Դեռ սպասում էր նախազգացումով,
Ինչպես անմեղ զոհ ծերունու կողքին:
Թեև արցունքը նա շուտ կուլ տալով,
Սիրո կոնիվը ծածկեց իր հորից,
Բայց սիրտն ասում էր ուժգին տրոփելով՝
«Մարդու չեմ գնալ բացի՛ կարոյից»:
Եվ դեռ հայտնի չէր որսկանին սերը,
Որով այրվում են երկու սրտերը.
Բայց ով կիմանա՝ սե՛րը կհաղթի,
Թե՞ նվիրական խոստումն իգիթի:

5

Քանի գիշեր է, մինչև լուսադեմ
Ծեր, երիտասարդ, այր, կին ժպտադեմ
Հապար գույներով պզեստներ հագին՝

Խնդում են բարձր Դևեղի ափին.
Հանդես է այնտեղ մեծ հարսանիքի,
Չունան պել է վաղուց սահարին՝¹
Թնդում է հանկարծ ձայնը Ավագի,
Հոսում է սպիտակ ու կարմիր գինին.
Որսկանը առատ վայրի էրեներ,
Երինջ, ոչխար է հարսանքին մորթել.
Եռում են չորսկանթ խոշոր կաթսաներ,
Կրակի ծուխը երկինք է պատել:

Մի տեղ ամբոխը խմբով նստոտած՝
Անուշ է անում, հարսանիքն օրհնում,
Իսկ աշուղները, մրցելով հարբած,
Ավարդի համար երգ են հորինում.
Կապում են ուրախ շրջապարի շարք,
Մի տեղ ձողերին վառած պատրույզներ՝
Երեխայք գոռում, վապում են անկարգ,
Երդիկների տակ ու արձակ բակում
Թնդում են հապար աղմուկ ու երգեր.
Փրփրած գինու թասերը ձեռքում՝
Ուտում են քաշկյան², խորոված, մրգեր:
Այսօր խնջույք է. մյուս օրն էլ հանդես,
Յոթ օր, յոթ գիշեր կտևի այսպես.
Գյուղի աղքատը, ծերն ու պատանին
Յոթ օր, յոթ գիշեր հյուր են որսկանին:

6

Հանկարծ Ավագի շիրիղը ճոճաց.
— Չիրի՛դ է, շիրի՛դ.— ամբոխը ճչաց.
Դիղը դմբաց, հեծվորներն անցան,
Կապեցին միմյանց հակառակ շրջան,
Չինված ձողերի սուր նիպակներով
Հենց բաժանվեցին երկու բանակի՝

¹ Առավոտյան երգի եղանակ:

² Թուրքի մեջ մսից և ձավարից պատրաստած՝ հարիսի անան կ կորկուտ:

Բարձրացրեց փողին ձիւ սմբակներով,
Գլուխներ պատռեց զարկը նիպակի,
Ետում է հանդեսն անեղ ջիրիդի,
Հասնում են արագ, զարկում մեկ-մեկի,
Չեքնեղին բռնած թափիչ-թաղկիւնակ՝
Դիտում են հեռից և հարս ու աղջիկ՝
Իսկույն տալիս են նրան մրցանակ,
Ո՞վ որ նշանին նետում է ճարպիկ:
Աթոն էլ եկավ ջառ անգամ անցավ,
Բայց նա Ալ-վարդից ոչինչ չստացավ,
Չիերի կրծքից ջալաղին՝ կապած՝
Դեռ փոփախով, քաշում են, թռչում,
Բայց չի նկատում ստերիսը հարթած,
Որ խեղճ Ալ-վարդն է ամենից տրտում,
Շատերը հաղթված մե՛կ-մեկ հեռացան...
Մենակ Ավագը ջիրիդը ձեռքին՝
Ինչպես հատիկների վիթխարի արձան,
Հասնում էր, զարկում փախչողի մեջքին:

7

Մուրն ընկած արդեն, փայլում են կրակներ,
Նորից հյուրերը նստում են շրջան,
Լցնելով փրփրած գինով գավաթներ,
Ետուն քեֆի մեջ կանչում են՝ «Հա ջա՛ն»...
Նորից գլուխն է հանում աղմուկը,
Աշուղը թառին բարձր է երգերը,
Նորից երգում են ծերն ու ճանուկը
Բռնելով ամուր նոր յայլու շարքեր:
Հարբածների հետ Դեբեդը ձորում
Փրփրած աչքերով ծայռն քնարին,
Ծփում է տխուր, անվերջ փրփրում,
Հավար երանի տալով անցյալին:

1 Մետաքսն թաղկիւնակ:

8

Երբ հորսն էր փչում, Դեբեդը վշտում
Գիշերվա վայրի մի տխուր համերգ,
Իսկ պաղ կայծերով աստղը վենիթում
Դողալով դիտում մռայլ տիեզերք,—
Գիշերվա նման մի մուգ սև ջարդ,
Ալ-վարդը զաղտնի անտառն էր մտել,
Իսկ վաղուց ծանոթ մթին դարանում
Նրան պահապան մացառն էր պատել:
Նրա համար չէր երկնի կապույտը,
Նա չէր դուրս եկել իբրև կրտսևը,
Որպես ջրվեժի թափն ու պտույտը,
Նրան թշել էր վառ սիրո հոսանք:
Եվ այդպես փախած մթին գիշերով
Հայրական տնից, հորիցը զաղտնի՝
Նա ապաստում էր սրտի վարկերով
Իրա սիրելուն սարերին հայտնի:

9

Հանկարծ անտառի մռայլ թավուտից
Լսվեց սմբակի տրոփ ու դոփյուն,
Քրտինքը հոսեց կույսի ճակատից,
Ճերմակեց, դառավ ինչպես լեռան ձյուն:
Փայլեցին արդեն ձիւ պայտերը,
Եվ մի ծանոթ ձայն՝ «Ա՛լ-վարդ ջան» կանչեց,
Կարմրին տվին կույսի այտերը,
Նա սրտի խոքքից ապառ հառաչեց:
Ա՛յ քեզ ցանկալի- երջանիկ ըռպե,
Երբ կարոտ սրտեր գտնում են իրար,
Փշքերով արգելք թեկուկ երկաթե,
Գտնում են միմյանց երկու սիրահար:
Հեծվորը թռավ սև ձիուց շտապ,
Ալ-վարդին հանեց խիտ մացառներից,
Գրկեց ու սեղմեց կրծքին սիրատապ,
Համբույթներ քաղեց այտ ու շուրթերից:

— Ա՛լ-վարդ ջան, Ա՛լ-վարդ,— Կարոն ջնջաց
Եկ ջուտով փախչենք, քանի գիշեր է.
Գիտեմ իմաստունն ձիս որ խրխնջաց,
Փորձանք լինելը նա պգացել է.
Ա՛ն դարաքինաս, կախիր քո վպից,
Նա պետք կգա քեզ գիշերը ճամփին,
Մինչև որ թռած անցնենք անտառից,
Մինչև որ տունս գտնենք քարափին:

— Թեկուզ սրտումս ցցեն սուր ու նետ,
Ես պիտի ապրեմ ու մեռնեմ քեզ հետ,—
Ասաց Ալ-վարդն ու բռնկված հուլկով
Ամուր փաթաթվեց Կարոյի վզով:
Փախավ նրա հետ, գլուխն ու այտը
Հենած սուկի փրփրուն բաշին.
Չարնվելով քարին, զընգում էր պայտը
Եվ սերը երգում նրանց ականջին:
Մոռցած ծերունի հոր պատվի մասին,
Կուսական սրտից հուր էր բռնկում.
Սարերից ձորեր թև առած սև ձին
Թաղում էր դոփյունն մթին ծմակում:

10

Հանկարծ լսվում է «հարա՛ն ու տարա՛ն,
Հարսանքատանը լուռ է գլուխան.
«Կարոն Ալ-վարդին փախցրեց տարա՛վ,
Կարոն ամեն ինչ ոտնատակ արավ...
Թյո՛ւհ անաղուհաց, նամարդ արարքին,
Անդանակ մորթեց իգիթ Ավագին»:

Ծերը վարկելով գղակը գետնին,
Խոռոված ձայնով դարձավ ամբոխին.

— Ես ութսուն ձմեռ, էս ութսուն գարուն
Ես կյանք եմ քաշել աշխարհի վրա,
Բայց չեմ թողել, որ Ավագի անուն
Մի թեթև բանով անգամ սևանա.
Էսքան տարի է, որ կռվի սովոր,
Արյունն է եղել ինձ համար քրտինք.

628

Էսքան տարի է գլուխս այնոր
Չէր կերել էսպես մուր ու նախատինք.
Բայց գող Կարոյի նամարդ արարքը
Թաղեց որսկանիս պատիվն ու փառքը:
Թեև երդվել եմ, որ էլ որս չանեմ,
Բայց էն նամարդի մուրն էլ ո՛նց տանեմ!
Ասաց ու ծերը հրացանն ուսեց
Եվ տըմբտըմբալով խոր ձորը վապեց.
Ոմանք ձիերով, ոմանք էլ ոտով
Վապեցին հետը պանապան ճամփով:

11

Ավագ որսկանը շանթված ամոթով՝
Գնաց, թափառեց անտառ ու ծմակ.
Անցավ նա ամեն մի նեղլիկ ճամփով,
Ուր որս էր արել ջահել ժամանակ.
Բայց ո՛չ փախցնողին, ո՛չ էլ աղջկան
Չգտավ այնքա՛ն հետքեր փնտրելով,
«Ալ-վարդն ու Կարոն չկան ու չկա՛ն»,
Ասում է անհույս նա դեգերելով:
Արդեն հուսահատ, տանջված և անքուն
Անցնելով հոգնած վերջին կիրճերը,
Մի խիտ դարևոր մթին ծմակում •
Հանկարծ նա գտավ ձիու հետքերը
Եվ լսեց, ինչպես պուլշ տրոփով
Ալ-վարդն ու Կարոն թռչում են ճամփով.

— Հե՛յ, Կա՛րո, Կա՛րո,— որսկանը գոռաց

Սիրահարները մնացին սառած.—
Էդպե՛ս ես պատվում հին աղ ու հացը,
Էդպե՛ս ես սիրում օրենքն իգիթի,
Քեզ նման նամարդ գող արարածը
Ինչի՞ չի վաղուց գոհվել գնդակի:

Կարոն շվարած որպես երազում
Իսկույն հասկացավ, թե ով էր խոսում.
Բայց գնդակ տըժժաց, անտառը թնդաց
Եվ նա գլորվեց սև ձիուցը ցած:

629

Իջնում է մահը մոայլ թևերով.
Նա արդեն գրկեց իգիթ Կարոյին.
Այրված շուրթերը՝ «Վա՛յ, ջուր» կանչելով.
Կպան փակելով հուրը սիրային:
Այ-վարդն իր գանգուր գեսերն է փետում.
«Վա՛յ, Կարո ջան, վա՛յ» անտառն է թնդում...
Եվ դարաքինան պինդ ձեռքին սեղմած՝
Այ-վարդը կանչեց հորը պառամած.

— Ե՛կ, ա՛պի ջան, եկ անտառից շուտով,
Ե՛կ, ի՛նձ էլ պարկի՛ր մի կոր գնդակով,
Ա՛յս, անսեր կյանքը ծանր է գեհենից.
Լա՛վ է հեռանամ էս փուչ աշխարհից,
Լավ է մի անգամ սիրելով մեռնեմ,
Քան թե միշտ անսեր թագուհի լինեմ.
Մեկանից հետո է՛լ սարե՛ր, ձորե՛ր,
Ազբյաբ ու առու ուրախ, քչքչան,
Երգեցե՛ք՝ ինչպես կորան մեր օրեր.
Երգեցե՛ք. «Այ-վարդն ու Կարոն չկան»:
Մն ծխի միջից գնդակը թռավ...

Այ-վարդը վերջին մահվան տագնապում
Սիրուն գուլիը գետնի վրա դրավ
Եվ լուռ գապարված խոտ է պոկոտում:
Դեռ թրթռում են նրա շուրթերին
Կյանքի գույները մեկ-մեկ մարելով,
Սփրթնած վարդը կարմիր այտերին
Հրածեղա է կարդում ընդմիջա թռումելով:
Մարում է հուրը սև-սև աչերի.
Մահում է կյանքը անհուն տենչերի,
Ծորում են կամաց արյան ջիթերը,
Սպառում կյանքի վերջին ուժերը:
Եվ ասեն մի կոր ծորած կաթիլով
Կարծես ասում է՝ կյա՛նք, մաա՛ս բաթով:

12

Վերջին արևը ճառագայթներով
Դեռ արևանուտքից անտառի խորքում

Սիրահարների լուռ դիակներով
Խաղում է անհոգ, փարվում ու գրկում.
Տրաքոցի վրա հեռու ձորերից
Վազելով հասավ հարսընթացին,
Արյուն-արցունք է թափվում այքներից,
Մենակ չի լալիս ծեր հանցավորը:
Փոքրված գեսեր, գնդակը կրծքին՝
Սարսափ է ազդել Այ-վարդն ամենքին.
Օտար, բարեկամ ողբում են նրան,
Անեծք թափելով Ավագի վրան.
Կանչում են նրան. «Ինչի՛» չես գալիս,
Ինչի՛» չես դու էլ մի բերան լալիս»...
Բայց նրանց լացը, ճիչն օրհասական
Դարձյալ չեն ապրում քարացած ծերին,
Եվ անջարժ կանգնած ծերունի հսկան՝
Նայում է միայն նրանց կոծերին:

13

Անտառան հենված նա նվիրական
Հին աղ ու հացի պատվի օրենքին՝
Էլ չէր ափսոսում միակ աղջկան.
Այլ բան էր զգում իգիթի հոգին:
Թեև նա վերջին օրը ծերուպայան
Ներկեց իր միակ որդու արյունով,
Բայց համոզված էր, որ արդարության
Չի դավաճանել դեռ ոչ մի բանով.
Որ ափսոսանքը և լացն ու կոծը
Էլ չեն բուժելու սրտի սև խոցը,
Այլ նրան միայն օրենքն իգիթի
Իր անդարձ ուժով մի օր կղատի:
Մերթ թոչում է ես դեպի ապագան,
Ուր սուվերներով գատի պիտի գան
Տմարդ սերնդի տգեղ արարքը
Եվ հին իգիթի պատիվն ու փառքը.
Մերթ լուռ, քարացած, առանց արցունքի
Դեպի նոր քանդ բլուրն է դառնում,

Մերթ նրա դեմքը թաղվող հանցանքի
Տխրության ամպն է հանկարծ մռայլում.
Մերթ անշարժ կանգնած հրացանը ձեռին,
Ինչպես դարավոր լեռների արձան,
Նա հուժկու մեջքը դեմ տված ժայռին՝
Նայում է թաղմանն անթարթ ու անձայն:
Եվ հին կնճռոտած, ապառաժ դեմքով
Կարծես ծաղրում է դեռ լավկաններին,
Որոնք հանձնում են հողին խնամքով
Իր հաջող որսած սիրականներին:

14

Հանկարծ գոռ տալով երկար չիբուխին,
Նա վերջը դարձավ լավկան ամբոխին.
— <Ե՛յ գիդի, հա՛, հե՛յ, իգիթ ժամանակ,
Անցար, գնացիր, թողիր ինձ մենակ.
Ուր են առաջվա սերն ու հավատը,
Պապերից դրած օրենքն առաջին.
Իգիթ չէր ասվում էն տղամարդը,
Որ չէր խոնարհվում սուրբ աղ ու հացին.
Արար աշխարհի օրենքների դեմ
Ես նրանից մեծ օրենք չգիտեմ:
Եվ ի՛նչ արարած, ինչ աղամորդի,
Կոտրելով պատիվն, անու՛նն իգիթի,
Ապրում է մենակ ինքը նամուսով,
Դրացուն պատվից զցելու հույսով:
Թեկուզ աշխարհն էլ ղուզ անի իրան,
Իսկի տղամարդ չեմ ասիլ նրան:
Մարդիկ մանրացան մժեղի նման.
Արցունքն է դառել ցավերին դարման.
Բայց ողբն ու լացը էլ ինձ չեն ապրիլ,
Ծով էլ որ դառնամ, արցունք չի կաթիլ:
<Ե՛յ գիդի, հա՛, հե՛յ, իգիթ ժամանակ,
Անցար, գնացիր, թողիր ինձ մենակ:
<Եռացեք դուք էլ, թողեք միանամ

632

Ժայռ պապերիս հետ, ես էլ քարանամ:
Ասաց ու լռեց ծերը գլխիկոր
Ինչպես վիթխարի մի ժայռի բեկոր:

15

Էն հին վանքերի բարձր գմբեթից
Չեն հնչում մահվան պանգի ձայները,
Եվ շարականից, բուրվառ ու խաչից
Չրկվեցին նրանց պաղ մարմինները.
Հարսընթավորի ողբն ու լացը
Եվ սև նժույգի խորին թառանչը,
Աշնան հողմի հետ արձագանք տալով,
Երգում են ձորում թաղման շարական,
«Ա՛խ, Ալ-վա՛րդ, Կարո՛» լուռ հառաչելով,
Փորում են նրանք մի խոր գերեզման,
Եվ սիրակորույս զույգ նշխարները
Հանձնում են ցավով հայրենի հողին.
Իսկ բլուր դարձած սիրահարները
Պատմում են սիրո արկածն անցնողին:

16

Դառն ափսոսանքով ամբոխը գնաց.
Անտառում մենակ որսկանը մնաց.
Նա քաշվեց հեռու մութ ծմակները,
Հսկա ժայռերին եղավ դրացի,
Ուր չեն որոտում ո՛չ գնդակները,
Ո՛չ լավում ձայնը մարդկության լացի,
Գլուխ չթեքած մարդկանց օրենքին՝
Նա եղբայրացավ հավերժ տարերքին:

633

Վ Ե Ր Ջ Ա Ր Ա Մ Ն

Երբ որ բացվում են վայրի վարդերը,
 Երբ գարնան բուրբոլ ձորն է կանաչում,
 Գալիս են այնտեղ մատաղ կույսերը,
 Ավ-վարդին իրանց սերը մրմնջում.
 Մի-մի կտոր ջոր թուփից կապելով,
 Հիշում են նրանք արցունք թափելով.
 Եվ այն մամռապատ մենակ բլրակը
 Նոր կյանք է առնում հին կաղնու տակը
 Երբ եղջերուն է այնտեղ բառաչում
 Կամ եղնիկն անհոգ վրայից թռչում,
 Որսորդն էլ աղբրից պաղ ջուր խմելով,
 Անցնում է որսի հետքից վազելով—
 Հանկարծ ցույց տալով բլրակն ընկերին,
 Դառնում է վաղուց անցած դեպքերին:
 — Դու ջահել ես դեռ, լավ չես ճանաչում,
 Ավ-վարդն ու Կարոն այստեղ են հանգչում:
 Ո՛ր են առաջվա մարդիկն ու սերը,
 Ավագ որսկանի արած որսերը...
 Ասում են, երբ որ ամալի փեշերը
 Փռվելով սարից, ձորերն են գրկում,
 Լսվում է հանկարծ մթին զիշերը
 Մի խոր հառաչանք ժայռերի կրծքում.
 Ու ամպերի մեջ Ավագ որսկանը
 Գալիս է հսկում իր աղջկանը.
 Եվ նորից ծածկած նա վիշտը ներսից
 Փախչում է նամարդ մարդկանց երեսից:

Սմբատ Ըահապիզ

Բանաստեղծություններ

Արարատեան դաշտ	4
Հայ մանուկ յուարութեան	4
Ռոջույն հրաժարական Աշտարակի հետ	5
Իմ վիճակը	6
Երգ	8
Հրեշտակ-պահպանիչ	9
Ամենախոնարհ ներողություն	9
Այցելություն	11
Իրձ սրտիս	11
Երգ	12
Նվեր հայրց աղջիկներին	13
Առաջին տեսություն	14
Օրիորդի արտասուքը	14
Գիշեր	15
Ազգային վիճակ	15
Առաջին սեր	18
Ազատ մարդ	19
Առ գեղեցկուհի Ե.	20
Երազ	21
Ճշմարտախոս	22
Առ հրաժարվածը	23
Պետ	24
Կեցցե սուրբ գործը	26
Միշին Տիգրան	27
Աշտարակ	28
Ինձ մի՛ սիրիր	29
Խորհրդածություն բանաստեղծի	30
Ճշմարիտ կրոն	40
XIX դարի կրոնասերը	42
Օրինյալ հանգիստ	43
Բռնավոր սուլթան	44
Դավաճան	47
Այն երազ էր	48
Ես տխուր եմ...	49
Հովիվ	49
Առ իմ ընկերը	50
Արտի կսկիծ	52
Ես այն օրից...	52

Եվ դու այդպես	83
Ախտավոր ժամ	84
Հովիտ տրամուրջան	85
Իմ վիճակը	87
Միրո կյանքը	88
Միրո կորուստ	60
Եվ փոխեր և ճեպուն	61
Անուսումնասիրություն	65
Խրատ	67
Որքան և պերճ վարդարվես...	67
Անտառի մեջ	68
Մեծ թատրոնի մեջ	68
Պետ, կուրթապաշտ և թաղաքացի	70
Հայաստան և նորա որդիքը	72
Անահիտ	72
Ռզի Հայաստանի	73
Եվ նա մեռավ	74
Մանկություն	75
Մայիս	76
Աբարատի շրջակայքը և նոցա ազդեցությունը	77
Ինքնագիտակցություն	79
Մի պարթ մանկան	80
Անբաղ	82
Հանգիստ իմ	83
Երգ մեռնող Հայրենասիրի	84
Գերի հայի աղոթքը	85
Միհրդատ	86
Մասիս	88
Խորհրդավոր զիշեր	90
Սոխակ	91
Միրելի	92
Չանգակ	92
Վերջին հրածեշտ	92
Կրոնավորի աղոթքը	93
Մեծատուն	94
Իտալուհիք և իսպաղացիք	94
Ս. Նազարյանցի հիշատակ	98
Բանաստեղծի դամբանակ	98
Ձոռեր	99
Պանդուխտ հոգի	102

Անգին Գոհար	103
Հ. և Թ. Տեր-Հակոբյանների հար- սանիքի քսանհինգամեակին	104
Հանգամ ընար	108
Վերջին փափագ	107
Օգնեցեք	107
Լևոնի վիշտը	109

Հովհաննես Հովհաննիսյան

Բանաստեղծություններ

Միայն այն կապրի...	194
Տեսե՛լ ես արդյոք...	194
Ես վրոնում եմ...	195
Առավոտս անցավ...	195
Շտապի՛ր, պատանի՛...	196
Երկու ճանապարհ	197
Մինևույն վիշտը...	198
Որպես հաղթանակամ...	199
Ավերակ	200
Ա՛խ, տվե՛ք ինձ...	200
Երգ	201
Իպուր է...	202
Անապատումը երերուն...	202
Այս օրերում...	203
Դարձյալ Նոր տարի...	204
Տխուր երգիչը...	205
Ինձ մի՛ սիրիր...	205
Երանի ևորան...	206
Չգու՞մ եմ արդեն...	207
Գեղեցիկ օրեր...	207
Գյուղի ժամը	208
Ես քեզ սիրում եմ...	209
Քանի՛, քանի՛...	210
Ամենայն անգամ...	210
Հատիկ	211
Ախ, ի՛նչպես...	212
Երկու համբույր	213
Ես անմոռուչ...	213
Քնքուչ տողերում...	214
Եվ այս...	215
Երբ ես նստած...	215
Երբ ես տեսնում եմ...	216
Ինչպես վտակ...	216

Երբ մատաղ...	217
Լինում է ըրպե...	218
Չքնա՛ղ մանուկ...	218
26 ապրիլի	219
Դու արտավում ես...	220
Ահա քեզ ձեռս...	220
Թող այսօր մութն է...	221
Ես քեզ սիրեցի...	221
Երբ ես դեռ նոր էր...	222
Մի՛ թողնիր...	223
Հասի՛ր...	223
Երգչին	224
Աշուղ	224
Դու չըկամիս...	225
Սիրուն գլուխդ...	226
Ամենայն անգամ...	226
Ասում եմ...	227
Քեզ մոտեցա...	228
Մընա՛ք բարով...	229
Դու ծաղկում ես...	229
Արազն եկավ...	230
Արտավազդ	231
Հրաշալի՛ գիշեր...	232
Թեպետ խեղդված եմ...	233
Սյունյաց իշխանը	233
Տղմուտ	238
Չինվորի մահը	240
Տեսնում եմ ահա...	240
Մ-ին	241
Դու երևեցար...	242
Արի՛, իմ հոգյակ...	243
Ճեմում էի...	243
Կյանք	244
Անցի՛ր, սև՛ ամպ...	245
Ո՛վ իմ խղճուկ...	245
Կար մի ժամանակ...	246
Մանկանը	247
Ամենայն անգամ, երբ ես միայնակ	248
Քո՛ն եղիր, հոգիս՛կ	248
Երազ	249
Աշուն	249
Մի՛ վտահիր...	250
Բացվեցավ գարուն...	251

Հնչիկ կարկաչով...	252
Գարուն	253
Մայրս	253
Եվ եկավ գարուն...	254
Սարն ի վեր	255
Հավատում եմ...	255
Երբ լուռ եմ ես...	256
Չունիմ քեզ համար...	256
Կուպեի հնչեր...	257
Նոր գարուն	257
Գարնան կարկաչուն...	258
Ա՛խ, ես գիտեմ...	259
Ճեմարանի տունին	260
Մենք միասին...	260
Տոնական երգը	261
Չգիտեմ ինչու...	262
Պերձ Պոռոջանին	262
Ինձ ու ինձ	263
Ալազյազ բարձր սարին...	263
Արծիվն ու արտույտը	264
Լուռ կա՛ց, սի՛րտ իմ...	264
Վահագնի ծուռնը	265
Պատկած էր նա...	266
Լուսնակ գիշեր...	266
Ա՛խ, իմ անուշ...	267
Աչերիդ մեջ բախտս է...	267
Օրը մթնեց...	268
Ա՛յ վարդ-աղջիկ...	268
Հայրենի տան...	269
Երբ կյանքի...	269
Արի՛, ընկե՛ր...	270
Ի՛նչ գիշեր է հրաշագեղ...	271
Երբ խոր գիշերով...	271
Մենակ, միշտ մենակ...	272
Ապրել ու տանջվել...	273
Իմ մուսան	273
Հին երգ...	274
Մրբիկն անցավ...	275
Հոգիս սև դարդ...	275
Հուշիկ	276
Ահա և մայիս...	276
Երգիս հետ մենակ	277
Դուրսը ձմեռ...	277
Այնտեղ ուր ցարդ դարավոր	278

Ծովի ափին	278
Բախտը դարբին	279
Թարգմանություններ	281

Այեբասնդր Ծառուրյան

Բանաստեղծություններ	
Աշնան վերջը	316
Սունետ	317
Չմեռային գիշեր	317
Չինվորի երգեր	319
1 Քո սիրովն եմ միայն շնչում...	319
11 Շողա՛, շողշողա՛, պողպատե իմ սուր...	320
Հասարակաց մշակին	320
Չեյթունի հրդեհը	321
Բանաստեղծ Սմբատ Շահապիլյա- նին	323
Մուսա	323
Դավաճանության կոհ	324
Բնության գրկում	325
Սիրավատ տխական յուր անուշ երգով...	327
Սիրո վիշտը	327
Որբեր	328
Իմ ուխտը	329
Անշատման ժամ	330
Առաջյալ	330
Առավոտյան երգ	331
Դարուս վավակը	332
Սոխակին	332
Բանտարկյալի երգը	333
Երգ և մետաղ	334
Մայիսի մեկը	335
Տապանագիր	335
Ամբոխին	336
Պատկեր	337
Էլեգիա	338
Աղոթք	338
Մուրացկան	339
10 ապրիլի	340
Այնքան դառնն ցավ ու վշտեր...	341
Ծաղիկներ և իղձեր	341
Կես գիշեր	342
Նենգավորին	342

Էնկիտ	343
Տիւր վառ	344
Էլ փ' խնդիրը...	345
Մի' հաշտասք	345
Մայր	346
Լ Մայր ունեի, մայր եսպեի...	346
Ք Տեղացե՛լ եք դուք անգի՛ն կրուստի...	347
Վաստակ	348
Նորա այրումով	348
Երկու գիշեր	349
Միրելի ես, նմիրական	350
Ան, երանի չե՛...	350
Վերջին հատգիտ	351
Ար՛թե արդեն, ո՛վ ընկեր իմ...	351
Ես չեմ վրոզվում	352
Գնտակ	353
Ես չեմ երգում...	354
Թշվառի	355
Վերի՛ք է որքան...	356
Չեմ նախանձում	356
Մի՛ վարդ, լսիր ազաչանքիս	357
Մայր	357
Հայ երգչին	358
Գնա, ցուրտ ձմեռ...	359
Կռաք	360
Տասականգիր	361
Վերջին անգամ ժպտաց արև...	362
Ե՛կ, զարնան անձրև...	362
Բնջ համար է իմ տանջանքը...	363
Մի՛ վիատիր	364
Մի՛ լար, բլբո՛ւ	365
Սեք	366
Գիր	367
Պանդուխտի երգը	369
Երեսի սերը	370
Ին՛ օրագրից	371
Երկուսըս էլ ճնշված	372
Անտառ կոծքում	372
Երկու սրտակեր	373

Գայծեր	373
Միսյուսյան ժամեք	374
Իմ օրագրից	375
Ձենվորի երգ	377
Վերի՛ք է, ա՛յգ իմ...	377
Երգ	378
Ն ք ի մ ի ա լ ը ա մ ի ք	380
Անիք	390
Վերջապոյս	390
Անտեր գերեզման	391
Օրեր են գալիս	392
Հապաված սեր	392
Անտոաց երգ	393
***-ի այրումով	395
Ին՛ն առում եմ...	395
Բարի՛ հրեշտակ	396
Դարձրալ սիրո կյանք	396
1897 թ.	397
Մեք դարը	398
Հատերից մեկը	398
Պատգամների բարձրից	399
Թե քեզ օտար չե՛...	400
Նայ սերունդ	401
Տո՛ւր ձեռքդ, ընկե՛ր...	401
Խա՛ղ չե՛...	402
Երկրի սրտեր	403
Սերմնացան	404
Ա՛յ սն անկեր...	407
«Անրեցե՛ք միմյանց»	408
Երազ	408
Ա՛յ, ի՛նչ ասեն՛...	409
Մի՛թե վերջ արդե՛ն...	410
Պոետին	412
Դու անվիշտ...	411
Դարեր եկա՛ն...	412
Հայ մայրերին	413
Իմ օրագրից	414
Միրելի՛ ընկեր...	414
Անցուն գիշեր	415
Գիշերվա երգերից	416
Կարտուտք	416
Ո՛րք ես, հայ բլբոլ...	417
Այնչախի մահը	418
Դեպի վե՛ր	419

Լույս-վայրերից ևս իջած	420
Աղջիկ և թիթեռ	420
Կոնի	421
Օտարի սերը	422
Աղջատի երգը մահից առաջ	422
Տխուր երգ	423
Աջան տերևներ	424
Վա՛յ էս սրտին...	424
Երգ	425
Ղաջառած	425
Կյանքի խաղը	426
Անվերջ մաքառում	426
Հայ բանաստեղծին	427
Հառա՛ջ...	427
Առաջին համբուր	427
Ես հոգեկ եմ...	428

Տարեմուտի երգերից	429
Կյանքի ձայնը	430
Թո՛ղ, ընկե՛ր իմ...	431
Մենակ ճամփորդ եմ...	431
Վեռուս—խավարի	431
Լուսն քնարիս	432
Մուսա	433
Նավորդներ	434
Բանվորուհու օրոքը	434
Մ ջ յ յ ք եր գ եր յ ք	436
Պատգամ ևս վարի երգերից	440
Ճ ա ն ա պ ա թ ի ն	442
Գ թ չ ի հ ա ն ա թ ն եր	445
Թարգմանություններ	467
Վահան Միրաքյան	579
Լայվարի որսը...	579

Սմբատ Շահազիզ, Հովհաննես Հովհաննիսյան, Ալեքսանդր Մատուրյան,
Վահան Միրաքյան

Ե Ը Կ Ե Ը

Смбат Шаазиз, Иоаннес Иоаннисян, Александр Цатурян,
Ваан Миракян

СОЧИНЕНИЯ

(На армянском языке)

Издательство «Советакан грох», ул. Теряна 91, Ереван, 1980

Խմբագիր՝ Ռ. Գ. Տոնյան, հրատ. խմբագիր՝ Ռ. Մ. Մուրադյան, նկարիչ՝ Ջ. Ե.
Փառասարյան, գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան, տեխ. խմբագիր՝ Կ. Գ.
Սարգսյան, վերատուգող սրբագրիչ՝ Ս. Մ. Բալասրյան

ԻԲ № 2310

Հանձնված է շարվածքի 27.10.78.: Ստորագրված է տպագրության 22.3.79.:
Տարածում 60×84¹/₁₆: Թուղթ՝ տպագրական № 1: Տառանդեսակ՝ «Նորք»: Տպագրու-
թյան թարձր: 37,2 պայմ. տպ. մամ., հրատ. 26,2 մամ.: Տպաքանակ 51000:
Փառսկեր 216: Գինը՝ 2 ռ. 70 կ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван 9, ул. Теряна, 91.

«ԱՍ» հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի անստորի գործերի պն-
տական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65:

Типография № 1 Госкомитета по делам издательств,

полиграфия и книжной торговли Арм. ССР,

Ереван, ул. Алавердяна, 65.